ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ.

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

HISTORICAL-PHILOLOGICAL INVESTIGATIONS

IV

MELIQSETH-BEK L. M.

HISTORICAL-PHILOLOGICAL RESEARCHES

Л.М. МЕЛИКСЕТ-БЕК

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИЗЫСКАНИЯ

Под редакцией П. М. Мурадяна

ლეონ მელიქსეთ-ბეგი

ისტორიული–ფილოლოგიური ძიებანი

პარუირ მურადიანის რედაქციით

ST. ETCHMADZIN - СВ. ЭЧМИАДЗИН - წმინდა ეჩმიაწინი
2010

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ

ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

4397

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

Աշխատասիրությամբ

Պարույր Մուրադյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2010

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)
Մ 511

ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ ԼԵՎՈՆ
Մ- 511 ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ / Լևոն Մելիքսեթ-Բեկ: Աշխատասիրությամբ Պարույր Մուրադյանի - Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչություն, Ս. Էջմիածին, 2010.- 496 էջ:

Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը Հայոց պատմության, մատենագրության ու մշակույթի անդադրում հետազոտող էր, ակադ. Ն. Մառի սահմանած «Հայ-վրացական բանասիրություն» գիտակարգի երևելի ներկայացուցիչը: Գիտնականի ծննդյան 120-ամյակի օրերին Ս. Էջմիածնի հրատարակչական խորհուրդը նրա հիշատակը հարգում է հայերեն հրատարակված աշխատությունների այս Ընտրանիի տպագրությամբ: Գիտնականը «Արարատ» և «Էջմիածին» հանդեսների տևական ու ցանկալի հեղինակներից էր, հմուտ Հայոց եկեղեցական պատմությանը:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Հ)

Տպագրվում է մեկենասությամբ

«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» հիմնադրամի

ISBN 978-9939-59-065-3
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2010 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈՖ. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ 9

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՊՐՊՏՈՒՄՆԵՐ

1. *Մի փորձ «Գիրք Թղթոց»-ի թերի մասերի վերականգնման ուղղությամբ* 25
2. *Պողոս Տարոնեցի՝ ԺԱ–ԺԲ դարերի հայ մատենագիրը և Թոնդրակեցի ու ծայլծ հայերը* 39
3. *Նոր նյութեր Թոնդրակեցիների մասին* 51
4. *Հովհաննես սարկավագ վարդապետ Հաղբատացու «Վասն չարժման և սասանութեան երկրի»* 55
5. *Մխիթար Գոշի անտիպ երկերից* 70
6. *Հովհաննես Վանական Տավուշեցու անտիպ երկերից՝ «Պատճառք Առաջաւորաց պահոցն»* 78
7. *Գրիգորիս Աղթամարցու «Վարք Մարինոսի» պոեմը* 97
8. *Թումանյանների ծննդաբանությունը և Եփրեմ կաթողիկոսի 1813 թվի կոնդակը* 121
9. *Նյութեր Հարավային Ռուսաստանի հայերի պատմությունից* 134
10. *Գևորգ Մելքիսեդեկյան Խուբով* 143
11. *Հակոբ Շահան-Ջրպետյան և նրա նորահայտ ֆրանսերեն անտիպ երկասիրությունը* 186
12. *Նոր նյութեր Խ. Աբովյանի մասին* 195
13. *Ջափագիտության հայերեն աղբյուրներից* 214
14. *Կարնո հայ գաղթականների 1829 թ. գեներալ Պասկևիչին ուղղած գրության բնագիրը* 217
15. *Հայաստանում կարմիր որդան ներկի արտադրության պատմությունից* 220

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

1. *Արտավազդ և Մհերի հետքերը Վրաստանում* 237
2. *Վարդավառը վրացոց մեջ* 256
3. *Մի քանի խոսք Արլեզի պաշտամունքի մասին* 261

4. Հին Թբիլիսիի և հայ-վրացական մշակութային կապերի պատմությունից (Թբիլիսիի 1500–ամյակի առթիվ) 265
5. Չորրորդ Հայքի 774–775 թ.թ. գյուղացիական ապստամբության պատմության շուրջ 286
6. Դավիթ «Անհաղթի» Վրաստանում լինելու հարցի շուրջը . 304
7. Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զաքարյան Հայաստանում .. 326
8. Հայերը Վրաստանում 337
9. Հայերը վրաց հին գրականության մեջ 349

ՎԻՄԱԳԻՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ 373
XVI դարու՝ Ասլանի որդի Սարգսի քառալեզվյան հազվագյուտ արձանագրության մասին 376
Սուրբ Հռիփսիմեի և Սուրբ Գայանեի վանքերի երկլեզվյան չափածո տապանագիրը 386

ՅԱՎԵԼՎԱԾ

ЗАМЕТКИ

1. Несколько слов о термине “сомех” 397
2. Никиты Стифата, иеромонаха Студийсого, “Опровержение армянской ереси” *(*грузинская версия*)* *398*
3. Тезись Θεός ἐσταυρώθη у армян 399
4. К вопросу об устройстве алтаря в древней Грузии 401
Ангелы хранители 403
Семипечатие и его толкование, приложенные к ответу Спасителя на послание Абгара Эдесского, в редакциях грузинской и армянской 408

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 417

ՑԱՆԿԵՐ 457

ՊՐՈՖ. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

(1890-1963)

Դասական կովկասագիտության ներկայացուցիչներից քչերին
վիճակվեց հայագիտության նոր սերնդի տևական ուղեկիցն ու լծա-
կիցը լինել: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը ինքատիպ էր ոչ միայն հե-
տաքրքրությունների բազմակողմանիությամբ ու ընդգրկումներով,
այլ նաև գիտական երկու սերունդների կենդանի շաղկապումով: Նրա
առաջին հոդվածներն ու ուսումնասիրությունները երևացին այն
շրջանում, երբ հայագիտության ու վրացագիտության հիմնական
կենտրոնները տակավին դրսում էին գտնվում, որքան էլ ազնիվ ու
նվիրական գործունեությամբ, այնուամենայնիվ դրսում: Լևոն Մելիք-
սեթ-Բեկը իր կարողությունների բոլորակի նվիրաբերումով մասնակ-
ցեց հայրենական կրթօջախների ստեղծմանը և շուրջ 50 տարի
ստեղծագործեց կովկասագիտության երևելի ու սկսնակ ներկայա-
ցուցիչների հետ կողք-կողքի:

Լ. Մելիքսեթ-Բեկը ծնվել է 1890 թվականի սեպտեմբերի 26-ին,
Թիֆլիսում: Օրբելիանի պանսիոնում գրաճանաչության սովորե-
լուց հետո (1897-1899), ընդունվում է Թիֆլիսի ռեալական դպրոց
(1899-1908), իսկ ապա՝ Օդեսայի համալսարան: Իրավաբանական
ֆակուլտետում սովորելուն զուգընթաց, իբրև ազատ ունկնդիր, հա-
ճախում է նույն համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլ-
տետ և աշակերտում է Ա. Ալմասովին (կանոնական իրավունք), Ա.
Շպակովին (ռուսական իրավունքի պատմություն), Ա. Թոմսոնին
(լեզվաբանության ներածություն), Մ. Պոպրուժենկոյին (սլավոներե-
նի պատմություն), Է. Ֆոն-Շտերնին (հնագիտություն) և այլ գիտնա-
կանների:

Համալսարանական տարիներին ուսանող Լ. Մելիքսեթ-Բեկը
մասնավոր հետաքրքրություն է ցուցաբերում հնագիտության վերա-
բերմամբ: Ուսումնասիրության նպատակով մի քանի անգամ
ճամփորդում է Ռուսաստանի հայկական բնակավայրեր և կատարում
իր անդրանիկ հրապարակումները: 1913 թվականին ավարտում է
Օդեսայի (Նովորոսիյսկի) համալսարանը և Թիֆլիս վերադառնում:

Այս տարիներին գրած մեկ տասնյակից ավելի գիտական աշխատությունները ու հաղորդումները արդեն գրավել էին հայագետ-կովկասագետների ուշադրությունը: 21-23 տարեկան Լ. Մելիքսեթ-Բեկի աշխատանքների մասին գրախոսություններ են հրապարակում Լ. Քալանթարը, Հ. Մովսիսյանը, Գ. Թումանովը, Ա. Խախանաշվիլին և վերջապես ակադեմիկոս՝ Ն. Մառը: Ինչ խոսք, քննության առնվող հարցերը (օրինակ՝ «Վրացիների ազգակցությունը իսպանացիների հետ՝ ըստ հին աղբյուրների», «Հայկական հնությունները Աքերմանում», «Ռուսիո հարավում բնակվող հայոց պատմության նյութերից», «Հայոց Գերագույն պատրիարքի իրավական դրությունը», «Օդեսայում հայտնաբերված 15-րդ դարի Շարականոցը» և այլն, բոլորն էլ գրված ռուսերեն) ոչ հավասար գիտական լուծում ունեն, այդ պատճառով էլ գրախոսները բավականին կարևոր դիտողություններ են անում: Բայց գլխավորն այն է, որ Լ. Մելիքսեթ-Բեկը երիտասարդ հասակում ձեռնամուխ է լինում գիտական լուրջ հարցերի քննության, որոնց մի մասին նա հետագայում նորից պիտի անդրադառնար:

Թիֆլիսում, մինչև համալսարանում հայց լեզվի դասախոս նշանակվելը (1918 թ.), վարում է մի շարք պաշտոններ, այդ թվում Հայոց ազգագրական ընկերության խմբագրական մասնաժողովի անդամքարտուղար (նախագահ՝ Ե. Լալայանը), Մոսկովյան հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի իսկական անդամ և ապա՝ գիտական քարտուղար, վրաց լեզվի ու պատմության դասախոս Թիֆլիսի երրորդ արական գիմնազիայում և այլն:

Թիֆլիսի համալսարանի բացումը արդարև խոշոր իրադարձություն էր (1918 թ.): Նորաբաց համալսարանում կային երկու վրացագետ-հայագետ՝ ինքը Իվ. Ջավախիշվիլին և նրա ու Մառի աշակերտ Ա. Շանիձեն: Լ. Մելիքսեթ-Բեկի հրավիրումը նախ մեծացնում էր հայագիտական կադրերի պատրաստման ամբիոնի հնարավորությունները և ապա՝ նոր հեռանկարներ բացում երիտասարդ գիտնականի համար:

Մատենագրության պատմությամբ կամ հին լեզուներով զբաղվող մասնագետները, իբրև կանոն, գիտական լայն հետաքրքրություններ են մշակում: Ամենևին էլ զարմանալու չէ, որ լեզվաբան Հ. Աճառյանը հայ գրականության ու գաղթօջախների պատմություն էր գրում, կամ բանագետ Մ. Աբեղյանը գրավոր մատենագրությանն ու լեզվին վերաբերող դասական աշխատություններ ժառանգում նոր սերնդին: Կյանքի վերջին տասնամյակներում գերազանցապես լեզվաբան ճանաչված Ն. Մառը միաժամանակ հնագիտության, հայ ու մերձավոր արևելքի ժողովուրդների պատմության, մատենագրությունների, վիմագրության ու ճարտարվեստի խոշորագույն մասնագետ էր: Ն. Ադոնցի պես լայն ընդգրկում ունեցող պատմաբանը նույն սիրով ու հաջողությամբ զբաղվել է նաև քերականությամբ: Ահա այս միջավայրի ու հետքարքրությունների կրողներից մեկն էր և Լ. Մելիքսեթ-Բեկը:

Պատկառելի թիվ են կազմում գիտության այն բնագավառները, որոնցով զբաղվել է նա. գրականություն, պատմություն, բանահյուսություն, վիմագրագիտություն, հնագիտություն, բնագրագիտություն, լեզվաբանություն, հնագրագիտություն, արվեստագիտություն, պատմագիտություն, աղբյուրագիտություն, իրավունքի պատմություն, ազգագրագիտություն, մատենագիտություն, գեղարվեստական թարգմանություն և այլն: Այս ամենը ըստ արժանվույն գնահատելու համար պատշաճավոր մենագրական ուսումնասիրություն է անհրաժեշտ, ինչպիսին, հավատացած ենք, ժամանակի ընթացքում կարվի: Այստեղ կներկայացնենք մի քանի աշխատություն՝ հիմնական գծերով բնութագրելու համար պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի գիտական վաստակը: Նրա առաջին ծավալուն մենագրությունը վերաբերում է 11-13-րդ դարերի Հյուսիսային Հայաստանի կրթօջախներում ստեղծված մատենագրության ուսումնասիրությանը՝ «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց և նրանց ինքնությունը» խորագրով (1928 թ., Թիֆլիս, վրացերեն): Այն միաժամանակ գրված է հայ-վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունները 11-13-րդ դարերում լուսաբանելու շահագրգռությամբ: Պատմական Գուգարք-Լոռի-Տաշիր-Վրացդաշտ-Սևորդյաց աշխարհ-Սոմխեթ հասկացությունների պատմա-աշխարհագրական ճշգրտումներից հետո, գրքում բացահայտվում են տեղիս կրթօջախներում ստեղծված մատենագրության հիմնական արժեքներն ու նրանց երևան գալու դրդապատճառները: Անմիջական քաղաքական ու մշակութային աղերս ունենալով Վրաստանի հետ, 11-13-րդ դարերի Հայաստանի հյուսիսային գավառներում նկատելիորեն սրվում է դավանական հակամարտությունը, որը, ինչպես ճիշտ դիտված է, միայն այս կամ այն քրիստոսաբանական բանաձևումը մեկնելու հարց չէր: Հյուսիսային Հայաստանի ավանդապահ վարդապետները բանավիճում էին միաժամանակ և՛ Կիլիկյան հայ գործիչների (Ն. Շնորհալի, Գ. Տղա, Ն. Լամբրոնացի), և՛ մանավանդ վրաց հոգևորականների հետ: Այդ պատճառով էլ Մատթեոս Հաղբատեցու, Վարդան, Հակոբ, Անանիա

Սանահինցիների, Յովհաննես Սարկավագի, Վարդան Յաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու, Վանական վարդապետի, Ալավկա որդու, Տուտեորդու և այլոց մեզ հասած երկերը լավագույն սկզբնաղբյուրներն են այս շրջանի ինչպես հայ մշակույթի կացության, այնպես էլ հայ-վրացական պատմական-մշակութային փոխհարաբերությունների ուսումնասիրությունների համար: Երկարճանկ վարդապետությունը թափանցում էր հայոց վանական որոշ կենտրոններ (Պղնձահանք, Ոսկեպար, Յնեվանք, Քոբայր և այլն) և լուրջ վտանգ ստեղծում ավանդական միաբնյա վարդապետության և նրանով սնվող մատենագրության համար: Այդ պատճառով է, որ Անանիա Սանահնեցին, Տուտեորդին և այլք ահազանգով են խոսում հայ-բյուզանդական եկեղեցական մերձեցումների մասին, իսկ բյուզանդական վերաբերումը արձագանք է գտնում վրաց միջավայրում, երբեմն նույնիսկ մեղադրումների հասնում: 10-11-րդ դարերում բյուզանդական եկեղեցական շրջանակներում կուտակում տված հակամիաբնակ պամֆլետները թափանցում էին վրաց միջավայր և թարգմանվում՝ սաստկացնելով դավանական հակամարտությունը:

«Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» աշխատության մեջ որոշ հեղինակներ (Յովհաննես Սարկավագ, Անանիա Սանահնեցի, Մխիթար Գոշ) ներկայացված են նրանց ստեղծած ջատագովական քերթությունների լիակատար հավաքումով ու աղբյուրների քննարկմամբ: Նրանցից յուրաքանչյուրի մատենագրական ժառանգությունը սահմանելու և ճշտելու համար կատարված է խոշոր ու մանրազնին բանասիրական աշխատանք: Ավելին, երբեմն էլ զուգակշիռ հրապարակված են ամբողջական տեքստեր: Մխիթար Գոշի «Գծագրութիւն... յաղագս Վրաց» թուղթը, օրինակ, առաջին անգամ է բանասիրական քննության ենթարկվում, թեև տեքստը մինչ այդ արդեն հայտնի էր («Արարատ» 1909 թ.): Այստեղ հաստատվում է, որ «Գծագրութիւն...»-ը գրված է Զաքարիա և Իվանե Երկայնաբազուկների պատվերով՝ ի պատասխան վրաց հոգևորականության, և որ Գոշի նպատակը հայոց դավանանքի պաշտպանությունն է. «Յեղինակը (Գոշը) խնդրում է Զաքարիա և Իվանե Երկայնաբազուկներին ու վրաց կաթողիկոսին, որպեսզի նրանք իրենց հեղինակավոր ձայնը բարձրացնեն և միջնորդեն բարեպաշտ թագավորներ Թամարի ու Դավթի (Սոսլանի) առաջ՝ իրենց թագավորական իրավունքով վերջ տալու վրաց հոգևոր շրջանների հարուցած անվանարկությանը հայոց դավանության նկատմամբ և սաստելու հայոց հալածումից (էջ 242-243): Ընդ սմին՝ ծավալուն երկի համար նշվում են երկու հիմնական աղբյուր՝ Յովհան Օձնեցի և Անանիա Սանահնեցի: Այսպիսով, Լ. Մելիքսեթ-Բեկի առաջին մենագրությունը տևական ու խղճմիտ աշխատանքի արդյունք է՝ երկուստեք կարևորությամբ (հայագիտության և վրացագիտության համար), մանավանդ իր պատմական մասով և կից քարտեզ-տախտակներով և մատենագիտական սպառիչ ցուցումներով: Լ. Մելիքսեթ-Բեկի գրքի հրատարակությունից մեկ տասնամյակ անց Ի. Աբուլաձեն մասնավորեցրեց, որ Գոշը քայլ առ քայլ պատասխանում է Արսեն Իղալթոյեցու կողմից հունարենից թարգմանաբար կազմած «Դոգմատիկոնի» հակահայ դրվագներին:

Յետագայում, գիտնականը բազմիցս է անդրադարձել հիշյալ գրքում քննարկված հարցերին և ոչ սակավ լրացումներ արել: Դժբախտաբար գիրքը չունեցավ երկրորդ վերանայված հրատարակություն և առավել ևս հայերեն թարգմանություն, որը անկասկած, ավելի կընդլայներ նրա գործածության շրջանակը, ամբողջական ու հարուստ կլիներ:

Ն. Ադոնցի «Պատմական ուսումնասիրություններ»-ի հրատարակիչ Ա. Խոնդկարյանը գրում է, թե «...հանգուցյալի գիտական գրեթե բոլոր աշխատությունները կարճ մենագրությունների բնույթ են կրում. մի հանգամանք, որ Ն. Ադոնցը ինքը բացատրում էր Ն. Մառի դպրոցի ազդեցությամբ» (Փարիզ, 1948, էջ 11): Այս գնահատությունը ամբողջությամբ վերաբերում է և Լևոն Մելիքսեթ-Բեկին, որը թեև բառացիորեն Մառի աշակերտը չէր, բայց գործում էր նրա դաշտում և իրեն աշակերտ համարում: Ի դեպ, ակադ. Ն. Մառը պատշաճ ուշադրությամբ էր հետևում Մելիքսեթ-Բեկի ուսումնասիրություններին ու հրապարակումներին: Իր դասախոսություններից մեկում, երբ ինքը տարված էր «հաբեթական տեսությամբ», ցավ է հայտնում, որ թիֆլիսեցի իր աշակերտ Լ. Մելիքսեթ-Բեկը այդ ուղղությամբ ուսուցչապետի արած աշխատանքները համարում է քննության կարոտ կամ թեական: Մելիքսեթ-Բեկը հետևում էր *դասական ավանդներով գրաղվող Մառին* և, ինչպես ասվեց, նրա օրինակով ավելի նախընտրում դրվագային ուսումնասիրությունը, ուսուցչապետի պես ինքն էլ ժամանակ չգտնելով դրանք ի մի բերել: 1960 թվականին լույս տեսած լիակատար մատենագիտությամբ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը շուրջ 600 անուն աշխատությունների հեղինակ է, որոնց մեծ մասը, հասկանալի է, առանձին հոդվածներ ու հրապարակումներ են:

Երկրորդ ծավալուն աշխատությունը վերաբերում է վրացական աղբյուրների ուսումնասիրությանն ու թարգմանությանը. 1934 թվականին Երևանում լույս տեսավ «Վրաց աղբյուրները Յայաստանի ու

հայերի մասին» քառահատոր աշխատության Ա գիրքը (Բ-ը՝ 1936 թ., Գ-ը՝ 1955 թ.)[1]: Ընդգրկված յուրաքանչյուր հուշարձանի համառոտ առաջաբանում տրվում են նյութի բնութագրումը, պատմական-աղբյուրագիտական արժեքավորումը, որին հաջորդում է բնագրի թարգմանությունը: Լ. Մելիքսեթ-Բեկը միանգամայն ճիշտ է նկատում, որ 5-11-րդ դարերի վրացական պատմողական աղբյուրների վկայությունները Հայաստանի ու հայոց մասին բավական սահմանափակ նյութ են բովանդակում ժողովրդի պատմության համար: Բայց նկատելու է, որ վարքաբանական, վկայաբանական երկերում տեղ գտած որոշ տեղեկություններ անվերապահորեն կարևոր են Հայաստանի անցյալին վերաբերող որոշ հարցերի քննության ժամանակ: Հայերեն լեզվով պահպանված հակաքաղկեդոնական գրականության մեջ նույնքան միակողմանիություն կա, որքան միաբնակության դեմ ուղղված քաղկեդոնական երկերում: Ուստի իրական դավանականմատենագրական խնդրի ուսումնասիրության համար բյուզանդական ավանդներին հետևող վրացական հոգևոր երկասիրությունները կարևոր աղբյուր են՝ համեմատության միջոցով ճշմարիտ պատկերը ներկայացնելու համար: Լ. Մելիքսեթ-Բեկը չի գոհացել տեքստերի թարգմանությամբ. աղբյուրին վերաբերող համառոտ տեղեկանք ու մատենագիտություն տալուց բացի, կցել է հարուստ և ինքնուրույն ուսումնասիրության արժեք ներկայացնող ծանոթագրություններ, մեծ մասամբ տեքստաբանական-աղբյուրագիտական բնույթի: Վրաց աղբյուրները, իհարկե, իրենց ընդգրկումով ու տեղեկատվությամբ չեն չափվում հայ մատենագիրների մոտ գտնվող Վրաստանին վերաբերող տեղեկությունների հետ, այնուամենայնիվ, ինչպես վերևում նշվեց, նույժ անհրաժեշտ են ու կարևոր:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը հիմնականում ներկայացնում է վրացերեն բնագրով արդեն հրապարակված նյութեր, բայց առանձին դեպքերում քաղվածաբար թարգմանությունը կատարում է ձեռագրերին համեմատած կամ իր իսկ տպագրության պատրաստած բնագրերից: Այսպես, օրինակ, Արսեն Սափարացու «Վրաց ու հայոց բաժանման մասին» (IX դար) երկասիրությունը մինչև թարգմանությունը հայտնի էր մասամբ պակասավոր մեկ հրատարակությամբ («Քրոնիկներ», հատ. 1): Լ. Մելիքսեթ-Բեկը նախ երեք ձեռագրերի համեմատությամբ վերականգնած բնագիր է կազմել, ապա թարգմանել հայերենի: Ի դեպ, այս երկը մյուս բնագրերից ավելի ամբողջական է ներկայացված, ունենալով փոքր կրճատումներ: Տարիներ անց Սափարացու երկի գիտական բնագիրը ըստ չորս գրչագիր ընդօրինակման կազմեց Զ. Ալեքսիձեն («Վրաց աղբյուրագիտություն», IV, ԹԲ., 1973, էջ 127-145), ապա և վերահրատարակեց այն նոր սրբագրումներով ու քննությամբ (Թբ, 1980):

¹ Նախատեսված չորրորդ գիրքը, որտեղ ամփոփվելու էին «Վիմական տարեգիրքը, հայերենից թարգմանված երկասիրությունների տարբերակները, ժողովրդական բանահյուսությունը, հավելվածներն ու կարևոր ցանկերը», ցավոք, ավարտի չհասավ:

«Վրաց աղբյուրներ...»-ի Լ. Մելիքսեթ-Բեկի երեք հատորները մինչև այժմ հայագետներին լայնորեն մատչելի հիմնական հրատարակություններն են: Բայց անհրաժեշտ է նշել, որ հատվածաբար թարգմանություններից օգտվելը կապված է որոշ դժվարությունների հետ. ընդհանուր համատեքստից կտրված հատվածը օգտագործողին կարող է ոչ լրիվ համոզիչ եզրակացության հանգեցնել, առավել ևս՝ եթե վրացերենը քննական հրատարակություն չէ: Այժմ առկա է «Վրաց տարեգրքի» բնագրի («Քարթլիս ցխովրեբա»-յի) գիտական երկու հրատարակություն (մեկը ակադ. Ս. Ղաուխչիշվիլու աշխատասիրությամբ՝ երկու հատորով, մյուսը՝ ակադ. Ռ. Մետրևելու խմբագրությամբ), որոնք նկատելի սրբագրել ու բարվոքել են վրացերեն բնագիրը և, բնականաբար, նոր թարգմանությունները պիտի կատարվեն նրանց հիմամբ, կցելով հին հայերեն խմբագրությունը[2]: Սույն անհրաժեշտությունը պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը ոչ միայն չէր ժխտում, այլև ցավում էր, որ հայ-վրացական բանասիրությամբ զբաղվող մասնագետներ (խոսքը, իհարկե, հայազգի միջնադարագետ վրացագետներին է վերաբերում) քիչ ունենք: Հատկապես շատ անելիք կա միջնադարյան վրացական հրովարտակների, կալվածագրերի ու եկեղեցական-աշխարհիկ այլ փաստաթղթերի վկայությունները հայոց մասին ուսումնասիրելու և լուսաբանելու գործում: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը նախատեսում էր վերաթարգմանել հայկական բնագրի հիմքի վրա գոյացած վրացական որոշ խմբագրություններ (օրինակ՝ նշանավոր «Պատմություններ»-ը), բայց շատ այլ նախատեսումների հետ այս աշխատանքը ևս անավարտ մնաց[3]:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը իր գիտական աշխատանքի ընթացքում պակաս գործ չի կատարել հայերեն ու պատմողական բնագրերն ու-

² Այդ առումով վերանայման կարիք ունի նաև տողերիս հեղինակի աշխատասիրությամբ լույս տեսած «Վրաց ժամանակագրությունը» (Երևան, 1971):

³ Ինչ վերաբերում է հայերենից միջնադարում վրացերեն թարգմանված վարքագրական հուշարձաններին, ապա, դրանք, լույս տեսան մեր աշխատասիրությամբ՝ «Հայոց Վարք սրբոցի վրացական խմբագրությունը» վերտառությամբ (Ս. Էջմիածին, 2008):

ուսումնասիրելու և նրանց վրացերեն թարգմանությունները հրատարակելու մարզում: Դեռևս 1920 թվականին նա հրատարակում է «Վարք Ս. Գրիգոր Պարթևի» վրացական խմբագրությունը, որը, ուսումնասիրողի համոզմամբ, թարգմանված է 1081 թվականին (գոյություն ունի անտիպ երկրորդ թարգմանություն ևս), հունական մետափրասյան խմբագրությունից: Ի դեպ, լեզվական-տեքստաբանական հարցերում նրան օժանդակել է գրքի խմբագիր վրացագետ-արևելագետ ակադեմիկոս Կ. Կեկելիձեն, որին հրատարակիչը շնորհակալությամբ է հիշում: Տարիներ անց, (1952 թ.) Լ. Մելիքսեթ-Բեկը հրատարակեց Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկի 66-րդ գլխի վրացերեն թարգմանությունը, կատարված 18-րդ դարում: Յատկապես նշանավոր է Վախթանգ Զ-ի «Օրենսգրքի» հայկական մասի՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վրացերեն թարգմանության հրատարակությունը, բնագրին նախորդող առաջաբանով (1927 թ.): Վրաց «Օրենսգրքի» հայերենից թարգմանված մասը հայտնի էր դեռևս Մ. Բրոսեին ու Վահան վարդապետ Բաստամյանցին. նույնիսկ վերջինս կազմել էր հոդվածների համապատասխանության աղյուսակ-տախտակ: Այնուամենայնիվ, Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակությունը բազմաթիվ նոր հարցեր է առաջադրում և լուծումներ առաջարկում. մասնավորապես այստեղ կան հոդվածներ, որոնք յուրովի են խմբագրվել թարգմանիչների (կամ համապատասխան այլ իրավասու անձանց) կողմից և վրաց իրականության կնիք են կրում: Յրատարակիչը առաջաբանում խոստանում է հետագայում առանձին ուսումնասիրություն նվիրել Գոշի Դատաստանագրքի 18-րդ դարի առաջին տասնամյակի վրացերեն թարգմանությանը: Եթե այդպիսին պահպանվել է հանգուցյալ պրոֆեսորի անտիպ աշխատությունների մեջ, ապա նրա հրատարակության կարևորությունը կասկածից դուրս է: Պրոֆ. Մելիքսեթ-Բեկին ենք պարտական Թովմա Մեծոփեցու Պատմության՝ Վրաստանին վերաբերող դրվագի թարգմանության ու հրատարակության համար:

Տասնամյակներ շարունակ Թիֆլիսի համալսարանում հայ գրականության (մատենագրության) պատմություն դասախոսելով, Լ. Մելիքսեթ-Բեկը անհրաժեշտ է համարում վրացերեն լեզվով ձեռնարկ հրատարակել: Այն լույս է տեսնում 1941 թվականին (240 էջ): Ի դեպ, վրաց ընթերցողը մինչ այդ ծանոթ էր ական. Իվանե Ջավախիշվիլու «Յայոց հին պատմական մատենագրություն» աշխատությանը (1935 թ.), որտեղ ներկայացված են հայոց վկայաբանությունն ու վարքագրությունը 5-րդ դարում, վերջինիս մեջ ներառնելով Ագաթանգեղոսի և

Կորյունի աշխատությունները[4]: Լ. Մելիքսեթ-Բեկը կազմում է ավելի ընդհանուր բնութագիր ունեցող ձեռնարկ, որոշակի կիրառելով ական. Կ. Կեկելիձեի նշանավոր երկհատորյակի պարբերացման փորձն ու եղանակը: Ուստի, հայոց հին գրականություն հասկացությունը արդարացիորեն չի սահմանափակել գեղարվեստական պայմանականությամբ:

Լ. Մելիքսեթ-Բեկը չէր խուսափում և կնճռոտ կամ կնճռոտած հարցերի քննությունից, ինչպես, օրինակ, «Քորեպիսկոպոս» թե «Քորիկոս» (Գուրգեն թե՞ Կյուրիկե), որ սկզբունքային կարևորություն ունի Կախեթ-Յերեթ-Սոմխեթի պատմության համար (1951 թ.) կամ հայոց-վրաց-աղվանների այբուբենների ստեղծման խնդրի քննությունը (1957 թ.), որ ի վերջո մեր օրերում պիտի լուծվեր աղվանական կրկնագիր պատառիկների հայտնաբերմամբ ու Կորյունի վկայությունների փաստական հաստատմամբ: Այդպիսին է նաև Դիոնիսիոս Արիոպագացու և Պետրոս Վրացու նույնանձնության հարցադրումը, որ շարունակում է խնդրական մնալ:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի գիտական ժառանգության բաղկացուցիչ մասն են կազմում հնագիտական, ազգագրական և վիմագրագիտական ուսումնասիրությունները: 1938 թվականին նա հրատարակեց «Մեգալիթյան մշակույթը Վրաստանում» արժեքավոր ուսումնասիրությունը, հետագայում լրացնելով նոր նյութերով՝ «Մեգալիթյան մշակույթը Վրաստանում և նրա վերապրուկները Ռուսթավելու դարաշրջանում» (1943 թ.): Նա քիչ վաստակ չունի նաև միջնադարյան վրացական ու հայկական ճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրելու գործում, այդ թվում՝ Մցխեթայի տաճարը (նախապես Արմազիի մասին), Թռեղքի հուշարձանները, Թիֆլիսի վանքն ու Ս. Գևորգ եկեղեցին, Սևանի վանքը, Էջմիածնի, Գարեջայի և բազմաթիվ այլ վանքեր ու մենաստաններ: Լ. Մելիքսեթ-Բեկի ուսումնասիրությունների բնորոշ կողմն այն է, որ նա վարպետորեն է համադրում հնագիտական տվյալները պատմական սկզբնաղբյուրների ու արձանագրությունների ընձեռած վկայությունների հետ և եզրակացությունը կառուցում բացառապես փաստական նյութի վրա: Յարազատ մնալով հայ-վրացական բանասիրության ավանդույթներին, նա անենայն բարեխղճությամբ ու մանրակրկիտությամբ ներկայացնում է իր ուսումնասիրած հարցի պատմությունը՝ միշտ ու անխտիր արժանին

[4] Աշխատության առաջաբանում կարդում ենք. «Յուրաքանչյուր կրթված վրացու համար անհրաժեշտ է գիտենալ իր հարևան եղբայրական ժողովրդի՝ հայոց բազմատանջ, սակայն անչափ հետաքրքրական ճակատագիրը» (էջ. VI):

հատուցելով իրենից առաջ խնդրով զբաղված մասնագետներին: Եթե Լ. Մելիքսեթ-Բեկին որևէ աշխատության մեջ պատահեն վկայակոչության պակասի դեպքեր, ապա դա բացառապես հեղինակին անծանոթ լինելու կամ վրիպման արդյունք է: Նրա տեղյակությունն ու գիտական բարեխղճությունը ամեն մի կասկածից դուրս են:

Հետևելով Ն. Մառի, Հ. Օրբելու, Գարեգին կաթողիկոս Հովսեփյանի, Կ. Կոստանյանցի և ուրիշ անվանի բանասերների ավանդույթներին, Լ. Մելիքսեթ-Բեկը հայկական ու վրացական վիմագիր հուշարձանները վերծանող և ուսումնասիրող լավագույն գիտնականներից էր: Նա հեղինակել է տասնյակից ավելի աշխատություններ, որտեղ վիմագրական նորույթներ են առաջարկվում, իսկ երբեմն էլ ինքնատիպ լուսաբանությամբ ներկայացվում արդեն գիտությանը հայտնիները: Հատկապես նշանավոր է Գարեջայի մոնղոլական շրջանի (1352 թ.) քառալեզվյան արձանագրության (վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն) հայտնաբերումն ու վերծանումը (1940-1953 թթ.): Վերջինիս համադրումը 14-րդ դարի վրաց Անանունի «Ժամանակագրության» ընձեռած տվյալների հետ, թեև ոչ տառացիորեն համաժամանակյա, բանասերների ու պատմաբանների առաջ մի շարք խնդիրներ է դնում: Չորս լեզվով գրելու պարագան ինքնին բազմանշանակ երևույթ է, մանավանդ եթե նկատի առնենք տվյալ մենաստանի ուրիշ արձանագրություններ ևս, այդ թվում և հայերեն, որոնց ունեցած հաղորդումները առիթ դարձան Դավիթ Գարեջեցու և Դավիթ Անհաղթի նույնանձնության հարցադրման:

Լ. Մելիքսեթ-Բեկը պրպտելու զարմանալի կարողություն ուներ: Հաճելի անակնկալ էր 874 թվականի Սևանի հայերեն արձանագրության հայտնաբերումը, որտեղ միջնադարյան վիմագիր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Երևան բնակավայրը: Հանգուցյալը մասնավոր ուշադրությամբ ժողովում ու հրատարակում էր Վրաստանի սահմաններում պահպանված հայերեն արձանագրությունները (Ատեն, Դմանիս, Գարեջա, Ծավկիս-Թելեթ և այլն): Առանձնակի պարտականություն էր զգում միջնադարյան գրչագրերի երևան բերման ու նկարագրությունների հանդեպ:

Անուրանալի է գիտական այն մեծ ժառանգությունը, որ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը թողել է կովկասագիտությանը: Ընդհանուր նկարագիրը ամփոփելու համար նշենք, որ գիտնականը ոչ պակաս վաստակ ունի նաև հայ և վրաց գեղարվեստական գրականության ուսումնասիրման ու թարգմանության բնագավառում: 1930 թվականին լույս տեսավ նրա «Սայաթ-Նովայի ինքնությունը» վրացերեն գրքույ-

կը, որը, ինչպես մեկ ուրիշ առիթով նշել ենք, կարևոր ավանդ է սայաթնովագիտության մեջ: Փաստորեն առաջինը նա ապացուցեց, որ Հ. Աճառյանի նկարագրած Թավրիզի ձեռագրի հիշատակագրողը ինքը Սայաթ-Նովան է: Հինգ տարի անց նա վրացերեն է թարգմանում երգչի հայերեն խաղերը և հրատարակում մի արժեքավոր առաջաբանով: Նա կազմել է ու հրատարակել Շամչի-Մելքոյի երգերի ժողովածուն, առաջինը հրապարակ բերել Գևորգ Գորեցու երկլեզվյան բանաստեղծությունները և այլն: Լ. Մելիքսեթ-Բեկը հաճախ զբաղվել է և թարգմանությամբ՝ հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն, ռուսերենից հայերեն:

Ի վերջո, երկու խոսք էլ Լ. Մելիքսեթ-Բեկի մատենագիտական աշխատությունների մասին: 1949 թվականին Թիֆլիսում լույս տեսավ նրա «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները» քարտարանի առաջին գիրքը: Այստեղ ներկայացված են 5-19-րդ դարի 60-ական թվականների վրացական աղբյուրները, իսկ երկրորդ բաժնում՝ հայկական աղբյուրները Վրաստանի մասին: «Քարտարան»-ը սպառիչ տեղեկություններ է հաղորդում տվյալ սկզբնաղբյուրի մասին, մասնավորապես՝ հեղինակ, խորագիր, գրչության ժամանակ, բովանդակություն, ծավալ, հրատարակություններ, թարգմանություններ, գիտական գրականություն: Նույն սկզբունքով էլ ներկայացված են հայկական աղբյուրները՝ Ագաթանգեղոսից մինչև Վարդան Օձնեցի: Ծրագրված հաջորդ երկու գրքերում, ինչպես հեղինակի առաջաբանից ենք տեղեկանում, ներկայացվելու էին Վրաստանի մասին նյութեր պարունակող այլ աղբյուրները՝ բյուզանդական, ասորական, արաբական, պարսկական, թուրքական, սլավոնական-ռուսական, ինչպես նաև արևմտաեվրոպական լեզուներով եղածները: Որքանով անձնական զրույցներից մեզ հայտնի է՝ աշխատության երկրորդ գիրքը ևս պատրաստ էր տպագրության:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի յուրաքանչյուր աշխատություն ինքնին նաև մատենագիտություն է: Առանձին նա կազմել է «Ընձենավորը հայ գրականության մեջ», Գրիշաշվիլու հայերեն թարգմանությունները, Իսահակյանը վրաց գրականության մեջ և շատ ուրիշ մատենագիտություններ:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը իր ժողովրդի ներկայից կտրված գիտնական չէր: Նա արձագանքում էր գրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին (գիտական նստաշրջաններ, քննարկումներ, տարեդարձեր և այլն), հետևում և գրախոսում էր նոր հրատարակությունները, սրտի կսկիծով բողոքում հայ և վրաց ժողովուրդների միջև խառ-

նակություն ստեղծող խմբավորումների դեմ, հետևում ու պահպանում հայկական հնությունները Վրաստանում, վրացականը՝ Հայաստանում, միշտ հավատալով իր ժողովրդի ապագային, սիրելով նրան և թանկ գնահատելով նրա բախտակցին՝ վրաց ժողովրդին:

Լ. Մելիքսեթ-Բեկը ուղղամիտ, ուղղախոս ու անմիջական, մի քիչ էլ դյուրաբորբոք անձնավորություն և գիտնական էր:

Հայ-վրացական բանասիրության նոր ու գալիք սերունդները ազնիվ պարտականություն ունեն ճանաչելու և գնահատելու նրա մնայուն վաստակը:

* * *

Մահից մեկ տարի առաջ, կարծես ամփոփելով իր գիտական պրպտումների տարալեզու արդյունքները, Թիֆլիսում լույս տեսնող «Заря Востока» օրաթերթում հրատարակած անդրադարձը խորագրել էր «Իմ երեք մայրենի լեզուները», որոնք նա գործածել էր շուրջ վեց հարյուր միավոր կազմող աշխատությունները տպագրելիս: Ինչպես երևում է, գիտնականը ամեն անգամ ծանրութեթև է արել, թե հրապարակումը ո՞ր ընթերցողին է հասցեագրվում և նորույթը ո՞ր մատենագրության բաց էջն է լրացնում և ըստ այնմ ընտրել աշխատանքային լեզուն: Հարկավ հազվադեպ և նախանձելի կարողություն է, որը, սակայն, նկատելիորեն ազգայնացնում է ընթերցողների շրջանակը և դժվարություններ հարուցում գիտական ողջ ժառանգությունը ճանաչելու և գնահատելու գործում: Եվ իրավի՝ 100-ամյակի այս ժողովածուն կազմելիս երկմտանքը չէր լքում աշխատասիրողիս, թե արդյո՞ք կարևորագույն աշխատություններն են ընդգրկված: Դժվարությունը հաղթահարվեց պարզագույն եղանակով, նյութերը ներկայացնելով ըստ հրապարակման լեզվի՝ հատորներով: Հիշյալ առումով մեզանում, մանավանդ Ս. Էջմիածնի հրատարակչական խորհրդի հանձնառության պարագայում, նախընտրելի նկատվեց հայերենագիր աշխատությունների ընտրանիի հրապարակումը: Դրանք կարևորագույն բանագիտական, պատմաբանասիրական և աղբյուրագիտական այն աշխատություններն են, որոնք այսօր էլ կարդացվում են հրապարակման շրջանին հատկորոշ հետաքրքրությամբ և շատ հաճախ նոր պրպտումների մղում հայագիտության և կովկասագիտության նոր սերնդին: Մեր ծանոթագրություններից կարելի է հավաստիանալ, որ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի կիրառած ուսումնասիրության գիտական մեթոդն ու աղբյուրագիտական հիմնավորումները լիովին ապահովում են կատարվող եզրակացությունները և հիմք ծա-

ռայում արծարծվող խնդրի շուրջ մատենագիտական լիարժեքության ստեղծման: Հուսանք, որ մեր վրացի գործընկերները, մանավանդ, Լ. Մելիքսեթ-Բեկի անձնական հարուստ գրադարանը տնօրինող Թիֆլիսի համալսարանի հայագիտության ամբիոնի վրացագիտական-հայագիտական պատրաստություն ունեցող մասնագետները պատշաճ նախանձախնդրություն կցուցաբերեն (ինչպես այդ կատարեցին հանգուցյալ պրոֆեսորի «Ōngի բառարանը» հրատարակելիս) և նման մեկ ժողովածոյի մեջ կամփոփեն գիտնականի վրացերենով տպագրված աշխատությունների ընտրանին, իսկ այնուհետև, առտնին որոշ դժվարություններ հաղթահարելուց հետո, մենք միասնաբար ձեռնամուխ կլինենք հայ-վրացական բանասիրության մառյան ավանդներով գրված այլալեզու գործերի հատորի պատրաստմանը:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը անուրանալի վաստակ ունի հայագետների, վրացագետների և արևելագետների սերունդներ պատրաստելու ազնիվ ու նվիրական գործում, տասնյակների են հասնում նրա ղեկավարությամբ կամ ընդդիմախոսությամբ պաշտպանված ատենախոսությունները, նույնքան և ավելի են նրա խմբագրությամբ լույս տեսած գրքերը, այլազան առիթներով կազմած տեղեկանքներն ու գործնական գրախոսությունները: Այսօր էլ քիչ չեն մարդիկ, որոնք հիշում են փոքր ինչ արագախոս պրոֆեսորի կենդանի խոսքը, դասախոսությունները և հանպատրաստի տաք ու կրքոտ ելույթները:

* * *

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը վախճանվեց իր ծննդյան ամիս սեպտեմբերին, ուղիղ 73 տարեկան հասակում (1963 թ.): Հուղարկավորությանը մասնակցելու համար Հայաստանի ԳԱ պատվիրակություն էր կազմել՝ ըստ գիտության այն բնագավառների, որոնցով զբաղվել էր հանգուցյալը (Մ. Հասրաթյան, Աս. Մնացականյան, Գ. Գասպարյան, Պ. Մուրադյան): Մեզանից հրաժեշտի ու մխիթարության խոսք ասողը, բնականաբար, Մ. Հասրաթյանն էր, և նույնքան բնականաբար էլ նրա խոսքը ջերմ էր ու թախծալի, բայց բանավոր....

Այս առաջաբանն ավարտելիս թղթեներիս մեջ ստուգեցի այն ծրարը, որի մեջ հավաքել էի այդ օրերին լույս տեսած նյութերը: Վրացական «Գրական թերթը» տպագրել է Թբիլիսիի պետական համալսարանի, Վրաստանի գիտությունների ակադեմիայի և Վրաստանի գրողների միության համատեղ մահախոսականը, նույն էջում էլ՝ պրոֆ. Իոսեբ Մեգրելիձեի գնահատական խոսքը (1963, 6 սեպտ.):

ՀԳԱ «Տեղեկագիրը» տպագրել է տողերիս հեղինակի ընդարձակ հոդվածը՝ սև շրջանակով (1963, N 11, էջ 102-104)[5]:

Նույն ծրարում գտա ակադ. Ակակի Շանիձեի հրաժեշտի խոսքի իմ կատարած հայերեն թարգմանությունը, սակայն այսօր էլ չգիտեմ՝ բնագիրը վրացական որևէ թերթի՞ց եմ քաղել, թե հանգուցյալ ուսուցչապետից ինքս եմ խնդրել: Բոլոր պարագաներում անհրաժեշտ եմ համարում այստեղ բերել այդ ճշմարտացի գնահատության հայերեն թարգմանությունը.

«Սիրելի եղբայրդ իմ Լևոն, ես շատ ծանր պարտականություն եմ ստանձնել՝ Համալսարանի անունից հրաժեշտի վերջին խոսք ասել քեզ, այն համալսարանի անունից, որի աճման ու զարգացման գործում դու անվիճելի մեծ ծառայություն ունես: Դու համալսարանի հիմնադրման օրից իսկ սկսած գործակից էիր բարձրագույն հաստատության ու գիտական հիմնարկության և բազմաթիվ մասնագետներ պատրաստեցիր մեր երկրի համար:

Եղբայր իմ Լևոն, դու հետևում էիր այն ավանդույթներին, որոնց հիմնադիրը Սայաթ-Նովան և Գաբրիել Սունդուկյանն էին: Դու, ինչ խոսք, լավ էիր հիշում այն խոսքերը, որով Ակակի Ծերեթելին դիմեց Սունդուկյանին.

«Դու հայ ես, իսկ ես վրացի եմ մի,
Բայց մենք եղբայր ենք մեկս մյուսին, -
Երկուսս էլ որդի նույն հողի-ջրի,
Եվ նույն դաշտերի ու նույն սարերի»:

Այս նույն խոսքերով ես լիովին կարող եմ դիմել քեզ. մենք եղբայրաբար ենք աշխատել տարիներ շարունակ, մեր նպատակը մեր երկրի անցյալի ուսումնասիրությունն էր: Քո հետազոտությունների առարկան էր ոչ միայն հայկականը, այլ նաև վրացականը, քո գիտական շահագրգռվածությունը հավասարապես մասնաբաժին է ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի:

[5] Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը «Արարատ» և «Էջմիածին» հանդեսներում սիրով և հաճախակի հյուրընկալվող հեղինակներից էր: Պակաս չէին նաև նրան վերաբերող ետմահու անդրադարձերը. «Էջմիածինը» 1962-ին տպագրել է նրա հոդվածը՝ նվիրված Գարեգին Հովսեփյանի մահվան 10-րդ տարելիցին (1962, հունիս, էջ 23-25), մեկ տարի անց՝ գուժել Լ. Մելիքսեթ-Բեկի մահը (1963, դեկտ., էջ 59-60), հաջորդ տարվա համարում ներկայացրել հանգուցյալ պրոֆեսորի «Հայ գրողները և Վրաստանը» գիրքը (1964, հոկտ., էջ 61-62), իսկ 1966-ին անդրադարձել ծննդյան 75-ամյակին (ապրիլ, էջ 55-60):

Երբ անդրադառնում եմ քո գիտական և հասարակական գործունեությանը ուղղակի զարմանում եմ՝ որքան բան կատարեցիր և որքան բան հասցրիր կատարելու, որքան մշուշապատ հարցեր լուսաբանեցիր: Բազմակողմանի ու մեծապես արդյունավետ էր քո գործունեությունը. պատմություն թե գրականագիտություն, իրավագիտություն, վիմագրություն, տեքստերի հրատարակություն թե թարգմանություն հայերենից-վրացերեն կամ վրացերենից-հայերեն: Դու անդրադառնում էիր բազմագույն հարցերի և լուծում այն պայծառագույն ձևով:

Լիովին կարելի է ասել, որ քիչ են այնպիսի բազմակողմանի և բեղուն գործիչները, ինչպիսին դու էիր: Դու լասաբանում էիր հայ-վրացական մշակութային փոխհարաբերության հարցերը, որը օժանդակում էր այս երկու հարևան ժողովուրդների եղբայրության ու բարեկամության ամրապնդմանը: Դու քո անդադրուն և անխոնջ աշխատանքով շատ առաջ տարար հայ-վրացական բանասիրությունը:

Դու դաստիարակեցիր բազմաթիվ մասնագետներ, որոնք շնորհակալությամբ են հիշում քո անունը:

Խաղաղությամբ գնա, եղբայրդ իմ Լևոն: Դու զգայուն հոգու տեր էիր, միշտ որոնում էիր, միշտ հետազոտում, միշտ աշխատում, իսկ արդ՝ հանգստացիր:

Քո բարեկամներն ու դաստիարակածները միշտ բարությամբ կհիշեն քեզ, կհիշեն մի մարդու, որը այնքան մեծ ծառայություն մատուցեց երկու հարևան ժողովուրդների անցյալի ուսումնասիրության գործին»:

Ակակի Շանիձե
ակադեմիկոս

* * *

Ժողովածու ընդգրկված հոդվածներն ու հաղորդումները հանգուցյալ հեղինակը ձևավորել ու հղումներ է կատարել՝ ըստ հնարավորին թեթևացնելով ու համասեռ դարձնելով տպագրական սարվածքը: Երբեմն գերադասել է հայերենի թարգմանել կամ նույնիսկ գրադարձել վրացերեն և այլ քիչ գործածական լեզուներով եղած վկայակոչությունը կամ գրականությունը: Քանի որ նման մոտեցման դրդապատճառը ընթերցողին ասելիքը հասկանալի դարձնելն ու օտար ընթերցանությանը վարժեցնելն է՝ հարմար նկատեցինք պահ-

պանել հեղինակի կիրառած եղանակը, ինչպես որ գերադասեցինք չսրբագրել թիֆլիսահայ միջավայրից եկող առանձին բառեր ու արտահայտություններ: Նրանք հեղինակին ընտել և տասնամյակներ ուղեկցած միավորներ են:

Յարկավ ներկայացվող աշխատություններում կային ուղղելի տեղիներ՝ մանավանդ կովկասագիտության մերօրյա պատկերացումների շրջագծում: Նման դեպքերում լրացումներ կատարել ենք ծանոթագրման եղանակով, իսկ ինչ վստահաբար վերապահելի կամ թյուր էր՝ մասնագիտական պարտք ենք համարել չանտեսել:

Իր հայագիտական մտորումների ու պրպտումների պահերին պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը տանը թե դրսում միայնակ էր կրում մասնագիտական հիշողության բեռը, քաջալերում կամ կասկածում իր կռահումը: Թե հրապարակելիս նրանք ինչ որակ էին կազմում՝ կիմանա այս պատմա-բանասիրական պրպտումների աշխարհի մտնողը[6]:

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

[6] **P. S.** Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի աշխատությունների հատոր հրատարակելու միտքը նոր չէ. գիտնականի մահից որոշ ժամանակ անց տողերիս հեղինակն այդ հարցն արծարծել է ԳԱ փոխնախագահի ակադ. Մ. Գ. Ներսիսյանի հետ և ստացել նրա հավանությունը: Ցավոք, սակայն, առ այդ եղած պայմանադրությունը արձագանք չգտավ հանգուցյալի ընտանիքում, և գործը մնաց առկախ:

Գիտնականի ծննդյան 120-ամյա տարելիցի առթիվ դիմում կատարեցի Ամենայն Յայոց Վեհափառ Յայրապետին և Ս. Էջմիածնի պատվարժան Յրատարակչական խորհրդին (տնօրեն Եզնիկ արքեպս. Պետրոսյան) և, ստանալով նրանց խոհեմամիտ համաձայնությունը՝ գոհացում տվի մասնագիտական պարտականությանս: - Պ. Մ.

ՄԻ ՓՈՐՁ «ԳԻՐՔ ԹՂԹՈՑ»-Ի ԹԵՐԻ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

«ԳԻՐՔ ԹՂԹՈՑ»-Ը ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՑԻՆ ՄԵՋ
ԱԿԱԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈ ՄԸՆ Է:
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿ. ՕՐՄԱՆՅԱՆ

Հայ մատենագրության մեջ «Գիրք թղթոց»-ը մեկն է մեծ հռչակ վայելող այն երեք ժողովածուներից («Գիրք թղթոց», «Կնիք հաւատոյ», «Կանոնագիրք»), որոնք սկիզբ են առել Ե-Ը դարերում[1]*:*

Այս ժողովածուներից երկուսը, այն է «Գիրք թղթոց»-ը և «Կնիք հաւատոյ»-ն, մեզ հասել են մեկական հազվագյուտ ձեռագիր օրինակներով, մասնավորապես առաջինը իբրև արտագրված 1298 թվականին Կիլիկիայում:

Վերջինս մինչև 1871 թվականը գտնվում էր Հռոմում, ապա «ի Կոստանդնուպօլիս...յՕրթաքէօյ», այսինքն Անտոնյան հայ կաթոլիկ վանքում (1): Եվ ահա այստեղ, Կոստանդնուպոլսում, ձեռագիրը լիովին ընդօրինակվել է ու տրամադրվել «Հովսեփ Իզմիրյանց գրական հանձնաժողովին», որը և լույս է ընծայել այն 1901 թվականին Թիֆլիսում, իբրև «Սահակ-Մեսրոպյան մատենադարան» շարքի Ե գիրք (տպարան Տ. Ռոտինյանցի և Մ. Շարաձեի, ԺԸ +584 էջ):

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Գիրք թղթոց»-ի ձեռագիրը, ի թիվս հիշյալ վանքի մատենադարանի այլ ձեռագրերի, փոխադրվել է Լիբանանի Զմմառի հայ կաթոլիկ վանքը, ուր և գտնվում է այժմ:

«Գիրք թղթոց» ժողովածուի կազմության մասին հայ բանասիրության մեջ արտահայտվել են մի քանի կարծիքներ:

[1] ***Լ. Մելիքսեթ-Բեկ***, «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», Թբիլիսի, 1928, էջ 69 (վրացերեն), ***նույնի*** «Յայոց «Գիրք թղթոց»-ի նորահայտ տարբերակը և Պետրոս Իվերացու աշակերտ Յովհան Մայումեցին», «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր, ԺԱ, Թբիլիսի, 1941, էջ 41-80 (վրացերեն, ռուսերեն ամփոփումով). ***նույնի*** «Յայ հին գրականության պատմություն», Թբիլիսի, 1941, էջ 63-66 (վրացերեն), ***նույնի*** «Յույն-բյուզանդականք հին հայոց «Թղթոց գրքում», «Բյուզանդական տարեգիր», ԺԲ, Մոսկվա-Լենինգրադ, 1957, էջ 263-269 (ռուսերեն):

Ըստ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի, «Գիրք թղթոց»-ը Հայոց Հայրապետանոցին մեջ սկսած պաշտոնական հավաքածո մըն է, որ «հետզհետե կազմված է Դվնա Կաթողիկոսարանին մեջ, իբրև դիվան Հայրապետանոցի, և հետզհետե բարդվելով յուր կանոնավոր լրումը ստացած է Օձնեցիին ձեռքով, վասնզի անկե ետքը եղած հավելվածները շատ անկանոն և կցկտուր են»[2]:

Ըստ Հ. Ներսես վարդապետ Ակինյանի, «Գիրք թղթոց»-ը Մովսես եպիսկոպոս Ցուրտավացու կազմածն է[3], ըստ Ն. Ադոնցի՝ Կոմիտաս կաթողիկոսի[4], իսկ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը գտնում էր, որ «Գիրք թղթոց»-ի ... հիմնական մասը ... ամփոփվել և մի որոշ ժողովածու է դարձել Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով կամ օրով»[5]: Այս վերջին կարծիքի ենք և մենք: «Գիրք թղթոց»-ը, որն 98 դավանաբանական թղթեր է պարունակում, շուրջ Ե-ԺԳ դարերի, բաղկացած է 3 հիմնական շերտերից:

Առաջին շերտը սկսվում է զույգ թղթերով, որոնց վերնագրերն են. ա. «Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ սուրբն Սահակ Հայրապետ Հայոց և առ սուրբ Մաշտոց» և բ. «Պատասխանի թղթոյն Պրոկղի երանելւոյ, ի Սահակայ և ի Մաշտոցէ, սուրբ վարդապետացն Հայոց» (էջ 1-13):

Սրանց հետևում են հայոց և հունաց, հայոց և ասորոց, հայոց և վրաց եկեղեցականների ու մարմնավոր իշխանության աստիճանավորների միջև թղթակցություններ:

Ապա գալիս է «Տեառն Կոմիտասու Հայոց կաթողիկոսի՝ Վասն հավատոյ» գրվածքը (էջ 212-219), որից հետո մի դարու սահմաններում ժողովածուն ընդհատվում է:

Կոմիտաս կաթողիկոսի երկին կցված է հիշատակարան հետևյալ բովանդակությամբ (էջ 219). «Աւրինակ գրոցս, որ լեալ էր Տէր Գրիգորիսի Վկայասիրի, մինչև ցայս վայր էր. և նա այսպէս էր գրեալ. զՎահրամ որդի Գրիգորոյ Մագիստրոսի յիշեսջիք յաղաւթս ձեր, ո՛վ երջանիկ դասք ուղղափառաց խմբիցդ Ագքանազեան սեռի, ՇԻԷ (1078) թուականին»:

---

[2] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան,** «Ազգապատում», Ա, էջ 608:

[3] **Հ. Ներսես վրդ. Ակինյան,** «Կյուրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 37-44:

[4] **Ն. Ադոնց**, «Ամպեղիս եպիսկոպոս Քերսոնի (Հայոց «Գիրք թղթոց»-ի քննության շուրջ)», «Քրիստոնեական Արևելք», Բ, Պետերբուրգ, 1913, էջ 175-176 (ռուսերեն):

[5] **Կարապետ եպիսկոպոս** [**Տեր-Մկրտչյան**], «Կնիք հավատոյ», Էջմիածին, 1914, էջ XXV-XXVI:

Այս հիշատակարանով ապացուցվում է, որ «Գիրք թղթոց»-ի նախնական խմբագրությունը հասնելիս է եղել մինչև Է դարի սկիզբը, այսինքն մինչև Կոմիտաս կաթողիկոս (618-628): Այստեղից բխում է այն եզրակացությունը, որ այս նախնական խմբագրությունը ծանոթ է եղել Ժ դարի պատմիչ Ուխտանես եպիսկոպոս Ուռհայեցուն (Եդեսացուն) իբրև «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց» երկի հեղինակին, և օգտագործվել է ուրիշների կողմից:

«Գիրք թղթոց»-ի Երկրորդ շերտը թեև սկսվում է «Յովհաննու Իմաստասիրի հայոց կաթեղիկոսի՝ Սակս ժողովոց, որ եղեն ի Հայս» գրությամբ (էջ 220-233), որը, անկասկած, Հովհան Օձնեցու գրչին է պատկանում, սակայն մուծված է ժողովածուի մեջ ոչ թե գրության ժամանակին, այն է Ը դարի սկզբին, այլ ԺԱ դարից հետո, ընդգրկում է վավերագրեր և երկեր Ը-ԺԱ դարերից:

Նման եղանակով է կազմված նաև ժողովածուի երրորդ (վերջին) շերտը:

Ի դեպ, նշենք, որ այս վերջինը առանձնապես աչքի է ընկնում Գրիգոր Նարեկացու, Վարդանի, Վանականի և Սահակ կաթողիկոսի գրչից ելած ու «Բանք խրատականք վասն հաւատոյ» կոչված երկերով, որոնք ամփոփված են ժողովածուում ԺԳ դարում:

«Գիրք թղթոց»-ը տպագրվելուց անմիջապես հետո (2), գրավեց բանասեր-հայագետների ուշադրությունը, որոնք այն ուսումնասիրեցին և հետազոտեցին այլևայլ մոտեցումով: Այսպես, օրինակ, Ե. Տեր-Մինասյանն օգտագործեց այն հայ-ասորական փոխհարաբերությունների պատմության շարադրման համար[6], Իվ. Ջավախիշվիլին[7] և Հ. Ն. Ակինյանը[8] հայ վրացական եկեղեցական պառակտման խնդրի լուսաբանության նպատակով, իսկ Ագնես Ֆինկը, Եզնիկ Գյանջեցյանի հետ միասին[9], ինչպես և Ն. Ադոնցը[10], տողերիս գրո-

---

[6] **Ե. Տեր-Մինասյան,** «Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորվոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908. ***նույնը գերմաներեն***, Լայպցիգ, 1904, ***նույնի*** «Նեստորականությունը Հայաստանում», «Գրական-բանասիրական հետախուզումներ»,Ա, Երևան, 1946, էջ 175-242:

[7] **Ի. Ա. Ջավախով** «Վրաց և Հայոց եկեղեցական պառակտման պատմությունը է դարում», «Կայսերական Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», Ս. Պ. բ., 1908, էջ 433-446, 511-536 (ռուսերեն):

[8] **Հ. Ներսես վրդ. Ակինյան**, «Կյուրիոն կաթողիկոս վրաց», էջ 37-44:

[9] **Ագնես Ֆինկ** և **Եզնիկ Գյանջեցյան**, «Փոտի թուղթը Աշոտին և վերջինիս պատասխանը», «Հանդես հայագիտության», Բ, 1, Մարբուրգ, 1903, էջ 1-17 (գերմաներեն):

[10] **Ն. Ադոնց**, «Ամպեղիս եպիսկոպոս Քերսոնի»:

ղը[11], վերջապես Մ. Տալլոնը[12] և Վ. Ինգլիզյանը[13]՝ հայ-հունական (բյուզանդական) փոխհարաբերությանց պատմության գծով:

* * *

«Գիրք թղթոց»-ի 1901 թվականի հրատարակության նախաբանից տեղեկանում ենք, որ ժողովածուի «Ձեռագրի ընդօրինակության և առաջին բաղդատության հսկողը եղավ գլխավորապես Տ. Հովհաննես ավագ քահանա Մկրյան. տպագրության հոգը կատարեց Տ. Գյուտ ավագ քահանա Աղանյանց. իսկ Տ. Բաբգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյան (հետագայում Բաբգեն Ա աթոռակից-կաթողիկոս Տանն Կիլիկիո, 1931-1936: Լ. Մ. -Բ.) վերջին բաղդատությունը ըրավ և կազմեց հատուկ անվանց և վրիպակներու ցանկը (էջ Ը):

Նույն նախաբանում նշված է նաև, որ ձեռագրի «թուղթերուն թվահամարը կհասնի մինչև ՅԿԱ-361, և երեսներուն թվահամարը՝ մինչև 722, բայց միջանկյալ անճշտություններ և տարբերություններ կան, ինկած թերթերու պակասը նկատի առնվելեն կամ չառնվելեն հառաջ եկած» (էջ Ը-Թ):

Ապա (էջ Թ-Ժ) մի առ մի հիշատակված են ձեռագրի պակասավոր մասերը:

Ընդ սմին, չնայած, որ «3 թուղթ ինկած են սկզբեն, որք նախադուռը, գուցե և նախաբան մը կամ բովանդակության ցուցակը պարունակեին»,...«այսուհանդերձ գիրքին բովանդակությունը ամբողջ է, որովհետև ճիշտ ու ճիշտ առաջին գրվածին մակագրութենեն կսկսի ձեռվընիս գտնված հատորը» (էջ Ժ):

«Գիրք թղթոց»-ի հրատարակումից մի տարի հետո պարզվեց, որ թեև «այդպիսի մի ընտիր պատմական աղբյուր թերատ է հասել մեզ», սակայն հնարավոր է «բարեբախտաբար այդ պակասը լրացնել... Մայր Աթոռի ձեռագրերից»: Եվ ահա Գևորգյան ճեմարանի ուսանող Հ. Գյուլխանդանյանն իր ավարտական շարադրության նյութ է դարձնում այդ խնդիրը և ապա «Արարատ» ամսագրի էջերում հրատարակում իր հետազոտության արդյունքները՝ ««Գիրք

[11] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Հույն-բյուզանդականք...»:

[12] **Մ. Տալլոն**, «Թղթոց գիրք»-ը **ա**. խումբ. հույների հետ փոխհարաբերությանց վկայող վավերագրեր», « Ս. Հովսեփոսի համալսարանի Տեղեկագիր», հատ. ԼԲ, պրակ Ա, Բեյրութ, 1955 (ֆրանսերեն):

[13] **Վահան վրդ. Ինգլիզյան,** «Դիտողություններ «Գիրք թղթոց»-ի ֆրանսերեն թարգմանության շուրջը», «Հանդես ամսօրյա», 1959, էջ 228-240:

թղթոց»-ի պակասները և նրանից դուրս մնացած թղթերը» վերնագիրը կրող հոդվածաշարով (1902 թ., էջ 560-569, 748-753):

Սրանով պարզվեց , որ «Գիրք թղթոց»-ի տիպի ձեռագիր, թեև մի փոքր տարբեր բովանդակությամբ, եղել է և Մայր Աթոռի ձեռագրաց հավաքածուի մեջ, Գևորգյան ցուցակով № 58-ի ներքո (3), որին վաղուց ծանոթ են եղել Մայր Աթոռի միաբաններ Դատյան Խաչիկ և Տեր-Մկրտչյան Կարապետ վարդապետները և Գալուստ Տեր-Մկրտչյանը՝ Միաբանը (տե՛ս «Արարատ»-ի 1896, 1897 և 1900 թվականների համարները):

Չնայած այն հանգամանքին, որ Ն. Ադոնցը մի փոքր թերագնահատում էր «Գիրք թղթոց»-ի նշանակությունը, գտնելով, որ այն իբր թե «ոչ մի նորություն չի պարունակում, քանի որ նրա մեջ մտած հոդվածները, հազվագյուտ բացառությամբ, հայտնի էին ձեռագրաց այլ հավաքածուներից, բայց և այնպես այն կարևոր է հենց իբրև հավաքական գործ», այնուամենայնիվ նա գրում էր, որ «այստեղ մենք տեսնում ենք, թե ո՞ր վավերագրերն ու ո՞ր երկասիրությունները էին համարվում հայոց մեջ ավելի հեղինակավոր և վճռական՝ եկեղեցական դավանաբանության բարդ խնդիրների մեկնաբանության միջոցին»[14]:

* * *

Վրաստանի պետական թանգարանի հայերեն ձեռագրերը ցուցակագրելիս, մոտ 20 տարի սրանից առաջ, մենք հայտնագործեցինք մի կարևոր ձեռագիր, արտագրված 1316 թվականին, որը մի տեսակ փորձ է «Գիրք թղթոց»-ի, «Կնիք հաւատոյ» և «Կանոնագիրք» կոչված հավաքածուների միաձուլման:

Ձեռագիրը մեր ցուցակագրությամբ կրում էր 20 համարը, որ հետագայում դարձավ 130 (4):

Ձեռագիրն ունի հետևյալ 6 հիշատակարանները.

ա. «Զներսէս սուտանուն քահանայս՝ զգրող գրոյս յիշ[եսջիք] յաղաւթս ձեր» (էջ 35բ):

բ. «Զմեղուցեալ եւ զծփուն գրողս զՆերսէս եւ զծնաւղսն իմ յիշեսջիք, աղաչեմ, միոյ Տէր ողորմ[ե]այիւ, եւ Աստուած զձեզ յիշեսցէ ի յիւր միւս անգամ գալուստն» (էջ 69բ):

գ. «Տէր Աստուած, ողորմեա Ներսիսի եւ Մովսիսի եւ ծնօղաց նոցին եւ զարմից եւ յիշողացն եւ ամենայն հաւատացելոց Քրիստոսի մերոյ, ամէն» (էջ 69բ):

[14] **Ն. Ադոնց**, «Ամպեղիս եպիսկոպոս Քերսոնի», էջ 175:

դ. «Ի թվին ՉԿԵ (1316) խնդիր եղեւ այսմ իրի» (էջ 70բ)[15]:

ե. «Զբազմամեղ եւ զբիւր քանքարաց պարտականս զՆերսէս եւ ծնաւղսն իմ յիշեա, ո՜վ Հայր բարունի» (էջ 313բ):

զ. «Տէր Աստուած, ողորմեա Ներսէսի եւ Մովսէսի եւ ծնաւղաց նորին եւ զարմից եւ որք յիշեն զմեզ ի բարի եւ քեզ յամենայնի. ամէն. եւ եղիցի, եղիցի ամէն» (էջ 330ա)[16]:

Ժողովածուն պարունակում է 45 հոդված և երկասիրություն, որոնք են.

1. Յոհաննու մի[այնակե]ցի, տեսողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վերիացոց, [եթէ] անաւրէն եւ ամպարտաւան ժողովն Քաղքեդոնի ի բարկութենէն Աստուծոյ եւ ի թողլոյն ի ձեռաց [եղեւ եւ ոչ ի Հոգւոյ]ն Սրբոյ, որպէս Նիկիայն, Կոստանդնուպաւլսին եւ Եփեսոսին: Եւ վկայեն այս նախատեսութիւնք սրբոցն, որ եղեն յառաջ քան զժողովըն եւ որ յետ այնորիկ» (էջ 1ա-35ա):

2. «Թուղթ սիրոյ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ սուրբ պապուն Սեղբեստրոսի եւ Տրդատայ Հայոց արքայի եւ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» (էջ 36ա-66ա):

3. «Յաղագս ժողովոց» (էջ 66ա-69ա):

4.«Սակս գաւառաց» (էջ 69ա-69բ):

5.«Աւրէնք պատուիրանաց Աստուծոյ մերոյ» (էջ 70ա-84բ):

6.«Վասն ասպարիզաց» (էջ 84բ-87ա):

7.«Վասն Ադամայ կենացն դրախտին» (էջ 87ա-94ա):

8.«Սակս հերձուածողաց» (էջ 94բ-95բ):

9.«Յաղագս իշխանութեան» (էջ 95բ-96ա):

10.«Վասն անապա[կ] բաժակին, յոր ոչ է պարտ ջուր խառնել ի սուրբ խորհուրդն» (էջ 96բ-102ա):

11.«Յաղագս բնութեան» (էջ 102բ-104բ):

12.«Սակս առաքելոցն ձեռնադրութեան» (էջ 105ա):

13.«Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Հայոց» (էջ 105բ-106ա):

14.«Ի հարանց կանոնացն» (էջ 106ա-107բ):

15.«Ի Նիկիոյ կանոնացն» (էջ 107բ-108բ):

16.«Սրբոյն Գրիգորի առաքելոյ[ն] Հայոց» (էջ 108բ-110բ):

17.«Ի Սրբոյն Աթանասի կանոնացն» (էջ 110բ-111բ):

18.«Ի Սրբոյն Բարսղի կանոնացն» (էջ 111բ-114բ):

[15] Այս չորրորդ հիշատակարանը մտել Լ Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» գրքում (Երևան, 1950), էջ 126:

[16] Այս վեցերորդ հիշատակարանն ևս, թեև վերջը կրճատված, տես նույն տեղում: Ի դեպ, նշենք, որ երկու դեպքում էլ Լ. Խաչիկյանի ուշադրությունից վրիպել է մեր համապատասխան ուսումնասիրությունը նվիրված այս ձեռագրին:

19«Ի Սրբոյն Բարսղի կանոնացն» (էջ 114բ-118ա):

20.«Ի կանոնաց Ներսիսի կաթուղիկոսի եւ Ներշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսի» (էջ 118բ-119բ):

21.«Ի Գանգրայ կանոնաց» » (էջ 119բ-121ա):

22.«Կանոնք Տեառն Եպիփանու» (էջ 121բ-122ա):

23.«Ի Սրբոյն Սահակայ կանոնացն» (էջ 122ա-123ա):

24.«Յովհաննու Մանդակուն[ւ]ոյ» (էջ 123ա-127ա):

25.«Եպիսկոպոսք Երուսաղէմի, որք յետոյ պատրիարգք» (էջ 127ա-127բ):

26.Սոքա ի թղպատութենէն» (էջ 127բ-128բ):

27.«Յովհաննու Մանդակունւոյ» (էջ 128բ-129բ):

28. «Սրբոյն Դիոնիսիոսի Արիսպագացւոյ Յաղագս Աստուածածնին բան» (էջ 129բ-130ա):

29.«Կարնոյ կանոնք» (էջ 130ա-130բ):

30.«Մանուէլի» (էջ 130բ-131բ):

31. «Ներսէսի կաթուղիկոսի՝ եղբաւրն Տէր Գրիգորի Հայոց կաթողիկոսի՝ Վասն ազգականութեան» (էջ 131բ-140ա):

32.«Նորին Եզնկայ» (էջ 140ա-144ա):

33.«Ի դատաստանագրոցն սակաւ ինչ» (էջ 144բ-147բ):

34. «Աւրէնք աստուածադիրք ի ձեռն Մովսիսի յԵլից գրոց» (էջ 148ա-148բ):

35.«Վասն ծննդեան Փրկչին» (էջ 149ա-155ա):

36.«Վասն մտաց չարժման (էջ 155ա-157բ):

37.«Յաղագս խնդութեան» (էջ 157բ-160բ):

38.«Հարցումն Յոբնաղի եւ պատասխանի Մովսէսի եւ Հայոց փիլիսոփայի» (էջ 161ա-165ա):

39.«Յաղագս հաւատոյ բան» (էջ 165ա-171բ):

40.«Սակս բարութեան» (էջ 171բ-172բ):

41. «Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հոգելից հարցն սրբոց ըստ առաքելասահման աւանդիցն Եկեղեցւոյ Քրիստոսի հանդերձ հաւատաբանութեամբ ճշմարիտ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայցս, ասացեալ Սրբոյ վարդապետին Սահակա[յ] կաթողիկոսի եւ մեծի թարգմանչի՝ Ընդդէմ երկաբնակացն նեստորականացն» (էջ 173ա-313բ):

42. [«Սակս գաւառաց»], համառոտ (էջ 314ա). հմմտ. № 4:

43.«...կամաւք եկեալ» (էջ 314ա-315բ):

44.«Ներսիսի՝ Տարսանացւոյ արքեպիսկոպոսի» (էջ 315բ-316բ):

45.«Յաղագս Սրբոյն Գրիգորի» (էջ 317ա-329ա):

* * *

Այս ցանկում հիշված հոդվածներից մի քանիսը մեզ հաջողվեց հրատարակել 1941 թվականին:

ա. «Յաղագս ժողովոց» (№ 3)[17], որն առնչվում է Հովհան Օձնեցու «Սակս ժողովոց, որ եղեն ի Հայս»[18] և Գրիգոր Տաթևացու «Հաղագս ժողովոց, որ եղեն [ի Հայոց]»[19] գործերին:

բ. «Սակս գաւառաց» (№№ 4 և 42)[20], որն արձագանքում է բյուզանդական Հուստինիանոս Ա կայսեր 536 թվականի օրենսդրական 31-րդ նովելլայով Փոքր Հայքի չորս գավառների (Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքի) բաժանելու միջոցառումին, ասել է՝ այն բաժանման, որը քաջ ծանոթ է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեզ հասած խմբագրության Ա գրքի ԺԴ գլխից[21], ինչպես նաև Անանիա Շիրակացու «Աշխարհացոյց»-ից[22](5):

գ. «Վասն ասպարիզաց» (№ 6)[23], որը մի հազվագյուտ հուշարձան է հայ չափագիտական աղբյուրների շարքում[24]:

«Գիրք թղթոցի» պակասավոր և թերի կամ վնասված մասերի վերականգնման տեսակետից առանձնապես կարևոր են № 1-ի և № 41-ի ներքո համարակալված ընդարձակ գրությունները, որոնք հիմնականում դավանաբանական վեճերի շուրջն են պտտվում, սակայն և պարունակում են կարևոր տվյալներ գաղափարախոսական բախումների մասին վաղ ֆեոդալիզմի շրջանի Հայաստանում:

[17] «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր» ԺԱ, էջ 46-47: Նույնը գերմանական Տյուբինգենի համալսարանի գրադարանի հայերեն ձեռագրաց հավաքածուի № 102,էջ 158-159ա (տե՛ս սույն աշխատության 28-րդ ծանոթագրության մեջ հիշված «Ցուցակ»-ը, էջ 167-168):

[18] «Յովհաննու Իմաստասիրի Յայոց կաթուղիկոսի՝ Սակս ժողովոց որ եղեն ի Յայս» («Գիրք թղթոց», էջ 220-233):

[19] «Գիրք հարցմանց երիցս երանեալ Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն», Կ. Պոլիս, 1729, էջ 542-544:

[20] «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր» ԺԱ, էջ 48: Նույնը Գերմանական Տյուբինգենի համալսարանի գրադարանի հայերեն ձեռագրաց հավաքածուի № 102, էջ 159բ (տե՛ս սույն աշխատության 28-րդ ծանոթագրության մեջ հիշված «Ցուցակ»-ը, էջ 168):

[21] «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Յայոց» Տփղիս, 1913, էջ 46-47:

[22] **Ա. Գ. Աբրահամյան** «Անանիա Շիրակացու մատենագրությունը», Երևան, 1944, էջ 347, 349. «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ», Վենետիկ, 1881, էջ 25, 30: Յմմտ. **Ն. Ադոնց**, «Յայաստանը Յուստինիանոս կայսեր ժամանակ», Ս. Պ. բ., 1908, էջ 165-171 (ռուսերեն):

[23] «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր» ԺԱ, էջ 49. Նաև «ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Յայկական ֆիլիալի Տեղեկագիր», 1949 , № 3, էջ 41-43:

[24] **Ա. Գ. Աբրահամյան**, հիշյալ աշխատությունը, էջ 88-89, 115, 186, 196:

Սրանցից առաջինը (№ 1), այն է «[ասացեալն] Յոհաննու միայնակեցի, տեսողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վերիացւոց...», պատկանում է Ե դարի հեղինակ Մայումի (Ղազի) Հովհան եպիսկոպոսի (Հովհան Ռուփուսի) գրչին և հունարեն բնագրում կոչվում է «Պլերոփորի», այսինքն «Արժանահաւատ վկայութիւնք», որը հրատարակել են համաձայն Լոնդոնի Բրիտանական թանգարանի № 14 650 ձեռագրի 90-134 էջերի, արևելագետներ Մ. Բրիերն և Ֆ. Նոն[25]: ԺԲ դարի վերջում Միքայել Ասորի պատրիարքը (1166-1199) մտցրել է այն ամբողջապես իր «Ժամանակագրության» մեջ[26], որը առկա է հին հայերեն թարգմանությամբ[27]: Անկախ սրանից, այս գրվածքը, իբրև լոկ Հովհան Մայումեցու երկասիրություն, գոյություն ունի և առանձին և այն էլ առնվազն 3 տարբերակներով, որոնցից մեկն է Վրաստանի պետական թանգարանի № 20/130 օրինակը, էջ 1ա-35ա, մյուսը՝ Գերմանական Տյուբինգենի համալսարանի գրադարանի հայերն ձեռագրաց հավաքածուի № 102, (XIII) էջ 136բ-156բ[28], և երրորդը՝ «Գիրք թղթոց»-ի մեջ ամփոփվածը, տպագիր տեքստի էջ 510-525:

Սակայն այս 3 տարբերակներից ընդհանրություն կա առաջինի և երկրորդի միջև, որոնք միևնույն վերնագիրն են կրում՝ «Յովհաննու միայնակեցի (var. միակեցի), տեսողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վերիացոց և այլն», մինչդեռ «Գիրք թղթոց»-ի մեջ այն կոչվում է «Բանք խրատականք վասն հավատոյ, զոր յայտնեալ է Հոգին Սուրբ աստուածասէր արանց աւգտակարք ի ժամանակս ժամանակս»:

Ինչ վերաբերվում է մյուս գրության (№ 41), այն՝ ինչպես Վրաստանի պետական թանգարանի № 20/130 ձեռագրում, էջ 173ա-313բ, նույպես և «Գիրք թղթոց»-ում էջ 413-482, միևնույն վերնագիրն է կրում՝ «Բացայայտութիւն համաձայն աստուածաբանութեան հո-

[25] **Ֆ. Նո,** «Յովհաննու, Մայումի եպիսկոպոսի, Պլերոֆորի», «Ռըվյու դը լ'Օրիան կրետիեն», հատ. Գ, 1898, էջ 367 և այլն, նաև առանձին՝ Փարիզ, 1899, (ֆրանսերեն): «Պատրոլոգիա Օրիենտալիս», հատ. Ը, պրակ 1 (հունարեն և ֆրանսերեն):

[26] «Միքայել Ասորու՝ Անտիոքի հակոբիկ պատրիարքի (1166-1199) ժամանակագրությունը, անդրանիկ հրատարակություն և թարգմանություն ֆրանսերենի **Ժ. Շաբոյի**», հատոր Գ, պրակ 1, Փարիզ, 1901, էջ 69-88 (ասորերեն և ֆրանսերեն):

[27] «Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ», Երուսաղեմ, 1871, էջ 176-206:

[28] «Սիստեմատիկ այբբենական Մայր ցուցակ Տյուբինգենի կայսերական համալսարանի գրադարանի: Ձեռագրեր. ա. արևելյան. ԺԳ Ցուցակ հայերեն ձեռագրերի, կազմեցին **Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ** և **Լևոն Գյանջեցյան**», Տյուբինգեն, 1907, էջ 167 (գերմաներեն):

գելից հարցն սրբոց... ասացեալ Սրբոյ վարդապետին Սահակայ կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ Ընդդէմ երկաբնակացն Նեստորականացն»:

* * *

Վրաստանի պետական թանգարանի № 20/130 ձեռագիրը, ինչպես և Միքայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունը, հնարավորություն են տալիս վերականգնելու «Գիրք թղթոց»-ում «Բանք խրատականք»-ի թերի տեղերը, սկսած վերնագրից: Այսպես, օրինակ.

ա. «Գիրք թղթոց»-ի էջ 513, տող 5՝ «ասաց հայրն սրա սիրեաք մեռեալ են», պետք կարդացվի՝ «ասաց հայրն Զենոն, որ ասի Գ. մեռելեան» (ձեռ. № 20/130, էջ 7բ-8ա, Միքայել Ասորի, էջ 181):

բ. «Գիրք թղթոց»-ի էջ 514, տող 25-26՝ «եւ ոչ ևս հաղորդեցաւ մինչև ցմահ մահուան իւրոյ», պետք կարդացվի՝ «եւ այլ ոչ ևս հաղորդեցաւ մինչև ցմահ» (ձեռ. № 21/130, էջ 10բ, Միքայել Ասորի, էջ 184):

գ. «Գիրք թղթոց»-ի էջ 517, տող 1՝ «Պատմեաց քահանայն Ավփել... բացին», պետք կարդացվի՝ «Պատմեաց քահանայն Աւփիոս Կեսարացին» (ձեռ. № 20/130, էջ 15բ, Միքայել Ասորի, էջ 188):

դ. «Գիրք թղթոց»-ի էջ 520, տող 26-27՝ «Եւ կատարումն... բացն եկն յայս, զի կամեցան հրով փորձել... հաւատն», պետք կարդացվի՝ «Եւ կատարումն իւրացն եղև, զի երէցն խնդրեաց հրով փորձել զհաւատն» (ձեռ. № 20/130, էջ 23բ, Միքայել Ասորի, էջ 196):

Բացի այս, տարբեր ընթերցվածներ են պարունակում մեր ձեռագրի և «Բանք խրատականք»-ի (ըստ «Գիրք թղթոց»-ի) վերջին մասերը:

Ըստ «Գիրք թղթոց»-ի (էջ 525).

«ՅԱնտիոք Ասորւոց բնակեալ էր մերձ յարքունիս այր մի սքանչելի, որ սակաւ բանջարով լնոյր զպէտս իւր, և չառնոյր ինչ յումեքէ, և էր յոյժ յանդիմանիչ Քաղքեդոնացւոցն, և ասէր. Հոտ անուշընութեան և մահու գայ ինձ, ի ձէնջ, և ոչ կարեմ տանել լրութեամբ: Եւ սպանին զնա, և բազում նշանք եղեն ի նմանէ:

Գտեալ եղև յՈւռնայ քաղաքի տապան մի հրէի, որ ունէր գիր ի հազար ամաց հետէ, և այս ևս գրեալ էր ի նա, եթէ Աստուած մարմնով ծնցի ի կուսէ, և խաչիւ ծագէ լոյս փառաց նորա ընդ տիեզերս ամենայն: Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս»:

Մինչդեռ հիշյալ ձեռագրում սրա փոխարեն կարդացվում է (էջ 34բ-35ա).

«ՅԱնտիոք Ասորոց, մերձ յարքունիս, բնակեալ էր ոմն այր սքանչելի, որ ոչ առնոյր ինչ յումեքէ, բայց սակաւ բանջար, որով լնոյր զպէտս իւր. և զի սաստիկ և յայտնի յանդիմանէր զքաղկեդոնիկսն, սպանաւ ի նոցանէ տանջանաւք, քանզի ասէր նա, թէ՝ Հոտ անուշընութեան գայ ինձ հանապազ ի տեսանելն իմ զնոսա և ոչ կարեմ տանել լռութեամբ»:

Այս հատվածին մեր ձեռագրում կցված է հիշատակարան երկասիրության հայերեն թարգմանիչների թվարկումով, որով, հետևապես, ճշտվում է թարգմանության ժամանակը՝ ԺԳ դարը: Իսկ հիշատակարանին անմիջապես հետևում է երկասիրության «վերջաբանը»:

Հիշատակարանը կարդացվում է այսպես (էջ 35ա).

«Թարգմանեցաւ յասորոց ի մերս լոյս վարդապետին Վարդանայ աշխատութեամբ և ասորի էրիցու Իշաւխ անուն բանատութեամբ»:

Հետևապես, Հովհան Մայումեցու կամ որ նույնն է, Հովհան Ռուփուսի գրվածքը թարգմանվել է ասորերենից Վարդան [վարդապետ]ի և Իշաւխան երեցի աշխատասիրությամբ, որոնց համագործակցությունը հայտնի է նաև մի շարք այլ երկերի թարգմանության բնագավառում ԺԳ դարում (Կիլիկիայում):

Վերջաբանի բովանդակությունն է (էջ 35բ).

«Այս Պետրոս [եպիսկոպոսն Վերիացոց - Լ. Մ.-Բ.] գրեաց ի Հայս և երանեաց վասն ոչ լինելոյ նոցա ի ժողովն [Քաղքեդոնի-Լ. Մ.-Բ.] և ասաց յայտնապէս՝ ի Քաղքէդոն ուրացան զՔրիստոս. դուք պինդ կացէք ի հայրենի հաւատդ, որ շնորհեցաւ ձեզ ի Տեառնէ և աշխարհիդ ձեր. զի որպէս երբեմն սերմն մարդկութեանս այդուստ սփռեցաւ ընդ աշխարհս, նոյնպէս և առ ձեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ. և ի ձէնջ տարածանելոց է ընդ բազումս. ո՜ղջ լերուք յանսասանելի վէմն Քրիստոս, որդեա՛կք իմ»[29]:

* * *

Համեմատաբար ավելի զգալի է «Գիրք թղթոց»-ի վերականգման ուղիով «Բացահայտութիւն... ասացեալ Սրբոյ վարդապետին Սահակայ կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ Ընդդէմ երկաբնա-

[29] Յմմտ. **Արշակ Տեր-Միքելյան,** «Հայաստանյայց եկեղեցին և բյուզանդյան ժողովոց պարագայք», Մոսկվա, 1892, էջ 89, ծան. 1:

կացն նեստորականացն»[30] ընդարձակ վերնագիրը կրող երկասիրությունը, ըստ Վրաստանի պետական թանգարանի № 20/130 ձեռագրի, էջ 17ա-313բ (տե՛ս վերևում № 41-ի ներքո), և ըստ «Գիրք թղթոց»-ի տպագիր օրինակի, էջ 413-482:

Այստեղ, իհարկե, կարիք չկա ծանրանալու այն հարցի վրա, թե ո՞վ է այս գրվածքի հեղինակը, քանի որ հայագիտական գրականության մեջ այդ գրվածքի հեղինակն է համարվում Սահակ Գ. Ձորափորեցին (677-703 թ.թ.)[31]: Եվ ահա այս՝ Սահակ կաթողիկոսի գրվածքն է, որ «Գիրք թղթոց»-ի մեջ ղգալիորեն աղավաղվել է, և այժմ մենք հնարավորություն ունենք աղավաղված մասերը գրեթե լրիվին վերականգնել ըստ Վրաստանի պետական թանգարանի № 20/130 ձեռագրի:

Ստորև մենք բերում ենք բոլոր այն թերի նախադասությունները և տողերը, ուր փակագծի մեջ մացրածը ավելացված է ըստ հիշյալ ձեռագրի:

Այսպես օրինակ՝

ա. «Եւ զի առաջին և վեհին (փոխանակ վերին- Լ. Մ.-Բ.) իմաստութիւնն («Գիրք թղթոց», էջ 415, տող 12, մեր ձեռագիրը, էջ 177ա):

բ. «եւ փոխանակ [նորա] ի մարդկային մահականացու» (Գ. Թ. 447, տող 21, մեր ձեռ. 240բ):

գ. «զՄիածին (Գ. Թ.+ Որդին, որ աւելորդ է- Լ. Մ.-Բ.) իւր ետ» (Գ. Թ. 459, տող 4, մեր ձեռ. 264բ):

դ. ի խա[չն ետ զՄիածինն] վասն կենաց մարդկան» (Գ. Թ. 459, տող 4-5, մեր ձեռ. 264բ):

ե. « աստուածապետա[կանն] Յիսուս» (Գ. Թ. 459, տող 31-32, մեր ձեռ. 266ա):

զ. Եւ նզովեցաւ ի Պաւղոսէ, որ Քրիստոսի[ւն խաւսէր] և ասէր» (Գ. Թ. 468, տող 1-2, մեր ձեռ. 283ա):

է. «Աստուած ճշմարիտ ասացին զխաչեալն եւ [անմահ] անապական» (Գ. Թ. 469, տող 19, մեր ձեռ. 286ա):

[30] Քաղկեդոնիկներին նեստորական հորջորջելու մասին տե՛ս **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա, Երևան, 1934, էջ 40. **Ե. Տեր-Մինասյան,** «Նեստորականությունը Հայաստանում», «Գրական-բանասիրական հետախուզումներ», Ա, Երևան, 1946, էջ 175-242:

[31] **Ե. Տեր-Մինասյան,** «Հայոց եկեղեցու հարաբերությունները Ասորվոց եկեղեցիների հետ», Էջմիածին, 1908, էջ 290: Նույնը գերմաներեն, Լայպցիգ, 1904, էջ 136, «Տիմոթեոս Կուզի հակաճառությունը», Էջմիածին, 1908, էջ XX, ծանոթ. 1. **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան,** «Ազգապատում» Ա, էջ 528: **Լ. Մելիքսեթ-Բեկ,** «Բյուզանդական տարեգիր», Ը, Մոսկվա-Լենինգրադ, 1956, էջ 208-222 (ռուսերեն):

ը. «Իսկ որք մարդ համարին զնա [տկար մահ]կանացու եւ ապականացու» (Գ. Թ. 469, տող 20-21, մեր ձեռ. 286ա):

թ. «Ջուրն [ի միմեանս] խառնեալ» (Գ. Թ. 472, տող 24, մեր ձեռ. 292ա):

ժ. «Եւ զանձ ասաց, եւ [ահա ոչ է] մարդարիտ և ոչ զանձ, այլ նման [է նոցա եւ] զի՞նչ իցէ նմանն» (Գ. Թ. 477, տող 1-2, մեր ձեռ. 301ա-բ):

ժա. «ոչ լին[ի հաց] կենդանական» (Գ. Թ. 478, տող 14-15, մեր ձեռ. 304ա-բ):

ժբ. «իսկ մեք բաղարջ հաց[իւն, որ է] անապականութեան նշան, անապական [եւ անմահական] եւ կենդանարար» » (Գ. Թ. 478, տող 15-16, մեր ձեռ 304ա-բ):

Միաժամանակ «Գիրք թղթոց»-ի 453 (տող 11)-454 էջերը պիտի վերականգնվեն հետևյալ ընթերցումով (մեր ձեռ. էջ 252բ-255բ) (6). «...Քանզի դարձեալ ասէ Աթանաս՝ Ադամ զանմեղ մարմինն ի դատապարտութիւն և յապականութիւն էարկ. իսկ Քրիստոս զանապական և խափանիչ մահու եւ փրկանակ մահացելոցս եցոյց. ոչ կարաց մահ զին[քեամբ] ածել զհոգին Քրիստոսի եւ ոչ ապականութիւն յափշտակել կարաց զմարմինն նորա. զի այս [իմանալ ամպարշտու] թիւն է (էջ 253ա). զի թէ զմեղս աշխարհի եբարձ, [որ է մայր ապա]կանութեան, զիա՞րդ ասեն ոմանք ի մոլ[որելոց թե ապա]կանացու էր մարմինն Քրիստոսի: Արդ տես [հաւաստեաւ]. զի ամպարիշտս եւ մոլորեալս ի ճշմար[տութենէն ա]սաց զայնոսիկ, որք ապականութեան եւ մ[ահկանացու]թեան կարծիս առնուն ի մարմինն Քրիստոսի նախ ք[ան զխաչն], զի մայր մահու և ապականութեան մեղքն են. ի[սկ ուր] մեղք ոչ իցեն՝ ապականութեան եւ մահու անհնար [է] երեւեալ. ըստ որում եւ Բարսեղ Կեսարու ասէ առ Ապողինար. Ոչ փոփոխելի էր Քրիստոս, մի՛ լիցի, զի մի՛ մեղանչու[մն] (էջ 253բ) ի ներս մտցէ յանմեղանչելին. թե կարասցես գտանել անձնաւոր մարմին յառաջագոյն գոյացեալ եւ [ապա] միաւորեալ ընդ Բանին Աստուծոյ ի մահ փոխումն. [ապա] թէ գոյութիւն մարմնոյն ոչ է առանց միութեան Բանին. զի գոյացեալ զնա միութեամբ Բանին ծանեա[յ. զի՞ խընդ]րես փոփոխումն, զի մարմին եւ միտք միաւորեալ [Աստուծոյ] Բանին ոչ փոփոխին. տեսանես, զի ամենայն [հարքն] սուրբք համաձայն միմեանց ասացին ոչ [լինել հնար] ապականութեան եւ փոփոխման մահու, [յոք առանց] մեղաց լինել. իսկ եթէ ապականութիւն [կամ] (էջ 254ա) փոփոխումն կամ մահականացութիւն, յոք ու[րեք լիցի, անդ] հարկ է նախ մեղաց լինել, որ (էջ Գ.

թ. 454) մայրն [է սոցա եւ ապա] սոքա ծնունդք նորա: Ապա ուրեմն [քան զսատանայ] եւ քան զՀրեայսն անդէն չարութեամբ հ[այհոյիչք Քրիստոսի են], որք ապականութեան եւ փոփոխութեան [եւ մահկան]ացութեան եւ կամ այլ ինչ մարդկային տկարութեան կարծիս առնու ի մարմինն Քրիստոսի նախ քան զ[խաչն. զի ըստ] այսց կարծեաց եւ մեղացն գալ հետ [զոր եւ ոչ սատանայ] իշխեաց զայս խորհել. զի ասէ՝ Գա[յ իշխան աշխարհիս այսորիկ եւ յիս ինչ ո]չ գտանէ (էջ 254բ) յիւրայոցն եւ ցՀրե[այսն ասէ՝ Ո՞վ յան]դիմանեսցէ ի ձէնջ զիս վասն [մեղաց, վասն] որոյ սաստկապէս նզովեցին Գիրք [սուրբք զայսպիս]ի խորհողսն. սակս որոյ ասէ սքանչե[լագործն Գր]իգոր. թէ ոք ասէ փոփոխելի կամ այլ[այլելի զՔրիստոս] եւ ոչ խոստովանեսցի զնա հոգւով ա[նապական] ի մարմնի, որպէս եւ գրեալ է, նզովեալ եղիցի: Եւ դարձեալ ասէ. Զի՞րդ ասէ ոք փոփոխելի կամ այլայլելի զՔրիստոս, զի ինքն ասէ. Ես նոյն եմ եւ ոչ փոփոխիմ. եւ դարձեալ, թէ ոչ թողու անձն նորա ի դժոխս եւ ոչ մարմին նորա ետես զապականութիւն (էջ 255ա): Եւ արդ՝ բաւական են ասացեալքս ի յանդիմանութիւն այնոցիկ, որ ապականութեան կամ [տկ]արութեան կարծիս առնեն կամ փոփոխման, կամ մահկանացութեան ի մարմինն Քրիստոսի նախ քան զխաչն. [զի] ահա աստուածային գիրք միեւնոյն աւրինակ ասացին [լինել] զՔրիստոս անդստին իսկ յարգանդէ կուսին եւ [մինչեւ ցխ]աչն եւ մինչեւ [ց] յաւիտեանս. ըստ որում ասէ Պաւղոս. Հիսուս Քրիստոս երէկ եւ այսօր նոյն է եւ յաւի[տեան]: Յետ այսր ամենայնի տեսցուք զհարց[եալսն ի ձէնջ], թէ զի՞ արդ փոքր տեսակ չափովք [քանակեալ փայ]տ խաչին եւ դիտակէզն կարող(էջ 255բ)[նայր տանել] զանբովանդակելին եւ զամենա[ծախն Աստուած, զի] ահա Տէր Աստուած մեր հուր ծախիչ է: [Արդ զարմ]անք ընդ անտեղի եւ ընդ հանդէպ [հարցումնդ]. զի թէ վասն փոքրութեան չափոյն [ասելիք ոչ կարող]անալ տանել, ապա ոչ երկինք եւ ոչ եր[կիր եւ ոչ միա]համուռ ամենայն արարածք բաւա[կան են տա]նել զնա, թող թէ այս ինչ կամ [այն, որպէս ասէ] Սողոմոն յաղաւթսն իւր, թէ եր[կինք եւ երկն]ից երկինք չեն քեզ բաւական. զի՞արդ տունս այս կարէ տանել զքեզ…»

ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԵՑԻ՝ ԺԱ-ԺԲ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐԸ ԵՎ ԹՈՆԴՐԱԿԵՑԻ ՈՒ ԾԱՅԹ ՀԱՅԵՐԸ

Հույն-բյուզանդական և հարակից մտայնության դեմ հայ իրականության մեջ գաղափարական պայքար էր մղվում ԺԱ-ԺԲ դարերում երկու ճակատով[1]: Դրանցից մեկն էր «հյուսիսային վարդապետներ»-ի մղած պայքարը, ղեկավարությամբ խոշորագույն գիտնական Սոփեստոս Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու: «Հյուսիսային վարդապետներ»-ի մասին ԺԳ դարի անանուն վրաց պատմիչը իրավամբ գրել էր. «Նրանք պարծենում էին նրանով, որ հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին»[2]:

Պայքարի երկրորդ ճակատը ղեկավարում էին Տարոնում «հարավային վարդապետներ»-ը, որոնց գլխավորում էր Պողոս Տարոնեցին:

Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու և Պողոս Տարոնեցու՝ այս երկու պայծառ դեմքերի՝ ուսերին էր ծանրանում գաղափարական պայքարն ընդդիմադիր ուժերի ոտնձգությունների դեմ:

Մինչ Հովհաննես Սոփեստոսի կյանքը և գրական վաստակը մատենագրական տեսակետից բավականին լուսաբանված են, Պողոս Տարոնեցունը դեռևս մնում է մշուշի մեջ: Այս հոդվածում նպատակահարմար ենք գտնում խոսել նրա կյանքի ու գործունեության մասին:

* * *

Պողոս Տարոնեցու կենսագրության և գրական գործունեության վերաբերյալ մենք ունենք միմիայն կցկտուր տեղեկություններ հայ և օտար աղբյուրների մեջ:

Պողոս Տարոնեցուն սովորաբար դասում են ԺԱ դարի մատենա-

[1] Տես ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», Թբիլիսի 1928, էջ 160-162 (վրացերեն): Նաև մեր գրախոսականը՝ «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, 1957 թ., № 4, էջ 130-131:

[2] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. Ա. էջ 219:

գիրների շարքը[3]: Բայց դա ճիշտ չէ, քանի որ Պողոսը, Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ, մահացել է 572 (=1123) թվականին, 6 տարով միայն կանխելով Հովհաննես Սոփեստոսի մահը (1):

Մատթեոս Ուռհայեցին, որի վկայությունը միակն է Պողոս Տարոնեցու կենսագրության մասին, գրում է հետևյալը. «Յայսմ ամի [ՇՀԲ] մեռաւ մեծ իմաստասէրն Հայոց Պօղոս վարդապետն: Սա երևեալ այր հրաշալի, տեղեակ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ: Սա հասեալ շնորհացն առաջին սուրբ վարդապետացն և երկրորդ լուսաւորիչ երևեալ տանս Հայոց և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց, և յոյժ ախոյեան լեալ ուղղափառաց և անպատկառելի վարուք ի կեանս իւր կացեալ ընդդէմ հերետիկոսաց: Եւ էր սա ի Տարօն գաւառէն: Յայսմ ամի մեռաւ և թաղեցաւ ի վանս Ղազարու մերձ ի Սասուն»[4]:

Պողոս Տարոնեցու երկերից մեկին՝ «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» աշխատության հետագայում կցված հավելվածում (ԺԸ դարում), որը «Ձեկուցումն առ բարեսէր ընթերցօղսդ վասն հեղինակին գրքոյս» վերնագիրն է կրում, նրան հետևյալ կերպ են բնութագրել. «...ի ժամանակին յայնմիկ նա միայն ունէր զշնորհս իմաստութեան և վարդապետութեան ի մէջ ազգին Հայոց, որպէս և առաջին իմաստասէրքն տանս Հայոց: Որ և էր բանիբուն և կարի հմուտ Հնոց և Նորոց Կտակարանաց և լցեալ ամենայն գիտութեամբ աստուածեղէն Սուրբ Գրոց...Այլ [հակառակորդքն] աղքատ հմտութեամբ ջանացեալ ընդդէմ հզօր գիտնականիս այսմիկ և իմաստասիրի Հայոց մաքառիլ, որ առժամայն լի ամօթով լեալ յաղթահարեցան ի սոյն վարդապետէս Հայոց»[5]:

Պողոս Տարոնեցու երկերը բազմաթիվ ձեռագրերով են հասել մեզ (Վատիկանի, Վենետիկի Մխիթարյանց, Հայաստանի Մատենադարանի և այլն): Այդ երկերի վերնագրերում նա կոչվում է «եռամեծ և բանիբուն ուղղափառ վարդապետ»[6], «գործնական և արդիւ-

[3] ***Գարեգին վրդ. Զարբհանալյան,*** «Հայկական հին դպրության պատմություն», Դ-ԺԳ դար, Գ հրատ., Վենետիկ, 1897, էջ 605: ***Աբր. Զամինյան,*** «Պատմություն հայ գրականության», մասն Ա. Նոր-Նախիջևան, 1915, էջ 163-164: Ի դեպ նշենք, որ «Հայ հին և միջնադարյան գրականության համառոտ բիբլիոգրաֆիա»-յում (Երևան, 1941) Պողոսի անունը նույնիսկ չի հիշվում:

[4] ***«Պատմութիւն Մաթէոսի Ուռհայեցւոյ»,*** Երուսաղեմ, 1869, էջ 446 = ***Մատթէոս Ուռհայեցի,*** «Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 355-356:

[5] «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», Կ. Պոլիս, 1752, էջ 323-334 (2):

[6] ***Հակոբոս վրդ. Տաշյան,*** «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 578:

նական վարդապետ Հայոց մեծ Պօղոս Ղազարու վանից վանական»[7], «Պօղոս վարդապետ Ղազարու վանիցն վանական»[8] և այլն: «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկում նա կոչվում է «Երանելի Պօղոս Տարօնացի յաղթօղ ախոյեան վարդապետ»[9]: Իսկ ինքը հեղինակը նույն երկում իրեն անվանում է. «Ես, նուաստ ծառայս Աստուծոյ Հիսուսի Քրիստոսի, վարդապետ Պօղոս»[10]:

Տարոնի Առաքելոց վանքի մեծ ճառընտիրի մեջ պահպանված է «Իշխանի Տարօնոյ և ամենայն Հայոց՝ Զորտուանելի, որդւոյ Տաճատայ քաջի Մամիկոնոյ»[11] հիշատակարանը, 553 (=1104) թվականին գրված, հետևյալ բովանդակությամբ. «Գնացի ի սուրբ ուխտ Առաքելոցն Ղազարու վանաց՝ առ ծերունի[12] և մեծ հռետորն Հայոց Պօղոս. խնդրեցի ինձ գերեզման ի դուռն սուրբ ուխտին»[13]:

Հետևապես, 1104 թվականին Պողոս Տարոնեցին ծերունի է եղել: Իսկ այդ նշանակում է, որ նա ծնված պիտի լինի ԺԱ դարի առաջին կեսին գոնե, ավելի ճիշտն ասած՝ նույն դարի երկրորդ քառյակում:

Պողոս Տարոնեցին ծագումով եղել է Տարոնից, ուստի և «Տարոնեցի» կամ «Տարոնացի» է կոչվել: Եղել է վանական Սասունին կից գտնվող «Ղազարու» վանքում, ուր և վախճանվել ու թաղվել է, ինչպես Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը ենթադրում էր «Թարգմանչաց գերեզմաններուն կարգին, ինչպես ցայսօր կտեսնվի»[14]:

Պողոս Տարոնեցին ուներ մեծ գիտնականի, իմաստասեր-փիլիսոփայի և աստվածաբան-դավանաբանի համբավ: Նա միաժամանակ մեծ ջատագով է եղել Հայոց ազգային եկեղեցու անկախության և սաստիկ պայքար է մղել հունադավան-քաղկեդոնիկների դեմ, ուստի և իրավամբ հռչակվել է իբրև «երկրորդ լուսավորիչ տանս Հայոց» և «վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց»՝ ըստ վկայութեան Մատթեոս Ուռհայեցու, իսկ ըստ Հ. Մ. Չամչյանի՝ «ասի առաքեալ Մշոյ յերկրին Տարօնոյ»[15]:

[7] Նույն տեղում, էջ 767:

[8] Նույն տեղում, էջ 769:

[9] «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 1:

[10] Նույն տեղում, էջ 13:

[11] ***Ն. Ադոնց,*** «Տարոնցիները Հայաստանում և Բյուզանդիայում», «Բյուզանդիոն», հատ. Ժ, Բրյուսել, 1935, էջ 549, (ֆրանսերեն):

[12] Ընդգծումը այստեղ և ստորև մերն է: - Լ. Մ. -Բ.:

[13] Հ. ***Ղ. Ալիշան,*** «Հայապատում», Վենետիկ, 1901, էջ 396:

[14] ***Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան,*** «Ազգապատում», հատ.Ա, էջ 1394:

[15] ***Հ. Մ. Չամչյան,*** «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, էջ 21:

Խոսելով Պողոս Տարոնեցու մասին, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը նշում է, միաժամանակ, որ նա «Ղազարու վանքին կամ Տիրինկատարի Առաքելոց վանքի առաջնորդն եղավ»[16], որ սակայն, չի ապացուցվում սկզբնաղբյուրներով: Իսկ «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկի առաջաբանում նա կոչվում է «Հռետորն Հայոց... Պօղոս՝ ի վանսն (տպված է՝ վանքն- Լ. Մ. -Բ.), որ կոչի Ղազարու, մերձ ի գաւառին Տարօնոյ, որ էր վիճակ Սասնոյ»[17]:

Վրաց աստվածաբանական - իմաստասիրական - քերականագիտական գրականության մեծագույն ներկայացուցիչ, ԺԲ դարի գիտնական Անտոն Ա. Բագրատիոն արքայազն կաթողիկոսը, հետևելով Կղեմես Գալանոսին (որի անունը, սակայն, չի տալիս), հիշատակում է Պողոս Տարոնեցուն, ի թիվս միաբնակ (հակաքաղկեդոնիկ) հայ վարդապետների, հետևյալ հաջորդականությամբ. «Հովհան Օձնեցի, Պողոս Տարոնեցի, Ստեփանոս Սյունեցի, Գոշիկ վանական (այսինքն՝ Մխիթար Գոշ- Լ. Մ.-Բ.), Վարդան, Սարգիս, Մաշտոց [կաթողիկոս], Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Գրիգոր Կեչառեցի, Ղազար Ջահկեցի, Հակոբ Ակնեցի»[18]:

Նույն առումով Պողոս Տարոնեցին հիշված է Անտոնի «Հակաճառութիւն» երկի Գ գրքի 23-րդ գլխում[19]:

Պողոս Տարոնեցու գրչին են պատկանում մի շարք երկասիրություններ, գերազանցապես աստվածաբանական-դավանաբանական և եկեղեցական ծիսագիտության ու ժամանակագրության խնդիրների շուրջը.

ա. «Թուղթ երանելւոյն Պաւղոսի Տարոնացւոյ, յաղթաւղ ախոյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոպիստեայ հոռոմ փիլիսոփային»[20],.

բ. «Պաւղոսի Տարոնեցւոյ եռամեծի և բանիւնուն ուղղափառ վարդապետի ասացեալ Ընդդէմ երկաբնակաց ժողովոյն Քաղկեդոնի և այլ չարափառացն հերձուածողաց»[21]:

գ. «Գործնական և արդիւնական վարդապետին Հայոց՝ Մեծին

---

[16] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, «Ազգապատում», հատ.Ա, էջ 1394:

[17] **«Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ»**, էջ 330:

[18] «Մզամետղ՝վելեբա», հրատ. **Պոլիևկտոս քահ. Կարբելաշվիլու**, Թբիլիսի, 1892, էջ 4 (վրացերեն):

[19] Նույն տեղում, էջ 601:

[20] Հրատ. Կ. Պոլիս, 1752:

[21] **Յովհաննէս վրդ. Միսքճեան**, «Ցուցակ հայերէն ձեռագրաց քահանայապետական մատենադարանին Վատիկանի», «Հանդես ամսօրյա», 1892 թ., էջ 310: - Հմմտ. **Հակոբոս վրդ. Տաշյան**, «Մայր ցուցակ», էջ 578:

Պաւղոսի Ղազարու վանից վանականի՝ Բացայայտութիւն կարգի ժամուց աղաւթից»[22]:

դ. «Նորին Պաւղոսի վարդապետի՝ Յաղագս Եկեղեցւոյ կարգաց ցոյցք»[23]:

ե. «Յաղագս Քառասնորդաց պահոց՝ Պաւղոսի վարդապետի Ղազարու վանիցն վանականի բացատրեալ»[24]:

զ. «Հաղագս Առաջաւորացն պահոց՝ նորին Պաւղոսի ասացեալ»[25]:

է. «Պաւղոսի Տարունեցւոյ ասացեալ Բան հաւատոյ»[26]:

Եվ այլն[27]:

Այս երկերից, որքան մեզ հայտնի է, ցարդ հրատարակված է միայն առաջինը, որն ընդգրկում է Պողոսի երկասիրության բուն տեքստն առաջաբանով՝ 1-132 էջերում, որից հետո գալիս է «Ջեկուցումն առ բարեսէր ընթերցողդ վասն հեղինակին գրքոյս»՝ 323-334 էջերում, անվանացանկը՝ 335-355 էջերում և հիշատակարանը՝ 356-357 էջերում: Գիրքը տպված է Կոստանդնուպոլսում ՌՄԱ(=1752) թվականին «արդեամբ Ապուչեխցի Հովսենց հանգուցեալ մահտեսի Պաղտասարի որդւոյն՝ մահտեսի Խաչատուրին և Գէորգ աղային»:

«Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» կամ, որ միևնույնն է, «Պատասխանի առ Թէոպիստէ», հավանական է հորինված լինի Զորտուանել ազգատոհմի որևէ ներկայացուցչի հանձնարարությամբ, ոչ շուտ քան ՇԾ=1101 թվականին, եթե, իհարկե, ընդունենք, որ այն գրվել է Թէոպիստեի գրությունը ստանալուց (ՇԾ=1101 թ. օգոստոսին)[28] անմիջապես հետո:

Ընդ սմին Հ. Մ. Ջամչյանը հաղորդում է, որ «այս գիրք Պօղոսի Տարօնացւոյ մերժեցին Հայք ի ժամանակս Մխիթարայ կաթողիկոսի ի բանն, զոր գրեցին ի Հռոմ, որպէս տեսանել ի հաւաքմունս ժողովոց[29]. հատոր ԻԵ, երես 1267: Եւ յետ ժամանակաց փոխանակ այրե-

---

[22] **Հակոբոս վրդ. Տաշյան**, «Մայր ցուցակ», էջ 578:

[23] **Նույն** տեղում, էջ 768:

[24] **Նույն** տեղում, էջ 769:

[25] **Նույն** տեղում, էջ 769: Նաև՝ **Բարսեղ վրդ. Սարգիսյան**, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. Բ, Վենետիկ, 1924, էջ 529-530:

[26] **Հակոբոս վրդ. Տաշյան**, «Մայր ցուցակ», էջ 722:

[27] **Նույն** տեղում, էջ 189, Նաև **Գրիգորիս վրդ. Գալեմքյարյան**, «Ցուցակ հայերէն ձեռագրաց արքունի մատենադարանին ի Միւնխէն», Վիեննա, 1892, էջ 26բ:

[28] «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 13, հմմտ. էջ 330:

[29] Ի նկատի ունի **Յոանես Դոմինիկուս Մանսիի** 30 ստվար հատորներից

լոյ զսա տպագրեցին ոմանք ի Կոստանդնուպօլիս ի Թուին Հայոց ՌՄԱ, որոյ իբր վերակացու և սրբագրիչ եղև երէց ումն անարգ, զոր ազգն մեր իսկ մերժեալ էր յեկեղեցւոյ վասն մերժելոյ նորա զեկեղեցի» և այլն[30]:

Եվ իրոք, երկասիրությանը կցված «զեկուցման» մեջ, որը հիշատակարանի բնույթ է կրում, այս «վերակացու և սրբագրիչը» հիշված է աշխատակիցներով հանդերձ. «Յիշեսջի՛ք... զտպագրօղս սորին զմահտեսի Տէր Յօհաննէս բանին սպասաւոր անուամբ և եմ քահանայս: Յիշեսջի՛ք զաշխատաւոր գործարանիս մերոյ զշարաբարդօղ և զցրուօղ գրոյս զՏէր Անտոնն: Նաև զմիւս աշխատաւոր գործարանիս՝ զքրտնաջան և բազմաշխատ զՍոյեայ Սևանցի Իգնատիոսն...»[31]:

Հ. Մ. Ջամչյանի այսպիսի վերաբերմունքը դեպի Պողոս Տարոնեցին և նրա գնահատականը վերջինիս գործունեության մասին, իհարկե, տարօրինակ չպիտի թվա: Այնուամենայնիվ, նրա հաղորդած տեղեկությունը, որ Պողոսի՝ «Ընդդէմ Թէոպիստեայ» գրած թուղթը (պատասխանը) «մերժեցին Հայք ի ժամանակս Մխիթարայ կաթողիկոսի», արժանի է քննության:

Այստեղ հիշված Մխիթարը Մխիթար Ա կաթողիկոս Գռներցին է (1341-1355)[32], որի օրով Հայ և Լատին Եկեղեցիների միության որոշ փորձեր կատարվեցին:

Բայց շատ հետաքրքիր է միաբնակ հայ եկեղեցականների վերաբերմունքն ու գնահատականը դեպի այս երկասիրությունը: «Անգին և աննման Գիրքս այս ոչ է կարօտ գովասանութեան, զի ինքն ինքեան բաւական գովասանութիւն է, որպէս յայտ է ամենայն քաջամիտ ընթերցողի: Զի ոչ միայն ի մէջ Հայոց, այլև ի մէջ Հոռոմոց և Ֆռանկաց՝ տեսեալ է իմ երբէք զայսպիսի գիրք մի, որ ի վերայ մի միայն բանի՝ զայնքան յաճախ վկայութիւն Աստուածաշունչ Գրոց և սուրբ հայրապետաց, բարբանութեամբ հարցաբանեալ և հաղթահարեալ լինիցի զհակառակորդս, որքան այս գիրքս առնէ: Մանաւանդ վկայութիւնք Լևոնի, զորս յառաջ բերէ վասն ցուցանելոյ զնեստորական հերձուածս նորա, ամենևին ստոյգ և ճշմարիտ

բաղկացած «Սուրբ ժողովների նոր և ամբողջական հավաքածու» շարքը, հրատարակված Ա. Ջատտայի կողմից Վենետիկում 1770-1785 թվականների միջոցին (լատիներեն):

[30] **Հ. Մ. Չամչյան**, «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, էջ 22:

[31] «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 358:

[32] **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան**, «Ազգապատում», հատ.Բ., էջ 1861-1916:

են, նոյն և նմանք՝ հոռոմերէն թարգմանութեան՝ Տօմար անուանեալ թղթոյն նորա, որ գրեալ կայ ի մէջ գործոց գրքոյն Քաղկեդոնի ժողովոյն:

Ի մէջ այս գրքոյս զերկու նոր բանս ուսանիմք: Նախ և առաջ, որ հայ հոռոմքն ո՛չ թէ ի բնէ հոռոմք, այլ ի Հայոց դարձած հոռոմք են: Երկրորդ՝ որ յառաջ քան զխառնիլն մեր ընդ մէջ հոռոմոց և երկաբնակաց, վարդապետք Եկեղեցւոյն մերոյ ամենևին ճգնաւորք և սուրբ են եղեալ»[33]:

Դարձյալ. «... Վարդապետին քարոզելով և գրելով ընդդէմ հերձուածոց և աշխարհականին տպագրեալ տալով և ձրի բաժանելով զգրեանս հայրապետաց և վարդապետաց մերոց, որոց մինն և գլխաւորն՝ այս երանելի Պօղոս Տարօնացին է, որոյ գիրքն զնմանն իւր ո՛չ ունի և ո՛չ կարէ ունիլ:

Աղաչեմք ուրեմն զամենայն լուսաւորչադաւան քրիստոնեայս, զի մի ձանձրասցին իւրաքանչիւր ոք գնել զայս աննման գիրքս, և ինքեանք ընթեռնուլ և այլոց ևս ընթեռնուլ տալ, զի այսպէս յաղթեալ զփորձութիւնն հերձուածողութեան»[34]:

Պողոսի «Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ» երկը պարունակում է, ի միջի այլոց, նաև նյութեր հայ-վրացական փոխհարաբերության պատմության վերաբերյալ: Այսպես, օրինակ, Դվինի 506 թվականի համատեղ հայ-վրաց-աղվանից-սյունյաց եկեղեցական ժողովին վրացոց մասնակցության մասին Պողոսը գրում է. «Դարձեալ վրաց մետրապօլիտն (այսպես-Լ. Մ.-Բ.) Գաբրիէլ տասն և հինգ եպիսկոպոսօք եկեալ յաշխարհս Հայոց առ Բաբգէն եպիսկոպոս[ապետ]ն և ամենայն ուղղափառ հաւատով միաբանեալ ընդ հայրապետն մեր, նզովեաց զժողովն Քաղկեդոնի և զամենայն հաւանօղսն: Եւ նզովեաց զասացօղսն երկու բնութիւն ի Քրիստոս»[35]:

Խոսելով Քրիստոսի ծննդյան տոնակատարության հնագույն սովորույթի մասին, որ կապված է եղել հունվարի 6-ի հետ[36], Պողոս Տարոնեցին հիշատակում է համապատասխան ամիսները այլևայլ

[33] Թուղթ ընդդէմ Թէոպիստեայ», էջ 2-3:

[34] Նույն տեղում, էջ 7:

[35] Նույն տեղում, էջ 133: Հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 180-184: **Երվանդ Տեր-Մինասյան**, «Բաբգեն կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը», «Արարատ», 1908, էջ 690-707:

[36] Հմմտ. **Եփրեմ Խուրի**, «Ծննդյան տոնակատարության օրերի մասին», հրատ. Ն. Մառի, «Տեքստեր և որոնումներ հայ-վրացական բանասիրության մասին», հատ, Ա, Պետերբուրգ, 1900 (ռուսերեն): **Կ. Կեկելիձե**, «Հին եկեղեցում Քրիստոսի ծնունդը տոնելու ժամանակի հարցի շուրջը», «Կիևյան հոգևոր ճեմարանի աշխատություններ», 1905 թ., № 1, էջ 1-10 (ռուսերեն):

ժողովուրդների մոտ՝ հրեաների, արաբների, մակեդոնացոց, եգիպտացոց, եթովպացիների, աթենացոց, բյութանացոց, կապադովկացոց, վրացոց, հունաց, հռոմայեցոց, ասորոց և հայոց մեջ. և մանավորապես նշված է «Վրաց՝ ապանի տասն և մէկ»-ը, հունվարի իմաստով[37]:

Ոչ պակաս հետաքրքիր են Պողոսի դատողությունները Բառանորդաց և Առաջավորաց պասերի մասին, մանավանդ երկրորդի վերաբերյալ[38], որոնց նվիրված ունի, ինչպես վերև տեսանք, հատուկ գրություններ (Ե և Զ-ի ներքո):

Առանձնապես նշանակալից են Պողոսս Տարոնեցու արտահայտությունները թոնդրակեցի և ծայթ հայերի մասին: Տարոնեցին գրում է. «Եւ ոչ է արժան մեզ զբանս երկարել և ոչ հիշել զթօնդրակեցիսն: Վասնզի ազգ մի, որ զհաւատոյն վկայ և հարստութիւն և Աստուած ոչ ունի, նորա ոչ է պիտոյ խաչն կամ եկեղեցին»[39]:

«Արդ զթօնդրակեցիքն ի ձեռն չարալուր ուրացութեան իւրեանց խօսին և ասեն՝ թէ պատարագն և կամ մատաղն չէ ինչ օգուտ մեռելոց. և ահա դուք զնոսա հաստատեալք այսմ հերձուածողացս, որք հակառակին պատարագին Քրիստոսի, որ վասն մեզաց կատարին: Ապելլա ոմն այր պիղծ և պևորեալ մարմնով, դառնացեալ աւուրբք և հպարտացեալ ի դիւաց...»[40]:

«Եւ արդ՝ եկեսցուք անդրէն ի տեղի պատասխանատրութեանս, զոր ունէաք ընդ Յունաց, և թողցուք զպիղծ մանիքեցիսն...»:

Ապա դիմելով քաղկեդոնականներին, Պողոսն ասում է. «Ծայթն ելից զտեղի երկոտասան ազգացն: Արդ՝ այդպես է ծայթն... Ապա ուրեմն ծայթն դուք էք, որ զտեղին լցիք»[41]:

Պողոս Տարոնեցու «Թուղթ ընդդեմ Թէոփիստեայ» երկասիրությունից քաղած այս մեջբերումների մեջ երկիցս հիշված են թոնդրակեցիք, մի անգամ՝ մանիքեցիք և երեք անգամ՝ ծայթն:

Քանի որ թոնդրակեցիների և ծայթերի հիշատակությունն առնչվում է Հայաստանի Ժ-ԺԱ դարերի անցքերի հետ, կուզեինք

[37] «Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ», էջ 225: Հմմտ. **Ա. Գ. Աբրահամյան**, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956, էջ 74, 80, նաև մեր գրախոսականը այս գրքի մասին՝ «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», 1957 թ., № 4, էջ 132:

[38] Նույն տեղում, էջ 275-278:

[39] Նույն տեղում, էջ 260: Ընդգծումները այդտեղ և ստորև մերն են - Լ. Մ. -Բ.:

[40] Նույն տեղում, էջ 262: Այս մեջբերումի մեջ հիշված «Ապելլա» անձնանունը ցույց է տալիս, որ նա «աբելա»-յից լինի առաջացած աբեղայի իմաստով - Լ. Մ. -Բ.:

[41] Նույն տեղում, էջ 267:

մի քանի խոսք ասել սրանց մասին[42]:

Ճիշտ է, որ Պողոս Տարոնեցին գրեթե ոչ մի նոր բան չի ասում թոնդրակեցիների մասին իր նախորդների համեմատությամբ, որպիսիք են (չհաշված Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցուն և Ներսես Շնորհալուն)՝ Անանիա Նարեկացին[43], Գրիգոր Նարեկացին[44], Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը[45], Արիստակես Լաստիվերտցին[46] և Գրիգոր Մագիստրոս Պահլավունին[47], սակայն տալիս է թոնդրակեցիներին հաղորդակից և նրանց շարժման մասնակից մեկի անունը, որը անհայտ է այլ աղբյուրներից (և նույնիսկ մտած չէ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի մեջ), այն է «Ապելլա»-յի:

Ի դեպ, վրաց գրականության մեջ թոնդրակեցիք հիշվում են ԺԷ-ԺԸ դարերում բառարանագիր Սուլխան-Սաբա Օրբելիանիի «Վրացերեն բառարան»-ում «թոնդրակելի»-ի ձևով[48]:

[42] Հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Նոր նյութեր թոնդրակեցիների մասին», «Արշավ» (Թբիլիսի), 1940 թ., № 2, էջ 51-54:

[43] «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցոց» (հատված), տե՛ս **Հ. Ա. Անասյան**, «Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դ.դ., հատ. Ա», Երևան, 1959, էջ 726-730:

[44] «Գրիգորի վարդապետի Նարեկացւոյ ասացեալ Ի խորհուրդ Սրբոյ Եկեղեցւոյ ընդդէմ պիղծ աղանդաւորացն թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց» (Մատեան ողբերգութեան, բան ՀԵ) և «Թուղթ ամենաշնորհ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ, զոր գրեաց ի հոյակապ և յականաւոր ուխտն Կճաւայ, վասն կարծեացն անիծելոց թոնդրակեանց Յանէսի և Յամրէսի, որ եկն զգեստիւ ոչխարաց և ի ներքոյ գայլ հափշտակող, որ և ի պտղոյ ծանուցաւ ամենից, զոր լուեալ սուրբ վարդապետին գրեաց սակս ազատութեան ի չար կարծեացն» (Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498-502):

[45] Միջանկյալ երկիցս իր պատմության Գ գրքի 3-րդ և 7-րդ գլուխներում («Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Բ տիպ [ի ձեռն Ստ. Մալխասեանց], ՍՊԲ, 1885, էջ 160, 178):

[46] Պատմության ԻԲ գլխում՝ «Վասն չար աղանդին թոնդրակեցւոց, որ երևեցաւ ի գաւառն Հարքայ, և զբազումս խռովեաց» և ԻԳ գլխում՝ «Թէ որպէս և ի Մանանաղւոյ սահմանսն բորբոքեցաւ հրդեհ մոլորութեան, ասելի է» («Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերացւոյ», Թիֆլիս, 1912, էջ 142-151 և 151-162):

[47] Թղթերից ԿԷ-ում՝ «Պատասխանի թղթոյն կաթողիկոսին Ասորւոց ի ժամանակին, յորժամ էր դուքս ի Վասպուրական և ի Տարօն, զկնի բառնալոյն զՄանիքեցիսն յաշխարհէն Յունաց, և ի Թոնդրկաց մնացեալսն նոցա կործանեալ ազգն. չոգան առ կաթուղիկոսն Ասորւոց ի քաղաքն Ամիթ, զի թերևս խաբէութեամբ հաւանեցուսցեն զնա, զոր նորա գրեալ թուղթ ի Գրիգոր Մագիստրոսն յԱրշակունին: Եւ այս է պատասխանին», ԿԸ-ում՝ «Պատասխանի թղթոյն Թուլայեցւոց, մնացելոցն ի նորոց Մանիքեցւոց Թոնդրակեցեացն, որք եկեալ էին առ կաթողիկոսն Ասորւոց և կամէին խաբել զնա» և ԿԹ-ում՝ «Յաղագս նկարագրութեան սրբոյ եկեղեցւոյն սրահի զաւթի գրեաց զայսոսիկ և սակս Մանիքեցւոց» (**Կ. Կոստանեանց**, «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Աղեքսանդրոպոլ, 1910, էջ 148-164, 164-168 և 168-170):

[48] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ.Բ, Երևան, 1936, էջ 122: **Նույնի** «Նոր նյութեր թոնդրակեցիների մասին»,

Ինչ վերաբերվում է ծայթերին, այս խնդրով նախքան Պողոս Տարոնեցին, ինչպես հայտնի է, զբաղվել է Ուխտանես եպիսկոպոս Ուռհայեցին (Եդեսացին) դեռևս Ժ դարում:

Եվ իրոք, չ՞է որ Ուխտանեսի պատմագրական գործը բաղկացած է եղել 3 գրքից, որոնցից առաջին երկուսն է, որ հասել են մեզ, այն է՝ «Պատմութիւն Հայոց» և «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», իսկ երրորդը ոչնչացվել է, հավանական է իդեոլոգիական պայքարի հանգամանքներում:

Այս՝ երրորդ՝ գրքի բովանդակության մասին որոշ ակնարկ կարելի է գտնել հենց իրեն՝ Ուխտանեսի ցուցմունքից, թե ինչ է եղել նրա ամբողջ գործի շարժառիթն ու նպատակը. «Նախ՝ զթիւ թագաւորացն և զհայրապետացն մերոց, և զբաժանումն Վրաց ի Հայոց միաբանութենէ. և յետ այնորիկ զմկրտութիւն ազգին, որ Ծադն կոչի»[49]:

«Ծադ» կամ, որ նույնն է, «ծայթ» բառի մեկնաբանությունը տալիս են Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ը և Ստ. Մալխասյանի «Բացատրական բառարան»-ը, ուր կուտակված են բազմաթիվ վկայություններ թե՛ մեր մատենագրությունից և թե՛ գիտական գրականությունից և, վերջապես, կենդանի լեզվից ու բարբառներից:

Հ. Աճառյանը գրում է. «Ծայթ, որ և ծայդ, ծաթ, ծադ գործածված է իբրև նախատական բառ, «հավատքի մեջ թերի կամ ազատամիտ» նշանակությամբ... Ձևացած է ծաթ ազգի անունից: Այս ազգը գնչուների մի ցեղ էր, որ Հնդկաստանից գաղթելով՝ եկավ Հայաստան: Ծաթերը հետո մկրտվելով հայ դարձան և հետո էլ Հունական եկեղեցուն հարելով՝ հույն դարձան: Այսպես ձևացան ծաթ-հայերն ու ծաթ-հույները, ևայլն»[50]:

Գրեթե նույնն է կրկնում և Ստ. Մալխասյանը. «Ծայդ, ծայթ. գնչուների հին ծաթ ցեղի անունից, որոնք հայ մկրտվեցին Հայաստանում, հետո Հույն եկեղեցուն հարելով հույն դարձան: Ըստ այլ կարծիքի՝ քաղկեդոնական հայ, ած[ական], հավատի մեջ թերի, կիսատ, անկատար (նախատական մակդիր). ծայթ (կամ ծաթ) հայ. ծաթ հույն: Այստեղից ծայդանձն կամ ծայթանձն, ածական, հավատի մեջ ծայթ, հերձվածող, հերետիկոս»[51]:

«Արշավ», 1940 թ., № 2, էջ 53: **Նույնի** «Հայոց հին գրականության պատմություն», Թբիլիսի, 1941, էջ 107 (վրացերեն):

49 **Ուխտանէս**, «Պատմութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 14:

50 **Հ. Աճառյան**, «Հայերեն արմատական բառարան», հատ. Գ, էջ 727-730:

51 **Ստ. Մալխասյան**, «Հայերեն բացատրական բառարան», հատ. Բ, էջ 325:

Հայաստանում այժմ էլ կա Ալավերդու շրջանում «Ծաթեր» անունով գյուղ և երկաթուղային կայարան[52]:

Այս տեղանունը, ինչպես ճիշտ դիտված է համապատասխան գրականության մեջ, մնացորդ է գաղափարախոսական բախումների և երկաբնակ (քաղկեդոնիկ) հայերի առկայության Ձորագետի շրջանում, որի հուշարձաններն են Քոբայրը, Հնեվանքը, Պղնձահանք-Ախթալան, Շահնազարը շրջակայքով և այլն:

Վիեննայի Մխիթարյան Հ. Ներսես վրդ. Ակինյանը, հենվելով Սարգիս եպիսկոպոս Ջալալյանի Ճանապարհորդության Բ հատորի (էջ 104) և Վրաց Վախուշտի արքայազն Բագրատիոնի Աշխարհագրության (ակադեմիկոս Մ. Բրոսեի ֆրանսերեն հրատարակությամբ, էջ 57) վրա, կռահել էր, որ «մերձ ի Սանահին կա գյուղ մը «Ծաթեր» անուն, որ կրնա առնչություն մ՝ունենալ ծայթերու հետ, քանի որ հիշատակարանք կմատնանշեն հոն հույն ազդեցության հետքերն»[53]:

Քոբայրի քաղկեդոնիկ մենաստանի անվան ծագումը վրացերեն «քվաբ»-ի (քարանձավ, կաթսա) և հայերեն «այր» (նույն իմաստով) բառերից[54] և այդ մենաստանի մոտիկությունը Ծայթեր գյուղից և կայարանից, թելադրում են մեզ ընդունել, որ այս գյուղի բնակիչները, որոնք կապված էին այդ վանքի հետ, իրոք, ծայթ-հայեր էին, այսինքն հունա-վրացադավանության անցած[55]:

Այսպիսով, Պողոս Տարոնեցու հիշատակած ծայթն և Ուխտանեսի ծադն միևնույնն են, որ վերաբերում են ծայթ-հայերին, իսկ վերջիններին հետքը ներկայումս առկա է Հայաստանի Ալավերդու շրջանի Ծաթեր գյուղի և երկաթուղային կայարանի անվանց մեջ(3):

---

52 Հայկական ՍՍՌ աշխարհագրական անուններ, Երևան, 1951, էջ 34, 100:

53 **Հ. Ներսես վրդ. Ակինյան**, «Կյուրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 78, ծանոթություն նախորդ էջի:

54 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Քոբայրը և նրա հայերեն ու վրացերեն արձանագրությունները», «Թբիլիսիի համալսարանի Տեղեկագիր», VII, 1927, էջ 60-61 (վրացերեն):

55 Հատուկ գրականությունը այս խնդրի շուրջը. **Աղ. Երիցյան,** «Ծադ ազգը հայ է՞, թե ոչ». «Փորձ». 1881 թ., № 3, էջ 125-126: **Մ. Էմին**, «Ծաթերի մասին», «Մ. Օ. Էմինի հետազոտությունները և հոդվածները հայկական միֆոլոգիայի, հնագիտության, պատմության և գրականության պատմության մասին», Մոսկվա, 1896, էջ 137-138 (ռուսերեն): **Ն. Մառ,** «Արքաուն», «Բյուզանդական ժամանակագիր», հատ. XII, № 1-2, էջ 1-68 (ռուսերեն): **Ն.Ադոնց**, «Հայ ծաթերի ծագման մասին», «Ժողովրդական լուսավորության մինիստրության ամսագիր», 1911 է., էջ 238-249 (ռուսերեն): Նույնը **Ն.Ադոնց**, «Հայ=ծաթերի ծագման մասին», թարգմ.՝ **Լ. Լիսիցյան**, «Հանդես ամսօրյա», 1912 թ., էջ 257-271:

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆեոդալական Հայաստանի դասակարգային ու ներդասակարգային պայքարի պատմության ուսումնասիրությունն անկարելի է աղանդավորական շարժումների պատմության շրջանակներից դուրս, քանի որ այդ շարժումներն ըստ էության հիշյալ պայքարի մասն են կազմում: Մազդակյան, մանիքեցի, բորբորիտոն, մծղնե, պողիկյան, թոնդրակեցի, արևորդի, ծայթ էլն- հորջորջումներն են այն հերձվածողների, որոնք այս կամ այն շրջանում ու այս կամ այն դարում հանդես էին գալիս իրենց բողոքով ու պայքարով պաշտոնական եկեղեցու և նրա սահմանումների ու նվիրապետության դեմ: Իրոք աղանդավորական շարժումները նույն սոցիալական շարժումներն են, բայց կրոնական գունավորումով քողարկված:

Հիշյալ աղանդավորական շարժումների մասին գոյություն ունի հատուկ գրականություն[1], ուր այդ շարժումների պատմությունը փոքր ի շատե լուսաբանված է:

Այս մեր ելույթի նպատակն է մի-երկու նոր դիտողությունով նպաստել խնդրի ուսումնասիրության հետագա խորացմանը:

______

[1] **Հ. Մ. Չամչեան**, Պատմութիւն Հայոց, II Վեն. 1785. եջ 884-895. **Ա. Երիցեանց**, Թոնդրակեցի հայք մեր օրերում, - «Փորձ» 1880, № X, եջ 91-130. А, Ерицов, О секте Тондракских армян, - "Труды V–го археологического с'езда в Тифлисе в 1881 г. ", М. 1887, стр. 187-192 Karapet Ter-Mkrttschian , Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte Ketzerische Erscheinungen in Armenien, Leipzig 1893. **Բարսեղ վ. Սարգիսեան.** Ուսումնասիրութիւն Մանիքեա Պաւղիկեան- Թոնդրակեցի աղանդին և Գրիգոր Նարեկացւոյ թուղթը, Վեն. 1893. **Մ. Օրմանեան.** Ազգապատում, I. Կ. Պ. 1913, § § 207,229, 566, 671, 796, 805-807, 858. Լ Է ո. Կոմմունիզմը հայոց պատմութեան մէջ- «Նորք» 1922 № 1, եջ 130-150. **Ս. Պողոսեան**, Պատմական ակնարկ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի ժամանակաշրջանի մասին- ժողովածու «Սասունցի Դավիթ», Երեվանի պետ. համալսարանի հրատ. Յեր. 1939, եջ 223-239, ելն (1):

[Ա]
ՊՈՂՈՍ ՏԱՐՈՆԵՑԻՆ ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թոնդրակեցոց խնդրին նվիրված հատուկ գրականության մեջ իբրև սկզբնաղբյուրներ սովորաբար հիշվում են՝ պատմիչներից – Հովհաննես կաթ. Դրասխանակերտցի (X դ.), Արիստակես վ. Լաստիվերտցի (XI դ.) և Ստեփանոս վ. Տարոնեցի Ասողիկ (X-XI դ.), իսկ նզովողներից – Անանիա Նարեկացի (XI դ.), Գրիգոր Նարեկացի (X–XI դ.), Գրիգոր Մագիստրոս (X–XI դ.) և Ներսես Շնորհալի (XII դ.), վերջինս՝ արևորդիների մասին:

Այդ սկզբնաղբյուրներին, մեր կարծիքով, պիտի կցվի նաև Պողոս Տարոնեցին (XIIդ.), որ հայ հակաքաղկեդոնիկ գրական ուղղության սյուներից մեկն էր և հայտնի է իբրև հեղինակ մի շարք դավանաբանական-հակաճառական գրվածքների և, ի միջի այլոց, «Թուղթ ընդդեմ Թեոփիստեայ Հոռոմ փիլիսոփային» ընդդիմախոսությամբ[2]: Վերջինում մենք գտնում ենք հետևյալ հատվածը, նվիրված թոնդրակեցիներին, մանիքեացիներին և ծաթերին (քաղկեդոնիկ-հայերին). «Եւ ոչ էր արժան մեզ զբանս երկարել, և ոչ յիշել զԹօնդրակեցիսն: Վասն զի ազգ մի, որ զհաւատոյն վկայ և հարստութիւն և Աստուած ոչ ունի, նորա ոչ է պիտոյ խաչն կամ եկեղեցին»[3]:

Արդ Թօնդրակեցիքն ի ձեռն չարալուր ուրացութեան իւրեանց խօսին և ասեն՝ թէ պատարագն և կամ մատաղն չէ ինչ օգուտ մեռելոց. և ահա գտաք զնոսա հաստատեալք այսմ հերձուածողացս, որք հակառակին պատարագին Քրիստոսի, որ վասն մեղաց կատարին: Ապելլա ոմն այր պիղծ և պևորեալ մարմնով, դառնացեալ աւուրբք և հպարտացեալ ի դիւաց...»[4]:

«Եւ արդ՝ եկեսցուք անդրէն ի տեղի պատասխանատրութեանս, զոր ունէաք ընդ Յունաց, և թողցուք զպիղծ մանիքեցիսն...»:

Ապա՝ դիմելով քաղկեդոնականներին՝ Պողոսն ասում է. «Ծայթն ելից զտեղի երկոտասան ազգացն»: «Արդ՝ այդպէս է ծայթն...»: «Ապա ուրեմն ծայթն դուք էք, որ զտեղին լցիք»[5]:

______

[2] Պողոս Տարոնեցու և նրա գրական գործունեության մասին մանրամասն տես. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» ևն, վրացերեն, Տփղիս 1928, եջ 160-162:

[3] Թուղթ երանելւոյն Պօղոսի Տարօնացւոյ յաղթօղ ախոյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոփիստեա Յոռոմ փիլիսոփային, Կ. Պ. 1752, եջ 260:

[4] **Նույն** տեղ, 262:

[5] **Նույն** տեղ 267:

[Բ]
ՄԾՂՆԵԻՑ - ԹՈՆԴՐԱԿԵՑՈՑ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Մի կողմը թողնելով Շոթա Ռուսթավելու մանիքեացի լինելու հարցը, որ վերջնական հաշվով մանիքեականության ուսմունքի վրացոց մեջ տարածման խնդրին է շփվում[6] և լուծված է բացասական իմաստով[7], մենք բայց և այնպես այն տեսակետի ենք, որ Վրաստանում պահպանված պիտի լինեն հեռավոր արձագանքներ թե՛ մծղնեից և թե՛ թոնդրակեցոց շարժումների:

Ինչպես հայտնի է, մծղնեից աղանդի մասին պահպանվել է միմիայն մի աղբյուր, այն է՝ Շահապիվանի հայոց ազգային եկեղեցական ժողովի (447 թ.) 14, 19 և 20 կանոնները[8], որոնց կապակցությամբ այդ աղանդի բնորոշումը հաջող կերպով տվեց հանգուցյալ Կարապետ Տեր-Մկրտչյանը[9]. «Մծղնե *են կոչվում այդ աղանդի հետևողները և նույնն են անշուշտ, ինչ որ ընդհանուր եկեղեցու պատմության մեջ հայտնի* մեսալյանները, *յերկու բառն ևս աղավաղումն լինելով ասորերեն «աղոթող» կոչման»*[10]:

Անշուշտ, այդ «մծղնե» բառն է, որ Հայաստանի ազգաբնակչության համապատասխան խավերը, հալածանքի ենթարկվելով պաշտոնական եկեղեցու կողմից և գաղթելով Վրաստան, բերել են այն այստեղ. ուստի և նրանց բնակած տեղերը (գյուղերը) թե՛ Սամխիթում կամ հարավային Քարթլիում և թե՛ Թբիլիսիի մոտիկ շրջակայքում կոչվել են «Մծղնե-եթ-ի», «Մծղն-եթ-ի» (მწყნეთი) *հետագայում «Ծղնեթի»* (წყნეთი)[11]:

Իսկ «Մծղնեթի» և «Ծղնեթի» ձևերի հերթագայությունը Վրաստանի տոպոնիմիկայում նույնքան օրինական է, որքան էլ հետևյալ վրաց-հայերեն բառերում «մ-եգոբարի» (მეგობარი)-*եղբայր, «մանդ»* (მანდ)-*անդ, «մ-գելի»* (მგელი)-*գայլ, «մ-արթալ-ի»* (მართალი)-*արդար, «մ-ասպինձ-ել-ի»* (მასპინძელი)-*ասպնջական, հմմ. և «Ասպինձա»* (ასპინძა), *«մ-տիլ-ի»* (მტილი)-*տեղի, «մ-կել-ոբ-ել-ի»* (მკელობელი)-*կաղ, «մ-ճեվր[մետղվ-ել-ի]»* (მჭევრმეტყველი)-*ճառ[ասաց], «մ-սունագ-ի»* (მსუნაგი)-*սունագ, «մճաղի»* (მჭადი)-*ճաղ, «մ-գոսան-ի»* (მგოსანი)-*գուսան, «մ-դի-վան-ի»* (მდივანი)-*դիվան, ևլն:*

[6] **Պավլե Ինգորոդվա,** Ռուսթվելիանա. (վրացերեն), I,Տփղ. 1926, եջ 201-242:

[7] **Ս. Իորդանիշվիլի**, ժամանակագրի մի տեղեկության մասին, (վրացերեն), «Թբիլիսիի պետ. համալսարանի Աշխատություններ» III, Տփղ. 1956, եջ 167-181:

[8] **Արսեն Ղլտճեան**, Կանոնգիրք Հայոց, Տփղ.1914, եջ 73, 80, 82 (2):

[9] **Կարապետ ծ. Վարդապետ** , Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, մասն ա, Վաղարշապատ, 1900, եջ 130-136:

[10] **Նույն** տեղ, եջ 133:

[11] **Յասոն Լորթքիփանիձե,** Ներքին Քարթլին XVIII դարու առաջին քառորդում (վրացերեն), I-II. Տփղ. 1936, եջ 332-333, 464. III-IV, Տփղ.,1938, եջ 434:

Գալով թոնդրակեցիներին, անհրաժեշտ է հիշել, որ այդ աղանդավորների հորջորջումը, ինչպես հայտնի է, ծագել է Ապահունյաց գավառի Թոնդրակ *գյուղի անունից, քանի վոր նրանց ղեկավար Սմբատ Զարեհավանցին իր գործունեության կենտրոնատեղը հենց այդ գյուղումն էր հաստատել: Իսկ Թոնդրակ տեղանունը սովորաբար կապում են* թոնդիր, թոնիր *(վրացերեն «թոնե») բառի հետ:*

Ի դեպ, այս առթիվ դեռևս Գրիգոր Մագիստրոսը գրում էր. «Ուրեմն զանուն տեղւոյն Թոնդրակս անուանեն, զի անունդ այրեցման նշանակէ պատշաճ գոլ, և յիրաւի զփտեալ փայտից և արտակացեալ որթոց պատշաճագոյն են այրեցմունքն»[12]:

Վրաց իրականության մեջ «Թոնդրակ»-ը Թոդրակ է հնչվել. ուստի և ածական անունը կազմվել է «Թոդրակելի» ձևով, որ և գտնում ենք XVII-XVIII *դ.դ. հոչակավոր առակախոս-բառարանագիր Սաբա-Սուլխան Օրբելիանու «Վրաց բառարանում» հետևյալ մեկնաբանությամբ.*

თოდრაკელი ურიდად ბოროტის მოქმედი. "უყვარან თოდრაკელობა უფროს კეთილობისა", "თოდრაკელი იყოს, გინა თუ მწვალებელი". რჯულის კანონი[13].	*Թ ո դ ր ա կ ե ց ի՝ առանց քաշվելու չարություն անող. «սիրում են թոդրակությունը առավել քան լավությունը», «թոդրակեցի լինի թե՞ աղանդավոր». Կանոնագիրք*[14]:

Այս յերկու օրինակները՝ «Մծղնեթի» - «Ծղնեթի» տեղանունը և «Թոդրակելի» (Թոդրակեցի) ածականը, ըստ մեր տեսության, ոչ այլ ինչ են, եթե ոչ մծղնեից և թոնդրակեցոց շարժումների հեռավոր

[12] **Կ. Կոստանեանց**, Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, եջ 164:

[13] **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, Երևան 1937, եջ 122:

[14] Սաբա Սուլխան Օրբելիանու Վրաց բառարան, հրատ. պրոֆ. ***Ս. Ղիփշիձեի*** և պրոֆ. ***Ա. Շանիձեի*** խմբագրությամբ, Տփղ. 1928, եջ 140:

արձագանքները, որոնք ծագել են սորա-հայկական և զուտ հայկական միջավայրում և ապա հալածված հայ աղանդավորների միջոցով հասել Վրաստան, ուր և նրանք արմատացել են իբրև իրենց բուն նշանակությունն ու իմաստը կորցրած բառեր[15]:

[15] Նույնը կարելի է ասել և «Ծաթեր» (Սանաhինի մոտ) գյուղի անվան մասին, ինչպես այդ վաղուց դիտել էր ***Ներսես վ. Ակինյանը*** (Կիւրիոն կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910 եջ 71-81 և hատկապես եջ 48, ծանոթ.), կապելով «ծաղ», «ծաթ», «ծայթ»երի hետ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՂԲԱՏԱՑՈՒ «ՎԱՍՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՒ ՍԱՍԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԿՐԻ»

Հին հայոց տիեզերագիտական (և աստղաբաշխական) գրականության սյուներն են, ինչպես հայտնի է, երեք խոշոր գիտնականներ՝ Անանիա Շիրակացին VII դարում, Հովհաննես Սարկավագ Վարդապետ Հաղբատացին (ծագումով Գանձակեցին) XII դարի առաջին կեսում և Հովհաննես Երզնկացին կամ՝ Ծործորեցին, Պլուզ մականվանյալը, XIII-XIV դարում (1): Սրանցից երկրորդը՝ Հովհաննես Սարկավագը, ինչպես արդեն նշել էինք[1], մի տեսակ կամուրջ է Անանիա Շիրակացուց[2] դեպի Հովհաննես Երզնկացի[3]:

Հովհաննես Սարկավագ վարդապետի տիեզերագիտական-օդերևութաբանական գրվածքը մեզ հասել է երկու խմբագրությամբ. մեկը՝ ընդարձակ և հիմնականը, որ ըստ մեր բաժանման, 4 գլխից և փոքր վերջաբանից է բաղկացած, և մյուսը՝ համառոտ, որ, նույնպես ըստ մեր դասավորման, 3 գլուխ է պարունակում: Վերջինս, անկասկած, ընդարձակից է բխում և ոչ ընդհակառակը՝ ընդարձակը համառոտից:

Ընդարձակ խմբագրության մի օրինակը գտնվում է Երուսաղեմի Հակոբյանց մատենադարանի № 1212 (կարդա՛ 1272 – խմբ.) ձեռագիր ժողովածուում, գրված 739=1290 թվին (էջ 376ա-380բ). առանց վերնագրի[4], մյուսը հայտնի է Վենետիկի Մխիթարյանց մատենա-

[1] ***Լ. Մելիքսեթ-Բեկ***. «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» etc., վրա-
ցերեն, Թբիլիսի 1928, էջ 149-150. ***Նույնի***, Հայոց հին գրականության պատմություն,
վրացերեն, Թբիլիսի 1941, էջ 69, 118, 151-152:

[2] ***Անանիայի Շիրակունւոյ***՝ Մնացորդք բանից, ի լոյս էած ***Ք. Պ[ատկանեան]***.
ՍՊԲ 1877, էջ 34-67: ***Անանիա Շիրակացի***. Տիեզերագիտութիւն և տոմար, աշխա-
տությամբ ***Աշ.Աբրահամյանի***, Երևան 1940,էջ 1-93:

[3] Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, զլուսաւորացն՝ որ ի նմա և
չհաստատութենէ երկրի. Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք արարեալ
հոգելից և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի.
Նոր-Նախիջևան, 1792, էջ 1-20: Космографический трактат Иоанна Тцортцорецн (XIII
в.), Переводы и стстьи Н. О. Эмина по духовной литературе (за 1852-1882 г.г.), Москва
1897, стр. 256 (268)-284:

[4] ***Գ. Զ[արբհանալեան]***, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-ԺԳ դար),
Վենետիկ, 1897, էջ 615, ծանոթ. ***Լ. Մելիքսեթ-Բեկ***, «Վարդապետք Հայոց հիւսիսային
կողմանց», 137. ***Նույնի***, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, Երևան,
1934, էջ 222-223 (ուր ձեռագրի համարը մենք սխալմամբ նշել էինք 1272, փոխանակ

դարանի ձեռագրերից մեկում, որ «Վասն շարժման և սասանութեան երկրի» վերնագիրն է կրում[5] և որի սկիզբն ու վերջը բառացի համընկնում են Երուսաղեմի ձեռագրին:

Համառոտ խմբագրության զույգ օրինակները հասել են մեզ Վիեննայի Մխիթարյանց մատենադարանի առկայն 2 ձեռագրում. մեկը՝ № 324 (հավաքածու) 1305 թ. գրված (էջ 157 բ և այլն), մյուսը՝ № 442 (հատակոտոր), որ գրության տարեթիվ չունի (էջ 5ա և այլն): Երկուսի մեջ էլ Սարկավագի գրվածքը զետեղված է հետևյալ վերնագրով. «Վասն շարժման երկրի ասացեալ Սարկաւագ վարդապետին»[6]:

Մինչդեռ առաջին խմբագրությունը ցարդ հրատարակված չէ, երկրորդը լույս ընծայվեց 1925 (1926) թվին Համազասպ վ. Ոսկյանի աշխատությամբ[7]:

Երկու խմբագրությունների միջև տարբերությունն այն է, որ ընդարձակի I և III գլուխները (ըստ մեր բաժանման) համառոտ խմբագրության մեջ բացակայում են . IV գլուխը գնում է I գլխի տեղ, իսկ II գլուխը՝ II գլխի տեղ, այսինքն՝ իր տեղումն է. այսպիսով, համառոտի մեջ նյութը ետ ու առաջ է դասավորված: Բացի դրանից, համառոտ խմբագրության մեջ բացակայում է ընդարձակի կարճ վերջաբանը, իսկ սրա փոխարեն ավելացրած է նոր նյութ, որը մենք III գլխի տակ ենք դնում և որը զուտ դավանաբանական բնույթ է կրում:

Հովհաննես Սարկավագի երկն ստորև մենք հրատարակում ենք զույգ խմբագրությամբ, որոնցից ընդարձակը՝ ըստ Երուսաղեմի ձեռագրից մեզ ուղարկած պատճենի, ուր անկյունավոր փակագծերի մեջ դրած վերնագիր-բաժանումները մերն են. ընդարձակ տեքստի ձախ կողմում նշած թվերը ցույց են տալիս № 1212 (կարդա՛ 1272–խմբ.) ձեռագրի էջերը: Համառոտ խմբագրությունը վերահրատարակում ենք համաձայն Համազասպ վ. Ոսկյանի պուբլիկացիայի՝ կողքից նշելով վերջինիս էջերը:

1212), (2): Հմմ. **Եր[ուանդ]** ս. [**Տեր-Մինասեան**], Հաղբատ և Սանահին վանքերը (967-1300), «Արարատ», 1901, էջ 341. **Գարեգին եպ.** [**Յովսէփեան**], Պատմութիւն Յովհաննու Մայրագոմեցւոյ,-«Արարատ», 1917, էջ 744:

[5] **Գ. Զարբհանալեան**, op. cit., loc. Cit.:

[6] **Յակովբոս վ. Տաշեան**, Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեանց մատենադարանին ի Վիեննա, Վիեննա 1895, էջ 770, 910:

[7] Դկտր. **Հ. Համազասպ Ոսկեան**, Յովհաննէս Սարկաւագի գրութիւնները,-«Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 242-243: **Նույնի**, Մատենագրական քննություններ [«Ազգային մատենադարան» ճժԲ], Վիեննա 1926, էջ 53-55. **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 149:

* * *

Հովհաննես Սարկավագ վարդապետի տիեզերագիտական-օդերևութաբանական գրվածքի հրատարակությունը կարևոր է և նշանակալից շատ տեսակետներից:

Նախ՝ ինչպես ընդարձակ խմբագրության սկզբնական մասից երևում է, այն գրված է ի պատասխան ումն վրաց եպիսկոպոսի (անունը չի հիշված), որ խնդրել է մեկնաբանել Սաղմոսի LXX 13-14 տուները: Եւ այս հանգամանքը դրդում է մեզ վերհիշել այն, թե որքան մեծ դիրք, հռչակ և հեղինակություն ուներ վաստակած վրաց հասարակության և մասնավորապես Վրաստանի արքունիքում Հովհաննես Սարկավագը Դավիթ IV Շինող թագավորի օրոք (1089-1125):

«Քարթլիս ցխովրեբայի» (Վրաց տարեգրութեան) հին հայերեն թարգմանության մեջ, որ կատարվել է XII դարում, վերջաբանում հետևյալն է ասված Դավիթ Շինողի և Հովհաննես Սարկավագի փոխհարաբերությանց մասին. «Այլ ինքն (Դավիթ) սիրէր զազգն Հայոց և զեկեղեցիսն և զումն հռետոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկաւագ անուն, խոստովանէր նմա զյանցանս իւր և կորացուցեալ զպատուական գլուխն՝ աւրհնէր ի նմանէ, և նստէր ընդ նմա և փարէր զպարանոցաւ նորա և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց գնա յինէն, զի մի աշխատ լիցիս»: Եւ Թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուական»: Եւ պարգևեաց նմա գեաւղ առընթեր վանացն ի ծառայութիւն նմա: Եւ ի յարուցնելն զԹագաւորն զայս ասէր, եղեալ զձեռս ի վերայ գլխոյն. «Գտի զԴաւիթ ծառայ իմ և եւղով սրբով իմով աւծի զնա»՝ մինչև ցտասներորդ տունն: Եւ զուարճանայր արքայն և գովէր գեղեցկակերպ Թարգմանութիւնն Հայոց»[8](3):

Նույն իմաստով սրա մասին վկայում են և հայ պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդանը: Կիրակոսը գրում է. «Կարի յոյժ սիրէր զսա (զՅովհաննէս Սարկաւագ) թագաւորն Վրաց Դաւիթ, հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի և Գէորգեայ, այնքան զի մինչ լսէր զգալուստն նորա, յոտն առնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն. և նա եդեալ զձեռն ի վերայ նորա, և ասէր զաղմոս այս. «Գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա: Ձեռն իմ ընկալցի զնա և բազուկ իմ

[8] Համառօտ Պատմութիւն Վրաց, Վենետիկ 1884, էջ 122-123, մանավանդ **Լ. Մելիքսեթ-Բեկ**, Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, էջ 134-135, հմմ. **Նույնի**, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 219:

զօրացուցէ զնա: Մի մեղիցէ նմա թշնամի և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ զնա: Եւ ի պատճառս սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց»[9]: Ըստ Վարդանի. «և ոչ էր նա (Դաւիթ) երկմիտ յեկեղեցւոյ և յաղօթից մերոց. վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր ի ներքոյ ձեռաց մերոցն՝ խնդրելով օրհնութիւն»[10]:

«Քարթլիս ցխովրեբայի» (Վրաց տարեգրութեան) հայերեն թարգմանության վերջաբանում նշված փաստը, որ Դավիթ Շինողը «պարգևեաց նմա (Յովհաննէս Սարկաւագի) գեաւղ ալընթեր վանացն ի ծառայութիւն նմա», միանգամայն հաստատվում է Հաղբատի ս. Նշան տաճարի մուտքի վերև փորագրված արձանագրությամբ (1123-1125 թ.թ.), ուր, ի միջի այլոց, ասված է. «Դաւիթ... տիրեաց գաւառս և ազինս,... Եղև խնամող Հաղբատայ և Սանահնի... ընթացեալ քաղցր և բարեսէր աստուածապաշտութեամբ... զՀաղբատս ի մթութենէ աւերութեանն ազատեաց, գրով և վճռով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զայգիս... զգեւղն... և ամենայն հողով և վիճակովն... զեղեալ կալուածս ամենայն վերահաստատեաց»[11](4):

Վերջապես, Դավիթ Շինողի պատմիչը (XII դ.), խոսելով 1123-1125 թվերի միջոցին Թբիլիսիում գումարած հայ-վրացական եկեղեցական ժողովի մասին, նշում է, որ ժողովին հայերի կողմից ներկա էին «բազմաթիվ եպիսկոպոսներ և վանքերի առաջնորդները, որոնք պարծենում էին նրանով, թե ինչպես հասել են ամենայն ուսմանց և գիտության գագաթնակետին»[12]: Եվ այս եպիսկոպոսների ու վանքերի առաջնորդների շարքում առաջնակարգ, եթե ոչ ղեկավար դեր էր խաղում Հովհաննես Սարկավագը:

[9] Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, 1909 թ., էջ 120:

[10] Հաւաքումն պատմութեան՝ Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ 1862, էջ 120:

[11] Description de monastères arméniens d'Haghbat et de Sanahin, par archim. Jean de Crimée, avec notes et appendice, **par M.Brosset.** Описание монастырей Ахпатского и Санаинского архим. Иоанна Крымского ["Mémoires de l'Acad. des Sciences" VII sér., t. VI, № 6], СПб.1863 p. 4. ***Ռոստոմ բէգ Երզնկեան***, Հնախօսական տեղագրութիւն Հաղբատայ աշխարհահռչակ վանից, Վաղարշապատ 1886, էջ 32. ***Կ. Կոստանեանց***, Վիմական տարեգիր, ՍՊԲ. 1913, էջ 28, հմմ. *А. Ерицов*, Ахпатский монастырь, – "Кавказская Старина" № 2, 1872 г., стр. 51, ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 136-137, հմմտ. 34: ***Նույնի***, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, 223:

[12] Հմմ. ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 64, 138, ***Նույնի***, Վրաց աղբյուրները, I, 219, ***Նույնի*** Դիտողություններ Շոթա Ռուսթավելու և նրա «Վագրենավորը» պոեմի մասին, -«ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տեղեկագիր», 1941 թ. № 1, էջ 77. ***Նույնի,*** Հայ-վրացական գրական կապերը,- «Գրական թերթ», 1941 թ. № 5:

* * *

Հովհաննես Սարկավագ Վարդապետի տիեզերագիտական-օդերևութաբանական գրվածքը, որ հորինած է Դավիթ Շինողի օրոք, զուգընթաց նրա՝ Սարկավագի՝ «լծակից» (ըստ Վարդանի) Ալավկա որդի Դավթի «գիւրահաս» կանոնների[13] արժեքավոր նյութ է պարունակում XII դարու ժողովրդական հավատալիքներն ու սնոտիապաշտությունը պատկերելու համար, որի դեմ պայքարում է Հովհաննես Սարկավագը (5):

Խոսելով վիշապի մասին և առաջ բերելով Աստվածաշնչից վիշապի մասին եղած բոլոր վկայությունները (Սաղմոս LXXIII, 13-14, Մարգարէութիւն Յովնանի, II, 1-2), Սարկավագը, ի միջի այլոց, տալիս է ժամանակին վայել գիտական մեկնաբանությունը տվյալ հարցի շուրջը: Ըստ Սարկավագի՝ վիշապը ոչ թե մետաֆիզիկ տարրկա է, այլ միևնույն կոկորդիլոսը (Սաղմոս LXXIII, 13-14), կետը (Մարգար. Յովնանի II, 1-2) և վերջապես պտուտահողմ, բոլորպան, քաշքամի, մրրկայուն, մրրիկ մեծ [=ռուս. смерч] (Մարգ. Յովն., I, 4, 12): Հեղինակը, քննության ենթարկելով վրաց եպիսկոպոսի «հարցումն...վասն գեղջկաց տգիտաց վիշապին անուանելոց», փորձում է տալ գիտական բացատրություն, որ այդ վիշապը ոչ այլ ինչ է, բայց եթե «հողմ ինչ... պտուտկեալ պատեալ զմիմեամբք լցեալ հողմով յերկրէ»: Միաժամանակ Սարկավագը նախատում է հարցասեր եպիսկոպոսին. «Առասպելական խազգուշացնում է հարցասեր եպիսկոպոսին. «Առասպելական կանոնացուս վիպութեան ունկն դնել և հաւատալ մի երբէք յանձն առնուցուս վիտութեան ունկն դնել և հաւատալ մի երբէք յանձն առնուցուս վիսութեան, քանզի յիմարաց են այդպիսի կարծիք, որչափ զնա անուանողաց, քանզի յիմարաց են այդպիսի կարծիք, որչափ զնա անուանողաց, քանզի յիմարաց են այդպիսի կարծիք, որ-

[13] ***Կ.Կոստանեանց,*** Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի,–«Ազգագրական հանդէս» XIV, 1906, էջ 105-132, XV, 1907, էջ 62-67: *Н. Марр*, Известия Акад. Наук 1920, стр. 98. Հմմ. ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վաւդապետք Հայոց հիւսիսային կողմանց, 165-169, ***Նույնի,*** Հայոց հին գրականության պատմություն, 120:

[14] ***Manuk Abeghian*** Der armenische Volksglaube, Leipzig 1899, S.24, 43, 68, 74, 79,83. ***Մ. Աբեղյան***, Հայ ժողովրդական առասպելները etc. Վաղարշապատ 1901, էջ 155, ***Նույնի***, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Երևան 1941, էջ 28, 69, ***Н. Марр и Я. Смирнов,*** Вишапы, Лнгр. 1931, стр. 66 (=N. Marr et J. Smirnov, Les vichaps, Lngr. 1931, p. 68). ***Б. Б. Пиотровский,*** *Вишапы*, Лнгр. 1939 стр. 27: Հմմտ. Le Questionnaire de Saint Grégoire l' Illuminateur et ses apports aves Eznik, par N. *A d o n z*, –Extrait de la Revue de l'Orient Chrétien, s[e] Série, t. V (XXV) № 3 et 4 (1925-1926), Paris 1927, pp. 312, 321-322, 327-328 (329,336-337,340-341). ***Ն. Ադոնց***, Eznikiana, Պարիս 1928, էջ 19-21, 53-59:

[Վասն շարժման և սասանութեան երկրի]

Վասն շարժման ասացեալ Սարկաւագ վարդապետին

[I]

Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետէ Սարկաւագէն՝ գիր[1] գոլով յազգս ամենայն՝ եթէ զի՞արդ ունի երգ[2] սաղմոսին ասացեալ. «Դու խորտակեցեր զգլուխ վիշապաց ի վերա ջուրց: Դու փշրեցեր զգլուխ վիշապին և ետուր զնա կերակուր զաւրացն Հնդկաց (Սաղմ. LXXIII, 14):

Ի դիմաց գերելոց[3] ժողովրդեանն ի Բաբելոն մատուցանէ զողբերգական պաղատանս Դաւիթ՝ Ասափաւ հանդերձ և այլովք երգակցաւք. (376բ) «Ընդէ՞ր մերժեցեր, Աստուած, ի սպառ. բարկացաւ սրտմտութիւն քո ի վերա ժողովրդեան քո» (Սաղմ. LXX, 1): Եւ ի կարգ արկեալ մի ըստ միոջէ զանցս[4] ծնդակ[5] կրիցն, որ ի Քաղդէացւոցն զաւերակ[6] քաղաքին Երուսաղէմի. և զի ելեան[7] ազգին գերութիւն, զկիզումն տաճարին և զի խորհեցան լռեցուցանել զամենայն տաւնս[8] Երուսաղեմայ[9]: Եւ ապա ի վրէժխնդրութիւն կոչելով զԱստուած, ասէ. «Մինչև յե՞րբ Աստուած նախատէ թշնամին, բարկացուցանէ հակառակորդն զանուն սուրբ քո»: Յուշ առնէ և զառաջին սքանչելեացն վասն ազատութեան[10] Երուսաղէմի[11], վիշապս անուանէ զնախարարս, իսկ վիշապ... զինքն[12] իսկ զգլխովին:

Այլ զի ասէ. «Եթէ ետուր զնա ի կերակուր զաւրացն (377ա) Հնդկաց» (Սաղմ. LXXIII, 14): Այս Հնդիկք, դրացիք Եգիպտոսի, եկին[13] ի բուն Հնդկաց, որ յարևելս հարաւոյ առ Հնդես[14] գետով ասեն, և այնքան զաւրացան ի պանդխտութենէն[15], որ և բազում անգամ տիրէին Եգիպտացւոց և թագաւոր ի վերա նոցա յինքեանց կացուցանէին: Եւ յորժամ կորեաւ փարաւոն իւրովքն առ հասարակ, եւս առաւել քաջալերեցան առնուլ յաւարի զազգն Եգիպտացւոց և ծառայեցուցանել զնոսա, վասն որոյ ի կերակուր տալ, ասէ, զվիշապն փարաւոն զաւրացն Եգիպտաց-

[1] գիր] գետ
[2] երգք
[3] գերելոյ
[4] զանցս
[5] ծնդակ] դժնդակ
[6] զաւերած
[7] զի ելեան] զիսրայէլեան
[8] տաւնս] տաւնս

[9] Երուսաղէմայ] Աստուծոյ
[10] ազատութեանն
[11] Երուսաղէմի] Իսրայէղի+քէ որպէս զփարաւոն եւ զզաւրս իւր սատակեաց ի խորս Կարմիր ծովուն
[12] իսկ վիշապ...զինքն իս վիշապ զինքն
[13] եկին] եկք են
[14] Յնդէս
[15] բանդխտութեանն

ւոց`[16] զողջոյն ժողովուրդ ժառանգութեան նորա յանուն նորա կոչելով: Քանզի յուտճահայլ ի[17] յափշտակելն և ծառայեցուցանել, որպէս և աւէ իսկ Աստուած բերանով սուրբ մարգարէին վասն իւրոյ ժառանգութեան Իսրայելի[18] կոչեցելոյ յԱստրեստանեայցն (377բ) վշտացելոց, որ կուտէին[19] զժողովուրդ իմ որպէս կերակուր՝ զայն ակնարկելով:

[II]

Այլ միւս ևս հարցումն ձեր վասն գեղջկաց ոգիտաց վիշապին անուանողաց[20], ոչ ունին դժուարինս և տարակուսելի ինչ, քանզի ոչ եթէ վիշապ է փոշին մանուածոց[21] ի փոթորկէ գխտնականէ[22] յաւդս խաղացելոց, այլ հողմ ինչ է պտուտկեալ՝պատեալ զմիմեամբք լցեալ հողմով յերկրէ, զի յորժամ դէմ ընդ դէմ միմեանց փչիսցին[23] և հանդէտք գտանիցին, առ ի չզրկելոյ[24] շրջան իմն առնուն ի միասին գնալով պատմամբ զիրերաւք. և քանզի որ զատանին և ոչ խոտո-

[II]

Այլ է միւս ևս ձեր հարցումն վասն գեղջկաց ոգիտաց վիշապին անուանելոյ, ոչ ունին դժուարինս և տարակուսելի ինչ, քանզի ոչ եթէ վիշապ է փոշին մանուածոյ ի փոթորկէ գխտնականէ յօդս խաղացելոյ, այլ հողմն ինչ է պտուտկեալ՝ պատեալ զմիմեամբք լցեալ հողմով երկրէ, զի յորժամ դէմ ընդ դէմ միմեանց փչեսցին և հանդէտք գտանիցին, առ ի չզրկելոյ միյան զմիւս և ոչ յաղթահարելոյ շրջան իմն առնուն ի միասին գնալով պատմամբ զիրերօք և քանզի ոչ զատին և ոչ խոտորին ի միմեանց մինչև ի բարձրութէիւն օդոյդ վերնոյ այսպէս երևին և լինի այս երբեմն բուռն և սաստիկ զօրութեամբ, իսկ երբեմն հանդարտագոյն և նուազ. առասպելական ստութեան ունկն դնել և հաւատալ մի երբեք յանձն առնուցուս վիշապ

[16] Եգիպտացւոց] Եթէոպացւոց

[17] յուտճահայլ] յուտել ասի

[18] Իսրայէղի

[19] ուտէին

[20] անուանելոյ

[21] մանուածոյ

[22] գետնականէ

[23] փչեսցեն

[24] միոյն զմիւսն և ոչ յաղթահարելոյ]

րին ի միմեանց, մինչև ի բարձրութիւն աւդոյդ վերնոյ, այնպէս (378ա) երևին: Եւ լինի այս երբեմն բուռն և սաստիկ զաւրութեամբ, իսկ երբեմն հանդարտագոյն և նուազ. առասպելական ստութեան[25] ունգն դնել և հաւատալ մի երբէք յանձն առնուցուս վիշապ զնա անուանողաց, քանզի յիմարաց են այդպիսի կարծիք, որպէս և որք վասն լուսնոյ խաւարման աղճատին ի տիտանոյ[26] վիշապի դատարկաբանելով:

զնա անուանողաց, քանզի յիմարաց են այսպիսի կարծիք, որպէս և որք վասն լուսնոյ խաւարման աղճատին ի տանոյ վիշապին դատարկաբանելով:

[III]

Այս վասն որ ի Յոբ վիշապին էիք հարցեալ, բազում ունի տեսութիւն բանն, որ ոչ է այժմու ձեռնարկութեանըս: Սակայն փոքր ինչ և մանաւանդ զխնդրելին ձեզ ծանուսցուք համառաւտ բանիւ: Նա է սկիզբն արարածոց տեառն, ասաց որ խաւրձան[27] ընդ Յոբ յամպոց[28] և ի մրրկի[29]: Ոչ ամենայն արարածոց, այլ որ ի ջուրս բու ածին[30] Քանզի Մովսէս զերկինն առաջի դրէ արարածոց[31] ամենայն (378բ) ի սկիզբն. և է յաղթ կենդանին

[25] ստութեանն

[26] ի տիտանոյ] ի տանոյ

[27] խաւրձան] խաւսէրն

[28] յամպոյ

[29] մրրկէ

[30] բու ախին] բուծանին

[31] արարածոյ

մարմնով և անհնարին մեծութեամբ, թագաւոր որոտի չարսն[32] *ըստ որում և գրեալն իսկ է. զոր և անուանին*[33] *Լևիաթան ժողովք իմաստ[ն]ոց, քանզի որպէս է Բեհ[ե]մովդ*[34] *ցամաքին սողնոց կենդանեաց թագաւոր, և գազանաց՝ առեծ. (Յովբ,* III, *8. Յովբ,* XL *10) այսպէս և ջրային արարածոց շըրջան, որոց*[35] *Լևիաթան միւս*[36] *առանց լծորդի ընդերութեան ոչ ծնեալ յումեքէ վասն զի առաջին յարարածս Աստուծոյ ղաւղական կենդանիս և ոչ ծնեալ զոք յինքենէ, քանզի ոչ տուաւ նմա սիրել անձամբ ձեռն*[37] *ծնընդեան: Մահ է պատճառ աճականացի*[38] *ծնընդեան, զի մի ապականեսցին սեռք և տեսակք կենդանեաց, այլ փոխանորդութեամբ մնասցէ ամենայն առանց եղծման և ապականութեան ի պակասութենէ նմա. վասն զի ոչ մեռանի, ոչ էլ հրամայեցաւ ծնընդա(379ա)գործութեամբ յառաջխաղացութեամբն. և ունի գործ զարգելումն ջուրց ներքին և*[39] *անդընդոց, քան զյատակս վերին ծովու, քանզի զահագին ծանրութիւն մեծութեան իւրոյ մարմնոյն կեցու-*

[32] որոտի չարսն] որոց ի ջուրսն

[33] անուանեն

[34] ի Բեհեմովթ

[35] շրջան, որոց] շնչաւորաց

[36] միւս] մի է եւ

[37] ձեռն]

[38] աճականաց ի + ձեռն

[39] եւ]

ցեալ[40] *ունի*[41] *ի վերա սառցկարխող*[42] *հոսանաց յորդութեան ջուրցն, այնքան միայն թոյլ տալով ջուրցն ելանեան, որքան հեշտ և դիւրին որովայնի մարմնոյն իւրոյ թուեսցի և իցէ: Եւ այս գործ մեծի նախախնամութեան Աստուծոյ. զի րիձու (?) վառցի*[43] *ծածկուիթեամբ ջուրց երկիրս ցամաք, որպէս ի սկիզբն*[44] *ոչ եթէ զի զանդընդային ըղխմունսն, որ ստեղծ զամենայն յոչնչէ և գեղեցկապէս նախախնամէ, ոչ կարէր այլովք*[45] *արգելուլ կամ խափանել, զի մի ընաւ իսկ լինիցի, այլ որպեզսի զիւրոյ անչափական զաւրութեան*[46] *և զիմաստութեան (379բ) հանդէս ցուցցի*[47]*, ըստ որում ետես Յունան (Յովն.* I, *15) յանդուն[դ]ըն կառավարելով, և երկիցեն ի նմանէ ամենայն ազգք, այնպէս կամեցաւ մատակարարել. բայց բազում ինչ ի բանից պատմութենէն*[48] *զնմանէ այլաբան արարեալ*[49] *լինի վերա իմանալոյ վիշապին կամակորի և այդ յաղագս գործին բաւականասցի:*

[40] կեցուցեալ] յեցուցեալ

[41] ունի]

[42] սաստկաբխող

[43] րիծու (?) վառցի] մի ծովացի

[44] սկզբանն

[45] այլազգ

[46] զաւրութեանն

[47] ցուցցէ

[48] պատմութեանն

[49] այլաբան արարեալ] այլաբանաբար առեալ

[IV]

Իսկ վասն շարժմանց, թե ուստի՞ լինին, է պատճառ այսոցիկ բ[ռ]նութիւն հողմոց անդընդայնոց, քանզի երակք ընդարձակք են գնացից հողմոց[50] երկըրի[51] որպէս և ջրոյ[52] ընթանալոյ. վասն զի ըստ որում ի վերա ծովու հիմունս էարկ բարձրեալն երկրի և ի վերա գետոց պարտաստեաց զնա, այնպէս և ի վերա հողմոց զծանրութիւն սորա կացոյց ամենահնարապէս և կարողաբար: Իսկ յորժամ թիւ (380ա) *եսցին[53] շունչք հողմոյն[54] յընտանի և ի բնաւոր ճանապարհացն ըստ իրիք պատահման յաղխս[55] և ի փապարս ստորերկրոյս, հարկ լինի սասանել երկրի մինչև ուղ[ղ]եսցին գնացք շնչմանցն հողմոց: Այլ երբեմըն սաստկագոյն լինի շարժումն ըստ բռնութեան հողմոցն և կործանական, իսկ երբեմն համարձակագոյն[56] վասն կակղութեան շընչման յուղիղն ընթանալո և բարեկարգապէս ոչինչ վնասի երկիր, բայց խոտորումն գնացիցն և առաւելութիւն բռնութեան դղրդումն երկըրի գործէ. է երբէք, զի թարթափէ միայն. և*

[50] հողմոյ

[51] յերկրի

[52] ջրոց

[53] թիւրեսցին

[54] հողմոցն

[55] յաղխսն

[56] համարձակագոյն] հանդարտագոյն

[I]

Իսկ վասն շարժմանց՝ թէ ուստի լինին, է պատճառ այսոցիկ բռնութիւն հողմոց անդընդայնոց , քանզի երակք ընդարձակք են գնացից հողմոյ երկրի, որպէս և ջրոյ ընթանալոյ վասն զի ըստ որում ի վերայ ծովու հիմունս էարկ բարձրեալն երկրի և ի վերայ գետոց պատրաստեաց զնա, այսպէս և ի վերայ հողմոց զծանրութիւն բարձրացոյց ամենահնարապէս և կարողաբար. Իսկ յորժամ թիւրեսցեն շունչք հողմոցն յընտանի (var. *ընդանի*) *և ի բնաւոր ճանապարհացն ըստ իրիք պատաղման յաղխսն և ի փապարս ստորերկրեայս, հարկ լինի երկրի սասանել երկրի, մինչև ուղղեսցին գնացք շնչմանցն հողմոց. այլ սաստկագոյն լինի շարժումն ըստ բռնութեան հողմոցն և կործանական իսկ երբեմն հանդարտագոյն վասն կակղութեան շնչմանըն, յուղիղն ընթանալոյ և բարեկարգապէս ոչինչ վնասի երկիր, բայց խոտորումն գնացիցն և առաւելութիւն բռնութեան դղրդումն երկրի գործէ, զոր մռնչողական կոչեն և անօրութեան պատահել երկրի պատառէ, ջուր կամ հուր կամ վէմ ի վեր ձգեալ ընկնելու և այլ երբեք գոչիւն միայն լսեցուցանէ: Իսկ արարիչըն ամենայն յորժամ կամեցի ներել մեզ բնաւորական իւրովն քաղցրագըթութեամբ սանձակոծեալ ընդգրկէ զբռնութիւնն և տեսեալ*

է, զի մռնչումն և եթ գործէ, զոր մռնչողական կոչեն, և անաւ[ս]րութեան պատահիլ[57] երկրի՝ պատառի[58] ջուր կամ հուր կամ վէմս ի վեր ձգեալ ընկենու. և այլ երբէք գոչիւն միայն լսեցուցանէ: Իսկ արարիչն ամենայնի յորժամ կամեցի[59] ներել մեզ (380բ) *բնաւորական իւրովք քաղցրութեամբ[60], սանձակոծեալ ընդգրկէ զբռնութիւն[61] և տեսեալ յանդարձութեան զազգս մարդկան և չշահեալ ինչ յերկայնմտութենէն, ի տանջանս հարուածոց մեզ ներգործէ, որպէսզի և զայլս ի վերա երկրի ի պատուհասս: Եւ եթէ ընդէ՞ր բարիք ընդ չարս մեռանին և անմեղք ընդ մեղաւորս, ի բանէ անտի ուսցիս, զոր արարեալ է մեր ըստ կարողութեան յաղագս մեծի և սաստկական արեւմըտեայ շարժմանն:*

* * *

Եւ զարդ բաւական համարեալ, թող դուք[62] զերկայնամտութիւն բընախօսութեան[63]:

[57] պատահել

[58] պատառէ

[59] կամեցի

[60] մաղցրութեամբն

[61] զբնութիւնն

[62] թողցուք

[63] բնախօսութեանն

յանդարձութեան զազգս մարդկան և չշահեալ ինչ յերկայնմտութենէն, ի տանջանս հարուածոց մեզ ներգործէ, որպէս և զայլսն ի վերայ երկրի պատուհաս և թէ ընդէ՞ր բարիքն ի չարս մեռանին և անմեղքն ի բանէ անտի ուսցին, զոր արարեալ է մեր ըստ կարողութեան յաղագս մեծի և սաստկական արեւմըտեայ շարժմանն:

[III]

Աստուած մարդասէր, մարդ աստուածասէր, որ մարդ է և Աստուած: Ոչ ումեք երևի Աստուած ի զգալեացըս, բայց միայն մարդոց. վասն մարդոյ Աստուած ի մարդ շրջեալ կերպա[րա]նայ, մի ազգակցութիւն Աստուծոյ և մարդոյ, ցանկալի է Աստուծոյ մարդ և Աստուած մարդոյ, քանզի ցանկութիւն ոչ յումեք է՝ բայց միայն յԱստուած և ի մարդ: Զերկիր գործեն մարդիկք, զերկին զարդարեն աստեղք: Ամենայն մարդ մարմին և անձն ունի, այլ ոչ ամենայն անձն միտս ունի. ուրանօր միտք, անդանօր լոյս, և ուրանօր լոյս, անդանօր միտք. քանզի միտք լոյս և լոյս միտք: Աստ զլուսաւոր մտաց և զիմաստնոց ասէ:

Трактат Иоанна Саркавага вардапета Ахпатского “О движении и колебании земли”

(Р е з ю м е)

Столпами древнеармянской космологической (и астрологической) литературы являются крупные ученые – в VII веке Ананий Ширакский, в первой половине XII века Иоанн Саркаваг вардапет Ахпатский (сконч. в 1129 г.) и на рубеже XIII-XIV в.в. Иоанн Ерзинкаец, по прозвищу Плуз.

Иоанн Саркаваг, современник грузинского царя Давида IV Строителя (1089-1125), принимал деятельное участие в обсуждении вопросов как общественно-политических (об объединении армянской и грузинской церквей), так и чисто научных. Историк Давида Строителя пишет, что армянские церковные деятели, принимавшие участие в армяно-грузинском церковном соборе, 1123-1125 г.г., гордились тем, что “достигли вершины всякого просвещения и учености”.

Иоанн Саркаваг вардапет Ахпатский (по происхождению из Гандзака) известен в армянской литературе своей разносторонней деятельностью как богослов-догматик, экзегет, философ, космолог-астролог, реформатор календаря, историк и поэт, в связи с чем он наделен прозвищами великого учителя (вардапета, рабунапета), философа, софиста, пиитикоса, ритора и пр. Из массы его писаний особого внимания заслуживает трактат космолого-метеорологического содержания “О движении и колебании земли”, дошедший до нас в 2-х редакциях: 1) *пространной*, предлежащей в рукописях - одной в Собрании Иерусалимского арм. патриаршего монастыря св. Якова (№ 1712–от 1290 г.), и другой – в собрании Венецианских мхитаристов; и 2) *краткой*, дошедшей до нас в манускриптах собрания Венских мхитаристов, №№ 324 и 442, по которым таковая редакция издана А м а з а с п о м В о с к я н о м в Вене 1925 (1926) году.

Имея в виду, что пространная редакция названного трактата Саркавага до сих пор еще не опубликована, притом она заметно отличается от краткой, и располагая копией с таковой (присланной нам из Иерусалима, вместе с другими материалами несколько лет тому назад), мы и публикуем ее, привлекая при этом для сравнения наличное издание А. В о с к я н а, воспроизводимое en regard.

Трактат Саркавага в пространной редакции , являющейся *первичной* и *основной*, написан по запросу грузинского епископа (имя не указывается), современника его, и дает научное (для того времени) объяснение явлений природы, в частности определение понятий *вишап*, *левиафан*, *бегемот* и пр., а также таких “игр” природы, как *смерч*, которые автором представляются в реальном свете, но не в восприятии суеверных народных масс с его верованиями и предрассудками, от которых автор считает нужным всячески оградить грузинского епископа. При этом дается естественное объяснение причины затмения луны, вопреки народному представлению, связывавшему таковое с появлением “титана-вишапа”.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻՑ

(ՓԻԼՈՆԻ ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ ԲԱՆ ԱՌԱՋԻՆ՝ ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ, ԳՈՇԻՆ ԱՍԱՑԵԱԼ ՊԱՏՃԱՌ)

Ավագ Հովհաննես վարդապետ Տավուշեցու աշակերտ և կրտսեր Հովհաննես Վանական վարդապետ Տավուշեցու ուսուցիչ Մխիթար Գոշը միջնադարյան հայ գրականության անդաստանում Հովհաննես Սարկավագ Սոփեստոս վարդապետ Հաղբատացուց հետո ամենաշողշողուն աստղերից մեկն է:

Հայ մշակույթի պատմության մեջ Մխիթար Գոշը սովորաբար համարվում է առաջինը, որ զբաղվել է հայ եկեղեցական և պետական իրավունքի ուսումնասիրությամբ, կանխելով Սմբատ սպարապետ Գունդստաբլին, ինչպես առակագրությամբ կանխելով Վարդան Այգեկցուն:

Վենետիկի Մխիթարյան հայր Գարեգին վարդապետ Զարբհանալյանը դեռևս XIX դարի վերջում, հանրագումարի ենթարկելով Մխիթար Գոշի գրական ժառանգությունը, Դատաստանագրքի և Առակների տեսությանը կցել էր նաև «Մեկնութիւն Երեմիայի», Աղոթքներ, «Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ» և «Ի յարութիւն Ղազարու» ճառի հիշատակությունը[1]:

Իսկ 1925-1926 թվականների Վիեննայի Մխիթարյան հայր դոկտոր Համազասպ վարդապետ Ոսկյանը Մխիթար Գոշի գործերի ցանկը ճշտել է այսպես. 1. «Դատաստանագիրք», 2. «Պատմութիւն», 3. «Մեկնութիւն մարգարէութեանցն Երեմիայի մարգարէի», 4. «Առակք», 5. Մանր երկեր թվով յոթն, որոնք են՝ ա. Աղոթքներ,

բ. «Փիլոնի Յաղագս նախախնամութեան բան առաջին՝ առ Աղեքսանդրոս Գոշին ասացեալ պատճառ», գ. «Ճառ ի յարութիւն Ղազարու», դ. «Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածոց» և «Թուղթ խրատական», ե. «Ներբողական ասացեալ ի նոր վկայն՝ կոչեցեալ Խոսրով», զ. «Տաղ» և է. Կտակ մը[2]:

1928 թվականին հրատարակած մեր դոկտորական չարադրության մեջ «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» (վրացերեն) մենք դիտել էինք Մխիթար Գոշի գրական ժառանգությունը ինը կետի ներքո, մասնավորապես հիշատակելով «Փիլոնի Յաղագս նախախնամութեան բան առաջին՝ առ Աղեքսանդրոս, Գոշին ասացեալ պատճառ» (7) և «Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ը (9)[3]:

Մխիթար Գոշի գրական ժառանգությունը ճշտորոն պատկերեկու համար կարևոր նշանակություն ունի նրա անմիջական աշակերտ Կիրակոս վարդապետ Գանձակեցու վկայությունը, որ պահպանված է վերջինիս «Հայոց պատմության» մեջ, այսինքն՝ «Եւ եթող նա յիշատակ և արժան գերեզմանի գիրս մտախոհս յօգուտ ուսումնասիրաց համառօտ մարգարէութեանն Երեմիայի գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, թէ որպէս պատշաճ իցէ, կամ ո՞րպիսի կարգօք, և գիրք մի ողբք ի վերայ բնութեանս ի դիմաց Ադամայ, առ որդիս նորա և ի դիմաց Եւայի առ դստերս նորա. և գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց ի խնդրոյ մեծ զօրավարին Զաքարէի և եղբօր իւրոյ, և այլ թուղթս խրատականս. և եղև վախճան նորա ի ՈԿԲ(=1213) թուականին»[4]:

Դժվար չէ կռահել, որ այս ցանկի մեջ առաջին տեղը հիշված է «[Մեկնութիւն] մարգարէութեան Երեմիայի», երկրորդ տեղը՝ կանոնները, այսինքն «Դատաստանագիրք Հայոց»-ը, երրորդն է «Ողբասացութիւն», չորրորդը՝ «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ», որը հավանական է նույն «Գծագրութիւն յաղագս Վրաց»-ը լինի, հինգերորդը՝ խրատական թղթերը, որ հավանական է նույն մանր երկերը և ճառերը լինեն:

---

1 **Գարեգին վարդապետ Զարբհանալյան**, «Հայկական հին գրականության պատմություն (Դ-ԺԳ դար)», Գ տպ., Վենետիկ, 1897, էջ 686-698, մանավանդ 697-698:

2 **Համազասպ վարդապետ Ոսկյան**, «Մխիթար Գոշ», «Հանդես ամսօրյա», 1925թ., էջ 548-561, 1926 թ., էջ 25-35, 129-137, **Նույնի** «Մատենագրական քննություններ» («Ազգային մատենադարան», ՃԺԲ), Վիեննա, 1926, էջ 121 (123)-192, հատկապես 145-192:

3 **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», Թբիլիսի, 1928, էջ 214-249, հատկապես 223-228 (վրացերեն):

4 Պատմութիւն Հայոց՝ արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1919, էջ 208-209:

Մխիթար Գոշի գրական գործունեությունն այսուհետև պիտի որակավորվի ոչ միայն իբրև ականավոր իրավաբանի և ոչ պակաս ականավոր առակախոսի, այլև իբրև նշանավոր մատենագիր-մեկնիչի և դավանաբանի, որի կյանքը ընթացել է «սկզբնաւորեալ ի լեռնակողմն մենաստանին կոչեցելոյ Հոռոմաշէն», ապա «յանապատս և յեղբայրանոցս անուանեալ Դասնոյ»[5], հետո Գետկա վանքում և, վերջապես Նոր Գետիկ կոչված վանքում, որ նույն Գոշավանքն է[6]:

* * *

Մխիթար Գոշի դերը հայ մշակույթի պատմության մեջ ոչ պակաս չափով նշանակալից է մեկնողական և դավանաբանական-հակաճառական բնույթի երկերով, քանի որ նրա ուսերի վրա էր «Հայոց հյուսիսային կողմանց վարդապետների»-ի ղեկավարի կամ պարագլխի դերը ԺԲ դարի վերջում և ԺԳ դարի սկզբներին՝ մինչև նրա մահը (1213թ.), ինչպես, նրանից առաջ՝ Գրիգոր Տուտեորդին, Գրիգոր Աբասաորդին և Դավիթ Քոբայրեցին: ԺԲ դարի առաջին կեսին այսպիսի պարագլուխներ էին «հյուսիսային» հատվածում՝ Հովհաննես Սարկավագ սոփեստոսը, իսկ հարավ-արևմտյան հատվածում՝ Պողոս Տարոնացին[7]:

«Հայոց հյուսիսային կողմանց վարդապետների»-ի ցանկերը, բարեբախտաբար, պահպանված են հայ մատենագրության հուշարձաններում՝ մեկը 1184-1185 թվականների շուրջ, մյուսը 1204-1205 թվականների շուրջ, ուր հիշատակված է նաև Մխիթար Գոշը: Այս հիշատակությունը հետաքրքիր է նրանով, որ մի դեպքում Մխիթարը տեղավորված է ցանկի վերևում, այսինքն երիտասարդների շարքում, իսկ մյուսում նրան հատկացված է առաջին տեղը, հավանական է՝ իբրև պարագլխի: Ահա այդ ցանկերը.

Առաջինը (*ըստ Ներսես Շնորհալու «Ընդհանրական»-ի*).

«Բասիլ եպիսկոպոս, որ յարևելս հիւսիսոյ, վարդապետ Գրիգոր

[5] «Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց», ***Վահան ծայրագույն վարդապետ Բաստամյան***, Վաղարշապատ, 1880, էջ 69-74:

[6] «Մ. Գոշի վանքը», «Արաքս», 1892 թ., էջ 40. ***Ի. Հարությունյան***, «Գոշա վանք կամ Նոր Գետիկ», «Ազգագրական հանդես», Ժ, 1903 թ., էջ 37-38, ***Հ. Սպենդիարյան***, «Մխիթար Գոշի վանքը», 1911 թ.., № № 16-18: «Խորհրդային Հայաստանի պատմական հուշարձաններ, 1. Դիլիջանի շրջան», Երևան, 1937, էջ 14-18: ***Հ. Եղիազարյան***, «Նոր Գետկա վանք կամ Գոշավանք», «Էջմիածին», 1959 թ., № Ե, էջ 46-53, № Զ, էջ 51-58, № Է, էջ 50-55 (հատկապես 53-54):

[7] ***Լ. Մելիքսեթ-Բեկ*** , հիշյալ գիրքը, էջ 121-162, 238-249: Մեր գրախոսականը՝ «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագրում», 1957թ., № 4, էջ 130-131:

(Տուտեորդին-Լ.Մ.-Բ.) Սանահնին և հայր Յօհաննէս, վարդապետք մայրաքաղաքիս (մայրավանիցն Լ.Մ.-Բ.) Հաղբատայ՝ Իգնատիոս, Պետրոս, Վարդան և Դավիթ (Քոբայրեցի Լ.Մ.-Բ), Խաչատուր վարդապետ Հաղարծնին (Տարոնացին Լ.Մ.-Բ), Մխիթար վարդապետ Խոռակերտոյ և մյուս Մխիթար վարդապետ Գետկայ *(ընդգծումը մերն է- Լ.Մ.-Բ) և այլք աշակերտեալք ամենեքեան Սրբոց Կոակարանաց Աստուծոյ»[8]:*

Երկրորդը (*ըստ Կիրակոս Գանձակեցու «Հայոց Պատմութեան»*).

«Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք, որ Գօշն

կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր իմաստուն և հեզ (ընդգծումը մերն - է Լ. Մ.-

Բ). և վարդապետն ուսմամբ հռչակեալ Իգնատիոսն և Վարդան և

Դաւիթ Քոբայրեցին ի Հաղբատայ, Յովհաննէս հայր Սանահնին, որ

գկնի մահուան Գրիգորոյ, զոր Տուտայ որդին կոչէին... և Գրիգորէս

եպիսկոպոս Հաղբատայ»[9]:

Իբրև պարագլուխ « Հայոց հյուսիսային կողմանց վարդապետ-

ներ»-ի , կամ որ նույնն « հյուսիսային կողմանց Հայոց վարդապետ-

ներ»-ի, Մխիթար Գոշը 1197-1204 թվականների միջոցին եղույթ է

ունենում «Ծռազատկի» առթիվ Թբիլիսիում ծագած երկպառակ-

տության շուրջը, հորինելով իր «Գծագրութիւն ... յաղագս Վրաց»

երկասիրությունը[10](2):

Իսկ այս երկասիրությունն անմիջական պատասխանն էր դեռևս 1123-1125 թվականներին Թբիլիսիում գումարված վրաց-հայկական համատեղ եկեղեցական ժողովում վրաց մեծ գիտնական, աստվածաբան և փիլիսոփա Արսեն Իղալթոյեցու կողմից ներկայացրած մեղադրանքներ, որը բաղկացած լինելով 30 կետից, ամփոփված է վերջինիս այսպես կոչված «Դոգմատիկոն»-ում[11]: Գոշի ելույթը Ծռազատկի կապակցությամբ ձայնակցում է, մի կողմից, վրացական անանուն հեղինակի «Թագավորների պատմականն ու գովասանքը»

[8] «Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանեալ սուրբ հայրապետին մերոյ Տեառն Ներսիսի Շնորհալւոյ», Էջմիածին, 1865, էջ 426-427: Նույնը՝ Երուսաղեմ, 1871, էջ 308:

[9] «Պատմութիւն հայոց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», էջ 208-209: ***Լ.***

«Պատմութիւն հայոց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ» ... «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 175-176:

Մելիքսեթ-Բեկ , «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», ... «Թուղթ Մխիթար վարդապետին որ Գօշն կոչիւր», «Արարատ», 1900 թ., էջ

[10] «Թուղթ Մխիթար վարդապետին որ Գօշն կոչիւր», 121-127:

497-504, 562-568, 1901 թ., էջ 55-61, 121-127:

[11] ***Իլյա Աբուլաձե.*** «Մխիթար Գոշի «Հաղագ Վրաց» երկը և նրա գրական աղբյուրները», Թբիլիսիի Պետական համալսարանի աշխատություններ». VII, 1938, էջ 97-108 (վրացերեն):

երկին[12] *և, մյուս կողմից, սարի պատմիչ Գրիգոր Բարհեբրեուս Աբուլ-Ֆարաջի ժամանակագրության*[13]*:*

Մխիթար Գոշի դավանաբանական-հակաճառական բնույթի այս գրվածքը, իհարկե, չի կարելի դիտել այլ կերպ, բայց եթե իբրև մի նոր փորձ, հաշվով երրորդ, Անանիա վարդապետ Սանահնեցու «Բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց» և Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու «Յաղագս քաղկեդոնականացն» երկերից հետո, որոնցից առաջինը գրված է 1054-1060 թվականների շուրջ, իսկ երկրորդը՝ 1123-1125 թվականների շուրջ: Մխիթար Գոշի «Գծագրութիւն... յաղագս Վրաց»-ը, հետևելով նրանց, գրված պիտի լինի 1197-1204 թվականներին[14]*:*

* * *

Առանձնապես պիտի շեշտել Գոշի մեկնաբանական (էգզեգետիկ) գործերը, որոնցից մեկը, որ մենք սորև հրատարակում ենք, առնչվում է փիլիսոփայական մտքի զարգացման փուլերից մեկի հետ: Դա «Փիլոնի Յաղագս նախախնամութեան Բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ» ընդարձակ վերնագիրը կրող երկն է, որը մտած է Գրիգոր Աբասարրդու «Պատճառաց գրքի» մեջ ԺԳ դարի սկզբներին և, համենայն դեպս, ոչ ուշ քան 1213 թվականը, ասել է՝ դեռևս Գոշի կենդանության օրոք:

Այս երկը, իբրև Գրիգոր Աբասարրդու «Պատճառաց գրքի» գլուխներից մեկը, մեզ հասել է մի քանի գրչագիր օրինակով, որոնցից մեկն է Հայաստանի Մատենադարանի ԺԴ դարի ձեռագիրը № 1650/1879 (3), մյուսը՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի 1725 թվականի ձեռագիրը՝ № 47[15]*:*

Գրիգոր Աբասարրդու «Գիրք պատճառաց»-ը, ինչպես հայտնի է, պարունակում է մի շարք ճառեր[16]*, թարգմանված, ինչպես Գարեգին վարդապետ Զարբհանալյանն է նշել, Փիլոնից «ի նախնեաց» «յորոց ոմանց յունական բնագիրք կորուսեալ են»*[17]*: Այս ճառերը, «յորոց ոմանց յունական բնագիրք կորուսեալ են», թվով տասն են, որոնցից միայն մեկն է Դավիթ Քոբայրեցու մեկնաբանած, այն է՝ «Փիլոնի այնոցիկ որ ի լինելութեան խնդրոյ և լուծմանց ասացեալ սկիզբն միահամուռ եւթանց գրոցն Դաւթի վարդապետի Քոբայրեցւոյ»*[18] *և մեկն էլ Մխիթար Գոշի մեկնաբանած՝ վերև նշված վերնագրի ներքո: Վերջինիս հունարեն «Պերի*
տու պրոնոիա»-ի մեկնաբանությունն է:

Փիլոնը, ինչպես հայտնի է, Ա դարի փիլիսոփա էր, ծնված նախքան Քրիստոս մոտ 25 թվականին և վախճանված Քրիստոսից հետո մոտ 40 թվականին: Ծագումով նա եբրայեցի էր, իսկ գործունեությամբ՝ աղեքսանդրացի, ուստի և կոչվում է երբեմն Եբրայեցի, երբեմն Աղեքսանդրացի: Իր փիլիսոփայական ուսմունքով համարվում է իդեալիստական իմաստասիրական հետևող, որը ձգտում էր ի մի ձուլել և հաշտեցնել աստվածաբանությունը Պղատոնական և
Ստոյիկյան իդեալիստական ուսմունքների հետ[19]*:*

Այժմ Փիլոնի մասին տանք խոսքը Գարեգին վարդապետ Զարբհանալյանին (4):

«Փիլոն, զոր Սուրբն Հերոնիմոս կը դասէ ընդ մատենագիրս եկեղեցւոյ, հրեայ էր ազգաւ ի քահանայական ցեղէ և յընտրելագոյն տոհմից Աղեքսանդրիոյ: Երիտասարդ հասակէն ետեէ եղաւ իմաստասիրական ուսմանց, յորս և հռչակեղեցիկ դպրութեանց և իմաստասիրական ուսմանց, յորս և հռչակաւոր կանուն հանդիսացաւ. և կ՚աւանդեն թէ առաւել քան զամենայն իմաստունս իր դարուն խելամուտ եղած ըլլայ ի հմտութիւն վարդապետութեանց Պղատոնի և Պիւթագորայ, որոց հետևող էր և զարմացող: Իր ոճոյն և կարծեաց համաձայնութեանն համար ընդ Պղատոնի կոչված է ի հնոց և կամ Պղատոնականաց միւս այլ Պղատոն կոչված է, սովոր էին ըսել ի տոն հրեայ. և յԱղեքսանդրիա, ուր փայլեցաւ, սովոր էին ըսել ի Փիլոնի և կամ Փիլոն գովութիւն նորա, թէ կամ Պղատոն կը նմանի Փիլոնի և կամ Փիլոն

[12] **Լ. Մելիքսեթ-Բեկ** , «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», II, Երևան, 1936, էջ 16-20, 28-31:

[13] Նույն տեղում, էջ 29, Նաև՝ **Լ. Մելիքսեթ-Բեկ** . «Ծռազատկի առթիվ 1197 թվականին Թբիլիսիում տեղի ունեցած երկպառակության մասին», «Կովկասյան պատմա-հնագիտական ինստիտուտի Տեղեկագիր», III, 1925, էջ 49-60, - **Նույնի** «Հին Թբիլիսիի և հայ-վրացական կուլտուրական կապերի պատմությունից», «Պատմա-բանասիրական հանդես», 1958 թ., № 3, էջ 154:

[14] **Լ . Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 238-249:

[15] **Յակովբոս վարդապետ Տաշյան,** «Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», 1895, էջ 224: **Լ . Մելիքսեթ-Բեկ**, «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 227:

[16] Ձեռագիր № 1650/1879, էջ 143ա-158բ: **Հ. Տաշյան,** հիշյալ աշխատությունը, էջ 223-225:

[17] **Գ. Զարբհանալյանն,** հիշյալ աշխատությունը, էջ 737:

[18] Դավիթ Քոբայրեցու մասին տես **Ներսես Վարդապետ Ակինյան,** «Դավիթ Քոբայրեցի», «Հանդես ամսօրյա», 1908 թ., էջ 139-147: **Նույնի** «Մատենագրական հետազոտություններ, քննություն և բնագիր», I, (Ազգային մատենադարան, ՂԴ), Վիեննա, 1922, էջ 44-68: **Լ. Մելիքսեթ-Բեկ**, « Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց», էջ 191-196: **Վ. Հակոբյան,** «Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1952 թ., № 8, էջ 113-120:

[19] «Փիլիսոփայության պատմություն չորս հատորով», հատ. I, Մոսկվա, 1957, էջ 157 (ռուսերեն):

Պղատոնի: Սողոմէն` Պիւթագորեան կը կոչէ զնա, շատ տեղ ի գրուածս Փիլոնի հանդիպելով յոյն փիլիսոփային կարծեաց, վճռոց և իմաստից: Բայց իրեն ամենէն մեծ պարծանքն է Սուրբ Գրոց խորին գիտութիւնն և հմտութիւնն: Ծննդեան թուականն յայտնի չէ. բայց ինքն իսկ կ'ըսէ թե արդէն հասակն առած էր, երբ յաւուրս կայսերութեան Գայիոսի… [եղաւ] ի Հռոմ, ուր յղեցին զնա աղեքսանդրացի հրեայք ի պաշտպանութիւն իրենց իրաւանց յատենի կայսեր»[20]:

Փիլոն Եբրայեցու կամ, որ նույնն է, Աղեքսանդրացու երկերի հին հայերեն թարգմանությունները, որոնց հունարեն բնագրերը մասամբ կորած են, հրատարակել են Վենետիկի Մխիթարյանները` Մկրտիչ վարդապետ Ավգերյանը 1822 և 1826 թվականներին[21] և Գարեգին վարդապետ Զարբհանալյանը 1892 թվականին[22]:

Մխիթար Գոշի մեկնաբանությունը` Փիլոնի «Յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս» գրվածքը մենք հրատարակում ենք ըստ № 1650/1879 ձեռագրի, ԺԴ դարի, էջ 158ա-159բ:

ՓԻԼՈՆԻ` ՅԱՂԱԳՍ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԵԱՆ. ԲԱՆ ԱՌԱՋԻՆ` ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ ԳՈՇԻՆ ԱՍԱՑԵԱԼ ՊԱՏՃԱՌ

Անզեղճ է Աստուած ի ձիրս, և զոր պարգևէ, այլ ոչ նախանձի, որպէս առ մարդս տեսանեմք, զի արար, քանզի զոր եդ ի բնութեանս, զոր ստեղծ և զամենայն, զոր ետ, բարի է. զի մասն մի խոհականութիւնն է, որով միշտ ի խնդիր լինիմք բարւոյն. քանզի տեսանեմք, և զառաջիկայ գիրս յայսմանէ յարմարեալ:

Եւ թէ զի՞րդ է պատճառ, յայտնի է ամենեցուն իմաստունն Փիլոն` ազգաւ և ուսմամբ և վարուք: Այլ և Աղեքսանդրոս եղբաւրորդի նորին և ուսմամբ յունականաւ վարժեալ, աշակերտ գոլով աւրինացն Մովսէսի: Տեսեալ սորա զբազմադիմի ասացուածն յունական առասպելին, որ է այսպէս:

Ասացին ոմանք ինքն եղ գոլ զարարածս. և այլք` թէ զճիւղէ գտեալ յայնմէ գոյացոյց. և կէսք` թէ զերկիրս առ, և ի սմայ է երիցն տեսակ. խոնաւ, որպէս ջուր, և շոգոլի, որպէս [158ա] աւդ: Այլք զաւդ, կէսք` զհուր, այլք զանազանք, և ջերմ որպէս բուսուցանէ երկիր. ոմանք զջուր, զի և կէսք` մոլորեալք ի բանս Մովսէսի յայնս, զի ասէ. «Եւ խաւար ի վերայ անդնդոց, և հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծննդ. Ա 2): Վկայէ, ասեն, Մովսէս, թէ յերիցս յայսցանէ գոյացոյց Աստուած. ի խաւարէ, յանդնդոց, ի ջրոյ. զմիտս ասացելոցն ոչ իմացեալ, զի նախասկիզբն եդ լինելոյ երկնի և անդնդոց. և յայսմանէ զմասնաւորսն գոյացոյց: Զայս ասելով, ինքնաբաւ և անվախճան, որպէս ինքն եղ. այլ և անխնամ Աստուծյ ամենեւին:

Զայս ամէն առաջին եդեալ` Աղեքսանդրոս խնդրէր լուծումն ի Փիլոնէ, որպէս վայել էր նորա իմաստութեանն, ոչ թէ հակառակութեամբ, այլ ուսումնասէր հոգւովն: Այս և որ սոցին նման է պատճառ առաջիկայ գրոցս, որպէս ասէ. յորժամ զնախախնամութեանն բան [158բ]:

20 **Գարեգին վարդապետ Զարբհանալյան,** «Հայկական մատենախոսություն», Վենետիկ, 1883, էջ 689-690: **Նույնի** «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դարեր Դ-ԺԳ)», Վենետիկ, 1889, էջ 735-736:

21 «Փիլոնի Եբրայեցւոյ բանք երեք չև ի լոյս ընծայեալք». Ա և Բ Յաղագս նախախնամութեան, Գ Յաղագս կենդանեաց. ի հին թարգմանութենէ եղելոյ ի յոյն բնագրէ ի ձեռն սրբոց թարգմանչաց մերոց, յեղեալ ի լատին բարբառ», աշխատասիրութեամբ **Յ. Մկրտիչ վ. Աւգերեանի,** Վենետիկ, 1882: «Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս», աշխատասիրութեամբ **Յ. Մկրտիչ վ. Աւգերեանի,** Վենետիկ, 1826:

22 «Փիլոնի Եբրայեցւոյ ճառք, որոց հելլէն բնագիրք հասին առ մեզ», աշխատասիրութեամբ **Գարեգին վ. Զարբհանալեանի,** Վենետիկ, 1892:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԱԿԱՆ ՏԱՎՈՒՇԵՑՈՒ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻՑ

(«ՊԱՏՃԱՌՔ ՍՌԱՋԱՒՈՐԱՑ ՊԱՀՈՑՆ»)

Հովհաննես Տավուշեցին (1181-1251) միջնադարյան հայ գրականության ականավոր դեմքերից է՝ և՛ իբրև Մխիթար Գոշի արժանավոր աշակերտներից մեկը, և՛ իբրև Խորանաշատ վանքի գրականգիտական դպրոցի հիմնադիրը: Այս Հովհաննեսին չպետք է շփոթել մյուս Հովհաննես Տավուշեցու հետ, որը Մխիթար Գոշի ուսուցիչն է եղել և ապրել է ԺԲ դարի երկրորդ կեսին: Ավագ և կրտսեր Հովհաննես Տավուշեցիներին իրարից տարբերելու համար նպատակահարմար կլինի օգտագործել երկրորդի նկատմամբ «Վանական» հորջորջումը, որով նա հայտնի է բանասերների մոտ[1]*:*

Հովհաննես Վանականի կենսագրության և գրական գործունեության տեսությանը նվիրված է Համազասպ վարդապետ Ոսկյանի հատուկ մենագրությունը «Հովհաննես Վանական և յուր գրական դպրոցը» վերնագրով [«Ազգային Մատենադարան», 93], Վիեննա, 1922, ինչպես նաև սովորական գասագրքերը չհաշված, Լ. Խաչիկյանի և Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանի հոդվածները. առաջինի՝ «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ» («Գիտական նյութերի ժողովածու» [=Բանբեր Մատենադարանի], № 1, Երևան 1941, էջ 151-169) և երկրորդի՝ «Հովհաննես Վանական վարդապետ Տավուշեցի» («Էջմիածին», 1945 թ., մայիս, էջ 22-26), ուր, սակայն, հաշվի չի առնված Ոսկյանի մենագրությունը, որը, հավանական է, վրիպել է հոդվածագիրների ուշադրությունից: Վանականին և նրա աշակերտներին հատուկ գլուխներ ունի նվիրած նաև Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն իր «Ազգապատում»-ի Բ հատորի մեջ (§ § 1145-1146, էջ 1667-1669):

* * *

Վանականի կենսագրության շարադրման համար կարևոր են ոչ միայն նրա աշակերտների հաղորդած տեղեկությունները, առանձ-

[1] Յմմտ. Լ. Մելիքսեթ-Բեկ, «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» և այլն, Թբիլիսի, 1928, էջ 214, 250-254 և Ա տախտակը (վրացերեն):

նապես Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ մտած գլուխները՝ «Վասն գերութեան վարդապետին Վանականայ և որոց ընդ նմա», «Վանական վարդապետին [Վասն հաւատոյ]» և «Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականայ»[2]*, այլև Տեր Իսրայելի խմբագրությամբ (1251 թ.) հայտնի «Յայսմաւուրք»-ի համապատասխան գլուխը արեգի 10=մարտի 18-ի ներքո (1):*

Ավելորդ չենք համարում բերել այստեղ այս վերջինը ամբողջությամբ.

«Յայսմ աւուր յիշատակ Վանական վարդապետի Հայոց:
Ամենագով և երջանիկ հայրն մեր սուրբ վարդապետն Վանա-
կան էր յաշխարհէն Աղուանից ի Տաւուշ գաւառէն, և ծնօղքն նուի-
րեցին զնա Աստուծոյ. և սրբութեամբ սնաւ առ երէց եղբօրն իւ-
րում, որոյ անուն էր Պօղոս կուսան և սուրբ քահանայ: Եւ թողեալ
զերկիր ծննդեան իւրոյ՝ գնաց առ մեծ վարդապետն Մխիթար, և
եղև ուսումնասէր յոյժ, և ձեռնադրեցին զնա քահանայ ի վանսն
Գետիկ, և մականուն վարդապետին Գաւշ: Եւ ուսաւ ի նմանէ զմեկ-
նութիւն Հին և Նոր Կտակարանացն, և եղև կատարեալ գիտնական
և արժանի լեալ աստիճանի և անուան վարդապետի՝ գնաց յաշխարհն
իւր և շինեաց վանս և ի նմա փառաւոր եկեղեցի սրբատաշ վիմօք,
գմբեթաւոր և բազմախորան, և անուանեաց զվանս Խորանաշատ:
Եւ համբաւ իմաստութեան նորա համանգամայն տարածեցաւ
ընդ տիեզերս, և գային առ նա յամենայն կողմանց և ուսանէին ի
նմանէ զվարս պարկեշտութեան և սրբութեան և զգիտութիւն
աստուածեղէն գրոց, և լուսաւորեալ գնային յիւրաքանչիւր տեղիս,
և լինէին լոյսք աշխարհաց:
Եւ եղև ի ժամանակին յայնմիկ Ջալալդին ոմն բռնաւոր Խորա-
սանայ, և աւերեաց զամենայն աշխարհս Հայոց և Աղուանից: Գնաց
նա (Վանական – Լ. Մ.-Բ) յանապատ տեղի, յորում էր քար մեծ
յոյժ, և փորեաց ի նմա այրս բնակութեան և եկեղեցիս փորեալս, և դադա-
րեաց ի նմա բազում ժամանակս մինչև եկն Թաթար զօրքն ի վեց
հարիւր և ութսուն և չորս ամի թուականութեանս Հայոց, առաջ-
նորդ ունելով զՇարմաղանոյին՝ հրամանօք Հոքթա ղանին, և աւե-
րեաց զբազում գաւառս Թուրքաց և Պարսից, Հայոց և Վրաց, և
գերեաց: Գերեցաւ և նա աշակերտօք իւրովք և բազում ժողովր-
դովք, և շնորհօքն Աստուծոյ ազատեալք ի նոցանէ՝ եկն դարձեալ
յառաջին վանսն իւր ի Խորանաշատ և մխիթարէր զբազումս, զի

[2] Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1909, էջ 230-239, 324-331:

գուարթամիտ էր իբրև զԲառնաբաս, այր չափահասակի, մեծ և լայնամօրուք տեսն փառաւոր և ամենևին շնորհալից, միտք ծնընդական, յանդիմանիչ հերձուածողաց, մեղաւորաց դարձուցիչ և կոչող յապաշխարութիւն, պահող, աղօթական, և սուրբ հոգւով և մարմնով, բազում որդիս ի փառս ածեալ, հասեալ ի խորին ծերութիւն, ալևորեալ և լի աւուրբք՝ հանգեաւ ի Քրիստոս ամաց եօթանասնից, ի թուականին Հայոց Չ, արեգի Ժ և մարտի ԺԸ, ի տօնի սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին և Որենդի և վեց եղբարց»[3]:

Հետևապես ըստ այս հիշատակարանի, Հովհաննես Տավուշեցին ծնվել է 1181 թվականին և վախճանվել է 1251 թվականին՝ 70-ամյա հասակում:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը այսպես է բնորոշում Վանականի գրական գործունեությունը. «Վանականի Պատմությունը դեռ երևան ելած չէ, իրեն վերագրյալ մեկնություններուն մասին կասկածներ կհայտնվին, իսկ Ծառընտիրներու և հավաքածոներու մեջ բավական գրություններ կգտնվին յուր անունով: Այս կարգեն են երկու հատվածներ, որոնց մեջ կխոսվի Հայոց առաջին լուսավորիչներուն և անոնց հետևողներուն վրա (Թղթ. 533-536): Հիմնավոր և կանոնավոր տեղեկություններ չեն տրվածները, գուցե Վանականի վավերական գրություններ ալ չեն»[4]:

Համազասպ վարդապետ Ոսկյանը Վանականի գրական գործերը 4 խմբի է բաժանում. ա) պատմական երկ, բ) մեկնողական երկեր, գ) մանր երկեր, և դ) անհարազատ կամ տարակուսական մանր երկեր:

Մասնավորապես, խոսելով Վանականի պատմական երկի *(Պատմությա՞ն) մասին, որը հիշատակված է Վարդանի և Կիրակոսի մոտ, բայց ցայսօր երևան հանված չէ, Հ. Ոսկյանն իրավացիորեն նշում է. «Խորանաշատի հիմնադրին պատմական երկը սակայն կթվի թե անհետ կորսված է, գոնե հայտնված չէ անկե ձեռագիր օրինակ մը»*[5]:

[3] Տեր Իսրայելի «Յայսմաւուրք»-ը, հրատ. ***Գ.Բայանի***, «Պատրոլոգիա Օրիենտալիս», հատ. ԻԱ, Փարիզ, 1930, էջ 1225-1226 (181-182), հայերեն և ֆրանսերեն:

[4] ***Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան***, «Ազգապատում», հատոր Բ. Կոստանդնուպոլիս, 1913, էջ 1668:

[5] ***Համազասպ վարդապետ Ոսկյան*** , «Հովհաննես Վանական և յուր դպրոցը», Վիեննա, 1922, 1922, էջ 23:

Մեկնողական երկերի *մեջ հիշատակվում են 6 մեկնություններ այլևայլ բովանդակությամբ, որոնց թվում «Մեկնութիւն Յոբայ» (2) և «Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի»*[6]:

Մանր երկերի *շարքում հիշվում են նույնպես 6 գրվածքներ, որոնցից մեկը՝ դավանության մասին՝ մտած է Կիրակոսի պատմության մեջ*[7] *(3): Այս կարևոր գործ է «Յաղագս տարեմտից» կամ «Յաղագս տարէմտին»*[8]*: Մանր երկերի շարքին է դասում Հ. Ոսկյանը նաև «Պատճառք վասն Առաջաւորաց պահոցն... վասն հակառակացն և այպանողացն զսուրբ պահսն», որը հատուկ քննության է առնված սույն հոդվածում, երկի անդրանիկ հրատարակությամբ հանդերձ:*

Վերջապես, անհարազատ կամ տարակուսական մանր երկերի *շարքին Հ. Ոսկյանը դասում է 8 գրվածքներ՝ և սրանց թվում՝ «Գիրք թղթոց»-ի վերջում կցված 2 հոդվածները հետևյալ վերնագրով. ա) «Վանական վարդապետին ասացեալ Բան հաւատի ազգիս մերում»*[9] *և բ) «Այլ բան է ասացեալ Վանական վարդապետին»*[10]*, որպիսիք, ըստ Հ. Ոսկյանի, ոչ թե Վանականի, այլ Վարդան Արևելցու գործերն են*[11] (4):

* * *

Վանականի երախտիքը հայ մշակույթի պատմության մեջ ոչ միայն այն էր, որ նա Խորանաշատի պատմագրական դպրոցի հիմնադիրն ու շունչ տվողն էր, որի ծոցից հանդես եկան Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու և Գրիգոր Ակներցու (Կեղծ-Մա-

[6] «Ճռաքաղ» (Մոսկվա), 1859 թ., № 5, էջ 147-151, № 6, էջ 195-199, № 7, էջ 227-230: «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. Բ, կազմեց ***Նորայր եպիսկոպոս Պողարյան,*** Երուսաղեմ, 1953, էջ 197, ***նույնը***, հատ. Դ, Երուսաղեմ, 1956, էջ 43:

[7] ***Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ*** «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1909, էջ 324-330:

[8] ***Ե. վրդ. Տայեցու*** հրատ., «Բազմավէպ», 1897 թ., էջ 335-339, ***Լ. Խաչիկյան,*** «Յաղագս տարէմտին ի Վանական վարդապետէ ասացեալ», «Գիտական նյութերի ժողովածու [=Բանբեր Մատենադարանի], № 1, Երևան, 1941, էջ 151-169, տեքստը՝ 156-167:

[9] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 533-535:

[10] ***Նույն տեղում***, էջ 536:

[11] ***Հ. Ոսկյանին*** համամիտ է ***Հ. Մյուլդերմանը***՝«Դիտողութիւն Վանական վարդապետի ասացեալ Բան հաւատալի ազգիս մերում», «Հանդէս ամսօրեայ», 1925, էջ 253, ծանոթ. 4: ***Լ. Մելիքսեթ-Բեկ***, հիշյալ գիրքը, էջ 462-463: ***Նորայր եպիսկոպոս Պողարյան***, «Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հատ. Բ, Երուսաղեմ, 1953, էջ 117, 197, հատ. Գ, Երուսաղեմ, 1954, էջ 57, 172, 250, հատ. Դ, Երուսաղեմ, 1956, էջ 12, 30, 33, 43, 195 և այլն:

ղաքիա աբեղայի)[12] նման դեմքեր, այլև այն, որ նա որոշ ներդրումներ է արել հայ հնագրության ասպարեզում:

Կիրակոսը խոսելով «Վասն գերութեան վարդապետին Վանականայ և որոց ընդ նմա» նյութի շուրջը, հիշում է այն քարանձավը «ի կատարս բարձրագոյն քարի միոջ, որ կայ հանդէպ գեղջն, որ Ոլորուտն կոչի, ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի», ուր «կայր զետեղեալ ժողովեալ բազում գրեանս»[13], և թե ինչպես թաթարները «խուզեալ առին... որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ սպասք է եկեղեցւոյն, կամ շուրջառ, կամ այլ անօթ ինչ, կամ խաչ արծաթի, և երկու Աւետարանս ընդելուզեալ արծաթով»[14]:

Ահա այս՝ «արծաթով ընդելուզեալ» կամ արծաթապատ Ավետարաններից մեկն էր, գրված 1224 թվականին, որին կցված է Վանականի ինքնագիր հիշատակարանը 1238 թվականի ներքո և որը երկար ու ձիգ դարերի ընթացքում պահվում էր Վասպուրականում, երբեմն Վանի Ս. Վարդան եկեղեցում (այժմ Հայաստանի Մատենադարանում է № 4823, նախկին № 994 ներքո) և որի մանրամասն նկարագրությունը բազմիցս արվել է ականավոր հայագետների կողմից[15]: Այս Ավետարանը արտագրվել է Տփղիսում:

Մյուսը հավանական է այն լինի, «Խորանաշատի» Ավետարան կոչվածը, որը մի ժամանակ պահվում էր Վանի Ս. Սահակ եկեղեցում և որի նկարագրությունը տվել է Ե. Լալայանը[16]:

---

[12] Տե՛ս **Հայկազ Ժամկոչյան**, «Պատմութիւն վասն ազգին նետողաց» երկի հեղինակը. «Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ», ԻԳ, 1946, էջ 367-388, **Ներսես վրդ.. Ակինյան**, «Գրիգոր քահանա Ակներցի, պատմագիր թաթարաց պատմության, 1250-1335», «Հանդէս ամսօրեայ», 1948 թ., № 7-8, էջ 387-403, 444-446: **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաստանի պատմության գրավոր աղբյուրների հրատարակությունները. Կատալոգ Ա», Թբիլիսի, 1949, էջ 263-264 (վրացերեն). «Պատմութիւն վասն ազգին նետողաց (մոնղոլների)», ի ձեռն Գրիգորի յԱկանց, որ վերագրվում է Մաղաքիա աբեղային, հայերեն բնագրիը հրատարակեցին հանդերձ անգլերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով **Ռոբերտ Պիրպոնտ Բլեյկը և Ռիչարդ Ն. Ֆրի**, Հարվարդ, 1954, 284 (16)- 383 (115) էջ, հայերեն և անգլերեն:

[13] **Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ** «Պատմութիւն հայոց», էջ 230:

[14] **Նույն տեղում**, էջ 233-234:

[15] **Գարեգին վարդապետ Սրվանձտյան**, «Թորոս-Աղբար», հատ. Բ, Կոստանդնուպոլիս, 1885, էջ 272-275: **Հ. Ղ. Ալիշան**, «Հայապատում», Վենետիկ, 1901, էջ 463: **Հ. Ոսկյան**, հիշված աշխատությունը, էջ 14-15: **Ս. Տեր-Ավետիսյան**, «Հովհաննես Վանական Տավուշեցու, մոնղոլական ժամանակաշրջանի հայ գրողի, ինքնաձեռագիրը», «Կովկասյան Պատմա-հնագիտական ինստիտուտի Տեղեկագիր», IV, Թիֆլիս, 1926, էջ 51-54. Նկարը Ա տախտակում (ռուսերեն): **Գարեգին Ա Կաթողիկոս**. «Հիշատակարանք ձեռագրաց», հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 839-842, 903-904:

[16] **Ե. Լալայան**, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», հատ. Ա, Թիֆլիս, 1915, էջ 127-130:

Առաջին Ավետարանի հիշատակարանը հետաքրքիր է իր համառոտ բովանդակությամբ, որը կարդացվում է այսպես (20 տող).

«Ես, Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի ի դրան Սուրբ Քառասնիցս. զի գերեալ էր Աւետարանս ի Տաւշոյ ի Մուղան ի թաթարէն և յետ երից ամաց աստ բերեալ անվնաս փաճառեցին ի ՌՁէ թուիս: Զոր փառաւոր աւագէրէց Սարգիս հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք բազում ծախաւք և աշխատութեամբ գնել ետուն ի մեզ: Որոց տացէ Քրիստոս փոխադարձ զսուրբ արքայութիւն և զդրախտն արձակել ի կապանաց մեղաց և հանել ի խաւարէ ի լոյս անմատոյց: Աստէն պահելով ի շինութեան և ի խաղաղութեան, բարէխաւսութեամբ Սուրբ Աւետարանիս և ամէնայն սրբոց իւրոց. Ամէն»[17]:

Այսպիսով, ինքը Վանականը խոստովանում է, որ Ավետարանը նրա ձեռքն է անցել 1238 թվականին Տփխիսում եղած պահին, երբ նա իջել էր «ի դրան Սուրբ Քառասնիցս», այսինքն հետագայում նա իջել էր «Հրեշտակապետաց» կամ «Բերդի փոքր եկեղեցուն» կից, որ մինչև ԺԹ դարը Սանահնի վանքի վանատունն (подворье, վրացերեն «մետոքե») էր հանդիսանում վրաց մայրաքաղաքում[18]:

* * *

Ինչպես Զ-Է դարերում Մովսես վրաց եպիսկոպոսի «Պատճառք Դ ժողովոյն երկաբնակացն» երկից[19] երևում է, «հինգաւրեայ յառաջաւոր պահովքն»[20] Հայոց Եկեղեցին պաշտպանում էր հինավուրց ջաւոր պահովքն ավանդական սովորույթներից մեկը[21], որը հավանաբար գալիս էր

---

[17] **Ս. Տեր-Ավետիսյան**, հիշյալ հոդվածը, էջ 52-53 և Ա տախտակ:

[18] **Լ. Մելիքսեթ-Բեկ**. «Ծռազատկի առթիվ 1197 թ. Թիֆլիսում տեղի ունեցած երկպառակության մասին», «Կովկասյան Պատմա-հնագիտական ինստիտուտի Տեղեկագիր», III, Թիֆլիս, 1925, էջ 49-60 (ռուսերեն): **Լ. Մելիքսեթ-Բեկ**. «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», III, Երևան, 1955, էջ 268, 272-273:

[19] «Գիրք թղթոց», էջ 119-127:

[20] **Նույն տեղում**, էջ 124:

[21] **Ն. Մառ**, «Նախնական հաշվետվություն Սինայի լեռան և Երուսաղեմում 1903 թ. կատարած աշխատանքի մասին», «Հաղորդագիր Կայսերական Պաղեստինյան ընկերության», հատ. XIV, մ. 2, 1904, էջ 13 (ռուսերեն): **Ի. Ջավախով**, «Վրաստանի և Հայաստանի միջև եկեղեցական անջատման մասին Է. դարի սկզբին», «Կայսերական Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», 1908 թ., էջ 535 (ռուսերեն), **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Առաջավորաց պասի մասին ասմունքի վրացական զրույցը», «Քրիստոնեական Արևելք», հատ. V, Պետրոգրադ, 1916, էջ 85-96 (ռուսերեն),), **Լ. Մելիքսեթ-Բեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. I, Երևան, 1934, էջ 36, 49-50:

հեթանոսական շրջանից և որի շուրջը եկեղեցիների բաժանումից հետո թունդ վիճաբանություններ են ծագել քրիստոնեական աշխարհում: Իսկ Հայաստանում «Առաջաւորք»-ը հետագայում նույնիսկ նույնացրել էին Ս. Սարգսի պահքի հետ:

Հույն-բյուզանդական գրականության մեջ այս վեճը կամ, ավելի ճիշտն ասած, հարձակումները «Առաջաւորք»-ի առթիվ ամենաուժեղ արտահայտությունն են գտել «Իսահակ Հայոց Մեծաց կաթողիկոս»-ին վերագրվող, իսկ իրականում կեղծ Իսահակի գրչից ելած երկերում[22]*, որոնցից մեկը «Ճառ ընդդէմ Հայոց» վերնագիրն է կրում: Այստեղ «Առաջաւորք»-ի մերկացմանը, որը հունարեն «արցիվուր» է կոչվում, հատկապես նվիրված է առաջին ճառի ԺԴ գլուխը և երկրորդ ճառի ԻԳ կետը*[23]*:*

Անկախ սրանից, «արցիվուր»-ի մասին եղած առասպելը հետագա մշակումով առկա է ըստ վկայության Հր. Աճառյանի[24]*, «Աֆթիմիոս Սեկտուտինոսի* Զեն կատարյալ *գործում, Նիկեֆորաս Կալոթամի* Պատմության *և Աթենքի Մելիտոս արքեպիսկոպոսի* Եկեղեցական պատմության *մեջ, որ՝ Զենատիոս Աքոլալարիոս սարկավագի ձեռքով համառոտվելով՝ տպված է նախ Զմյուռնիա (1861) և հետո արաբերեն թարգմանությամբ Երուսաղեմ (1867), այն ժամանակի հունաց Երուսաղեմի պատրիարք Կյուրեղի հրամանով*[25]*:*

«Առաջաւորք»-ը վրաց մատենագրության մեջ, «ալաջորի»-ի ձևով, հանդես է գալիս, նախ, Եփիմիոս (Էքվթիմե) Աթոնեցու կամ Սուրբլեռնեցու (Աթոնելի-Մթածմինդելի) խմբագրած Զ տիեզերական ժողովի կանոնների վրացական վերսիայում[26]*, ապա անանուն հեղինակի թե հեղինակների (ԺԱ դարի) պամֆլետների մեջ հետևյալ վերնագրերի տակ՝ «Պետրոս Թափիչի և ալաջի պատմությու-*

[22] **Լ. Մելիքսեթ-Բեկ** «Հույն-բյուզանդական գրականության մեջ գոյություն ունեցող կեղծ-Իսահակյան պամֆլետների ժամանակագրության հարցի շուրջը», «Վիզանտիյսկի Վրեմեննիկ», հատ. VIII, Մոսկվա-Լենինգրադ, 1956, էջ 108-222 (ռուսերեն). **Նույնի** գերմաներեն համառոտությունը՝ «Բիբլիոթեկա կլասսիկա օրիենտալիս», Բեռլինի ակադեմիայի հրատարակություն, տետր 2, Բեռլին, 1957, էջ 82-85:

[23] **Մին,** «Պատրոլոգիա գրեկա», հատ. 132, հրատ. 1864, էջ 1197 (1198)-1203 (1204), հունարեն: **Նույնը**՝ «Լա նարրացիո դե րեբուս Արմենիե», քննական հրատարակություն և ծանոթագրություններ **Ժերար Գարիտտի,** Լուվեն» 1952 (հունարեն և ֆրանսերեն):

[24] **Հր. Աճառյան**, «Հայերեն արմատական բառարան», I, 1926, էջ 495-496:

[25] **Մին,** հիշյալ հրատարակությունը, էջ 1203 (1204)-1235 (1236):

[26] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. I, էջ 104:

նը» և «Հաղորդագրութիւն Սուքուլյան որդի Սարգսի մասին»[27]*(5):*

Վերջապես, ռուս-սլավոնական մատենագրության մեջ տարածված է մի զրույց, որն, անկասկած, հույն-բյուզանդականի կնիքն է կրում, հետևյալ վերնագրով "Сказание арменскиа ереси о недели, фарисеов и мытаря"[28]*, ուր «առաջաւորքը» (=վրաց «ալաջորի») «արցիվուր» է կոչվում, որը ռումանական միջավայրում «արցիվուրցի» է դարձել*[29]*:*

* * *

«Պատճառք վասն առաջաւորաց պահոցն, ասացեալ Վանական վարդապետի, վասն հակառակացն և այպանողացն զսուրբ պահսն» վերնագիրը կրող՝ Հովհաննես Վանական Տավուշեցու երկասիրությունը մեկն է հայկական իրականության մեջ ծագած կամ մշակված այն բազմաթիվ ջատագովական-հակաճառական գրվածքներից, որոնք հորինվում էին Հայ Եկեղեցու ավանդական կարգերը, ծեսերը և սովորույթները պաշտպանելու համար քաղկեդոնականների հարձակումներից և ոտնձգություններից:

Բնական է, որ իր այս երկը գրելիս Վանականը օգտագործել է նախորդ գրականությունը տվյալ խնդրի մասին և ապա ինքն էլ, իր հերթին, որոշ ազդեցություն է գործել հետագա գրողների վրա նույն հարցի կապակցությամբ:

Առաջին շարքի երկերից հիշատակության արժանի են.

ա) Զենոբ Գլակի-Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն»-ը[30]*.*

բ) Պողոս Տարոնեցու «Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ»[31] *և «Յաղագս առաջաւորացն պահոց» գրվածքը*[32]*.*

[27] **Նույն տեղում,** էջ 113-116: **Լ. Մելիքսեթ-Բեկ,** «Առաջավորաց պասի մասին ասմունքի վրացական զրույցը», «Քրիստոնեական Արևելք», հատ. V, էջ 85-96 (ռուսերեն): Հմմտ. **Մեսրոպ վարդապետ Մաքսուտյանի** գրախոսականը, «Արարատ», 1918 թ., № 1, էջ 148-150:

[28] **Ի. Մանսվետով,** «Արևելյան Օրթոդոքս եկեղեցու պասերի մասին», Մոսկվա, 1886, էջ 64-65 (ռուսերեն):

[29] **Հր. Աճառյան**, «Հայերեն արմատական բառարան», I, էջ 496:

[30] **Յովհան Մամիկոնեան.** «Պատմութիւն Տարօնոյ», հրատ. **Ա. Աբրահամյան,** Երևան, 1944, էջ 73-74,:

[31] «Թուղթ երանելւոյն Պաւղոսի Տարօնեցւոյ յաղթաւղ ախոյեան վարդապետի ընդդէմ Թէոփիստեայ Յոռոմ փիլիսոփային», Կոստանդնուպոլիս, 1752, 275-278:

[32] Հմմտ. **Յակովբոս վրդ. Տաշյան,** «Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895, էջ 769: **Բարսեղ վրդ. Սարգիսեան,** «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատոր II, Վենետիկ, 1924, էջ 529-530:

գ) Ներսես Շնորհալու «Ընդհանրական»-ը[33].

դ) Մխիթար Գոշի «Գծագրութիւն յաղագս Վրաց»-ը[34]:

Իսկ Վանականին հետևող հեղինակների գրվածքներից պիտի նշել.

ա) Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը[35] *և «Գիրք քարոզութեան, Ձմերան հատոր»-ը*[36].

բ) Ղազար Ջահկեցու «Դրախտ ցանկալի»-ն[37]:

Վերջին շարքին կարելի է կցել և Լիմ անապատի միաբան Գորեցի Գևորգ վարդապետ Կակաբենցի հոդվածը, գրված վրացերեն, «Սուրբ Սարգսի պասը» վերնագրով (1748 թ.)[38]:

* * *

«Առաջաւորք» (< «առաջաւորաց») բառի ստուգաբանության շուրջը գոյություն ունեն մի քանի կարծիքներ: Դրանցից առաջինը *ավանդական է, որով «առաջաւորք»-ը դուրս է բերվում «առաջ» բառից`* նախընթացի *իմաստով Մեծ պասի նկատմամբ, որին Առաջաւորքը* նախորդում *է: Այս առաջավորի աղավաղումն է համարվում, մի կողմից, վրացերեն «ալաջորի» (առաջոր-ալաջոր-ի, իբրև հետևանք ետընթաց տարնմանության) և մյուս կողմից` հունական-սլավյանական «արցիվուր»-ը բազմաթիվ տարբերակներով*[39]:

Մյուս *կարծիքը կապում է այդ բառը հեթանոսական շրջանի հա-*

[33] «Թուղթ Ընդհանրական», Էջմիածին, 1895, էջ 141-143:

[34] «Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գօշն կոչիւր», «Արարատ», 1901, էջ 60: Հմմտ. ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց» և այլն, Թբիլիսի, 1928, էջ 247-248 (վրացերեն):

[35] «Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյ», Կոստանդնուպոլիս, 1729, էջ 649-650:

[36] «Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօթնալոյս վարդապետին», Կոստանդնուպոլիս, 1730, Թղ 145բ-147ա:

[37] «Գիրք աստուածաբանութեան, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ճահկեցւոյ», Կոստանդնուպոլիս, 1734, էջ 428-431:

[38] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Գևորգ Գորեցի, վրաց և հայոց անծանոթ գրողը 18-րդ դարի առաջին կեսի», «Վրաստանի պետական թանգարանի Տեղեկագիր», X-B, Թբիլիսի, 1940, էջ 114-115 (վրացերեն): Հմմտ. ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. III, էջ 93-94:

[39] Մանրամասնությունները տես ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Քրիստոնեական Արևելք», հատ. V, 1916, էջ 73-111 (ռուսերեն): Հմմտ. ***Մեսրոպ վարդապետ Սմբատյանի*** գրախոսականը վերջինիս մասին` «Արարատ», 1918, հունվար, էջ 48-50: ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. I, էջ 111-118: ***Հր. Աճառյան,*** «Հայերեն արմատական բառարան», . I, էջ 496:

վատալիքների և, մասնավորապես, «ալաջ» (ալըշ)-«լաջ»-ի պաշտամունքի հետ[40], *որը վերջնական հաշվով տանում է մեզ առլեգների պաշտամունքի աշխարհը*[41]:

Ավելի հավանական է, մեր տեսությամբ, Երրորդ *կարծիքը, որով «առաջաւորքը» կապվում է* արջառի *գաղափարի հետ, այլապես ասված` ընդունվում է իբրև* մսի *կամ, ավելի ճիշտն ասած,* որսորդական մսի[42] *պաս, որը հեթանոսական ժամանակներում նվիրված է եղել* աստված-ասված-ասվատին` *իբրև որսորդության աստծու*[43]:

Հետևապես, «առաջաւորքը» («առաջաւորաց») բառը ոչ այլ ինչ է, բայց եթե իմաստաբանեցրած փորձ «արջառ» բառից, Խոշոր եղջերավոր անասնի *առումով, երբեմն ոչխարի, խաչան, երնջի, գվաբակի և նույնիսկ էշի հակադրությամբ*[44]:

Հենց այս իմաստով «ալաջա»-ն գործածված է հատկապես Գու-

[40] ***Ա. Մատիկյան,*** «Դյուցաբանական շունը հարաբերությամբ Միքայել-Գաբ-
րիելի հրեշտակներու և Ս. Սարգսի», «Հանդէս ամսօրեայ», 1927, էջ 43-55: ***Նույնի`***
«Արա գեղեցիկ» [«Ազգային մատենադարան», 186], Վիեննա, 1930, էջ 147-170: ***Գր.***
Ղափանցյան, «Արա Գեղեցիկի պաշտամունքը», Երևան, 1945, էջ 65-68: Հմմտ. ***Լ.***
Մելիքսեթ-Բեկ, «Օղեսայում հայտնագործված ժԵ դարի ձեռագիր շարականը»,
Թիֆլիս, 1913, էջ 6 և ծանոթ. 2, ***նույն տեղում*** (ռուսերեն): Բոլշայա Սովետսկայա
էնցիկլոպեդիա, Ա հրատ., հատ. XV, էջ 400 (ռուսերեն):

[41] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Մի քանի խոսք առլեգի պաշտամունքի մասին», «Արա-
րատ», 1918, № 1-3, էջ 125-128: ***Նույնի`*** «Հայ հին գրականության պատմություն»,
Թբիլիսի, 1941, էջ 35 (վրացերեն): Հմմտ. ***Ն. Մառ,*** «Ափխազների կրանական հա-
վատալիքների մասին», «Քրիստոնեական Արևելք», հատ. IV, 1915, էջ 128, ծանոթ.
1, (ռուսերեն): Հմմտ. ***նույնի*** ծանոթագրությունը, Նույն տեղում, հատ. V, էջ 79,
ծանոթ. 2 (ռուսերեն):

[42] ***Ն. Մառ,*** «Հաբեթական էլեմենտները Հայաստանի լեզուներում, IV, երինջ-
արջառ` խոշոր եղջերավոր անասուն». «Կայսերական գիտությունների ակադեմիայի
Տեղեկագիր», 1912, էջ 831-834 (ռուսերեն): Հմմտ. ***Նույնի`*** «Ռուսական գիտություն-
ների ակադեմիայի զեկույցները», 1924, էջ 25-26 [=***նույնի`*** «Ընտրյալ աշխատու-
թյունները», հատ. II, էջ 145-146] (ռուսերեն): ***Նույնի`*** «Հայկական մշակույթը, նրա
արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտության», Փարիզ, 1925
(վերջինիս ռուսերեն թարգմանությունը հայերենից` «Լեզուն և մտածողությունը»
ժողովածուում, I, Լենինգրադ, 1936, էջ 32): ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** «Հնագիտական ու-
ղևորություն». «Սովետական Վրաստան», 1957, 4 հունվարի, № 3:

[43] Ինչպես հայոց «աստուած»-ը, նույնպես և Կովկասյան լեռնականների «աստ-
ված»-ը, մեր կարծիքով, տարբերակներ են միևնույն բառի, որը հեթանոսական
շրջանում մինչև միաստվածության գաղափարին հասնելը, որսորդության աստուծո
անունը պիտի լիներ: Հետևապես ընդունելի չէ Ն. Մառի փորձը հայոց «աստուած»-ը
հունական Սաբազիոսի հետ կապելու ուղղությամբ (***Ն. Մառ,*** «Սաբազիոս աստվածը
հայոց մեջ», «Կայսերական գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր», 1911, էջ
750-774, ռուսերեն):

[44] «Համաբարբառ Հին և Նոր Կտակարանաց», Երուսաղեմ, 1895, էջ 231: Հմմտ.
Արջըրայ գիւղ («Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հատ. Բ, Երուսաղեմ,
1953, էջ 117):

րիայում (արևմտյան Վրաստան), ուր համապատասխան շաբաթը «ալաջայս կվիրա» է կոչվում:

* * *

Հովհաննես Վանական Տավուշեցու անտիպ երկը, որը «Պատճառք վասն Առաջաւորաց պահոցն, ասացեալ Վանական վարդապետի, վասն հակառակացն և այպանողացն զսուրբ պահսն» ընդարձակ վերնագիրն է կրում և ըստ մեր տեսության, իրականում, «արջառորաց» պասին է վերաբերում, մենք լույս ենք ընծայում ստորև ըստ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Պետական մատենադարանի մեզ մատչելի հինգ գրչագրերի[45]*, այն է՝*

ա) № - 1952 (1978), ժողովածու ԺԷ դարի, էջ 339-345:
բ) № - 2111 (21), Քարոզգիրք, 1652 թ., էջ 144ա-145ա:
գ) № - 495 (223), Ճառընտիր, ԺԵ-ԺԶ դ.դ., էջ 113ա-116ա:
դ) № - 5618 (929), ժողովածու, ԺԳ դար, էջ 355-369:
ե) № - 4670 (205), Ճառընտիր, 1401 թ., էջ 222ա-226ա:

Հեղինակն իր այս երկը գրելիս, ինչպես բնագրի համապատասխան տեղերում փակագծերի մեջ նշած ունենք, օգտագործել է հետևյալ աղբյուրները.

ա) Աստվածաշնչից՝ Սաղմոս ՃԺԸ 49, Ավետարան Մաթեոսի Գ 2, Դ 17, ԻԳ 39, ԻԴ 37-38, Ավետարան Ղուկասու ԺԳ 35. ԺԷ 26-27. Պողոսի առաքելո Թուղթ առ Հռովմայեցիս ԺԲ 12, և այլ.

բ) Բարսեղ Կեսարացու Ճառ ի Մեծ Պահս (անտիպ)[46]*:*

գ) Կյուրեղ Աղեքսանդրացու Կոչումն ընծայության (Հրատ. Կոստանդնուպոլիս 1728, Վիեննա 1832) և այլն:

*Անկախ զուտ մատենագրական նշանակությունից, Վանականի երկը, իբրև հայ միջնադարի ծնունդ, կարևոր նյութ է պարունակում հայ բարբառագիտության տեսակետից ևս: Այսպես, օրինակ Վանականը օգտագործում է հետևյալ բայաձևերը՝ «*կու *լինի», «լմանն* կու *միաբանին», «*կու *գայր», «*կու *խրտչէին», «*կու *խառնէր»:*

Ապա, հետաքրքիր են խ*-ի գործածության օրինակները* հ*-ի փոխարեն՝ «*նախ*ապետքն» (ծանոթ. 48), «*նախ*ատակութիւն» (ծանոթ. 88), «*խ*աղորդեցարուք (ծանոթ. 116) և այլն:*

45 ***Նույնը*** Երուսաղեմի Ս. Յակոբյանց հավաքածուի մի շարք ձեռագրերում («Մայր ցուցակ ձեռագրաց Ս. Յակոբեանց», հատ. Բ, 1953, էջ 117, հատ. Դ, 1956, էջ 33, 195 և այլ):

46 [Այժմ տպագրված է. տե՛ս ***Ս. Բարսեղ Կեսարացի***, Գիրք պահոց, աշխատասիրությամբ ***Կիմ Մուրադյանի,*** Ս. Էջմիածին, 2008, էջ 54-79]:

ՊԱՏՃԱՌՔ ՎԱՍՆ ԱՌԱՋԱՒՈՐԱՑ[1] ՊԱՀՈՑՆ, ԱՍԱՑԵԱԼ[2] ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ, ՎԱՍՆ ՀԱԿԱՌԱԿԱՑՆ ԵՒ ԱՅՊԱՆՈՂԱՑՆ ԶՍՈՒՐԲ ՊԱՀՍՆ[3]

Յոլովագոյնք[4] *են բանք վասն պահոցն Առաջաւորաց, այլ զսակաւն ասասցուք*[5] *ի բազմացն:*

Երանելի[6] *Բարսեղ ասէ, թէ «Պահքն նախ ի դրախտին օրինադրեցաւ*[7] *և հասակակից է նախահօրն Ադամայ*[8]*: Պահոց պատուիրանն եղ*[9] *չուտել*[10] *ի ծառոյն գիտութեան, զոր ոչ պահեաց, գողացեալ*[11] *հեշտութեամբ և մերկացեալ անկաւ ի հաւասարութիւն անասնոց և ի համարս*[12] *մեռելոց» [Բրս. ՊՀ.]: Արդ, այս պահս այնմ*[13] *պահոցն հաւաստեցաւ*[14] *յառաջնորդացն մերոց, զի զոր ոչ*[15] *պահելովն արտաքս անկաք ի դրախտէն և կորուսաք զփառսն. թերևս*[16] *պահելովն այսրէն առցուք զնա: Եւ զի Ե զգացութեամբն մեղաւ Ադամ, Ե-օրեայ պահօքս*[17] *սրբեսցուք զգայութիւնս մեր:*

Այս է առաջին պահք: Եւ յորժամ էլ Ադամ ի դրախտէն, ասեն, թէ մահու մնալով Ադամայ ոչ կամէր ուտել ինչ: Եւ զկնի Ե աւուր

1 առաջաւորացն
2 արարեալ
3 պահս
4 յոլովք
5 ի] փոխանակ
6 երանելին
7 աւրինադրեցան
8 նախահօրն Ադմայ] մարդկութեանս
9 եդ abs
10 չուտելն
11 գողացաւ
12 համար
13 այնր
14 հաւաստեցաւ] փոխանակեցաւ
15 ոչն
16 թերևս abs
17 պահաւքս

գթացեալ Աստուած ողորմեցաւ և հրամայեաց հրեշտակին[18] իւրոյ մխիթարել զնա[19] և խոստանալ նմա զառաքումն Միածնին և մարմնանալ [20] Բանին Աստուծոյ վասն փրկութեան նորա. և հրամայէ ուտել ի պտղոյ աշխարհին[21]: Զայս խոստումն յիշեցուցանէ Դաւիթ ի դիմաց Ադամայ՝ ասելով. «Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր և[22] յուսացուցեր զիս» [Սղմս. ՃԺԸ, 49]: Դարձեալ Ե աւուրբ[23] յառաջ քան զլինելութիւն մարդոյն արարչագործեցան արարածք և ապա յետ Ե աւուր[24] ստեղծ Ադամ: Պահէր Աբէլ Ե օր[25] և ապա զպատարագն[26] իւր մատուցանէր: Եւ Սէթ պահեաց աւուրս Ե, յորժամ մեռաւ Ադամ: Պահէր և Ենովք ի մուտս ամսոյն աւուրս Ե: Պահեաց և Նոյ աւուրս Ե նախ քան զմտանելն ի տապանն: Եւ յետ ելանելոյն պահեաց դարձեալ աւուրս Ե և ապա մատոյցն զպատարագն: Պահեաց և Աբրահամ յաւուրս Ե, յորժամ խոստացաւ նմա Աստուած տալ Իսահակ որդին: Եւ դարձեալ պահեաց, յորժամ ապրեցաւ Իսահակ ի մահուանէն: Եւ ամենայն անդրանիկքն[27] պահէին Ե օր[28] ի փախճանել հարցն, ի Սէթայ[29] սկսեալ և հայր որդւոյ աւանդելով, որպէս ասէ Բարսեղ, թէ եկեալ եհաս մինչ ի Մովսէս [Բրս. ՊՀ.]: Եւ նա կարգեաց Խ օր պահս վասն Խ-օրեայ[30] առեալ տախտակին: Եւ Ե օր[31] պահելով տրտնջեաց ժողովուրդն և ապա բարեկենդանացոյց նոցա: Եւ Ե աւուրն [32] հրամայեաց ամի ամի պահել վասն քաւութեան յանցանացն որթուն: Եւ ոմանք յաճախ յիշեն զասացեալս, թէ Աբրա-

[18] հրեշտակին
[19] զնոսա
[20] մարմնանալ] մարդ լինել
[21] աշխարհին] երկրին
[22] որով
[23] աւուրք
[24] աւուրն
[25] աւր
[26] զպատարագն
[27] անդրանիկն
[28] եւ (sic) աւր
[29] Սեթայ
[30] քառասնօրեայ
[31] հինգ աւր
[32] զհինգ աւրն

համ պահեաց Ե օր զկնի հրկիզութեան Սոդոմայ[33] և Ե օր[34] Յակոբ, յորժամ ետես զանդուխտքն, և Ե օր, յորժամ կոտորեցին որդիքն Յակոբայ[35] Շմաւոն և Ղևի զՍիկիմացիսն, և Ե օր[36] պահեցին[37]: Եւ Յակոբ[38], յորժամ լուաւ զբօթն[39] Յովսէփու, Ե օր պահեաց[40]: Եւ Յովսէփ, պահեաց Ե օր[41], յորժամ եմուտ ի բանտն[42] Փարաւոնի: Եւ զայս ամենայն ծոմով առանց ուտելոյ և ըմպելոյ անսուաղ[43] պահեցին[44], որ նախ քան զօրէնսն[45] օրինաւորք[46] և յառաջ քան զԱւետարանն աւետարանիչք: Եւ զի առանց պատարագի և ընթերցուածոց[47] է, այն է՝ զի այսպէս պահեցին նահապետքն[48] և արդարացան:

Ունիմք դարձեալ և նոր պատճառ: Սուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր, յորժամ ել ի վիրապէն, Կ օր[49] վարդապետեալ քարոզեաց թագաւորին և ժողովրդեանն: Եւ ապա Ե օր պահել հրամայեաց[50] սրբութեամբ[51]: Եւ էր ժամանակն ամառնային: Եւ սուրբն Սեղբեստրոս, յորժամ մկրտեաց զԿոստանդիանոս, Ե օր[52] պահս եդ նմա և ժողովրդեանն: Եւ վասն առ իրեարս միաբանութեան աստ եղին զերկոսեանն: Այլ սոքա թողեալ կորուսին զիւրեանցն: Եւ մեք հաստատուն կալաք զմերս և պահեցաք շնորհօքն[53] Քրիստոսի:

[33] Սոդոմայ
[34] աւր
[35] Յակոբայ abs
[36] աւր
[37] պահեցին abs
[38] Եւ Յակոբ abs
[39] զբաւթն
[40] Ե օր պահեաց abs
[41] աւր
[42] բանդն
[43] անսուաղ abs
[44] պահեց
[45] զաւրէնսն
[46] աւրինաւորք
[47] ընթերցւածոց
[48] նա*խ*ապետքն
[49] ԿԵ աւր
[50] պահել հրամայեաց] հրամայեաց պահել
[51] սրբութեամբ abs
[52] աւր
[53] շնորհաւքն

Է և այլ պատճառ Առաջաւորաց ասացեալ պահոցս: Նինուէա-ցիքն քարոզութեամբն Յովնանու[54] յանդունդս հրաւիրեցան և Գ-օրեայ[55] պահօք[56] ապրեցան: Այսպէս և հաւատացեալք, որք վասն մեղաց ակն ունին[57] դժոխոց, պահեն և ապրին հոգով Գ օր Նի-նուէացւոցն[58], իսկ Դ չաբաթն[59] և ուրբաթն բնական պահք: Զրո-վանդակ տարւոյ յանցանքն Ե զգայարանացս Ե-օրեայ[60] պահօքս[61] ջնջէ ողորմութիւն Աստուծոյ: Վկայեն և հարաւային հագարացիքն, զի աւելի պահեն քան զմեզ, զի և զանասունս եւ ծոմացուցանեն նման Նինուէացւոցն[62], վասն ի գութ ածելոյ զԱստուած: Դարձեալ Գ քառասունքն, զոր պահեաց Մովսէս» ԺԵ-ութեան[63] և Ը ԺԵ երեք Ե ԺԵ է խորհրդաւոր (?), հինգն է[64] Ե զգայութեանցս օրինակ[65] և Գ-ն[66]՝ մարմնոյն, հոգոյն և մտացն: Դարձեալ ամէն Խ-ը հինգ է[67] և Ե-ը հինգ Ե զգայութիւնս[68], և Ը-ն գլխաւոր մեղացն ամբարտաւա-նութեան, որ է հպարտութիւն, սնափառութեան, որ է փառասիրու-թիւն, բարկութեան, արծաթասիրութեան, ձանձրութեան, որկորս-տութեան, ծուլութեան, բղջախոհութեան[69] զայսպիսի միտս ունի յինքեան Խ թիւն, զոր պահեցին սուրբքն և արդարքն առաջինքն՝ Մովսէս, Յեսու, Եղիայ, Եզեկիէլ[70] և Դանիէլ: Պահեաց և Տէր մեր յետ մկրտութեան: Պահեաց և յետ յարութեան և ապա համբաձաւ յերկինս:

54 Յունանու
55 երեքաւրեա
56 պահաւք
57 ունէին
58 Նինուէացւոցն
59 չորեքշաբաթն
60 Ե-աւրեայ
61 պահաւքս
62 Նինուէացւոցն
63 ու**թ**էին (sic)
64 է abs
65 աւրինակ
66 էր քն (sic)
67 Ե է
68 զգայութիւնս] զգայարանս (զգարանացս sic)
69 բղջա*հ*ոհութեանս (sic)
70 Եզեկիէլ

Ասի յաւանդութեանց, եթէ[71] առաքեալքն Հ օր կարգեցին զպահքն[72] և եդին պահել քրիստոնէիցն: Բայց նորահաւատ քրիս-տոնեայքն տրտնջեցին վասն բազմութեան: Ապա առաքեալքն բա-րեկենդանացուցին զԲ-շաբաթսն[73] և զայս շաբաթս ամի ամի պա-հել[74] հրամայեցին՝ աւագ պահոցն Առաջաւոր անուանելով: Այլքն ասեն՝ Ծ օր եդին առաքեալքն պահել. երբ շաբաթ մի պահեցին, իմացան, որ[75] Բ վնաս կու լինի. *Ա, որ ընդ Հրէից լըմանն* կու *միաբա-նին, և Բ[76], որ չարչարանքն Քրիստոսի ի ներքոյ[77] հասարակածին[78]* կու գայր, *որ է գարնանամուտն. կամ պիտէր Հ օր[79] պահել և նոր հա-ւատացեալքն* կու[80] խրտչէին *և Ծ օրն ի Հրէից լրումն* կու խառնէր: *Ապա զԲ շաբաթն բարեկենդան արարին: Եւ յետ ժամանակաց մեծն Կիւ-րեղ Երուսաղեմացին զնոյն արար զեկեալսն ի մկրտութիւն առ նա, ընդ որս էր Ակակ Պարսիկ, որ[81] Ե օր[82] պահօք[83] փորձեաց և զԲ շա-բաթն ուտել հրամայեաց և երախայացուցանել կարգեաց ԺԸ ըն-թերցուածս[84] յուսումն նոցա, և անուանեաց[85] զայն Կոչումն ընծա-յութեան [Կիւրղ. Եր.Կոչ.], որ կոչեցան նորընծայքն ի հաւատս Քրիստոսի, և մկրտեաց անձինս ՃՌ ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:*

Յետ ժամանակաց եղև մարտիրոսանալ սրբոյն յարքայէն Պարսից ի գլուխ Առաջաւորաց պահոցս յունուարի[86] ամսոյ ԼԱ: Վասն այնո-

71 քէ
72 զպահսն
73 շաբաթն
74 աւք
75 որ] եթէ
76 Բ] Ա այլ
77 ներքեւ
78 հասարակացին
79 աւր
80 կու abs
81 որ abs
82 աւր
83 պահաւք
84 ընթերծւածս (sic)
85 անւանեաց
86 յունւարի

րիկ տօնեմք[87] զնահատակութիւն[88] նորա յաւուր չաբաթու: Եւ մեք զպահս ոչ նմա աւանդեմք, այլ առաջաւոր՝ ըստ ասացելոցս. և ոչ թէ նորա պահեմք, այլ Աստուծոյ: Եւ որպէս ազուհացից առաջին[89] չաբաթուն չաբաթ օրն[90] սրբոյն Թէոդորոսի տօնեմք[91], և զչաբաթն բազումք նմա անուան[92] են: Այսպէս և աստ զպահս Աստուծոյ պահեմք ի թողութիւն մեղաց մերոց և ի մասնակցութիւն առաջին սրբոցն պահողացն զհնգեակս[93] և զչաբաթ[94] օր[95] սրբոյն Սարգսի տօնեմք[96], որ վերակացու է քրիստոնէից և վրէժխնդիր ոչ պահողացն զսուրբ պահսն Առաջաւորաց պատուհասող[97], և պահողացն զօրավիգ, և պահապան հրամանաւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ[98]:

Եւ արդ, եղբա՛րք, ունկն դիք և լուարուք[99], սրբեցէ՛ք զմիտս ձեր[100] և ուսարուք զզօրութիւն[101] պահոց, զի ամենայն սրբոց պահքն և աղօթքն[102] եղեն առիթ փրկութեան և պատճառ պատուի[103] փառաց և պարգևացն Աստուծոյ: Իսկ եթէ արդարոցն պահքն է, որ հանէ ի նեղութենէ՝ յանդորր, ի չարչարանաց՝ ի հանգիստ, ի ծառայութենէ՝ յազատութիւն, ի մեղաց՝ յարդարութիւն, յանարգանաց՝ ի վերաբերումն[104], ի խաւարէ՝ ի լոյս, ի մահուանէ[105], ի կեանս: Ապա

[87] տաւնեմք

[88] զնա**խ**ատակութիւն

[89] առաջի

[90] աւրն

[91] տաւնեմք

[92] անւան

[93] զիընկեակս (sic)

[94] շաբաթ

[95] աւր

[96] տաւնեմք

[97] պատուհասօղ

[98] մերոյ abs [+ mem. «որ ողորմեսցի ստացողի գրոցս և գրողի սորին և ծնողաց նոցին և որ զամէնն ասէ»]

[99] լըւարուք

[100] ծեր abs

[101] զզաւրութիւն

[102] աղաւթքն

[103] պատւի

[104] վերբերումն

[105] մահւանը

քանի՞ օգուտ[106] է մեզ՝ մեղաւորացս, որ ի պէս-պէս մեղաց[107] ցանկութիւնս[108] եմք, և ոչ ոք գտանի ի մարդկային բնութիւնս, որ ուտելովն և ըմպելով կարէ առնուլ զպարգևսն Աստուծոյ, այլ պահօք[109] և աղօթիւք[110], նեղութեամբ և չարչարանօք[111], որպէս[112] վկայէ Պօղոս, թէ բազում նեղութեամբ պարտ է մտանել մեզ[113] յայն հանգիստ[114], և յորդորելով ի բարիս՝ ասէ. «Նեղութեանց համբերեցէ՛ք, աղօթից[115] ստէպ կացէ՛ք, ի պէտս սրբոց հաղորդեցարուք[116]» [Պաւղ. Հռովմ. ԺԲ 12] ի պահս, ի սրբութիւնս, յերկայնամտութիւնս[117], ի Հոգի Սուրբ, ի սէր առանց կեղծաւորութեան: Իսկ զօրինակ[118] ներողացն և զարբեցողացն Տէր մեր յայտ առնէ՝ ասելով. «Յաւուրս Նոյի ուտէին, ըմպէին, կանայս առնէին և արանց լինէին» [Մատթ. ԻԴ 37-38], մինչև եկն ջրհեղեղն և կորոյս զամենեսեան: Եւ վասն մեղաց մարդկան ամենայն ինչ, որ էր ի վերայ երկրի, սատակեցան և կորեան [Ղուկ. ժէ 26-27]: Եւ այլուր ասէ Տէր մեր. «Ամէն, ասեմ ձեզ, եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիցիք» [Մատթ. Գ 2, Դ 17]: Վասն որոյ աղաչեմ զձեզ, եղբա՛րք, ի բաց թողէ՛ք ի սրտից ձերոց զխեռ և զնախանձ և զամենայն անկարգութեան բանս և զօրացարուք ի պահս և յաղօթս[119] և յողորմութիւնս: Մի՛ լուծանէք զպահոց պատուիրանս, զի մի՛ տարագիր լինիջիք[120] յարքայութենէն Աստուծոյ: Այլ պահօք[121] և աղօթիւք[122] տուք ողորմութիւն, և եղիցի ձեր ամե-

[106] աւգուտ

[107] մեղաց abs

[108] ցանկութիւն

[109] պահաւք

[110] աղաւթիւք

[111] չարչարանաւք

[112] + և

[113] մտանել մեզ] մեզ մըտանել

[114] հանգիստն

[115] աղաւթից

[116] **խ**աղորդեցարուք

[117] յերկանմտութիւն

[118] զաւրինակ

[119] յաղաւթս

[120] լինիջիք

[121] պահաւք

[122] աղաւթիւք

նայն ինչ սուրբ: Եւ արժանաւորիք լսել[123] գերանաւէտ բարբառն որ ասէ. «Եկա՛յք, օրհնեալք[124] Հօր[125] իմոյ» [Մատթ. ԻԳ 39, Ղուկ. ԶԳ 35], ժառանգեցէք[126] պատրաստեալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհի, որում և զմեզ արժանիս արասցէ[127] Յիսուս Քրիստոս Աստուած մեր[128]:

123 լըսել

124 ահեալք (sic)

125 հաւր

126 ժառանգեցէք]*ժ*

127 արացէ

128 Աստուածն մեր] որդին Աստուծոյ [+mem. «Մանաւանդ զՍահակն և զԱստուածատուրն և զՅոհաննէսն և զԱղութն և զԿարապետն և զՄկրտիչն և զՅովաննէսն և զԹումայ քահանայն և Սուրաթն և ըսլկաքաւն (sic) և զՅակոբ գծողս»]:

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ «ՎԱՐՔ ՄԱՐԻՆՈՍԻ» ՊՈԵՄԸ ԵՒ ՆՐԱ ՆԱԽԱՏԻՊԸ

Հայսմավուրքի և հայոց գեղարվեստական գրականության փոխհարաբերության խնդիրը մեր գրականագիտության առջև գրեթե չի դրվել (1): Մի բան միայն պարզ է, որ մեր պատմիչներից քաղած գրույցներն օգտագործվել են Հայսմավուրքի այս կամ այն խմբագրության մեջ, սկսած, իհարկե, XIII դարի առաջին կեսից:

Հայտնի է, օրինակ, որ Արտաշեսյան Արտավազդի առասպելը, որ մանրամասն կերպով գրի՛ է առել Մ. Խորենացին (II, 61), հետագայում մասնակի կերպով օգտագործել են, մի կողմից՝ չհաշված Եզնիկին՝ Կիրակոսն ու Գրիգոր Անավարզեցին, մյուս կողմից՝ Վանականն ու Գրիգոր Խլաթեցին, հատկապես իրենց խմբագրած Հայսմավուրքներում, նույնիսկ Վանականն ու Խլաթեցին՝ առասպելը վերագրելով ոչ թե Արտաշեսյան Արտավազդին, այլ Արտավազդյան Շիդարին[1]:

Այժմ պարզվում է, որ իր հերթին Հայսմավուրքն էլ աղբյուր է հանդիսացել գեղարվեստական գրականության այս կամ այն երկասիրության հորինման նկատմամբ, որ առանձնապես աչքի է ընկնում Գրիգորիս Աղթամարցու ստեղծագործության մեջ:

Գրիգորիս Աղթամարցու դեմքը միջնադարյան հայ բանաստեղծության բնագավառում հանրածանոթ է, մանավանդ այնպիսի հետազոտություններից և հրատարակություններից, ինչպիսիք են՝ Կ. Կոստանյանի[2], Մ. Պոտուրյանի[3], Ն. Ակինյանի[4], Գ. Հովսեփյանի[5], Ա. Ղուրբանյանի[6] *և ուրիշների գործերը*[7]:

1 **Г. Халатьянц**, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, Москва 1896 стр. 73-76.

2 ***Կ. Կոստանեանց***, Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը, Թիֆլիս, 1898:

3 ***Մ. Պոտուրեան***, Գրիգորիս Աղթամարցի. «Բազմավէպ» 1905, էջ 491-500:

4 ***Ն. Ակինեան***, Գրիգորիս Աղթամարցի. «Հանդէս ամսօրեայ» 1915, էջ 19-67:

5 ***Գարեգին*** եպ. [Յովսէփեան], Գրիգորիս Աղթամարցի. «Արարատ» 1919, էջ 1-40: ***Նոյնի***՝ Նորից Գրիգորիս Աղթամարցու մասին, «Հանդէս ամսօրեայ» 1930, էջ 41-60:

6 **А. Курбанян**, Вновь найденная поэма Грикора Ахтамарци, “Коммунист”, Ереван, 1937 № 87.

7 Մանրամասն, թեև ոչ լրիվ մատենագիտությունը տես՝ Հայ հին միջնադարյան

Գ. Աղթամարցու որակավորումը իբրև «վարդ և բլբուլի երգչի», իհարկե, իր ուժի մեջ է մնում: Սակայն , ինչպես հանգուցյալ Ա. Ղուրբանյանը *իրավացիորեն նշել էր, «Աղթամարցին գրել է և այլ տաղեր և այլ բովանդակությամբ, որոնցից շատերը նույնիսկ անծանոթ են մեր բանասերներին և դեռևս անտիպ են»: Այսպիսի երկասիրությունների թվին է պատկանում, նախ և առաջ, Մարինոս ճգնավորի կյանքի նկարագրությունը, որի մասին գրականության մեջ առաջին անգամ տեղեկություն տվեց* Գարեգին եպ. Հովսեփյանը *(1930)՝ համաձայն Էջմիածնի Մատենադարանի հին հավաքածուի № 2672 (371ա-375ա) [A] գրչագիր Գանձարանի, ապա* Ա. Ղուրբանյանը *(1937)՝ համաձայն Երևանի Գրական թանգարանի № 383 ձեռագիր Տաղարանի, որ այժմ մուծված է ՀՍՍՀ Մատենադարանի № 7707-ի ներքե (էջ 61ա 73բ) [B]: Առաջին ձեռագիրը գրված է Ստեփանոս Թոխաթցու ձեռքով 1609 թ., իսկ երկրորդը՝ Զաքարիա աբեղայի կողմից (Ղրիմում-Ղափայում) 1611-1614 թ.թ. միջոցին: Երկուսը մի ընդհանուր բնորոշող հատկություն ունին, այն է՝* ա *և* օ*-ի իրար հետ չփոթելը, որ մենք մեր հրատարակության մեջ չենք պահպանել:*

Գ. Աղթամարցու երկասիրությունը Մարինոս ճգնավորի կյանքի մասին, որ կարելի է պոեմ կոչել, գրված է գրաբարով և բաղկացած է 70 տնից, յուրաքանչյուր տունը 4 տողից, հետևապես ամբողջ գործը՝ 280 տողից: Պոեմը գրված է 6-5 վանկանի չափով և սկզբից մինչև վերջը գրեթե միատեսակ հանգով՝ -ին*՛-ով, ի բաց առյալ միմիայն 11-12 տները, ուր հանգն է -* ուն*, և 25-26 ու 67-70 տները, ուր հանգն է -* ի*:*

Ինչպես 67-րդ տնից երևում է, պոեմը Գ. Աղթամարցին գրել է 1516 թ. կամ, ինչպես բնագրում է կարդացվում, «ի թուականիս Հայոց ինըն հարիւրի Կ. և Ե. տարի ի նմայ աւելի» (965+551=1516):

Պոեմից ցարդ հրատարակված են միմիայն վերջին 67-70 տները՝ Գ. Հովսեփյանի *կողմից (67-րդ տունը նաև* Ա. Ղուրբանյանի *կողմից)*[8]*: Սյուժեն հրատարակեց* Ա. Ղուրբանյանը *ռուսերեն*[9]*, ապա և մենք՝ վրացերեն*[10]*:*

գրականության համառոտ բիբլիոգրաֆիա. կազմեց **Հովհ. Պետրոսյան**, Երևան, 1941, էջ 175-177:

[8] «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 42:

[9] "Коммунист", 1937, № 87:

[10] ***Լ. Մելիքսեթ-Բեկ***, «Հայ հին գրականության պատմություն», վրացերեն, Թբիլիսի, 1941, էջ 178-179:

Գրիգոր Աղթամարցու պոեմի վերնագիրն է՝ «Ի Գրիգորիս Աղթամարցոյ արարեալ ոտանաւոր զվարս Մարինոսի սուրբ ճգնաւորին» (2): Սակայն, ինչպես հասարակ համեմատությունը Հայսմավուրքի հետ («Մեհեկի Ջ և փետրուարի ժԲ Վարք երանելւոյն Մարիամայ, որ Մարինոսն անուանեցաւ» կամ «...Յիշատակ վարուց սրբուհոյն Մարիամու, որ Մարինոս կոչեցաւ») ցույց է տալիս, պոեմի 70 տնից Գ. Աղթամարցու ինքնուրույն գործ կարելի է համարել միմիայն ներածական 1-10 և վերջին 67-70 տները: Իսկ 11-66 տները, որ բուն պոեմին են նվիրված, վարքաբանական գրվածքի սյուժեից են բխում, որ Գ. Աղթամարցին ճափածոյի է վերածել:

Ստորև մենք հրատարակում ենք Գրիգորիս Աղթամարցու «Վարք Մարինոսի» պոեմը՝ համաձայն ՀՍՍՀ Մատենադարանի վերոհիշյալ զույգ ձեռագրերի (A, B), կողքին դնելով համապատասխան վարքաբանական տեքստը՝ համաձայն Տեր-Իսրայելի Հայսմավուրքի, որ մենք ստուգել ենք Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում պահվող ձեռագիր Հայսմավուրքի հետ՝ № 550 ներքո:

A 371ա$_1$ B 61ա	Ի Գրիգորիս Աղթամարցոյ արարեալ ոտանաւոր զվարս Մարինոսի սուրբ ճգնաւորին	Մեհեկի Ջ և փետրվարի ժբ: Վարք երանելւոյն Մարիամայ, որ Մարինոսն անուանեցաւ

1. Անծին և անըսկիզբ հօրէն երկնային,
Որդոյ պատճառ ծնընդեան բան անժամանակին,
B 61 *Բըխումն անքըննաբար ճըշմարիտ*
A 371ա$_2$ *հոգին,*
Ի կերպն իւր ըստեղծեաց զԱդամն առաջին:
2. Փառօք զնա զարդարեաց և եդ ի դրախտին
Պատուէր երետ նըմայ և կընոջ նորին,
Յամենայնէ ուտել պատուիրեաց նոցին,
Բայց ի ծառոյն միոյ բարոյ և չարին:

3. Յորժամ անցեալ Ադամ զպա-
տուէրն Արարչին,
Եւ զմահաբեր պտուղըն ճաշակե-
ցին,
Եւ մերկ և խայտառակ զինքեանըս
տեսին,
Անապական լուսոյն որ զգեցեալ
էին:

B *62ա* *4. Մահու զըրաւեցան, զի պատուէրն*
անցին,
Ի տըրտմութեան հոլխոս նոքա
մտին,
Եւ քըրտա՛մք երեսաց ըզհրամանն
առին,
Վաստակելով զերկիր ւ ուտել ըզ-
բերս նորին:
5. Աստուածըն մարդասէր և հայրն
երկնային,
Որ ոչ անտես առնէ զգործ իւրոյ ձե-
ռին,
A 371 բ$_1$ *Ձծովածինն առաքեաց յերկիր ըստո-*
րին,
Մարմին անապական էառ զմարդկա-
յին:
6. Ըզգործս կատարեաց միածին որ-
դին,
Առաքելովքն որսաց զազգըս մարդ-
կային,
Ոմանք զփառս աշխարհիս ունայն
խոտեցին,
Զինչս և զըստացուածս աղքատաց
տըւին:
B *62բ* *7. Եւ չառք ըզհալածանս կամաւ*
յանձն առին,
Եւ ըզարիւնս իւրոց ի յերկիր հեղին,

Եւ զառըն տանջանացըն համբերե-
ցին,
Որպէս զոսկի ի բովըս քըննեալ գը-
տին:
8. Իսկ կէսքըն կուսութեամբ զանձի-
նըս պահեցին,
Ի յայրս և ի փապարս լերանց բնա-
կէին,
Սովով և ծարաւով զանձինս մաշե-
ցին,
Ըզցայգ և ըզցերեկ աղօթս առնէին:
9. Անտես ի մարդկանէ անդադար
ճըգնին,
Ուրախութեամբ վըշտացըն համբե-
րէին,
A 371 բ$_2$ *Բազում և անհամար են գունդըք սո-*
ցին,
B *63 ա* *Որ ոչ ճառել կարէ լեզու հողածին:*
10. Զոր օրինակ աստեղք երկնից ոչ
թըվին,
Այնպէս գունդըք սըրբոցն ի յեկեղե-
ցին,
Յորոց և ի բազմաց մինս այս գովե-
լին
Սուրբ կոյսըն Մարինոս դուստր Եր-
գինէին:
11. Այր մի աշխարհական և յոյժ մե-
ծատուն,
Բնութեամբ էր ողորմած ւ Աստուծոյ
սիրուն,
Այրս այս փառաւորեալ Ներգինէ
անուն,
Մեռանի կին սորա կամօքն Աստու-
ծոյն:
12. Դուստր մի մնաց սոցայ Մարիամ
անուն,

Այր մի էր
աշխարհական
մծատուն և բա-
րեհաճոյ վարուք,
որոյ անուն էր
Ներքինէոս, և
յետ վախճանի
ամուսնոյն իւրոյ
մնաց դուստր մի,
որոյ անուն էր
Մարիամ:

	Որ էր խիստ գեղեցիկ, խոհեմ ւ իմաստուն.	
B *63բ*	*Բնութեամբ էր սըրբակաց և մըտօքն արթուն. Եւ էր յոյժ սիրեցեալ յաչս ամենե- ցուն:*	
	13. Խորհեցաւ Հայրն ի միտս ւ ասաց սուրբ կուսին. «Թէ առ ընթաց ըզքեզ ըստ կամաց քոյին, Եւ ինչ է ստացուածք իմ ընդ քեզ լիցին,	*Ասէ ցնա Հայրն. Տաց զքեզ առն և զամենայն ինչս իմ քեզ, և ես երթայց ի վանս և կեցուցից զոգի իմ:*
A 372ա₁	*Եւ ես երթայց ի վանք մի յանապա- տին»:*	
	14. Յայնժամ պատասխանեաւ բանից ծընօղին Ողջախոհ սուրբ տըղայն և իմաս- տիւք լի. «Կեցուցանել կամիս ըզհոգի քոյին. Եւ զիմս կորուսանե՞լ թուլութեամբ քոյին:	*Ասէ Մարիամ. Զոգի քո կեցու- ցանես և զիմս կորուսանես:*
B *64 ա*	*15. Կամիս դու վայելել ի յանճառ բարին, Անանց կենօք հըրճուիլ ի փառս Արարչին, Որպէս որ խոստացաւ յԱւետարա- նին, Եւ զիս միայն զըրկես այդ անհընա- րին»:*	
	16.Ասէ Ներգինէոս հայրըն սուրբ կուսին. «Ապայ զի՞նչ արարից վասըն քո անձին»: Ասէ. «Տա՛ր զիս ընդ քեզ ի յանապատին, Յոր վայր և երթիցես, զամ ըզհետ քոյին»:	*Եւ նա ասէ. Եւ զի՞նչ ես ապա արարից զքեզ: Ասէ Մարիամ. Տա՛ր զիս ընդ քեզ ի վանսն:*

	17. Ներգինէոս ասէ. թէ՝ «Այդ ոչ լի- նին, Զի դու ես գեղեցիկ և պատուական կին.	*Ասէ հայրն իւր. Որպէ՞ս մարթի, զի դու կին ես և ես յարանց վանս երթամ:*
B *64 բ*	*Եւ ես ի յարանց վանս երթամ/ առ նոսին. Եւ ասացեալըդ քո բընաւ ոչ լինին»:*	
	18.Պատասխանի երետ նայ իր ծընօ- ղին.	*Ասէ Մարիամ. Գերծեա՛*
A 372ա²	*«Գերծեա՛ զգըլուխս, ասէ, դու վասըն Արարչին, Ըզգեստ ինձ առնացի զգեցոյ իմ ան- ձին, Եւ յանձն առնեմ ես զիս կամաց Արարչին:*	*զգլուխ իմ և զգեցո՛ ինձ առն զգեստ, և Աստուած պա- հեսցէ զիս, որ պահապան է յու- սացելոց իւրոց:*
	19.Եւ նա, որ պահապան իւր յուսա- ցօղին, Նա պահեսցէ ըզզիս յորսողէ չարին Եւ յաջողէ զգործս իմ վարըս բարին Եւ առաջնորդեսցէ ի յերկինս վե- րին»:	*Եւ հաճոյ եղեն բանքն նորա հօրն իւրոյ, և արար որպէս և ասացն.*
B *65 ա*	*20. Յայնժամ հաճոյ թվեցաւ բանըն տղային. Ներգինէոս արար ըստ կամաց նորին, Բաշխեաց զինչս ամենայն կարօտեալ անձին Եւ ի յերկինս գանձեաց, որ ոչ պա- կասին:*	*բաշխեաց զինչս իւր աղքատաց և առեալ զդուստրն իւր առն զգեստիւք՝ գնաց յարանց վանսն տուեալ զանձ, և միաբանեալ եղեն կրօնաւորք. և անուանեցաւ Ներքինէոս՝ Եւ- գինեոս, և Մա- րիամ՝ Մարինոս:*

	21. Ելեալ ուղղի անկեալ վանք մի	
	գնըացին.	
	Եղէն կըրօնաւորք ի սէր Անմահին.	
	Փոքրեալ զհերս Մարիամ և սըքեմ	
	առին,	
	Մարինոս Եւգինոս զանուանսն ասա-	
	ցին:	
	22. Աճէր օր ըստ օրէ Մարինոս կու-	Եւ յետ հինգ
	սին,	ամաց մեռաւ
	Ի վարըս ճըգնութեան կըրթէր սըր-	հայրն իւր կա-
	բուհին.	ցեալ աստուածա-
A 372 $բ_1$	Յետ և ամաց փոխի հայր Մարինոսին	հաճոյ վարուք:
B 65 բ	Բարի վարուք կեցեալ Եւգինէոսին:	Եւ Մարինոս, որ
	23.Իսկ Մարինոս մըրցեալ ի վարըս	օր ըստ օրէ հա-
	բարի,	ւելոյր ի ճգնու-
	Եւ եւըս քան զևետ յաւելոյր ի նմին:	թիւնն, և զարմա-
	Ծըգնէր նա անդադար որպէս	նային կրօնա-
	զանմարմին,	ւորքըն վասն
	Անախտ սըրբակըրօն և առաքինին:	չգալոյ մօրուա-
	Կըրօնաւորք ուխտին յոյժ զարմանա-	ցըն և ասէին,
	յին	եթէ ներքինի
	Վասըն չգալոյ մօրվացըն Մարինո-	իցէ, զի և բառն
	սին,	նրբաձայն է:
	Զի բառըն էր նըրբաձայն, չի գալ	
	մօրուսին,	
	Հասակն էր փոքրագոյն, այնու	
	ստուգէին:	
B 66 ա	25. Եւ հայր վանացն ասաց. «Առա-	Ասէ հայրն. Ո՛չ,
	ւել ճըգնի,	այլ ի խիստ
	Վասն այն է նըրբաձայն և մօրուս	ճգնութենէն է:
	չունի»:	Եւ էր Մարինոս
	Եւ սուրբըն Մարինոս փոյթ ի կոչնա-	չոյատ ի բանս և
	կի,	արագադնաց ի
	Արագահաս ծառայ ի յերթևեկի:	ծառայութիւն

	26. Ամենեցուն հնազանդ և լըսող	վանացն և ամե-
	լինի,	նեցուն հնազանդ
	Անտըրտունջ ւ անվեհեր ի գործ	և անտըրտունջ և
	աշխատի.	և անվեհեր յաշ-
	Լըցեալ էր բարութեամբ կոյսըն	խատութիւնըս:
	գովելի,	
A 372 $բ_2$	Զի էր ամենայն գործօքն իւր բարի:	
	27. Յաւուր միում հրաման ի հօրէն	Եւ ի միում
	առին	աւուր առաքեաց
	Երեք կըրօնաւորք հետ Մարինոսին,	հայր վանացն
	Ի պէտս կարեաց վանացն ելեալ	զՄարինոս և այլ
	գընացին	երեք եղբարք
B 66 բ	Եւ ի ճանապար հին ի պանդոկ մի	կրօնաւորք ի
	իջին:	բանս կարեաց. և
		երթեալ ի ճանա-
	28.Գիշերն անդ օթեցան մինչ յառա-	պարհին իջավա-
	ւօտին.	նեցան պանդոկի
	Եւ վաղվնէ ելեալ լուսով գընացին,	մի և հանդեան
	Ուր և առաքեցան ի պէտս ինչ գոր-	զգիշերն անդ:Եւ
	ծին,	ընդ առաւօտըն
	Դարձեան ի վանս իւրեանց, ուր	յարուցեալ
	գնացեալ էին:	գընացին ուր
		առաքեցան, և
		դարձան ի
		վանսն:
	29. Եւ այնըմ գիշերին, որ եղբարքն	Եւ յայնմ գիշե-
	էին,	րին իջեալ ի
	Զօրական մ՚էր իջեալ ի յայն պանդո-	պանդոկին զօրա-
	կին,	կան մի և նըն-
	Նընջեաց նա ընդ դըստեր պանդո-	ջեաց ի դուստրն
	կապանին	պանդոկապետին
	Եւ յըղացոյց ըզնա յաստմանէ չա-	և յղացոյց:
	րին:	
	30. Եւ յորժամ ասդեցավ պանոկա-	Եւ յորժամ գի-
	պանին,	տաց հայրն՝ խոչ-

B *67 ա*	*Խոշտանկեաց նայ ըզդուստր վասըն չար գործին, Թէ՝ «Ո՞վ ապականեաց զկուսութիւն քոյին, Ասա, զի գիտացից ըզգործօղ չարին:*	*տանջէր զնա խոստովանել, թէ ո՞վ ննջեաց ընդ նա:*
A 373ա^1	*31. Ասաց թէ՝ «Աբեղայքն, որ առ մեզ իջին, Մինն, որ էր մանկագոյն, Մարինոս ասին. Նա չար բանիւք պատրեաց զիս, այն չար ոգին, Եւ նա ննջեաց ընդ յիս յայնըմ գիշերին»:*	*Եւ նա ասէ. Մանկագոյն աբեղայն, որ Մարինոսն կոչի.*
	32. Եւ յարուցեալ գընաց պանդոկապանին Ի վանքըն բարկութեամբ սուրբ Մարինոսին. Զհայրըն թըշնամանէր զմիաբանս նորին՝ Պոռնիկ, պիղծ, խաբեբայ ասելով նոցին:	*Եւ յարուցեալ փաղփաղակի պանդոկապետն գնաց ի վանսն և բարկութեամբ թշնամանէր զհայրն և զաբեղայսն՝ պիղծ և քրիստոնա՛խաբիչս կոչէր և պոռնիկս:*
B *67 բ*	*33. Ասաց հայրըն վանաց պանդոկապետին, Թէ՝ «Ի՞նչ վնաս եհաս ի մէնջ քո անձին, Կամ տան և ընտանեաց և ընչից քոյին. Ընդէ՞ր թըշնամանես ըզմեզ զայրագին:*	*Ասէ հայրն. Զի՞նչ եղև քեզ չար ի մէնջ, որ այդչափ թշնամանօք անարգես զմեզ, զի թէպէտ և ես մեղաւոր եմ, այլ կրօնաւորքս իմ հաճոյական ծառայք Աստուծոյ են:*

	34. Թէպէտ եմ անարժան ես ի մէջ սոցին, Այլ աբեղայքս հաճոյ ծառայք են Փըրկչին, Եւ զի՞արդ իշխես դու հայհոյել զնոսին, Որք են իբր զհրեշտակ Ամենակալին»:	
A 373ա$_2$	*35. Յայնժամ պատասխանեալ պանդոկապետին. «Ո՞ւր է այն Մարինոս աբեղայ քոյին, Որ օթեցաւ առ իս ի յիմ պանդոկին, Սիրով մեծարեցաք ի յարկըս ներքին:*	*Ասէ պանդոկապետն. Ո՞ւր իցէ խաբեբայն Մարինոս, որ իջավանեցաւ առ իս և ապականեալ յղացոյց զդուստրն իմ և արար զիս նախատինս դրացեաց իմոց:*
B *68 ա*	*36. Ըզդուստրն իմ յղացոյց ի յայն գիշերին. Զիս ատելեաց իմոց արար նախատին, Եվ սիրելեաց իմոց տըրտմութիւն հասին Եւ թըշնամիքս ամէն զիս այպանէին»:*	
	37. Իսկ Մարինոս չէր անդ յայն ժամանակին. Եւ հայրն ասաց. «Թէ գայ, գանեմ սաստկագին, Ի վանացս արտաքսեմ ըզնա տըրտմագին, Որ դու կըս լըսես ըզհամբաւ նորին»:	*Եւ առժամայն յուղարկեալ հայրն ի բան զՄարինոս, ասէ. Յորժամ եկեսցէ՝ գանեցից և հանից ի վանացըս:*

      B 68 բ	*38. Եւ ի տուն իւր դարձեալ պանդոկապետին Եւ եկըն Մարինոս, հայրն եհարց նըմին, Թէ՝ «Նըջեցե՞ր ընդ դըստեր պանդոկապետին»: | Եւ նա խոնարհութեամբ կալաւ ի յանձին:*	*Եւ դարձաւ պանդոկապետըն ի տուն իւր: Եւ եկեալ Մարինոս ի վանսն՝ ասէ ցնա հայրն. «Ննջեցե՞ր ընդ դուստր պանդոկապետին և արար զմեղ այպն նախատինս ամենայն վանօրէից և կրօնաւորաց:*
  A 373 բ₁	*39. Եւ ի հաւր յոտն անկաւ սուրբն լալագին, Ասաց, թէ՝ «Մեղայ, հայր, յաղթեաց թշնամին. Գործեցի զչարն զայն կամօք բանսարկուին, Դու ծանր ապաշխարանք դիր իմում անձին»:*	*Եւ Մարինոս ընթացաւ, անկաւ յոտս հօրն և ասէ. Մեղայ, և չար գործեցի, արա՛ զիս արժանի ապաշխարութեան:*
	40. Եւ հայրըն յոյժ գանեաց ըզնա խըստագին Եւ ի վանացն եհան՝ ասելով նըմին. «Եղաք վանօրէից ծաղր և նախատին, Զիա՞րդ կատարեցեր զցանկութիւն չարին»:	*Եւ հայրն գանեաց զՄարինոս և եհան ի վանացն:*
  B 69 ա	*41. Եւ նա երթեալ նըստաւ ի վերայ վիմին, Որ էր հանդէպ վանաց յարեւմըտեան դին, Կատարելով անդէն զաղօթս ըստ կարգին,*	*Եւ նորա երթեալ նստաւ ի վերայ վիմի ընդդէմ դրան վանացն, և*

	Ուրախութեամբ կըրէր ըզվիշտս ի յանձին:	*կատարէր զաղօթս իւր:*
	42. Ապա երթեալ եղբարցն խուղ մի շինեցին, Զտեղի առեալ եկաց ի յայն խըրճըթին. Եւ յորժամ ցընկնեցաւ վաւաշոտն այն կին, Զտղայն տարաւ ի վանս պանդոկապետին:	*Եւ երթեալ եղբարցն շինեցին ի վերայ վիմին նմա խուղ: Եւ յորժամ ծնաւ կինն՝ առեալ պանդոկապետին զմանուկն տարաւ ի վանսն:*
A 373 բ₂	*43. Տեսեալ ըզՄարինոս արտաքոյ ուխտին՝ Ընկէց զտըղայն ի գոգըն համբերողին, Եւ ասաց. «Առ զորդիդ՝ զչար սերմըն քոյին, Զզաւակըդ քո սընո՛յ ի քեզ նախատին»:*	*Եւ տեսեալ զՄարինոս արտաքոյ վանացն, ընկէց զտղայն ի գոգ նորա և ասէ. Ա՛ռ զորդիդ քո, զոր չարեօք սերմանեցեր, և սնո՛ իբրև զըչար ծառայ:*
B 69 բ	*44. Իսկ Մարինոս՝ առեալ զտըղայն ի յանձին՝ Տանէր նա ի կանայս, զի ըստին տացին. Եւ ի հովուացն առնոյր կաթըն զտղային. Եւ յետ տարոյ միոյ զնա մըկըրտեցին: 45. Սըրապիոն անուն նըմա կոչեցին, Եւ կաթն էր ոչխարաց կերակուր տղային. Այնպէս սընոյց զմանուկըն զամս երեքին. Անձանձիր ու անտըրտունջ պահէր զպատանին:*	*Իսկ Մարինոս առեալ զտղայն տանէր ի կանայս և տային ստինս: Եւ յորժամ եղև տարոյ միոյ, մկրտեաց զնա և անուանեաց Սերապիոն. և յայնմհետէ խաչանց կաթն ջամբեցուցանէր և այնպէս զերիս ամս սնուցանէր զմանուկն:*

B 70 ա	*46. Եւ յետ երից ամաց եղբարք ժո- ղովին, Միաբան գան առ Հայրն և գայս ասացին. «Թէ ոչ դարձ լինի ցի վասն Մարինո- սին, Ելանեմք մեք ամենքս ի վանաց քո- յին»:*	*Եւ ժողովեալ կրոնաւորացն ասեն ցՀայրն Եթէ Մարինոս ոչ մտցէ ի վանքս, մեք ամենեքեան ելանեմք:*
A 374ա^1	*47. Եւ Հայրըն Հրամայեաց գնացեալ բերին. Եկեալ անկաւ ի յոտս Հօ- րըն սըրբուՀին. Եւ Հայրն ասաց, թէ՝ «Զես արժան սուրբ յարկին, Միայն ի վանքըս մուտ ըստ խնդրոյ սոցին»:*	*Եւ յարուցեալ Հայրն գընաց առ Մարինոս և ասէ. Ոչ էիր արժանի մըտանել ի վանս, այլ վասըն աղա- չանաց եղբարց մո՛ւտ ի վանսն:*
	48. Մարինոս ոչ կամէր ըզկեալն իւր ուխտին, Ասէր, թէ՝ «Թոյլ տուք ինձ մընալ յիմ խըղճին, Զի չեմ ես արժանի կոխել զշեմս ուխտին»: Այլ բըռնութեամբ ըզնայ ի վանքըն մուծէին:	*Եւ Մարինոս ոչ կամէր և ասէ. Թոյլ տուք ինձ, զի չեմ արժանի: Եւ բռնադատե- ցին զնա և մու- ծին ի վանսն և ետուն նմա զա- նարգ և զծանր ծառայութիւն վանացն և նա յօժարութեամբ և բարի կամօք կատարէր, անու- ցանէր և զմա- նուկն:*
B 70 բ	*49. Զանարգ և ըզխիստ գործ Հայրն ետուր նըմին, Ուրախութեամբ տանէր նայ ամենայ- նին. Բարի ամօք կեցեալ նա ի սպաս ուխ- տին Համբերող նաՀատակն և յոյժ գովե- լին:*	

A 374ա$_2$	*50. Յաւուր միում տեսեալ երազ սուրբ կուսին՝ Այր մի լուսապայծառ, զի ասէր նը- մին. «Ե՛կ ի Համգիստըն քո պատրաս- տեալ տեղին. Զոր յԱստուծոյ տըւաւ քեզ անանց բարին:*	*Եւ ի միում գիշե- րի տեսանէ յա- նուրջս այր մի լուսաւոր, որ ասէր. Եկեսջի՛ր ի Հանգիստն քո և առցես զպսակն, զոր ցանկացար:*
	51. Վասն Համբերութեան ճըգնու- թեան քոյին Յարազուարճ բերկրիս ի տես Արար- չին, Եւ տեառն ազնիւ ծառայ շաՀող քանքարին Ե՛կ մուտ ի յառագաստ անմաՀ փեսային»:	
B 71 ա	*52. Ելեալ խուցն իւր գնաց՝ որ էր ի վիմին, Եւ անդ անկաւ Հիւանդ ի կարծր անկողին, Եւ յետ երից աւուրց Հանգեաւ սրբուՀին Եւ ոչ ոք գնայ գիտաց մինչ լայր պատանին:*	*Եւ երթեալ ի խուցն իւր, որի վիմին, աւանդեաց զՀոգին իւր առ Աստուած փետ- րուարի ԺԲ: Եւ ոչ գիտացին մինչև լայր պատանեակն. բացին զդուռն և տեսին զերանելին վախճանեալ:*
	53. Եւ գընացեալ տեսին ըզերանե- լին. Ազդեցին Հօր վանացն զմեռանել նո- րին. Ասաց թէ՝ «Անարժան եմուտ տաճա- րին. Վասն այն պատուՀասեալ մեռաւ փութովին»:	*Եւ երթեալ պատ- մեցին Հօրն, և նա ասէ. Ոչ բարիոք ապաշխարեաց և անարժան եմուտ յեկեղեցին:*

	54. Եւ հայրըն հրամայեաց հանեալ թաղէին, Գնացեալ ըստ օրինին զնա պատա- նէին, Որպէս կրօնաւորաց օրէն ըստ կար- գին. Եւ ի զըսպելն ըզնա տեսին, զի էր կին:	*Եւ հրամայեաց թաղել զընա: Եւ երթեալ եղբարցն. զի պատեսցեն զնա որէս օրէն էր կրօնաւորաց, և տեսին զի էր կին և չորացեալ էին ստինք որպէս խռիւ:*
A 374 բ[1] **B** *71 բ*	*55. Ահիւ ապուշ մնացեալ և զարմա- նային, Դառն հեծեծանօք յոյժ հառաչէին, Եւ գնացեալ ողբալով առ հայրըն ասէին. «Մեղար դու, Աստուծոյ փորձանք քեզ հասին:*	*Զարհուրեցան յոյժ և ընթացեալ լալով առ հայրն և ասեն. Մեղար Աստուծոյ և ան- կար ի փորձու- թիւն, ընկեցեր և զմեզ. Եւ նա ասէ. Եւ զի՞նչ է, որդեակք: Եւ նո- քա ասեն. Մարի- նոս կին մարդ է:*
	56. Ընկեցեր և ըզմեզ ի մեղըս քո- յին»: Հայրըն զահի հարեալ և ասաց նոցին. «Զի է՞ ընդէր, որդեակք, ողբայք տըրտմագին»: Ապա նոքա ասին՝ «Մարինոսն է կին»:	
	57. Եւ հայրըն զարհուրեալ յարու- ցեալ գընացին. Անկաւ ի վրա ոտիցն նուազէր հո- գին, Կոծէր զանձն և փետէր զմորուսն ընդ հերին: Եւ հարկանէր զգըլուխն ի քար ու ի գետին	*Եւ ընթացեալ հայրն կոծէր զինքն և ճողէր զալիսըն իւր ի վե- րայ մարմնոյն և գիրկս արկեալ ասէր. Թաղեցէք և զիս ընդ աղախ- նոյս Քրիստոսի, զի զոր ինչ ես գործեցի ընդ*
B *72 ա*	*58. Եւ գիրկս արկեալ զոտից սըր- բուհոյ կուսին*	

	Եւ ասէր. «Թաղեցէ՛ք և զիս ընդ սը- մին, Զի զոր ինչ անցուցի ես ի յանձ սո- րին, Նա թողութեան չեմ ես արժանի ընաւին:	*սա թողութեան չեմ արժանի:*
  A 374 բ[2]	*59. Բազում կըրօնաւորք ի թաղումն եկին. Աղախնոյն Քրիստոսի սուրբ ճըգնա- ւորին, Մինչդեռ հայրըն կոծէր վրա դագա- ղին Եւ Մարինոս կանգնեաց ըզգըլուխն ինքնին:*	*Եւ ժողովեցան բազմութիւն քահանայից և կրօնաւորաց ի թաղումն մեծ ճգնաւորին Քրիստոսի: Եւ մինչդեռ աչխա- րէր հայրն ի վե- րայ դագաղացն, յարուցեալ Մա- րինոս կանգ- նեաց զգլուխ իւր հոգի ոչ ունելով, կալեալ զաջոյ ձեռանէ հօրն համբուրեաց և դարձեալ եդիր զգըլուխն:*
	60. Կալեալ և համբուրեաց զհօրն աջոյ ձեռին. Իւրովի դարձեալ եդ զգըլուխն ի մահճին, Ասաց հայրն՝ «Ոչ թաղել ըզերանե- լին, Մինչ որ զպանդոկապանն յըղեալ կոչեցին»:	
B *72 բ*	*61. Եւ ցուցին զՄարինոս ասելով նո- րին Թէ՝ «Ծանաչե՞ս ըզդայ»: Նա ասաց նորին. «Այոյ, թողու Աստուած զյանցանս իւր գործին, Զոր մեղաւ յիմ զաւակն ի մէջ պան- դոկին»:*	

62. Եւ Հայրըն հրամայեաց պանդո-
կապետին.
«Վերացո՛յ ըզօձիսն և տես ըզգըս-
տին»:
Եւ բացեալ նա ետես ըզնա, զի էր
կին.
Ապշեալ յիմարեցաւ, անկաւ ի տեղին:

63. Եւ յարուցալ կոծէր զինքըն խըս-
տագին
A 375ա[1] Վայ և եղուկ ասէր նա ինքն իւր ան-
ձին
Եւ յետ լալոյն կոծոյն տարեալ թա-
ղեցին
B 73 ա Երգովք հոգևորօք գնայ ամփոփեցին:

Եւ ապա թաղե-
ցին զնա սաղմո-
սիւք և օրհնու-
թեամբ:

64. Իսկ յետ երից աւուրց կատար-
ման կուսին
Դուստրըն այսհարի պանդոկապա-
նին
Եւ ցընդեալ ատամամբըքն ուտէր`
ցիւր մարմին
Եւ եկեալ հերարձակ ի սուրբ տա-
պանին:

65. Յայտնի խոստովանի զգըրպար-
տանս նորին,
Ասաց և զընընջելն ընդ զօրականին,
Զանմեղ օղագայիլն ըզՄարինոսին,
Բըժըշկեցաւ իսկույն ի յախտէ չա-
րին:

66. Իսկ սուրբ տըղայն ընտրեալ և
առաքինին,
B 73 բ Սըրապիոն մանուկն ի վանքըն սնա-
նի,

Եւ յետ երից
աւուրց դուստըր
պանդոկապետին
այսահարեցաւ և
ուտէր զըմարմին
իւր և հերարձակ
երթեալ անկաւ
առաջի գերեզմա-
նին և խոստովա-
նէր զմեղս իւր, թէ
որպէս զրպար-
տեաց զաղախինն
Քրիստոսի և
արժամայն բժշկե-
ցաւ: Իսկ մանուկն
Սերապիոն վար-
ժեցաւ և եղև
կրօնաւոր ընտիր,
որ և հայր
վանացն

Կըրօնաւոր եղեալ ընտիր ւ անուանի
Մինչ հայր և առաջնորդ վանացըն
կարգի:

արժանաւորեցաւ
լինել:

67. Ի թվականիս հայոց ինըն հարիւ-
րի,
B 75 ա$_2$ Կ և Ե տարի ի նմա աւելի,
Ես` Գրիգորիս նըւաստըս Ախթամա-
րացի,
Ապիկարըս տեսուչ և անյիշելի:

68. Ըզվարըս ճըգնութեան սուրբ Մա-
րինոսի
Ոտնաչափ համառօտ ի յաւարտ ածի,
Զի ընթերցմամբ սորայ զուարճանայք
յոգի,
Փառս երգեսցուք Փըրկչին ամենազօ-
րի:

B 74 ա 69. Առ յոտըս երջանիկ րաբունապե-
տի,
Գրիգորիոս անուն արթուն հըսկօղի.
Քաջ հըռետոր անյաղթ փիլիսոփայի
Եւ երիցս երանեալ մեծ վարժապետի:

70. Եւ որք եղանակէք ի մէջ հանդիսի
Եւ յիշման արարէք ըզմեզ արժանի,
Եւ ձեզ ողորմութիւն Տեառնէն պար-
գևի
Ի սոսկալի յաւուր մեծ դատաստա-
նի*:

Վարիանտներ

Վ ե ր ն ա գ ի ր ը արարեալ] B ասացեալ:

Տուն 2–1 B գնայ. 2 B նմայ. 3 A պատուիրեաց:

" *3–1 B պատուէրն:*

" *4–3 B քրտամբ. 4 B ըզրեր սորին:*

" *5–1 B Աստուած. 2 B զգործս:*

" *6–4 B տըվին:*

" *7–1 B շատ ըզհալածս. 2 B ըզզարիւնն իւրեանց. 3 B համբուրեցին:*

" *10–2 B սրբոցն. 4 B Մարիամ:*

" *11–3 B ներգէ. 4 A սորայ:*

" *12–1 B սոցայ:*

" *13–2 A առ ընտիթաց. 3 B ստացուածք:*

**Մատենադարանի № 7707 (նախկին № 383) ձեռագրից պատճենը սիրալիր կերպով մեզ տրամադրեց պրոֆ.* Ս. Աբրահամյանը, *որին խորին շնորհակալություն ենք հայտնում: Նույն պրոֆ.* Աբրահամյանի *մեզ հաղորդած տեղեկանքի համաձայն, «վերջին բառի վրա երկարացնող խազ նշան է դրված: Ներքին լուսանցքում գրված է «Յովասափու ձայն է», այսինքն Հովասափի եղանակով պիտի երգել»:*

" *14–2 B տղայն:*

" *15–1 B յանճառ] B յանհաս. 2 B հըրճվիլ:*

" *16–1 A հայըն (sic). 2 A ապայ:*

" *17–1 B այս. 3* Б *փանսն. 4 B ասացեալըդ] B ասացեալ ընդ:*

" *18–1 B պատասխան երետ. A նայ:*

" *19–1 A նայ. 3 B ըզգործս:*

" *20–1 B թւեցաւ. տղային:*

" *21–4 B զանուանսն:*

" *22–2 B ի վարս. B սրբուհին:*

" *23–3 A նայ. 4 B սըրբակրաւն:*

" *24–3 չի գալ մորուսին] A մորուս չունին սուրըըն. 4 հասակն էր փոքրագույն, այնու սռուգէին] A ներքինի ասեն, հասակն էր փոքրագոյն, այնու սռուգէին:*

" *26–4 A ամենայնի. B իւր* abs:

" *27–4 ի պանդոկ] B պանդոկ:*

" *29–1 որ] B ուր. 2 AB մէր. 3 A նայ. 4 B յղացոյց:*

" *30–2 B խոշտակեաց. B վասն:*

" *31–2 B Մին. 3 A նայ. 4 B ննջեաց:*

" *33–2 B վնաս:*

" *34–4 B իբրև հրեշտակ:*

" *37–2 թէ գայ] B գայ. 3 A ըզնայ:*

" *38–3 B դստեր. 4 A նայ:*

" *39–1 B յոտքն. 3 B բանսարկվին:*

" *40–2 B նմին. 3 AB փանորէից*

" *41–1 A նայ . B նստաւ. 3 անզէն B* abs:

" *43–3 B սերմն. 4 B սնո.*

" *44–1 B զողայն. 3 A հովացն. B հովւացն. 4 A զնայ. B մըկրտեցին:*

" *45–3 B սնոյց:*

" *47–1 B հայրն. 2 B յոտըս:*

" *48–4 A ըզնայ:*

" *49–1 B հայրն. 2 B նա. 3 B նա:*

" *51–2 B բերկրեսցիս:*

" *52–1 խուցն] B խուղն: 4 A զնայ:*

" *53–1 B գնացեալ:*

" *54–3 B օրէնն. 4 A ըզնայ:*

" *55–3 B հայրըն:*

" *57–2 B նըւաղէր:*

" *58–3 զինչ որ] B զոր ինչ:*

" *59–3 B կսկծէր. ի վրա] B վրա. 4 ըզգըլուխն] B ըզգուխն:*

" *60–4 B պանդոկապանն: B յղեալ:*

" *61–3 A զանցինս:*

" *62–4 A ափշեալ:*

" *63–4 B երգօք. A զնայ:*

" *64–3 A ցըտեալ:*

" *66–3 B անուանի:*

" *68–3 զուարճանայք] B զուարթնանայք:*

ПОЭМА ГРИГОРИСА АХТАМАРСКОГО (XVI в.) "ЖИТИЕ МАРИНОСА" И ЕЕ ПРОТОТИП

Резюме

В статье предлагается вниманию читателя editio princeps поэмы в 70 строф или 280 строк " Житие Мариноса " армянского поэта XVI в., "певца розы и соловья" Григориса, занимавшего престол ахтамарского партикулярного католикоса в 1512-1544 г.г. и потому называемого Ахтамарским (Григорис Ахтамарци). Поэма написана на древнелитературном армянском языке (грабаре), местами вульгаризированном элементами народной речи и даже орфографии (*о* вм. *ав* и наоборот), размером в 6-5, однообразными для всех четырех строк строфы рифмами, по преимуществу на *–ин*, местами (11-12 строфы) *–ун* или (25-26 и 67-70 строфы) *–и*. Текст дошел до нас по крайней мере в двух списках по рукописям-сборникам стихов (тагаран или гандзаран) № 2672, стр.371а-375а) б. Эчмиадзинской библиотеки, - переписанной Стефаном Тохатским в 1609 г. [A], и № 383 б. Литературного Музея Армении, ныне № 7707 (стр. 61а-73б) Матенадарана (Хранилища рукописей), - переписанной иеромонахом Захариею в Крыму (Кафа-Феодосия) в 1611-1614 г.г. [B].

В основу поэмы Григориса Ахтамарского "Житие Мариноса" положен соответствующий агиографический (житийный) текст из Синаксаря в редакции Тер-Исраэля от первой половины XIII века, каковой текст переложен в стихотворную форму. Оригинальными в поэме являются лишь вводные 1-10 и заключительные (носящие мемориальный характер) 67-70 строфи. Основной же материал, включенный в 11-66 строфы, повторяет в общем содержание житийного текста, восходящего, судя по формам личных имен с окончанием на *–ос* (Нергине*ос*, Марин*ос,* Евгин*ос* или Евгине*ос*), к греческому оригиналу Синаксаря, - каковой текст, таким оброзом, представляется непосредственным прототипом произведения Григориса Ахтамарского.

Содержание поэмы (и синаксарных, греческого и армянского, текстов) такого, -

Был один весьма богатый, по природе щедрый и богобоязненный человек по имени Нергинеос, который овдовел, У него осталась единственная дочь по имени Мариам (Мария), которая отличалась большой

красотой и скромностью. Отец решил, оставив все свое имущество дочери, удалиться в монастырь, чему, однако, дочь воспрепятствовала с упреком , что отец старается спасти свою душу, а ее погубить, и просила взять ее с собой. Отец вначале возражал и отказывал удовлетворить просьбу дочери, мотивируя свой отказ тем, что ей, как девице, не место в мужском монастыре, но потом уступил мольбам дочери. По совету последней, отец подстриг ей волосы, одел на нее мужское платье и, раздав все свое имущество неимущим, направился вместе с нею в монастырь, где отец принял имя Евгиноса или Евгинеоса взамен Нергинеоса, а дочь–имя Маринос вместо Мериам (Мария).

После смерти отца Мариам (Мария) - Маринос продолжала оставаться в монастыре в полной святости и благочестии. Братия монастыря поражена была отсутствию растительности на лице монаха Мариноса, его маленькому росту и нежному голосу. Однако, настоятель обители успокаивал всех, заявляя, что это - результат строгой отшельнической жизни молодого монаха.

Однажды настоятель монастыря приказал трем монахам совместно с Мариносом отправиться по делам монастыря в одно место. Пустившись в путь, монахи по дороге остановились на ночлег на постоялом дворе, откуда на следующий день рано утром двинулись в дальнейший путь по месту назначения. Между тем обнаружилось, что в ту самую ночь, когда монахи ночевали на постоялом дворе, какой-то военный остановился у дочери хозяина постоялого двора, которая забеременела от него. И когда хозяин заметил, что его дочь беременна, стал бранить и поносить ее, требуя, чтобы она указала виновника ее несчатья. Она-же, желая скрыть следы истинного виновника, указала на одного из монахов, ночевавших на постоялом дворе, именно Мариноса, который якобы лишил ее девственности. Разъяренный хозяин бросился в монастырь искать преступника. Начались расспросы и следствие. На вопрос настоятеля, правда ли, что Маринос ночевал с дочерью хохяина постоялого двора, он (Маринос) дал утвердительный ответ. В результате Маринос был изгнан из монастыря. Он вынужден был поселиться на скале, что супротив монастыря к западу, где братья монахи построили ему хижину. Когда-же дочь хозяина постоялого двора разрешилась от бремени мальчиком, последнего передали Мариносу, как отцу, на воспитание. Маринос взялся ухаживать за ребенком, нашел ему кормилиц, а соседи-пастухи условились доставлять ему молоко. Вскоре ребенку крестили, назвав его Серапионом. Спустя три года настоятель монастыря, уступая мольбам братии, насильно

водворил Мариноса обратно в обитель, где он (Маринос) и доживал свой век.

Как-то Мариносу приснился сон, будто к нему явился лучезарный человек, призывавшей его к богу, вследствие чего Маринос вышел из монастыря и, направляясь к той хижине, что на скале супротив обители, свалился на землю и спустя три дня скончался. Узнав о смерти Мариноса и считая его недостойным отпевания, настоятель монастыря приказал предать тело его земле без облачения. И когда, согласно установленному чину, тело умершего заварачивали в саван, заметили, что Маринос не мужчина, а женщина. Все удивились и сообщили об этом настоятелю, который приказал сохранить тело Мариноса до тех пор, пока вызванный им хозяин постоялого двора не придет и не убедится в невинности Мариноса. Явившись в монастырь и приблизившись к смертному орду, хозяин постоялого двора поднял покров с тела умершего и, заметил груди женщины, пораженный тут- же на месте свалился. Когда-же встал, то стал оплакивать себя. Тело Марисона отнесли и с чтением псалмов и песнопениями предали земле.

Серапион вырос и возмужал в том-же монастыре, где его опекал Маринос; затем он сделался монахом, стяжав себе имя, и достиг поста настоятеля обители.

ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1813 ԹՎԻ «ԿՈՆԴԱԿԸ»

Պերճ Պռոշյանն ու Հովհաննես Թումանյանը մի ժամանակ, ինչպես հայտնի է, լուրջ կերպով զբաղված էին իրենց ազգատոհմի իշխանական–ազնվական ծագման խնդրով, որի կապակցությամբ նույնիսկ Ղազարոս Աղայանը, ըստ Ավետիք Իսահակյանի վկայության[1], մեծագույն բարեսրտությամբ հեգնել էր նրանց[2]:

Մի կողմ՝ թողնելով Պռոշյան ազգատոհմի խնդրի քննությունը, որի շուրջը գոյություն ունի որոշ գրականություն[3], մենք այստեղ կուզեինք հատկապես կանգ առնել Հովհ. Թումանյանի մի հուշիկի վրա, որի շուրջը խոսել են Սմբատ Տեր-Ավետիսյանը[4], Արսեն Տերտերյանը[5] և ուրիշներ:

Նկատի ունենալով, որ Թումանյանների ծննդավայրը Լոռվա Դսեղ գյուղը հնում Համազասպյան-Մամիկոնյանների սեփականությունն էր՝ դրոշմված անգամ շրջակա հնագիտական հուշարձաններում, բոլորովին էլ, իհարկե, տարօրինակ չպիտի թվար այն փորձը, որով Թումանյան ազգատոհմի ծննդաբանությունը սերտ կերպով կապվում էր Մամիկոնյանների հետ (1):

Այս խնդրի շուրջը ինքը Հովհ. Թումանյանը արտահայտվել է առնվազն երկու անգամ – 1894 և 1905 թվին:

Իր «Քաջերի կյանքից» գրվածքում 1894 թվին Հ. Թումանյանը, խոսելով իր հայրենի Դսեղ գյուղի Մամիկոնյան նախարարների ապաստարաններից մեկը լինելու մասին, ի միջի այլոց նշում է. «Այս այն Դսեղն է, որ մեծազոր Մամիկոնանները, Արշակունյաց փառքի վերջալուսին, երեսուն տարի ևս մեն-մենակ հաղթանակներով ճակատ ճակատի զարկելով պարսիկների ու արաբների հետ,

[1] «Գրական թերթ», 1937, № 30:

[2] Հմմտ. «Գրական ժառանգություն», I, Երևան, 1940, էջ 339:

[3] ***Գիւտ ա. ք. Աղանեան***. Դիւան հայոց պատմութեան, III, էջ ծբ. հմմտ. «Գրական ժառանգություն», I, էջ 336-340:

[4] Յովհաննէս Թումանեանի տոհմը, «Մշակ», 1919 թ., 20. II № 40:

[5] Հայոց նոր գրականության պատմություն XIX-XX դ.դ., Առաջադրություն № 7 (15): Երևան, 1931, էջ 22:

ձանձրացած, X դարում թողին իրենց հայրենի սրբազան Տարոնը, եկան բնակեցին այստեղ: Դեռ մնում են նրանց շիրիմները, նրանց կանգնած խաչարձաններն ու մատուռները, դեռ մնում է նրանց կառուցած ճերմակ տաճարը – Բարձրաքաշ Սուրբ Գրիգորի վանքը, և դեռ կանգուն Սիրուն խաչի վրա կարդացվում է «Յիշխանութեան տանն Մամիկոնեան...»: Դեռ ժողովուրդն ավանդորեն պատմում է, թե «այստեղ ապրեցին այն լավերը, այստեղ կռվեցին և այստեղ մեռան»[6]:

Ապա «Հովհաննես Թումանյան» վերնագիրը կրող ինքնակենսագրական էսքիզի մեջ, որ տպվեց 1905 թվին, բանաստեղծը գրում է. «Մեր տոհմը Լոռու հին ազնվական տոհմերից մեկն է: Իր մեջ ունի պահած շատ ավանդություններ: Այդ ավանդություններից երևում է, որ նա եկվոր է, բայց պարզ չի, թե որտեղից: Թե եկվոր էլ է, անհերքելի հիշատակարանները ցույց են տալիս, որ նա վաղուց է հաստատված Լոռու Դսեղ գյուղում»[7]:

Այստեղ մենք ավելորդ ենք համարում կանգ առնել Մամիկոնյանների պատմության վրա, քանի որ սրա շուրջը, բացի սկզբնաղբյուրներից (Փավստոս Բուզանդ, Մ. Խորենացի, Սեբեոս, Զենոբ Գլակ–Հովհանն Մամիկոնյան և այլն), գոյություն ունի և բավական հարուստ մասնագիտական գրականություն[8]:

* * *

Մենք չգիտենք, թե ինչ տվյալների հիման վրա էր հանգուցյալ Սմբատ Տեր-Ավետիսյանը եզրակացնում, որ «Դսեղ գյուղը մեր պատմության մեջ հանդես է գալիս առանձնապես Բագրատունյաց շրջանում, երբ Մամիկոնյան իշխանների մի ճյուղը՝ Համազասպյանները բնակություն են հաստատում Լոռում ու Դսեղ գյուղում, շինում էին իրենց տոհմական գերեզմաններն ու աղոթատունը՝ Բարձրաքաշ Ս. Գրիգորի վանքը»[9]:

6 Գրական հանդես «Հորիզոն», I, 1894, էջ 88:

7 «Լույս» օրացույց, Թիֆլիս, 1905, հավելված. նույնը՝ ***Էմմանուել քահ. Նազարյանց,*** Ընտիր հատվածներ: Ալեքպոլ, 1907, էջ 265:

8 Օրինակ. Մի քանի նկատողություն Սամիկոնյան զաղքականության մասին, «Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 513-528. ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** "За марксисткое языкознание", Թբ. 1934, էջ 152-154, **Hannès Sköld,** L'origine des Mamiconiens d' aprés Moise de Khoréne, "Revue des études arméniennes", t. V. fasc I, Paris, 1925, pp. 131-136. **N. Adonz** Les Taronites en Arménie et à Byzance–extrait de Byzantoin, t. IX, fasc. II, Bruxelles 1934 pp. 715-738; t. X, 1935, pp. 351-551; t. XI, 1936, pp. 21-42.

9 «Մշակ», 1919, № 40:

Թվում է, որ այս եզրակացությունը չի կարող հաշտվել այն փաստի հետ, որ Դսեղ գյուղի միջում գտնվող կոթողը շատ ավելի հին է, քան Բագրատունյաց դարաշրջանը. սա մի կողմից: Իսկ մյուս կողմից՝ Բարձրաքաշ Ս. Գրիգորի արձանագրությունները, ուր Մամիկոնյան-Համազասպյաններն են հիշվում հիմնականում XIII դարուն են պատկանում (2):

Այսպես, օրինակ՝ 1221 թ. արձանագրության մեջ հիշվում է «Մարծպան որդի Սարգսի, թոռն Համազասպեանց յազգէ Մամիկոնեանց»[10]: 1239 թվի արձանագրության մեջ հիշվում է «Համլիկ որդի Սմբատայ, թոռն Համազասպեանց յազգէ Մամիկոնեանց»[11]: Իսկ «Սիրուն խաչ» կոչված խաչարձանի վրա, որ Գրիգորաշեն վանքի ձորափին է գտնվում, նշված է, որ այն փորագրված է «յիշխանութեան Մամիկոնեան և որդւոյ Վարդանայ...» ըստ Ս. Ջալալյանի ընթերցման[12], կամ «յիշխանութեանն Մամիկոնեան և որդւոյ նորա Վարդանայ»՝ ըստ Ե. Լալայանի ընթերցման[13]:

Բայց և այնպես, նշած հուշարձանները բնավ չեն հակասում նրան , որ «Մամիկոնյանների մեծագործությունների մասին եղած ավանդությունները դեռ կենդանի մնում են ժողովրդի բերանում» և որ «դեպի Մամիկոնյանների հիշատակը առանձին գուրգուրանքով է վերաբերվել դսեղցի Մեհրաբյան-Թումանյանների տունը, որովհետև վերջիններս դեռ երկու դար առաջ համոզված էին, որ իրանք ծագում են Մամիկոնյան ցեղից»[14]:

Ըստ Ս. Տեր-Ավետիսյանի հետազոտությունների՝ «Թումանյանն տունը Լոռու պատմության մեջ հիշվում է դեռ XVII դարում»: 1677 թվին Հաղբատի առաջնորդությունը ստանում է դսեղեցի Բարսեղ եպիսկոպոսը «յազգէ Թումանեանց Մամիկոնեան»: Նույն Ս. Տեր-Ավետիսյանի վկայությամբ՝ այս Բարսեղ եպիսկոպոսի գերեզմանը գտնվում է Հաղբատի վանքում և ունի այսպիսի դամբանագիր.

Այս է հանգիստ Բարսեղ եպիսկոպոսին.
Ես էի յազգէ Թումանիցի,
Որ բազում ամս ի յաստ կացի

10 ***Սարգիս Վ. Ջալալեանց,*** «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն. Ա, Տփղիս, 1842, էջ 112:

11 ***Նույն տեղ,*** էջ 110:

12 ***Նույն տեղ,*** էջ 117-118:

13 Բորչալուի գաւառ, «Ազգագրական հանդէս», VII-VIII, 1901 թ., էջ 424:

14 «Մշակ», 1919, № 40:

Եւ զկեանս իմ ի յաստ անցուցի.
Իէ ամ առաջնորդ կացի. Թվին ՌՃԾԲ[15]

Հետևապես, Բարսեղ եպիսկոպոս Թումանյանը Հաղբատի առաջնորդ է եղել 27 տարի ցմահ, որ տեղի է ունեցել 1703 թվին:

«Բարսեղ եպիսկոպոսին հաջորդում է Թոմա եպիսկոպոսը՝ դարձյալ Թումանյան տանից, որը նույնպես Մամիկոնյան է կոչվում», իսկ «XVIII վերջերին ու անցյալ դարի սկզբներին մեծ հռչակ է ստանում դսեղեցի Թումանյանների տունը՝ Հովակիմ Յուզբաշու քաջագործությունների պատճառով»[16]

* * *

Թումանյանների հայրենի Դսեղ գյուղի ու նրա շրջակայքի՝ Բարձրաքաշի Ս. Գրիգորի վանքով հանդերձ՝ երբեմն Մամիկոնյան նախարարական ցեղի կալվածք լինելու փաստը ոմանք ապացուցում են «արծուէնշան» էմբլեմը պարունակող հարթաքանդակով, որ աչքի է ընկնում Դսեղում—Գրիգորաշենում:

Մամիկոնյան էմբլեմ-դրոշանիշը Փավստոս Բուզանդն ուղղակի «արծուէնշանք» *է կոչում* (IV, 2), *միաժամանակ տալով և այսպիսի բացատրություն. «Ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի թիկանց* արծուոյն՝ *ի վերայ խորանին* արծուի *նշան»* (V, 38)*:*

Սիմեոն վարդապետ Ապարանցին իր «Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի» երկի մեջ՝ նկատի ունենալով սիրամարգն իբրև Մամիկոնեանց դրոշանիշ, ասում է.

Բազմատեսակս քըրքըրմաւէտ,
Սիրամարգօք գեղեցկացեալ
Հըրաշէիւք էշ այծեմամբք,
Յամօրէիւք հովիտք լըցեալք[17]*:*

Րաֆֆին էլ ըստ երևույթին Սիմեոն Ապարանցուն հետևելով գտնում է, որ «սիրամարգը Մամիկոնյանների սիրած թռչունն է»[18]*:*

Իսկ Մամիկոնյանց էմբլեմի խնդրի կապակցությամբ միանգամայն տեղին կլիներ հիշատակել, որ Դսեղ գյուղի եկեղեցու զանգակատան մասի կողմում դեռևս սույն դարի սկզբում Ե. Լալայանը նկատել է «Մամիկոնյան տոհմի դրոշանիշը, որկգլխյան արծիվ՝

15 «Մշակ», 1919, № 40:

16 ***Նույն տեղ:***

17 ***Սիմէոն Վարդապետի Ապարանեցւոյ*** Վիպասանութիւն, ևն, Վաղ. 1870, էջ 30:

18 «Սամվել», Երևան, 1940, էջ 26:

ճանկերում գառն բռնած»[19]*:*

Այսպիսի մի էմբլեմ նկատել են և պրոֆ. Հովսեփ Ստրժիգովսկին[20] *և ապա Գարեգին արքեպ. Հովսեփյանը*[21] *Բարձրաքաշում, որի մասին վերջինս (Հովսեփյանը) գրում է. «Դսեղի Բարձրաքաշ Ս. Գրիգորի հարավային շենքի պատին, շինված 1245 թվին Մամիկոնյան կամ Համազասպյանց Մարծպանա որդի Ասլան բեկի կողմից, Տիրացու վարդապետի առաջնորդության ժամանակ, գտնվում է մի հարթաքանդակ երկգլխանի արծիվ, մագիլներում խոյ բռնած, պարզ գինանիշներից կամ դրոշներից առնված»*[22]*:*

* * *

Թումանյաններին Մամիկոնյաններից սերելու թեորիայի արծածման նկատմամբ Հովհ. Թումանյանը անկասկած ձեռքի տակ է ունեցել մի վավերագիր, որ սակայն նրա թղթերում դեռ երևան հանված չէ:

Այժմ մեր տրամադրության տակ է Վրաստանի պետական թանգարանի հայերեն վավերագրերի հավաքածուի № 1-ի ներքո մուծած՝ Եփրեմ կաթողիկոսի անունից էջմիածինի 6 արքեպիսկոպոսների և 2 վարդապետի, իբրև «բարեկարգութեան կառավարիչ սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի» անդամների կողմից ստորագրված և անձնական կնիքներով վավերացված մի փաստաթուղթ՝ 1813 թ. մարտի 13 թվագիր:

Փաստաթուղթը, որ կոնդակի բնույթ ունի, թեև իբրև այդպիսին ձևավորված չէ, գրված է in folio *մեծությամբ 2 էջ թղթի վրա և ունի հետևյալ վերնագիրը. «Տոհմականութիւն և ճիւղաբանութիւն Մամիկոնեանց, որք կոչին այժմ Թումանեանք»:*

«Վավերագիրը» հիմնականում կոմպիլյացիա է՝ կազմված այսպես. առաջին 3 պարբերությունը գրեթե բառացի կրկնություն է Միքայել Վ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ի առաջին հատորի (Վենետիկ, 1784) 39-րդ գլխի § 4-ի, որ իր հերթին քաղված է Մ. Խորենացու պատմությունից (II, *81). մնացած մասը, այն է բավական ընդարձակ չորրորդ (վերջին) պարբերությունը կրկնություն է Զաքարիա սարկավագ Հովհաննավանեցու «Պատմագրութեան»*

19 «Ազգ հանդէս»:

20 Y. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, s. 287.

21 Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ, Վաղարշապատ, 1928, էջ 178:

22 ***Նույն տեղ:***

երկրորդ գրքի 48-րդ գլխի, որի հեղինակին կոմպիլատորները Զաքարիա ամիրսպասալարի հետ են շփոթել. վերջում կցված է նշում «վավերագրի» գրության ժամանակի ու տեղի մասին (1813 թ. 13. III՝ *Էջմիածնում), ապա գալիս են 6 արքեպիսկոպոսների և 2 վարդապետի ստորագրությունները անձնական կնիքներով հանդերձ, ուր նշած է յուրաքանչյուրի (Բ. ծ. = «Քրիստոսի ծառա») անունը, վարդապետ ձեռնադրվելու թվականը հայկական տոմարով, հետևյալ հաջորդականությամբ՝ 1231 [=1782], 1220 [=1771], 1233 [=1784], 1241 [=1792], 1240 [=1791], 1243 [=1794], 1251 [=1802], 1230 [=1781]:*

Անցողակի անհրաժեշտ է նշել, որ Զաքարիա սարկավագի Պատմագրությունից քաղած նկարագրությունը Բահանդուր Թումանենցու (Թումանյանի) և Շիուշ Բարաթեցու (Բարաթաշվիլու) մենամարտի մասին զուգադիպում է վրաց պատմագրության այն տվյալին. որ XVII *դարու վերջում, հետևապես Զաքարիայի օրոք, գրի է առել վրաց պատմիչ Փարսադան Գորգիջանիձեն, որի համակրանքը՝ իբրև Գորեցի հայի (թեև վրացախոս և վրացացած, իսկ կրոնով մահմեդականացած)՝ դեպի Թումանենցին է և ոչ Բարաթեցին*[23]*:*

Ստորև մենք հրատարակում ենք Եփրեմ կաթողիկոսի անունից 1813 թվին գրված վավերագիրը՝ աջ սյունակում ամփոփելով զուգահեռաբար՝ ձախ սյունակում և տողից ցած՝ նշելով համընկնող համապատասխան աղբյուրները՝ Մ. Վ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ը (էջ 414-415) և կից Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը (հրատ. 1913 թ., էջ 222-223), ինչպես Զաքարիա սարկավագի «Պատմագրութիւնը»-ը (հրատ. 1870 թ., էջ 95-98):

[Միքայէլ Վ. Չամչեան. Պատմութիւն Հայոց. *I*, գլուխ 39, և 4]

Եփրեմ կաթուղիկոս ամենայն Հայոց և պատրիարգ Արարատեան Աթոռոյն սրբոյ Էջմիածնի

Տոհմականութիւն և ճիւղաբանութիւն Մամիկոնեանց, որք կոչին այժմ Թումանեանք:

23 Տես **Լ. Մելիքսեթ-Բեկ,** «Վրաց աղբյուրները Յայաստանի ու հայերի մասին», II, Երևան, 1936 , էջ 114-115:

էջ 414 [§ 283] Աւանդէ Խորենացին[24]*, թէ Ճենբակուր, այսինքն թագաւորն Ճենաց Արբոկ ունէր զերկուս դայեկ-որդիս, որոց մին կոչիւր Բղդոխ և միւսն Մամգուն կամ Մանգոն. Բղդոխ չարախօսեալ զՄամգունայ առ արքայ՝ հաւանեցոյց սպանանել զնա: Զայս զգացեալ Մամգունայ՝ փախեաւ տամբ իւրով առ Սասանեանն Արտաշիր թագաւոր Պարսից, ի ժամանակի անդ, յորում աշխարհ մեր կայր ի ձեռս նորա: Առաքեաց Արբոկ հրեշտակս առ Արտաշիր և խնդրեաց ի նմանէ զՄամգուն. և յոչ անսալ Արտաշրի՝ յարոյց Արբոկ պատերազմի ի վերայ նորա:*

Յամի տեառն ՄՁԳ Ճենբակուր, այսինքն թագաւորեն Ճենաց Արբակ ունէր զերկուս դայեկ-որդիս, որոց մինը կոչիւր Բղդոխ և միւսն Մամգուն: Բղդոխ չարախօսեալ զՄամգունայ առ արքայ՝ հաւանեցոյց սպանանել զնա. զայս զգացեալ Մամգունայ՝ փախաւ տամբ իւրով առ Սասանեանն թագաւոր Պարսից. և ոչ անսալ Արտաշրի՝ յարոյց Արբակ պատերազմ ի վերայ նորա (ի պատմագրքոյ Չամչեան. հատոր առաջին. և թղթահամար 414. ի Մովսէս Խորենացւոյն յիշատակեալ):

24 Յմմտ. ***Մովսիսի Խորենացւոյ*** «Պատմութիւն հայոց», II, 81 (էջ 222) Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն Ճեն-Բակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան. սորա երկու դայեկորդիք Բղդոխ և Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ գայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից: Եւ Արբոկ հրեշտակս առաքէ խնդրել զնա. և ի չլսելն Արտաշրի՝ պատերազմ ի վերայ նորա յօրինէ թագաւորն Ճենաց: Եւ իսկոյն մեռեալ Արտաշրի՝ թագաւորէ Շապուհ:

Արդ՝ թէպէտ և ոչ տայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլ և ոչ յԱրեաց երկրին թողու. բայց ամենայն աղխիւն իւրով առաքէ զնա իբրև զվտարանդի առ գործակալս իւր որ ի Յայս: Եւ յղէ առ թագաւորն Ճենաց՝ ասելով, թէ «Մի թուեսցի քեզ դժուար, զի ի ձեռս քո ոչ կարացի տալ զՄամգոն. վասն զի երդուեալ էր նմա հօրն իմոյ ի լոյսն արեգական. այլ վասն անխռով զքեզ առնելոյ՝ հալածեցի զնա յաշխարհէս իմմէ յեզր երկրի և մուտս արևու, որ հաւասար է նմա մահու. և արդ մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քեզ»: Եւ զի քան զամենայն բնակեալս ի վերայ երեսաց երկրի խաղաղասէր (էջ 223) ասեն զոլ զազգն Ճենաց յանձն առնու առնել զհաշտութիւն...

[§ 285] Իբրև մեռաւ Արտաշիր և թագաւորեաց որդի նորա Շապուհ առաջին, ոչ կամելով նորա տալ զՄամգուն ի ձեռս Արբակայ՝ յղեաց զնա ի Հայս Հրեշտակս արձակեաց առ Արբոկ՝ ասելով. Հայր իմ երդուեալ էր Մամգունայ ի լոյս արեգական ոչ մատնել զնա ի ձեռս քո. յայս երդումն և իմ զգուշացեալ՝ ոչ առաքեցի զնա առ քեզ. բայց վասն հաճելոյ և զկամս քոյ՝ հալածեցի զնա յաշխարհէ իմմէ յարևմուտս. (415) ապա մի՛ ևս վասն այսր լիցի ի մէջ մեր պատերազմ: Հաւանեալ ընդ այս Արբակայ՝ դադարեցաւ ի կռուոյն:

Իբրև մեռաւ Արտաշիր և թագաւորեաց որդի նորա Շապուհ առաջին (յամի տեառն 285) ո՛չ կամելով նորա տալ զՄամգունի ի ձեռս Արբակայ՝ յղեաց զնա ի Հայս և Հրեշտակս արձակեաց առ Արբակ՝ ասելով. Հայր իմ երդուեալ էր Մամգունայ ի լոյս արեգական ոչ մատնել զնա ի ձեռս քոյ. յայս երդումն և իմ զգուշացեալ՝ ոչ առաքեցի զնա առ քեզ, բայց վասն հաճելոյ և զկամս քոյ՝ հալածեցի յաշխարհէ իմմէ յարևմուտս, ապա մի՛ ևս վասն այսր լիցի ի մէջ մեր պատերազմ. Հաւանեալ ընդ այս Արբակայ՝ դադարեցաւ ի կռուոյն:

[§ 286] Իսկ Մամգուն եկեալ յաշխարհս Հայոց՝ մնաց անդ. և ի գալ Տրդատայ ի Հայաստան պսակեալ ի Դիոկղետիանէ, ել ընդ առաջ նորա ընդ այլ նախարարս ընծայիւք. և պատուեցաւ ի նմանէ տեղեաւ և ռոճկօք. և եղև նմա սիրելի. յորմէ և սերեցան ազգ Մամգունեան յերկիրն Տարօնոյ, որք յամենայնի գտան հզօր և հաւատարիմ և կոչին հասարակօրէն Մամիկոնեան:

Իսկ Մամգուն եկեալ (յամի 286) յԱշխարհս Հայոց՝ մնաց անդ և ի գալ Տրդատայ ի Հայաստան՝ պսակեալ ի Դիոկղետիանոսէ, ել ընդ յառաջ նորա ընդ այլ նախարարս ընծայիւք և պատուեցաւ ի նմանէ տեղեաւ և ռոճկօք. և եղև նմա սիրելի. յորմէ և սերեցան ազգ Մամգունեան յերկրին Տարօնոյ, որք յամենայնի գտան հզօր և հաւատարիմ, կոչին հասարակօրէն Մամիկոնեան:

[Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն, *II, 48]*

էջ 95 Ռոստամ խանն... յազգէ Բագրատունեաց, զի յետ անկանելոյ թագաւորութեան նոցա և աւերմանն Անւոյ՝

Ռոստոմ Արքան յազգէն Բագրատունեաց յամի տեառն 1634 (ի պատմութենէ Զաքարիա Ամիրսպասալարէ) *և յետ*

մնացեալքն յազգէն Բագրատունեաց գընացին յաշխարհն Վրաց: Եւ յորժամ վերացաւ և թագաւորութիւնն Վրաց (96), անկաւ երկիրն ի ձեռս Պարսից. և նոքա ետուն իշխանութիւն Բագրատոնեաց տիրել ամենայն սահմանացն Վրաց: Եւ սերեացն Բագրատունիքն որդւոց յորդիս մինչև յայս Ռոստամս, որ ծնաւ որդի մի ի Մարիամայ կնոջէ իւրոյ, որոյ անունն էր Լաւարսափ, որ պահէր փախանակ իւր լինել իշխող Վրաց: Եւ յաւուր միում առեալ զորդի իւր բազում զօրօք և գնացին յորս երէոցն՝ ի տեղին, որ ասի Ղարա-եազ, որ է Սեաւ գարուն: Եւ եղև՝ զի զհետ եղեն որսոցն և ամենեքեան փութային սպանանել զորսն: Եւ ի խուռն արձակմանէ թուանքացն՝ հարին զորդի թագաւորի զԼաւարսափն և սպանին: Եւ Ռոստամ երկեաւ յիւնքենէ, փախեաւ և գնաց ի քաղաքն Թիֆլիզ: Եւ արար խնդիր սպանողաց որդւոյ իւրոյ, և ոչ կարացին իմանալ: Եւ ապա դատապարտեցին Բ այր, միոյն անունն՝ Բայանդուր Հայ Մամիանեան ազգէ, որ ասեն Թումակոնեցի, և միւսոյն անուն Շիշուշ՝ Վրացի՝ ազգաւ Բարաթեցի, զոսա դատապարտեցին. եթէ դուք էիք մերձ նմա, յորժամ սպանին զնա, կամ գիտէք դուք

անկանելոյ թագաւորութեան նոցա և յաւերմանն Անւոյ մնացեալքն յազգէն Բագրատունեաց գնացին յաշխարհն Վրաց և յարեցան առ թագաւորս նոցա. և եղեն վերակացուք ամենայն գործոց աշխարհին Վրաց: Եւ յորժամ վերացաւ և թագաւորութիւն Վրաց անկաւ երկիրն ի ձեռն Պարսից. և նոքա ետուն իշխանութիւն ազգին Բագրատունեաց տիրել ամենայն սահմանացն Վրաց: Եւ սերեցան Բագրատունիքն որդւոց յորդիս մինչև յայս Ռոստոմս, որ ծնաւ որդի մի ի Մարիամայ կնօջէ իւրոյ, որոյ անունն էր Լաւարսափ, որ պահէր զնա փոխանակ իւր լինել իշխօղ Վրաց: Եւ յաւուր միում առեալ զորդի իւր բազում զօրօք և գնացին յորս երէոց ի տեղին՝ որ ասի Ղարայաս, որ է Սեաւ գարուն: Եւ եղև՝ զի զհետ եղեն որսոյ և ամենքեան փութացին սպանանել զորսն: Եւ ի խառն արձակմանէ թուանքացն հարին զորդի թագաւորին զԼաւարսափն և սպանին: Եւ Ռօստոմն երկեաւ յինքենէ՝ փախեաւ և գնաց ի քաղաքն Թիֆլիզ: Եւ արար խնդիր սպանողաց որդւոյ իւրոյ և ոչ կարացին իմանալ: Եւ ապա դատապարտեցին երկու այր՝ միոյն անուն Բահադուր Հայ ի Մամիկոնեան ազգէ, որ ասեն

զսպանօղ նորա և կամ դուք էք սպանեալ: Եւ բարձրացաւ բարբառս այս. Հայքն ասէին Վրացին է սպանեալ, և Վրացիքն ասէին՝ Հայն: Եւ ապա ասացին Սամարթելի, այսինքն՝ դատաստանաւ մենամարտիլ, ո՛վ որ յաղթի՝ նա է սպանեալ զորդի Թագաւորին: Եւ հաստատեցաւ բանըս այս ի մէջ նոցա, զի ելանիցեն երկուքն միայն: Եւ կազմեցին զինքեանս, զգեցան զգեստ պատերազմի և զինեցան զինուք, համբուրեցին ծունկ Թագաւորին, անցին յայն կողմն Կուր գետոյն՝ յարեւելից կոյս քաղաքին: Իսկ նենգաւոր ազգն Վրաց հրապարակաւ խրատ ետուն երկոցունց, թէ յորժամ յասպարէզն մտանէք մի՛ մարտնչիք յառաջագոյն, այլ արշաւեցուցէք զերիվարս այսր և անդր, թերևս ողորմեսցի Թագաւորն և ո՛չ թողու պատերազմել: Զայս խրատ ճշմարիտ իմացաւ Բայանդուրն: Իսկ կայենանման ազգըն Վրաց գաղտնի խրատ ետուն, Շիուշին՝ թէ դու փոքրահասակ ես և անզօր, և Բայանդուրն յաղթամարմին է և զօրեղ, դու ո՛չ կարես դիմամարտել նմա. այլ յորժամ նա խաղս առնէ երիվարաւն, դու ջանա հարկանել զնա նիզակաւն, թերևս կարասցես արկանել զնա յերկիր: Եւ ապա երկոքեանն եւս մտին յասպարէզն:

Թումանեցի, և միւսոյն անուն Շիուշ՝ Վրացի՝ ազգաւ Բարաթեցի: Զսոսա դատապարտեցին՝ եթէ դուք էիք մերձ նմա, յորժամ սպանին զնա, կամ գիտէք դուք զսպանող նորա և կամ դուք էք սպանեալ: Եւ բարձրացաւ բարբառս այս. Հայքն ասէին՝ Վրացի է սպանեալ. և Վրացիքն ասէին՝ Հայն: Եւ ապա ասացին սամարթելի, այսինքն՝ դատաստանաւ մենամարտել, ո՞վ որ յաղթի, նա է սպանեալ զորդի Թագաւորին: Եւ հաստատեցաւ բանս այս ի մէջ նոցա, զի ելանիցեն երկուքն միայն և կազմեցին զինքեանս, զգեցան զգեստ պատերազմի և զինեցան զինուք, համբուրեցին զծունկ Թագաւորին և անցին յայն կողմն Կուր գետոյն, յարեւելից կոյս քաղաքին: Իսկ նենգաւոր ազգն Վրաց հրապարակաւ խրատ ետուն երկոցունցն, թէ՝ յորժամ յասպարէզն մտանէք, մի մարտնչիք յառաջագոյն այլ արշաւեցուցէք զերիվարսն այսր և անդր, թերևս ողորմեսցի Թագաւորն և ոչ թողուցու պատերազմիլ: Զայս խրատս ճշմարիտ իմացաւ Բահադուրն: Իսկ կայենանման ազգն վրաց գաղտնի խրատ ետուն Շիօշին՝ թե դու փոքրահասակ ես և անզօր և Բահադուրն յաղթամարմին է և զօրեղ, դու ոչ կարես

Եւ խանն եդ ընդ նոսա Գ Տաճիկ և ասէ. Ո՛վ որ ի նոցանէ անկանի յերկիր, դուք անկերու՛ք ի վերայ նորա, և մի՛ թողուք սպանանել: Եւ Բայանդուրն յառաջեաց քան զՇիշուշն, և նա զկնի նորա եմուտ ի մէջ թամբին, և նիզակն ուղղեաց դէպ ի Բայանդուրն, և եհար զգեղարդն ի փոր Բայանդուրին, ի ներքո պորտոյն թափանցոյց ի միւս կողմն, ի մէջ մսոյն և մորթոյն էանց գեղարդն: Իսկ Բայանդուրն ցանցեալ փրթոյց զգեղարդն ի ձեռանէ Շիշուշին և եդ ի վերայ ղաշի թամբին, և լախթովն եհար և եբեկ զնիզակաբունն, և էարկ յերկիր, և մնաց գեղարդն ի փորն: Եւ Շիշուշն փախուստ առեալ գնայր: Իսկ Բայանդուրն մտրակեալ զերիվարն՝ եհաս նմա չեչտակի և եհար լախտովն զպարանոցն նորա, և կախեցաւ ի ձիոյն. և կամէր միւս անգամ հարկանել. և զի բուռն լախտին շաղախեալ էր արեամբ, փրթաւ ի ձեռանէ նորա և եհան զթուրն, զի հարցէ զնա. զի խելագարեալ էր Շիշուշն, անկաւ յերկիր, և Բայանդուրն եբեր զթուրն ի վերայ և հարաւ, զձէտ ձիոյն եհատ ի բնէ: Եւ Տաճիկքն անկան ի վերայ Շիշուշին, և ոչ թողին սպանանել զնա: Եւ ապա Հայկք և Տաճիկք խուռն ելին և [գնա] ցեալ բարձրացուցին զԲայանդուրն և բերին առ իշխանն. և

դիմամարտիլ նմա. այլ յորժամ նա խաղս առնէ երիվարաւն, դու ջանա հարկանել զնա նիզակուդ, թերևս կարասցես արկանել զնա յերկիր: Եւ ապա երկոքեանն զոյգ մտին յասպարէզն. և խանն եդ ընդ նոսա երեք Տաճիկ և ասէ. ո՞վ որ ի նոցանէ անկանի յերկիր, դուք անկերուք ի վերայ նորա և մի՛ թողուք սպանանել: Եւ Բահադուրն յառաջեաց քան զՇիուշն, և նա զկնի նորա եմուտ ի մէջ թամբին և նիզակն ողղեաց դէպ ի Բահադուրն, և էհար զգեղարդն ի փոքր Բահադուրին, ի ներքոյ պորտոյն թափանցոյց ի միւս կողմն ի մէջ մսոյն և մորթոյն էանց գեղարդն: Իսկ Բահադուրն ցանցեալ փթոյց զգեղարդն ի ձեռանէ Շիուշին և եդ ի վերայ ղաշի թամբին, և լախթովն էհար և եբեկ զնիզակաբունն և էհար յերկիր, և մնաց գեղարդն ի փորն: Եւ Շիուշին փախս առեալ գնայր. իսկ Բահադուրն մտրակեալ զերիվարն էհաս նմա չեչտակի և էհար լախթովն զպարանոցն նորա և կախեցաւ ի ձիոյն. և կամէր միւս անգամ հարկանել. և զի բուն լախթն շաղախեալ էր արեամբ, փրթաւ ի ձեռանէ նորա և էհան զթուրն, զի հարցէ զնա, և զի խելագարեալ էր Շիուշն՝ անկաւ յերկիր. և Բահադուրն եբեր զթուրն ի վերայ և

պատուէր ետ բժշկեաց բժշկել զնա. և սիրեաց քան զչափն աւելի: Հրամայեաց, զի առ վաղին հանցեն զՇիշուշն (98), և յօդ յօդ մանրեսցեն և արկցեն շանց: Եւ էր նորա եղբայր մի աբեղայ՝ Քրիստափոր անուն, որ էր խոստովանահայր թագուհւոյն, որ գնացեալ աղաչեաց նմա վասն փրկութեան եղբօր իւրոյ, և նա աղաչեաց առ այր իւր. և ոչ սպանին զնա: Սակայն զոր ինչ գոյր Շիշուշին, թէ ծառայք և թէ աղախինք, թէ գեղ և թէ այգի, թէ անասուն և այլ ամենայն զոր ինչ գոյր նորա՝ հրամայեաց գրով տալ բովանդակ Բայանդուրին. և արարին ըստ հրամանի նորա: Յայսմ վայրի Վիրք փոքր ինչ խոնարհեցան ի գոռոզութենէ իւրեանց: Հայք երգս նախատանաց յօրինեցին լեզուաւ նոցա և ամենայն տան յաւարտ ասէին. Ծիշուշ ծառի, Բայանդուր մօուտայ, *որ է՝ Շիշուշ փախի՛ր, Բայանդուրն գալիս է: Եւ յերգելն զայս մանկանց Հայոց, Վրացիքն ամօթ կրէին: Լուաւ զայս թագաւորն Սանի-Արաս, այսինքն փոքր Շահ-Արաս, և կոչեցեաց զԲայանդուրն, և ետ նմա իշխանութիւն մեծ Տփխիս քաղաքին. եղև այս ի ՌՂԹ թուին:*

հարաւ ընդ ձետ ձիոյն և էհար ի ընէ: Եւ Տաճիկն անկան ի վերա Շիուշին և ոչ թողին սպանանել զնա: Եւ Հայք և Տաճիկք խառն եղին և գնացեալ բարձրացուցին զԲահադուրն և բերին առ խանն. և պատուէր ետ բժշկաց բժշկել զնա. և սիրեաց քան զչափն աւելի: Հրամայեաց, զի առ վաղին հանցեն զՇիուշն և յօդ կտրատեսցեն և արկցեն շանց: Եւ էր նորա եղբայր մի աբեղայ՝ Քրիստափոր անուն, որ էր խաստովանահայր թագուհւոյն, որ գնացեալ աղաչեաց զնա վասն փրկութեան եղբօրն իւրոյ. և նա աղաչեաց զայր իւր և ոչ սպանին զնա: Սակայն զոր ինչ գոյր Շիուշին, թէ ծառայք, թէ աղախնեայք, թէ գիւղ, թէ այգի, թէ անասուն և թէ այլ ամենայն, զոր ինչ գոյր նորա, հրամայեաց գրով տալ բովանդակ զԲահադուրին. և արարին ընդ հրամանաց նորա: Եւ յայսմ վայրի Վիրք փոքր ինչ խոնարհեցան ի գոռոզութենէ իւրեանց: Քանզի Հայք զերգս նախատանաց յօրինեցին լեզուաւ նոցա և յամենայն տան աւարտն ասէին. Ծիուշ ծաղի՛, Բահադուր մօուտայ, *որ է՝ Շիուշ փախի՛ր, Բահադուրն գալիս է: Եւ երգելն զայս մանկանցն Հայոց Վրացիքն ամօթ կրէին: Լուեալ զայս թագաւորն Սանի Արաս, այսինքն փոքր Շահպաս,*

և կոչեաց զԲահանդուրն և ետ նմա իշխանութիւն մեծ Տփխիս քաղաքի: Եղև այս ՌՂԹ թուին:

Զայն արտագրեալ ի յիշեալ հարազատ պատմագրութեանց՝ կնքեցաք և ստորագրեցաք յամի տեառն 1813, ի մարտի 13, ի գերահռչակ Արարատեան աթոռոյ ամենայն Հայոց ի սուրբ կաթողիկէն էջմիածնին:

Անդամք բարեկարգութեան.

Կառավարիչ սուրբ ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի. Քրիստոսահիմն լուսազարդ Տաճարի՝ չնորհածաւալ Մայր Աթոռոյ սրբոյ էջմիածնի:

Անդրէաս Արքեպիսկոպոս *[կնիք՝ Ք. ծ. Անդրէաս վարդապետ (12)31].*

Յովհաննէս Արքեպիսկոպոս *[կնիք՝ Ք. ծ. Յով. վրդպ. 1220].*

Ալէքսիանոս Արքեպիսկոպոս *[կնիք՝ Ք. ծ. Ալեքսան վարդապետ 1233].*

Սահակ Արքեպիսկոպոս *[կնիք՝ Ք. ծ. Սահակ վրդ. 1241].*

Պիլիպպոս Արքեպիսկոպոս *[կնիք՝ Ք. ծ. Փիլ. վրդ. 1240].*

Ներսէս Արքեպիսկոպոս *[կնիք՝ Ք. ծ. Ներսէս վրդ. 1243].*

Եփրեմ վարդապետ *[կնիք՝ Ք. ծ. Եփր վրդ. 1251].*

Գրիգոր վարդապետ *[կնիք՝ Ք. ծ. Գրի վրդ. 1230].*

ՆԻՒԹԵՐ ՀԱՐԱՒԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ

Ա. ՆՈՎՐՈՍԻԱՅԻ ԵՎ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ (1)

Թուրքերի տիրապետութեան ժամանակ Բեսարաբիան, Մոլդովան, Վալախիան և այլ տեղերը կազմում էին միասին մի առանձին թեմ: Այդ ժամանակ Ռուսաստանի իշխանութեան տակ եղած միւս գաղութները միասին կազմում էին մի այլ թեմ, որի առաջնորդը մինչև 1800 թիւն էր Յովսէփ արքեպիս. Արղութեանը, որ ընտրուեց կաթողիկոս, բայց չօծուած վախճանուեց:

Երբ Բեսարաբիան միանում է Ռուսաստանին (1812 թ.), թեմական առաջնորդներն էին—Բեսարաբիայում՝ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեանը, իսկ Ռուսաստանում՝ Յովհաննէս արքեպիսկոպոս Ներսիսեանը: Մօտաւորապէս այդ ժամանակ Ռուսաստանի ընդարձակ թեմը երկուսի բաժանուեց, առաջին մասը՝ այն է Նախիջևանը, Նովորոսիան, Խրիմը, ամբողջ Հարաւ արևմուտքը և Եւրոպական Ռուսաստանի արևմտեան կողմը ընկաւ Բեսարաբիային և կազմուեց Նախիջևան-Բեսարաբիայի *նոր թեմը, Քիշնևում ունենալով առաջնորդական աթոռը, իսկ երկրորդ մասը—այն է՝ Հարաւ արևելեան և Եւրոպական Ռուսաստանի արևելեան մասը, Սիբիրը և Միջին-Ասիական երկրները կազմեցին այլ թեմ, այդ է Աստրախանինը, համանուն քաղաքում ունենալով առաջնորդական աթոռը:*

Ռուսաստանի տիրապետութեան տակ ընկնելուց յետոյ Բեսաբաբիայի հայ առաջնորդներն ու կառավարիչներն են.

1. Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարեան *1806–1627 թ.թ. մինչև իւր մահը, որ տեղի ունեցաւ Բուքովինայի Սուչավա քաղաքում և թաղուեց Հաճկատար Ս. Աստուածածնի վանքում: Նրա մահից յետոյ թեմը ժամանակաւորապէս կառավարում է Աստրախանի առաջնորդ Յովհաննէս արքեպ. Ներսիսեանը (Գառնակերեանց):*

2. Ներսէս արքեպիսկոպոս Շահազիզեան-Կամսարական *1828–1845 թ.թ.: 1843 թուին ընտրուեց ամենայն Հայոց կաթողիկոս և 1846 թուին օծուեց՝ կոչուելով Ներսէս Ե.: Տէր Ներսէս կաթողիկոսը, որ պատմութեան մէջ յայտնի է Ներսէս Աշտարակեցի անուամբ, է*

ամենահամբաւաւոր և ժողովրդից սիրուած կաթողիկոսներից մէկը: Նա Թիֆլիզում հիմնել է Ներսիսեան հայ հոգևոր դպրոցը, որ ժամանակին կրթական մեծ դեր է կատարել, որպէս Հայոց մտաւոր և բարոյական կեանքի հոսանքի միջավայր: Ներսէս Ե. 1857 թուին վախճանուեց Թիֆլիզում և թաղուեց Էջմիածնում:

Ներսէսի Էջմիածին գնալով թեմը ժամանակաւորապէս կառավարում էին կոնսիստորիայի անդամները:

3. Մատթէոս արքեպիսկոպոս Վեհապետեան *1847–1857 թ.թ. մինչև Աստրախանի առաջնորդ նշանակուելը: Նա 1866 թուին վախճանուեց Աստրախանում և այնտեղ էլ թաղուեց:*

4. Գաբրիէլ վարդապետ Այվազեան (Այվազովսկի), *Բարձրագոյն հաստատութեամբ կառավարիչ եղաւ 1857–1866 թ.թ.: Նա հռչակաւոր ծովանկար Յ. Այվազովսկու եղբայրն էր և հայ եկեղեցու ամենաշնորհալի և ականաւոր հոգևոր պաշտօնեաներից մէկը, դուրս էր եկել Վենետիկի Մխիթարեան միաբանութիւնից, հիմնադիր Թէոդոսիայի Խալիպեան միջնակարգ դպրոցի: Յետոյ, եպիսկոպոսական աստիճանում, Ս. Էջմիածնի Սինոդի անդամ և ճեմարանի տեսուչ եղաւ. այնուհետև արքեպիսկոպոսի կոչմամբ Թիֆլիզի թեմի առաջնորդ: Վախճանուեց Թիֆլիզում և այնտեղ էլ վանքի աւագ եկեղեցու բակում թաղուեց:*

5. Եղիազար արքեպիսկոպոս Տէր Կարապետեան. *Բարձրագոյն հաստատութեամբ կառավարեց թեմը 1865–1867 թ.թ. վախճանուեց և Թաղուեց Էջմիածնում: Նրանից յետոյ թեմը ժամանակաւորապէս կառավարեց Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեանը:*

6. Գէորգ արքեպիսկոպոս Տէր Մկրտչեան *1868–1871 թ.թ., վախճանուեց և թաղուեց Քիշնևի առաջնորդական եկեղեցու գաւթում: Նրա մահից յետոյ 1871–1877 թ.թ. թեմը չունեցաւ առաջնորդ և ժամանակաւոր կերպով կառավարում էին իրար յաջորդելով Գէորգ վարդապետ Իշխան-Աբամէլիքեան և Սարգիս վարդապետ Տէր Գասպարեանց:*

7. Ստեփան վարդապետ Մխիթարեան *բարձրագոյն հաստատութեամբ կառավարեց թեմը 1877–1879 թ.թ.:*

8. Մակար արքեպիսկոպոս Տէր Պետրոսեան *1878–1885 թ.թ. լինելով նաև Սինոդի անդամ (1883 թուից): 1885 թուին ընտրուեց ամենայն Հայոց կաթողիկոսութեան համար երկրորդ թեկնածու և հաստատուեց կաթողիկոս «ըստ կամաց հոգևորականութեան», օծուեց 1885 թուին Մակար Ա. կոչմամբ. վախճանուեց և թաղուեց Ս. Էջմիածնում 1891 թուին:*

Տէր Մակարի Էջմիածին մեկնելով թեմը ժամանակաւոր կերպով կառավարւում էր կոնսիստորիայի անդամների ձեռքով:

9. Գրիգոր արքեպիսկոպոս Սագինեան *1887–1889 թ.թ., վախճանուեց և թաղուեց Քիշնևի առաջնորդական եկեղեցու գաւթում: Նրա մահից յետոյ թեմը ժամանակաւոր կերպով կառավարեց Համազասպ վարդապետը, որ այժմ Էջմիածնումն է ապրում:*

10. Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան *բարձրագոյն հաստատուած կառավարիչ թեմի. 1891–1894: Յետոյ` Էջմիածնի Սինօդի անդամ, վախճանուեց և թաղուեց Էջմիածնում*[1]*:*

11. Յուսիկ վարդապետ Մովսիսեան. *բարձրագոյն հաստատուած կառավարիչ թեմի 1884–1897 (ուղիղ 1895–1898), յետոյ կարգուեց Էջմիածնի Սինօդի անդամ` եպիսկոպոսի և արքեպիսկոպոսի աստիճանում` Երևանի թեմի կառավարիչ, այժմ Էջմիածնի Սինօդի անդամ է (երկրորդ անգամ):*

12. Ներսէս արքեպիսկոպոս Խուդավերդեան *թեմի այժմեան առաջնորդ. Երևանի թեմի կառավարիչն էր մինչև 1899 թիւը, երբ տեղափոխուեց Քիշնևի թեմը:*

Բ. ԲՈՒԴԱՂԻ ՀԱՅԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՔԱՐԸ

Ակքիրմանի Հայոց Երեմիա քահանայ Ապրիլեանը 1910 թ. ամառը Բեսարաբիայի Բուղազ աւան այցելելիս` մի գերմանացու այգում տեսել է մի քար հայերէն արձանագրութեամբ, որ վերաբերում է ԺԸ. դարին:

Այդ արձանագրութեան քարը սպիտակ մարմար է մօտ մի խորանարդ արշին մեծութեամբ: Քարի երեսին նկատւում են զանազան տեսակ քանդականկարներ, իսկ երկու միմեանց հակառակ կողերին` հայերէն գլխատառերով այս արձանագրութիւնն է.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՔԻԼԵՑԻ ՏԻՐԱՑՈՒ ՄԵԼՔՈՆԻ ԴՈՒՍՏՐ ԵՂԻՍԱԲԷԹԻ, ՈՐ ՓՈԽԵՑԱՒ ԹՎԻՆ` 1214 ԱՊՐԻԼԻ 7-ԻՆ:

Քիլի գիւղաքաղաքը գտնւում է Ակքիրմանի և Իզմայիլի գաւառների սահմանում Դոնի Քիլիեան բազուկի մօտ: Քիլին ամենևին առնչութիւն չունի Փոքր-Ասիայի Կիլիկիայի հետ, ուր հայերը

[1] Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանը վերադառնալով Էջմիածին, կարգուեց իւր ցանկութեան համեմատ Ագուլիսի Ս. Թովմայի վանքի վանահայր, ուր եւ վախճանուեց ու թաղուեց 1897 թուին: – Մենք նոյնութեամբ առաջ բերելով պ. Մելիքսէթ-Բէկովի առաջնորդների ցանկը, հարկ համարեցինք թեթեւ վրիպումները ուղղել: ***Յ. Ա. Ե.***

երբեմն ունէին առանձին Կիլիկեան թագաւորութիւնը, ուր այժմ գտնվում է Կիլիկիայի կաթուղիկոսութեան աթոռը Սիս քաղաքում:

Այս արձանագրութիւնը ուշադրության արժանի է տիրացու Մելքոնի Քիլեցի *մակդիրով: Եթէ Քիլիում եկեղեցի չլինէր, չէր էլ կարող քիլեցի տիրացու լինել: Հետևաբար, գոնէ արձանագրութեան ցոյց տուած 1765 թուին պէտք է լինէր Քիլիում հայ եկեղեցի ծխերով: Եւ յիրաւի, թուրքերի տիրապետութեան ժամանակ Քիլիում կային հայ, հրեայ, մոլդաւան բնակիչներ, բայց Քիլին Ռուսաստանի հետ միացնելուց յետոյ բնակիչների մեծագոյն մասը բաղկացաւ վելիկօրօսներից ու մալօրօսներից: Հայ կաթոլիկ Մինաս վարդապետ Բժշկեանը, որ այցելել է Քիլիին ԺԹ. դարի սկզբին, ցոյց է տալիս` որ—«առաջ այստեղ եղել է շատ հայ, նրանք ունեցել են Ս. Աստուածածնի անունով եկեղեցի, բայց շատերը տեղափոխուել են Գրիգորիոպոլ», որ ինչպէս յայտնի է, հիմնուել է 1792 թուին, Ակքիրմանի, Իզմայիլի, Քիլիի և Կաուշանի հայ գաղթականների ձեռքով: Բացի այս Քիլիի պրաւօսլաւ աւագ եկեղեցում մինչև այս ժամանակ պահպանւում էին մի քանի հայ արձանագրութիւններ, փորագրուած քարէ սալերի վերայ զանազան թուականներով (ԺԷ և ԺԸ դարեր), որոնց մասին յիշում է Գաբրիէլ վարդապետ Այվազովսկին, Խ. Քիւչուկ-Յովհաննիսեանը: Այս ամենից հետևում է, որ, անկասկած, Քիլիում եղել է հայ եկեղեցի, որը բացիթողի է եղել հայերի գաղթելովը Եկատերինէ Մեծի սկզբնաւորած Գրիգորիոպոլ քաղաքը: Ըստ այսմ, պարզ է, որ Քիլիի հայ եկեղեցին պետքէ, որ 1792 թուից յետոյ կործանուած ու անհետացած լինի:*

Գ. ՕԴԵՍԱՅԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ կաթոլիկ վարդապետ Մինաս Բժշկեանը, որ ԺԹ. դարի սկզբին այցելել է Օդեսային, այսպէս է նկարագրում այնտեղի հայերի դրութիւնը. «Հայերը ապրում են քաղաքի հարաւային կողմում, և 30 ընտանիքից աւելի են. գաղթել են Գրիգորիոպոլից. չունեն առանձին եկեղեցի, և ժամերգութիւնը կատարում են տներում»: Ուրեմն Օդեսայի հայք ԺԹ. դարի սկզբում չունէին եկեղեցի: Օդեսայի եկեղեցու աւագ քահանայ Գրիգոր Խորսանջեանը Մշակում 1910 թ. № 26, ասում է. «Այժմեան եկեղեցին առաջ աղօթատուն էր, որը հետզհետէ մեծանալով, յատկապէս մայեօր Նացվալովի 1880 թ. 8000 ռուբլի նուիրաբերութեամբ ստացաւ այն տեսքը, որ այժմ ունի»:

Եկեղեցին նուիրուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի անուան և գտնւում է Բեսարաբիայի Հայ թեմում:

Արևմտեան դրան բարաւորի վերայ ներսի կողմից կայ հետևյալ արձանագրութիւնը. «Օգնականութեամբ Աստուծոյ, կառուցաւ զանգակատունս Օդեսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյս ճայոց արդեամբք գերազնիւ ճայազգի մայօր Թոմայի Նացվալեանցի, յամի Տեառն 1884 և յազգական 1333»։

Օդեսայի Հայ եկեղեցին իւր հիմնարկութեան օրից սկսած ունեցել է հետևյալ քահանաները.

1. Յովհաննէս աւագ քհնյ. Թաթևոսեան, վախճանուած 1908 թուի օգոստոսին.

2. Գրիգոր աւագ քհնյ. Խորասանջեանց, վախճանուած 1910 թ. նոյեմբերին, որից յետոյ ժամանակաւորապէս պաշտոնավարեց Հին-Խրիմի քահանայ Հ. Քեչիչեանը:

3. Գրիգոր (ուղիղ Յովհաննէս) քահանայ Ջուլֆաեանը ընտրուեց ծխական ժողովով և հաստատուեց թեմական առաջնորդից ու կառավարութիւնից այս 1911 թուին:

Եկեղեցու երեսփոխանը 25 տարուայ ընթացքում և աւելի է Ս. Ասվադուրովը (Միրական Աստուածատրեանց):

Եկեղեցու մօտ կայ մի դասեան եկեղ.-ծխ. դպրոց և հայ աղքատների հոգաբարձութիւն:

Դ. ՕԴԵՍՍԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԻՑ...[2]

Վասիլի Ստեփանովիչ Պոպովը միշտ էլ առանձին բարեացակամ վերաբերմունք է ունեցել դէպի հայերը և շատ անգամ է Հայոց գործերի համար միջնորդ հանդիսացել Եկատարինէ Մեծի առաջ: Այդ բանում մենք համոզւում ենք այն բազմաթիւ գրաւոր տուեալներով, որոնք պահպանուած են մինչև մեր ժամանակը: Վ. Ս. Պոպովի ջերմ վերաբերմունքը դէպի հայերը երևում է Եկատերինոսլավի նահանգապետ Վ. Վ. Կոխովսկու մի նամակից առ Վասիլի Ստեփանովիչը, որի բովանդակութիւնն է. «Ձերդ գերազանցութեան պա-

[2] Այս գլխում պ. Լ. Մ. Մելիքսէթ-Բէկովը տալիս է համառօտ տեղեկութիւն Եկատերինա Բ. Կայսրուհու գործավար, գաղտնի խորհրդական (Тайный советник) Վասիլիյ Ստեփանովիչ Պոպովի մասին, որը մեծ դեր է խաղացել Ռուսաստանի հարաւային կողման հայերի պատմութեան մէջ:–Յ.Ա.Ե.

տուէրը հայերի վերաբերութեամբ ես կը կատարեմ ճշդութեամբ: Ես ոչ ինչ չեմ խնայի ցոյց տալու նրանց ամեն տեսակ կարևոր օգնութիւն, նրանց ցանկութիւններին բաւականութիւն տալով համաձայն պետական շահերի: Համարձակւում եմ խնդրել, որ նրանց մասին հաճէիք հանգիստ լինել: Երբ այն կողմում լինեմ, նրանք շնորհակալութիւն կը մատուցանեն Ձեզ, նրանց մասին Ձեր Գերազանցութեան հոգացողութեան համար»:

Բացի այս, Վ. Ս. Պոպովի բարեացակամութիւնը առ հայերն նկատւում է և այն երկու փաստաթղթերի մէջ, որոնց պատճէնները պահւում են Օդեսայի պատմութեան և հնութեան Կայսերական ընկերութեան ձեռագրերի մատենադարանի հաւաքածոյում infolio II 29, 63 v. 310–312 v.:

Այդ փաստաթղթերը երկու խնդիրներ են, որ Նոր-Նախիջևանի հայերը մատուցել են Վ. Ս. Պոպովին: Առաջին թուղթը աղերսագրի բնոյթ ունի, որով Նախիջևանի հայերը, ցոյց տալով իրանց կարիքները, աղերսում են բաւարարել նրանց: Երկրորդ փաստաթուղթը ուղերձի բնոյթ ունի, որով նոյն հայերը յայտնում են Վ. Ս. Պոպովին շնորհակալութիւն նրա հոգածութեան և հովանաւորութեան համար, և հայցում են նրա միջնորդութիւնը Բարձրագոյն իշխանութեան առաջ հայերի մասին[3]:

1.ա

«Ձերդ Գերազանցութիւն, ողորմած Տէր, Վասիլի Ստեփանովիչ,

«Ձերդ Գերազանցութեան ժողովուրդը, որ հեծում է Թշուառ-Նախիջևանի հասարակութեան լծի տակ, անընդհատ արտայայտելով իւր սրտագին կարեկցութեան զգացմունքը աղքատներին բաւարարելու և յանձնառութեան ... չէր ձեւլու առիթով նրա վերայ ծանրացած պետական հարկի մասին, ...

[3] Այս նախաբանից յետոյ պ. Մելիքսէթ-Բէկով դնում է յիշյալ փաստաթղթերը իրանց ուղղագրութեամբ, և որ մենք հայ թարգմանութեամբ մէջ ենք բերում–Յ.Ա.Ե.:

*ներ, իւր ջանքերով Բարձրագոյն Թագուհու աջից ձեռք բերելու,
որով լցնում էր բոլոր սրտերը աներկբայ յոյս, բայց երբ նրա կեան-
քի ճրագը հանգաւ, մենք էլ մնացինք մեր տառապանքի խաւար
վայրում, ուր այժմ մեր միակ մխիթարութիւնը Ձեր մարդասէր
սիրտն է, որ բորբոքւում է ժողովրդի բարօրութեամբ և վառւում է
նրա բարիքի հոգածութեամբ, որով բարեհաճեցիք խոստանալ մեզ
ողորմածաբար ներկայացնել և ձեռք բերել մեր այն խնդիրների վե-
րաբերութեամբ ողորմած որոշումներ, որ մինչև այսօր արժանի չլի-
նելով ունենալ, յիշեցնում ենք: Մեր խնդիրը Նորին Կայսերական
Մեծութեան ամենահպատակօրէն մատուցանելու համար ուղեւո-
րում է Հայոց Յովսէփ սրբազան արքեպիսկոպոսը մեր ընտրուած և
լիազօրուած պատգամաւոր Պրիմեր Մայեօր և նշանակիր* (кавалер)
*Աբրահամովի և Կարապետ Կարակաշեանի հետ, ապաւինում եմ
Ձեզ մարդկութեան իսկական բարերար, բոլոր հասարակութեան
կողմից խոնարհագոյն խնդրով, ողորմած աչքով նայեցէք այդ
խնդրին, գործ դրէք Ձեր ջանքը, որ այս անբաղդներին և տրտմու-
թեան խաւարի մէջ նստողներին և թշուառութիւններից չազա-
տուածներին լուսաւորի Միապետի բարեհաճութեան պայծառ
ճառագայթը, ազատելով մեզ այդպիսի պահանջներից և գեղանի
իւր մայրական գթառատութիւնը մեր միւս խնդիրների վերաբերու-
թեամբ. Ձեր Գերազանցութեան այս բարերարութիւնը կը բորբոքէր
բոլորի սրտերը յաւիտեանս լինել շնորհապարտ Ձեր բարերարու-
թեան համար, յետ այսօրիկ լինելով խորին անձնանուիրութեամբ:*

1.բ

*Ողորմած Տէր, Վասիլիյ Ստեփանովիչ, Մեր Նախիջևանի հասա-
րակութիւնը իմացաւ մեր պատգամաւոր Պրիմէր Մայեօր ու նշանա-
կիր Իվան Աբրահամովից մեր հասարակական գործերի համար Ձեր
ողորմած ջանքերը. մատուցանում ենք մեր հանուր և խոնարհագոյն
շնորհակալութիւնը ձեր ջանքերի համար: Բայց ինչպէս այժմ մեր
գործերը մօտենում են վախճանին, և մնում են, միայն որ Ձերդ
Գերազանցութիւնը ներկայացնի մեր մայր Ամենաօգոստափառ թա-
գուհու ամենագթած քննութեանը: Եւ դրա համար էլ ամենախո-
նարհաբար խնդրում ենք ձեր հովանաւորութեամբ ձեռք բերել մեր
բոլոր խնդիրների մասին Նորին Կայսերական Մեծութեան ողորմած
բարեհաճութիւնները: Այդ բարեհաճութիւնները կը լինեն ձեր յա-
ւիտենական յիշատակը մեր բոլոր հասարակութեան համար և պար-*

*տաւոր կը լինենք Ամենաբարձրեալի գոհութեան սեղանի առաջ
աղօթել Ձեր Գերազանցութեան յարատև առողջութեան համար:
Մեր կարիքների մասին այստեղ համարձակելով մանրամասնօրէն
գրել, յանձնարարեցինք Պրիմէր-Մայեօր և նշանակիր Աբրամովին
ներկայացնելու Ձերդ Գերազանցութեանը, յանուն մեր մայր Նորին
Կայսերական Մեծութեան, մեր խնդրի հետ: Որը որպէս այստեղի
բոլոր հասարակութեան ընդհանուր ձայն կարժանանայ Ձեր բարձր
ուշադրութեանը և այդպէս կը բաղդաւորի մեզ իւր ողորմած միջ-
նորդութեամբ, բոլորս ամենախոնարհաբար խնդրում ենք, ենթար-
կելով ընդ սմին Ձեր Գերազանցութեան ողորմած հովանաւորու-
թեանը այդ շտապ օֆիցերի անդուլ ջանքերը, որ հասարակութեան
օգտին գործադրել է 15 տարի շարունակ՝ մեր իշխանաւորը լինելով.
նրա բարի կարգադրութիւնները և եռանդուն ծառայութիւնը, յի-
րաւի, արժանի են վարձատրութեան, որի մասին մեր բոլոր հասա-
րակութիւնը իրան պարտաւոր է գտնում մատուցանելու Ձերդ
Գերազանցութեան այս ամենախոնարհ խնդիրը:*

Ազնուականներից. *Բոգդան Լազարեւ, Ստեփան Զալօխուչեւ, Նի-
կիտա Պետրով, Մարտին Իվանով:* Քաղաքացիներից. *Մանուիլա Իվա-
նով, Կարապետ Իվանեսով, Դանիլա Խօջայեւ. Աւագ (ազգանունը
անընթեռնելի):* Վաճառականներ. *Յարութիւն Պօպով, Գասպար Մար-
գարով, Խաչիրես Պօղոսով, Օվանէս Կոպետլիեւ:* Մեշչաններից. *Խա-
չիկ Պետրոսով, Ղազար Դերկիչկարով, Խաչիրես Պետրոսով, Կիրա-
կոս Արութիւնով:* Արհեստաւորներից. *Բաբի Պարսեղով, Ստեփան
Սարգիսով, Ակու-Ակսենտով, Մագարտիչ Ասվատուրով:*

26 յուլիսի 1793 ամի. Նախիջևան քաղաք:

2.

ՀԱՅԵՐԻ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ (1779 թ.) ԳՈՐԾԸ[4]

Այս փաստաթղթերը Բախմուտի գաւառային դիւանատան գրութիւններն են Ռոստովի ամրոցի աւագ–ամրոցապետ (обер–комендант) *Գեներալ Մայեօր Սիմեօն Գրիգորեւիչ Գուրիեւին գրած,*

[4] Օդեսայի Պատմութեան և հնութեան Կայսերական ընկերութեան ձեռագրերի մէջ, ասում է պ. Մելիքսէթ-Բեկովը, երեք փաստաթղթերի պատճէններ էլ կան, որոնք վերաբերում են հայերի 1779 թուի գաղթականութեան և զետեղուած են Ռոստովեան Ս. Դիմիտրու ամրոցի արխիվի "Архив крепости Св. Димитрия Ростовского" հաւաքածոյի մէջ, in folio II. 28. 62. № 61. V. 197–199. –Յ.Ա.Ե.:

Եկատերինոսլավի վերայով Բախմուտ հասած գաղթական հայերին դէպի Ռոստով ուղարկելիս, այնտեղ բնակեցնելու առիթով:

Առաջին յայտարարութիւն փաստաթուղթը գրուած է 1779 թուի հոկտեմբերի 3-ին № 4044. Եկատերինոսլավի հայերի գաղթի առիթով, որ կատարւում էր Ագարխ եպիսկոպոսի և Սիմէօն վարդապետի առաջնորդութեամբ, և գաղթականների թիւն է՝ արական և իգական 603 հոգի.

Երկրորդը գրուած է 1779 թ. հոկտեմբերի 15-ին № 4072, Քէֆէի (Թէոդոսիա) հայերի գաղթի առիթով, որ կատարւում է Խաչատուր Աբրամովի առաջնորդութեամբ, և նրանց թիւն է արական և իգական 651 հոգի.

Երրորդը գրուած է 1779 թ. հոկտեմբերի նոյնպէս 15-ին. № 4073. Կարասու–Բազարի հայերի գաղթի առիթով, որ կատարւում էր Մելեքսէթ Բեղրոսովի առաջնորդութեամբ, և նրանց թիւն էր 1892 հոգի: Բոլոր երեք քաղաքների գաղթականների թիւը միասին՝ 3146 մարդ (2):

ԳԵՎՈՐԳ ՄԵԼՔԻՍԵԴԵԿՅԱՆ ԽՈՒԲՈՎ

(ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՆՈԹԵՐ)

Հայ գրականության պատմության դասագրքերում և դասըն-թացներում՝ նախաաբովյանական շրջանի, ասել է՝ XVIII դարու վերջերի և XIX-ի սկզբների գրողների և պատմագիրների շրջանակը սովորաբար սահմանափակվում է երկու-երեք անունների ու նրանց գործունեության-ստեղծագործության հիշատակությամբ, որոնք են՝ Հարություն Ալամդարյան (1796–1834), Մեսրոպ Թաղիադյան (1803–1858) և Արսեն Բագրատունի (1790–1866):

Նախաաբովյանական հայ գրականության մասին ճիշտ գաղափար կազմելու համար ամենից առաջ անհրաժեշտ է երևան հանել բոլոր նրանց, որոնք այս կամ այն պատճառով և այս կամ այն չափով կամ լիովին մոռացության են մատնվել և, հետևապես, գրականության պատմությունից դուրս մնացել:

Ահա այդպիսի դեմքերից մեկը, որը մոռացության է մատնվել, Գևորգ Մելքիսեդեկյան Խուբովն է –XIX դարու սկզբների պատմագիր և հայրենասեր-բանաստեղծը, միաժամանակ և մանկավարժ և քաղաքական գործիչը, որը որոշ դրական դեր է խաղացել Հայաստանի՝ Վրաստանի և Ռուսաստանի հետ մերձեցման գործում «Հայկական մարզ» ստեղծելու նախօրյակին և որն իր համեստ լուման է մտցրել մեր պատմագրության և գեղարվեստական գրականության (պոեզիայի) գանձարանում:

* * *

Հայոց պատմության և հայ պատմագրության մասնագետներին լավ ծանոթ պիտի լինի Գևորգ կամ Եգոր Խուբովը, իբրև հեղինակ «1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» կոչվող գրքույկի, որը լույս է տեսել Հովսեփ սարկավագ Հովհաննիսյանի ռուսերեն թարգմանությամբ Պետերբուրգում 1811 թ. և որի հայերեն բնագիրը դեռևս հայտնաբերված չէ (1): Ահա այս «Նկարագրությունն» է, որ անցողակի հիշատակում են իրենց գործերում Գյուտ ա. ք. Աղանյանը (Դիվան հայոց պատմության, V, Թիֆլիս 1902, էջ 656) և Աբգար Ռ. Հովհաննիսյանը (Иосиф Эмин, Ереван, 1945, стр. 172-173).

Նույն Գևորգ Խուբովի մյուս գործը՝ դա նրա «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից» ձեռագիր տետրն է՝ 1825 թ. Ղզլարում գրված, որը պահվում ՝ Հայաստանի Մատենադարանում՝ № 487/491-ի ներքո և նշված է Կարենյան ցուցակի մեջ (Ցուցակ ձեռագիր մատենից Գրադարանին սրբոյ աթոռոյն Էջմիածնի, Թիֆլիս, 1863, էջ 30): Այս «Երգարան»-ից մի հատված (№ 27)՝ «Ողբ ի վրդովմանն Հայաստանի ողբալով ողբեալ» տպագրվել է «Արարատ» ամսագրի 1868 թ. № 8-ում (էջ 115)[1], որը և նշված է Արսեն վ. Ղազիկյանի մոտ «Հայկական նոր մատենախոսութիւն և հանրագիտարան հայ կեանքի» (I, Վենետիկ, 1909–1912, էջ 1180): Այդ նույն երգը հետագայում «Արարատ»-ից արտատպվել է և իբրև «Հավելված երրորդ» կցվել Աբգար Գուլամիրյանի հրատարակած Դավիթ բեգի պատմության (Դավիթ-բէգ. Ընտիր պատմութիւն Դավիթ-բէգին և պատերազմաց Հայոցն Խափանու, Վաղարշապատ, 1871, էջ 87–88):

Գևորգ Խուբովի այս երկու երկասիրությունը, մեկը տպված ռուսերեն թարգմանությամբ, մյուսը՝ անտիպ, ի նկատի ունի Գյուտ
ա. ք. Աղանյանը «Դիվան հայոց պատմության» հրատարակության
համապատասխան հատորների առաջաբաններում, ուր անցողակի
կերպով խոսվում է Խուբովի և, մասնավորապես, նրա ծագման մա-
սին (հ. III, 1894, էջ խգ, հ. IX, 1902, էջ 656): Սակայն մեզ համար
մնում է անորոշ՝ արդյոք Գ. Խուբովի ո՞ր երկասիրություններն ի
նկատի ունի նույն Աղանյանը, երբ նրան վերագրում է «և այլ քանի
մի աշխատություններ, որոնք մնում են տակավին անտիպ» (հ. IX,
էջ 656): Գուցե Աղանյանը ի նկատի ունի «1778–1809 թ.թ. Հայաս-
տանի արժանահիշատակ անցքերի նկարագրության» մեջ տեղ
գտած Գ. Խուբովի խոսքերը. "Я с беспокойством оставляю своему
потомству слабые, но ревностные свои труды" (стр.130).

1945 թ. Վրաստանի Պատմական Կենտրոնական պետական
արխիվը մեր աջակցությամբ ձեռք բերեց մի ձեռագիր դավթար,
որը ներկայացնում է իրենից նույն Գ. Խուբովի ստվար աշխատու-

[1] Հրատարակությանը կցված է այսպիսի ծանոթություն. «Սոյն Խուբով Գէորգ իշխան, որ Սիմէօն կաթողիկոսի եղբօրորդին է, «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից» անուամբ մի գրքոյկ ունի, որ կը պարունակէ (ԽԴ) քառասուն և չորս հատ ներբող և ողբերգութիւնք և այլն, զորս յօրինել է ի զանազան քաղաքս, որք ըստ բաւականին սրտաշարժ լինելով, մերթ ընդ մերթ Ամսագրոյս միջոցաւ ի լոյս կընծայենք զայնս ի վաելս բանասիրաց: Նաև յիշեալ գրքոյկի հեղինակին զեկուցումն ևս չեմք զլանալ հաղորդիլ»: Սակայն, չնայած այսպիսի խոստման, մյուս նմուշները սույն Երգարանից «Արարատ»-ի էջերում այլևս լույս չեն տեսել:

թյունը հետևյալ վերնագրով. «Գաւազանագիրք, որ է Ցուցակ
ազգաբանութեան թագաւորացն Հայոց և նախարարաց և բոլոր
պայազատ սպայպետաց և այլոց» (ցուցակագրված է հին վավերագ-
րերի հավաքածուների բաժին № 705-ի ներքո): Ձեռագիրը այնքան
հետաքրքիր հանդիսացավ (2), որ նրա մասին նույնիսկ նախնական
հաղորդագրության ձևով տեղեկություն տրվեց մամուլի էջերում
("Заря Востока", 1945 г. 1 февраля, № 22):

Ապա՝ հետաքրքրվելով Գ. Խուբովի անձնավորությամբ՝ (3)
մենք անձամբ պրպտումներ կատարեցինք հիշյալ արխիվի այլևայլ
ֆոնդերում, որի հետևանքով հայտնագործվեցին մի շարք արխիվա-
յին գործեր նրա և նրա ազգատոհմի մասին[2]:

Այս գործերից մեկում (№ 8802/226) մուծված է ամենայն հայոց
Դանիել կաթողիկոսի անունից Էջմիածնի 6 արքեպիսկոպոսների, 2
եպիսկոպոսի և 4 աշխարհականի ստորագրությամբ 1808 թ. հունի-
սի 30-ին տրված կոնդակը Խուբովի ազգաբանության մասին, որը
մենք ստորև ամբողջությամբ հրապարակում ենք:

Այսպիսով, այժմ մեր տրամադրության տակ են՝ մի կողմից Գ.
Խուբովի զույգ պատմական գործերը, այն է «1778–1809 թ.թ. Հա-
յաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը», որը
ռուսերեն թարգմանությամբ է հրատարակված, և «Գավազանա-
գիրքը» բանաստեղծությունով հանդերձ, որը դեռևս ձեռագիր վի-
ճակումն է գտնվում. մյուս կողմից՝ նրա ձեռագիր «Երգարան»-ը,
որտեղից առայժմ լոկ մի երգ (ողբ) է հրատարակված, և վերջապես՝
6-ի չափ արխիվային գործեր «Վրաստանի Գերագույն կառավա-
րության» և «Վրաստանի կառավարչապետի դիվանատան» արխի-

[2] ա. Ֆոնդ 2/8 (Վրաստանի Կառավարչապետի դիվանատան) գործ № 8802/262–"О сочинении грузинского дворянина князя Хубова, высочайшему имени посвященном" (1810).

բ. Ֆոնդ 2/8 (նույն դիվանատան) գործ № 8802/266–"По просьбе грузинского дворянина Егора Хубова о вспомоществовании ему в перемещении из Тифлиса в С. -Петергбург семейства его " (1810 г.).

գ. Ֆոնդ 1/2 (Վրաստանի Գերագույն կառավարության) գործ № 226 – "По предложению Грузинского дворянского депутатского собрания о признании в дворянком достоинстве Карпа Хубова" (1819 г.).

դ. Ֆոնդ 1/2 (նույն կառավարության) գործ № 280 –"По представлению исполнительной экспедиции о дворянине Карапете Хубове, отбывающемся от платежа подати по гор. Тифлису" " (1820 г.).

ե. Ֆոնդ 2/8 (Վրաստանի Կառավարչապետի դիվանատան) գործ № 1341 –"Об утверждении в дворянском достоинстве армянина Карпа Хубова" (1824 г.).

զ. Ֆոնդ 2/8 (նույն դիվանատան) գործ № 2089 –"По прошению армянского князя российского дворянина Георгия Мельхиседекова Хубова об отводе ему высочайше пожалованной земли" (1829г.).

վային ֆոնդերից, որոնք այժմ Վրաստանի Պատմական Կենտրոնական պետական արխիվում» են կենտրոնացած:

* * *

Գևորգ Խուբովի կենսագրությունը կազմելու համար սկզբնաղբյուրներն են, նախ և առաջ, նրա «1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը». որը պարունակում է ինքնակենսագրական բազմաթիվ տվյալներ, ապա, չհաշված նրա մյուս երկերը՝ Վրաստանի Պատմական Կենտրոնական պետական Արխիվում պահվող արխիվային գործերը:

Այս սկզբնաղբյուրները միաբերան վկայում են, որ Գևորգ Խուբովը Սիմեոն կաթողիկոսի եղբոր Մելքիսեդեկի որդին է եղել. մի ժամանակ տիրացություն է արել, ուստի և «տիրացու» է կոչվել, տեղ-տեղ անվանելով իրեն Պռոշյանց կամ Խաղբակյանց, երբեմն նույնիսկ Արշակունի և այլն, քանի որ ինքը իրեն Խաղբակյան-Պռոշյան ազգատոհմից սերված է համարել:

Թե որքան արդյոք ճիշտ է Խուբովների՝ Խաղբակյան–Պռոշյաններից սերումը, այս խնդրին մենք ավելորդ ենք գտնում ծանրանալ:

Գյուտ Աղանյանը 1894 թվին մատնանշում էր վերին աստիճանի հետաքրքրիր հանգամանքի վրա՝ «Խուբով» ազգանվան ծագման շուրջը: «Դարու (XIX) սկզբներին Արարատյան դաշտի տիրապետության համար մղած ռուս-պարսկական պատերազմից հետ՝ Սիմեոն կաթողիկոսի եղբայր Մելքիսեդեկի որդին Գևորգը, որ իրան Պռոշյանց էր անվանում, գնում է Պետերբուրգ, ուր մտնում է արքունի ծառայության. ռուսները նորա ազգանունը թարգմանում են ռուսերեն և Պռոշյանը դառնում է Губ-ов (Գուբ-ով, պռոշ՝ շուրթն=ռուսերեն թարգմանվում է губ[3]), որ հետեզհետե աղավաղվելով դառնում է Ղուբով, ապա Խուբ=ով, ըստ հայկական վերջավորության՝ Խուբ-եանց» (Դիվան Հայոց պատմության, III, 1894, էջ խդ): Ապա Աղանյանն ավելացնում էր. Մեր ձեռքին է այժմ Խուբյանց ազգի մի անդամ Աղաֆոնի պետական աստիճան ստանալու [համար] մի տված հրովարտակ և Հովհաննես Ը. Կարբեցի կաթողիկոսի 1832 թ. հունիսի 10-ին «Ազնիւ աղայ Կարապետ Ղուբովին» գրած մի կոնդակ, որոնց մեջ երկուսն էլ հիրավի անվանվում են «Գուբով» և Ղուպով (նույն տեղ): Մի այլ տեղ Աղանյանը նույն 1894 թվին նշում է նաև, որ «ուրիշ հավանական ենթադրություններ կան, թե Խուբեանց ազնվական ծագումը մեկ դարու հնություն անգամ չունի և ուրեմն չէր կարող գոյություն ունենալ նույնիսկ Սիմեոն կաթողիկոսի կենդանության ժամանակ» (Դիվան, III, խգ):

[3] Աղանյանը սխալվում է. պիտի լինի губа. Լ. Մ.-Բ.

Մենք, դժբախտաբար, ոչ մի հնարավորություն չունենք ստուգելու, թե ի՞նչ բովանդակություն ուներ Հովհաննես Կարբեցու 1832 թ. հունիսի 10-ին տված կոնդակը «ազնիւ աղայ Կարապետ Ղուբովին», սակայն ի վիճակի ենք հրապարակ հանելու ավելի վաղ ժամանակվա, այն է՝ Դանիել կաթողիկոսի անունից «Արարատյան աթոռոյն էջմիածնի... սուրբ ժողովի» 1808 թ. հունիսի 30-ին տրված կոնդակը՝ «Գևորգ և Կարապետ Մելքիսեթեան Խուպովեանց» անունով:

Բացի տոհմաբանական-ծննդաբանական տվյալներից, 1808 թ. կոնդակը հետաքրքիր է նաև այն մասում, ուր՝ հակառակ Գյուտ Աղանյանի հաղորդած ստուգաբանության «Խուբով» ազգանվան, որն իբր թե ռուսերեն «Губ-ов»-ից է առաջացել իբրև «Պռոշյան»-ի բառացի թարգմանություն՝ տալիս է ռեալ մեկնաբանությունն այդ ազգանվան՝ «ի ժամանկս Շահապասայ մինն ի նոցանէ, որում անունն էր Խուտաբաշխ, գնացեալ առ Ապպաս՝ երևեցաւ նմա հաճոյական կերպիւ, մինչև ինքն Շահապպաս ի ներկայությեան յաջկայից իւրոց գովաբանելով խօսեցաւ վասն նորա «Խուբ Մելիք», որ թարգմանի լավ Մելիք, և յանձնեալ ի նա զպաշտօն մելիքութեան՝ դարձոյց վերստին յԵրևան, որ մեռաւ ի նմին պաշտօնի»[4]:

* * *

Գևորգ Խուբովը ծնված պիտի լինի 1762 (կարդա՛ թվին, Երևանում, հայրենական տանը, քանի որ իր հորեղբայր՝ Սիմեոն կաթողիկոսի մահվան պահին (1780 թ. հունիսի 28-ին) նա 18 տարեկան է եղել. "В Бозе почивающий Симеон, патриарх всея Армении, будучи дядею моим, воспитывал меня от седьми до осмнадцати лет моего возраста в св. Эчмиадзине, при наставлениях хороших учителей, которые ежедневно внушали мне то правило, что начало премудрости есть страх Господен",– այսպես է սկսում իր «1778–1808 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» Գ. Խուբովը (էջ 1): Հետևապես Գ. Խուբովը Սիմեոն կաթողիկոսի հսկողության տակ է

[4] 1808 թ. կոնդակում ներկայացրած «Խուբով» ազգանվան ստուգաբանությանը, ի միջի այլոց, ձայնակցում է «խուբ» արմատի ստուգաբանությունը, որ տալիս է Հ. Աճառյանն իր «Հայերէն արմատական բառարանու»-ում (հ. II, էջ 550). «***խուբ**, ար. < պրս xūв. «լավ, գեղեցիկ» բառից. երևի գործածական էր իբրև անձնանուն, որից և **խուբեան** ազգանունը»:

եղել Էջմիածնում 7 տարեկան հասակից, այսինքն 1769 թվից սկսած մինչև 1780 թ., և հենց 1780 թ. ստացած պիտի լինի տիրացուի կամ դպրի աստիճանը:

Սիմեոն կաթողիկոսի մահից հետո Գ. Խուբովը որոշ մասնակցություն է ունենում Երևանի, մասամբ և Նախիջևանի խաների, ինչպես և Երևանի հայ հասարակության բանակցություններում նախ Վրաստանի և ապա Ռուսաստանի պետական գործիչների հետ՝ Հայաստանը պարսկական լծից ազատելու նպատակով:

Սկզբում, ինչպես Գ. Խուբովը գրում է, ինքը հաղորդակցության դժվարության պատճառով ի վիճակի չէր գործոն դեր խաղալ այդ բանակցություններում. “В то время, как Потемкин (Павел Сергеевич), прибывший в Георгиевскую крепость, требовал к себе людей, более сведущих во всем, как к духовному, так и светскому состоянию относящихся, общество наше удостоило меня оной чести. Но я не мог исполнить своего поручения по той причине, что опасно было предпринять назначенный путь, ибо происходившие тогда войны между персидскими владетелями соделывали проезд чрезвычайно затруднительным” (էջ 5–6): Ապա՝ նշելով, որ Պոտյոմկինի անունից Հովսեփ ա. ե. Արղությանը պահանջում էր մարդիկ, մինչդեռ այլևայլ հանգամանքները խոչընդոտ էին հանդիսանում նրա՝ Խուբովի ճանապարհորդությանը, նա գրում է. “Мне нелзя было оставить престарелых родителей своих, пока еще в свежей памяти содержали кончину родственника своего Патриарха. Я как бы предузнал близкую смерть их; ибо в том же году постигла их. Вместо меня послан был в Россию Стефан Геламский” (էջ 6):

Ապա Գ. Խուբովը գաղտնի խորհրդատու և միջնորդ է հանդիսանում Երևանի Մահմադ-խանի բանակցություններին կոմս Զուբովի հետ, որը 1796 թ. Ադրբեջանում գտնվող ռուսաց զորքի հրամանատարն էր. “Муаммет хан Эриванский, преемник отца своего Юсейн-Али-Хана, призвав меня к себе через тысячника Гавриила, удостоил меня своей доверенности. Он через меня имел тайную переписку с Графом и обещание хранить к нему верность и искренность в поступках своих, ответ Графа сохраняем был нами в такой же тайне”. Իսկ որ Գ. Խուբովը երբեմն խանի խորհրդական է եղել, երևում է հետևյալ խոսքերից. “Хан… из уважения моего родства с покойным патриархом часто требовал от меня советов” (էջ 7):

Նույն Մահմադ-խանի և իր գործունեության մասին Գ. Խուբովը գրում. “Он решился искать помощи у армянского архиепископа

Иосифа, находившегося в Грузии, куда я должен был отправиться и употребить все усилия к склонению Ираклия и генерала Корсакова к этому”; “ Хан отправил меня в сопровождении двадцати пяти человек в Грузию, откуда через шесть суток надлежало мне привезти ему решительное известие”; “мы благополучно приехали в Грузию. Но прожив в Тифлисе более шести суток, я возвратился в Эривань под видом купца, для избежания всякого со стороны персов подозрения” (էջ 9):

Հիշատակելով Երևանի և Նախիջևանի խաների բանտարկվելը պարսից շահի կողմից, Գ. Խուբովը նշում է, որ նրանք “тайно требовали совета от меня и тысячника Гавриила” (էջ 22):

Ռուսաց զորքի կողմից՝ գեն. Պ. Ցիցիանովի առաջնորդությամբ՝ Երևանի պաշարման նախօրյակին , 1803 թվին, Գ. Խուբովը թշվառ վիճակի մեջ է գտնվում, որի մասին գրում է Թիֆլիսում գտնվող Հովհաննես եպիսկոպոս Կարբեցուն (հետագայում կաթողիկոս), խնդրելով տեղեկացնել ռուսաց զորքի շարժման մասին. “Я в скором после сего времени писал к Иоаннесу Епископу о бедственно своем состоянии и просил его скорее уведомить нас о движении Российских войск, идущих на защиту Эривани” (էջ 27): Միաժամանակ նա ընդգծում է, թե ինչպես հայեր են ահ ու երկյուղ էին կրում պարսիկներից (էջ 40):

Նույն Գ. Խուբովի մասնակցությամբ գրություններ են ուղարկվել Գրիգոր վարդապետի ձեռքով՝ Հովհաննես եպիսկոպոսին և գեն. Պ. Ցիցիանովին: Վերջինին հասցեագրված նամակներում խաները նշում էին, թե ինչպես էին նրանք Գաբրիել հազարապետից և «իշխան Եգոր Խուբովից» լսել «Ռուսաց հզոր պետության» մասին, երբ նրանք դեռևս 1797 թ. Վրաստան էին ուղարկված:

Գ. Խուբովը մանրամասն պատմում է այն մասնակցության մասին, որ հայերն ունեցել են Երևանի բերդի 1803 թ. ամռան պաշարման գործում, երբ ռազմավարական նշանակություն ունեցող միջոցառումների նկատմամբ իրենց բարի խորհուրդներն են հասցրել ռուսաց զորքի հրամանատարին: Ահա և Գ. Խուբովի խոսքերն այս մասին. “[Мы] писали к нему (Иоаннесу Епископу) и о том, чтобы Россияне, ежели начнут осаждать [Эриванскую] крепость, действовали более с возвышеннности на восточной стороне от оной находящейся, потому что оное место было укреплено слабее прочих, –что известно было одним толко престарелым людям, –так что ни одно ядро не могло пролететь мимо. Между прочим уведомляли и о том, что Россияне могут получать припасы из Эчмиадзина, в коем находились блоьшие хлебные

магазины, впрочем несколько разоренные персами" *(էջ 53): Ինքը Գ. Խուբովը աջակցում էր ռուսաց զորքի պարենավորման գործին (էջ 60–61): Միաժամանակ նշվում է վրաց դերը այս արշավանքի միջոցին (էջ 64): Եվ այս բոլորը պարսիկների մեջ զարթեցրեց անվստահություն դեպի հայերը, որոնց նրանք դավաճաններ և ռուսաց լրտեսներ էին անվանում.* "Принимали истинным доказательством нашей измены то, что мы, союзники России, снабжали их (русских) хлебом, и почитали нас их шпионами в своей крепости; почему согласились, оставив на время внешних неприятелей, истреблять нас (армян), как внутренных своих врагов" *(էջ 67–68): Եվ հայերը, ըստ Գ. Խուբովի վկայության, պատրաստ էին մեռնելու (էջ 69):* " Мы ,... принуждены были сносить от персов язвительные ругательства. Я более всех терпел оные. Они мстили мне разорением садов и другого недвижимого моего имения" *(էջ 91–92):* "17 сентября… были порожены зрелищем, когда увидели домы, сады и другие здания, прежде благолепные, а теперь в кучи развалин и пустыни обращенные" *(էջ 97):*

Նույնը Գ. Խուբովը գրում է և իր՝ 1829 թ. մարտի 16-ի խնդրագրրում. "Я более всех по преданности моей к Российской державе претерпел от персов язвительные ругательства и самое разорение садов и другого недвижимого моего достояния, которое, оставив в руках персиян, удалился наперед я один в благословенную Россию": *Ուրիշների թվում պարսիկներն ավերում են նաև Գ. Խուբովի «գույքն ու այգիները Երևանում» (էջ 91–92), ինչպես և նրա տունը Երևանում (էջ 95):* "День и ночь старались изготовить для себя какое-нибудь убежище, дабы спасти жизнь и свое семейство" *(էջ 98), –ասում է Գ. Խուբովը:*

Դրությունն ավելի ևս բարդանում է, երբ Երևանի խանը արգելում է հայերին հաղորդակցություն ունենալ Վրաստանի հետ (էջ 98): Միաժամանակ նույն խանը խորհուրդ էր տալիս Գ. Խուբովին «բնակություն հաստատել Թիֆլիսում և այնտեղ աշխատել նրան հանձնած գործի համար» (էջ 102–103): Սակայն, բացահայտ կերպով Երևանից Թիֆլիս հեռանալը վտանգավոր էր: Եվ Գ. Խուբովն այլևայլ միջոցների է դիմում իր ընտանիքն աներանց տուն՝ Բայազետ տեղափոխելու և այնուհետև անձամբ 2 տղաներով Վրաստան անցնելու համար, որպեսզի դրանով պարսից վրեժխնդրությունից զերծ մնա: "Дорога была опасна. Притом надобно было скрыть от других свой отъезд; почему я приказал купить хлопчатой бумаги, дабы тем показать, что еду за ханским делом… Я избегал близкого своего

бедствия, но пролил слезы об отечестве, которое оставлял в таком жалком состоянии, тем более, что тогда было зимнее время. По причине опасности на дорогах отпустил свою супругу с детьми в дом ее родителя, живщего в сорока верстах от Баязида; а сам двумя сынами отправился в Грузию, где находился Карапет, брат мой, с того времени, как город наш (Эривань) целые три года колебался от возмущений, по случаю не признавания над собою власти шаха" *(էջ 103–104):* "В сие время я отправил своего брата, с семейством его, в Тифлис и ожидал сам удобного к тому же случая" *(էջ 104):*

Ահա այս մոմենտից է, որ սկսվում է Գ. Խուբովի թափառական կյանքը, որի միջոցին նա զբաղվում է գրականությամբ, վերջինիս մեջ գտնելով միակ «մխիթարությունն ու սփոփանքը» (утешение и отраду), *ինչպես ինքը խոստովանում է «1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրության» մեջ:*

1803 թվի նոյեմբերին հասնելով Թիֆլիս, Գ. Խուբովն աշխատում է գոնե հեռվից պիտանի լինել իր հայրենիքին և հայրենակիցներին, որոնք պարսից լծի տակ էին մնացել:

Սակայն Գ. Խուբովը Վրաստանում երկար չի մնում, ըստ երևույթին իր գործունեության համար այստեղ ասպարեզ չգտնելու պատճառով:

«1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրության» մեջ Գ. Խուբովը գրում է. "Ефрем, архиепископ в России обитавших армян, неоднократно просил меня к себе для лучшего препровождения времени. При отъезде моем к нему Эриванское армянское сословие поручило мне за собственноручными их подписаниями прозьбы к Государю Императору о том, дабы он соизволил принять высочайшие свое участие в горестной их участи и повелел отвести армянам такое место, на котором бы упражняясь земледелием, они могли содержать себя и свое семейство" *(էջ 126–127):*

Թիֆլիսում եղած պահին Գ. Խուբովը հորինում է «Վասն սրախողխող առմանն Գանձակու» եղերերգությունը, գրված Գանձակի 1804 թ. ամռան առթիվ, որ մտել է նրա «Երգարան»-ի մեջ № 11-ի ներքո:

Ուղիղ 2 տարի Թիֆլիս մնալուց հետո Գ. Խուբովն ուղևորվում է դեպի «օրհնյալ Ռուսաստանը» (благословенная Россия), *ինչպես ինքն է նշում 1829 թ. մարտի 16-ին գրած իր մի խնդրագրում: Նա նախ անցնում է Հյուսիսային Կովկաս, ուր կանգ է առնում Մոզդոկում:*

Այս առթիվ Գ. Խուբովը գրում է. "1805 года ноября 28 дня с своим сыном я выехал из Грузии, 23 декабря был уже в Моздоке, где имел удовольствие видеть Ефрема Архиепископа. Я вручил ему письмо от армянского общества, которым просил о пастырском его предстательстве за странствующий свой народ. О том же просил и Мину и Якима Лазаревых" *(էջ 127): Նաև* "Оставив свое отечество, я долго не имел вернейших оттуда известий, из которых одно было такое, которое выслушать нельзя было без содрагания" *(էջ 128):*

Ապա Գևերգ Խուբովը նշում է, թե ինչպես Պ. Ցիցիանովից հե-
տո Վրաստանի կառավարչապետ նշանակվեց կոմս Գուդովիչը,
որին Մոսկվա գալուն պես Մինաս Լազարևը մատուցել էր այն
խնդրագիրը, որ ինքը (Խուբովն) էր բերել Մոզդոկ: Ի պատասխան
սրան, Գուդովիչը "охотно обещался по своем прибытии в Грузии
облегчить участь странствуюнашего нашего (армянского) народа" *(էջ*
129): Ընդ սմին Գ. Խուբովը շարունակում է. "В 1807 году я вторично
чрез письмо просил о том же Мину Лазаревича, который во время своего
пребывания в Москве хотел было приступить к делу, но смерть его
лишила нас сей надежды. Как истинный и общий всем доброжелатель он
поручил мне смотрения над Московским Армянским училищем" *(էջ*
129):

«1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի
նկարագրությանից», ինչպես և արխիվային գործերից, դժբախտա-
բար, չի երևում, ստանձնե՞լ էր արդյոք Գ. Խուբովը Մոսկվայի հայ-
կական դպրոցի տեսչությունը և, եթե ստանձնել էր, որքան էր տևել
նրա պաշտոնավարությունը այդ դպրոցում:

Անկախ Գ. Խուբովից, հենց նույն պահին Ղզլարում բնակու-
թյուն է հաստատում Սիմեոն Էլիասյան Խուբյանը, որը Դանիել կա-
թողիկոսի 1808 թ. հունիսի 30-ի կոնդակում հիշվում է իբրև «ի
Ղզլար բնակեալ Երևանցի Էլիզեան Սիմէօնն Խուբեանց»:

1809 թվին Ռուսահայոց թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկո-
պոսն ընտրվում է ամենայն հայոց կաթողիկոս, որին Գ. Խուբովը
նվիրում է մի շարք ոտանավորներ, որոնք մտել են նրա կազմած
«Երգարան»-ի մեջ №№ 14, 15, 16 և 18-ի ներքո: Սրանցից առաջինը
(№ 14) հորինված է Եփրեմի Մոզդոկ մտնելու առթիվ՝ 1810 թ. հուն-
վարին:

1810 թվին Գ. Խուբովը Պետերբուրգումն է:

Պետերբուրգում եղած պահին Գ. Խուբովը 1810 թվի օգոստոսի
16-ին դիմում է ներքին գործոց մինիստր Կոզոդավլևին այսպիսի մի

խնդրագրով, որը կարևոր տեղեկություններ է պարունակում նրա կենսագրության համար[5]*:*

"Ваше Превосходительство Милостивый Государь!

"Вступив в подданство России и желая в оную переселить и мое семейство из Тифлиса, слышу, что не дают свободного пропуска никому, естьли не будет по закону плотимы государственные подати; это прчиняет мне боспокойство, чтоб семейство мое в проезде своем из Тифлиса в Россию не встретило каких либо препятствий.

"Сего ради всепокорнейше прошу Ваше Превосходительство оказать мне милость, дав известие тамошнему Главнокомандующему, дабы сделано было семейству моему свободный пропуск из Тифлиса в Россию, пока еще глубокая зима не настала".

Պետերբուրգում եղած պահին՝ 1810 թվին՝ Գ. Խուբովը կազ-
մում է իր «1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքե-
րի նկարագրությունը», որը ռուսերենի է վերածում տեղիս Հովսեփ
սարկավագ Հովհաննիսյանը: Աշխատությունը, որը Գ. Խուբովի
անդրանիկ *գրական գործն էր, նվիրվում է Ալեքսանդր I կայսեր, որի*
առթիվ զեկուցագիր է ներկայացվում կայսեր 1810 թ. օգոստոսի 13-
ին և, ի հետևումն այս զեկուցագրի, տացվում է հրաման Գ. Խու-
բովի գիրքն ուղարկել ի քննություն Պետերբուրգի Ցենզուրական
կոմիտեին՝ նույն թվի օգոստոսի 17-ի № 895 գրությամբ (ֆոնդ 2/8
գործ № 8802/262):

Ցենզուրական կոմիտեի նախագահ կոմս Ալեքսեյ Կրիլովիչ Ռա-
զումովսկին 1810 թ. սեպտեմբերի 16-ի № 1168 ներքին գործոց մի-
նիստր Օսիպ Պետրովիչ Կոզոդավլևին ուղղված գրությամբ տալիս
է մանրամասն բնութագիր Գ. Խուբովի աշխատության նախնական
խմբագրության մասին:

Կատարելով պահանջվող ուղղումները, Խուբովը իր աշխատու-
թյունը նորից ներկայացնում է Կոմիտեին, նույն 1810 թ. նոյեմբերի
9-ին:

Մինչ Գ. Խուբովի գիրքը ցենզուրական կոմիտեի քննության
առարկա էր դարձել ու նրա հրատարակության հարցը դրական լու-
ծումն կստանար, նա՝ Գ. Խուբովը, 1810 թ. նոյեմբերի 30-ին ներքին
գործոց մինիստր Օ. Պ. Կոզոդավլևին մատուցած խնդրագրով հարց
է բարձրացնում իրեն որոշ հողամաս հատկացնելու համար տեխնի-
կական կուլտուրաների ծավալման նպատակով:

[5] Վրաստանի Կենտրոնական պատմական պետական արխիվի (ֆոնդ 2/8 գործ № 8802/266, էջ 12 ա):

*Ահա և այդ ուշադրության արժանի դոկումենտը, որը պարու-
նակում է կարևոր տեղեկություններ և մի շարք այլ խնդիրների
շուրջը (տես ֆոնդ 2/8 գործ № 8802/262):*

“Милостивый Государь Осип Петрович”!

“На основании добродетельного /внимания/ Вашего Превосходи-
тельства, которым я с давних времен имею щастье пользоваться,
осмеливаюсь просить вторительно Ваше Превосходительство об отве-
дении мне земли поданной отмене прозбу графу Румянцеву сего 1810-го
года феврале м-це, единственно для заведений иностранных разных
рукоделий показать свое художество, оное же дело препровождено назад
тому 17 м-цем Вашему Превосходительству, и по сие время не могу
получить никакое решение. Покорнейше прошу повелеть вторительно
куда следует; сочинение же мною историческую книгу поднесено
Вашему Превосходительству и обо нем не могу иметь никакое сведение,
претерпев Армений побуждает мне представить Вашему Превосходи-
тельству прошедшее о усердствий своей судьбы российскому двору,
приложив при сем рекомендательные письма патриархом Ефремом
Армянским Графу Румянцову, Пейдейру, Князю Куракину, а также к
(несколько слов не ясно–Л. М.-Б*)* в прибывший на население /в/
Тифлиз 1500 домов от араратского края прошение с переводом на
российский язык Его Императорскому Величеству, и все сие представляю
Вашему Превосходительству, послику есть ли князь Цицианов был жив,
то секретная переписка моя с ним, показательное усердие, если бы быть
доведено до сведения Государя князем Цициановым, ныне же остав без
всякого утешения и не имев надежды к исполнению прзбы моей кроме
как знаменитой особы Вашей”.

*1810 թ. վերջերին, –1811 թ. սկզբներին Գ. Խուբովը ստանում է
թույլտվություն տպագրելու իր «1778–1809 թ.թ. Հայաստանի
արժանահիշատակ անցքերի նկարագրությունը» վերնագիրը կրող
գրքույկը:*

*1811 թ. հունվարի 3-ի մի գրության մեջ նշված է, որ թագավոր
կայսրը* “повелеть соизволил князю Хубову дозволить напечатать сие
сочинение на свой счет, с тем однакож, чтобы при напечатании все листы
доставляемы были в Цензурный комитет для поправления погрешностей
в чистоте слога”.

*1811 թ. մայիսին Գ. Խուբովը դիմում է Ալեքսանդր I կայսեր հե-
տևյալ ուղերձով.*

“Всеавгустейший Монарх!

“Желая описать достопамятные произшествия Армении со времени
патриаршества Симеона, моего дяди, я имел то намерение, чтобы,
напомнив своим единоземцам бедствия и раззорения, какие нанесли
перси нашему отечеству, показать настоящее их состояние, в котором
они ныне под благословенного Державою Вашего Императорского
Величества наслаждаются счастием и тишиною”.

*Ի պատասխան այս ուղերձի, Գ. Խուբովին «ամենաողորմածա-
բար» շնորհվում է ադամանդյա մատանի 460 ռ. արժողությամբ,
որը և հանձնվում է նրան ներքին գործերի մինիստր О. Պ. Կոզո-
դավլևի նույն 1811 թ. հունիսի 25-ի № 993 գրությամբ հանդերձ
(տես ֆոնդ 2/8 գործ № 8802/262)*[6]*:*

1814 թ. մոտերքը Գ. Խուբովը ավարտում է իր երկրորդ *գրական
աշխատությունը, այսպես կոչված «Գավազանագիրք»-ը, որի հազ-
վագյուտ ձեռագիր-բնագիրը Վրաստանի Պատմական կենտրոնա-
կան պետական արխիվի հին վավերագրերի բաժնի № 705-ի ներքո
է մուծված և որի մասին մանրամասն կխոսենք ստորև:
Գ. Խուբովի Պետերբուրգում կեցած ժամանակաշրջանին է վե-
րաբերում նրա միջոցառումներն ազնվական ծագման մեջ հաս-
տատվելու ուղղությամբ, որը դրական իմաստով լուծվում է 1816 թ.
հոկտեմբերի 30-ին կայացած «բարձրագույն հրամանով»:
Ապա այսպիսի խնդիր է հարուցում Թիֆլիսում բնակություն
հաստատած նրա կրտսեր եղբայր Կարապետ (Կարպ) Խուբովը, որի
մասին գրագրությում է սկսում Վրաստանի Գերագույն կառավա-
րությունը 1819 թ. մարտի 11-ին և որը նույնպես իր դրական լու-
ծումն է ստանում 1824 թ. հուլիսի 1-ին:
1814 թ. մոտերքը Գ. Խուբովը գտնվում է Հյուսիսային Կովկա-
սում, սակայն այս անգամ ոչ թե Մոզդոկում, այլ Ղզլարում, ուր
պաշտոնավարում է իբրև հայոց գավառական դպրոցի ուսուցիչ: Եվ
հենց այս պահին է նա ձեռնարկում իր* երրորդ *գրական գործը՝ «Եր-*

---

[6] Սրա կապակցությամբ միանգամայն հասկանալի է, թե Գ. Խուբովը ինչու է
նվիրում հատուկ ոտանավոր «Նորին կայսերական մեծության», այսինքն,
Ալեքսանդր I Պավլովիչին, որ մտած է նրա «Երգարան»-ի մեջ № 12-ի ներքո:
Ի դեպ, կարևոր է նշել և այն, որ Գ. Խուբովի գիրքը լույս տեսնելու 1811 թ. մոտեր-
քին, այն է 1815 թ., մի ուրիշ հայ մտավորական, վրացախոս, Ռափայել (Ռափիել)
Դանիբեգովը, որն իրեն «Վրաստանի ազնվական» է կոչում, հրապարակում է իր
«Ճանապարհորդություն դեպի Հնդկաստան» գիրքը, որ նվիրված է նույն Ալեքսանդր
I կայսեր: Գիրքը գրված լինելով վրացերեն՝ (4) լույս է տեսնում ռուսերեն թարգ-
մանությամբ հետևյալ վերնագրով. “Путешествие в Индию грузинского дворянина Ра-
фаила Данибегова, Перевод с грузинского” (Москва 1815).

գարան»-ը, որը կազմում է, հավանական է, դպրոցական պահանջներին բավարարելու նպատակով և որն ավարտում է 1825 թվին:

1821 թվին Աստրախանում Աղարյան դպրոցի փոխարեն բացվում է Հոգևոր վարժարան, որի տեսուչ է նշանակվում Սերովբե Պատկանյանը, իսկ Ս. Պատկանյանից հետո, հավանական է, 1827 թվին, նույն պաշտոնը հանձնվում է Ղզլարից տեղափոխված Գ. Խուբովին:

Այսպիսով Գ. Խուբովը վերջնականապես հաստատվում է Աստրախանում:

Գ. Խուբովը 1829 թ. մարտի 16-ին Աստրախանից Թիֆլիս է ուղարկում մի խնդրագիր Վրաստանի կառավարչապետ Ի. Ն. Պասկևիչի անունով, որը բազմաթիվ ինքնակենսագրական տեղեկություններ է պարունակում Գ. Խուբովի մասին, ինչպես և նրա գործունեության մի քանի հարակից պարագաների շուրջը՝ քաղաքական ասպարզում, որից երևում է, որ նա ռուսական օրենտացիային հետևելու պատճառով զրկանքներ է կրել ու հալածվել պարսիկների կողմից:

1829 թվից հետո Գ. Խուբովի անունը ոչ մի տեղ այլևս չի հիշատակվում: Ոչ մի բան չի լսվում նաև նրա կալվածքի մասին:

Հետևապես, պիտի ենթադրել, որ Գ. Խուբովը 1829 թ. մոտերքը (կարդա՛ 1830–խմբ.) վախճանվել է մոտավորապես 67 տարեկան հասակում: Հավանական է թաղված լինի Աստրախանում:

Համենայն դեպս պարզ է, որ Գևորգ Մելքիսեդեկյան Խուբովը, Սիմեոն կաթողիկոսի եղբորորդին, ծնված 1762 թ., որն այնքան տարված էր իր իշխանական ծագումն ապացուցելու խդեֆիքսով և այնքան ճիգ ու ջանք էր գործ դնում, որպեսզի Ռուսաստանի այնքան ճիգ ու ջանք էր գործ դնում, որպեսզի Ռուսաստանի

ազնվական ճանաչվի (որ նրան հաջողվեց) և կալվածատեր դառնա Ղզլարի շրջակայքում, գուցե և բարի ցանկությամբ բարձրորակ գյուղատնտեսական կուլտուրաներ այնտեղ ծավալելու նպատակով (թեև ապարդյուն), իրականում եղել է 1797 և 1803 թ.թ. Պարսկաստանի դեմ գործող ռուսաց զորքին աջակցող և առհասարակ ռուսական կողմնորոշմանը հետևող գործիչ, ուստի և՝ հալածվելով պարսիկներից, ստիպված է եղել թողնել իր հայրենի Երևանը և Հայաստանը և գաղթել նախ Թիֆլիս (1803), ապա Հյուսիսային Կովկաս (1805)՝ Մոզդոկ, այնտեղից Մոսկվա, Պետերբուրգ, նորից Հյուսիսային Կովկաս (1814)՝ Ղզլար և վերջապես, Աստրախան, ուր և 1829 թ. մոտերքում մեռնում է: Ուսուցչություն է արել գուցե շատ կարճ ժամանակ Մոսկվայում, ապա մոտ 15 տարի Ղզլարում և Աստ-

րախանում, ուր նույնիսկ եղել է, Ս. Պատկանյանից հետո, Հոգևոր վարժարանի տեսուչ: Միջանկյալ զբաղվել է նաև գրականությամբ՝ իբրև պատմագիր և բանաստեղծ-գրող(5):

ԽՈՒԲՈՎԸ ԻԲՐԵՎ ՊԱՏՄԱԳԻՐ

Գ. Խուբովը թողել է 2 պատմագրական գործ. ա. *«1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրությունը», և* բ. *«Գավազանագիրքը», որոնցից երկրորդը պարունակում է նաև մի շարք բանաստեղծություններ՝ գերազանցապես պատմական-հայրենասիրական բովանդակությամբ:*

Առաջին *գործը, դժբախտաբար, մեզ հասել է ոչ թե բնագրով, այլ ռուսերեն թարգմանությամբ ձեռագրից, որ կատարել է, ինչպես ռուսերեն թարգմանությամբ ձեռագրից, որ կատարել է, ինչպես ստավեց, Պետերբուրգի հայոց եկեղեցու սպասավոր՝ Հովսեփ սարկավագ Հովհաննիսյանը և հրատարակվել է հետևյալ ընդարձակ վերնագրով.* “Описание достопамятных произшествий в Армении, случившихся в последние тридцать лет, т. е. от патриаршества Симеонова (1778 г.) до 1809 года. Сочинение князя Егора Хубова. С армянского перевел Армянския церкви архидиакон Иосиф Иоаннесов. Печатано на основании Высочайшего повеления в Санктпетербурге 1811 года”.

Գիրքը, վերևում նշվեց, ձոնված է Ալեքսանդր I *կայսեր, որին հեղինակը դիմում էր առաջաբանով, ուր ընդգծված է աշխատության նպատակը և մեթոդը:*

Բերում ենք այն բառացի.

“Всеавгустейший Монарх!

“Цель, с какою составил я сие описание грабительств и разорений, в позднейшее время персами нанесенный Эривани, не есть какое-либо тщеславие, но одна любовь к отечеству. Она-то поселила во мне желание, чрез сие напомнить сынам Армении то время, в которое они каждую минуту были подвержены опасности насильственно потерять жизнь свою.

“Всемилостивейший Государь!

“Из уроженцев стран Араратских удостоясь соделаться щастливым подданным Российской Державы, я дерзаю повергнуть пред подножием священного престола Вашего Императорского Величества сие изображение бедствий, претерпенных моим единомышленниками, кои купно со мною ныне наслаждаются спокойствием под благословенным скипетром Вашим”.

1778–1809 թ.թ. Հայաստանի արժանահիշատակ անցքերը գրի առնելու նպատակի և մեթոդի մասին հեղինակը խոսում է տեղ-տեղ նաև իր «նկարագրրության» մեջ, օրինակ. –

“Я прилагал всевозможное старание обстоятельно узнать сим происшествия от людей, подробно и верно оные ведавших, нисколько не пологаясь на собственные мои об оных сведения, хотя сами, потерпев великие бедства, были очевидцем очень многого. Мое желнние стремит/ь/ся к тому, чтобы читатели сего краткого описания нашли в нем ясно и верно представленные произшествия и не раскаивалися в напрасно потерянном времени. Дабы обстоятельно и истинно описать при мне и без меня случившиеся произшествия я делал все усилия, чтобы собрать известия посредством писем разных особ, как Российских, так и Персидских. По своему любопытству я при каждом благоприятном случае прибавлял по нескольку сведений к общей оных сумме” *(էջ 94–95):*

Վերջապես.

“В… странствиях я находил единственное утешение и отраду в описывании их для своих собственных потомков. Я вегда желал повествовать бедствия своего отечества и страдания христиан от жестоких варваров. Желание мое исполнено, и я с безпокойством оставляю своему потомству слабые, но ревностные свои труды” *(էջ 129–130):*

“Те, кои будут сомневаться в справедливости описнных произшествий, переменят свои мысли, когда будут иметь случай прочитать все письма князя Цицианова, епископа Иоаннеса и прчих особ, кои все в целости у меня находятся” *(էջ 130):*

Քանի որ Գ. Խուբովի այս անդրանիկ երկը հրատարակված է, բավականանում ենք նրա բնութագիրը տալով (6) և անցնում ենք երկրորդ երկին՝ «Գավազանագրքին», որը նրա գլուխ գործը պիտի համարվի:

Գ. Խուբովի երկրորդ *գործը, ինչպես վերևում նշեցինք, Վրաստանի Պատմական կենտրոնական պետական արխիվի կողմից ձեռք բերած և հին փաստաթղթերի բաժնի հավաքածուի № 705 ներքո համարակալված ձեռագիր-դավթարն է, որի տիտղոսաթերթը կարդացվում է այսպես.–*

«Գաւազանագիրք, որ է Ցուցակ ազգաբանութեան թագաւորացն Հայոց և նախարարաց և բոլոր պայազատ սպայպետաց և այլոց, սկսեալ ի Յաբէթայ, որդւոյ Նոյի, երկրորդ հօրն աշխարհի, ի 2263 թուականէ աշխարհի մինչև ի 1184 թիւ Փրկչին, որ պարունակէ զժամանակս իբրև 4750 ամաց, որոց ամենայնից յորմէ՞ ազգէ

և յորո՞յ շառաւիղէ յառաջանալ և յո՞րպիսի կառավարութեան և իշխանութեան գոլ և յորո՞ւմ ամի և յո՞ր ժամանակի և ցո՞րքան տեւին իշխանութեան: Եւ ես զի՞նչ և զո՞րպիսի գործով և ո՞րով հաւատով կենցաղավարիլ իւրաքանչիւրոցն համառօտակի արձանացուցեալ: Նաև ո՞րքան կայսերք Հայկազանց և ո՞րքան նախարարութիւնք լեալ են և յո՞րոց սերեալ և անուանեալն, և զկարգ կայսերաց և թագաւորաց և այլոցն ուրոյն ուրոյն հատկացուցեալ և եօթնկարգեան բոլորակաւ ըստ կարգի աստիճանացն դասակարգեալ և այլ այսօրինակ քաջայաղթ ախոյեանց Հայկազանց և այլազանց զանուանս ըստ մասին և զարարս ոմանց և քաջարեաց՝ կարճառօտութեամբք յիշմամբ շարակարգեալ ցուցանէ:

Աշխատասիրութեամբ հարազատարիւն Հայկազան, հայրենասէր, հաւատարիմ և փոյթեռանդուն սրտացաւ ջանադիր մեղուաներկ Գէորգ Մելքիսեդեկեան Խուբով Խաղբակեանց յօգնաշխատ իշխանի, եղբօրորդւոյ տեառն Սիմէօնի մեծի ամենայն Հայոց գերընտիր և բազմերախտ կաթողիկոսի Երևանցւոյ ի զբօսանս ազգասիրաց:

«Ի Հայրապետութեանս (և բարձրագոյն հրամանաւ իսկ) լուսանկար աթոռոյն էջմիածնի տեառն Եփրեմայ արժանընտիր և կայսերապսակ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց և հոգեծնի մեծին Սիմէօնիս»:

Աշխատության գրության տեղն ու ժամանակը, դժբախտաբար, նշված չէ: Եփրեմ կաթողիկոսի հիշատակությունը կարող է մեզ տալ միայն terminus ante guem non*-ը՝ 1809 թիվը (Եփրեմի կաթողիկոսանալու թվականը): Սակայն բուն տեքստի մեջ, 56ա էջում, 1814 թ. ներքո հեղինակը մուծել է այսպիսի հիշատակարան. «Գէորգ Մելքիսեդեկեան Խուբով Խաղբակեան Արշակունի, որ սիրատոչոր ջանիւ, բայց սգապատեալ սրտիւ, լալագին աչօք, թախծեալ անձամբ և ցավալի մտամբք գրեաց զայս յիշատակութիւնս դիւցազնացեալ տիրապետողացն Հայկազանց, որք իշխեն և ոչ ևս երևին, ոչ թէ տեղիք միայն, այլ մինչ յիշատակք ևս այնպիսեաց վեհանձանց են», – որն ուղղակի մատնանշում է «Գավազանագրքի» վերջնական ձևակերպման ժամանակը՝ 1814 թիվը:*

«Գավազանագիրքը», որը ժամանակագրական պատմության բնույթ է կրում, բավականին ինքնուրույն փորձ է Հայաստանի ժամանակագրության: Թեև փաստորեն այն Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմության» ազդեցությունն է կրում՝ ավանդական կոնցեպցիայով, սակայն գաղափարականորոն տարբերվում է նրանից, քանի որ դեպի Մխիթարյան միաբանության այդ վարդապետ-պատ-

մաբանը տրամադրված է բացասականորեն, «Միքայէլ Չամչեան ախտարմատ ժողովօղ և քամահօղ պատմագրաց» անվանելով նրան:

Այս «Գավազանագիրքը», տարբերվում է նաև «Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք» համանուն բազմաթիվ փորձերից (հմմտ. Խ. Կանայեանց. *Ցուցակ հայերէն ձեռագրաց Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի, Թիֆլիս 1893, էջ 48–52.* Յ. Թոփճեան. *Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, Վաղարշապատ, 1898, էջ 52–53 և այլն):*

Գ. Խուբովի «Գավազանագիրքը» պարունակում է 90 թերթ. բաղկացած է հետևյալ մասերից.

էջ 1 ա–3 բ առաջաբան:

էջ 4 ա–6 բ մաքուր է թողած:

էջ 7 ա–53 ա Հայաստանի ժամանակագրությունը սկսած «Նոյից» մինչև Կիլիկիայի թագավորության անկումը:

էջ 53 ա–56 բ Նույնը Կիլիկիայի անկումից հետո, մելիքների պատմությունը, Դավիթ-Բեկի էպոպեան և այլն:

էջ 57 ա–58 բ Ուրացողների և դավաճանների ցուցակը:

էջ 59 ա –60 բ Ծանոթություններ:

էջ 61 ա –65 բ Հայ և օտար գրողների հիշատակությունը:

էջ 65 բ–66 բ Սակս կայսերական կոչմանն:

էջ 67 ա–90 բ Ցանկ:

Ցանկը կազմված է «Գավազանագրքի» օգտագործումը դյու-
րացնելու նպատակով: Այս առթիվ հեղինակը գրում է. «Առ ի դիւ-
րաւ գտանելոյ զանուանս իւրաքնչիւրոցն այբուբենական ցանկով
նշանակեցաք զամենայն կարգս և յառաջիկայդ» (էջ 67 բ):

Օրինակ՝

Գ. Խուբովի «Գավազանագիրքը» հիմնականում, իհարկե, վե-
րամշակումն է Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց»-ին կցված
աղյուսակների, օրինակ՝ «Դասակարգութիւնք իշխանութեանց
(նահապետք, թագաւորք և իշխանապետք Հայոց)»-ի, էջ 105–108:
Բայց նա կանխում է M. Saint-Martin-*ի տվածին՝* “Mémoires historiques
et géographiques sur l‘Arménie”, t. I, Paris 1818, pp. 407–436, *որն օգտա-*
գործել է Ա. Խուդաբաշյանը՝ “Обозрение Армении в географическом,
историческом и литературном отношениях”, Спб. 1859, *էջ 491–533*
*(*Хронологический перечень лиц, управлявших судьбою армянского
народа и армянской церкви*):*

«Գավազանագրքի» մեջ մտած ժամանակագրությունը տարբեր
գրական և գիտական արժեք ունեցող նյութ է ներկայացնում իրե-

նից: Մի մասը, մանավանդ սկզբնական 7ա–53ա էջերը, ոչ այլ ինչ
են, բայց եթե Մ. Չամչյանի հետևողությամբ կազմված ցուցակներ:
Մյուսը, որը 53ա էջից է սկսվում, համեմատաբար ավելի ինքնու-
րույն է: Այս վերջինից, անտարակույս, պատմաբանի ուշադրության
արժանի են: ա*. Հայ իշխանները և նրանց ժամանակագրությունը*
Կիլիկիայի թագավորության անկումից հետո, ներառյալ Ղարաբա-
ղի մելիքների և, մասնավորապես, Դավիթ-բեկին վերաբերյալ հոդ-
վածները շուրջ 1373–1814 թ.թ. (էջ 53ա–56բ). բ*. Հայոց պատմու-*
թյան մեջ իբրև ուրացողներ և դավաճաններ հռչակված անձանց
ժամանակագրական ցանկը՝ 59 անուն, որոնց վերջում հիշված են 2
մելիքներ՝ Ֆռանգյուլ և Կարապետ (էջ 57ա–58բ) և գ*. Հայ և օտար*
մատենագիրների ժամանակագրական ցանկը, ուր հիշատակված է
266 անուն, որոնց թվում 73 հայի, երբեմն կոպիտ սխալներով, օրի-
նակ Թոմա Արծրունին նշված է 500 թ. ներքո, Ուխտանեսը՝ 580 թ.
(էջ 61ա–66բ):

Բացի դրանցից, ձեռագրի այս ու այն էջերում աչքի են ընկնում
պատմական-հայրենասիրական բնույթի ոտանավորներ, որոնցից
մեկը նույնիսկ ձեռագրի ամբողջ տարածությունն ունի գրված՝
մի-մի տուն յուրաքանչյուր թերթի գլխին, որը մենք՝ արտագրելով՝
ի մի ենք հյուսել, միացրել: Այս ոտանավորները, գրեթե բոլորը,
չնչին բացառությամբ, մենք հրապարակ ենք հանում մեր այս
աշխատության հաջորդ (III) գլխում, որ նվիրված է Գ. Խուբովի
բնութագրմանը իբրև բանաստեղծ:

Ստորև մենք հրատարակում ենք պատմագրական բնույթ կրող
հիշյալ հատվածներից մի քանիսը, որոնք հիմնված են անհայտ
սկզբնաղբյուրների վրա:

Հատվածներում տեղ-տեղ ժամանակագրությունը խախտված է
և պատմական դեպքերն ու անձինք ետ և առաջ են քաշված, որ
մենք նույնությամբ պահպանել ենք:

Ա. ՀԱՅ ԻՇԽԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

էջ 53ա 1373. Իւանէ իշխան Վաղանդնոյ Որոտնեցի, հայր Կախիկ Յովհաննէս սուրբ վարդապետի:

1374 Շահան իշխան Կոռիկոյ, փեսայ Լեւոնի վերջնոյ և գերեկից:

1386 Վասակ մեծ նախարար քաջ, Արշակունի Խաղբակեանց, տէր Գեղամայ:

1387 Մարտիրոս քաջ, իշխան և բարեպաշտ տանուտէր Կողբայ:

1395 Յովհաննէս քաջ, գինուոր գերեխթափ Ազու գեղջ:

1420 Վաղին իշխան Արծկէոյ ողորմած աստուածասէր և նահատակ:

1421 Սմբատ Իվանեան Բուռթելայ Ուռպէլեանց Սիւնեաց:

Բուռթէլ, եղբայր Սմբատայ, տէր Որոտնայ:

Տարսայիճ, իշխան երեւելի, տէր Եղեգեայ:

Սուրաթմիր, մեծ իշխան , տէր Մակուայ:

Աղիղան ազատորդի յԱրարատայ Աղցից գեղջէ:

1430 Գորգի մէլիք, տէր Աղու գեղջ, եղբայր Մեծոբեցւոյն:

Մուրատշահ, իշխան, տէր Արծկէոյ:

53բ Յովհաննէս իշխանաւոր Արծկէոյ:

1434 Մկրտիչ, տանուտէր Գերիշատ գեղջ, իշխան և նահատակ:

1437 Պելգինէ, որդի Սմբատայ, մեծ իշխան Ուռպելեանց:

1440 Պռօշ Վասակեան Արշակունի Խաղբակեանց տէր Գեղամայ և Գառնւոյ:

1492 Վասակ քաջ, կրտսեր որդի Պռօշի, Արշակունի, տէր Գեղամայ և Գառնւոյ:

Ամիր-Հասան Պռօշեան, եղբայր Վասակայ քաջի Խաղբակեանց, Արշակունի:

Պապուկ Պռօշեան Արշակունի, եղբայր Վասակայ քաջի:

1529. Գէորգ Վասակեան Խաղբ[ակ]եանց Արշակունի քաջ:

1528 Թորոս, որդի Սուլթանշահի, Հռոմկլայեցի նահատակ:

1434 Յովհաննէս բարեպաշտ իշխան Ասպիտակ գեղջ. նահատակ:

Ողջա կամ Կեռկճան խօջա ազնուական իշխան Սեբաստացի նահատակ:

1568 Տարոն լոյս Կաֆայեցի իշխան և նահատակ, վասն որի գրեաց ողբ Վրթանէս վարդապետ:

1586 Խուդաբաշի, որ և Խուբ Մէլիք, Խաղբակեանց Արշակունի Գէորգեան:

1434 Արիստակէս իշխան, եղբայր Թովմայի Մեծոբեցւոյ. նահատակ:

54ա 1586. Սարուխան-բէկ իշխան յՈսկանապատ գեղջ:

Նազար իշխան, եղբայր Սարուխան-բէկի:

Ջալալ բէկ, իշխան Խաչենոյ:

Սաջում մէլիք Դիզակայ:

Փաշիկ մէլիք Քօչիցեցի:

Բաբգէն մէլիք Բրեոխեցի:

Հայկազն մէլիք Խանածախայ:

1604. Խաչիկ իշխան Ջուղայեցի Ա. սկտեղբ ոսկի ընծայեաց Շահաբասայ:

Շափռազ իշխան Ջուղայեցի, նոյնպէս ոսկի ընծայեաց:

Նազար մեծ իշխան Ջուղայեցի առաջադէմ, նոյնպէս ոսկի ընծայեաց:

Աղամալ Ջուղայեցի, մէլիք Երևան քաղաքի, շինող եկեղեցւոյ Սուրբ Յօհաննէս Մկրտչի:

1606. Շահնազար պայազատ իշխան Մազրայու, հիւրընկալ Շահ[ա]բասայ.

Յովսէփ մէլիք , խնամատար հայոց Ասպահանայ:

Մուրատ մէլիք, խնամատար հայոց, ընկեր Յովսէփայ:

1611. Սաֆար խօջայ, իշխան Ջուղայեցի:

Պետրոս Մէլիքեան Խալդարեանց խօջայ Սաֆարեանց:

Պօղոս պարոն Սեբաստացի, տանօղ նշխարաց սրբոյն Հռիփսիմեանց:

1614. Անձրև խօջայ Ցղնեցի իշխանաւոր մեծ:
Հայկազն մէլիք Ջուղայեցի, տէր Գողթան:
Սուլթանում խօջայ, երևելի իշխան Ջուղայեցի:
Միրվէլի, իշխան Ջուղայեցի:

1620 Նարիջան քաջ, իշխան Փահրնւոյ, զինեալ վասն Հա-
ւատոյ նահատակի:

1621. Գրիգոր իշխան քաջ աստուածապաշտ, վասն Հաւա-
տոյ նահատակի:

1634. Աւետիք մեծ իշխան Բաղիշեցի հանդերձապետ:
Գրիգոր Խուբով Խաղբակեանց Արշակունի յոյժ բա-
րեպաշտ:

1648. Ախիջան բարեպաշտ իշխան Վանեցի, շինող մեծ
եկեղեցւոյ սրբոյն Սահակայ:
Զիրաք իշխան Գէրաքենց, նորոգող եկեղեցւոյ
սրբոյն Պօղոսի ի Վան:

1651. Մարխաս Թօմայեան Խանենց Վանեցի բարեպաշտ
իշխան:

1668. Գրիգոր բարեպաշտ Խօջենց իշխան և տէր Երևանու:

54բ 1772. Ստեփաննոս, ժողովագլուխ իշխան Գանձակի, հրա-
ւիրող Դաւթի:
Մարգար իշխան Բաղտասարին Լղուրեանց Ջուղա-
յեցի:
Խաչիկ իշխան Ջուղայեցի Բ:
Սարհատ իշխան Խալդարեանց Ջուղայեցի:
Մանուկ իշխան Սամուրի Ջուղայեցի:
Յովհաննէս մեծ իշխան Ուտէացւոց և Գուգարաց:

1722. Դաւիթ *բէկ Մարզպան Սիւնեաց. խնդրանօք ժողովր-*
դեանն քըրիստոնէից և հնարիւք Ստեփաննոսի խո-
դեանն ...

հական իշխանին կարգեցաւ ի 1722 թւոջ ի Շահնա-

զօրացն աճապարեցին և նոքա զհետ, և անհնարին տագնապաւ շուարեալ և չփոթեալ թշնամեացն բանակովին ի փախուստ և ի կորուստ դարձան և զամենայն զաւար նոցա ժողովեալ Դաւթեանցն զՏեառնէ գոհացան: Զայս ամենայն զայսոսիկ զանպատմելի մեծագործութիւնսն Դաւթի լուեալ Շահթամազայ՝ կարգեաց զնա իշխան մեծ ի վերայ նախարարաց իւրոց եղելոց յաշխար հին Սիւնեաց և Արցախայ և Փայտակարանի ցԿուր գետ. և հրաման ետ հատանել դրամս յանուն իւր և զայլ անգրելի քաջութիւնս ցուցեալ՝ Դաւիթ ի 6 ամայ իշխանութեան իւրոյ հանգեաւ ի 1728 թուոջ:

1728. «Արդ օրինակ կայ մեզ արի Սիւնեաց իշխանն այս քաջ Դաւիթ,

Որ երկոքեամբք միաբանեալ գործեաց զայնս զօրս գործեաց Դաւիթ,

Զի քանզի զՅօվաբ անցոյց Մխիթարն և Աւետիքն քան զԱբեններ,

Ուստի թէ ա՛րդ ևս միաբանիմք անձն իւր անձնէ նոր քաջ Դաւիթ»:

1722. *Մխիթար սպարապետ քաջ անպարտելի նիզակակից Դաւթի, Սիւնեաց իշխանի:*
Աւետիք քահանայ քաջ սպարապետ և նիզակակից Դաւթի, Սիւնեաց իշխանի:
Թորոս իշխան գաւառին Զավնդուրայ Արցախու:
Փարսադան զօրավար իշխան Հալիձորոյ:

1724. *Պապ Սրապիոնեան վերակացու Կենաւուրգայ:*
Նուպար իշխան Զաքնդուրայ:

55բ *Գորգի զօրավար Դաւիթ-բէկի: /*
Ստեփաննոս Վրթանիսեան Շահումեան իշխան Կենաւուրգայ:
Պայինդուր զօրագլուխ Նուպարայ իշխան Զաքնդուրայ:

1725. *Պալի զօրավար, որդի Փարսադանայ Հալիձորոյ:*

1727. *Մուսի մէլիք քաղաքապետ Ագուլեաց:*

1740. *Թօփալ մէլիք և քալանթար Երևանու, հայր Մանուչարի:*

1742. *Խարում իշխան Աղամալեանց, վերակացու Նախիջևանու:*

1747. *Յարութիւն քալանթար, այսինքն ազգապետ Երևանու:*
Յակոբջան մէլիք Աղամալեան, իշխան Երևանու:
Խաչիբար մէլիք Քանաքեռցի, իշխան Երևանու:
Աւետիք քալանթար, իշխան Երևանու:
Մատթէոս մէլիք Աղամալեանց, իշխան Երևանու:
Յօհաննէս մէլիք Աղամալեանց, իշխան Երևանու:
Փանոս խօջայ, մեծ իշխան Երևանցի, շինող եկեղեցւոյ Անանիայի առաքելոյն:
Մանուչար քալանթար Գեղամեցի Թօփալեան, իշխան Երևանու:
Յարութիւն խօջայ Փլաւեան, իշխան Երևանցի:
Աստուածատուր Մեսրոբեան հազարապետ Գեղամեցի, իշխան Երևանու:

1748. *Սարգիսջան, մէլիք Գեղամեցի, իշխան Երևանու:*

1749. *Աղէքսանդր Աղամալեանց, իշխան Շոռօթեցի:*
Յովհաննէս Խնդամիրեան քաջ իշխան Շահկերտցի:
Մխիթար իշխան Շահկերտցի:
Ղազար զօրավար իշխան Շահկերտցի:
Բարաղամ մէլիք, իշխան Աստապատայ:
Պալում մէլիք, իշխան Աստապատայ:
Վարդազար զօրագլուխ Շահկերտցի:
Սառաթ մէլիք Սիսիանու:
Գրիգոր քաջ հսկայ Շահկերտցի:
Ղազար մէլիք Սիսիանու:

56ա 1750. *Յովակիմ խօջայ, մեծ իշխան Երևանցի, Խօջեանց:*

1755. *Գրիգոր իշխան Խօջաջանեան Զաքիկեանց Ջուղայեցի:*
Յովհաննէս Եղիազարեան մեծահամբաւ իշխան Ջուղայեցի, շինող եկեղեցեաց Հայոց Մոսկովու և Պետերբուրգու:
Եսայի քաջ, իշխան Ագուլեցի:

1766. Ադամ մէլիք, իշխան Արցախայ, մէլիք Հախիջանով:
Յովսէփ մէլիք, իշխան Արցախայ:
Եսայի մէլիք, իշխան Արցախայ, մէլիք Եկանեան:
Ալլահղուլի (այսինքն Աստուծոյ ծառայ) Սուլթան իշխան Արցախայ և տէր Բերդին:
Շահնազար մէլիք, իշխան Արցախայ:
Միրզախան մէլիք, իշխան Արցախայ, մէլիք Ալլահվէրդեան:

1770. Աւետիք մէլիք Բէհբուդեան, իշխան Տփխիսայ:
Գօրջասպ Թումանով, իշխան Թիֆլիզու:
Մինաս մէլիք Սաաթբէկեան, իշխան Երևանցի:
Շահամիր Սուլթանումեան Ջուղայեցի երևելի իշխան:

1814. Գէորգ Մելքիսեդէկեան Խուբով Խաղբակեան Արշակունի, որ սիրատոչոր ջանիւ, բայց սգապատեալ սրտիւ, լալագին աչօք, թախծեալ անձամբ, և ցաւալի մտամբք գրեաց զայս յիշատակագրրութիւնս դիւցազնացեալ տիրապետողացն Հայկազանց, որք իշխին և ոչ ես երևին, ոչ թէ տեղիք միայն, այլ մինչ հիշատակք ևս այնպիսեաց վեհանձանց և այլն:
«Լալօվ, սգալավ և արտասուօք, քան մելանաւ գրեա Գէորգ,
Գրեա, ողբա, մի՛ զարհուրիր, զի սգալի է դարս այս Գէորգ
Յայնքան արեաց և յարարմանցն զո՞րն և կամ զի՞նչ գտանես, Գէորգ,
Զի ինքեանք ցնորք եւ փառքն շտապ, քան զշուք անցին, Գէորգ»:
Եւ բաց յայսցանէ գտանեցեալք են առաջակայ նախատանք յազատ տանց կամ ի բարեպաշտ սերնդոց Հայոց և այլ բազում երևելի յատկացեալ իշխանք, յորոց ոմանք բարեպաշտութեամբ, ոմանք եկեղեցաշինութեամբ,

56բ | ոմանք ազգային բարերարութեամբ, այլք քաջար[ի]ութեամբ և այլք յոյժ մեծ գործունէութեամբ հանդիսացեալք են մեծեռանդ չահատակութեամբ. ուստի և զսակաւս ոմանս գոնէ յայնց չյիշատակեալ համարեալ ի խղճէ տագնապեցուցին միտք իմ զմատանս իմ յարձանացուցանել, որք են այսոքիկ:

1390. Տանտոյ դեսպան Լևոնի:
1561. Բաբայ Բուռթելեանց քաջ զօրապետ:
1562. Աբգար իշխան, դեսպան Միքայէլ կաթողիկոսի ի Հռօմ առ պապն:
Սուլթան, որդի Աբգարու դեսպանի:
1611. Աւետիք Ալթուն, Աստապատցի իշխան:
1614. Ռուհիջան, իշխան վանեցի, հանդերձ այլ խնդրամատոյց առ Սուլթան:
1722. Յօհաննէս իշխան ժամակազմ սիրեցեալ ի Շահթամազայ:
Աստուածատուր, իշխան Աստապատայ, ասպնջական Շահ-թամազայ:
Կարապետ Գրիգորեան Խուբով, բարեպաշտ իշխան, հայր Սիմէօն կաթուղիկոսի:
1750. Թաւար, իշխան Ջահկեցի:
1760. Եղիազար բարեպաշտ իշխան Ջուղայեցի, տեղափոխեալ ի Մոսկով քաղաք:
1764. Մելքիսեդեկ Կարապետեան Խուբով Խաղբակեանց, բարեպաշտ իշխան, եղբայր Սիմէօնի:
Թորոս, իշխան Աշտարակեցի, Կամսարական:
1765. Սարգիս Յօհաննէսեան, մեծահամբաւ իշխան Շամախեցի, տեղափոխեալ յԱստրախան:
Մինաս Դիլանեան, իշխան Շամախեցի, տեղափոխեալ յԱստրախան քաղաք:
Մկրտում Գալստեան, իշխան Ջուղայեցի, տեղափոխեալ յԱստըրախան քաղաք:
Գուրգէն Ստաթէիչ Արէշով, բարեպաշտ իշխան Թիֆլիզեցի:
1780. Մինաս Եղիազարեան, բարեհամբաւ իշխան Ջուղայեցի, տեղափոխեալ ի Մոսկով:
1785. Ստեփան Աբիմէլիքով, իշխան Թիֆլիզեցի:

1792. *Սահակ Թորոսեանց, բարեպաշտ իշխան Աշտարակեցի:*
Գէորգ Թորոսեան, բարեպաշտ իշխան Աշտարակեցի:
Յովսէփ Ղօրղանեանց իշխան Թիֆլիզեցի:

Բ. ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

61ա *ամի աշխարհի*

3720 *Նախ՝ սրբազան Մովսէս, մեծն ի մարգարէս, աստուածախօսն ի տեսանօղս և ճշմարտապատումն ի մատենագիրս:*
4017 *Դեկտիւս Կրետացի, հին պատմիչ Յունաց:*
4117 *Դարէս Փռիւգիացի, հին պատմիչ Յունաց:*
4767 *Հերոդոտոս Ադիկա[ր]նացի, հայր պատմաբանից:*
4770 *Թիւկիդէս Աթենացի, պատմաբան Յունաց:*
4799 *Կտեսիաս անուանի պատմաբան և բժիշկ Յոյն:*
4814 *Քսենոփոնտ Յոյն պատմաբան, որդի Գրիւղեայ:*
4818 *Արիստէաս սպասաւոր Պտղոմեայ և պատմաբան;*
4923 *Բիւռոս պատմիչ Քաղդէացւոց:*
4948 *Մանէթոս մեծանուն այր պատմիչ Եգիպտացի:*
5040 *Պօղիւբիոս Յոյն պատմաբան, որդի Լիկորտայ:*
5056 *Մարիբաս Կատինայ Ասորի, դեսպան Վաղարշակայ:*
5100 *Ապողոդորոս Աթենացի քաջ քերթող պատմաբան:*
5137 *Կիկերոն Տուղղիոտ իշխան պերճաբանութեան:*
5160 *Վերգիլլիոս անուանի պատմաբան Լատինացւոց:*

ամք տեառն

3 *Դիոդորոս Սիկիլացի մեծահռչակ մատաենագիր:*
5 *Սալլուստիոս Կայիոս Կրիսպոս պատմաբան Լատին:*
8 *Դիոնէսիոս Աղ[ի]կառնացի Յոյն մեծահամբաւ:*
12 *Տիտոս Լիւիոս անուանի պատմաբան Լատին:*
15 *Վելլեյոս Պատերկուլոս պատմաբան Լատին:*

18 *Ստրաբոն գերագանց երկրաչափ և պատմաբան Յոյն:*
35 *Փլորոս անուանի պատմագիր Լատին:*
44 *Փիլոն Եբրայեցի հռչակաւոր մատենագիր:*
67 *Ղեբուբնա դիւանադպիր, որդի Ափ՛շորյ:*
71 *Յովսէպոս Փլաբիոս Հրեայ պատմաբան:*
78 *Պլինիոս Սեկունդոս հռոմայեցի իշխանաւոր:*
94 *Կուինտիլլիանոս մեծահռչակ ճարտասան:*
103 *Տակիտոս Կոռնէլլիոս Լատին անվանի պատմիչ:*
61բ *Կեփաղիմոս Յոյն մեծանուն պատմաբան:*
Կեփաղիոն պատմաբան Յոյն:
Կուինտոս Կորտիոս Լատին անուանի պատմիչ:
105 *Պլուտարքոս Յոյն անվանի փիլիսոփայ:*
106 *Ապպիանոս Յոյն երևելի պատմաբան:*
118 *Շուետոնիոս Տրանտուիղոս Լատին պատմաբան:*
120 *Փղեգոն Լատին երևելի պատմիչ:*
128 *Արիստոն Փեղղացի Ասորի քարտուղար:*
140 *Յուլիոս Կապիտոլինոս պատմիչ:*
153 *Յուստինոս Լատին անուանի պատմիչ:*
185 *Աթէնէոս Յոյն ամուանի քերթող և պատմիչ:*
190 *Պաւսանիաս Յոյն մեծամաստ պատմաբան:*
211 *Բարդածան Եդեսացի Ասորի պատմիչ:*
216 *Պերմելիանոս եպիսկոպոս Կեսարիոյ պատմիչ:*
233 *Դիովն Կասսիոս իմաստասէր Բիւթանացի:*
238 *Կենսորինոս յոյժ հռչակաւոր ժամանակագիր:*
284 *Անոնիմոս անանուն լատին հնագոյն հեղինակ:*
315 *Տիղեմոն Տիոս պատմաբան:*
319 **Զենոբ Գլակ Ասորի եպիսկոպոս, աշակերտ Լուսաւորչին:*
321 *Եւսեբիոս Պամփիւղոս Կեսարացի մեծիմաստ:*
324 **Ագաթանգեղոս, ատենադպիր մեծին Տրդատայ:*
330 **Մարութա սուրբ եպիսկոպոս պատմագիր Հայոց:*
369 **Բուզանդ Փաւստոս եպիսկոպոս Հռոմ պատմիչ:*
370 *Որեզիոս Վիկտոր Լատին երևելի պատմաբան:*

372 Եւտրոպիոս հեղինակ Լատին հռոմայեցւոց պատմաբան:
383 Ամմիանոս Մարկեղինոս Լատին Անտիոքացի:
385 Ոլոմպիոդորոս Լատին պատմաբան:
416 Որոզիոս էրէց Լատին երևելի պատմաբան:
426 *Կորիւն հանճարեղ սքանչելի, աշակերտ Սահակայ:
428 Սոկրատ Սկոլաստիկոս Յոյն անուանի:
438 Սոզոմենոս Հերմիաս անուանի պատմիչ:
62ա 443 *Մովսէս Խորենացի սուրբ վարդապետ և քերթողահայր Հայոց:
466 *Եղիշէ սուրբ վարդապետ Հայոց, ատենադպիր Վարդանայ:
467 Թէոդորիտոս եպիսկոպոս Կիւրեայ պատմաբան:
470 Լեբարատոս երևելի, սարկավագ Կարթագենեայ:
471 Յորնանտես Գոթացի երևելի պատմիչ:
486 *Ղազար վարդապետ Փարպեցի, ճարտասան, աշակերտ Սահակայ:
500 *Թովմա վարդապետ Արծրունի, աշակերտ Եղիշէի:
525 Կասսիոդորոս աբբայ մատենագիր:
540 Զաքարիա Ասորի, եպսկոպոս Մելիտինւոյ, պատմաբան:
547 Պրոկոպիոս հռետոր խորհրդական:
568 Ագաթիաս Սկոլաստիկոս իմաստասէր:
580 *Ուխտանէս Ուռհայեցի, եպիսկոպոս Հայոց:
594 Եւագրիոս Ասորի, երևելի փաստաբան:
600 Մենանդր անուանի պատմաբան Յունաց:
601 Թէոփիլակտոս Սիմակատտա Եգիպտացի:
602 Յօհաննէս եպիսկոպոս Մաղաղ հնախօս Անտիոքացի:
645 *Յօհաննէս եպիսկոպոս Մամիկոնեան, պատմաբան Հայոց:
641 *Մօսէս երկրորդ Սիւնեաց եպիսկոպոս, պատմաբան Հայոց:
684 *Գրիգորիոս սուրբ եպիսկոպոս Արշակունեաց Հայոց:

720 *Յովհան Օձնեցի իմաստասէր և սուրբ հայրապետ Հայոց:
760 Գէորգ Սինկեղոս Յոյն երևելի պատմիչ:
810 Թէոփանէս վանահայր Յոյն պատմաբան:
815 Նիկեփորոս սուրբ պատրիարք Կոստանդնուպօլսի:
818 Դիոնէսիոս Ասորի պատրիարք յակոբիկեանց:
830 *Շապուհ Բագրատունի քաջ պատմաբան Հայոց:
864 Անաստաս գրապետ Լատին մատենագիր:
*871 Համամ վարդապետ Հայոց պատմաբան:
878 Փոտ Ֆօղիոս Բռօթոսբադարիոս Յոյն:
880 Դաւիթ Նիկետ Յոյն պատմիչ:
*897 *Յօհաննէս կաթողիկոս Հայոց, Դրասխանակերտցի:
940 Սիմէօն Մետափրաստէս անուանի պատմիչ:
62բ 926 Կոնստանդին կայսր Պերփուօժէն Հայկազն:
964 *Մեսրոբ էրէց Հայոց ի Վայոց ձորոյ պատմաբան:
Յովսէփ Գնեսիոս պատմաբան Յունաց:
Գէորգ Մոնախոս միայնակեաց Յոյն պատմիչ:
Լևոն Գրամատիկոս Յոյն պատմիչ:
Սիմէօն Մագիստրոս իշխանաւոր Յոյն պատմիչ:
973 *Սուրբ Գրիգոր Նարեկացի հրեշտակակրօն վարդապետ Հայոց:
992 *Ստեփաննոս վարդապետ Տարոնեցի Ասողիկ պատմաբան Հայոց:
1041 *Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի հռետոր Հայոց:
1053 *Արիստակէս վարդապետ Լաստիվերտցի պատմիչ Հայոց:
1057 Գէորգ Կեդրենոս միայնակեաց Յոյն պատմիչ:
1081 Յօհաննէս Սկիլիցէս Կիւրապաղատ Յոյն պատմիչ:
Բրուեննիոս կրտսեր Նիկեփորոս Կեսարեցի:
Ալէքսիաս՝ գիրք Աննա Կոմնենա դշխոյի:
1115 *Սարկավագ Յօհաննէս վարդապետ բանիբուն հռետոր Հայոց:
1118 Յօհաննէս Զոնարոս Յոյն հռչակաւոր պատմաբան:
1118 Միքայէլ Գլիկաս Սիկիլեացի Յոյն պատմիչ:

973 *Մատթէոս Վանէրէց Ուռհայեցի Հայոց պատմիչ:
Կոնստանդին Մանասէ Յոյն պատմիչ
Յօհաննէս Սիննամոս ատենադպիր ի դրան կայսեր:
Նիկիտաս Հոնեատէս Յոյն ի դրան կայսեր:

1136 Կաննէ Բարանդրէոս եպիսկոպոս Ասորի:

1136 Կարապետ վարդապետ գիտնական, պատմաբան Հայոց:

1145 *Գրիգոր Էրէց, պատմիչ Հայոց:

1148 *Սամուէլ Էրէց Անեցի ժամանակագիր Հայոց:

1164 *Ներսէս Շնորհալի սրբազան հայրապետ և բարեկարգիչ Հայոց:

1176 Միխայէլ պատմաբան Ասորի:

1186 *Ներսէս Լամբրոնացի եպիսկոպոս Տարսոնի վարդապետ Հայոց:

1190 *Սամուէլ աբեղայ Սկեռացի, պատմաբան Հայոց:

1200 *Գրիգոր վարդապետ Սկեռացի, քաջ հռետոր Հայոց:

1201 *Գէորգ վարդապետ Սկեռացի, պատմիչ Հայոց:

63ա 1211 *Արիստակէս գրասէր քերթող Հայոց:

1211 *Գէորգ վարդապետ Սսեցի, գրիչ Հայոց:

1211 Վիլեբրանդ կանոնիկոն Գրմնցի:

1212 *Մխիթար քահանայ Անեցի պատմաբան Հայոց:

1220 *Վանական Յօհաննէս վարդապետ, աշակերտ Մխիթարայ:

1241 *Մեծն Վարդան վարդապետ Բարձրբերդցի, աշակերտ Վանականի:

1242 *Կիրակոս վարդապետ Գանձակեցի, աշակերտ Վանական վարդապետի:

1253 Բարեբրեյոս Գրիգոր Ապուլփարաջ Ասորի:

1263 *Մաղաքիաս աբեղայ պատմիչ, աշակերտ Վանականի:

1270 *Վահրամ վարդապետ Րաբուն անուանեալ Հայոց պատմիչ:

1294 *Ստեփաննոս Ուռպելեանց եպիսկոպոս Հայոց Սիւնաց:

1298 *Զաքարիա Ծործորեցի եպիսկոպոս Արտազու, Հայոց պատմիչ:

1306 *Հեթում իշխան Կոռիկոյ կրօնաւոր պատմաբան:

1322 Յօհաննէս Վիլաննոս Լատին պատմիչ:

1324 Նիկեփորոս Կալլիստոս պատմաբան:

1326 Գէորգ Պախումերոս Յոյն պատմիչ:

1335 *Սմբատ Կիւլիկեցի պատմաբան Հայոց:

1337 Ներսէս Պաղոն Պալիենց Գանոնիկոն քահանայ:

1343 Յօհաննէս Կանտակուզենոս կայսր պատմիչ:
Գէորգ Ակրօպօլիտ պատմաբան:

1350 Նիկեփորոս Գրեգորաս Յոյն պատմիչ:

1374 *Մարտիրոս վարդապետ, պատմագիր Հայոց:

1392 *Գրիգոր Տաթևացի սուրբ վարդապետ, հռետոր Հայոց:

1400 *Գրիգոր վարդապետ Խլաթեցի Ծերենց Հայոց պատմիչ:

1401 *Առաքել եպիսկոպոս Սիւնեաց, պատմաբան Հայոց:

1402 *Յակոբ վարդապետ Հայոց Ղրիմեցի, պատմիչ:

1400 *Մխիթար Ապարանցի ունիթոռ պատմաբան:

1430 *Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոս Ամդայ:

1440 Դուկաս ազնուական Յոյն պատմիչ:

1444 *Թովմաս վարդապետ Մեծոբեցի աշակերտ Տաթևացւոյն:

1453 Լաւոնիկոս Քալկոնտիւղաս Յոյն:

63բ 1460 Գէորգ Փրանձաս իշխանաւոր պատմաբան:

1553 *Թադէոս վարդապետ Սեբաստացի, Հայոց պատմաբան:

1560 *Ղուկաս վարդապետ Կեղեցի մատենագիր Հայոց:

1580 *Յովհան Նարեկացի ժամանակագիր Հայոց:

1597 Բարոնիոս Կեսար կարդինալ Լատին պատմիչ:

1600 *Գրիգոր աբեղայ, պատմաբան Հայոց:

1622 *Ներսէս վարդապետ Մոկացի Բեղլու, Հայոց պատմիչ:

1625 Կուռնելիոս Ալափիտէ մեկնիչ:

1630 *Մելքիսեթ վարդապետ Երևանցի, քերթող Հայոց:

1631 Պետաւիոս Դիոնէսիոս վարդապետ:
1641 Կլեմէս Գալանոս Լատին կրոնաւոր պատմիչ:
1644 Կաեն Ալտոս Ովդերիկոս պատմաբան:
1650 Յակոբ Ովսերիոս արքեպիսկոպոս լուտերական:
*1662 *Առաքել վարդապետ Դաւրիժեցի, միաբան Էջմիածնի:*
1702 Յոսէփ Սիմոն Ասսեման Ասորի պատմիչ:
1703 Մարէս Սողոմէն պատմագիր Արաբացւոց:
1704 Ապուլֆաթ աշխարհագիր Արաբացւոց:
1711 Յօհաննէս Յովակիմ Ըսքրոդեր Մըրուրգեցի:
1733 Օգոստինոս Կալմէթ կրօնաւոր աբբայ:
*1737 *Ղազար Ջահկեցի կաթողիկոս Հայոց:*
*1777 *Սիմէոն Երևանցի կաթողիկոս Հայոց աստուածաբան:*
**Հին ճառընտիրք Հայոց:*
**Յայսմաւուրք Հայոց:*
*1784 *Միքայէլ Չամչեան ախտարմատ ժողովօղ և կամահօղ պատմագրրաց:*

Բայց յայսցանէ գտանին եւ վկայութիւնք պատմաբանից բազմաց եւ մատեանս այլոց, բայց ժամանակք նոցա ոչ ուրեք յայտնին, որպէս են սոքին:

**Խոսրով վարդապետ Սահառունի, մատենագիր Հայոց:*
**Խոսրով պատմագիր Հայոց:*
64ա **Ղևոնդ պատմաբան Հայոց:*
**Թովմաս պատմաբան Հայոց:*
**Մովսէս Կաղկանտուացի, պատմիչ Աղուանից:*
**Հերակլ, պատմաբան Հայոց:*
**Ապուսահլ, պատմագիր Հայոց:*
Ստեփաննոս Եւոտիոս եպիսկոպոս ասպմից Ասորի:
**Աբրահամ Էրէց, պատմիչ Հայոց:*
Բերտոսլաւրեն Տիոս Օգոստինեան:
Կամադրոս երևելի պատմաբան:
Աբիւգենոս հնագոյն և հաւատարիմ մատենագիր:
Դիոնէսիոս Բարսալիպ եպիսկոպոս Ասորի:
Վիլելմոս Տիւրացի պատմիչ:

Պօղոս Վենետիկեցի, երևելի պատմաբան:
Լևոնարդոս Սիդոնացի Լատին եպիսկոպոս:
Սեքստոս Սուփոս անուանի պատմիչ:
Յեսու Եդեսացի հռչակաւոր պատմաբան:
Ամրոս պատմիչ Արաբացւոց:
Գուալտեր Արետինոս Հռոմայեցի:
Վաղեսիոս Հենրիկոս հռչակաւոր պատմաբան:
Յովէլ Յոյն անուանի մատենագիր:
Բանգարսիոս մեծահռչակ պատմաբան:
Անանուն պատմիչ Հայոց:
Յօհաննէս Վայլանտ Գաղղիացի պատմաբան:
Միքայէլ Լեքէն Գաղիղիացի յետին մատենագիր:
Սևերիոս Սուլպիկէս պատմաբան:
Հիւպողիտոս Բորտուեցի պատմիչ:
Յօհաննէս Անտօն Վենետկցի պատմաբան:
Կղոտիոս Սալմաս մատենագիր:
Եմուղիոս Պրոբոս պատմաբան:
Փականդոս Հերմեն երևելի ժամանակագիր:
Թովմաս Ըսթանլէս Անդլիացի պատմաբան:
64ա *Իսահակ Վոսիոս մատենագիր:*
Փիլոս Տորփիոս անուանի պատմիչ:

. . . .

65ա . . . .

Սոյնպէս են եւ այլք բազումք, որք զանցեալ դարս եւ զինացեալ ժամանակսն հնադարձ գործեցելովքն ի նուին ներկայացուցեալ հանդէպ աչաց բանասիրաց ցուցանեն եւ ուսուցանեն զինչս ինչ ի նոսին եղեալ անցեալին են, յորոց եւ իմ ուսեալ ուսուցանեմ զանտեղեակ ազգասէրս ի նոցունց լուեալ լսեցուցանեմ բարեխընդիր ունկնդրաց զանուանս և զարարս | այնց անձանց, որոց յիշատակք ի տախտակ սրտից եւ գործք առա-
65բ ջի աչաց եւ զովութիւնք ի բերանս բնաւից բարբառեալ յարժամ արժան է:

Գ. Խուբովը կանխում է Մանվել Վ. Կյումուշխանեցուն, XIX դ. առաջին կեսի հայ պատմաբանին, որը հեղինակ է հետևյալ պատմագրական գործերի. ա. «Պատմութիւն անցից Սէվանա Վանուց» (Տփղ. 1832, Կ. Պ. 1841), բ. «Լուծ արմատոյն մերոյ» 1830 (տպ. Վաղ. 1871), և գ. «Յիշատակարան, սկսեալ 1830» (տպ. Տփղ. 1917):

ԽՈՒԲՈՎԸ ԻԲՐԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Գ. Խուբովի բանաստեղծություններն ամփոփված են նր 2 գործում, որոնցից մեկն է արդեն մեզ ծանոթ «Գավազանագիրքը», իսկ մյուսը «Երգարանն» է: Առաջինը գրի է առնված 1814 թ., երկրորդը 1825 թ., երկուսն էլ Ղզլարում կեցած պահին, մինչ Աստրախան փոխադրվելը, որը տեղի ունեցավ 1827 թ.:

«Երգարան»-ի միակ ձեռագիրը հասել է մեզ Հայաստանի Մատենադարանում № 487/499-ի ներքո:

Ձեռագիրն ունի ընդարձակ վերնագիր-տիտղոսաթերթ, որ կարդացվում է այսպես. «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից: Շարահիւսեալ ի ներդնեալ ոգի բազմաշխատ Գէորգ Մելքիսեդէկեան Խուբով իշխանէ, յեղբօրորդւոյ տեառն Սիմէօնի մեծի ամենայն Հայոց Հայրապետին հանգուցելոյ. երկակի հայեցմամբ, այն է՝ ըստ նկարագրին իբր ի սէր սիրելեաց և վասն ներքին դիտման առ սէր անուն սիրելին և միշտ ըղձալին համայն սիրելեաց:

Ի հայրապետութեան տեառն Եփրեմայ կայսերապսակ սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց, հոգեծնի նոյնոյ տեառն Սիմէօնի Հայրապետին...

Ի զանազան ժամանակս և ի զանազան տեղիս վասն խնդրոյ այլոց կամ վասն յարմար դիպմանց և արժանաւորութեանց յօրինեալք:

Ամի տեառն 1825 և մարտի 6-ումն:

(Գրեցի այս) ի Ղզար»:

Տիտղոսաթերթի մյուս երեսից մեկ և կես էջ գալիս է առաջաբանը՝ «Ձեկուցումն ինչ» վերնագրով, ուր Գ. Խուբովը խոստովանում է, թե ինչպիսի հանգամանքներից դրդված նա ձեռնամուխ է եղել երգարան կազմելուն: Խոսում է յոթնասուն լեզուների մասին: Իսկ որպեսզի նրա երգերը գեղարվեստական հաճույք պատճառեն, նա դիմել է բնությանը: Ապա՝ խոսելով բուն երգերի մասին՝ նշում է, որ ինքը Տիրոջ ամենախոնարհ ծառայից ծառան է: Ընդ սմին նա ասում է. «Ամենաքաղցր բնութեան մարդասիրին քաղցրացեալ զփառաբանութիւնս զանազան լեզւօք պէսպէս բարբառովք և այլ և այլ եղանակօք ընկալնու» և այլն: Ստորագրությունն է՝ «Գէորգ Մելքիսեդէկեան Խուբով Խաղբակեանց»:

Ձեռագիրը պարունակում է 37 թերթ և ընդգրկում է 44 երգ, որոնք (անխտիր բոլորը) ակրոստիխներ են, բաղկացած յուրաքանչյուրը 3-ից մինչ 8 տուն, այսինքն.

ա.	*3*	*տուն ունեցող*	*–«ի Գէ»*	№№ *7, 12*	*ընդամենը*	2
բ.	*4*	,, ,,	*–«ի Գէգ»*	№ *14*	,,	1
գ.			*–«ի Գէո»*	№№ *1, 8, 10, 13, 15, 21, 27, 33, 34, 35, 36, 38, 40, 42*	,,	14
դ.	5	,, ,,	*–«ի Գէոր»*	№№ *6, 9, 22, 23, 25, 28, 29*	,,	7
ե.	6	,, ,,	*–«ի Գէորգ»*	№№ *14, 18*	,,	2
զ.	7	,, ,,	*–«ի Գէորգէ»*	№№ *2, 3, 11, 16, 19, 24, 26, 30, 31, 32, 37, 39, 41, 43, 44*	,,	16
է.	8	,, ,,	*–«ի Գէորգե է»*	№№ *5, 20*	,,	2

Տողերի հանգերը միատեսակ են նույն տան մեջ:

Բանաստեղծություններն այլևայլ բովանդակությամբ են. տաղեր, ներբողներ, ողբերգություններ, երգեր, խաղեր և այլն, որոնց թվում մի քանիսը հայրենասիրական ոգով գրվածներ, մի մասը՝ սեղանի երգեր:

«Երգարան»-ի բովանդակության մասին գաղափար կազմելու համար տալիս ենք բանաստեղծությունների ցուցակը.

ա. *«Երգ ի Գէորգ Մելքիսեդէկեան Խուբովէ վասն մարդեղութեան Աստուծոյ Բանին երգեալ», 4 տուն– 36 տող (էջ 3ա–բ):*

բ. *«Երգ ի նոյնոյ Գէորգ Մելքիսեդէկեան առ ամենօրհնեալ Աստուածածին դրուատեալ», 7 տուն– 28 տող (էջ 3բ–4ա):*

գ. *«Ողբ ի նոյնոյ Գէորգ Խուբովէ, ի դիմաց ամենասուրբ Աստուածածին ի խաչելութիւն Քրիստոսի աղեգալար տոչորմամբ երգեալ», 7 տուն– 35 տող (էջ 4ա–բ):*

դ. *«Դարձեալ ողբ ի նոյնոյ Խուբովէ ի դիմաց ամենասուրբ Աստուածածին ի խաչելութիւն Քրիստոսի լալագին հեծեծանօք երգեալ», 5 տուն– 20 տող (էջ 4բ–5բ):*

ե. *«Ի նոյնոյ Խուբով իշխանէ առ Մկրտիչն Յօհաննէս երգեալ», 8 տուն– 32 տող (էջ 5ա–բ):*

Այս տաղի ամեն մի տան տողերը վերջանում են միևնույն անունով կամ բառով, որոնք են՝ Յօհաննէս, Կարապետ, առաքեալ, մարգարէ, Մկրտիչ, աւետիս, մարտիրոս, Գէորգ:

զ *«Ի նոյնոյ իշխանէ առ աստուածահայրն Դաւիթ դրուատեալ», 5 տուն– 26 տող (էջ 6ա):*

է. *«Ի նոյնոյ իշխանէ ի յարմատոյն Աբրահամու պարթևական հզօր ոստոյ», 3 տուն– 12 տող (էջ 6բ):*

ը. *Ի նոյնոյ առ սուրբ Սարգիս զօրավարն ներբողեալ», 4 տուն– 11 տող (էջ 6բ):*

թ. *«Ի նոյնոյ Գէորգէ առ յաղթող վկայն Քրիստոսի սուրբ Գէորգ քաջ զօրական», 5 տուն– 25 տող (էջ 7ա):*

ժ, *«Նորին առ սուրբ Էջմիածնի մենացելոյն (մեանացելոյն sic) ի միաբանից ողբալով երգեալ», 11 տուն– 46 տող (էջ 7բ):*

ժա. *«Ի նոյնոյ իշխանէ վասն սրախողխող առմանն Գանձակու», 7 տուն– 30 տող (էջ 7բ):*

Գրված է 1804 թ. դեպքերի կապակցությամբ:

ժբ. *«Ի նոյնոյ Գէորգէ առ Ն. Կ. Մեծութեանն դրուատեալ», 3 տուն– 18 տող (էջ 8ա):*

Ձոնված է Աղեքսանդր I կայսեր:

ժգ. *«Ի նոյնոյ Խուբովէ առ գերարժանս լուելեացն խորհրդով և զանխուլ ժամանակի սգեալ», 4 տուն– 16 տող (էջ 9ա):*

ժդ. *«Ի նոյնոյ ի տօնի տեառն Եփրեմ սրբազան վեհափետի ի մուտն հունվարի յաւուր շաբաթի ի Մոզդոք քաղաքի երգեալ», 4 տուն– 17 տող (էջ 9ա):*

Ձոնված է Եփրեմ ամենայն Հայոց կաթողիկոսին 1810 թ. հունվարին Մոզդոկ մտնելու առթիվ:

ժե. *«Ի նոյնոյ առ նոյն սրբանազասուրբ վեհափետն Եփրեմ ներբողեալ», 4 տուն– 16 տող (էջ 9բ):*

ժզ.*«Ի նոյնոյ իշխանէ առ Առաջնորդս և Արհիս աստուածաբեալ», 7 տուն– 21 տող (էջ 9բ):*

ժէ. *«Ի նոյնոյ Խուբովէ վասն հանդիսավեհութեան քաջահաղթ մեծ զօրապետին Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովին ներբողեալ», 7 տուն– 21 տող (էջ 10ա):*

Այս ներբողը հորինված պիտի լինի 1816–1825 թ.թ. միջոցին (1816 թ. Երմոլովի Վրաստանի կառավարչապետ նշանակվելու թիվն է, 1825 թ.՝ երգարանի ձևակերպումը):

ժը. *«Ըստ բարձու հրամանի տեառն Եփրեմայ սրբազնասուրբ վեհափետին վասն որպխութեան Ադամեանց, ի սկզբանէ ցկատարած կենացն բացայայտեալ ի նոյնոյ Խուբովէ», 6 տուն– 32 տող (էջ 10բ–11ա):*

ժթ. *«Ի նոյնոյ Գէորգէ ի դիմաց սուրբ Էջմիածնի մեծացելոյն յորդորանք առ Մինաս իշխան Եղիազարեան կամ մեծազն», 7 տուն– 20 տող (էջ 11ա–բ):*

Մինաս Եղիազարյանը Երևանից գաղթած և Թիֆլիսում բնակության հաստատված՝ Գ. Խուբովի ժամանակակիցն էր:

ի. *«Ի նոյնոյ Խուբովէ առ նոյն Մինաս իշխան կամ առ այլ յատկացեալս», 8 տուն– 24 տող (էջ 11բ–12ա):*

իա. *«Ի նոյնոյ ի վերայ սեղանոյ ուրախութեան և բազմազանց գոհութեան երգեալ», 4 տուն– 19 տող (էջ 12ա):*

իբ. *«Ի նոյնոյ իշխանէ երգ ուրախութեան ի սէր գալստեան (գլոտեան. sic) հիւրոց», 5 տուն– 23 տող (էջ 12բ):*

իգ. *«Ի նոյնոյ վասն յարգելի բազմականաց սեղան երգեալ», », 5 տուն– 21 տող (էջ 13ա):*

իդ. *«Ի նոյնոյ առ գերազանց յատկացեալ իշխանս», 7 տուն– 20 տող (էջ 13բ–14ա):*

իե. *«Ի նոյնոյ Խուբովէ առ գերազանցեալ իշխանս», 5 տուն– 20 տող (էջ 14ա):*

իզ. *«Ի նոյնոյ Գէորգ իշխանէ վասն նորոգ ամուսնացելոց, վասն խնդրոյ ուրումն իշխանի հատկացեալ սիրելւոյ յօրհնեալ», 7 տուն– 33 տող (էջ 14բ–15ա):*

իէ. *«Ողբ նորին Գէորգայ ի վրդովմանն Հայաստանի ողբալով ողբեալ», 4 տուն– 24 տող (էջ 15ա–բ):*

իը. *«Ողբ ի նոյնոյ յաղագս բարձման յատկացեալ իշխանաց մերոց, բարձու հրամանաւ սրբազնասուրբ վեհափետին յօրհնեալ ի Ս. Պ. Բ.», 5 տուն– 29 տող (էջ 15բ–16ա):*

իթ. *«Ի նոյնոյ գրեանք առ աւետաբեր կռունկ թռչունն ըստ խնդրոյ աստուածաբանի ուրումն ի Ս. Պ. Բուրգ», 5 տուն– 30 տող (էջ 16ա–բ):*

լ. *«Ի նոյնոյ տաղ սիրոյ երկակի յայեցմամբ առ սէր անուան, դարձեալ ըստ խնդրոյ նոյնոյ բաբունւոյ ի Ս. Պ. Բ.», 7 տուն– 31 տող (էջ 16բ–17ա):*

լա. *«Ի նոյնոյ առ սիրելին և խորհրդաբար առ համայնից ցանկալին, դարձեալ ըստ խնդրոյ նոյնոյ աստուածաբանի», 7 տուն– 28 տող (էջ 17ա–բ):*

լբ. *«Ի նոյնոյ Խուբովէ առ Կատարինէ տիկինն և առ հարգելիս տիկնայս», 7 տուն– 21 տող (էջ 18ա):*

լգ. «Ի նոյնոյն տաղ սիրոյ երկակի նկատմամբ, ըստ խնդրոյ միայնացեալ քահանայի ուրումն», 4 տուն– 20 տող (էջ 18ա–բ):

լդ. «Նորին Գէորգեայ ի դիմաց հոգւոյն բարեսնաբար (?) (բրասնբր. sic), առ մարմինն ստդտունքս, 4 տուն– 16 տող (էջ 18բ–19բ):

լե. «Ի նոյնոյ Խուբովէ ստդտունքս, դարձեալ առ բազմամեղ անձն իւր», 4 տուն– 20 տող (էջ 19ա):

լզ. «Նոյնն ըստ լուսնեակ թռչնակն...», 4 տուն– 15տող (էջ 18բ–19բ):

լէ. «Ի նոյնոյ տաղ ուրախութեան դարձեալ առ լուսնեակն...», 7 տուն– 28 տող (էջ 19բ):

լը. «Նոյնոյ սրտառուչ մաղթանք առ Աստուած», 4 տուն– 16 տող (էջ 20ա–բ):

լթ. «Նույնոյ վասն սիրահար սիրելւոյ մանաւանդ առ գերազանց սիրելի», 7 տուն– 15 տող (էջ 20բ):

խ. «Տաղ ի նոյնոյ ի յոյժ նեղիլն ի հոգւոյ պանդխտեաց, առ բարեկամս և սիրելիս իւր գանգատեալ», 4 տուն– 20 տող (էջ 20բ–21ա):

խա. «Ի նոյնոյ Գէորգ Խուբովէ առ ինքն զգալ...(?) ազգ ինչ (?)», 7 տուն– 28 տող (էջ 21ա–բ):

խբ. «Ի նոյնոյ ամենավշտալի Խուբովէ ստուգանք (?) առ մշտապատրիչ (?) կենցաղս կեղծաւորս», 4 տուն– 16 տող (էջ 21բ–22ա):

խգ. «Նա ինքն Խուբովն սոսկացեալ զզառն յիշատակ մահուանէն... բողոքէ», 7 տուն– 23 տող (էջ 22ա–բ):

խդ. «Նոյնոյ Գէորգեայ Խուբովի... ի սոսկալն ի յահէ դատաստանին», 7տուն– 19 տող (էջ 22բ):

Որոշ արժեք ունի ձեռագրի վերջում (էջ 36բ–37ա) կցված ցանկը, ուր նշված է, թէ ո՞ր երգը ի՞նչ եղանակով պիտի երգվի կամ նվագվի.

«Թէ ըստ Թարց ուսման ըստ դիտման կամ ժամանակի երգողին երգել այլոց, բայց նշանակեմ զնոյնաձայնս ոմանս տեղեակք նոցին՝ այնքան գոնէ կարողացին երգել նոյնաձայն միասին (զորս պարտ է այսպէս).

«Առաջին որպէս Այսօր տօն է ծննդեան աւետիս տեառն մերոյ:

թ. –Առաւօտեան քաղցր և անուշ հովերն (Ղափանցի Պետրոս վարժապետ).

ժ. –Բիւլբիւլն նստել էր տրտում վայ կանչելով (Զաքարիայէ):

ժա.–Նստէք ի մէջլիս հարք և եղբարք (Յովնաթանէ):

ժբ. –Լսել պարտ է քիմ գեօր...? (Շիրինի):

ժգ. –Յարմար ձևով պաւական պաւական (Աւետիքի):

ժէ. –Սրահար եղեր չար իշխան (Սերոբէ վարժապետի):

ժթ. –Եմ սևացեալ տեսութեամբ (Նարեկացւոյն):

իբ. –Յորժամ եղև գարուն՝ արև ծագեցավ (Յովհաննի):

իգ.–Արիք եղբարք ելցուք այսօր յայգեստան (յՕշականցի Գրիգոր):

իե. –Ի չալըմ ի չալըմ սարդոն գեչալմ (Շահաբասայ):

իէ. –Ով բորոտ և մարդասէր տէր իմ, աստուածապետական (Սիմէօն կաթողիկոսի):

լ. –Ի բարձունս երկնից (Սերոբէ վարժապետի):

լգ.–Ի տարանջատ վայր ես, ահա սա ընծայեմ (Սիմէօն կաթողիկոսի):

լզ. –Միրովամ ռահի, մի քեարի մահի (պարսից խաղ է):

խբ. –Ի քոյ ձեռոցդ ես, ու՞ր փախեցայց կամ յո՞ր (Սիմէօն հայրապետի):

խգ.–Գեղն զըլար խսկի դէրայ վարալմ (օսմանցող):

խե–Զորեղ փչան յուժին հողմոյ (Գրիգոր յՕշականցւոյ)»:

«Երգարան»-ի հիմնական նյութն ըստ բովանդակության կարելի է դասավորել այսպես.

ա. Տաղեր՝ կրոնական. «Վասն մարդեղության բանին» (1), աստվածնին (2, 3, 4), Հովհաննես Մկրտչին (5), Դավիթ Մարգարեին (6), Գրիգոր Պարթևին (7), Ս. Սարգսին (8), Ս. Գևորգին (9), Էջմիածնին (10):

բ. Տաղեր՝ սիրո (30, 31, 33, 39),սեղանին և ուրախության (21, 22, 23, 37), «ի նորոգ ամուսնացելոց» (26):

գ. Ներբողյաններ, Աղեքսանդր I կայսեր (12), Եփրեմ կաթողիկոսին (14, 15, 16, 18), գեն. Ա. Պ. Երմոլովին (17), Մինաս Եղիազարյանին (19, 20), «առ գերազանց հատկացյալ իշխանս» (24, 25), «առ Կատարինէ տիկինն» (32):

դ. Բնությանը նվիրված. կռունկին (29), լուսնյակ թռնակն (36, 37):

ե. Պատմական. Գանձակի առման առթիվ (11), Ողբ ի վրդովմանն Հայաստանի» (27), «Յաղագս բարձման հատկացեալ իշխանաց մերոց» (28):

ը. Մաղթանք (38).

և այլն:

Երգերը գրված են մասամբ այլևայլ անձանց պատվերով, օրինակ՝ Եփրեմ կաթողիկոսի (28), ոմն աստվածաբանի-րաբունու (29, 30, 31), ոմն միայնացյալ քահանայի (33) և այլն:

* * *

«Գավազանագրքի» այլևայլ տեղերում Գ. Խուբովը մտցրել է 30-ի չափ տաղեր՝ նվիրված հայոց նահապետներին, իշխաններին և թագավորներին, տաղերը մեկ, երկու կամ երեք տուն են պարունակում՝ յուրաքանչյուրը 4 տողից բաղկացած:

Արամին	2	տուն	էջ	4ա	Սմբատին	2	տուն	էջ	38ա
Պարոյրին	2	,,	,,	5բ	Աշոտին (շահնշահ)	1	,,	,,	39բ
Տիգրանին	2	,,	,,	7ա	Գէորգ (Մարզպ.)	1	,,	,,	40ա
Վաղարշակին	2	,,	,,	11ա	Աշոտ (Ողորմածին)	1	,,	,,	41ա
Արշակին	1	,,	,,	12ա	Զմշկիկին	1	,,	,,	42ա
Արտաշէսին	3	,,	,,	13ա	Դաւիթին	1	,,	,,	44ա
Աբգարին	3	,,	,,	18ա	Գրիգոր (Մագիստ.)	2	,,	,,	45բ
Տրդատին	2	,,	,,	21ա	Թորոսին	1	,,	,,	48ա –բ
Վարազդատին	1	,,	,,	23բ	Լևոնին	2	,,	,,	49բ
Վարդանին	3	,,	,,	26ա	Հեթումին	1	,,	,,	50բ
Վահանին	2	,,	,,	29բ	Լևոնին	1	,,	,,	51բ
Ներսէսին	1	,,	,,	31ա	Լևոնին	2	,,	,,	53ա
Մօրիկին	2	,,	,,	31բ	Դաւիթ բէկին	1	,,	,,	55ա*
Մժէժին	1	,,	,,	32բ	Գէորգ Խուբովին	1	,,	,,	56ա*
Վասիլին	2	,,	,,	37ա	(ինքը իրեն)				
Լևոնին	1	,,	,,	37բ					

“ГЕОРГ МЕЛКИСЕДЕКЯН ХУБОВ, АРМЯНСКИЙ ИСТОРИК И ПОЭТ– ПАТРИОТ ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XIX ВЕКА

Р е з ю м е

Цель данной работы выяснить личноть и отношение к литературе одного из предшественников Х. Абовяна на поприще армянской культуры – Георга Хубова, материалы о котором преимущественно сосредоточены в Гос. Центр. Историческом Архиве Груз. ССР.

Георг Мелкиседекян Хубов (1762-1829) – это одна из интересных
фигур переходной эпохи, забытых или, вернее говоря, преданных
забвению, в истории армянской культуры вообще, и литературы, в част-
ности, и которые, находясь под гнетом персидских ханов, видели един-
ственное спасение Армении и армянского народа в покровительстве Рос-
сии и помощи русского народа.

Будучи выходцем из Еревана (род. В 1762г.), Г. Хубов после присое-
динения Грузии к России эмигрировал в Грузию, в Тифлис, где он пробыл
с 1803 по 1805 год, а затем переехал на Северный Кавказ и в Россию, где
пробыл в городах – Моздоке, Петербурге, Кизляре и Астрахани. Повиди-
мому, скончался в Астрахани около 1829 г. и там же похоронен.

Литературная деятельность Г.Хубова может быть прослежена по 2
жанром: историография и лирика.

На поприще историографии Г. Хубов известен двумя произведениями,
из коих одно – это “Описание достопримечательных произсшествий в
Армении” за 1778-1809 г.г. опубликованное в русском переводе в Петер-
бурге в 1811 г., другое же – это обнаруженная нами недавно в частной
коллекции и приобретенная для Гос. Центр.ист. архива Груз ССР обшир-
ная рукопись на армянском языке, содержащая в себе ”Хронографическую
историю” Армению с древнейших (незапамятных) времен до 1814 г., где
сообщаются весьма интересные сведения по истории Армении после
потери ею государственной самостоятельности (1375 г.), с очерком ис-
тории армянских меликств и, в частности, эпопеи Давид-бека.

Как лирик Г. Хубов известен своим “Песенником”, составленнным в
Кизляре в 1825 г. и предназначенным для детей школьного возраста, а
также патриотической лирикой, в частности элегиями об Армении и ее
исторических деятелях, которые вкраплены как в “Песенник”, так и
“Хронографическую историю”.

ՀԱԿՈԲ ՇԱՀԱՆ-ՋՐՊԵՏՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱՀԱՅՏ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՆՏԻՊ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

(Մահվան 120-ամյակի առթիվ)

*Հակոբ Շահան-Ջրպետը (*Chahan de Cirbied, И. М. Чербет, *ըստ Մ. Նալբանդյանի՝* Шахан Черпет*) 1826 թվականից ֆրանսերենի դասատու էր նորաբաց Ներսիսյան դպրոցում, իսկ 1828–1829 ուսումնական թվին տեսուչ նույն դպրոցում:*

Նրա մանկավարժական գործունեության մասին գրականության մեջ որոշ տեղեկություններ կան ամփոփված Ա. Երիցյանի[1] *և Ստ. Մալխասյանի*[2] *համապատասխան գործերում: Իսկ նրա գրական-գիտական վաստակների մասին մանրամասն, թեև ոչ սպառիչ կերպով, խոսում են Գարեգին վարդապետ Զարբհանալյանը*[3] *և նույն Ա. Երիցյանը*[4] *(1):*

Հակոբ Շահան-Ջրպետյանը սփյուռքի հայ էր: Ծնված լինելով մոտ 1766 թվականին Եդեսիայում (Ուռհայում, այժմյան Ուրֆա), այնտեղից դարավերջում գաղթել է Փարիզ, ուր և սկսել է մանկավարժական և գրականագիտական գործունեությունը, ձեռք բերելով համբավ հմուտ հայագետի–արևելագետի:

Փարիզում Ջրպետը աշխատել է Ֆրանսիական Արքայական մատենադարանին կից գտնվող «Արևելյան կենդանի լեզուների դպրոց»-ում, իբրև հայերենի դասատու, որով և հնարավորություն է ստացել ի մոտո ծանոթանալու և կապվելու այն ժամանակվա ֆրանսիական գիտական շրջանների հետ:

Ջրպետի մանկավարժական գործունեությունը Փարիզում տևել է նախ 1799–1801 թվականները, իսկ 1811–1826 թվականներին նա

[1] «Պատմութիւն 75-ամյա գոյութեան Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիս (1824-1899 թ.թ.), հատ. Ա (1824-1850 թ.թ.), աշխատասիրեաց **Աղեքսանդր Դ. Երիցեանց»**, Թիֆլիս, 1898, էջ 75, 77-84, 134-150:

[2] «Համառօտ պատմութիւն Ներսիսեան հոգևոր դպրոցի եօթանասունևհինգամեայ գոյութեան (1824-1899), կազմեց ***Ստ. Մալխասեանց, Թիֆլիս, 1900,*** էջ 33-36:

[3] Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», ***Հ. [Գարեգին] Զ[արբհանալեան],*** Վենետիկ, 1895, էջ 109-129:

[4] ***Ա. Երիցյանց***, հիշյալ աշխատությունում, էջ 134-150:

ղեկավարել է հիշյալ դպրոցում «Հայոց լեզվի ամբիոն»-ը, ինչպես
այդ, ի միջի այլոց, նշված է Մ. Նալբանդյանի ռուսերեն դիսերտա-
ցիոն շարադրության մեջ՝ «Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվ-
րոպայում և հայ գրականության գիտական նշանակությունը»[5]*:*
Փարիզում ապրած միջոցին Ջրպետը ձեռնամուխ է լինում մի
շարք հայագիտական հրատարակությունների թե՛ անհատապես և
թե՛ ֆրանսիացի այլևայլ գիտնականների ընկերակցությամբ: Այս
կարգի Ջրպետի առաջին գործը լինում է «Հետազօտութիւնք ի վե-
րայ հին պատմութեան Ասիոյ» գիրքը, ֆրանսերեն, Փարիզ, 332 էջ:
Առաջին Հայրենական պատերազմն ավարտելուց և Մոսկվա-
յում Լազարյանների անվան Արևելյան լեզուների ճեմարանը հիմ-
նելուց հետո (1814 թ.) նույն այդ աշխատությունը Ա. Խուդաբաշ-
յանը (հետագայում անուն վաստակած բառարանագետը) վերա-
ծում է ռուսերենի և հրատարակում հետևյալ վերնագրով. "И. М. Ш.
Чирбет и Ф. Мартин, "Любопытные извлечения из древнейшей истории
о Азии", почерпнутые из восточных рукописей, хранящихся в Парижской
библиотеке, и из иных источников, изданные в Париже на французком
языке в 1806 году, а ныне здесь переведенные Александром Худобашевым,
СПБ, 1816".
1810 թվականին Ջրպետը գրում է «Ընդհանուր նկարագիր Հա-
յաստանի» գործը[6]*:*
Հայոց լեզվի ամբիոնը գրավելու պահից (1811),
Ապա Ջրպետը հայոց լեզվի ամբիոնը գրավելու պահից (1811),
Փարիզում մասնակցություն է ունենում հետևյալ աշխատություն-
ների հրապարակման գործում:
Նույն 1811 թվականին Ջրպետը մասնակցում է Սեն-Մարտենի
ձեռնարկած գործին՝ Մատթեոս Եդեսացու (Ուռհայեցու) պատմու-
թյան մի շարք մանրամասնությունների մեկնաբանության գծով,
որոնք վերաբերում են Բյուզանդիայի արշավանքներին դեպի Պա-
ղեստին: Հրատարակիչը այդ նյութերը քաղել է Փարիզի Արքայա-
կան մատենադարանին պատկանող հայերեն գրչագրից[7] *(2):*
1812 թվականին Ջրպետը հրապարակում է «Տեղեկութիւն ի վե-
րայ երկուց գրչագրաց, որ բովանդակեն զՊատմութիւն Մատթէի

[5] ***Մ. Նալբանդյան,*** «Անտիպ երկեր», խմբագրություն և կոմենտարներ Աշոտ Յովհաննիսյանի, Երեվան–Մոսկվա, 1935, էջ 30, 38: ***Մ. Նալբանդյան,*** «Երկերի լիակատար ժողովածու», հատ. II, երևան, 1947, էջ 331 (Шахан -Черпет):

[6] «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», էջ 110:

[7] Յմմտ. ***Յ. Արսեն Ղազիկյան,*** «Յայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հատ. Ա, Վենետիկ, 1909-1912, էջ 1865:

երիցու, և քաղուած ի պատմագրութենէ անտի վերաբերելոցն առաջին խաչակրութեան, ի հայ և ի գաղղիերէն»[8]:

Միաժամանակ Զրպետը ձեռնարկում է «Խորհուրդք (թելադրութիւնք) առ Հայս հարավային գաւառաց պետութիւնն Ռուսաց յաղագս մշակութեան բամբակի»[9] *աշխատությունը:*

1817 թվականին Զրպետը երկու այլ ընկերների հետ միասին մասնակցում է Պարսկաստանի նկարագրությանը նվիրված մի գրքի հրատարակության, որ է «Տեղեկութիւն ի վերայ այժմեան վիճակին Պարսկաստանի, ի լեզու պարսիկ, հայ և գաղղիացի, ի Միր Տաւուտ Ծատուրէ, Լանգլեսէ և ի Զրպետէ»[10]*: Գիրքը հիմնականում գրել են Միր-Դավուդ-Ծատուր Մելիք-Շահնազարը և Մ. Լանգլեսը, որոնք շրջել էին Պարսկաստանը ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ, իսկ Զրպետը մասնակցել է գրքում հայերեն տեքստի մշակման գծով:*

1820 թվականին Զրպետը Ֆրանսիայի հնագիտական ընկերության պատվերով գրում է «Զկառավարութենէ և զկրօնից նախնի Հայոց» աշխատությունը, որը հիշատակում են Հ. Գ. Զարբհանալյանը[11] *և Հ. Ա. Ղազիկյանը*[12]*, և որը, սակայն, մնացել է, անտիպ: Այս աշխատությունն է ըստ երևույթին, մի մասն այն գործի, որը նորերս հայտնաբերվեց Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում և որի մասին կխոսենք ստորև:*

1823 թվականին Զրպետը հրատարակում է գրաբարի ստվար դասագիրք, որը հետևյալ ընդարձակ վերնագիրն է կրում. «Քերականութիւն արամեան լեզուին, յորում բացատրին սկզբունք և կանոնք արամեան լեզուին ըստ հեղինակութեան ընտրելագոյն քերթողաց, ուղղախօս մատենագրաց և սեպհական սովորութեանց հայկական բարբառոյ: Յօրինեալ ի պէտս ուսման աշակերտաց արքայական և մասնաւոր դպրոցի արևելեան լեզուաց թագաւորական գրատան: Ի Յակովբայ Շահան-Զրպետեան յԵդեսացւոյ» (նույնը և ֆրանսերեն)[13]*:*

Այս դասագիրքը սուր քննադատության ենթարկվեց Զրպետի

[8] **Նույն** տեղում:

[9] «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի և մատենագրութեան յԱրևմուտս», էջ 110-111, ***Ա. Ղազիկյան***, նույն տեղում:

[10] ***Հ. Ա. Ղազիկյան***, նույն տեղում, էջ 1003:

[11] «Ուսումնասիրութիւնք հայ լեզուի…», էջ 111:

[12] ***Ա. Երիցեանց***, հիշյալ աշխատությունում, էջ 135:

[13] ***Հ. Գ. Զարբհանալյան***, «Հայկական մատենագիտութիւն», Վենետիկ, 1883, էջ 705-706:

երբեմնի աշակերտ Հովհաննես վարդապետ Զոհրապյանի կողմից "Journal Asiatique"*-ի էջերում, որը հրատարակվում էր նույնի (Զրպետի) մի այլ աշակերտ Սեն-Մարտենի խմբագրությամբ: Հավանական է, որ այս գրախոսականը մեծ վիշտ պատճառած լիներ հեղինակին, որի հետևանքով նա որոշեց Փարիզից հեռանալ, չնայած, որ ինքը 40 էջանոց ընդարձակ բացատրություն-պատասխան էր գրել այդ քննադատության առթիվ»*[14]*:*

Վերջապես, 1824 թվականին Զրպետը հրատարակում է, ըստ Փարիզի արքայական մատենադարանի հայերեն ձեռագրերի[15]*, Դիոնեսիոս Թրակացու «Արուեստ քերականի»-ն, որն, ինչպես հայտնի է, մեծ դեր խաղաց հայ բանասիրական-լեզվաբանական մտքի զարգացման պատմության մեջ սկսած Զ–Է դարից: Սա, իրոք, անդրանիկ հրատարակությունն էր մեծահռչակ հույն բանասերի երկասիրության, հետևյալ վերնագրով. «Քերականութիւն Դիոնէսիոսի Թրակացւոյ, հանեալ ի թագաւորական գրատան Փարիզոյ և ի լոյս ընծայեալ ի յոյն և ի հայ և ի գաղղիացի լեզուս, հանդերձ ծանօթութեամբ և բացատրութեամբ ի Յակովբայ Շահան-Զրպետեան Եդեսացւոյ*[16]*:*

Ի դեպ, նշենք, որ Դիոնեսիոս Թրակացու այս գործը [հիմնավորապես քննեց և] վերահրատարակեց հետագայում Ն. Ադոնցը[17]*:*

Այսպես թե այնպես, իր վերջին հրատարակություններում Զրպետն իր ազգանունի հիշատակությանը գրքերի տիտղոսաթերթին՝ թե՛ ֆրանսերենին և թե՛ հայերենին՝ կցում է իր պաշտոնավարության և կոչումների այսպիսի տվյալներ. «դասատու վարժապետ հայկական բարբառոյ յԱրքայական դպրոցի արևելյան լեզուաց թագաւորական գրատան [ի Փարիզ]», անդամ «յԸնկերութեանց Համալսարանի բնագիտաց Գաղղիոյ», «Դամարճակին (այսինքն՝ ժողովին–Լ. Մ.-Բ.) աշխարհագրաց Փարիզոյ», «Հայկական ճեմարանին Սրբոյն Ղազարու Վնէժ (այսինքն՝ Վենետիկ–Լ. Մ.-Բ.) քաղաքի)»: Փարիզի «Ասիական ընկերությունը» այստեղ չի հիշվում, հավանական է, այն պատճառով, որ այն հիմնվել էր միմիայն 1822 թվականին և այդ պահին Զրպետը կարող էր այնտեղ դեռ ընտրված չլինել:

[14] Հմմտ. ***Ա. Երիցյանց***, հիշյալ աշխատություն, էջ 136-137:

[15] Այժմյան ցուցակագրությամբ №№ 269 և 270 (F. Macler, "Catalogue des manusctits arméniens et géorgiens", Paris, 1908. pp 140-141):

[16] ***Հ. Ա. Ղազիկյան***, նույն տեղում, էջ 533:

[17] ***Ն. Ադոնց***, «Արուեստ Դիոնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին», Պետերբուրգ, 1915:

Ջրպետը գրագրություն է սկսում Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու հետ, հավանական է, Թիֆլիսում գործող ֆրանսիական հյուպատոս Ժակ-Ֆրանս-Գամբայի[18] *միջոցով: Ընդ սմին Ջրպետի նամակներն ուղղված Ներսես արքեպիսկոպոսին կրում են 1816, 1818, 1824, 1825 և 1826 թվահամարները*[19]*:*

Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու խնդր[անք]ով է, որ Ջրպետը կազմում է նախագիծ Թիֆլիսում հիմնվելիք դպրոցի համար՝ «Առաջարկութիւնք դպրոցական կարգադրութեանց ի պէտս հայկական ուսումնարանին Տփխից քաղաքի » վերնագրով, որ հրատարակել է Ա. Երիցյանը[20]*:*

Այդ նախագիծը նախատեսում էր Ներսիսյան դպրոցի կազմակերպումը («դասակարգութիւնք վարժարանաց ուսումնարանին») 12 բաժնից, որոնցից 1–10 հեղինակը կոչում է «վարժարան», իսկ 11–12՝ «լսարան»: Իր հերթին, «լսարան»-ը ընդգրկում է «կանոնադրական» և «եկեղեցական» բաժինները:

Իհարկե, պատահական չէր, որ այս «առաջարկութեանց» տեքստում Ջրպետը ցուցաբերում էր որոշ չափով հմտություն հայ մատենագրության, եկեղեցական պատմության և կանոնական իրավունքի բնագավառում, որը նա ցուցաբերել էր դեռևս 1820 թվականին ֆրանսիական Հնագիտական ընկերության պատվերով կատարած գործում: Մասնավորապես «կղերական լսարան»-ի Գ դասարանի ծրագրում նշված է «ծանօթութիւն ի վերայ եկեղեցական պատմութեան, ժողովոց և եկեղեցական կանոնաց Հայոց»[21]*:*

1826 թվականին դրական լուծում է ստանում Ջրպետի Փարիզից Թիֆլիս տեղափոխվելու հարցը:

Անկասկած, այդ խսկ պահից Ջրպետի տեղը Փարիզում գրավում է ֆրանսիացի հայագետ Լը-Վայան-դը-Ֆլորիվալը, որն հետագայում մեծ անուն վաստակեց իր բազմաթիվ աշխատություններով[22]*:*

---

18 Գամբայի մասին տես *М. А. Полиевктов* "Европейские путешественники по Кавказу 1800-1830 г.г., (մեր խմբագրությամբ), Тбилиси 1946, стр.86-89.

19 ***Ա. Երիցյան***, հիշյալ աշխատություն, էջ 139 և այլն:

20 ***Նույն*** տեղում, էջ 78-82:

21 ***Նույն*** տեղում, էջ 79-80:

22 ***Կ. Կոստանյանց,***«Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում», Թիֆլիս, 1910, էջ 83-84: Այս Լը-Վայան-դը-Ֆլորիվալը, որին հիշատակում է, ի միջի այլոց, և ***Մ. Նալբանդյանը*** («Անտիպ էջեր, 31, 32, «Երկերի լիակատար ժողովածու», II, 332, 340), 1834 թ., Մ. Բրոսեի հետ ճանապարհորդել է դեպի Կովկաս և ցարական կառավարության ժամանակվա մի գրագրության մեջ կոչվում է «Լեվայյան» և Բրոսեի հետ

Նույն 1826 թվականից սկսում է Ջրպետի գործունեության երկրորդ շրջանը՝ Թբիլիսիում, նախ իբրև ֆրանսերենի դասատուի, ապա և տեսչի Ներսիսյան դպրոցում:

Եվ ահա այդ գործունեության բնութագիրը տալիս է Ստ. Մալխասյանը, որը համարում է Ջրպետին մի տեսակ արկածախնդիր դեմք գիտության և մանկավարժության ասպարեզում, նույնիսկ «առաջին» չարիքը նորաբաց Ներսիսյան դպրոցի գլխին[23]*, քանի որ 1828 թվականի սեպտեմբերին Ալամդարյանի կողմից նրան հանձնված 400 աշակերտի փոխարեն 1829 թվականի մայիսին նա Ալամդարյանին «վերադարձրեց ուսումնարանը 150 աշակերտով», «այնպես, որ Ալամդարյանն ստիպված էր յուր տարիներով շինածը, իսկ Ջրպետի 9 ամսվա ընթացքում կիսով չափ քանդածը նորից վերաշինել» և այլն*[24]*:*

Բարեպատեհ հանգամանքների դասավորությամբ, Ջրպետը Թիֆլիսում բնակվում էր նույն տանը, որտեղ ապրում էր Սունդուկյան ընտանիքը. նա փոքրիկ Գաբրիելին (ապագա մեծ թատրագրին) սովորեցնում էր «հայերեն, գրաբար և իտալերեն, իսկ Ջրպետյանի ֆրանսուհի կինը՝ ֆրանսերեն»[25]*:*

Ջրպետը վախճանվել է Թբիլիսիում 1838 թվականին:

Ջրպետի գործունեության երկրորդ շրջանի արգասիքն է, ի միջի այլոց, նրա մի երկասիրությունը, գրված, կամ, ավելի ճիշտ ասած, ավարտված Թիֆլիսում 1829 թվականին, որը նորերս հայտնագործվեց Վրացական կենտրոնական պատմական արխիվում:

Դա մի ստվար աշխատություն է հայոց պատմության և կրոնական իրավունքի բնագավառից, հորինված ֆրանսերեն, հարց և պատասխանի ձևով, երկծալ (ին ֆոլիո) 305 էջ, բաղկացած երկու մասից, յուրաքանչյուրն իր հերթին երեքական տետրից (ամբողջ գոր-

---

միասին ճանաչվել է քաղաքականապես «անբարեհույս» (*Л. Меликсет-Бек*, "Французские арменисты первой половины XIX века по архивным материалам Грузии. Яков Шахан-Джрпет,Ле-Вайан-Флоривал и Мари-Фелеците Броссе"), «Թբիլիսիի պետ. համալսարանի աշխատություններ», հատ. 63, Թբիլիսի, 1956, էջ 299-310:

23 ***Ստ. Մալխասյանց***, հիշյալ աշխատություն, էջ 33-36, hմմտ. 170-175, 178-179, 184-185, 188, 189, 191, 208, 216 և այլն:

24 ***Նույն*** տեղում , էջ 35-36:

Ի վերջո Ստ. Մալխասյանը նշում է և այն, որ Ջրպետի 2 տարվա և 3 ամսվա գործունեության համար դպրոցը նրան ռոճիկ և ճանապարհածախս վճարեց, և բացի դրանից տրվեց որոշ նպաստ և Ֆրանսիա վերադառնալու համար կառք գնելու դրամ: «Ջրպետը սակայն էլ Փարիզ չդարձավ, մինչև կյանքի վերջը մնաց Թիֆլիսում և կառավարությունը նրան կենսաթոշակ նշանակեց տարեկան 500 ռ.»:

25 ***Գ. Աբով***. «Գաբրիել Սունդուկյան», Երևան, 1953, էջ 20:

ծը հետևապես վեց տետր է), տարբեր վերնագրերով: Ձեռագիրը, որ մեզ էր հանձնված ցուցակագրելու, մենք նպատակահարմար գտանք առանձնացնելու այսպես կոչված «առանձնապես կարևոր գործերի» հավաքածուի մեջ № 263-ի ներքո[26]*:*

Առաջին մասի վերնագիրն է. "Réponses et éclaircissemen[t]s[27] sur les 85 questions proposées relativement à l'histoire, aux lois canoniques ot à l'état ancien et moderne du clergé arménien d'après les usages existants et les témoignages des auteurs originaux du pays. Par J. Chahan de Cirbied, Tiflis, le 29-ybre 1829", *այսինքն «Պատասխանիք և մեկնաբանութիւնք Հայոց պատմության, կանոնական իրավունքի և հոգևորականության վաղեմի և ներկա կացության վերաբերյալ, առաջադրված 85 հարցերին, -տրված համաձայն տիրող սովորույթի և ըստ վկայության բնիկ հայ հեղինակների. ի ձեռն Հ. Շահան-Ջրպետի. Թիֆլիս, 29 նոյեմբերի 1829 թ.»: Ընդամենը 1–155 էջ, Ա–Գ տետրակները:*

Երկրորդ մասը կրում է հետևյալ վերնագիրը. "Réponses et éclaircissemen[t]s[28] sur d'autres questions proposées touchant la religion, l'hitoire et la hiérarchie eccjésiastiques chez les arméninés. Par J. Chahan de Cirbied", *այսինքն «Պատասխանիք և մեկնաբանությունք հայոց կրոնի, պատմության և եկեղեցական նվիրապետության վերաբերյալ առաջադրված հարցերի. ի ձեռն Հ. Շահան Ջրպետի», սակայն այս անգամ առանց գրության տեղն ու ժամանակը նշելու: Գրաված ունի 156–305 էջերը, Դ–Զ տետրակները:*

Իսկ տետրերի դասավորությունն այսպես է. Ա՝. 1–42 էջ, Բ՝. 43–88 էջ, Գ՝. 89–էջ, Դ՝. 156 –216 էջ, Ե՝. 217–268 էջ և Զ՝. 269–305 էջ:

Ջրպետի այս նորահայտ աշխատությունը ներկայացնում է իրենից մի տեսակ փորձ հայոց պատմության և գերազանցապես եկեղեցական պատմության և կանոնական իրավունքի ամփոփման, գրված Հ. Միքայել Չամչյանի «Հայոց Պատմութեան» (հատ. Ա–Գ, Վենետիկ, 1784–1786) և ձեռագիր «կանոնագրքերի» զգալի ազդեցությամբ, որը, սակայն, կանոնական իրավունքի շարադրման մասում առաջինն է իր տեսակով: Դեռ ավելին: Նա մի քանի տարով կանխում է կարդինալ Avg. Maius*-ի լույս ընծայած լատիներեն գրքին՝,* "Ecelesiae Armenae canones selecti", *որը տպված է* "Scriptorum veterum collectio ex Vaticanis codicus edita" *շարքի Ժ հատորի Ա պրակում (Հռոմ, 1838, էջ 269–316)*[29]*:*

Բացի Հ. Մ. Չամչյանից և «Կանոնագիրք Հայոց»-ից Ջրպետը լայն չափով օգտագործել է Փարիզի Արքայական (այժմ ազգային) մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն և հայագիտական հրատարակությունները: Ուստի և նա ի վիճակի է մի առ մի հիշատակել բավականին թվով սկզբնաղբյուրներ:

Հայ մատենագիրներից Ջրպետը հիշատակում է մի քանի տասնյակ անուն. Զենոբ Գլակ, Եղիշե, Մեսրոպ երեց, Մովսես Խորենացի, Հովհան Մամիկոնյան, Սամվել Անեցի, Մաթեոս Եդեսացի, Ստեփանոս Օրբելյան, Վարդան և այլն, նաև՝ Միքայել Ասորի, որքան սա մինչև ԺԹ դարի վերջը հայ հեղինակ էր համարվում, ապա Ղազար կաթողիկոս Ջահկեցի, Հ. Ղուկաս Ինճիճյան ի այլն:

Գրքում զգալի է նաև «Վարք հարանց»-ի և «Յայսմաւուրք»-ի ազդեցությունը: Իսկ «Կանոնագրքից» քաղված են եկեղեցական ժողովների ժամանակագրության և սահմանումների մասին, սկսած Վաղարշապատի 325 թվականի ժողովից և մինչև Երուսաղեմի 1651 թվականի ժողովը ներառյալ, որոնց տեսությանը նվիրված է աշխատության Բ մասի Ե տետրը (217–242):

Տեղ-տեղ Ջրպետը հիշում է լատին ու իտալացի հեղինակների գործերը և նրանց թվում "Compedio storico della nazione armena del Marschese de Serops (arménienne d'origine)":

Երբեմն-երբեմն Ջրպետը խոսում է ժամանակակից անցքերի մասին, օրինակ՝ Ներսես արքեպիսկոպոս Աշտարակեցու և գեներալ Պասկևիչի փոխհարաբերությունների մասին, որոնց ժամանակակիցն էր ինքը, հիշելով միջանկյալ Թիֆլիսը (էջ 279), ուր գրվել կամ, ավելի ճիշտն ասած, ավարտվել է այս գործը 1829 թվականին, եթե իհարկե, ընդունվի, որ այն սկսված լիներ դեռևս Փարիզում եղած պահին և որոշ առնչություն ունենար դեռևս 1820 թվականին ձեռնարկած և անտիպ մնացած երկի հետ:

Ջրպետի նորահայտ ֆրանսերեն երկասիրության առաջին մասն ավարտվել է Թբիլիսիում 1829 թվականին: Երկրորդ մասը թվական չունի: Սակայն պիտի ենթադրել, որ այն ևս ավարտված է նույն 1829 թվականին կամ թե չէ նրանից մի քիչ ուշ:

26 Մանրամասն տե՛ս *Л. Меликсет-Бек* "Французские арменисты первой половины XIX века по архивным материалам Грузии", стр. 302-304.

27 Բնագրում՝ éclaircissemens.

28 Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

29 Հմմտ. մեր "Об источниках древне-армянского права", Լենինգրադ, 1925, էջ 143-162, նաև մեր "Указатель литературы по истории права Грузии, Армении и Азербаджана", Թբիլիսի, 1939: Մեր օրոք հրապարակված նմանօրինակ գործերից տե՛ս "S. Congreguzione Orientals. Codificazione Canonica Orientale. Font. Fasoicolo VII. Disciplina Armena. Testi vari di dritto canonico Armeno (seculo IV–XVII", Հռոմ, 1932, 632 էջ:

Ի վերջո, կարևոր ենք համարում նշել, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու "армяно-григорянская", *նույնիսկ* "армяно-грегорянская" *(վերջինիս ֆրանսերենի ազդեցությամբ՝* S. Grégoire-*ից) հորջորջումը 1836 թվականի 11 մարտին «բարձրագույնս» հաստատված «Պոլոժենիե»-ում, անկասկած Ջրպետի համապատասխան կոմիսիայում մասնակցելու ազդեցությունն է կրում (3):*

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

I. Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՄՏՆԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԳԱՆՎԱՆ ՀԱՐՑԸ

Այս խնդիրը երեք տեսակետից է հետաքրքիր. ա. *ո՞ր համալսարանը մտնելու ցանկություն է ունեցել սկզբում Խ. Աբովյանը,* բ. *ինչպես տիրապետե՞լ է նա արդյոք այդ ժամանակ ռուսերենին* և գ. *ի՞նչպես գրություններում:*
է նա իրեն անվանել պաշտոնական

Այս երեք հարցի պատասխանը տալիս է Վրաստանի կենտրոնական Պատմական արխիվի № *2/8 ֆոնդի («Վրաստանի կառավարչապետի դիվանատուն»)* № *2132 գործը* –"Об отправлении находящегося в Эчмиадзине Качатура Абайове в Дерпт для усовершенствования в науках" *(1830* г.*):*

ա. *Վրաստանի կառավարչապետ գեն. Պասկևիչին 1830 թ. մարտի 31-ին մատուցած իր խնդրագրի մեջ Խ. Աբովյանը, ի միջի այլոց, գրում է.* "отколь *(*с Араратских гор. *Լ. Մ.-Բ.)* возвратясь с ним *(*Парротом и его товарищами. *Լ. Մ.-Բ.)* благополучно, пожелал для образования себя отправиться вместе с ними в Московский или Санкт-Петербургский университет... А потом приемлю смелость… просить об отправлении меня в Московский или Санкт-Петербургский университет для изучения российской грамоты и других наук". *Հետևապես Դորպատ գնալու մտադրությունը Խ. Աբովյանի մեջ առաջացել է հետագայում:*

բ. *Համալսարանական քաղաք գնալու պատրաստություններին հավասար կերպով չէր պաշտպանում Խ. Աբովյանը ոչ միայն լինելին, այլև բավարար կերպով չի տիրապետել ռուսերենին, քանի որ հիշյալ խնդրագրի վերջում ասված է.* "Прошеніе писал со словъ просителя кр. класса Гуманьковскій", *որից հետո գալիս է իրեն՝ Խ. Աբովյանի ինքնաձեռագիր (բայց անվարժ ձեռքով) ստորագրությունը՝* "Діаконъ Эчміадзинского монастыря Хачатур Апойовъ" *(տես այս գլխի հավելված I):*

գ. *1830 թվի ընթացքում թե՛ իրեն՝ Խաչատուրի, և թե՛ նչա շուրջը տեղի ունեցած գրագրությունների մեջ մեծ լուսավորիչը կոչ-*

վում է Абоев, Апойов, Абаiов, Абайов: *Օրինակ՝ Գուժանկովսկու ձեռքով գրված 1830 թ. մարտի 31-ի խնդրագրի վերևում հացեատիրոջ (գեն. Պասկևիչի) հիշատակության տակ նշված է.* "Ечмиадзинскаго Патриаршескаго Монастыря дiакона Хачатура Абоева прошенiе", *իսկ բուն ստորագրությունը՝* Апойов: *Թբիլիսիի զինվորական նահանգապետ գեն. Ստրեկալովի գրություններում՝ մեկը Պասկևիչին 1830 թ. հունվարի 16-ին № 217 (տես նույն № 2132 գործը) և մյուսը Դորպատի համալսարանի վարչությանը նույն թվի մայիսի 31-ին № 2007 (տես № 16/152 ֆոնդի գործը) Խաչատուրը հիշվում է իբրև* "20-ти летнiй молодой человѣкъ Качатуръ Абаиовъ", *որ* "происходя изъ духовнаго званiя,…не вступилъ еще ни въ санъ свящества, ни въ санъ монашества", *հետևապես ծնված պիտի լինի ոչ թե 1805 թվին, ինչպես վերջերս հիմնավորվեց, այլ 1809 թվին (1): Նույնը, երբեմն* Качатуръ Абайовъ *ձևով, կրկնվում է 1830 թ. ընթացքում գրված բոլոր թղթերում: Վերջապես, ինքը Խաչատուրը Դորպատ հասնելուն պես ուղարկել է իր հասցեն այսպիսի ձևով.* "Его Благородiю Милостивому Государю Господину Хачатуру Абойеву. Чрезъ С. Петербургъ, въ Дерптъ, Лифляндский губ., у Господина Профессора Паррота"[1]:

Այլ է գործի դրությունը Խ. Աբովյանի Դորպատից վերադառնալուց հետո, երբ նա պաշտոնական գրագրություններում կոչվում է "Абоянъ, Абовянъ, Абовьяни, *նույնիսկ* Абавьяни: *Օրինակ՝ Հովհաննես կաթողիկոս Կարբեցին Վրաստանի քաղաքացիական նահանգապետ գեն. Ախլեստիշևին ողղած կոնդակի մեջ 1839 թ. փետրվարի 28-ին № 184 (տես գործ № 6056–№ 12/152 ֆոնդի), Խ. Աբովյանին հոգևոր կոչումից ազատելու կապակցությամբ, վերջինիս անվանում է. հայերեն տեքստում՝ «դպիր Խաչատուր Աբոեանց», նույնիսկ «Աբովեան» իսկ ռուսերենում՝* "поддiаконъ Хачатуръ Абоянъ", *նույնիսկ* "Абовянъ": *Հիշյալ կոնդակի հետևանքով ծագած գրագրության մեջ հիշվում է* "Хачатуръ Абоянъ", "Христофоръ Абовьяни", "Хачаруръ Абовьяни" *(տես նույն գործը № 6056): Իսկ Անդրկովկասի կառավարչապետի խորհրդի անդամ և ուսումնական մասի վարիչի գրության մեջ Անդրկովկասյան դպրոցների Դիրեկցիային 1844 թ. հոկտեմբերի 17-ին № 751 նույնը հիշված է* "Г. Абавьяни" *(տես գործ № 105–№ 42/231 ֆոնդի):*

Իսկ եթե Խ. Աբովյանը մինչ 1837 թիվը կոչվել է Абоев, Апойов,

[1] Դիվան Խաչատուր Աբովյանի. Կազմեց և ծանոթագրեց ***Երվանդ Շահազիզ***, Երևան, 1940, էջ 29-30: Հմմտ. ***Ռ. Աբրահամեան***, Խաչատուր Աբովյանի անտիպ նամակները, «Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 404:

Абанов, Абайов *ձևով, հետևապես արխիվային գործերում ևս նրա մինչև Դորպատից վերադարձը այս ազգանվան տակ պիտի որոնել, և ոչ թե «Աբովյանի»-ի ներքո:*

Հ ա վ ե լ վ ա ծ I

Его Сиятельству

Господину Генерал-фельдмаршалу, Его Императорского Величества Генерал-адъютанту, Главнокомандующему в Грузии и разных орденов кавалеру, Ивану Федоровичу Графу Паскевичу Эриванскому.

Ечмиадзинкого Патриаршеского монастыря

Диакона Хачатура Абоева

П р о ш е н и е.

В прошедшем 1829 году прибыл в Ечмиадзин из Лифляндии Дерптского университета профессор Паррот с товарищами своими для осмотрения вершин Араратских гор, но как им не были известны удобнейшие места для свободного прохода на оные, то я для указания и препровождения был командирован Эчмиадзинским Армянским святейшим Синодом, отколь возвратясь с ним благополучно, пожелал для образования себя отправиться вместе с ними в Московский или Санкт-Петербургский Императорский университет. Хотя они обещались о таковом желании моем на отправление в университет ходатайствовать лично в здешнего высшего начальства, как объявлено мне и господином Тифлисским военным губернатором Генерал-адъютантом и кавалером Стрекаловым, что по просьбе того профессора учинено представление Вашему Сиятельству, однако же я ожидаемого счастия и поныне не получал.

А потом приемлю смелость прибегнуть к стопам Вашего Сиятельства осьмеливаюсь всенижайше просить об отправлении меня в Московский или Санкт-Петербургский университет для учения российской грамоты и других наук, чем самим осчастливьте меня навеки учинить Начальническое распоряжение.

Прошение писал со слов просителя кр. класса Гуманьковский.

Прошение писал со слов просителя кр. класса Гуманьковский.

Диакон Эчмиадзинского монастыря Хачатур Апойов.

31-го марта 1830-го

Г. Тифлис

(Дело № 2132 фонда № 2/8 "Канцелария главноуправляющего Грузией", стр. 5 r –6 v).

Հավելված II

Главноуправляющего в Грузии,
Губернии Астроханской и области
Кавказской
В Тифлисе
24 мая 1830
№ 2409

Господину Тифлисскому
военному губернатору

Предложение.

По докладной записке Вашего Превосходительчтва от 16 прошлого генваря № 217-й, я относим к г. министру Народного Просвещения князю Ливену, нащет принятия сопровождаавшего профессора Паррота на Арарат, молодого армянина Качатура Абайова в Дерптский университет для образования в учительское звание на казенный счет.

Ныне министр просвещения князь Ливен отношением от 25 марта № 2426-й уведомляет меня, что по докладу о сем Государю Императору, Его Императорское Величество высочайше повелеть соизволил на отправление Абайова в Дерптский университет на три года, с определением на содержание его по 200 руб. серебром в год и на проезд его из Тифлиса в Дерпт и по окончани учения обратно 400 руб., где сверх того единовременно на снабжение его учебными пособиями 100 руб. того же монетою; присовокупляя к тому, что уже Дерпетскому университету и предписано принять молодого армянина сего, когда он туда прибудет.

Получив между тем и представление Грузинской Казенной экспедиции от 8 сего месяца за № 4266-м, что Высочайше назначенная на отправление армянина Абайова сумма 200 рублей серебром к отпуску ассигнована, я предлагаю Вашему Превосходительству истребовать помянутые деньги из Казенной экспедиции и вручив оные Абайову, выслать его надлежащим порядком в Дерпт, уведомив об отъезде его отель Дерптский университет и господина Министра князя Ливена.

Генерал-фельдмаршал Граф Паскевич-Эриванский.

(Дело № фонда № 16/152 "Канцелярии Тифлисского военного губернатора", стр. 31r–31v).

II. Խ. ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ԹԲԻԼԻՍԻԻ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Խ. Աբովյանի՝ Թիֆլիսի գավառական դպրոցում պաշտոնավարության ժամանակաշրջանից հատուկ ուշադրության արժանի են հետևյալ դրվագները. ա. Խ. Աբովյանի և Անդրկովկասյան ժողովրդական դպրոցների դիրեկցիայի միջև եղած գրագրությունը հայերենի և վրացերենի դասավանդումը Թիֆլիսի գավառական դպրոցում առաջին իսկ դասարանից պարտադիր դարձնելու մասին. բ. Խ. Աբովյանի և նույն դիրեկցիայի գրագրությունը հաշվետվության ոչ պատշաճ ձևով ներկայացնելու կապակցությամբ. գ. Խ. Աբովյանի պաշտոնակիցները Թիֆլիսի գավառական դպրոցում և նրա դեռևս անծանոթ զեկուցագրերը թաթար (2) գործիչների (Միրզա Ֆաթալի Ախունդովի և Միրզա Շաֆիի) մասին. և դ. նույն դպրոցի աշակերտների ցուցակները:

* * *

Հայոց և վրաց լեզուների դասավանդումը Թիֆլիսի գավառական դպրոցում առաջին իսկ դասարանից պարտադիր դարձնելու խնդրին վերաբերում է Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի № 424/231 ֆոնդի (Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի) № 22 գործը "О разрешении Тифлисскому училищу преподавать армянский и грузинский язык в 1-м классе" (1838 г.), *որը պարունակում է Խ. Աբովյանի ինքնաձեռագիր զեկուցագիրը Անդրկովկասյան դպրոցների դիրեկտոր Եվգենի Օսիպովիչ Վեյսեն-Միլլերի անունով 1838 թ. հոկտեմբերի 14-ին № 24*[2] *և դիրեկտորի պատասխանը նույն թվի հոկտեմբերի 16-ին № 983:*

Ահա այդ փաստաթղթերը.

1. "Многие родители, даже и все вообще, учеников вверенного мне Училища просят меня, дабы в 1-м классе преподавать детям их местные армянский и грузинский языки. В удовлетворение их желания, сопряженного с благонамеренною целью в том отношении, что дети, переходившие в высший класс, затрудняются после в успехах этого языка, не преподававши того в 1-м классе".

"Я, согласуясь с желанием общества, тем более, что дети здешнего

---
[2] Տես. **Հր. Մուրադյան** –Խաչատուր Աբովյան, Երևան, 1939, էջ 21-22:

Уездного училища большею частию из армян, поэтому нужным считаю почтеннейше об этом донести Вашему высокоблагородию и покорнейше просить разрешить преподавать ученикам армянский и грузинский языки, подобно прочим уездным Училищам, в 1-м классе и здешнего уездного Училища".

"Исправляющий должность Штатного смотрителя
Тифлисского уездного Училища Х. Абовьян" *(*2 r-v*)*.

2. "На донесение Ваше от 14 октября за № 34 я разрешаю, Ваше Благородие, преподавание грузинского и армянского языков, так как меру сию находите Вы полезною, поручив преподавание законоучителям и учителю 1-го класса вверенного Вам училища с их предворительного на то согласия" *(*3 r-v*)*.

Որ վրացերենի դասավանդումը Թիֆլիսի գավառական դպրոցում Խ. Աբովյանի տեսչության օրոք իսկապես առաջին դասարանից արդեն իրականացվել է, վկայում է նույն № 424/231 ֆոնդի № 47 գործը –"Об успехах и поведении учеников Тифлисского уездного училища", *ուր տեղ-տեղ Խ. Աբովյանի սեփական ձեռքով գրված է Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիային հասցեած զեկուցագրերում 1840–1841 թ.թ. գտնում ենք այսպիսի նշումներ, որի տակ ստորագրված է երբեմն* Захарий Мжедлов, *երբեմն՝* Абовьян*:*

Առաջին *դասարանում* "[В]место грузинской грамматики занимались с *(*sic*)* переводом из истории о сотворении мира с русского на грузинский и с грузинского на русский язык" *(*17v*)*. "Из грузинского языка прошли до прилагательного имени четыре урока" *(*5 ч.*)*. "Вместо грузинской грамматики занимались с *(*sic*)* переводом из истории о пророке Иоанне и Аврааме, с русского на грузинский, с грузинского на русской языки" *(*28v*)*.

Երկրորդ *դասարանում* " Из грузинского языка до местоимения сочитанием и переводом" *(*17 r*)*. "Из грузинского языка грамматики прошли четыре спряжения" *(*6 r*)*.

Երրորդ *դասարանում* "Из грузинского языка первую часть грамматики и начало словосочинения" *(*18 r*)*.

Նույն № 47 գործը պարունակում է բավականին հետաքրքիր տեղեկություններ դպրոցական կյանքի այլևայլ երևույթների շուրջը, ինչպիսիք են՝ աշակերտների դասացուցակները թվանշաններով,

նշումներ անցած նյութի մասին, մեթոդական բնույթի զեկուցագրեր, որոնք Խ. Աբովյանի ստորագրություններն են կրում:

Այսպես, օրինակ, զեկուցագրերից մեկին կցված ցուցակը՝ "Ведомость об успехах и поведении учеников II и III классов Тифлисского Уездного училища за октябрь и ноябрь месяцы сего 1840-го года" *պարունակում է այսպիսի տեղեկանքներ, որի տակ ստորագրված է* "Учитель Х. Абовьян".

Երկրորդ *դասարան.* "Из русского языка пройдены все части речи вкратце и занимаюся теперь склонением и чтением. Из французского языка занимаются чтением и разговором" *(*49 r-49 v*)*.

Երրորդ *դասարանում* "Из русского языка пройдена 1-ая часть грамматики и начато словосочинение. Из истории пройдено до истории Македонской монархии. Из французского языка занимаюся чтением и разговором *(*49 v -49 v*)*.

* * *

*Խ. Աբովյանի, իբրև Թիֆլիսի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատարի, գրագրությունը Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի հետ անհասարակ վկայում է այն մեծ պար*տաճանաչության *մասին, որով նա վարել է իր պաշտոնը՝ ծայր աստիճանի* բծախնդրությամբ *և* պեդանտիզմով *հանդերձ:*

Ահա մի նմուշ այդ գրագրությունից, որը մենք հանել ենք նույն № 55 գործից –"Сведения об успехах учеников Тифлисского Уездного училища" *(1841* г.*), այն է Խ. Աբովյանի ինքնաձեռագիր զեկուցագիրը Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի հասցեով՝ 1841 թ. դեկտեմբերի 22-ի № 61.*

"Во исполнение предписания Дирекции от 13-го декабря сего года за № 1851-м честь имею препровождать *(*sic*)* при сем ведомости об успехах и поведении учеников вверенного мне Тифлисского Уездного училища, присовокупляя при том, что там, как при представлении таковых ведемостей непременно необходимо и означать всякий раз, сколько именно из каждого предмета в продолжение какого нибудь месяца пройдено в каждом классе, и учащиеся, дети туземцев, чрезмерно затрудняясь в разумении русского языка, и несмотря на старание учителей, весьма медленно успевают в науках, препятствие, которое только тем единственно и преоделевается, что одно и то же правило всякий раз надобно с ними повторять, чтобы они не наизуст[ь], а совершенно могли знать то, что с ними проходят; и я, желая представить

своему Начальству ведомости, истинно удовлетворительные во всех отношениях, полагал гораздо сообразным с целью успехов учащихся в науках в один раз приготовить оную ведемость, которая и должна была следовать в этом месяце; но так как Начальству благоугодно иметь их ежемесячно, то я отныне долгом себя почту исполнять благонамеренную волю Его во всей точности.

"Исправляющий должность Штатного смотрителя
Х. Абовьян" *(*3 v*)*.

* * *

Նույն № 424/231 ֆոնդի № 36 գործը–"Отчеты о суммах Закавказских уездных училищ за 1839 год" *(*1840 г.*) պարունակում է գրագրություն Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի և Խ. Աբովյանի միջև մի թյուրիմացության առթիվ, այն է, որ Թբիլիսիի գավառական դպրոցի 1840 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսների դրամական հաշվետվությունը Խ. Աբովյանը ներկայացրել է առանց ամսաթիվը և գրության № նշելու, որի կապակցությամբ ստացել է նկատողություն 1841 թ. հունվարի 13-ին № 17, հետևյալ բովանդակությամբ.*

"Дирекция Закавказских училищ, получив рапорт Ваш с представлением ведомостей о свидетельстве денежной казны, равно о приходе, расходе и остатке сумм вверенного Вам училища за ноябрь и декабрь месяцы 1840 г. *без числа и номера*, возвращая Вам таковой с ведемостью, предписывает впредь быть внимательнее к дирекции и донести, почему представляете ведемости за ноябрь месяц, когда таковые представлены при рапорте от 10 декабря за. № 82-м" *(*188 г*)*.

Այս գրությունը, ըստ երևույթին, մեծ վիշտ է պատճառել և հուզել Խ. Աբովյանին, որը, չկարողանալով իրեն զսպել, իսկույն և եթ պատասխանել է դիրեկցիային 17 հունվարի № 3 զեկուցագրով.

"Во исполнение предписания Дирекции от 13-го января сего 1841-го года за № 17, честь имею препроводить при сем исправленные мною ведемости о приходе, расходе и остатке сумм, равно как и о денежней Казны *(*sic*)* Тифлисского Уездного училища; осмеливаюсь присовокупить, что я не только по обязанности, но и по истинному убеждению совести почитаю долгом моим священным все возложенные на меня Начальством обязнности исполнять во всякое время по мере силы честно и внимательно, и что при отправлении тех ведомостей, будучи я в совершенном

изнеможении притерпленного мною долговремнною болезнию, конечно, не был в состоянии заметить ошибки, прокравшиеся не по невнимательности моей к Дирекции, какого отзыва я никак не ожидал и не хочу ожидать от своего Начальства, коего благосклонное внимание одно может вознаградить все желаемые мною блага и успехи к дальнейшему благополучию моему.

"Исправляющий должность Штатного смотрителя
Х. Абовьян" *(*3 v*)*.

* * *

Խ. Աբովյանի և թաթար գրծիչներ Միրզա Ֆաթալի Ախունդովի և Միրզա Շաֆի-Սադըղ-օղլու փոխհարաբերություններին նվիրված համապատասխան գրականության մեջ[3] *սովորաբար չեշտվում է 2 փաստաթուղթ Խ. Աբովյանի, իբրև Թբիլիսիի գավառական դպրոցի հաստիքավոր տեսչի պաշտոնակատարի, ստորագրությամբ տրվածներից, որոնք ափոփված են № 424/231 ֆոնդի № 41 գործում* –Об увольнении учителя татарского языка в Тифлисском уездном училище Мирзы Ахундова и об определении на его место другого *(*1840 г.*): Դրանք են՝* ա. *Ախունդովի ծառայության մասին գրված բնութագիր-վկայականը 1840 թվի սեպտեմբերի 13-ին № 53, և* բ. *վերջինիս տեղ Միրզա-Շաֆիի ներկայացումը Անդրկովկասյան դպրոցների դիրեկտոր Կնոպֆի անունով 1840 թ. մայիսի 3-ին № 28:*

Սակայն նույն գործում կա երկու այլ գրություն ևս նույն անձանց վերաբերյալ, որոնք որքան մեզ հայտնի է, աբովյանագիտական գրականության մեջ աչքաթող են արված: Մենք ի նկատի ունենք. ա. *Խ. Աբովյանի զեկուցագիրը Անդրկովկասյան դպրոցների դիրեկտոր Կնոպֆին 1840 թ. մարտի 27-ին № 22, որով Ախունդովը ներկայացվել է, համաձայն իր խնդրի, ուսուցչի պաշտոնից ազատելու համար, և* բ. *Խ. Աբովյանի զեկուցագիրը նույն Կնոպֆին 1841 թ. հունվարի 21-ին № 4, որ վերաբերում է Միրզա-Շաֆիի երդման ենթարկելու արարողությանը:*

Ահա և այս երկու փաստաթղթերը.

---

[3] ***Ռուբեն Զարյան***– Միրզա Ֆաթալի Ախունդովը և Խաչատուր Աբովյան, – «Խորհրդային գրականություն», 1938 թ., № 11-12, էջ 184-187. ***Նույնի*** Ф. Ахундов и Хачатур Абовян, там же, 1938 г., № 297. *С.Баяндур*, к 125-летию со дня рождения М. Ф. Ахундова, там же, 1938 г., № 265. ***Ի. Բալախաշվիլի***, Միրզա-Ֆաթալի Ախունդովը Թբիլիսիում, վրացերեն, «Լիտ. Սաքարթվելո», 1938 թ., № 31, ***Ե. Շահազիզ***, Խ. Աբովյանի դիվանը, Երևան, 1940 թ., էջ 93, 210:

1. “Законоучитель [и учитель] татарского языка вверенного мне училища Мирза Фет-Али Ахундов в подданном ко мне 23-го марта этого же месяца рапорте изъясняет: что он, по расстроенному здоровию, не может более продолжать службы по учебной части, просит меня об увольнении его из должности сделать распоряжение.

Я, представляя при этом рапорт учителя татарского языка Фет-Али Ахундов на рассмотрение Вашего Высокоблагородия, покорнейше прошу об увольнении его из занимаемой им ныне должности по вверенному мне Училищу сделать распоряжение”.

“Исправляющий должность Штатного смотрителя

Х. Абовьян” *(3 v)*.

2. “Во исполнение предписания Дирекции от 30 октября 1840 года за № 1217, препровождая при сем подписки законоучителя и учителя татарского языка Мирзы Шафи Садиг-оглы как о непринадлежности его к тайным обществам, так и о невнушении детям Православного вероисповедения правил, противных учению Православной Восточной церкви, Училище честь имеет почтительнейше донести, что вышеупомянутый Мирза Шафи по приведении его к присяге допущен уже к должности законоучителя и учителя татарского языка во вверенном мне [училище], присовокупляя также, что медленность этого рапорта произошла от того, что Ахунд их находился долгое время в отсутствии и Мирзы Шафи Садиг-оглы не был допущен к прсяге до приезда его в г. Тифлис.

“Исправляющий должность Штатного смотрителя

Х. Абовьян” *(18r-v)*.

III. Խ. ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՆՍԻՈՆԸ

Թբիլիսիի գավառական դպրոցին կից Խ.Աբովյանի բացած մասնավոր պանսիոնը, ըստ Ե. Ծաճազիզի *մի ցուցմունքի, գոյություն է ունեցել 1840 թվի փետրվարի 28-ից մինչև 1843 թվի հունվարի 19-ը*[4], *իսկ նույն* Ե. Ծաճազիզի *մյուս ցուցմունքով «Թիֆլիսի մասնավոր պանսիոնը, որ այնքան արգասավոր էր եղել, նա (Աբովյանը) ստիպված էր եղել 1842 թ. հապճեպ փակել իշխանության հրամանով»*[5]:

4 **Ե. Շահազիզ**, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Երևան, 1945, էջ 84:

5 **Ե. Շահազիզ**, նշված աշխ.

Այս գրություններից և ոչ մեկը, դժբախտաբար, չի համապատասխանում ճշմարտությանը, քանի որ Վրաստանի Պատմական կենտրոնական արխիվում պահվող հիշյալ պանսիոնի զույգ գործերը (№ 424/231 ֆոնդի №№ 37 և 174) վկայում են հիշյալ պանսիոնի ավելի կարճատև գոյության մասին և, բացի դրանից, տալիս են վերին աստիճանի կարևոր նյութեր ինչպես պանսիոնի մասին, որ Խ. Աբովյանի «Դիվան»-ում համառոտած են[6], *նմանապես օգտագործված չեն մի շարք գրություններ, որոնք լույս են սփռում Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի չինովնիկական՝ անսիրտ վերաբերմունքի վրա դեպի Խ. Աբովյանը:*

№ 424/231 ֆոնդի №№ 37 գործը – “О частном пансионе, открытом смотрителем Тифлисского училища Абовьяном” *(*1840 г.*) պարունա-կում է հետևյալ նյութերը. ա. Խ. Աբովյանի զեկուցագիրը Անդր-կովկասյան դպրոցների դիրեկտորի պաշտոնակատար Սերգեյ Ֆեո-դորովիչ Վասիլյկովսկուն 1840 է. հունվարի 31-ին, որից* Ե. *Շահա-զիզը օգտագործել է միայն առաջին պարբերությունը*[7], բ. *Դիրեկ-ցիայի հարցապնդումը Աբովյանից փետրվարի 10-ին № 255,* գ. *Խ. Աբովյանի պատասխանը փետրվարի 20-ին № 18,* դ. *Դիրեկցիայի կողմից պանսիոն բանալու թույլտվությունը փետրվարի 29-ին № 349, և Խ. Աբովյանի զեկուցագիրը նույն դիրեկցիային հուլիսի 18-ին № 44, որին կցված է* “ Ведомость о состоянии частного мужского пансиона, с 29-го февраля по 1-го июля 1840-го года, содержимого учителем Абовьяном”, *որի համառոտած թարգմանությունն է տալիս* Ե. Ծաճազիզը[8]:

Ինչպես այս վերջին գրությունից երևում է, Խ. Աբովյանն իր պանսիոնը բանալով 1840 թվի փետրվարի 29-ին , նույն թվի հուլիսի 1-ին փակել է, որի մասին և տեղեկացրել է Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիային:

Այստեղ մենք նպատակահարմար ենք գտնում ամբողջությամբ հրատարակել ինչպես 1840 թ. հունվարի 31-ի զեկուցագիրը, նույնպես և նույն թվի հուլիսի 18-ի զեկուցագրին կցված փաստաթղթերը, որոնք Խ. Աբովյանի ինքնագրերն են.

1. “Пытая с малолетства в душе ревн[остн]ую к тому склонность посвятить себя воспитанию юношества своих соотчественников, я старался со времени вступления моего в должность собрать несколько

6 Դիվան Խաչատուր Աբովյանի, էջ 91-102:

7 Չմմտ. Դիվան Խ. Աբովյանի, էջ 91:

8 **Նույն** տեղում, 91-92, նաև 102:

молодых людей более из моей нации и употребить свободные мои часы к их воспитанию, не требуя с них никакого возмездия. Но как впоследствии времени число порученных моему надзору детей увеличивалось, и родители, дабы избегать опасного влияния дурной и жаркой погоды, желали назначать мне сами добровольно вспомоществование на их содержание и вместе с тем иметь для них учителя также иностранных языков, т.е. немецкого и французкого, то я, соображаясь с их требованиями и желая не отступить от вышеизъясненной цели, вознамерился открыть у себя частное заведение, в которое могут принятыми быть дети из разного сословия и нации.

При ограниченном способе, получаемом мною от родителей, именно с тем намерением, чтобы не обременить их, только по возможности дать тем более ход, даже несостоятельным людям, желающим отдать детям своим основательное воспитание, и распространить круг воспитанников моих, на первый случай не могу я иметь большее число сотрудников, кроме одного домашнего надзирателя, который в отсутсивии моем обязан смотреть за учениками и вместе с тем упражняться с ними практическими разговорами на французском и немецком языках, и одного учителя русского языка и арифметики.

Курс учения и предметы те же самые будут , что определено в Уездных училищах , с прибавлением только французкого и немецкого языков, так что ученики, окончив курс учения, могут поступить в четвертый класс Гимназии.

Ученики эти помещены в одной [из] отведенных мне из Казны комнате. Класс начинается в каждый день с 8-ми часов утра до 12-ти и от 2-го до 6-ти часов после обеда, по окончании класса ученики эти расходятся по домам своим.

Имея честь почтеннейше донести об этом, я осмеливаюсь покорнейше просить Ваше Высокоблагородие снабдить мне *(*sic*)* подлежащим видом на содержание вышеуказанного моего заведения.

“Исправляющий должность Штатного смотрителя
Х. Абовьян” *(*2r-v*)*.

2. “Ведомость о состоянии частного мужского пансиона, с 29-го февраля по 1-го июля 1840-года, содержимого учителем Абовьяном.

Հարց. Имя содержателя пансиона.

Պատասխան. Воспитанник Императорского Дерптского Университета, обучавшийся там по Высочайшему разрешению, Абовьян.

Հարց. Имеют ли они узаконенное свидетельство от Университета на учреждение содержимого ими заведения и когда оное выдано?.

Պատասխան. Свидетельство на открытие заведения получено из Дирекции Закавказких училищ по разрешению бывшего исправляющим должность Директора Надворного советника Васильковского с 29-го февраля 1840-го года.

Հարց. Нет ли каких отступлений в программе, предъявленной начальству при учреждения Заведения?

Պատասխան. Программы я никакой не представил, ибо предметы те же сами должны были быть, что в здешнем Уездном Училище, о чем я и донес директору Васильковскому рапортом моим с 31-го января 1840-го года.

Հարց. Какого рода заведение и где оно находится?

Պատասխան. Мужской пансион в Тифлисе, в одной из занимаемой мною комнате в доме старой гимназии.

Հարց. Предметы, коим в оном обучают?

Պատասխան. а*) Науки*: Закон Божий, История, География, Математика, в*) Языки*: Российский, Армянский, Немецкий, Французский, с*)* Искусство: Чистописание, Танцование.

Հարց. Имена Учителей и Гувернеров?

Պատասխան. 1. Учитель Хр. Абовьян, преподающий Русский и Немецкий языки и Историю, 2. Учитель Ирицпухов Географию, Арифметику и Чистописание, 3. Учитель Тер Александров Армянский язык и Религию, 4. Частный учитель Керстенс Французский язык 5. танцованию учутся у Алдаданова. Гувернера особенного не было по сие время, ибо ученики находятся под беспрестанным надзором содержателя пансиона.

Հարց. Имеют ли учители право преподавать?

Պատասխան. Имеют.

Հարց. Все ли предметы преподаются по книгам, одобренным начальством?

Պատասխան. Все науки преподается по книгам, одолженным начальством, которые приобретаются покупкою из книжного магазина Тифлисской гимназии.

Հարց. Успешно ли преподают предметы, особенно русский язык?

Պատասխան. Успешно, особенно языки русский и немецкий, науки географии и математики, искусства чистописание.

Հարց. Число учащихся и плата?

Պատասխան. Всех учащихся в пансионе 21. Плату за годовое воспитание и содержание положено взимать по 100 руб. серебром, но со многих взимается по 80-ти и по 60-ти руб. серебром и четверо из них учутся безденежно.

Հարց. Наблюдается ли за исполнением христианских обязанностей?

Պատասխան. Наблюдается со всевозможною строгостью.

Особенные примечания. Заведением такого частного пансиона, имея единственную цель в виду быть по возможности полезным своим отечественникам я представил совершенно произволу родителей назначить мне средства на содержание оного, но, уверяясь после в опыте, что плата, взимаемая от воспитанников, несмотря на добровольное содействие моих сотрудников, вовсе не соответствует всем подребностям, необходимым на содержание заведения, и не желая бльше обременить родителей, я почел нужным закрыть оное и учащихся, смотря по способностям, причислить к ученикам здешнего Уездного училища и заниматься с ними только в свободные часы.

“Исправляющий должность Штатного смотрителя
Х. Абовьян”.

Մյուս գործը՝ նույն № 424/231 ֆոնդի №№ 174–“О частном мужском пансионе учителя Ирицпухова” *(*1842 г.*) պարունակում է* ա. *Խ. Աբովյանի զեկուցագիրը Անդրկովկասյան դպրոցների Դիրեկցիային 1842 թ. փետրվարի 28-ին № 12, և* բ. *Դիրեկցիայի պատասխանը նույն թվի մարտի 30-ին № 397, որոնցից առաջինում Խ. Աբովյանը խնդրում է թույլ տրվի պանսիոններ բանալու Թբիլիսիում՝ մեկը իրեն Աբովյանին, մյուսը Երեցփոխյանին, նշելով, որ առաջինում ուսուցիչներ են լինելու Գ. Գ. Գասպարովը, Մճեդլով քահանան, Տեր-Աղեքսանդրյան սարկավագը, Ռոցին, գրագիր Վեքիլովը և ինքը. բացի դրանից՝ իբրև վերակացու՝ լինելու է ռուսահպատակ ֆրանսիացի Գ. Շեվալյեն: Իսկ Երեցփոխյանի պանսիոնում, բացի հիշվածներից, դասավանդելու են Գ. Բուդաղով և տոպոգրաֆ Եգորովը: Զեկուցագրի վրա մակագրված է.* “Абовьяну отказать, а об Ирицпухове представать”:

Ինչ վերաբերում է երկրորդ գրության (Դիրեկցիայի պատասխանին՝ ուղղված Խ. Աբովյանին), դա մի հազվագյուտ փաստաթուղթ-ապացույց է ցարական չինովնիկների անսիրտ կամ քարասիրտ վերաբերմունքի դեպի Խ. Աբովյան, որը փշյա տատասկով է

ծածկել նրա ազգօգուտ գործունեությունը և հուսահատության հասցրել նրան, որը մի տեսակ բանալի կարող է ծառայել բացատրելու նրա եղերական անհետացումը՝ հավանական է անձնասպանությունը:

Ահա այս գրագրությունն էլ, որ ցարդ չի հրատարակված:

1. “Во исполнение предписания оной Дирекции от 23-го февраля сего года за № 247-м, имею честь ей донести, что в пансионе, открываемом мною, будут обучать следующие учителя: г. Г. Гаспаров, священник Мжедлов, диакон Тер-Александров, Роци, писарь Векилов и я сам”.

“1-й из них будет обучать арифметике, географии, 2-й Закону Божиему православного вероисповедания, 3-й Закону Божиему армяно-грегорианского вероисповедания и армянскому языку, 4-й рисованию, 5-й чистописанию, история же всеобщей и российской, русскому, францкзскому и немецким языкам я сам: приняты будут дети русских, армян и грузии, и надзор над учениками в отсутствие учителей будет иметь российско-подданый француз Г. Шевалье, человек отличного поведения и характера”.

“В пансионе же г-на Ирицпухова будут обучат кроме вышеупомянутых учителей еще и Г. Будагов, который будет преподавать в нем французский язык и арифметику, Г. Гаспаров истории всеобщей, российской и географии; законоучитель Мжедлов закон божий православного вероисповедания и грузинский язык; законоучитель Тер-Александров закон божий армяно-грегорианского вероисповедания и армянский язык; топограф Егоров чистописание и рисование. Принять будут дети русских, армян и грузин, для которых будет преподаваться закон божий обоих вероисповеданий. Надзор над учениками будет иметь сам же содержатель пансиона. Учителя, назначаемые в обоих пансионах, все имеют право обучать в учебных заведениях”.

“Исправляющий должность Штатного смотрителя
Х. Абовьян” *(*1г-v*)*.

2. “На рапорт Ваш, от 2 февраля за № 12, даю Вам знать, что лежащие на Вас обязности штатного смотрителя училища и учителя в оном должны занимать все Ваше время в продолжение дня, посему самому учреждение Вами частного пансиона будет только отвлекать Вас от прямых ваших обязностей, которые возлагают на Вас непременный долг

употреблять все время на приведение вверенного Вам училища в должное состояние, потому что здесь, в Грузии, где русский язык почти иностранный, все Ваше попечение должно быть обращено как на успехи в русском языке, так и на науки, преподоваемые в Тифлисском училище, и то старание, котрое Вы прилагали бы к усовершенствованию воспитанников Вашего частного заведения, долг службы требует от Вас, чтобы Вы даже досуг Ваш, если Вы его можете иметь при Ваших двух должностях, посвящали бы для возможно лучшего устройства вверенного Вам училища как по части учебной, так и постоянным, безотлучным надзором Вашим внушали бы ученикам любознательность и то обхождение и правила, которые требуют от благовоспитанных юношей; эта обязанность весьма важна и многотрудна, должна поглащать все Ваше время, и исполнение ее усердно, все помышления Ваши должны быть устремлены к одной высокой цели общего блага, –старат[ь]ся в учениках вверенного Вам училища вселить благонравие, скромность, любознательность, чистую любовь и преданность к религии и престолу; при таких условиях все частные следы должны быть заглушаемы, и Вы должны убедится в совершенной невозможности получить дозволение открыть у себя частное учебное заведение, причем по необходимости Вы будете делать упущения по прямым служебным обязанностям Вашим; а исполение же всего этого вместе физически не возможно для одного человека. К тому же Вы, как штатный смотритель, обязанны, согласно Уставу, иметь надзор за частными учебными заведениями в уезде, где находится вверенное Вам училище, а в таком случае Вы, как начальник, не можете открыть у себя пансиона, тем более в казенном доме, где даются только квартиры служащим, не может бвть терпимо этакое часатное учебное заведение, в противном случае, если находится в казенном доме, где помещается вверенное Вам училище, свободное помещение, то для соблюдения выгод казны обязываю Вас немедленно донести мне о том, для представления сего помещения одному из тех служащих, которые в настоящее время получают квартирные деньги”.

“Желая, чтобы Вы обратили всю Вашу бдительность на проведения вверенного Вам училища в должное состояние, я надеюсь, что Вы искренно разделя в этом случае мое старание, оправдаете вполне ожидание дирекции.”

Что же касается испрашиваемого учителем Ирицпуховым разрешения открыть пансион, то я вместе с сим вашем с представлением к г. Главноуправляющему, прося по сему предмету сношения его Высо-

копревосходительства с г. Министром Народного просвещения” *(2 r–v)*.

Ըստ այսմ, Խ. Աբովյանի մասնավոր պանսիոնը Թբիլիսիում գոյություն է ունեցել 1840 թվի փետրվարի 29-ից մինչև նույն թվի հուլիսի 1-ը, հետևապես թևակոխելով ընդամենը 4 ամսյա կարճատև շրջան: *Իսկ 1842 թվին հարուցված խնդրին՝ նորից բանալ նույն պանսիոնը, դիրեկցիան ամենակտրուկ կերպով պատասխանել է Խ. Աբովյանին.* “все частные следы должны быть заглушаемы, и Вы должны убедиться в совершенной невозможности получить дозволение открыть у себя частное учебное заведение”.

IV. Խ. ԱԲՈՎՅԱՆԸ ՑԱՐԱԿԱՆ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ ՁՐԴԱՐՏՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ

Ցարական չինովնիկների թշնամական վերաբերմունքը դեպի Խ. Աբովյան արտահայտվել է ոչ միայն մասնավոր պանսիոն բանալու խնդրում, այլև մասնավոր կյանքում:

Մենք այստեղ ի նկատի ունենք այն տգեղ միջադեպը, որ տեղի է ունեցել Թբիլիսիում 1840 թվի գարնանը, երբ հասարակական այգիներից մեկում զբոսնելու ժամանակ 3 չինովնիկ, այն է Վիտովիչ, Կրիժանովսկի և Պոտյանովսկի, խոսքով և գործով վիրավորանք են հասցրել Խ. Աբովյանին և նրա աշակերտներին: Սրա մասին համառոտ տեղեկություն է տալիս Ե. Շահազիզը[9]*: Սակայն մենք նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ խնդրին ամենայն մանրամասնությամբ:*

Միջադեպի շուրջը ստեղծվել է հատուկ գործ Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի դիվանատանը, որը Վրաստանի Պատմական կենտրոնական արխիվի № 424/231 ֆոնդի № 45-ի ներքո է ցուցակագրված և կրում է հետևյալ վերնագիրը. “Дело об обидах, нанесенных смотрителю Тифлисского училища Абовьяну чиновниками: Витовичем, Крыжановским и Потяновским” *(*1840*)*.

Գործը պարունակում է 2 գրություն. ա. *Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի դիմումը Թբիլիսիի զինվորական նահանգապետին 1840 թվի մայիսի 3-ին № 559, և* բ. *Թբիլիսիի զինվորական նահանգապետին պատասխանը նույն թվի մայիսի 9-ին № 2997:*

[9] Դիվան Խաչատուր Աբովյանի, 90:

Ահա այդ գրագրությունը.

1. “Представляя при сем поданный ко мне исправляющим должность
штатного смотрителя Тифлисского училища рапорт от 3 сего мая за №
27, имею честь передать описанные в оном обстоятельства на благоус-
мотрение Вашего Превосходиельства” *(2 r)*.

2. “Прочитав рапорт исправляющего должность штатного смотрителя
Тифлисского училища Абовьяна, представленный ко мне при донесении
Вашего Высокоблагородия от 3 сего мая за № 559, о причиненных ему
ругательствах и побоях во время гулянья в саду чиновниками Витовичем,
Крыжановским и Потяновским, и находя, что иск в обидах, на основании
законов, подлежит ведомству и рассмотрению суда уголовного или граж-
данского, смотря по тому, простая или тяжкая причинена обида, я прошу
Ваше Высокоблагородие объявить смотрителю Абовьяну, чтобы он удов-
летворения в нанесенной ему и ученикам его обиде, просил где следует
установленным порядком, обращаясь в случае нужды с жалобою на суд
или полицию, к г. Грузинскому Гражданскому губернатору” *(2 r–v)*.

*Դժբախտաբար, գործի մեջ չկա Խ. Աբովյանի ինքնագիր դիմու-
մը, որը ուղարկվել է Թբիլիսիի զինվորական նահանգապետին: Դեռ
ավելին. այս միջադեպի շուրջը ոչ մի գրագրություն չի մնացել ոչ
զինվորական և ոչ քաղաքացիական նահանգապետների, ինչպես և
դատաստանական ատյանների դիվանատների արխիվներում:*

*Հավանական է ենթադրել, որ Թբիլիսիի զինվորական նահան-
գապետի պատասխան-բացատրությունը ստանալուց հետո Խ.
Աբովյանը գործին պատշաճ ընթացք չի տվել: Սակայն փաստը
մնում է փաստ:*

Խ. Աբովյանը իր մասնավոր պանսիոնի կարճատև գոյության միջոցին
*(1840 թ. 29. II–I. VII), հավանական է՝ ապրիլի վերջերին կամ մայի-
սի 1–2-ին, նույն պանսիոնի մաղաշ սանիկների հետ զբոսնելիս
հայհոյանքի և ծեծի է ենթարկվել մի խումբ ցարական չինովնիկնե-
րի կողմից:*

V. Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՀԵՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸ

*Անդրկովկասյան դպրոցների դիրեկցիայի դիվանատանը եղել է
105 թերթ պարունակող մի հատուկ գործ № 525-ի ներքո Խ. Աբով-
յանի անհետացման մասին հետևյալ տարօրինակ, եթե ոչ զավեշ-*

տական, մակագրությամբ. “О без вести пропавшем штатном смотри-
теле Эриванского училища Абовьяне и о назначении к исправлению
должности смотрителя Туркестанова и о постройке мебели для сего
училища”. *Այս գործը հիշված է համապատասխան մատյանում*
“Опись делам, принадлежащим уездным училищам разных дирекции с
1838 пот 1858 год”, *որ այժմ մուծված է № 424/231 ֆոնդի № 25 գոր-
ծում, էջ 52:*

*Ինչպես նույն մատյանում գործի հիշատակության կից նշումից
երևում է, այն մի շարք գործերի հետ դեռևս Անդրկովկասյան
դպրոցների դիրեկցիայի և նրա դիվանատան գոյության պահին,* իբ-
րև մակուլատուրայի նյութ, *ենթարկվել է ոչնչացման, ուստի և մտած չէ
Վրաստանի Պատմական կենտրոնական արխիվի ո՛չ № 424/231 և
ո՛չ էլ որևէ այլ ֆոնդի մեջ:*

*Ցարական չինովնիկների այսպիսի վերաբերմունքը դեպի Խ.
Աբովյանը, ի հարկե, պիտի բացատրել միմիայն նրանով, որ նրանց
համար Խ. Աբովյանի անունը մի դատարկ բան է եղել, սովորական
մահկանացուի ազգանուն, գուցե և ոչ ավելին:*

*Սակայն բոլոր վերոգրյալից պարզ երևում է, թե ինչպիսի մթնո-
լորտումն է վիճակվել գործել* մեծ լուսավորչին *և թե ինչպես է նա
եղել կաշկանդված չինովնիկական շրջապատում:*

ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Վրացական ՍՍՌ Պետական Թանգարանի հայերեն ձեռագրերի հավաքածույի մեջ, որ վաղուց ցուցագրված է մեր կողմից, ի միջի այլոց, առանձին ուշադրություն է գրավում մի ժողովածու՝ № 21-ի ներքո: Ժողովածուն, որ «Գիրք թղթոց»-ի, «Կնիք հաւատոյ»-ի և «Կանոնագրքի» մի տեսակ կոնտամինացիա է, գրված 765=1316 թվին ոմն Ներսես քահանայի ձեռքով և ոմն Մովսեսի աշխատակցությամբ, պարունակում է 45-ի չափ մեծ և փոքր հոդվածներ այլ և այլ բովանդակությամբ, որոնց թվում մի քանիսը կարևոր նշանակություն ունեն հայագիտության այս կամ այն խնդիրը լուսաբանելու համար, իսկ մի երկուսն էլ «Գիրք թղթոց»-ի թերի կամ եղծված տեղերի խպառ վերականգնման հնարավորությունն են տալիս (օրինակ՝ «Բացայայտութիւն ... ասացեալ սրբոյ վարդապետին Սահակայ կաթողիկոսի և մեծի թարգմանչի՝ ընդդէմ երկաբնակացն նեստորականացն» և «Բանք խրատ[ակ]անք վասն հաւատոյ» ընդարձակ գրությունների):

Նույն ժողովածույի մեջ, որի վերաբերյալ մեր մանրամասն ուսումնասիրությունը կտպվի առանձին[1]*, աչքի է ընկնում նաև մի գրություն՝ «Վասն ասպարիզաց» վերնագրով՝ չափագիտության հարցի շուրջը, թեև գրության վերնագիրը չի համապատասխանում բովանդակության: Գրությունը ձեռագրում բռնում է 84v–87r էջերը և տարբերվում է հայերեն լեզվով գոյություն ունեցող և ցարդ հրապարակված համապատասխան վավերագրերից, օրինակ՝* Հարություն վ. Ավգերյանի *(Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց առաջնորդութեամբ Եպիփանի, Խորենացւոյ և Շիրակացւոյ, Վենետիկ, 1821): Hans von Mžik-ի (*Erdmessung, Grad, Meile und Stadion nach den altarmenischen Quellen. Ein Beitrag zur Geschichte der Erdkunde und der Kulturbeziehungen zwischen Hellenismus und Armeniertum–*«Հանդէս ամսօրեայ», 1933 թ., էջ 283–306, 432–459, 559–588) և ակադ. Հա-*

[1] Տես մեր համապատասխան զեկուցումը «Հայկական «Գիրք թղթոց»-ի նոր վարիանտը և Պետրոս Վերիացու աշակերտ Հովհան Մայումեցին», կարդացած Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետական համալսարանի 2-րդ գիտական սեսիայում, 1940 թ. մայիսի 8-ին (Թեզիսները, վրացերեն, էջ 119-121):

կոբ Մանանդյանի *(Երատոսթենեսի ստադիոնը և պարսից ասպարեզը, Երևան, 1934) հրատարակածներից:*

Որպեսզի այս նորագյուտ աղբյուրը մատչելի դարձնենք մասնագետներին, հրապարակում ենք նույնությամբ ըստ հիշյալ ձեռագրի, սկզբնական մասում ընդգծելով այն տեղերը, որոնք չկան Hans von Mžik-ի հրատարակած տեքստին:

84 v ՎԱՍՆ ԱՍՊԱՐԻԶԱՑ

Քաջ երկրաչափք և ճերհունք աշխարհագրութեան այսպէս ասա-
ցին. մասն ՀԱ. մղոն է և Ծ. ասպարէզ ի լայնն և ի յերկայնն չորեք
85 r կուսի միաչափ: Եւ խարիսխն երեք մղոն: Եւ մղոն եւթն ասպարէզ: Եւ
ասօարէզն ՃԼ. քայլ ըստ աղաչափութեան: Եւ ըստ Պարսից ՃԽԳ.
քայլ: Եւ լինի ըստ այսմ մղոնն հազար քայլ: Եւ քայլն վեց ոտն: Եւ
ոտն ԺԶ. մատն: Ասի մղոնն ստադիոն և վտաւան: *Իսկ քանքարն*
և տաղանդն ի սոցին գիտակաց ասացաւ. ԾԻ. և Ե. լիտր և
կամ Ը. դահեկան. և ոմանք զմասն և զմնադն նոյնպէս
ասացին ըստ տաղանդին:
Եւ զլիտրն ինն հազար ասարիոն, որ է դանկ, և ըստ
85 v *ոմանց նուազութիւն: Եւ կենդինարն Ծ. լիտր և ըստ*
ոմանց եւթն հազար և երկերիւր դահեկան: Եւ լիտրն
երկոտասան ուկլի և ուկլին վեց դահեկանի կշռորդ:
Եւ դահեկանն դրամ մի երրորդ մասն դրամին: Եւ
դրամն վեց դանգ, որ է ԺԸ. կուտ՝ կորիզ՝ կերատ, մի են
սոքա: Եւ դանգն՝ երեք կուտ եղջիւրոյ, որ է երեք գարւոյ
կշռորդ մի կուտն: Եւ լինի լիտրն ՀԲ. դահեկան. և դրա-
մով կշռեալ ութսուն դրամ: Իսկ ունկին Բ. սատեր է, որ է
86 r *Ը. դրամ կամ վեց, զի պակաս է ունկին քան զուկին, որ-*
պէս ցուցաւ ասի և ըստ ոմանց դահեկանն վաթսուն ասա-
րիոն, բայց արծաթին:
Դրաքմէն և սիկղ Բ. դրամ և սրբութեան սիկղն Գ. դրամ
և Բ. դանգ:
Սատերն և դրաքմայն Դ. դրամի կշռորդ է. Ադիրոնն և
դինարն՝ դահեկանի անուն է: Սիմէս՝ կէս դահեկան է, և
տրմէս՝ երրորդ մասն դահեկանի: Քըսէստն՝ չափ է՝ ըստ
ոմանց Բ. լիտր և ըստ այլոց Ի. ունկի:

86 v *Մարն՝ Ծ. | քսէստ, որ է չափ հնձանի: Քռոն՝ երեսուն մոդ և արդուն՝ չորս մասն մոդոյն, որ է ութանասուն և երկու քսէստ, և ըստ ոմանց ԺԵ. մոդ: Երեք գրիւն՝ մի մոդ, որ է չափ սրբութեան, և ըստ ոմանց երեք չափ: Եւ այլ դարձեալ կապիճն տասներորդ մասն է, ասեն գրուին և կշիռ ըստ գրուին կապիճն և ըստ արդուին է: Իսկ քռոն յոլով, քան զսոսա է: Եւ ոմանք զարդուն չափ ասացին և*
87 v *զգրիւն կապիճ կամ փսակ այրւոյն չորս քսէստ էր, որպէս սափոր մանանային: Բայց գիտել պարտ է, զի յայլ և այլ տեղիս տարբերք լինին չափք և կշիռք:*

ИЗ АРМЯНСКИХ ИСТОЧНИКОВ ПО МЕТРОЛОГИИ

(Р е з ю м е)

Скудная литература, содержащая в себе армянские письменные источники по метрологии, обогащается небольшим трактатом под заглавием “Об аспарезе”, публикуемом здесь впервые по рукописи № 216 от 1316 г., из собрания армянских рукописей *(*Arm*)* Госуд. Музея Грузинской ССР, представляющей собою в некотором роде контаминацию сборников, известных под названием “Книга посланий”, “Печать веры” и “Книга канонов”.

ԿԱՐՆՈ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ 1829 Թ. ԳԵՆԵՐԱԼ ՊԱՍԿԵՎԻՉԻՆ ՈՒՂՂԱԾ ԳՐՈՒԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻՐԸ

*Կարնո հայ գաղթականների և ցարական կառավարության միջև 1829 թ. վարած բանակցությունների մասին՝ հիշյալ գաղթականների Ախալցխեի շրջանում բնակեցնելու նպատակով՝ համապատասխան պաշտոնական նյութերը, ինչպես հայտնի է, ամփոփված են Կովկասյան Հնագրական հանձնաժողովի հրատարակությունների մեջ (*Акты Кавказской Археографич. комисси, т. VII, стр. *830–832, 852 և այլն): Սակայն այդ գրագրության մեջ չի երևում Կարնո հայ գաղթականների անունից խոսող՝ Կարնո առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու (հետագայում Վրաստանի Հայոց առաջնորդի) բուն «հայցագրերից» և ոչ մեկը:*

Այժմ մեր ձեռքի տակ է հիշյալ Կարապետ արքեպիսկոպոսի դիմումներից մեկը, որ 1829 թվին ուղղվել է գեներալ ֆելդմարշալ Պասկևիչին: Դիմումը մեզ հասել է 2 օրինակով, որոնցից մեկը բնագիրն է, որ պահվում է Վրացական ՍՍՌ Կենտրոնական արխիվի գործերում (հայերեն վավերագրեր պարունակող հավաքածուի մեջ), իսկ երկրորդը, որ առաջինի բառացի պատճենն է, գտնվում է Ախալցխեի Գավառագիտական թանգարանի արխիվային բաժնում:

Բուն վավերագիրը գրված է «ի 1829 ի դեկտ. 15 ի Կարին, որ է Արզրում», իր իսկ Կարապետ արքեպիսկոպոսի ստորագրությամբ ու կնիքով և վավերացված և 29 հոգի ժողովրդյան ներկայացուցիչների՝ «Նուաստ երեսփոխանների, մահտեսիների և վարժապետների» ստորագրությամբ ու կնիքով: Գրված է մեծադիր լավորակ մի թերթ թղթի վրա, որ միջից ծալված է և տալիս է 4 երեսանոց վավերագիր՝ 35,5×49,5 սանտ. մեծությամբ (կողքից կարմիր գծած լուսանցքներով), ուր միմիայն առաջին երկու երեսն է գրված, մինչդեռ մյուսները թողված են մաքուր:

Քանի որ այս վավերագիրը մինչև այժմ օգտագործված չէ գրականության մեջ և սրա մասին ոչ մի տեղեկություն չի տալիս հարցի շուրջը եղած՝ Հովակիմ Գեղամյանցի *հատուկ ուսումնասիրությունը («Կարապետ արքեպիսկոպոսի կենսագրություն»—«Փորձ» ամսա-*

գիր, 1876 թ., № 1, էջ 163–206, 1877 թ., № 1, էջ 81–112), ուստի և նպատակահարմար ենք գտնում հրատարակել այն այստեղ ըստ հիմնական օրինակի, միաժամանակ ծանոթությունների մեջ նշելով և՛ վարիանտները՝ ըստ պատճենի:

Ի դեպ, նշենք, որ վավերագրի պատճենը հիմնական գրությունից տարբերվում է գլխավորապես նրանով, որ վերջինս գրված լինելով հասարակ թղթի վրա՝ չունի ստորագրություններ ոչ Կարապետ արքեպիսկոպոսի և ոչ էլ 29 երեսփոխանների, մահտեսիների ու վարժապետների:

Վավերագրերը հրատարակում ենք, ըստ բնագրի, հին ուղղագրությամբ, պատիվների տակ համառոտած գրերը տալիս ենք ամբողջապես, բերելով այն չեղատառ:

Վավերագրի ստորագրություններն այսպես են. նախ Կարապետ արքեպիսկոպոսինը՝ կնիքով, ապա գալիս են 4 շարք ստորագրություններ՝ կնիքներով, որոնցից առաջինում՝ 9, երկրորդում՝ 10 և չորրորդում՝ միմիայն 1-ը:

ՁԵՐԴ ՊԱՅԾԱՌԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ ԳԵՆԵՐԱԼ ՖԵՌԹՄԱՌՇԱԼ ԳՐԱՖ ՊԱՍԿԵՎԻՉ ԵՐԵՎԱՆՈՒ

Ողորմած Տէր մեր.

Աղերս ի կողմանէ արքեպիսկոպոսին Հայոց Կարնոյ քաղաքի և միանգամայն[1] ի դիմաց իշխանացն Հայոց նոյն քաղաքի առ Նորին Պայծառափայլութիւն:

Զկնի տիրապետութեան քաղաքիս Կարնոյ ի յաղթական զօրաց Նորին Մեծաշուք Կայսերականի Տէրութեան[2] ամենայն Ռուսաց[3] մինչ ցայսօր առանց յափշտակութեան ընչից[4] և վնասման իրիք մերայնոց[5] խաղաղութեամբ և գովանի հանգստութեամբ ի գեղեցիկ պաշտպանութեան և ապահովութեան անցուցաք զաւուրս մեր:

[1] միանգամայն] անմիջաբար ևս:

[2] տէրութեան] մեծութեան:

[3] ըռուսաց:

[4] + մերոց:

[5] վնասման ընտանեաց մերոց:

Ապա յուսամք թէ մինչ արժանաւորեցիմք յատուկ շնորհիւ Ձերին ողորմածութեան[6] բնակիլ[7] մըշտնջենաւորապէս ի ներքոյ հովանաւորութեան Նորին Բարձրաշուք Կայսերական Մեծութեան յերկրին Ռուսաց առաւել ևս ունիմք ստանալ անշուշտ[8] զևս գերագոյն ապահովութիւն քան զայս և հաւկացեալ խնամոց վայելմունս:

Երևի թէ զօրքն Ռուսաց զկնի քանի[9] ամսոյ թողլոց են զայս նահանգս Էրզրրումոյ[10]. և մեք ի վաղուց հետէ քաջ տեղեակ գոլով բարբարոսական բարուց օսմանեան ազգին և կառավարութեան՝ գիտեմք, զի[11] անշուշտ վտանգիմք:

Եւ որովհետև ազգս մեր յայսմիկ[12] միջոցի ականատես իսկ եղև քաղցրաբարոյութեան և ողորմածութեան Ռուսաց կառավարութեան. վասն որոյ առ ի չվտանգիլ մեր յՕսմանեանց[13] աղերս արկեալ՝ աղաչեմք և խնդրեմք[14] զպաշտպանութիւն Ռուսաց. և անմիջաբար ի Ձերդ Պայծառափայլութենէ նշանակել վասն նուաստութեան մերոյ տեղի ինչ արժանաւոր յերկրի Ռուսաց ի բնակութիւն, յորում մինչ երկոտասան հազար տունք Հայոց (կամ աւելի և կամ պակաս)[15] ելանելով ի յերկրէ[16] աստի, բնակիցիմք[17] անդր:

Ուստի ամենախոնարհաբար դիմեմք ահա այսու աղերսական գրութեամբ առ[18] յոտս բարձր Պայծառափայլութեան Ձերոյ, ծանուցանեմք և խնդրեմք[19], զի եթէ ամենաբարի կամք Ձերդ Պայծառափայլութեան հաճեսցի, կամիմք մեք բնակիլ յԱխալցխայ քաղաք և ի մերձակայ գաւառսն նորին:

[6] յատուկ ... ողորմածութեան abs:

[7] բնակել:

[8] ունիմք ստանալ անշուշտ] անշուշտ ունիցիմք:

[9] քանի abs:

[10] զայս նահանգս Էրզրումոյ] զԷրզրում:

[11] գիտեմք, զի abs:

[12] յայսմ:

[13] յօսմանցւոց:

[14] այստեղ ավելացված և ապա ջնջված են հետևյալ բառերը.«ի ձերդ ողորմած պայծառափայլութէ»:

[15] առանց փակագծերի:

[16] յերկրէս:

[17] բնակեցի:

[18] այսու… առ abs:

[19] «և խնդրեմք» ավելացված է:

Վասն որոյ խոնարհութեամբ[20] աղերսեմք և հայցեմք[21] արժանաւորեցուցանել զանարժանութիւն[22] մեր գրաւոր պատասխանոյ, որպէսզի և մեք նուաստքս սկսանիցիմք յայսմ հետէ[23] նախապատրաստիլ մինչև ցհասանիլ գարնան:

Մնամք ահա ազգովին ակնկալ խնամոց և ողորմութեանն շնորհի[24] Ձերդ Բարձր Պայծառափայլութեանն,

որով[25] եմք և մնամք Հանդխամենհութեանն
Ձերոյ յամենայնի[26] ամենախոնարհ և հպատակ
ծառայք[27].
Ն. ծ. Կարապետ խոնարհ եպիսկոպոս Հայոց
Կարնոյ և այլոց

(կնիք)

Ստորագրութիւններ.

ա.	1.	ն	ծոյ	մէլի	Գրիգոր Տեր-Սիմոնեան
	2.	ն	ծոյ	մէլի	Սիմօն Հա[յ]րապետեան
	3.	ն		մէլի	Ղազար Ստեփօեան
	4.	ն		մէլի	Յօհաննէս Էփրիկեանց
	5.	ն		մէլի	Մինաս Ազնաւորեան
	6.	ն		մէլի	Մնացական Սաղաթէլեան
	7.	ն			Կարապետ Քիրիշճեանց
	8.	ն			Ալէքսան Մըսըրլեան
	9.	ն			Յակօբ Մարուքեանց
բ.	10.	ն		մէլի	Սիմօն Մութաֆեանց
	11.	ն			Ստեփաննոս Թէալիկչեան
	12.	ն		մէլի	Կարապ[ետ] Ջատրճեան
	13.	ն			Յարութիւն Ջօմառեան
	14.	ն		մէլի	Պ[ա]ղտա[սար] Մխօեան

20 խոնարհութեամբ abs:
21 +խոր խոնարհուԲ:
22 զանարժանութիւն abs:
23 յայսմհետէ abs:
24 շնորհի abs:
25 որովք:
26 յամենայնի abs:
27 + զՁերդ պայծառափայլ պայծառափայլութե:

	15.	ն			Յարութիւն Մուրաֆեանց
	16.	ն			Յակոբջան Մեոկէլեան
	17.	ն			Գէորգ Էքսիւզեանց
	18.	ն			Նազարէթ մէլի-Մուրադեանց
	19.	ն	ծոյ		Գրիգոր Շիրճեան, վարժապետ Հայոց Կարնոյ
գ.	20.	ն		մէլի	Յակօբ Քրիստոստրեան
	21.	ն			Սարգիս Յակօբջանեան
	22.	ն		մէլի	Աղաճան մէլի-Գէորգեան
	23.	ն			Շիրին Ռառանճր Սարգսեան
	24.	ն			Պապոյ Յառնեան
	25.	ն			Պարսամ Էնֆիէճեանց
	26.	ն			Ալէքսան Տիւտիւքճեան
	27.	ն			Յօհաննէս Ջիրիպեան
	28.	ն		մէլի	Յարութիւն Միրզէեան
	29.	ն		մէլի	Պաղտասար մէլի-Վարդանեան[28]

ПОДЛИННИК ПИСЬМА ГЕНЕРАЛУ ПАСКЕВИЧУ ОТ АРМЯН-ЭММИГРАНТОВ ИЗ КАРИНА В 1829 Г.

(Р е з ю м е)

Публикуемый документ–подлинник писмьа к генералу-фельдмаршалу Паскевичу Эриванскому от 15 декабря 1829 г., за подписью армянского архиепископа Карапета Багратуни и 29 выборных от армян церковных старост, махтеси и учителей, которое (письмо) касается вопроса об устроении в гор. Ахалцихе и его районах армян-эммигрантов из Карина (Эрзерума), переселившихся в пределы б. Российской империи после ркссо-турецкой войны 1828-1829 г.г. в связи уходом русских войск из занятых областей Турции.

Письмо дошло до нас в 2-х экземплярах: подлиннике, хранящемся в центрархиве Груз. ССР, и копии, хранящейся в Ахалцихском Краеведческом музее. Оно восполняет сведения, содержащиеся в т. VII Актов Кавк. Археогр. комиссии по тому вопросу.

28 բոլոր ստորագրությունները abs:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՐՄԻՐ ՈՐԴԱՆ ՆԵՐԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կարմիր որդան ներկի արտադրությունն Արևելքում հայտնի է եղել դեռևս հին ժամանակներում, ինչպես վկայում է Աստվածաշունչը (Յայտնութիւն Յովհաննու, XVIII, 12, 16):

Նույն այդ կարմիր որդն, որ նույն «ղըրմըզ»-ն է, ռուսերեն кошениль *կամ* кармин, *վրացերեն «բուժղենդի» (հուն.* kokkinon, *լատ.* coccus*) կոչվածը, հնում տարածված է եղել և Հայաստանում, իբրև արտադրության և համաշխարհային շուկա արտահանվող (էքսպորտի) հիմնական և գլխավոր առարկաներից մեկը*[1]*:*

Այդ հանգամանքը առանձնապես մատնանշում են համապատասխան աղբյուրները, որոնցից են՝

1. Հռոմեական կլասիկ հեղինակներից՝ բնագետ Պլինիուսը–մեր թ. I դ. (Naturalis historia, *XXXIII, XXXV*).

2. Հայ մատենագիրներից՝ Ղազար Փարփեցին–V դ. (Պատմ. Հայոց, I, 7)[2] *և Անանիա Շիրակացին–VII դ. (Աշխարհացույցը, Այրարատ-ի ներքո)*[3]*:*

3. Արաբական աշխարհագիրներից՝ Իբն-ալ-Ֆակիխը (903 թ.), Ալ-Իստախրին (930 թ.), Իբն-Խաուկալը (971–978 թ.թ.), Ալ-Մուկադասին (985 թ.), նաև Ֆիրուզաբադը (XIV–XV դ.դ.) և ուրիշները:

4. Տաճիկ աշխարհագիր Հաջի-խալիֆան–XVII դ. (Աշխարհագրություն), որ կրկնում է արաբացի Ալ-Իստախրիի տվյալները:

Կարմիր որդանի որպիսության և տարածման հանգամանքների խնդրով հատկապես զբաղվել է ռուս ցարական կառավարությունը «Հայկական մարզը» կազմակերպելուց հետո, որ Վրաստանի կառավարչապետին էր ենթակա, կառավարչապետ բարոն Գ. Վ. Ռոզենի օրով (1831–1837):

Կառավարական միջոցառումներից մեկն էր J. Hamel-*ի* (Гамель) *գործուղումը Հայաստան՝ խնդիրը տեղնուտեղը ուսումնասիրելու նպատակով, որի արդյունքները ներկայացված են նրա հատուկ հոդվածներում՝ գերմաներեն* “Über Cochenille am Ararat” etc. *(Ս. Պ. Բ. Գիտ. ակադ. Տեղ., VI սեր., III հ., II մ., էջ 9–64) և ռուսերեն՝* “Об Араратской кошенили” (Журнал Миня внутр. дел, ч. *XVII, I*, 1835, июль, стр. 192–217). *Վերջինիս մէջ կարմիր որդանի տարածման սահմանների մասին ասված է հետևյալը.* “Поныне открыта сия кошениль предпочительно ниже Эчмиадзинского монастыря, по текущей от Еревана к Араксу реке Занге, близ деревень Шорли, Сарванлар, Неджели, также близ Гассан-Абад и недалеко от Аракса возле Хорвирабского монастыря, равным оброзом по ту сторону Аракса при деревне Сиффи-Аббад и вдоль пронстекающей с подножья Арарата Карасу (Черной воды) между деревнями Ташбурни и Каралюхом, где много имеется тросниковых болот” (стр. 196).

Կարմիր որդանի խնդրով նույն XIX դարում զբաղվել են և ուրիշները, օր. J. F. Barandt-ը, իսկ սովետական շրջանում՝ Բ. Կուզինը, Մ. Ցիրովան *և, վերջապես,* Ա. Ավետյանը, *որոնց հետազոտությունների արդյունքները մասամբ ձեռագիր վիճակում են (առաջին երկուսի), մասամբ հրատարակված են (վերջինի) հետևյալ վերնագրով՝* “К вопросу о кошенили в Армении” *(ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Տեղեկագիր, 1940 թ., № 4–5, էջ 231–237):*

Խնդրի ակտուալ լինելը երևում է, ի միջի այլոց, և այն փաստից, որ ներկերի խնդրով ներկայումս զբաղված է և Հայկ. ՍՍՌ ժողկոմսովետին կից Ձեռագրերի ուսումնասիրության ինստիտուտը (Մատենադարանը), որի հրատարակությամբ 1941 թ. առանձին գրքով լույս ընծայվեց հայերեն և ռուսերեն լեզուներով դոց. Ա. Հարությունյանի շահեկան աշխատությունը՝ «Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում» (99 էջ), ուր մի քանի տող ծանոթություն կա նվիրված և «ղըրմըզ»-ին (էջ 84):

* * *

Վրացական ՍՍՌ Կենտրոնական պատմական արխիվի ֆոնդերում աշխատելիս մենք առիթ ունեցանք ծանոթանալու Անդրկովկասի կառավարչապետի դիվանատան արխիվային ֆոնդի № 2-ա (նախկին № 8–Վրաստանի կառավարչապետի) № 2571 գործին, որ ցուցակագրված է այսպես. “О размножении Армянской Кошенили и о добывании из нее краски”.

[1] Չմմտ. ***Я. Манандян***. О торговле и городах в Армении, Ереван, 1930, стр. 84-85.

[2] «Ի նմանէ (յԱյրարատայ) ծնեալ որդունս ի զարդ կարմրատեսիլ գունոց»

[3] «Եւ ունի Այրարատ… որդն սիզաքերեալ արմատոյ առ ի զարդ կարմրութեան գունոց»:

Նկատի ունենալով, որ այս «գործը» կարող է որոշ չափով հետաքրքրություն առաջ բերել համապատասխան՝ չահագրգռված մասնագետների շրջանում, մենք նպատակահարմար գտանք տալ այստեղ նրա համառոտ բնութագիրը, կցելով դրան նույն գործից քաղված երեք փաստաթուղթ, գրված հայերեն, որոնցից մեկը հայերեն-ռուսերեն և մեկն էլ ռուսերեն-հայերեն:

«Գործը», որ սկսված է 1832 թ. ապրիլի 2-ից, պարունակում է 101 թերթ:

Հիմնական փաստաթուղթը, որի շուրջը ստեղծվել է այս «գործը», դա էջմիածնի միաբան և ծաղկարար Սհակ-Սահակ-Իսահակ կոչվող վարդապետի, հետագայում եպիսկոպոսի և արքեպիսկոպոսի գրությունն է (1830 թ.), բնագիրը հայերեն, ռուսերեն թարգմանությամբ հանդերձ, կարմիր որդանի մեռուցման շուրջը 10 ռեցեպտով և ներկ արտադրելու շուրջը 3 ռեցեպտով, ինչպես և Վոսկոբոյնիկովի գրությունը (1832 թ.) միմիայն ռուսերեն: Ապա գալիս է Վրաստանի կառավարչապետի սխտեմի այլ և այլ հաստատությունների գրագրությունը, ինչպես և ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննեսի ու վերոհիշյալ Սհակ ծաղկարարի դիմումները Վրաստանի կառավարչապետ բարոն Ռոզենի հասցեով՝ մեկը (1833 թ.) հայերեն-ռուսերեն և մյուսը (1834 թ.)՝ ռուսերեն-հայերեն:

Ստորև մենք հրապարակում ենք 3 փաստաթուղթ, հանված № 2571 գործից, 1830, 1833 և 1834 թ.թ. ներքո:

I

էջ 1 (8 ա)

Օրինակ

Կազմելոյ զկարմիր որդան կամ մեռուցման նորին՝ թէ որով կերպիւ մարթ է լինիլ

Կամելով իմ գտանել զկերպ յօրինման որդան կարմրոյ՝ յանձն առի կրել զտաժանմունս ի պէսպէս փորձառութիւնս մեռուցման նորին և հանման իւղոյն ըստ աւանդելոյ այլ և այլ անձանց սկսեալ ի 1815 ամէ փրկչական թուականին:

Փորձ ա.

1. Ի 1815 ամի, պատահեալ իմ ծերունւոյն ումեմն Տիգրանակերտցւոյ, լուայ, զի պնտէր՝ եթէ որդանն կարմրոյ չիք իւղ: Եւ զի սրբազնասուրբ Քահանայապետս մեր Եփրեմ կաթողիկոս աւան-

դեալ էր ինձ գրով յայնմ ժամանակի զեղանակ մեռուցման որդանն և հանման իւղոյն և տուեալ նաև զմասն ինչ յորդանէն մեռուցելոյ յիւրմէ ջրով կալաքարի, հարկադիր եղև ինչ զփորձ առնուլ ընդ ծերոյն այնորիկ օրինակ զայս. նախ զառաջինն որդնն մեռուցեալ ջրով կալաքարի՝ իբրև արկաւ յեռուցեալ քացախ, արտադրեաց յինքենէ զիւր իւղն հանելով յերեսս քացախոյն, որով յայտնի ցուցաւ իւղոտն գոլ որդան:

Փորձ բ.

2. Առեալ զկենդանի որդնն՝ արկաք ի քացախ ցուրտ և թողեալ ի նմա բոպէս իբրև 10 հանեալ տարածեցաք յարևու ի վերայ կտաւոյ. և ի ջերմանալ որդանցն՝ զեռալ սկսան անդրէն իբրև զկենդանիս. և զորս կալեալ վերստին մինչ եդաք յեռացեալ քացախ՝ սատակեցան. և զմասն ինչ ըստ խրատու ծերոյն եդեալ ի փռան առ ի չորացուցանել, տեսաք զի խորովէին ի ջերմութենէն հանդոյն ձկանց տապակելոց: Եդեալ դարձեալ զնա ի մամուլս՝ արկեցաք և հօսեալ իւղոյն՝ եղև անպիտան ինչ:

Փորձ գ.

3. Ի վերայ որդանն մեռուցելոյ ի քացախ եռացեալ՝ ցանեալ սակաւ ինչ զկիր փոշիացեալ (քերէճ) այրեցաւ, գալարեցաւ և եղև անպիտան իմն, ցանեալ դարձեալ զգաճ (ալչի) տեսաք՝ զի մածեալ ընդ իրեարս՝ պընտացաւ իբրև զաղիւս անօգուտ ամենևին:

Փորձ դ.

4. Ածաք ի վերայ որդանն մեռուցելոյ սակաւ ինչ Թեփ ալեր՝ ցորենոյ. և չեղև ինչ օգուտ. ածաք և ալիւր կորեկի և եղև այնպէս ոչ ինչ մածուցեալ գոլով ընդ իրեարս որդանցն:

Փորձ ե.

5. Յետ այս քանեաց և այլ ևս բազմակերպ փորձառութեանց մերոց՝ իբրև տեսաք, զի ի դերև ելին ամենայն վաստակք և տաժանմունք մեր ի սնոտիս համարեցան. և չեղև ինչ հնար ի մեռացուցանել խսկապէս զդժուարամեռ որդնն կարմրոյ և ի հանել զիւղ նո-

րա. ձեռնարկաք այնուհետև մեք մեզէն զփորձ առնուլ ըստ եղանակին՝ զոր լուեալ էր մեր Սրբազնասուրբ Հայրապետէս, ըստ այսմ՝ [էջ 2 (8 բ)] *ի թողուլ մեր յայնժամ զորդն կենդանի ի պարզեալ ջուր կալաքարի իբրև քառորդ մի ժամու, և յանչնչանալ նորա անդրէն հանեալ սփռեցաք յարևու և այսու կերպիւ միայն եղև հնար չորանալոյ նորա, այլ սակայն մնայր տակավին իւղն յինքեան:*

Փորձ զ.

6. Իբրև եղաք զկենդանի որդնն ի մաքրագտեալ ջուր կրոյ (քերէճի) անչնչացաւ այս, որպէս և ի ջուր կալաքարին, այլ առանց արտաքս թորելոյ զիւղն:

Փորձ է.

7. Առեալ 10 մսխալ դրամանի, այսինքն խորասանի (որ է տե՛սակ ինչ սերման) և ծեծեալ խառնեալ ընդ գինւոյ և զորդնն եդեալ ի նմայ ժամս իբրև քառորդ մի և հանեալ անտի ի տարածել մեր յարևու՝ կարծելով, թէ անչընչացեալ իցեն, տեսաք՝ զի սկսան խլրտիլ և շաղխել (?) մեղմով իբրև զկենդանի և չէին մեռեալ:

Փորձ ը.

8. Եռացուցեալ զորդնն կենդանի ընդ աղաջրոյ ի հուր՝ անչնչացաւ թէպէտ այլ յոչ ինչ պէտս:

Փորձ թ.

9. Ըստ աւանդելոյ ոմանց՝ ծծումբ արկեալ ի թոնիր և զորդն ի կտաւի ամփոփեալ կալաք ի վերայ ծխոյ նորին և այնպէս տակաւին եկաց անմեռ:

Փորձ ժ.

10. Ի վերայ այսր ամենայնի հիացեալ իմ ընդ այսպիսի դժուարամեռն գոլ այսր չնչին կենդանւոյ, եդի զկենդանիսն ի նոցանէ յանօթ ինչ ապակեայ բերանափակ և պահեցի ամիսս երկու և աւելի ևս և բացեալ այնուհետև տեսի զնա թմրեալ որպէս ի քուն և բամ-

բակամման բորբոսիւք ծաղկեալս և արտադրեալ էին զձուս մանրահատիկս կարմրագոյնս և փոքրաքանակս քան զհատն մեկանի (խաշխաշի), որք խոշորացուցիւ տեսան իբրև զնռնահատս:

Յայս ամենայն փորձառութիւնս աշխատ եղեալ իմ յընթացս միոյ ամի, չգտի զայլ ինչ հնար դիւրաւ մեռացուցանելոյ զայս կենդանի, բայց եթէ ի ջուր կալաքարի միայն՝ որպէս ասացի, թէև այն ևս ոչ կատարելապէս: Իսկ յետ մեռուցմանն թէ զիա՞րդ կամ որո՞վ եղանակաւ գտի ես կերպ կազմելոյ զներկ նորին, աւասիկ եդից առաջի ըստ երից:

Կերպ ա.

1. Զորդնն մեռուցեալ ի ջուր կալաքարի՝ եդեալ ի ջուր ցուրտ և լոկ ժամս իբրև 24, ապա եռացուցեալ զայն հանդերձ պարզեալ ջրով չուղանի՝ խառնեցի յեռանդեան անդ առ հինգ դրամ որդնն՝ 2 դրամ լութր և կէս դրամ պաղլեղ (շեպ), որոյ կարմրագոյն ջուրն անցուցեալ ընդ նուրբ կտաւ և չորացուցեալ յարևու՝ եղև մածուցիկ իմն իբրև զկպրաձիւթ կամ իբրև զմեղր թանձրածոր, զորոյ և իւղն ևս հանի:

Եւ այսպէս է ահա՝ զոր ի գործ ածեմք ի կնիքս Սրբազնասուրբ Քահանայապետիս մերոյ և այլ ամենայն բազմատեսակ յերանգս նկարուց և ի ծաղկագիրս [էջ 3 (9 ա)] *զանազան թղթոց յօրէ յայնմանէ (ի 1816 թուականէն) մինչև ցայսօր ժամանակի ոչ կարօտացեալ յայնմհետէ արտաքուստ գնայն գնելոյ: Որոյ վասն մեծագոյն չնորհակալութեամբ օրհնեաց և օրհնէ հանապազօր զնուաստ աշխատաւորս նա ինքն Սրբազնասուրբ Հայրապետն:*

Կերպ բ.

2. Յետ դնելոյ զթմրեալ որդն ի գինւոջ՝ զդեալ ապա զկարմրագոյն հիւթն և չորացուցեալ՝ սկսաք ի գործ դնել յայլ և այլ երանգս ծաղկագրութեանց, որ լաւագոյն գեղեցիկ և փայծառափայլ երևէր քան զեղեալն յորդանէն մեռուցելոյ ի ջուր կալաքարի:

Կերպ գ.

3. Զորդնն ինքնին անչնչացեալ յապակեայ անօթի՝ եփեալ ըստ առաջնոյ կերպին հանդերձ խառնմամբ չուղանի և պաղլեղի (շեպի)

մարթ է գործ արկանել ի ծաղկագիրս իբրև զառաջին և զերկրորդ կերպիւ եղեալսն, որպէս և մեք իսկ ի գործ ածեալ եմք բազում անգամ ի հանդիպմունս հարկաւորութեանց:

Թէ ու՞ր գտանի այս որդն կարմրոյ կամ յորու՞մ ժամանակի ի վեր ելանէ ի բունոյ իւրմէ, կամ թէ զիա՞րդ մարթ է ժողովել զայն՝ ասացից:

Այս կենդանի ըստ պատմելոյ ոմանց գտանի յեզերս գետոյն Երասխայ՝ սկսեալ ի Սարուանլար ասացեալ տաճկաբնակ գեղջէ (որ է բացատ յԱթոռոյ աստի իբրև կիսոյ աւուր ճանապարհաւ) մինչև ցմուտս մերձակայ սահմանացն Նախճուանայ:

Զայս որդն ժողովեալ տաճիկ բնակչաց այնր գեղջ՝ վաճառեն. յորոյ և իմ իսկ գնեալ է բազում անգամ: Սակայն ի 1822 թուին ես ինքն անձամբ անձին ելի ի խնդիր այսր որդան և հասեալ մերձ ի Խոր Վիրապ վանսն յեզր Երասխայ՝ ժողովեցի մի-մի:

Ասացի մի-մի, վասն զի՝ որպէս առի յայնժամ զփորձն՝ եթէ երկու կամ երեք կամ աւելի ևս ի միասին կալցին, ճմլին ճնշին առժամայն և թորեն արտաքս զարիւնս իւրեանց, որով և լինին այնուհետև ոչ ինչ իմիք պիտանացու:

Էգք սոցա բազում են յոյժ միանման, այլ մի քան զմի մեծ և փոքր՝ գոյն ունելով մոյգ կարմիր. իսկ արուքն՝ սակաւք են, որոց և 2 տեսակ են ըստ իմս ենթադատութեան. մին բացագոյն կարմիր (ալ), որ փութով մեռանի, և միւսն սպիտակ իբրև զհատ բրնձոյ:

Ի 1828 թուէն պահեալ ունէի զորդնն կենդանի ի մէջ յախճապակեայ անօթի մինչև սոյն 1830 թուականս, յորմէ կամեցեալ իմ այժմ յօրինել զներկ՝ տեսի, զի ոմանք ի նոցանէ ունելով դեռևս զկենդանութիւն, թէև անշարժ ի ճմլելն հեղեն զարիւնս իւրեանց իբրև զջուր: Զայս տեսեալ եմ և հիացեալ փառս մատուցի Արարչին ամենայն արարածոց, որ մեծամեծս երևեցուցանէ ի չնչին կենդանիս ևս:

[էջ 4 (9 բ)] *Ժամանակ երևելոյ այսր կենդանւոյ տևէ իբրև ամսաչափ մի. սկսեալ ի 15-երորդէ ամսեան օգոստոսի մինչև ի նոյնքանս սեպտեմբերի, յորում միջոցի ելանեն յերեսս երկրի և շրջին խիտ առ խիտ բազմութեամբ, երևելով իբրև զփունջս մանուշակաց և այս ընդ այգանալ առաւօտուն կամ ի ծագման արեգական և ի սաստկանալ տապոյ ջերմութեամբ՝ խուսեն անդրէն ի բոյնս իւրեանց ընդ երկրաւ և չերևին այնուհետև:*

Ահաւասիկ մատուցանենելով իմ ընդ սմին Զերդ Պայծառափայլութեան նաև զմասն ինչ յորդանց մեռուցելոց յինէն՝ եթէ գինեաւ

և եթէ ջրով կալաքարի՝ զիւրաքանչիւրսն առանձինն և զի՛ նոցունց եփեալ ներկն առանձինն և զիւղն հանեալ ի նմանէ առանձինն, և զձուան առանձին, և զեփեալն ի ձուոց անտի առանձինն, խնդրեմ ամենախոնարհաբար, Ողորմած Տէր, յայտնել ուր հարկն է իցէ ի պարծանս Պայծառ Անուան Զերոյ զբազմամեայ զիմ զայս աշխատանս ի գիւտ հնարից այսր ներկագործութեան, որ գաղտնի և թագուն իմն է և ոչ ծանուցեալ ինչ բազմաց ի ժամանակէ անտի Պարսից ցայսօր: Այլ ես ահա իմովս ամենաջերմեռանդն յօժարութեամբ ընծայեմ Զերումդ Պայծառափայլութեան՝ յուսալով շնորհիւ Զեր ողորմութեան իմիք արժանանալ ի բարձրագոյն Դրանէ հզօր Տէրութեան Ամենաողորմած Կայսեր ինքնակալի ամենայն Ռուսաց և Թագաւորի Հայոց, որոյ անդին կենաց վասն և յաղագս Պայծառափայլութեան Զերոյ մնամ,

ի 14 յունիսի *1830* *ի Սուրբ Էջմիածին*	*Ողորմած Տէր* *մշտանուէր աղօթարար՝ նուաստ ծառայ ծաղկարար Իսահակ վարդապետ մահտեսի Տէր-Գրիգորեան Տէր Սահակեանց Երևանցի*

II

էջ 1 (50 ա) *Զերդ Բարձր Գերազանցութիւն*
Ողորմած Տէր

Յիսուսի Քրիստոսի ծառայ տէր Յովհաննէս և շնորհիւ նորա կաթողիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարգ Առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի և Մայր Աթոռոյ Սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի

Զգրութիւն Բարձր Գերազանցութեան Զերոյ ի 15 սեպտեմբերի № 5140 ընկալաք մեծաւ յարգանօք ի 21 սոյն ամսոյ: *Ղեներալ մայօր կնեազ Բէհբուդովն կառավարիչ նահանգին*	Письмо Вашего Высокопревосходительства от 15 сентября № 5140 имели честь получить 21 сего месяца. Начальник Армянской области Генерал-Маіор Князь Бебутов

Հայոց գրութեամբ իւրով առ մեզ յայտնեալ զկամս Բարձր Գերագանցութեան Ձերոյ խնդրեաց ի մէնջ հրամայել Սհակ եպիսկոպոսին գնալ ի տեղի ժողովման որդանն կարմրոյ և ցուցանել զիւրն գործողութիւն առ ի բարւոքագոյն ժողովել զայն և պատրաստել, յուսադրելով չթողուլ զաշխատանս նորա առանց օրինաւոր վարձատրութեան:

письмом своим к Нам, объявя нам волю Вашего Высокопревосходительства, просил нас дозволить Епископу Исааку прибыть на место сбора кошенили и оказать содействие свое как к лучшему сбору, так и приуготовлению оной, – обнадежив при том его труды его не оставить без законного возмездия.

[էջ 2 (50 բ)] *Թէև Սհակ եպիսկոպոսն ըստ պաշտօնի իւրում յայսմ Աթոռոյս սրբոյ կարի հարկաւոր է մեզ, առանց որոյ դժուարութիւն մեծ պատահի ի գործս մեր, բայց այսու ամենայնիւ գիտելով մեր, թէ հմտութիւն նորա յայսմ մասին ունի զմեծագոյն օգուտ ընծայել տէրութեան, եռանդն մեր առ օգուտ տէրութեան, որով ոգևորեալ կամք միշտ—ստիպեաց զմեզ թողուլ զհարկաւորութիւն մեր և առ ժամանակ առաքել զնա առ գործն, առ որ հրաւիրեալ լինի ի Բարձր Գերագանցութենէ Ձերմէ:*

Хоть присутствие Епископа Исаака по должности его необходимо здесь в св. Престоле сем, без коего часто встречаются в делах затруднения, но при всем том, зная, что опытность его в сем случае может принести правительству не малую пользу, ревность наша к пользе правительства, коею мы одушевлены всегда, –заставила нас оставить собственную необходимость нашу и на время послать его, Епископа Исаака, к делу, к коему он приглашается Вашим Высокопревосходительством.

Մնամք խորին վերապատուութեամբ և անձնընծայութեամբ:

Имеем честь быть с глубочайшим высокопочтением и преданностью.

Ողորմած Տէր,

Милостивый Государь,

Բարձր Գերագանցութեան Ձերոյ ամենախոնարհ ծառայ և աղօթարար կաթուղիկոս ամենայն Հայոց Յովհաննէս

Вашего Высокопревосходительства Покорнейший Слуга и богомолец Католикос всех армян Иоаннес.

№ *391*

Ի 30 սեպտեմբերի ի 1833 ամի

ի սուրբ Էջմիածին

Նորին Բարձր Գերագանցութեան կառավարչին Վրաստանու Պարոն Ղեներալ ատ ինփանտերի Բարոն Ռոզենի և ասպետի:

№ *391*

30 сентября 1833

св. Эчмиадзин

Его Высокопревосходительству Главноуправляющему Грузиею Господину Генерал-Адъютанту и Кавалеру Барону Григорию Владимировичу Розену.

III

[էջ 1 (61 ա)] Ваше Высокопревосходительство!

Милостивый Государь

Барон Григорий Владимирович!

Ваше Высокопревосходительство, обращая благосклонное внимание Ваше на труды мои, понесенные в минувшем 1833-м году при приготовлении кашенили, в награду трудов моих назначить изволили аматитовый перстень, который укращенный бриллиантами получил от Господина Начальника Армянской области. Вслед же затем удостоился получить лестное для меня письмо Вашего Высокопревосходительства от 17-го марта № 1348.

Ձերդ Բարձր Գերագանցութիւն

Ողորմած Տէր

Բարոն Գրիգորի Վլադիմիրովիչ

Ձերդ Բարձր Գերագանցութիւնն ակնարկելով քաղցրութեամբ յաշխատանս իմ, զորս թափեցի յանցերում 1833 ամի ի պատրաստելն զորդն կարմիր, ի վարձ աշխատանաց իմոց շնորհեցիք զամեստեայ ադամանդահկապ մատանին, զոր ընկալայ ի ձեռն Պարոն կառավարչի Նահանգի Հայոց, որոյ արժանի գտայ ստանալոյ ցանկալի գրութիւն Բարձր Գերագանցութեան Ձերոյ ի 17 մարտի 1834 ամի, համար 1348:

[էջ 2 (61 բ)] С истинною признательностию принеся Особое Вашей чувствительную благодарность за внимание Ваше ко мне, осмеливаюсь уверить Ваше Высокопревосходительство, что я не упущу никакого случая, где могу быть полезным благословенному Правительству Всеавгустейшей Державы, и вместе с тем льщу себя надеждою, что чрез милостивое предстательство Ваше все труды мои, оказанные и оказать долженствующие, не останутся без достойного возмездия.

С чувством глубочайшего почтения и истинной преданности имею честь быть Ваше Высокопревосходительства, Милостивого Государя Всепокорнейшим слугою и богомольцем Исаак Архиепископ Армянский

20 мая 1834 года
св. Эчмиадзин
№ 47

Ճշմարիտ երախտագիտութեամբ մատուցանելով զջերմեռանդ շնորհակալութիւն իմ վասն շնորհաց Ձերոց առ իս, համարձակիմ հաւատացուցանել զԲարձր Գերազանցութիւն Ձեր, թէ ես ոչ երբէք թողից զդիպուած, ուր կարեմ օգտաւէտ լինիլ օրհնաբանեալ Տէրութեան ինքնակալութեան Ռուսաց, և ակն ունիմ աներկբայ, թէ ի ձեռն բարեհաճ միջնորդութեան Ձերոյ ամենայն աշխատանք իմ, զորս ցուցի և ցուցանելոց եմ, ոչ մնասցեն առանց վարձատրութեան:

Խորին զգացութեամբ հոգւոյ և ճշմարիտ անձնընծայութեամբ շնորհըս ունիմ մնալ Ձերդ Բարձր Գերազանցութեան, Ողորմած Տէր, ամենախոնարհ ծառայ և աղօթարար Իսահակ Արքեպիսկոպոս

Ի 20 մայիսի ի 1834 ամի
ի սուրբ Էջմիածին
№ 47

ИЗ ИСТОРИИ ПРОИЗВОДСТВА КОШЕНИЛЕВОЙ КРАСКИ В АРМЕНИИ

Резюме

Производство кошенилевой краски известно было на Востоке еще в древние времена, как свидетельствует Библия (Апокалипсис, XVIII, 12, 16).

Кошениль или кармин, т. е. "кирмиз", по-греч. kokkinon, по лат. coccus (отсюда и Coccus Porphyrophora Hameli), по груз."бужг'енди", распространен был в древности и в Аримении, как один из главных и основных предметов производства и эксперта на мировой рынок.

На это обстоятельство указывает соответствующие источники. 1.из латинских Плиний в I в.н.э. (Nat. hist,, XXXIII, XXXV); 2. из армянских Лазарь Парпский в V в. (Ист. Арм. 1. 7) и Ананий Ширакский в VII в. (География, в абзаце Арарат), 3. из арабских географов Ибн-ал-Факих, Ал-Истахри, Ибн-Хаукаль, Ал-Мокадасий; в X в., Фирузабад XIV-XV вв. и др.; 4. из турецких географов Хаджи-халифа XVII в. (Георг.), который повторяет Ал-Истахрия, и др.

Вопрос о кошенили и добыче из неё красной краски, с выяснением границ распространения её в Армении, специально занимал царское правительство тотчас-же после образования "Армянской области", которая была подведомственна главноуправляющему Грузией, в дни барона Г. В. Розена (1831-1837),

Одинм из мероприятий правительства по выяснению вопроса о кошенили было командирование в Армению J. Hamel'я (Гамеля) с целью выяснения условий появления, развития в распространения таковой, в результате чего появились работа на немецком и русском языках: "Uber Cochenille am Ararat" etc. (Зап. СПб Акад. Наук, сер. VI, т. III, ч. II, стр.9-64), с привеском заметки *J. F. Barandt'a* (там же, 65-67); и "Об Араратской кошенили" (Журн. Мин. Внутр. Дел, ч. XVII, 1, 1835, июль, стр. 192-217).

Вопросом о кошенили особенно заинтересовались специалисты в наши дни, как напр. *Б. Кузин*, *М. Широва* и *А. Аветьян*, результаты исследований которых отчасти ещё предлежат в рукописи (первых двух), отчасти опубликованы (третьего): "К ворпосу о кашенили в Армении" (Изв. Армянского филиала АН СССР, 1940 г. № 4-5, стр.231-237).

Данный вопрос актуален также в связи с тем обстоятельством, что проблемой красок занят Институт рукописей (Матенадаран) при Совнаркоме Арм. ССР, в издании которого в 1941 г. Вышла книжка на арм. и рус. языках доц. *А. Арутюнян* " Краски и чернила по древне-армянским рукописям" (99 стр.), где несколько строк посвящено, между прочим, и "кармину" (стр. 91).

Во время своих знпятий в Центральном Историческом архиве НКВД Груз. ССР мы имели случай ознакомиться с делом № 2571 из фонда № 2-а "Каенцелярии главноуправляющего Закавказским краем"(бывш. № 8 "Каенцелярии главноуправляющего Грузией") по вопросу "О размножения Армянской кошенили и о добывании из неё краски".

Имея в виду тот интерес, который за последнее время проявляют специалисты проблеме кошенили в Армении, мы сошли целесообразным дать здесь краткую аннотацию означенного дела, с приложением к таковой трех документов: от 1830 г. на арм. яз.,1833 г. на арм. и рус. яз., и 1834 г. на рус. и арм.яз.

"Дело", начатое 2 апреля 1832 г., дошло до нас на 101 лл. и заключает в себе в основном тракрат (на арм. яз.) архимандрита (впоследствии епископа и архиепископа) Саака или Исаака Тер-Григоряна Тер-Саакянца Ереванского о кошенили с 10 рецептами умерщвления червя и тремя рецептами получения красной краски, от 14 июля 1830 г. Кроме того, там имеются русский перевод трактата, переписка разных лиц и мест по данному вопросу с главноуправляющим Грузией бароном Г. В. Розеном, в частности кондак католикоса всех армян Иоаннеса от 30 сентября 1833 г. за № 391, и обращение архиепископа Исаака от 20 мая 1834 г. за № 47, на имя того-же Розена; отношение "Горного в Грузии начальника" от 21 апреля 1832 г. по вопросу "О краске те Грузинской (sic) кошенили", на имя Розена; наконец обширный трактат на русском язике под заглавием "Описание кошенили, водящейся в Армянской области, составленное Маркшейдером Воскобойниковым 31 декабря 1832 г.".

Публикуемые здесь 3 документа показывают, с каким интересом относились к вопросу кошенили как правительственные сферы, так и высшее армянское духовенство.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԵՒ ՄՀԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ[1]

*Որքան էլ հայ և վրաց ժողովրդների համերաշխութեան թշնամի-
ները աշխատեն բովանդակ մարդկութեան այդ երկու սիրուն հա-
տուածները անջատել միմեանցից՝ ցանելով նոցա միջև չար սերմեր,
այնուամենայնիւ ոչ ոք չի կարող ժխտել, որ դոքա ազգակից և
բախտակից են իրար թէ իրենց ցեղական ծագումով[2] և թէ ամբողջ
պատմա-մշակույթային անցեալով, մասնաւորապէս քրիստոնէա-
կան մշակույթով[3]:*

*Բայց հայ և վրաց ժողովրդների ազգակցութիւնը, ի միջի այլոց,
որոշ կերպով արտայատւում է և բանահիւսութեան մէջ: Խօսելով
վրաց ժողովրդի մէջ պահպանուած առասպելների մասին՝ հանդերձ
նոցա հետագայ շեշտաւորումներով,* Ն. Մառը *ասում է.* “Несмотря
на многообразные позднейшие наслоения, в тех народных сказаниях до
сих пор сохранились точки соприкосновения, характерные признаки
сродства с армянским народным эпосом”, *և յետոյ աւելացնում.* “Один
из древнейших типов в них –сородич, если не прототип, Прометея: это –
Амиран у грузин, Мэhep – у армян».

*Այսպիսով, գրականութեան մէջ հարց յարուցուեց (թէև, ինչպէս
ներքևում կտեսնենք, ո՛չ առաջին անգամ) հայոց Մհերի և վրացոց
Ամիրանի ազգակցութեան մասին:*

*Ներկայ աշխատութեանս նպատակն է, ինչպէս այդ վերնագրից
էլ երևում է, ծանրանալ* Ն. Մառի *կողմից հարևանցիօրէն շօշափած
հարցի վրայ, կապելով նրա հետ նաև մի ուրիշը՝ այն է* Արտաւազդի *մասին:*

Սկսենք վերջինից:

---

[1] Կարդացուած Տփղիսի «Յայաստան» հրապարակական ճիստին 3–XII–1921:

[2] Վրացիք՝ «յաբեթական», իսկ հայերը կիսով «յաբեթական», իսկ ըստ հին
աւանդութեան, որ որոշ արտայայտութիւն է գտել XI դարու վրաց պատմագիր Լեոն-
տի Մրովցու «Վարք թագաւորացն վրաց եւ առաջնոց հարց եւ ազգաց», երկի մեջ,
երկուքն էլ՝ յանձին էպօնիմների Յայկ եւ Քարթլոսի՝ Թորգոմի որդիք:

[3] Քրիստոնէութիւնը ընդունած Գրիգոր Լուսաւորչի եւ նրա համագործակիցների՝
Յռիփսիմէ, Գայիանէ, Մանեայ, Նունէ եւ այլոց կուսանց շնորհիւ. եկեղեցական այբ-
բենը կազմած Մեսրոպ–Մաշտոցի ու նրա համախոհների՝ հայոց Սահակ հայրապետի,
Մովսես վրաց եպիսկոպոսապետի, Սամուէլ վրաց դրան եպիսկոպոսի, Բակուր եւ
Արչիլ վրաց թագաւորների, ոմն Խուրս կոչեցեալ Գարդմանաց (Գարդաբանի) իշ-
խանի, Աշուշայ Տաշրաց իշխանի եւ Ջաղայ «առն գրագէտի» ջանքերով. եկեղեցական
ճարտարապետութիւնը՝ արգասիք ընդհանուր հայ-վրացական հանճարի, եւլն:

I.

ԱՐՏԱՎԱԶԴ

Վրաստանում հնում շատ տարածուած էին այնպիսի անուններ, որ յետագայում միմիայն հայոց մէջ ենք նկատում: Այսպէս, օրինակ, յայտնի են Միրվան, Միրիան (=Միհրան), Արսակ (=Արշակ), Արտագ || Արտոզ (=Արտակ), Ամզասպ (=Համազասպ), Վաչէ, Բակուր || Բակար (=Բակուր), Միրդատ (=Միհրդատ), Տիրդատ (=Տրդատ), Միր || Միհր (=Միհր), Ներսէ (=Ներսէս), Կիրիոն (=Կորիւն ?), Աշոտ, Բագրատ, Սումբատ (=Սմբատ), Գուրգէն, Վարդան || Վարդէն (=Վարդան), Սարգիս || Սէրգիս (=Սարգիս), Արտոաւազ (=Արտաւազդ), Շուշանիկ, Գայիանէ, Գուլանդուխտ եւն: Հին Կղարջքում կար մի մենաստան, որ կոչւում էր «Վահանի» վանք:

Այդ անունների շարքում մենք, ի միջի այլոց, հանդիպում ենք «Արտաւազ» անուան հետ, որով յայտնի է V դարու Վախթանգ Գորգասալ թագաւորի զօրապետներից մէկը: Սա այն Արտաւազդն է, որին յաճախ յիշատակում է XI դարու վրաց պատմագիր Ջուանշէրը իր գրուածքի մէջ՝ «Պատմութիւն վարուց ծնօղացն Վախթանգ Գորգասալ թագաւորին, յետ այսորիկ իսկ ինքնին մեծ և աստուածասէր թագաւորին. որ երևեցաւ առաւել ևս հռչակաւոր ի չարս ամենեցուն այլոց թագաւորացն Վրաց»: Այստեղ այդ Արտաւազդը մէկ տեղ անուանուած է «զինուորական», Վախթանգի «կաթնեղբայր» և «որդի Սաուրմագ սպասպետի»[4], իսկ միւս տեղ՝ «իշխան» կամ «զօրագլուխ» Արտանուջի, ուր նա Վախթանգի հրամանով կառուցել է ամրոց և եկեղեցի՝ վերջինս ապա մենաստանի վերածած[5]: Եւ սորան երկու այլ (այսինքն՝ Ծունդայ և Օձրախէի) զօրագլուխների հետ միասին Վախթանգ Գորգասալը իր մահուանից առաջ հանձնում է իր ամուսին Հեղինէին հանդերձ Լևոն և Միհրդատ զաւակներով[6]:

Թէ ո՞րքան իրական են XI դարու վրաց պատմագրի հաղորդած տեղեկութիւնները Վախթանգ Գորգասալի, այլապէս «Գորգաս-

[4] Քարթլիս-ցխովրէբա, Մարիամ թագուհու վարիանտը, հրատ. է, ***Թաղ'այշվիլու***, Տփխիս, 1906, եր 134, =Քարթլիս-ցխովրէբա, հրատ. ***Մ. Բրոսեի***, Ս.Պ. Բ., 1849, եր. 119 (երկուսն էլ վրացերեն):

[5] Ibid, հրատ. է, ***Թաղ'այշվիլու***, եր.157, հրատ. ***Մ. Բրոսեի***, եր. 132:

[6] Ibid, հրատ. է, ***Թաղ'այշվիլու***, եր.185, հրատ. ***Մ. Բրոսեի***, եր. 149:

լան» (այսինքն՝ «Գայլ-Ասլան») անուանեալի, նմանապէս և նրա մերձաւորների ու շրջապատողների մասին, իհարկէ չի կարող լինել երկու կարծիք, որովհետև քննական մեթոդով սպառազինուած արդի վրաց պատմագիտութիւնը արդէն հաստատել է յիշեալ անձի արտաքին դեմքի *կատարեալ առասպելականութիւնը*[7]*: Բայց կիսաառասպելական Վախթանգի գործունէութեան հետ կապուած է «Արտւազ»-ի անունն ևս: Ուստի և հարց է ծագում՝ առասպելական չէ՞ արդեօք առհասարակ այդ «Արտաւազ»-ի գոյութիւնը ընդ հովանեաւ կիսաառասպելական Վախթանգի:*

Յամենայն դէպս, արժէ մատնանշել, որ հին վրացոց մէջ եղել է փորձ տեսնել «Արտաւազ» անունով «իշխան» կամ «զօրապետ» իբրև համագործակից V դարու թագաւոր մեծն Վախթանգ Գորգասալի, ճիշտ այնպէս, ինչպէս հայոց մէջ, ըստ Մ. Խորենացու, յայտնի է «Արտաւազդ» անունով որդի Մեծն Արտաշէսի՝ II դարում Քրիստոսից առաջ (1):

Պետք է ասել, որ Արտաւազդի գոյութեան հետքերը վրացոց մէջ նախ և առաջ պահպանուել է դասական շրջանի (XII–XIII դար) անանուն հեղինակի «Վիսրամական» (Վիսրամիանի) պօէմի մէջ: Այստեղ Արտավազդի անունը գործածուած է երկու իմաստով՝ նախ իբրև սեփական անուն «Արտոուազ»*-ի, այսինքն «Արտւազ», իսկ ապա իբրև մակբայ* «արտաւազիսեբրի», *այսինքն «արտաւազանման», «արտաւազապէս»*[8]*: Ըստ վկայութեան* Յուստ. Աբուլաձեի, *որ յատկապէս ուսումնասիրել է այդ պօէմը և պատրաստել նոյն բառը վայն գիտական հրատարակութեամբ լոյս ընծայելու, այն է՝* «Արտօզ-*ի», այսինքն ըիանտներում ստացել է մի այլ ձև ևս,* *«Արտօզ»*[9]*:*

Բայց այս դեռ քիչ է: Վրաց ժողովրդի մէջ մինչև այժմ էլ կենդանի է «Արտաւազդ» բառը, իհարկէ, տարբեր ձևերով, իբրև հասարակ անուն: Այսպէս, օրինակ, XVIII դարու բառարանագէտ Սաբա-

[7] Հմմտ. ***Իւ. Ջաւախիշվիլի***, Պատմութիւն վրաց ժողովրդի (վրացերեն), գ. I–II, Տփղիս, 1913, էր. 190-191: Ի դեպ յիշատակեմ, որ այս Վախթանգի մասին յատուկ ուսումնասիրութիւն ունի պատրաստած ***Ն. Մառը*** "Правда и вымысель, быль и небылица и Вахтанг Горгасал, народный герой древней Грузии" վերանագրով, որ զեկուցած է Ռուսաց Յնագիտական ընկերութեան Արեւելեան բաժանմունքի նիստին 1918 թուին (սրա մասին առայժմ տես Отчет о деятельности Российской Академии Наук по отделениям физико-математических наук и исторических наук и филологии за 1918 год, Пгр. 1919, стр 34).

[8] Վիսրամական (վրացերէն), խմբագրութեամբ ***Իլ. Ճաւճաւաձեի, Աղ. Սարաջիշվիլու եւ Մ. Ումիկաշվիլու***, Տփղիս, 1884, եր. 227, հմմտ. 460:

[9] Հմմտ. Ibid., 460:

Սուլխան Օրբելեանը իր «Վրաց Բառգրքի» մէջ յիշատակում է այն «արտւազ-ի» (2), այսինքն «արտւազ» ձևով, աւելացնելով, որ այդ-պէս «անուանում են մոլարները կախարդների գլխաւորին»[10]: Ըստ այսմ և XIX դարու բառարանագէտ Դաւիթ Զուբինովը իր «Վրա-ցերէն-ռուսերէն» բառարանի մէջ նոյն բառը թէև «արտաւազ-ի», այսինքն «արտաւազ» ձևով, բացատրում է իբրև «հմայների պետ» (главный над чародеями)[11]: Նմանապէս և «Վիսրամական»-ի խմբա-գիրները իրենց հրատարակութեանը կցած դժուար հասկանա-լի բառերի մեկնութեանց մէջ տեղ են տալիս նաև «արտաւազ-ի», այսինքն «արտաւազ», և «արտօզ-ի», այսինքն «արտօզ» բառերին, բացատրելով այդպիսիները ինչպէս «կախարդութիւն անողների պետ»[12]: Բացի դրանից Վուկօլ Բերիձէն իր՝ իմերցիների և ռաճցինե-րի խօսուածքներին նուիրուած՝ յատուկ բառգրքի մէջ յիշատակում է «ատրաօզ-ի», այսինքն «ատրաօզ», բառը, մեկնելով այն իբրև «սատանայ, պոչաւոր»[13]: Վերջապէս, ինչպէս նոյն հեղինակից (Վ. Բերիձէից) ինձ անձամբ վիճակուեց լսել, «արտաւազ-ի», այսինքն «ար-տաւազ», «արտւազ-ի», այսինքն «արտւազ», բառը «ատրաւազ»-ի այսինքն «ատրաւազ» «ատրաօզ-ի», այսինքն «ատրաօզ» ձևով տարածուած է արևմտյան Վրաստանում յատկապէս իր ուսումնա-սիրած իմերցիների և ռաճցիների մէջ իբրև հայհոյանք, որ յաճախ գործ են ածում մեծերը չարութիւն անող երեխաների հասցէին. «օ շեն ատրաւազօ»—«օ՜ դու ատրաւազ»: Աւելորդ է ասել, որ վրաց տարեգրութեան (Քարթլիս-ցխովրէբայի) Մարիամ թագուհու վա-րիանտում, որ գրուած է XVII դարում նոյն բառը աղաւաղուած է «արտեւազ-ի»[14], որ, անկասկած, առաջացած պէտք է լինի սովորա-կան «արտըւազ»—«արտւազ» ձևից:

Այսպէս, ուրեմն, մենք տեսնում ենք, որ «Արտաւազդ» անունը, գործածուելով վրացոց մէջ, ստացել է հասարակ անուան նշանակու-թիւն՝ «կախարդապետի», «հմայնապետի» իմաստով, ուրիշ խօսքով ասած՝ իբրև ներկայացուցչի յամենայն դէպս ոչ բարի սկզբունքի:

[10] Վրաց բառգիրք կազմ. Սաբա–Սուլխան Օրբելեանու, հրատ. Ռ. Էրիսթաւի խմբագրութեամբ, Տփղիս, 1884, եր. 16:

[11] Грузино-русский словарь вновь составленный *Давидом Чубиновым*, СПб. 1887, стлб. 46.

[12] Վիսմարական, 460:

[13] *В. Беридзе*, Грузинский (к'арт'ский) глоссарий по имерскому и рач'инскому говорам ["Материалы по яфетическому языкознанию", VI], СПб., 1912, стр. 2_2, ср. 2_1:

[14] Հրատ. ***Է. Թաղ'այշվիլու***, եր. 157:

Ի դէպ, աւելորդ չի լինի առանձնապէս կանգ առնել «արտա-
ւազդ»—«արտաւազ»—«արտւազ»—«արտեւազ»—«արտաօզ»—«ատ-
րաւազ»—«ատրաօզ» բառի բացատրութեան վրայ: Այստեղ նախ
և առաջ անհրաժեշտ է նկատել, որ դոքա բոլորը ծագում են մի
ընդհանուր նախատպից, որ հայերէն հնչւում է միմիայն «արտա-
ւազդ»: Գալով բառիս բուն ձևերին, պէտք է ասել, որ վրացոց
«արտաւազ»-ը բոլորովին կանոնաւոր համանշանակ (էկվիվա-
լէնտ) է հայոց «արտաւազդ»-ի, ճիշտ այնպէս, ինչպէս նոյն վրա-
ցոց «արմազ», «արամազ»-ը կանոնաւոր համանշանակ է հայոց «ա-
րամազդ» (<պարս. «օրմուզդ»)-ի. երկու դէպքումն էլ տեղի ունի
վերջաւոր բաղաձայն «դ»-ի բաց թողում (արամազդ—ար[ա]մազ,
արտաւազդ—արտաւազ): Իսկ «արտւազ»-ի մէջ անշուշտ տեղի ունի
միջանկեալ ձայնաւոր «ա»-ի սղում, ինչպէս, օրինակ, վերև յիշա-
տակուած «արմազ» բառի մէջ (արամազդ—արմազ, արտաւազդ—
արտւազ, համազասպ—[հ]ամզասպ ելն): Ինչ վերաբերում է «ատ-
րաւազ» ձևին՝ փոխանակ «արտաւազ»-ի՝ այստեղ մենք, անկաս-
կած, գործ ունենք լեզուագիտութեան մէջ յայտնի այն կանոնի հետ,
որ կոչւում է «թռչումն» (перескок), այսինքն մի որևէ բառի մէջ
բաղաձայների տեղափոխութիւն[15]: Վերջապէս, եթէ մենք ի նկատի
առնենք վրացերէնում յայտնի այն կանոնը, որով «ւա» և «աւ» հա-
ւասար է «օ»-ի[16], (որ մասամբ տեղի ունի և հայերէնում՝ միմիայն
«աւ»-ի վերաբերմամբ)[17], կամ որ հայերէն «ը»-ն վրացերէն արտա-
յայտւում է «ե» կամ «ու»-ի միջոցով[18], մեզ համար միանգամայն
հասկանալի կլինեն և բոլոր մնացած ձևերը:

Ամփոփելով մեզ հետաքրքրող բառի և ձևերի մասին տուած լե-
զուագիտական քննումը, մենք վերջ ի վերջոյ կարող ենք այն միտքը
յայտնել, որ «Արտաւազդ»-ը, անցնելով վրաց հողի վրայ, կամաց-
կամաց և աստիճանաբար ստացել է հետևեալ տեսակները.

[15] Օրինակ՝ «աբաս-խ»=«աբխազ» (*Н. Марр*, История термина "абхаз", –"Известия
И. Академии Наук", 1912 г., стр. 697). «Երկկին»=«*ըկկին»=«կրկին», (*Н. Марр*, Грам-
матика древнеармянского языка. Этиммология, СПб., 1903, стр. 128). կամ «տեառընդա-
ռաջ»=«դրդորանջ» ելն:

[16] *Н. Марр*, Основные таблицы к Грамматике древне-грузинского языка с предвари-
тельным сообщением о родстве грузинского языка с семитическими , СПб., 1908, табл.
IV.

[17] «Բաւթ»=«բօթ» (վրաց «բաւթ»-ի), «Պաւղոս»=«Պօղոս» (վրաց «Պաւլէ»): Հայ.
«վախճան»=վրաց. «օխճան», «Վարթանէս» (>«Վրթանէս»)=Օրթանէ». բուն վրացե-
րենում՝ «Լեւան»=«Լեօն»(Լեւոն), «դիակւան-ի»=«դիակօն-ի» (սարկաւագ), «կւամլ-
ի»=կօմլ-ի (ծուխ) ելն:

[18] «Մըկըրտիչ» («Մկրտիչ)=«Մէկէրտիչ», ինչպէս ռուս. Мыкыртич կամ Микиртич.

արտաւազդ
↓
արտեւազ ← [արտըւազ] ← արտւազ ← արտաւազ → առրաւազ
↓ ↓ ↓
արտօզ [արտաօզ] առրաօզ

Այժմ չեմ կարող ընթերցողի ուշադրութիւնը չդարձնել մի հանգամանքի վրայ ևս. դա «աւազ» բառն է, որ տարածուած ենք տեսնում հին Վրաստանում: Օրինակ, վրաց տարեգրութիւնը (Քարթլիս-Ցխովրէբան) յիշատակում է թագաւորներ զանազան անուններով, որ ներկայացնում են բարդ ձևեր «աւազ» բառի օգնութեամբ` «Փառնաւազ» (յուն. Φχρνάβαζος), «Փարսմանաւազ[19]*: Նոյն «աւազ»-ը գուցե կարելի լինի որոնել և «արտաւազ» բառի մէջ, թէև մենք գիտենք, որ այդ «աւազ«-ը ինքն ըստ ինքեան պարսկերէն է և նշանակում է «առիւծ»:*

Այսպէս թէ այնպէս պարզ է, որ վրաց իրականութեան մէջ դեռևս կենդանի է «Արտաւազդ»-ի յիշատակը, թէև մեզ հասած սակաւաթիւ տուեալների հիման վրայ բոլորովին անկարելի է ստուգել, թէ ի՞նչ առընչութիւն ունի վրացական «արչաւազ»—«արտաւազ»—«արտեւազ»—«արտօզ»—«առրաւազ»—«առրաօզ»-ը հայկական «Արտաւազդ»-ի հետ և թէ որքա՞ն նոյնանիշ են երկու հարևան ժողովրդների այդ երկու առասպելները:

Ինչպէս յայտնի է, Արտաւազդի մասին գոյութիւն ունեցող գրոյցը գրականութեան մէջ առաջին անգամ յիշատակւում է Մ. Խորենացու Պատմութեան մէջ (գիրք II, գլուխ 61):

«Յետ Արտաշիսի թագաւորէ Արտաւազդ որդի նորա, և հալածէ յԱյրարատոյ զամենայն եղբարս իւր ի գաւառս Աղիովտայ և Առբերանոյ, զի մի բնակեսցեն յԱյրարատ ի կալուածս արքայի. բայց միայն զՏիրան պահէ փոխանորդ իւր, զի որդի ոչ գոյր նորա: Որ յետ սակաւ ինչ աւուրց թագաւորելոյն իւրոյ, անցեալ զկամրջաւն Արտաշատ քաղաքի, որսալ կինճս և իշավայրիս զակամբք Գինայ, և ազմկեալ ի ցնորից իմն խելագարանաց, ընդ վայր յածելով երիվարաւն` անկանի ի խոր իմն մեծ, և խորասոյզ լեալ անհետի:

Զմանէ երգիչքն Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորածք լինէին ըստ օրինի հեթանոսաց, դժուարի, ասեն, Արտաւազդ` ասելով ցհայրն. «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞ւմ թագաւորեմ»: Վասն որոյ անիծեալ զնա Արտաշիսի` ասաց այսպէս. «Եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յԱզատն ի վեր ի Մասիս. անդ կայցես, և զլոյս մի տեսցես»:

Զրուցեն զմանէ և պառաւունք, եթէ արգելեալ կայ յայրի միում կապեալ երկաթի շղթայիւք. և երկու շունք հանապազ կրծելով զշղթայսն` ջանայ ելանել և առնել վախճան աշխարհի. այլ ի ձայնէ կռանահարութեան դարբնաց զօրանան, ասեն, կապանքն: Վասն որոյ և առ մերով իսկ ժամանակաւ բազումք ի դարբնաց, զհետ երթալով առասպելին` յաւուր միաշաբաթւոջ երիցս կամ չորիցս բախեն զսալն, զի զօրասցին, ասեն, շղթայքն Արտաւազդայ...[20]*:*

Հանգուցեալ Մկրտիչ Էմինը` *հայ վէպի ուսումնասիրութեան ռահվիրան, իր հատուկ աշխատութիւնների մէջ, ի միջի այլոց, այն կարծիքն էր յայտնում, որ հայոց մէջ Արտաւազդի մասին տարածուած գրոյցը անշուշտ տեղ պէտք է գտած լինի նաև հայերի դրացիների` վրացոց մէջ ևս. «զգրոյցս զԱրտաւազդայ ընկալեալ տեսանեմք առ Վիրս ի Հայոց»,–գրում էր նա 1850 թուին իր «Վէպք հնոյն Հայաստանի» գրաբար լեզուով շարադրած երկասիրութեան մէջ, որ ապա 1886 թուին լոյս է ընծայւում աշխարհաբար` նոյնպէս այժմ հանգուցեալ* Գրիգոր Խալաթեանի *թարգմանութեամբ` «Մովսէս Խորենացին և Հայոց հին վէպերը» վերնագրով, իսկ 1898 թուին արտատպւում նրա` հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին երկասիրութիւնների ժողովածուի մէջ*[21]*: Ապա նոյն* Մ. Էմինը *ջանում է ապացուցել, որ հայոց Արտաւազդի առասպելին վրացոց մէջ համապատասխանում է Ամիրանի գրոյցը: Նոյնպիսի կարծիք միևնոյն հարցի վերաբերեալ 1865 թուին յայտնում է* Ստեփան Պալասանեանը, *«Վրաց Ամիրանի գրոյցը», որ մինչև այժմ էլ պատմւում է նոյն ժողովրդի մէջ, մեր Արտաւազդի գրոյցի գրեթէ նոյն և նմանն է, և ինչպէս երևում է, հին ժամանակներից Հայաստանից Վրաստան է անցկացել*[22]*: Նմանապէս 1882 թուին այժմ հանգուցեալ վրացագէտ* Դիմիտրի Բաքրաձէն *գրում էր իր մի աշխատու-*

[19] Ըստ ***Կիւրիոն*** եպիսկոպոսի, ապա կաթողիկոսի (այժմ հանգուցեալ), առաջինը առաջացած պետք է լինի երկրորդից` «Փար[սմա]ն-աւազ»=«Փառնաւազ» (Епископ Кирион, Культурная роль Иверии в истории Руси, Тфл. 1910, стр. 303).

[20] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ ***Մ. Աբեղեանի*** եւ ***Ս. Յարութիւնեանի*** [«Պատմագիրք Հայոց», հատ. II, գ. I], Տփղիս, 1913, եր. 191-192:

[21] ***Մ. Էմին***, Վէպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, եր. 41, Մ. Էմինի երկասիրութիւնները հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին (1840-1855 թ.թ.), Մոսկվա, 1898, եր. 116:

[22] ***Ստ. Պալասանեան***, Պատմութիւն Հայոց գրականութեան, հատոր Ա, բանաւոր գրականութիւն, Տփղիս, 1865, եր. 186:

թեան մէջ. "Легенды об Амиране в Грузии и ныне та же самая, какою она была еще в V в. в Армении", *ընդունելով Մ. Խորենացուն, ըստ աւանդական կարծիքի, V դարու մատենագիր և այնուհետև առաջ բերելով վերջինիս ձեռքով գրի առնուած Արտաւազդի զրոյցի բովանդակութիւնը*[23]*: Արտաքին նմանութիւն Արտաւազդի և Ամիրանի միջև դիտել է, ի միջի այլոց, և* Մանուկ Աբեղեանը *իր յայտնի ուսումնասիրութեան մէջ*[24]*:*

Քանի որ Մ. Էմինի, Դ. Բաքրաձէի *և* Մ. Աբեղեանի *մատնանշած հանգամանքը սերտ կապ ունի Մհերի հարցի հետ, ես յարմար եմ համարում սրանով վերջացնել դիտողութիւններս Արտաւազդի մասին և դիմել միւս հարցի լուսաբանութեան, որ վերաբերում է Մհերին:*

II

ՄՀԵՐ

Համեմատաբար աւելի առատ են վրացական տուեալները Մհերի մասին, որ անպայման համապատասխանում է հին պարսից «Միհր»–«Միթր»-ին (3):

*Վերևում մենք արդէն տեսանք, որ «Մհեր» կամ «Միհր» անունը այլ և այլ ձևերով հնում շատ տարածուած էր Վրաստանում: Օրինակ, Վրաց տարեգրութիւնը (Քարթլիս–ցխովրէբան) յիշատակում է. մի քանի թագաւոր «*Միրւան*» անունով Քրիստոսից առաջ, «*Միրւան*» («*Միհրան*»)-ին IV դարու սկզբներին, մի քանի «*Միրդատ*» («*Միհրդատ*») Քրիստոսից առաջ և յետոյ և, վերջապէս, որ ամենաուշագրաւն է, Ստեփաննոս II կուսակալի որդի «*Միհր*»-ին VII դարում*[25] *ու ոմն «*Վարազ–Միհր*» դեսպանին V դարում*[26] *եւլն:*

Ըստ երևոյթին, այս «Միհր» անունը շատ սիրուած էր հին Վրաստանում, և դա, իհարկէ, պէտք է ունենայ իր որոշ սկզբնապատճառը: Իսկ այդ սկզբնապատճառը ոչ այլ ինչ է, բայց եթէ

[23] ***Д. Бакрадзе***, Об источниках и характере первоначальных преданий "Картлис-Цховреба" или Грузинских летописей–"Известия Кавказского Общества истории и археологии", т. I, в. I, Тфл., 1882, стр. 42-43.

[24] ***Մ. Աբեղեան***, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ (քննադատութիւն և ուսումնք), արտատպած «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1899, եր. 364-365:

[25] Հրատ. ***Է. Թաղայշվիլու***, 199-208, ***Մ. Բրոսեի***, 172-179:

[26] ***Թաղ՛այշվիլի***, 151, ***Բրոսե***, 129:

*ժողովրդի լայն խաւերում ծանօթ «Միհր»-ը, որ վրացերէն կոչւում է «*ամիրան*-ի», այսինքն «Ամիրան», և որ ժամանակի ընթացքում վերածուել է «*ամիրանդարէջանեան*-ի», այսինքն «Ամիրան–Դարէջանեան» (Ամիրան՝ Դարէջանի որդի)՝ ըստ XII դարու գրող Մոսէ Խոնեցու:*

Առաջին փորձը, աւելի ճիշտ ասած՝ ակնարկը, որոնելու հայկական «Միհր»-ի հետքերը Վրաստանում իսկապէս պատկանում է Ա. Գրէնին*: Խօսելով Արեգ–դիւցազնի վէպի մասին, այդ հեղինակը 1895 թուին գրում էր հետևյալը.* "Не может быть сомнения, что повесть о Солнце-витяе есть средневековая переделка древних сказаний о персидском Михре, или Митре. Сказания эти долго жили на Кавказе, и, между прочим, одна гора в Армении, на которой высечена клинооб- разная надпись, до сих пор носит имя этого героя, а первая христианская династия Грузии происходила из рода Михран, или Мехревандан"[27]. *Ապա նոյն հեղինակը շարունակում է.* "Тем не менее в Грузии, на сколько я могу об этом судить, предания о Михр исчезли на веки. Пять лет я лично колесил по Грузии и собрал до 4.000 произведений народной словесности, но нигде не слышыл ничего подобного"[28].

Բայց հայկական «Միհր»-ի վրացական «Ա-միր-ան»-ի հետ համեմատելու առաջին փորձը *իսկապէս պատկանում է* Ստեփան Կանայեանցին*: Տեսնենք, թէ ի՞նչ էր ասում նա այս հարցի մասին իր՝ 1907 և 1910 թուականների յաջորդաբար լոյս ընծայած՝ ուսումնասիրութիւնների մէջ:*

Առաջին դէպքում Ս. Կանայեանցը *գրում էր. «Մհերի նմանութիւնը Արտաւազդի հետ քանիցս շեշտել ենք, դիտել է և պ. Աբեղեանը, որի աւելով Արտաւազդի նմանութիւնը Ամիրանի հետ նախ նկատել է Էմինը: Սակայն պէտք է դիտենք, որ այդ աւելի արտաքինն է: Ամիրանը մեր Մհերն է: Գոնեա Մհերի բնաւորութեան չար կողմը Սասմայ ծռերի մէջ անցել է դէ. Արտաւազդի և Ռուբինեան չար Մլե-հի գծերից, դէպքերի և անուանց նմանութեամբ...»*[29]*: Ապա՝ չհամաձայնուելով* Ա. Խախանովի *հետ «թէ Ամիրանը՝ Ահրիմանն է», Ո՛չ, Ամիրանն էլ Միհրն է, ինչպէս նոյն հեղինակը շարունակում է.*

[27] ***А. Грень***, Грузинская повесть об Амиране, сын Дареджана, и остатки сказаний о нем в картвельской народной литературе, –"Журнал Министерства Народного просвещения", 1895 г., № 3, стр. 29.

[28] Ibid., 29-30.

[29] ***Ս. Կանայեանց***, Զօջանց տուն, Սասմայ Ծռերի, Դաւիթ եւ Մհեր ազգային ժողովրդական վեպի պատմականը, արտատպած «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1907, եր. 48, ծան. 3:

և Մհերը, որ մեր վէպը միացրել է Արտաւազդի և Մլեհի հետ. և Ամիրան անունը Միհր-ան և ամիրա բառերից է կազմուած...[30]:

Գրեթէ նոյն միտքը նոյն Ս. Կանայեանցը յայտնում էր և երկրորդ դէպքում. «Մենք, –գրում էր նա, –ցոյց ենք տուել, որ վրաց Ամիրանը մեր Միհր-Մհէրն է», և ապա շարունակում. «Այստեղ պէտք է աւելացնենք, որ նորա հօր Դարեջան անունը մեր Դերջանն է: Նորա ազգանունն է, ինչպէս Մ. Խոննելուց ևս երևում է, Դարեջանեանի, որից հեռացրել են հօր անունը, ինչպէս և մեր Մամիկոնեաց պէս, ճանական-լազական ծագումն ունեցող նախարարութիւնը իր ազգանունը, Օրբէլի կամ Օրբէլեանի, ստացել է Օրբէթ բերդից. վրաց վէպն ուզում է ասել, որ իւր Ամերան–Միհրը Դերջանի Միհրն է»[31]:

Բայց նոյնպիսի կարծիք հայկական «Մհեր»-ի և վրացական «Ա-միր-ան»-ի ազգակցութեան մասին Ս. Կանայեանցի հանդէս գալուց մի փոքր յետոյ, թէև նրանից բոլորովին անկախ, յայտնեց վրաց գիտնական Իւ. Ջաւախիշվիլին: Ահա թէ ի՞նչ ենք կարդում մենք վերջինիս՝ 1913 թուին երկրորդ բարեփոխուած ու ընդարձակուած հրատարակութեամբ և 1918 թուին երրորդ՝ համեմատաբար նախորդի հետ մի փոքր համառօտած՝ հրատարակութեամբ վրացերէն լեզուով լոյս ընծայած «Վրաց ժողովրդի պատմութեան» մէջ. «Արժանի է ուշադրրութեան,–ասում է Իւ. Ջաւախիշվիլին,–որ հայոց ժողովրդական աւանդութեան մէջ, որը համապատասխանում է վրաց Ամիրանի աւանդութեանն, հերոսը կոչւում է «Մհեր». ուստի և հաւանական է, որ վրաց աւանդութեան մէջ սկզբում հերոսի անունն «հօ» հմչիւնն էլ ունենար և գուցէ «Ամիրան» էլ հնչուէր, ինչ որ իր հերթին համապատասխանում է «Միհրան», «Ամիթրան», «Միթր»-ին. «ա»-ն այս դէպքում այն հին մասնիկն է, որն այսօր էլ ընդունուած է աբխազերէնում: Միհրան անունը Վրաստանում ևս ընդունուած էր, և Մովսէս Կաղանկատուացին յիշատակում է՝ «Միհրան բդեշխն Վրաց»: Ի միջի այլոց, հետաքրքիր է, որ «Միթր»-ն էլ հին Պարսից մէջ ընդունուած էր իբրև մարտնչող աստուած, որն անդադար կռւում էր չար ոգիների հետ. նա էր բարձրագոյն աստուածութեան ահռելի դաշնակիցը Ահրիմանի հետ ունեցած կռուի մէջ»[32]:

---

[30] Ibid., եր. 49, ծան . 3:

[31] **Ս. Կանայեանց,** Զոջանց տան կամ Սասմայ ծռերի վէպի երեք փոփոխակ, արտատպած «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1910, յառաջաբան, եր. ԻԶ–ԻԷ, ծան.:

[32] ***Իւ. Ջաւախիշվիլի***, Պատմութիւն վրաց ժողովրդի, գ. I–II, Տփղիս, 1913, եր.

Համեմատաբար հետաքրքիր է և ուշագրաւ Ն. Մառի կարծիքը նոյն հարցի վերաբերեալ: Խօսելով վրաց–աբխազական փոխյարաբերութեանց մասին և կանգ առնելով այն աւանդութեանց վրայ, որ մնացել են երկու ժողովուրդների մէջ հին «յաբեթական» աշխարհից (ըստ Ն. Մառի թէորիայի՝ վրացիք զուտ «յաբեթականներ» են, իսկ աբխազները կիսով «յաբեթական») և այդ աշխարհից անցել հասել Յունաստան, ստանալով «Պրոմեթէոսի» մասին յայտնի աւանդութեան ձևը, մեր մեծ ուսուցչապետը մատնանշում է հետևեալը.

“В родной среде та же легенда выработалась в сказание в Армении о Мэhере, в Грузии об Амиране, в Абхазии об Abэrskile[33]. Какому бы яфетическому племени ни принадлежала честь создания этого сказания, та редакция, в которой оно распространено в Грузии и Армении, несомненно прошла через абхазскую среду. Я сейчас не имею возможности остановиться на сопоставлениях имен абхазского Ahэrskil, грузинского Amiran и армянского Mэher, это требует черезчур специальных разъяснений. Кроме того, сам сюжет сказания значительно видоизменен в Грузии под наносным влиянием героической повести персидского происхождения “Амиран-Дареджаниани[34], в Армении –осложнением его чертами из христианских легенд, тогда как это на самом деле есть одно из древнейших яфетических сказаний о боге солнце, превратившемся в героя. Само имя его Амиран, собственно Amэra или Amэr, представляет абхазское название солнца amra или amэr, как последнее появляется в сложных абхазских словах. Из абхазских языковых материалов наметилось возможность ряд подробностей а мифе, впоследствии сказании о солнце-герое.

“Этот солнце-герой, изобретатель огня священного или, по греческой версии, его похититель с неба, тесно связан своей судьбой с кузнею, в частности с абхазским культом кузни. Он вместе с двойником своим героем-ковачем, в абхазских народных сказаниях отделившимися и лучше сохранившимися, дают ученому то прикосновение к земле, от которого великан Атлас, по греческим сказаниям, своими плечами мог

---

159 (=***Նոյնի***՝ Համառօտ պատմութիւն վրաց ժողովրդի, Քութայիս, 1918, եր. 124):

[33] Հմմտ. ***И. Лихачев,*** Чиловская пещера и легенда об Абласкире-Прометее, –“Труды V археологического съезда в Тифлисе”, Москва, 1887, стр. 245-248. Ծան. Լ. Մ.-Բ.

[34] Սրա մասին տես. ***Н. Марр***, Персидская национальная тенденция в грузинском романе “Амиран- дареджаниани”, “Журнал Министерства Народного просвещения”, 1895, июнь, стр. 352-365. ***Մ. Ջանաշվիլի***, Սօսէ Խոնեցին ու նրա Ամիրանդարեջանեանը (վրացերէն), Տփղիս, 1895, եր. 1-58, ***Ն. Մառի*** գրախօսականը սրա վրայ՝ վերոյիշեալ “Ж. М. Н. Пр”, 1895, октябрь, стр. 324-328. ***Վ. ճիճինաձէ,*** Ամիրանդարեջանեանը Սօսէ Խոնեցու (վրացերէն), Տփղիս, 1896, եր. 1-304, ծանօթ. Լ. Մ.-Բ.:

поддерживать небо; с абхазскими материалами о двойниках Амирана—Мыhера, о культе кузни и металлургии и связанной с ними магии с кудесникам-жрецами и кудесницами- жрицами при массе переживаний-терминов в самой живой абхазской речи ученый получает, наконец, прочную почву не только для поддержания, но в значительной степени для создания теоретического построения с широким горизонтом и глубоко уходящими в незапамятную седую древность перспективами как о самом любопытнейшем сказании, так о культурном мире, в котором оно впервые возникло и развилось"[35]:

Նոյն միտքը Ն. Մառը *արտայայտում է նաև վերջերումս լոյս ընծայած իր մի աշխատութեան մէջ հետևյալ կերպով.* "Народное сказание об Амиране имеет особую местную кавказскую историю, если отвлечься от его связи с народным эпосом дальняго юга Армении о Мхере *(*Мэhер*)*, и в Грузию оно могло попасть и из той или иной племенной среды с культом кузницы, напр., абхазской, через сванов и даже осетин а не обратно—"к осетинам из Грузии""[36]. *Խոսելով Ամիրանի և Մհերի ազգակցութեան մասին և յիշելով* Իւ. Ջաւախիշվիլու *կարծիքը այս հարցին վերաբերեալ՝ նոյն գիտնականը այսպ նկատում է.* "В этом вопросе мы формально сходимся с И. А. Джаваховым, поскольку он отожествляет a-mir-an не только с арм. məher, но и с Miϑra, возстановляя в параллель ему a-miϑran, но расходимся по существу, в этот раз в обратном направлении, поскольку в mir, resp. mihr, основе a-mir-an'a, имею основание усматривать и усматриваю яфетическое слово"[37]. *Ընդ սմին նա անհրաժեշտ է գտնում անել և հետևեալ նկատողութիւնը.* "Народная и реальная естественность существования имени Amiran, а не книжность и искусственность его выделния из Amir-andare-dan-iani подтверждается и тем, что имя героя вошло в географическую номенклатуру Грузии: Вахушт называет гору А м и р а н а *(*Amiranis gara*)*[38] на южном берегу Куры, выше Ахал-калака[39].

Բուն վրացական զրոյցը Ամիրանի մասին հասել է մեզ մի քանի

---

[35] ***Н. Марр***, Кавказоведение и абхазский язык, –" Ж. М. Н. Пр.", 1916 г., № 5, отд. 4, стр. 22-23.

[36] ***Н. Марр,*** Ossetica –Japhetica, I, " Известия Российской Академии Наук", 1918 г., стр. 2081.

[37] Ibid, стр. 2081, прим. 3.

[38] Յմմտ. ***И. П. Ростомов***, Ахалкалакский уезд в археологическом отношении, "Сборник материалов для описания местностей и племен Кавказа", в XXV, Тфл., 1898, стр. 31-35, Ծան. Լ. Մ.-Բ.

[39] ***Н. Марр,*** Ossetica –Japhetica, I, յիշ. հրատ., стр. 2081, прим. 2.

վարիանտներով, որոնցից գլխավորներն են փշաւական, սվանական և քարթլականը: Ընդհանուր գծերով այս զրոյցի բովանդակութիւնը այսպէս է.

Ամիրանը՝ Սուկալմախի և Դարեջանի կրտսեր որդին՝ ունէր երկու եղբայր՝ Բադրի և Ուսիփ. ծնուել էր նա ծնողների ծերութեան ժամանակ. մայրը աւելի շատ սիրում էր իր այդ կրտսեր որդուն, ուստի և անուանեց նորան Դարեջանիձէ (այսինքն՝ Դարեջանի որդի): Վերջինիս կմքահայրն էր Փրկիչը, որն էլ, կնքելով երեխային, խոստացաւ, մօր խնդրանօք, աղերսել Աստծուն, որպէսզի Նա շնորհէ այդ երեխային մեծ ֆիզիկական ոյժ և կարողութիւն: Եւ, իսկապէս, Ամիրանը ունէր սարից գլորուած գերանի արագութիւն, լեռնային ձեան հիւսի (ձիւնակոյտի) ծանրութիւն, տասնևերկու վիզոյգ եզան և գոմէշի ոյժ և գայլի ընթացք: Ընդ սմին, նրան ճակուած էր աղքատ ապրել մանկութեան շրջանում և ամբարիշտ կեանք վարել հասունութեան ժամանակ: Կնունքից շատ ժամանակ չանցած Ամիրանը զրկուեց հօրից. դևերը յարձակուեցին որբերի վրայ և ամայի դարձին նոցա ամբողջ գոյքը: Ահ կրած եղբայրները քաշուեցին Ջաբալխէթ. նոցա մայր Դարեջանը չկարողացաւ տանել կսկիծը և մեռաւ: Բայց և այնպէս Ամիրանը մեծացաւ, հասունացաւ: Նրա անսահման ոյժից ոտի տակ հողը դողում էր. նրա ուտելն էլ արտասովոր էր՝ ճաշի ժամանակ ուտում էր երկու գոմէշ, իսկ ընթրիքի ժամանակ չէր բաւականանում և երեքով:

Սրանից յետոյ պատմում է Ամիրանի արկածների ու նրա արիութիւնների մասին, ուր միշտ էլ յաղթող էր դուրս գալիս: Վերջ ի վերջոյ Ամիրանը այնքան հպարտացաւ, որ սկսեց փքուել ու մինչև անգամ իր քաւոր Փրկչին կանչեց կռուի: Մէկ անգամ Ամիրանը,—ասւում է զրոյցի մէջ,—հանդիպեց Փրկչին և ասաց Նորան՝ «Քաւո՛ր, դու ինձ շնորհեցիր այնքան ոյժ, որ ոչ ոք չի կարողանում հետս մարտնչել: Ինչ էլ որ լինի, այժմ Դու դուրս արի մարտի ինձ հետ»: Փրկիչը պատասխանեց՝ «Ամիրան, դու իմաստասէր մարդ ես, միթէ՞ չգիտես այն, որ քաւորի հետ կռուել քեզ չի սազի»: Բայց Ամիրանը չէր հեռանում ու պահանջում էր Փրկչից դուրս գալ մարտի նորա հետ: Փրկիչը՝ խրելով գաւազանը հողի մէջ՝ ասաց Ամիրանին՝ «Եթէ դու կհանես այս գաւազանը ու հեշտութեամբ հանեց այն քոնն է»: Ամիրանը քաշեց գաւազանը: Ամիրանը դարձեալ հողից: Փրկիչը կրկին անգամ խրեց գաւազանը: Ամիրանը դարձեալ հանեց ու դիմեց Փրկչին՝ «Կատա՞կ ես անում արդեօք ինձ հետ. կամ կռւի՛ր կամ ձեռք քաշիր ինձանից», Փրկիչը երրորդ անգամ

խրեց գաւազանը և հրամայեց, որ այն թողնէ բուն, որ հասնի մինչև երկինք, և յետոյ հրամայեց Ամիրանին հանել գաւազանը: Ամիրանը ոչ միայն չկարողացաւ այն հանել, այլ և շարժել տեղից: Այն ժամանակ Փրկիչը անիծեց Ամիրանին և զայրացած շղթայեց նորան և գցեց քարայրի մէջ (Էլբրուս ‖ Ղազբէկ ‖ Գէրգէտ լերան կից), որպէսզի ընդմիշտ զրկէ նորան հնարաւորութիւնից տեսնել երկինք և երկիրը, լոյս և ուրախութիւն: Այն օրուանից Ամիրանը տառապում է այնտեղ: Աստուած սահմանեց նորան ուտելիք-խմելիք ամենայն օր մի-մի կտոր հաց և մի-մի բաժակ գինի[40]: Այս մթերքը հասցնում է նրան ագռաւը: Ամիրանը ունի մի շուն՝ ծնուած ագռաւից: Ժանգոտ շղթաները, որով Ամիրանը կապած է քարայրի մէջ, այդ շունը անդադար լիզում է, որից այն դառնում է աւելի և աւելի բարակ ու թոյլ: Այդ ժամանակ Ամիրանի սիրտը լցւում է յուսով, որ ահա շղթան կկտրուի և նա ազատութիւն կստանայ: Սակայն հերոսի այս ցնորքին չէ վիճակուած իրականանալ, որովհետև աւագ հինգշաբթի առաւօտեան բոլոր վրաց դարբինները երեք անգամ մուրճով խփում են զնդանին, ուստի և շղթան՝ փոխանակ կտրուելու՝ նորից ամրանում է և ստանում առաջուայ պնդութիւնը: Ամիրանը նորից ընկնում է վհատութեան մէջ, դարձեալ նոյն տանջանքն ու զրկանքները...[41]:

Համեմատել հայկական «Մհեր»-ի աւանդութիւնը, որը իւրաքանչիւր հային յայտնի է[42], վրացական «Ամիրան»-ի զրոյցի հետ, իմ կարծիքով, բոլորովին աւելորդ է, քանի որ այդ երկու աւանդութեանց կամ զրոյցի սիւժէտների միջև գրեթէ ո՛չ մի նմանութիւն չկայ, բացի գլխաւոր հերոսի անուան, որ հայկականում «Մհեր» (=«Միհր» «Միթր») է հնչւում, իսկ վրացականում «Ա.–միր–ան»

---

[40] Ժողովրդական երեւակայութեամբ, «վրացի» Ամիրանը անպայման պետք է գինի խմի: Ծան. Լ. Մ.-Բ.

[41] **Պ. Միրիանաշվիլի,** Ամիրանի առասպելը (վրացերեն), Տփղիս, 1913, եր.1-54: **Վ. Ճիճինաձէ,** Ամիրանդարեջանականը Մօսէ Խոնեցու (վրացերեն), Տփղիս, 1896, եր. 305-372: **Ս. Գորգաձէ,** Մեր հին գրականութիւնն եւ ժողովրդական բանաստեղծութիւնը (վրացերեն), բ. տպագրութիւն, Քութայիս, 1918, եր. 311-327: **Ալ. Խախանաշվիլի,** Պատմութիւն վրաց գրականութեան (հնագոյն ժամանակից մինչեւ XVIII դարու վերջը), (վրացերեն), գ. հրատ., Տփղիս, 1919, եր. 9-26: *А. Хаханов,* Очерки по истории грузинской словесности, кн. I, Москва, 1895, стр. 19-43. *Р. Эристов,* Заметки о Сванетии, Тфл., 1898, стр. 68-78. Յմմտ. **Իւ. Ջաւախիշվիլի,** Պատմութիւն վրաց ժողովրդի, I, ղովրդի (վրացերեն), I–II, եր. 146-161, (=Յամառօտ պատմութիւն վրաց ժողովրդի, I, եր. 110-126) եւլն:

[42] Առաջին անգամ հրատարակուած հանգուցեալ **Գարեգին** վրդ. (ապա եպս.) **Սրուանձտեանցի** «Գրոց եւ Բրոց»-ի մէջ, Կ.Պոլիս, 1874:

(ուր «ա»-ն պրէֆիքս է, իսկ «ան»-ը յոգնակիի ցուցիչ)[43]:

Բայց ըստ էութեան վրացական Ամիրանի զրոյցը աւելի մօտենում է հայկական Արտաւազդի զրոյցին: Թէ Ամիրանը և թէ Արտաւազդը բանտարկւում են քարայրի մէջ՝ առաջինը Էլբրուս ‖ Ղազբէկ ‖ Գէրգէտում, իսկ երկրորդը Մասիսում, կապուած լինելով երկաթեայ շղթաներով: Երկուսն էլ իրենց մօտ ունեն իրենց հաւատարիմ շունը (վրացականում) կամ զոյգ շները (հայկականում), որ լիզում (վրացականում) կամ կրծում են (հայկականում) տիրոջ կապանքները: Երկուսն էլ աշխատում են դուրս գալ լոյս աշխարհ, սակայն դարբինների՝ որոշ ժամանակին (ըստ հայկականի՝ իւրաքանչիւր կիրակի, իսկ վրացականում՝ միմիայն աւագ հինգշաբթի առաւօտեան)՝ մուրճով զնդանին երեք անգամ (հայկականում երեք կամ չորս անգամ) խփելով շղթաները ամրանում են, և բանտարկեալը ստիպուած է լինում նորից վհատուել և ընկնել՝ մնալով դարձեալ միևնոյն վիճակի մէջ:

Եւ այսպիսի մանրամասնութիւնների, որ վերին աստիճանի ուշագրաւ են և բնորոշ, մենք ամենևին չենք հանդիպում հայկական Մհերի աւանդութեան մէջ:

Այժմ բոլորովին պարզ է, որ հայկական Մհերի և վրացական Ամիրանի աւանդութեանց միջև չկայ գրեթէ ո՛չ մի նմանութիւն, բացի լոկ արտաքին քօղից, որ արտայայտւում է միմիայն երկու առասպելների անուանց ազգակցութեան մէջ. «Մհեր»=«Միհր», «Ամիրան»=«Ա-միր-ան»=«Ա.–միհր–ան»: Մինչդեռ՝ նոյն Ամիրանի զրոյցը հայկական Արտաւազդի զրոյցի հետ համեմատելով՝ մենք հանդիպում ենք բազմաթիւ շփման կէտերի: Այստեղից, ինքն ըստ ինքեան, եզրակացութիւն, որ վրացական Ամիրանի զրոյց ըստ էութեան աւելի մօտ է հայկական Արտաւազդի, քան թէ Մհերի զրոյցին:

Դարձեալ մի երկու նկատողութիւն:

Ամիրանի աւանդութեան սիւժետը բաւականին կերպարանափոխուել է՝ Վրաստանում Ն. Մառի *ասելով, ինչպէս վերև տեսանք,*

---

[43] Շատ տարօրինակ է, ի միջի այլոց, **Պ. Միրիանաշվիլու** առաջարկած ստուգաբանութիւնը «Ամիրան» անուան. «Ամիրանը, մեր կարծիքով, –ասում է նա op. cit., IV–V, –էպօնիմ է իվերի (իմերի), ինչպէս Քարթլին (Քարթլոսը ?) Քարթլիի. իվերը, հայերէն ավիր ածանցական ձեւ է ուր բառից: Ուր-ը ազգակից էր քարթու, ինչպէս քարթնի, ապագայում քարթլի (համեմ. հայ. վիրք, հայք) եւ ստացել է յաւելումով ավիր (ամիր, իմեր) բառից, գործածւում էր իբրեւ հաւաքական անուն, ինչմամբ իմեր-քարթլի): Ամիրանը յոգնակի թուի անուն է, որ առաջացել է ծայնաւորի ժողովրդի, հնում երկուսն էլ միասին յիշատակւում էին ուրքարթու (այժմեան [բառա] վիր եւ պարսկերեն ավիր ածանցական ձեւ է ուր բառից: Ուր-ը ազգակից էր քարթու էպօնիմի նշանակութիւն, ինչպէս Քարթլի (Քարթլօսը ?) եւ հայոց Յայքը»:

պարսկական ծագումն ունեցող «Ամիրան Դարեջանական» դիւցազնական վէպի[44] *տարափոխիկ (բերովի) ազդեցութեամբ, իսկ Հայաստանում քրիստոնէական լէգէնդներից քաղած գծերի բարդումով, մինչդեռ այն (Ամիրանի աւանդութիւնը) իսկապէս մինն է* հնագոյն յաբեթական աւանդութիւններից, *այն է՝ արեգ—աստծու մասին, որ վերածուել է հերոսի:*

Մ. Էմինը, *ընդհակառակը, կարծում էր, որ հայկական առասպելը (Արտաւազդինը) կրում է զուտ հեթանոսական դրոշմ, մինչդեռ վրացականը (Ամիրանինը) քրիստոնէական ազդեցութեան հետքեր, և դրանով, ի միջի այլոց, ապացուցում էր, որ վրացական Ամիրանի աւանդութիւնը փոխառած պէտք է լինի հայերից: «Եւ զի զրոյցն վրաց ի մերոց ի փոխ առեալ է՝—ասում էր* Մ. Էմինը,*—յայտ անտի է, զի մայր Ամիրանայ՝ որպէս և յետինս այս, քրիստոնեայք են, իսկ մերն Արտաւազդ և՛ քաջք, և՛ երգք գնոցունց ի հեթանոսութեան անդ ունին զակիզբն»*[45]*:*

Նմանապէս, խօսելով Արտաւազդի և Ամիրանի զրոյցների մասին, Ստ. Պալասանեանը *գրում է հետևեալը. «Այս երկու զրոյցների մէջ եղած զանազանութիւնը գլխաւորապէս էնդուրումն է երևում, որ առաջինը հեթանոսական կարծիքներ է բովանդակում, իսկ երկրորդը քրիստոնէութեան ժամանակների վերաբերելով՝ քրիստոնէական կարծիքներ է պարունակում*[46]*:*

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ որպիսի՞ առնչութիւն ունի վրացական Ամիրանը պարսկական Ահրիմանի հետ, դրա մասին կարելի է ասել միմիայն այսքանը. այդ երկուսի միջև ո՛չ մի առնչութիւն կամ ազգակցութիւն չկայ, բացի լոկ անուանց արտաքին նմանութեան, մանաւանդ որ երկուսը ներկայացուցիչներ են տարբեր սկզբունքների, առաջինը՝ լուսոյ, գիտութեան և բարիքի, իսկ երկրորդը՝ խաւարի, տգիտութեան և չարի: Եւ մինչդեռ Ահրիմանը անընդհատ պատերազմում է Ահուրամազդայի կամ Օրմզդի դէմ, քանի որ վերջինս ժողովրդի հովանաւոր է հանդիսանում, Ամիրանը՝ թէև շղթայակապ՝ ճիգ ու ջանք է թափում հասցնելու իր օգնութիւնը թշուառ մարդկութեանը, որին նա ուզում է տալ փոխանակ արիւնոտի՝ կաթնոտ հաց:

---

[44] Տե՛ս վերեւ եր. 100, ծանօթ. 2:

[45] ***Մ. Էմին,*** Վեպք հնոյն Հայաստանի, եր. 42, ***Մ. Էմինի*** երկասիրութիւնները etc., եր. 117:

Ահա թէ ի՞նչ ենք կարդում սրա մասին վրացական զրոյցի «վերջարանի» մէջ (բերում եմ թարգմանաբար).

Շղթայակապ Ամիրանը թշնամի է դևերի,
Պահում էր ոխը դարբին, սափրիչ և օրխորդների,
Միմիայն նոցա մեղն էր, որ տանջւում էր Ամիրանը,
Նոցա սրտի իղձն էր, որ բանտարկուած էր Ամիրանը.
Ցանկանում էր ցանել աշխարհում հաւասարութիւն-արդարութիւն,
Ժողովրդին տալ հացը կաթնով և ո՛չ թէ [հացը] արիւնոտ[47]*:*

Սակայն, այն ամենը, ինչ որ ասացի Ամիրանի և Ահրիմանի համեմատութեան վերաբերմամբ, պէտք է կրկնուի նաև նոյն Ամիրանի և Արտաւազդի համեմատութեան վերաբերմամբ ևս: Եւ իրօք, չէ՞ որ Ամիրանը մարդկութեան բարեկամն է, նման յունական Պրոմէթէոսին, որը փախցրեց Աստծուց երկնային կրակը՝ գիտութեան և լուսոյ այդ էմբլէմ խորհրդանշանը, որպէսզի յանձնի այն մարդկանց[48]*, իսկ Արտաւազդը՝ ոչ այլ ինչ է, բայց եթէ այն չար ոգին, որ, ըստ Մ. Խորոնացու, «ջանայ ելանել [յայրէ] և առնել վախճան աշխարհի»*[49]*:*

Բայց և այնպէս, չնայած այն մեծ տարբերութեան, որ նկատւում է Մհերի և Ամիրանի վերաբերեալ գոյութիւն ունեցող հայ-վրացական աւանդութեանց միջև, բացի լոկ իրենց հերոսների անուանց ազգակցութեան, մենք, այնուամենայնիւ, չենք կարող ժխտել, որ Վրաստանում այսպէս թէ այնպէս պահպանուած պէտք է լինեն որոշ հետքեր այն սկզբունքի, որին համապատասխանում է պարսից «Միթր»–«Միհր» և հայոց «Մհեր»-ը: Այդ հետքերն են՝ նախ կիսայաբեթական աբխազների միջավայրում ցայսօր կենդանի մնացած յիշատակը այն դիւցազն–արեգի, որ նոցա լեզուով կոչւում է «ա-մըրա» «ա-մըր», իսկ երկրորդ՝ այն բազմաթիւ անձնական

---

[47] ***Պ. Միրիանաշվիլի,*** op. cit., եր. 54:

[48] *П. Услар.* Древнейшия сказания о Кавквзе ["Сборник сведений о кавказских горцах", кн. X, "Записи Кавк. Отд. Рус. геогр. о-ва", кн. XII], Тфл., 1881, стр. 469-484. ***В. С. Миллер,*** Кавказския предания о великанах, прикованных к горам, –"Журнал Мин. Нар. просв., 1883 г., январь, стр. 100-116.

[49] Արտաւազդի զրոյցի մասին առհասարակ տես, բացի այստեղ ծանօթութիւնների մէջ յիշուած ***Մ. Էմինի*** եւ ***Մ. Աբեղեանի*** հայերէն ուսումնասիրութիւններից, նաև հետեւեալ գրականութիւնը: *М. Эмин,* Моисей Хоренский и древний эпос армянский, Москва, 1881, стр. 74-76. и прим. 2, стр. 76 (на стр. 76-78). *Г. Халатьянц,* Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, ч. I, Москва, 1896, стр. 314-324, եւլն:

անունները, որ հնչում են «Միհր» կամ պարունակում իրենց մէջ այս վերջինը:

Բայց դա դեռ քիչ է: Ինչպէս ինձ վիճակուեց լսել՝ Տփղիսի պետական համալսարանի իմ ունկնդիր ուսանող Վարլամ Թոփուրեայից, Եգերքում (որ վրացերէն կոչւում է «Սամեգրելօ», իսկ ռուսերէն՝ անյայտ պատճառով՝ Мингрелия*) հռչակաւոր Մարտվիլի կամ Ճղ՚ոնդիդի վանքի մօտերքում գտնուող «Նաւղալեի» գիւղի շրջակայքում յայտնի է մի վայր, որ եգերցիների լեզուով կոչւում է «Մահերէ»:*

Արդ հարց է ծագում՝ այս «Մահերէ» տեղւոյ անունն (գերմաներէն Ortsname*), ինչպէս և վերևում յիշածս բազմաթիւ անձնական անունները (*Personennamen*), օրինակ. Միրվան, Միրխան=Միրհան, Միրդատ=Միհրդատ, Վարազ–Միհր, Միր=Միհր, կամ, վերջապէս, արեգ-դիւղազնի անունը՝ աբխազերէն «ա-մըրա»=«ա-մըր», և վրացերէն «ա-միր-ան»=«ահր-ան», չե՞ն գալիս արդեօք ապացուցելու, որ դոքա բոլորը իսկապէս հետքեր են այն մեծ դերի և ազդեցութեան, որ մի ժամանակ ունեցել է «Միթր»–«Միհր»–«Մհեր»-ը վրացոց մէջ: Էլ չեմ ասում աւելին՝ որ միգուցէ այս վերջինը տարածուած լինի հայոց և պարսից մէջ՝ սկիզբը առնելով հին «յաբեթական» աշխարհից:*

* * *

Իհարկէ, վերևում բերած թռուցիկ տեղեկութիւնների հիման վրայ մենք դեռ էլի անկարող ենք վերջնականապէս լուծուած համարել սոյն յօդուածում յարուցած հարցը՝ Արտաւազդ և Մհերի մասին: Ընհանուր չփման կէտեր թէ պաշտամունքի և թէ մտաւոր կուլտուրական կեանքի միւս արտայայտումների մէջ միշտ էլ կարելի է որոնել մարդկութեան զանազան հատուածների միջև. ու՞ր մնաց, որ այսպիսի կէտերից զուրկ լինեն լիովին թէ կիսով չափով յաբեթական ծագումն ունեցող վրաց և հայ ժողովուրդները: Եւ, իսկապէս ասած, հարցը այնպէս էլ չի դրւում, թէ վրացիք, եթէ այսպէս թէ այնպէս պահպանել են որոշ յիշատակութիւններ Արտաւազդ և Մհերի մասին, անպայման պէտք է համարուեն ազդուած հայերի (կամ պարսիկների) կողմից: Ո՛չ, մեր նպատակն էր միմիայն ցոյց տալու, թէ ինչպիսի մարգարիտներ կարելի է որոնել վրաց հողի վրայ հին «յաբեթական» աշխարհից մնացած այն մի քանի մտաւոր-մշակութային երևոյթների վերաբերեալ, որի մասին հայկական իրականութիւնը այնքան հարուստ է տեղեկութիւններով, իսկ վրա-

ցականը, ըստ առաջին հայեացքի, կարծես կատարեալ tabula rasa *է: Բայց մենք տեսանք, որ վրաց իրականութիւնը այնքան էլ աղքատ չէ այն տուեալներով, որ վերաբերում են մասնաւորապէս Արտաւազդ և Մհերին: Եւ այդ հանգամանքից մենք աւելորդ անգամ պիտի օգտուենք, որպէսզի շեշտենք, որ հայ և վրաց ժողովրդները զանազան հատուածներ են՝ ազգակից և եղբայրակից՝ այն մեծ ընտանիքի, որ* Ն. Մառը *անուանում է «յաբեթական» և որը պատուաւոր տեղ ունի գրաւած համաշխարհային քաղաքակրթութեան պատմութեան մէջ:*

ՎԱՐԴԱՎԱՌԸ ՎՐԱՑՈՑ ՄԷՋ

Վարդավառը՝ Հայոց ամենասքանչելի տօնն է, որ սովորաբար գալիս է Զատկից 14 շաբթից կամ 98 օրից յետոյ, կիրակի օրը, ամառային խիստ տապ եղանակին: Այս տօնը, ինչպէս ենթադրում են, մնացորդ է հեթանոսական շրջանից, երբ հայերը, հետևելով Յունաց օրինակին, վարդ էին նուիրում իրենց Աստղիկ աստուածուհուն[1]*:*

Վարդավառ *կամ* Վարդաւոր[2], resp. Վարդէոր || Վարդիւոր[3] *կոչուած տօնի իսկական իմաստն դեռ լուսաբանուած չէ, սակայն՝ հիմնուելով ազգագրութեան տուեալների վրայ, անկասկած, պէտք է այն եզրակացութեանը գալ, որ դա հեթանոս Հայոց ամենահրաշալի ու մեծապայծառ տօնն է եղել և այնպիսի ժողովրդականութիւն է եղել վայելելիս, որ քրիստոնէական շրջանում փոխանակուել է, ոմանց կարծիքով՝ Փրկչի Պայծառակերպութեան, իսկ ոմանց կարծիքով՝ Ս. Յովանու Կարապետի տօնով, թէպէտ և պէտք է չ'մոռանալ, որ այժմեան Վարդավառին միաժամանակ տօնւում է թէ Փրկչի Պայծառակերպութիւնը և թէ Սուրբ Կարապետի յիշատակը:*

Բայց հնում Վարդավառը յայտնի է եղել ոչ միայն Հայոց, այլ և Յունաց և Վրացոց մէջ: Օրինակ, Կապպադովկիայում, չ'նայած այն հանգամանքին, որ այդ երկրի բնակիչները՝ այսինքն կապպադովկացիք՝ յունարէն են խօսում թէ՞ տաճկերէն, ցայսօր կենդանի է մնացել ժողովրդական՝ այսպէս կոչուած Βάρτουβάρ *տօնը, որ գալիս է Զատկից 6 շաբթից յետոյ՝ կիրակի օրը*[4]*: Իսկ վրաց աղբիւրների մէջ նոյն տօնը կոչւում է* ვარდობა վարդօբա:

Սոյն յօդուածիս նպատակն է ծանօթացնել հայ ընթերցողին վրաց «վարդօբա»-ի հետ (1):

«Վարդոբա» (ვარდობა) *բառը, որ բաղկացած է* ვარდი վարդ-*ի*

[1] **Ալիշան** , Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, 1895 թ., եր. 283, 506-507:

[2] **Դ. Աղայեանց,** Վարդավա՞ռ, թէ վարդաւոր,–«Լոյս» պատկերազարդ օրացոյց–հանդէս, 1904 թուականի, խմբագրութեամբ **Ե. Թոփչեանի,** սիւն 593-596:

[3] **Սահակ վարդ. Ամատունի,** Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1919 թ., եր. 604:

[4] **Ն. Մառ,** Арк'аун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах (արտատպ. "Византийский Временник"-ի հտր. XII ից), Պետր. 1905 թ., եր. 35-36:

գոյական անունից և –ობა օբա *յետադաս մասնիկից, բառացի թարգմանութեամբ նշանակում է «վարդի տօն»: Այստեղից ծնունդ է առնում և* ვარდობის–თთუე վարդօբիս–թթուէ, vulg. ვარდობის თვე վարդօբիս–թվէ, *այսինքն «վարդի տօնի (վարդօբի) ամիս», կամ համառակ ձևով՝* ვარდობისა վարդօբիսա, *որ ընդհանրապէս բացատրւում է իբրև «մայիս» ամիս*[5]*: Որ* վարդօբիսթվէ, rasp. վարդօբիսա, *նշանակում է «մայիս» ամիսը, դա ակներև է ինքըստինքեան. չէ՞ որ այդ ամիսն է, որ բացւում է ծաղիկներից լաւագոյնը՝ վարդը. բացի դրանից, հէնց այդ իմաստով սոյն բառը հիշատակւում է հին Վրացոց ամիսների հետևեալ անուանացուցակի մէջ՝*

 აპანი *ապանի–յունուար (արաց)*
სარწყუნისი *սարծղունիսի–փետրուար (մեհեկի)* -

მირკანი *միրկանի–մարտ (արեգ)*
იდრიკა *իդրիկա–ապրիլ (ահեկան)*
ვარდობისა վարդօբիսա–մայիս *(մարերի)*
მარიალისა *մարիալիսա–յունիս (մարգաց)*
თიბისა *թիբիսա–յուլիս (հրոտից)*
ქველთობისა *քվէլթօբիսա–օգոստոս (նաւասարդ)*
ახალწლისა *ախալծլիսա–սեպտեմբեր (հոռի)*
სთვლისა *սթվլիսա–հոկտեմբեր (սահմի)*
ტირისკონი *տիրիսկոնի–(տրէ)*
ტირისდენი *տիրիսդէնի–դեկտեմբեր (քաղոց)*[6]*:*

Պէտք է նկատել, որ վրաց բառարաններում ვარდობა վարդօբա *բառը առհասարակ բացատրւում է իբրև «մայիս» ամիս: Սակայն ուսուցչապետ Ն.Մառը սրա դէմ առարկում է այն հիման վրայ, որ հին Վրաստանում, ինչպէս և Հայաստանում, տարեցոյցը շարժական ամիսներով է եղել*[7]*: Եւ իրօք, պ. Մառի ասելով, գոյութիւն ունին տուալներ յօգուտ այն պարագայի, որ այնքան հեշտ էլ չէ նոյնացնել «վարդօբիսա»-ն այժմեան «մայիս» ամսուայ հետ: Օրինակ, հին Աթոնի Իվերոն վանքի XI դարու վրացերէն ձեռագիր «Վարք հարանց»-ի մէջ, որ ըստ պ. Մառի, հայկական ազդեցութիւն է կրում,*

[5] **Սաբա-Սուլխան Օրբելիանի,** ქართული ლექსიკონი, Թիֆլիս, 1884 թ., եր. 99.

[6] Հմմտ. **Մ. Ջանաշվիլի,** Описание рукописей Церковного музея духовенства грузинской епархии, գ. III, Թիֆլիս, 1908 թ., եր 117 (2):

[7] **Ն. Մառ,** op. cit., եր. 34:

«վարդօբիսա»-ն յիշատակւում է դեկտեմբերի 28-ին կարդացուելիք վկայաբանութեան սկզբում:

თუესა დეკენბერსა კჱსა ჴსენებაჲ წმიდათა მოციქულთა პეტრესი და პავლესი ჰრომის შინა ოჳწინარესს რვისა დღისა ვარდობისა წამებაჲ პეტრესი[8]	*Ամսեան դեկտեմբերի 28-ին: Յիշատակ որբոց առաքելոց Պետրոսի և Պաւղոսի [նահատակուած] Հռոմում, [որ տօնվում է] վարդօբիսա-ից ութ օր առաջ: Վկայութիւն Պետրոսի:*

Ինչպէս պ. Մառը իրաւացի նկատում է, այս ձեռագրի մէջ թէպէտ Ս. Պետրոսի վկայութիւնը յիշատակուած է դեկտեմբերի 28-ին, սակայն նոյն ձեռագրի գրչին, անկասկած, յայտնի պէտք է լինէր Պետրոսի և Պաւղոսի այն տօնը, որ գալիս է յունիսի 29-ին, և հէնց այդ հանգամանքն է, որ դրդել է այդ գրչին զետեղել ձեռագրի մէջ վերոյիշեալ յիշատակագիրը: Ուրեմն, նոյն յիշատակագրի հիման վրայ կարելի է այն եզրակացութեանը գալ, որ «վարդօբիսա»-ի տօնը կատարուելիս է եղել յուլիսի 7-ին (29 յունիսի + 8 օր):

Գրականութեան մէջ յայտնի է նաև այլ տուեալ յօգուտ «վարդօբիսա»-ի: Դա` Կոստանդնուպօլսի յայտնի պատրիարք Յովհաննէս Պահողի* Νομοκανών*-ի վրացական վերսիան է, ուր, ի միջի այլոց, յիշատակուած է`

ორთა მათ მარხვათა ქრისტეშობისა და წმიდათა მოციქულთასა, რომელსა ქართველნი ვარდობისათ უწოდენ *(ձեռագրի մէջ սխալմամբ`* ოწოდენ*)*[9]	*Երկու պաս, այն է` Քրիստոսի ծննդեան և սրբոց առաքելոց, որին (այսինքն վերջինիս) վրացիք անուանում են* վարդօբիսա:

Իսկ այս յիշատակագիրը հետաքրքիր է այն տեսակէտից, որ սրա մէջ «վարդօբիսա»-ն հանդէս է գալիս իբրև պաս, այսինքն իբրև

---

[8] ***Ն. Մառ,*** Агиографические материалы по грузинским рукописям Ивера, մաս I (արտատպութիւն "Записки Вост. Отд. Рус. Арх. О-ва"-ի հրտ. XIII-ից), Պետր. 1901 թ., եր. 49, հմմտ. ***Ն. Մառ,*** Арк'аун, եր. 54:

[9] ***Ն. Ա. Զաօզերսկիյ,*** եւ ***Ա. Խ. Խախանով,*** Номоканов Иоанна Постника в его редакциях грузинской, греческой и слвянской, Մոսկվա, 1902 թ., եր 66 եւ ծանօթ. I նոյնտեղ, հմմտ. ***Ն. Մառ,*** Арк'аун, etc. եր.34-35:

առաքելոց պաս, որ իսկապէս, ըստ յոյն–վրացական տօնացոյցի, յունիսին է լինում (առաքելոց տօնը` յունիսի 29-ին):

Այստեղ կամայ–ակամայ հարց է ծագում` արդեօք չապէս տարբե՞ր էին վրացոց մէջ այսպէս կոչուած «վարդօբիսա»-ն և առաքելոց պասը, թէ՞ սոքա լոկ 2 տարբեր անուններ են մէկ և միևնոյն պասի, որ գալիս է յունիսին: Այս հարցին առայժմ, դժբախտաբար, կարելի է պատասխանել միմիայն ենթադրաբար, ինչպէս այդ անում է և պ. Մառը, այն է` որ յունիս ամսին գալիք առաքելոց պասը կոչուել է «վարդօբիսա» այն պատճառով, որ հէնց այդ ժամանակ հեթանոսական շրջանում յայտնի է եղել հռչակաւոր «վարդօբիսա» տօնը:

Յօգուտ «վարդօբա»–«վարդօբիսա»-ի կան նաև այլ տեղեկութիւններ վրաց հին գրականութեան մէջ: Այսպէս, Սինայի Ս. Եկատերինայ վանքի մի վրացերէն ձեռագիր «Տարականոց»-ի մէջ պ. Մառը առիթ է ունեցել քանիցս կարդալ` 15 մայիսի ներքոյ` ვარდობაჲ ღმრთისმშობლისაჲ[10] վարդօբայ ղմրթիսմշօբլիսայ, *այսինքն «վարդօբա Աստուածածնի»: Թէ ինչու՞ «Աստուածածնի վարդօբա»-ն յիշատակուած է այս ձեռագրի մէջ մայիսի 15-ին, այդ հարցին առայժմ, դժբախտաբար, հնարաւորութիւն չ'կայ պատասխանելու: Միմիայն կասենք, որ այսպէս թէ այնպէս` հին վրացոց մէջ յայտնի է եղել թէ՛ «վարդօբա» տօնը, որ գալիս է եղել, ոմանց ասելով` մայիսի 15-ին. իսկ ոմանց ասելով` նոյնիսկ յունիսի 7-ին, և թէ՛ «վարդօբիսա» ամիսը` «մայիս» ամսուայ իմաստով:*

Վերջապէս, սոյն «վարդօբիսա»-ն յիշատակւում է Ս. Շուշանիկի վկայաբանութեան վրացական վերսիայի մէջ, որ վերագրւում է V դարու վրաց գրող` Յակոբ երէցին: Վերջինիս մէջ մենք, ի միջի այլոց, կարդում ենք, թէ ինչպէս Շուշանիկի

ტანჯვაჲ *[იყო]* ვარდობისა თთუისა ათცხრამეტსა[11]	*տանջանքը [եղաւ]* վարդօբիսա *ամսուայ տասն և իններին:*

Այսպէս, ուրեմն, վրացոց մէջ երբեմն գոյութիւն է ունեցել Վարդավառ տօնը, թէպէտ և այժմեան տուեալների հիման վրայ բոլորովին անկարելի է որոշել, թէ ի՞նչ կերպարանք է եղել ընդունած այդ տօնը հնում, մասնաւորապէս այն ժամանակ, երբ հայ և վրաց քոյր

---

[10] ***Ն. Մառ,*** Арк'аун, etc, եր. 54-55:

[11] იაკობ ხუცესი წამებაჲ წმიდისა შუშანიკისა խմբագրութեամբ ***Ս. Ռ. Գորգաձեի.*** Քութայիս, 1917 թ., եր. 22 (=საქართველოს სამოთხე հրատ. ***Մ. Սաբինինի,*** Պետր. 1882 թ., եր. 192):

եկեղեցիների մէջ տիրում էր կատարեալ միութիւն և համերաշխութիւն, այսինքն մինչ VII դարու սկիզբը:

Այդ ժամանակուանից երկար ու ձիգ դարեր են անցել, և Վրաստանի կուլտուրական կեանքում քիչ բան չի փոխուել, սակայն Վարդավառի տօնը, որ ցայսօր կենդանի է մնացել Հայոց մէջ, խպառ անհետացել է Վրաց ասպարիզից, յիշատակ անգամ չ՚թողնելով իր մասին Վրաստանի որևէ անկիւնում: Եւ այսօր միմիայն Վրաց–կաթոլիկների այսպէս կոչուած ვარდის–ფურცობა վարդիս–փէնոբա, *այսինքն «վարդազարդ», հինաւուրց տօնն է, որ գալիս է մեզ յիշեցնելու երբեմնի «վարդօրա»-ի մասին*[12]*:*

[12] Հմմտ. ვარდის–ფურცობა յօդուածը "ჯვარი ვაზისა" շաբաթաթերթի մէջ, 1906 թ., № 10:

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԱՌԼԵԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Պ. պ. Ն. Ջանաշիայի "Религиозныя верования абхазов (Из материалов
по абхазской этнографии)" *և Ն. Մառի* "О религиозных верованиях
абхазов (К вопросу об яфетическом культе и мифологии)" *յօդուածնե-*
րում, որ զետեղուած են Ռուսաց Գիտութեանց ճեմարանի հրատա-
րակութեամբ լոյս տեսնող Христианский Восток *հանդէսի IV հատո-*
րի (1915 թուի) I պրակի մէջ, անցողակի կերպով շօշափւում է (եր.
81–82, 128) մի չափազանց հետաքրքիր հարց կովկասեան ազգագի-
տութեանը վերաբերեալ, այն է՝ աբխազների «ալըշկինտր»-ի պաշ-
տամունքի հարցի մասին, զուգընթացաբար հայկական «առլեզ»-ի
պաշտամունքի հարցի հետ (1):
Ներկայ յօդուածիս նպատակն է՝ ի մի ամփոփել բոլոր այն տե-
ղեկութիւնները, որ հաղորդում են այս հարցի շուրջը վերոյիշեալ
հեղինակները, հանդերձ մեր մի քանի նոր նկատողութիւնների նոյն
հարցի մասին, որին, ի դէպ ասենք, հէնց ինքը պ. Մառը անկախ այն
ուսեալներից, որ ներկայացրած են յիշեալ երկու աշխատութիւննե-
րի մէջ, մտադիր է ընծայել յատուկ յօդուած (եր. 128, ծանօթ):
Աբխազեան միթոլոգիայի «ալըշկինտր»-ը, որ համապատաս-
խանում է հայկական «առլեզ»–«արալէզ»-ին, դա՝ շան աստուա-
ծութիւնն է, որ օժտուած է մի առանձին յատկութիւնով՝ պատե-
րազմի դաշտում ընկած հերոսների արիւնը կամ մարմնի ցաւագար
անդամները լիզելով՝ յարուցանել նոցա:
«Ալըշկինտր»-ի պաշտամունքը հէնց այդպիսի դերում աբխազ-
ների մէջ, ըստ պ. Ջանաշիայի (op. cit, *եր. 82), հանդէս է գալիս հե-*
տեւեալ՝ նրա ձեռքով գրի առած առասպելի մէջ.
«Հնում, երբ Աբխազիում (Աբխազէթում) ապրում էին հսկայ
մարդիկ ու դևեր, կար մի ոմն՝ հսկայ Ասլան, որը հանգիստ չէր
տալիս դևերին: Մի անգամ, երբ նա քնած էր, [նորան] գաղտագողի
մօտեցան դևերը, կապեցին մետաքսէ ժապաւէններով [և] կուրաց-
նելով՝ սպանեցին նորան և ձգեցին խորը ջրհոր–փոսի մէջ: Երբ
որ նորա շները վերադարձան սովորական որսից, փնտրեցին իրենց
տիրոջը, բայց չ՚կարողացան հանել ջրհորից: Շները յարձակուե-

ցին [այդ ժամանակ պատահմամբ] սայլով անցորդի վրայ, քաշեցին վերջինիս սայլից՝ ստիպելով, որ սա հանի իրենց տիրոջը և ազատէ նորան: Շները երեք օր և երեք գիշեր լիզում էին Այլանին, որին վերադարձրին և՛ կեանքը և՛ թէ տեսողութիւնը»:

Գրեթէ նոյնը մենք գտնում ենք և Մովսէս Խորենացւոյ Պատմութիւն Հայոց-*ի մէջ (I, 15), ուր աւանդւում է, թէ ինչպէս Շամիրամ «պատուէր տայ զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն», որը ընկել էր պատերազմի դաշտում. և երբ այդ զօրապետները՝ գտնելով Արային՝ դնում են նորան «ի վերնատան ապարանիցն», Շամիրամը ասում է. «Հրամայեցի աստուածոցն իմոց լեզուլ զվէրս նորա և կենդանասցի»[1]:*

Նմանապէս, Փաւստոս Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոցի-*ի մէջ (V, 36), անտեղ, ուր խօսքը վերաբերում է մահացած Մուշեղ սպարապետին և նրա մասին, թէ ինչպէս «ոչ հաւատային ընտանիք նորա մահուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի», գտնում ենք հետեւեալ խօսքերը, որ վերագրւում են այդ Մուշեղի ընտանիքի անդամներին. «Թէ վասն զի [Մուշեղ] այր քաջ էր, Առլեզք իջանեն և յարուցանեն զդա»[2]:*

Անկախ այս հանգամանքից, Եզնիկ Կողբացին իր Եղծ աղանդոց-*ի I գրքի մէջ, խօսելով «աղանդոց հեթանոսացն» նիւթի մասին, մատնանշում է, թէ «իբրև զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, և զպայն իմն ի մարդկանէ», նոյնպէս էլ «զառլեզն [եղեալ է] ի շանէ»: Մի փոքր յետոյ Եզնիկը, կանգ առնելով այն հարցի վրայ, թէ ու՞մն են անուանում «առլեզ»* resp. *«րալէզ», նկատում է՝ «Յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի դնիցի՝ թէ լիզիցէ և ողջացուցանիցէ, զոր արալէզն կոչեն»: Ապա շարունակում է՝ «Մի՞թէ և զարալիզէ՞ն և ս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ. և թէ յառաջին ժամանակսն արալէզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն ո՞չ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին»[3]:*

Կարդալով պ. Ջանաշիայի ձեռքով գրի առած առասպելը նրա մասին, թէ ինչպէս «ալըչկինոր» կոչուած շուն-աստուածները լիզելով՝ վերակենդանացրին պատերազմում ընկած դիւցազն Այլանին, ըստ պ. Մառի, ի միջի այլոց մտաբերւում է լիզող շան դերը Ամիրանի մասին գոյութիւն ունեցող վրաց ժողովրդական առասպելներում: Եւ իրօք, վրաց Պրոմեթէոսի մասին եղած առասպելի մէջ մենք յանդիպում ենք յիշատակութեան նրա մասին, թէ ինչպէս Ամիրանի հետ միասին որը շղթայով կապուած էր Եալբուզից (Էլբրուսից), գտնւում էր և նրա հաւատարիմ շունը, որը լիզում էր նրա ժանգոտած կապանքները (ენთეუნი ეაშია ემიხსა უნაჟგა შანეიან ნაჯვსა)[4], *որոնք՝ համաձայն դարբինների ծխական հաւատալիքի՝ աւագ հինգշաբթի առաւօտեան ստանում էին իրենց նախկին ամրութիւնը*[5]*: Ընդ սմին, հետաքրքիր է, որ՝ ըստ նոյն առասպելի մի այլ վերսիայի՝ շունը կապանքների փոխարէն լիզում էր [Ամիրանի] արիւնը*[6]*:*

Բայց «առլեզ»—«արալեզ» կամ «ալըչկինոր» կոչուած լիզող շան պաշտամունքի հետքերը նկատւում է ո՛չ միայն Կովկասում (հայոց, վրացոց, աբխազոց մէջ), այլ և նրա սահմաններից շատ հեռու և, ամենից առաջ դասական Յունաստանի մէջ: Այսպէս, յայտնի է, որ Էպիդաւրի տաճարին կից պահուող շները, ըստ աւանդութեան, լիզում էին բժշկուող հիւանդների մարմնի ցաւագար անդամները և առողջացնում նոցա[7]*:*

Եւ հէնց ըստ այդօրինակ դիտողութիւնների արիւն լիզող շների վերայ, համաձայն որոշ հետախուզողների կարծիքի, առաջացած պէտք է լինի՝ այդ շների հանդերձեալ աշխարհի հետ ունեցած գաղտնի առնչութեան մասին գաղափարը[8]*: Բացի դրանից, շանը սկսել են երեւակայել մահուան համբաւաբերի դերում, իսկ շունը—սատղը, ըստ այնմ, ստացել է մահագուշակի նշանակութիւն, դառնալով մի տեսակ պահապան հանդուցելոց աշխարհի*[9]*:*

---

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ ***Մ. Աբեղեան*** եւ ***Ս. Յարութիւնեան*** [«Պատմագիրք Հայոց», հատ. II, գ. I], Էջմիածին–Տփղիս, 1913 թ., եր. 49-50:

[2] Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, հրատ. ***Գ. Գալստեանի,*** Թիֆլիս, 1913 թ., եր. 536:

[3] ***Եզնըկայ վարդապետի Կողբացւոյ*** Եղծ աղանդոց [«Ղուկասեան Մատենադարան», գ. ժդ], Թիֆլիս, 1914 թ., եր. 69-70:

[4] ***Պ. Միրիանաշվիլի,*** აზიანის ხევბი, Թիֆլիս, 1913 թ., եր 49:

[5] ***Ա. Ս. Խախանով,*** *Очерки по грузинской словесности,* ***պրակ 2, Մոսկվա, 1897 թ., եր. 163:***

[6] Ibid , եր. 167:

[7] ***Ե. Գ. Կագարով,*** Культ фетишей, растений и животных в древней Греции,– "Журнал Министерства Народного просвещения", 1912 թ., դասական ֆիլոլոգիա բաժ., եր 575:

[8] Ibid , եր. 375:

[9] ***Վ. Թ. Միլլեր,*** Значение собаки в мифологических верованиях, Մոսկվա, 1876 թ., եր. 12: Ի դէպ, աւելորդ չի լինի յիշատակել, որ շունը՝ իբրև մահուան համբաւաբեր՝ հանդիսանում է նաեւ առաջաւորաց պասի մասին գոյութիւն ունեցող յոյն-վրացական վկայութեան մէջ (սրա մասին տես՝ ***Լ. Մելիքսեթ-Բեկեան,*** Грузинский извод сказания о посте "араджавор",–"Христианский Восток", հրատ. V, 1916 թ., պրակ 2, եր. 88-90,

Մասնաւոր հետաքրքրութիւն կարող է ներկայացնել նաև «աուլեզ»—«արալէզ» կամ «ալըշկինտր» բառերի ծագման հարցը, որը, սակայն առժամանակ պէտք է մնայ բաց (2):

ՀԻՆ ԹԲԻԼԻՍԻԻ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(Թբիլիսիի 1500-ամյակի առթիվ)

Դու շատ մութ հարցեր լուծել ես արդեն
Մեր հին գրքերում, քրոնիկոնում,
Բայց դեռ չգիտես՝ ինչ տեսակ զարդեր
Ասեղնագործեց Թիֆլիսը հնում:
Ի. Գրիշաշվիլի

Հին տարանցիկ ճանապարհը, որն առաջին դարերում մեր թվա-
կանությունից առաջ և հետո միացնում էր Սև ծովի ավազանը
Կասպից ծովի ավազանի հետ՝ ըստ Ա դարի հույն աշխարհագիր
Ստրաբոնի (11,2—4), ինչպես հայտնի է, անցնում էր Կողքիսի (Կոլ-
խիդայի)-Եգերքի, ասել է՝ Արևմտյան Վրաստանի սահմաններում՝
Ռիոն-Ղվիրիլա-Ձիրուլա գետերով, ապա՝ Լիխի-Սուրամի լեռնանց-
քը հաղթահարելով՝ Վիրքի (Իբերիայի)-Քարթլիի, ասել է՝ Արևել-
յան Վրաստանի սահմաններում՝ Մտկվարի-Կուր գետի հովտով:
Կուր գետի հովտում արևմուտքից արևելք ուղղությամբ գոյութ-
յուն ունեցող կայանների միջև նշանավորից էին, անկասկած, նրանք,
որոնք ընկած էին Լիախվի և Արագվի գետերի միախառնման գոգա-
հովիտներում. դրանց ցայտուն մնացորդներն այժմ էլ դիտվում են
հին Տոնթի-Գորիի և Մցխեթա-Արմազիի տեղավայրերում, ինչպես
նաև նրանց միջև ընկած այնպիսի կետերում, որպիսիք էին Ուփլիս-
ցիխե-Քվախվրելին, Կասպին, Ցիխեդիդի-Սարկինեն և այլն:
Իսկ եթե այժմ հայացք ձգենք՝ ուղղվելով արևելքից դեպի արև-
մուտք, այսպիսի կայաններ կլինեն Հերեթ-Գարդաբանիի հատվա-
ծում Մտկվրիսցիխեն (Cyropolis) կամ նույն Խունան-Քունանա-
կերտ-Հնարակերտը և Բոստան-քալաքին (Ոստան-քաղաք) կամ
նույն Ռուսթավին:
Մցխեթա—Արմազիի և Բոստան-քալաքի—Ռուսթավիի միջև ըն-
կած էր տնտեսական և ռազմական-ստրատեգիական տեսակետով
ամենանշանավոր վայրը՝ ապագա քաղաք և քաղաքամայր Թբիլի-

սիի տերիտորիան, ուր, մի կողմից, Կուր գետը լայնանում է, վերածվելով ընդարձակ գոգահովտի, այնպես, որպես այլուր ոչ մի տեղ. *և մյուս կողմից՝ նույն գետը նեղ կիրճով հոսում է դեպի արևելք, ուր հեշտ էր կամուրջ ձգել մի ափից մյուսը,* այնպես, ինչպես այլուր ոչ մի տեղ:

Անկարելի է, որ այս տերիտորիան հնագույն ժամանակներից օգտագործված չլիներ մարդու կողմից և այստեղ գյուղեր ու ավաններ չծագեին:

Եթե անգամ մի կողմ թողնենք բազմաթիվ այլ նկատառումները, բավական է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ Կուր գետի ամբողջ երկարությամբ ոչ մի տեղ չկան բարենպաստ պայմաններ նավերով երթևեկություն հաստատելու և լաստերով անտառանյութ ու բեռներ փոխադրելու համար, ինչպես այդ առկա է Թբիլիսիի տերիտորիայի նախկին Մաղաթովյան կղզու, թե Թերակղզու վայրում:

Ընդ սմին՝ հին Թբիլիսիի տերիտորիայի վրա ոչ թե մեկ, այլ մի քանի գյուղերի թե ավանների երբեմնի գոյությունն ապացուցված է ինչպես տոպոնիմիկայի (տեղանունների) տվյալներով, նույնպես և հնագիտական պեղումների արդյունքներով, պեղումների՝ կատարված թե քաղաքի և թե դրսի թաղամասերի ու արվարձանների սահմաններում:

Թե ի՛նչ անունով էին հայտնի այդ գյուղերն ու ավանները մինչև մեր թվարկության V դարը, այդ մասին, դժբախտաբար, ոչ մի ստույգ գրավոր աղբյուր չունենք: Սակայն կարելի է ենթադրել, թե միգուցե այստեղ էր գտնվում II դարի հույն աշխարհագիր Պտղոմեոսի (5, 10) հիշված «Զալիսսա» ավանը, որն, անկասկած, նույն վրացական «Զալիսան» կամ հետագայում «Ձելիսին» է, նամանավանդ որ՝ այն հիշված է իբրև Աղվանք-Ալբանիայի սահմանակից կետ (1):

Որ տնտեսական կյանքը հին Թբիլիսիի տերիտորիայում ծավալված պետի լիներ նախկին Մաղաթովյան կղզու, թե Թերակղզու վայրում ու նրա շրջապատում՝ Կուր գետի ափերին, երևում է, ի միջի այլոց, և նրանից, որ հնագույն ժամանակներից այս վայրում էր կենտրոնացած լողուն (շարժական) ջրաղացների շարանը, որի առկայությունը վաղ ֆեոդալիզմի ժամանակ անհերքելի փաստ է, քանի որ այդ ջրաղացների, իբրև խոր հնությունից եկող վերապրուկների, գոյությունը շեշտված է IX–X դ.դ. արաբական աշխարհագիրների երկերում:

Հենց այստեղ, «ուռի և այլ ծառերի անտառով ծածկված» և «կա-
նաչապատ» կղզում, թե թերակղզում հարմարեցված էին նավերի ու
լաստերի կանգառները, որոնց միջոցով Վրաստանի անտառոտ վայ-
րերից փոխադրվում էին անտառանյութեր և շինանյութեր, ինչպես
նաև հացահատիկ էր հացվում ջրաղացներին և ալյուր փոխադր-
վում ջրաղացներից դեպի ջրափը:
Գուցե հենց այս կապակցությամբ այդ կղզին, թե թերակղզին
հայերեն «Փայտակայան» կոչվեց, իբրև բառացի թարգմանություն
վրացերեն «Ձելիսի»–«Զալիսայի», որը հետագայում «Փայտակա-
յանի» վերածվեց, թեև վերջինիս իսկական ծագումը կարելի է և այլ
կերպ բացատրել:
Այս կղզին, թե թերակղզին հնուց օգտագործված էր նաև իբրև
լավագույն զբոսավայր, ուր, ի միջի այլոց, XIX դարի 30–40-ական
թվականներին հաճախում էր Խ. Աբովյանն իր աշակերտների հետ:
Այսպիսի պայմաններում հասկանալի է, թե ինչու ժողովրդական
ստուգաբանությունը հեռու գնալով՝ «Զալիսսա»–«Զալիսին» վե-
րածեց մի կողմից «Ձելիսա»–«Ձելիսիի» («ձելի» վրացերեն նշանա-
կում է փայտ), *որի հետ առնչվում են Թբիլիսիի շուրջը կուտակված*
տեղանունները՝ Դելիսի, Գուդելիսի, Լիսի և այլն, և մյուս կողմից՝
«Զարիսայի» («զարի» վրացերեն նշանակում է զանգ)*: Իսկ «Զարի-*
սան» վաղեմի անունն է հենց այդ վայրում կառուցված Թբիլիսիի
հնագույն եկեղեցու, որը հետագայում «Անչիսխատի» (Անչիի
սրբապատկեր) է կոչվել: Սա տիպիկ եռանավ և երկու զույգ սյու-
ներ պարունակող բազիլիկա է՝ V–VI դ.դ. (2): Այստեղ էր գտնվում
նաև Վանքի տաճարից (XIV դ.) դեպի արևելք հնագույն խաչաձև
եկեղեցին (տետրակոնխ), որը հիշատակված է ակադ. Մ. Բրոսեի
ճանապարհորդական նոթերում (V, 17):
Թբիլիսիի մասին գրավոր աղբյուրները, որոնք սկսվում են V դա-
րից, բազմազան են և տարալեզու՝ վրացերեն, հայերեն, հունարեն,
արաբերեն, արևմտա-եվրոպական լեզուներով, ռուսերեն, արևել-
յան լեզուներով և այլն:
Ըստ վրաց տարեգրության, Փառնավազ (թե Փար[սմա]ն-Ավազ)
թագավորը, որն ապրում էր III, թե I դ. ն.մ.թ., քաղաքամայր Մցխե-
թայից որսի ուղևորվելիս, անցնելով Դիղոմիի դաշտով դեպի Թբի-
լիսիի ժայռերը, այստեղ նկատել է մի քարանձավ, որն ունեցել է
քարե դուռ, և այդ դուռը եղել է փակ:
Մյուս լեգենդը պարունակում է զրույց այն մասին, թե ինչպես V
դարի երկրորդ կեսին վրաց Վախթանգ Գորգասալ թագավորը (որն,

տստ Ղազար Փարպեցու, Վահան Մամիկոնյանի համախոհն ու
դաշնակիցն էր), որսի ելնելով Մցխեթայից դեպի Թբիլիսիի ժայռերն
ու անտառները, նկատել է կաքավին հետապնդող բազեին, որոնք
միասին ջուրն էին ընկել ու խաշվել: Այդ օրվանից հռչակվել են տե-
ղիս տաք ծծմբային ջրերը, և թագավորը որոշել է այդ տեղում հիմ-
նել քաղաք, որին հետագայում վիճակվեց դառնալ Քարթլիի, իսկ
XII դարի սկզբից՝ ամբողջ Վրաստանի մայրաքաղաքը, և որն այդ
պատճառով կոչվեց «Տփխիսի» («տփիլի» կամ «թբիլի» նշանակում
է տաք, ջերմ), ինչպես Ծղալտուբոն՝ Քութայիսի մոտ, Տիբիլիսը՝
հին Նումիդիայում, Տեպլիցը՝ Բոհեմիայում, Կիսլովոդսկ–Գորյա-
չեվոդսկ–Սերնովոդսկ–Ժելեզնովոդսկը՝ Հյուսիսային Կովկասում,
Ջերմուկը՝ Հայաստանում և այլն:

Անկախ սրանից, գոյություն ունի մեկնաբանության մի այլ փորձ,
որի համաձայն Թբիլիսի տեղանունը կապվում է թոբել-թուբալ ցե-
ղի անվան հետ, որը հիշված է Աստվածաշնչի տարբեր գրքերում
(Ծննդոց 10,2. Առաջին Մնացորդաց 1,5. Եսայեայ 66,19. Եզեկիելի
32,26.38,2.39,1), նաև Հովսեպոս Փլավիուսի «Յաղագս պատերազ-
մին Հրէից» գրքում, քանի որ, ըստ վերջինիս, թոբել-թուբալները
նրա օրոք, այսինքն մեր թվականության I դարում, հայտնի են եղել
իբեր-իվերների անվամբ: Ելնելով այն փաստից, որ թոբել-թուբալը
Աստվածաշնչում սովորաբար հիշվում է մեշեխ-մոսոխ ցեղի կողքին,
իսկ երկուսը միասին իբրև երկվորյակներ, անկասկած, վրաց ժո-
ղովրդի կազմի մեջ մտած ցեղերն են, ենթադրվում է, որ մեշեխ-
մոսոխ կամ, որ նույնն է՝ մեսխ-մցխե ցեղի բնակության կենտրոնը
կարող էր լինել Մցխեթան (երկրի անունը՝ Սամցխե), իսկ թոբել-
թուբալի կամ, որ նույնն է՝ իբեր-իվեր ցեղի կենտրոնը՝ Թոբելի-
սի-Թուբալիսի–Թբիլիսի: Եվ, իրոք, Թբիլիսին դարձավ Արևելյան
Վրաստանի մայրաքաղաք նրանից հետո, երբ մեսխերն ու իբերնե-
րը ձուլվեցին, ու մեսխերի քաղաքամայր Մցխեթան իր դերը զիջեց
իբեր-իվերների քաղաք Թբիլիսիին, որը V դարից դարձավ Քարթ-
լիի (Արևելյան Վրաստանի) մայրաքաղաքը:

Թբիլիսիի հիմնադրումը ծծմբային տաք ջրերի վայրում նշանա-
կում էր և այն, որ նրա տերիտորիայի վրա ստեղծվեց մի նոր տնտե-
սական բազա՝ «Դաբախանան», կաշեգործությամբ հանդերձ, որի
հետագա զարգացմանը նպաստեց նորակառույց կամուրջը Կուր
գետի ամենանեղ կիրճում, Մետեխիի ժայռին (և ամրոցին) առըն-
թեր: Այս կամուրջը, Մցխեթայի «Մոգվթա» (այսինքն՝ մոգերի) կոչ-
ված (նաև ըստ ոմանց «Պոմպեոսի») կամուրջից հետո երկրորդն էր

Կուր գետի ամբողջ տարածության վրա, որով հնարավոր դարձավ
կանոնավորել անասնահոտերի տեղափոխումը հայսկուլյսից հայն-
կուլյս և ընդհակառակը, այսինքն ձմեռային արոտավայրերից դե-
պի ամառային և ամառային արոտավայրերից դեպի ձմեռայինը. դա
որոշ «հաս», այսինքն եկամուտ էր տալիս քաղաքին: Հիշյալ Դաբա-
խանայում, կաշեգործների շարքում կատարվում էր խաշնարածնե-
րից «գանձված» անասունների մորթիների լվացում, մաքրում, ներ-
կում, մշակում և այլ պրոցեսներ, որոնց հետ կապված էին վաղեմի
մայրաքաղաք Մցխեթայի չստագործ-կոշկակարներ, որոնք, ըստ VI
դարի վրաց անանուն հեղինակի հորինած «Էվստաթի Մցխեթեցու
վկայաբանության», Մցխեթայից Թբիլիսի էին գալիս իրենց գործե-
րով:

XI դարի վրաց պատմիչ Լեոնտի Ռուիսեցին (Մրովելին) նշում է,
թե ինչպես պարսիկների էքսպանսիայի պայմաններում, վրաց Վա-
րազ-Բաքար թագավորի օրոք, ասել է մ.թ. IV դարում վրացիները,
հայերի խնդրով, բացեցին Կովկասյան լեռնաշղթայի անցքերը, դուրս
բերելով Հյուսիսային Կովկասից օսերին և լեզգիներին, որոնց մղե-
ցին պարսիկների դեմ: Իսկ պարսիկները նախ ներխուժեցին Հայաս-
տան, ապա Քարթլի, և պարսից զորագլուխը «կառուցեց Տփխիսն,
անցքերի միջև, իբրև բերդ ընդդեմ Մցխեթայի» (վրացերեն բնագ-
րում՝ «աղաշենա Տփիլիսի, կարթա շորիս, ցիխեդ Մցխեթիսա»):

Այս կարևորագույն վկայությունը հետագա վրաց պատմիչնե-
րի կողմից, սկսած XII դարից, աղավաղվել է այնպես, որ իբր թե
Լեոնտին ասել է, թե «պարսիկները շինեցին բերդ Տփխիսի դռան՝
Մցխեթայի» (այսպես է, ի միջի այլոց, և վրաց տարեգ-
րության XII դարի վերջերի հայերեն թարգմանության մեջ՝ «Պար-
սիկք շինեցին բերդ ի դրանն Տփխեաց՝ հակառակ Մցխեթոյ») և
այդ բերդը իբր կոչվել է «Շուրիս ցիխե», այսինքն Նախանձի բերդ:
Մինչդեռ վրաց պատմիչը հիշյալ մեջբերումի տեքստում ընդգծում
է, որ պարսիկները կառուցեցին Տփխիսին անցքերի միջև, իբրև բերդ
ընդդեմ Մցխեթայի (վրացերեն «շորիս» բառը, որ մակբայ է և նշա-
նակում է միջև,) կարդացվել է իբրև «շուրիս», որը սեռական հոլովն
է «շուրի»՝ նախանձ բառի և, կապվելով հաջորդ «ցիխե»՝ բերդ բառի
հետ, տվել է բարդ բառ՝ «շուրիս-ցիխե»՝ նախանձի բերդ. կատարյալ
անհեթեթություն): Իսկ անցքեր բառի հոգնակի սեռական-տրականը
(վրացերեն «կարթա», եզակի՝ «կարի») այստեղ գործածված է ո՛չ
թե «Տփխիսի դռան», այլ Կովկասյան լեռնաշղթայի դռների, ուղիղ
ասած՝ անցքերի իմաստով, որպիսիք էին Դարիալան-Դարիայի կիր-

ճը և Կասպից կամ Ծորա-Ծողա (Դերբենտի) պահակը, որով, ըստ հիշյալ պատմիչի, հյուսիսից հարավ անցնում էին օսերն ու լեզգիները: Այս անհեթեթությունը, դժբախտաբար, այսօր էլ կրկնում են գործին անծանոթ և հին վրացերենին անտեղյակ «պատմաբանները»:

Ինչպես նույն պատմիչը, այսինքն՝ Լեոնտին, և այլ սկզբնաղբյուրներն են վկայում, Թբիլիսիի բերդը սկզբից ևեթ կոչվել է Կալա կամ Ղալա, հետագայում Նարիղալա, իսկ կից հարթավայրը՝ Կալայի դաշտ: Եվ այս իմաստով է, որ երբ «Քարթլիի դարձի պատմությունը» (IX դ.) խոսում է թագավորական իշխանության վերացման մասին Քարթլիում (523), նշում է, որ «Մցխեթան նսեմանում էր, և Տփղիսին կառուցվում, Արմազին նվազում էր, և Կալան ուժեղանում»: Այսպիսով, Թբիլիսին, իբրև նոր մայրաքաղաք, հակադրվում է Մցխեթային, իսկ Կալան, իբրև Թբիլիսիի ամրոց՝ Մցխեթայի նեցուկ Արմազիին:

Իբրև փաստ պիտի շեշտել նաև, որ Թբիլիսիի հնագույն եկեղեցին կառուցվել է ո՛չ թե Կալայի մոտ, այլ նախկին Մադաթովյան կղզու, թե թերակղզու, հնում՝ «Ջալիսսա»–«Ջալիսայի« մոտ, ուստի և կոչվել է «Ջարիսա», հետագայում վերանվանվելով «Անչիսխատի»-ի:

Մյուս հնագույն եկեղեցին Թբիլիսիում, անկասկած, Սիոնն է՝ Թբիլիսիի միտրոպոլիտի աթոռանիստը (քանի որ կաթողիկոսինը շարունակում է մնալ Մցխեթան, որի վանատունն էր Ջարիսա–Անչիսխատին): Սրա կառուցումը սկսվել է, ըստ «Վրաց դարձի պատմության», Գուրամ Կուրապալատի օրոք (575–690) և ավարտվել է Ադարնասե–Ատրներսեհի ժամանակ (619–639), բյուզանդական Հերակլ կայսեր ներխուժման նախօրյակին: Այդ կառուցվածքը մինչև մեզ, դժբախտաբար, չի հասել. այժմյան Սիոնի տաճար, հաստակակից և նմանատիպ լինելով Գելաթիի տաճարին՝ իբրև արևելյան կողմից դրսից չեշտըված եռաբսիդ և քառայուն, եռանավ գմբեթակիր կառուցվածքը, XII դարի երկրորդ քառորդի գործ է համարվում:

VI դարում Թբիլիսիում ակտիվ դեր է խաղում Կիրակոս անունով գործիչը, որը համաձայն հայ պատմիչ Ուխտանեսի, հավասարապես հմուտ էր թե՛ հայոց և թե՛ վրաց լեզուների և մի տեսակ կամուրջ էր հայ և վրաց մտավորականների միջև (3):

Նույն VI դարի կեսերին, մոտավորապես 545 թ. Թբիլիսի է մուտք գործում հայ իմաստասերներից մեկը, հռչակված «Դավիթ

Անյաղթ» անունով, որը, համաձայն հայ իմաստասեր Առաքել Սյունեցու տեղեկության, հալածվելով Հայաստանում, ապաստան է
գտնում Վրաստանում: Գործելով Թբիլիսիում իբրև «սորի հայր»
Դավիթ, նա այստեղ ևս ենթարկվում է հալածանքի և քարկոծման,
ապա՝ մեկուսանալով «Գարեսջայի բազմալեռանց» անապատները
և արծարծելով «իմաստնոց արտաքնոց» (գարե սջա) ուսմունքը, իբ-
րև միակ hայախոս անապատական ցմահ մնում է այստեղ (582),
թողնելով հիշատակ այն մասին, որ ինքը եղել է «անյաղթ փիլի-
սոփա», ինչպես իրոք կարդացվում է նրա գերեզմանի շրջապատում
եղած բազմաթիվ հայերեն արձանագրություններից մեկում:

VII դարի սկզբներին (628) Թբիլիսին ենթարկվում է հույն-
բյուզանդացիների (Հերակլ կայսեր առաջնորդությամբ) և նրանց
դաշնակից հոների ու խազարների (Ջեբու-խաքանի գլխավորութ-
յամբ) պաշարման, որի մանրամասն նկարագրությունը տալիս է
նույն դարի հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացին իր «Աղվանից
պատմության» մեջ:

Նշելով, թե ինչպես թշնամիք «պատեալ պաշարէին փափկասուն,
վաճառաշահ, հռչակաւոր մեծ քաղաքն Տփղիս» (գլ. 11), որտեղից
նրանք տարել էին կողոպտած «զբաժակս և զըմպելիս արծաթեղէնս
յոսկի համակեալս» (գլ. 14), պատմիչը, ի միջի այ-
քանդակունս լոց, կանգ է առնում մի դեպքի նկարագրության վրա, որը վրաց
թատերագետները սովորաբար օգտագործում են իբրև նյութ վրաց
թատրոնի պատմության շարադրման համար: Դա այն «խաղն» է,
որ թբիլիսեցիք «խաղացել են» «յաչս» հույն-բյուզանդացիների և
հոների ու խազարների, և որի նկարագրությունն, իրոք, կարևոր
աղբյուր է արվեստի պատմության համար: Ահա այդ նկարագրութ-
յունը.

«Եւ եղև իբրև լուան բնակիչք քաղաքին զլքանել վատնել նոցա,
առաւել հպարտացան յանձինս իւրեանց և սկսան զպատճառ կորս-
տեան իւրեանց զխաղն խաղալ:

«Բերէին դդում մի մեծ. նկարէին ի վերայ նորա պատկեր թագա-
ւորին հոնաց կանգուն մի յերկայն և կանգուն մի ի լայն. և զտեղի
արտևանաց աչացն յոտ մի ծրագրեալ, որ ոչ կարէր նշմարել և զտե-
ղի մուրուացն լերկս ժպիրհս. և զտեղի շնչաւոր քթիցն թիզ մի լայն
թուով մազից պէրևէշտէից, զոր թէ ոք կարէր ճանաչել:

Եւ բերեալ եդեալ ի վերայ պարսպին յանդիման նոցա՝ աղա-
ղակէին առ զօրսն և ասէին. «Ահաւասիկ կայսր թագաւոր ձեր,
դարձարուք երկրպագէք սմա՝ Ջեբու խաքան է սա»: Եւ առեալ

*գեղարդ ի ձեռն՝ ծակոտէին յանդիման նոցա զդդումն՝ զնմանե-
ցուցեալն ի պատկեր նորա: Նոյնպէս և զմիւս թագաւորն ձաղէին,
ծաղր առնէին, այպանէին, պիղծ և արուագերծ կարդային:*

*«Զայս տեսեալ և լուեալ թագաւորացն՝ քինանային, փքանային,
ոխս մթերեալս ժողովէին ի սիրտս իւրեանց, շարժէին զգլուխս և
մեծաւ նզովիւք զանձինս իւրեանց, թէ և ոչ հոգի մի ապրեսցի յա-
մենեցունց, որք են ընդ թագաւորութեանց նոցա, մինչև խնդրեսցի
վրէժ նախարարացն այնոցիկ, զոր ծաղեցան նոքա ի նոցանէ: Եւ
դարձուցեալ զերեսս իւրեանց՝ նովին սպառնալեօք գնացին» (գլ.
II):*

*Արաբական տիրապետության ժամանակ՝ VII–XII դդ. ընթաց-
քում, Թբիլիսին դառնում է կենտրոն սկզբում Խալիֆաթից կախ-
յալ, ապա կիսանկախ և վերջապես նրանից գրեթե անկախ ամիրա-
յության, մինչդեռ Քարթլիի մայրաքաղաքը, ուր նստած էին վրաց
իշխան-ազգապետները (էրիսմթավարի), դառնում է Ուփլիս-ցիխե
վիմափոր քաղաքը՝ այժմյան Գորիի մոտ:*

*Այս ժամանակներին է վերաբերում Աբո Թբիլիսեցու (Թբիլելիի)
մարտիրոսությունը VIII դարում 786–790 թ.թ., որի կապակցութ-
յամբ Իոանե Սաբանիս–ձեի հորինած վկայաբանության մեջ տրված
են հին Թբիլիսիի տեղամասերի անունները. 1. «Քառասնից եկեղե-
ցի» (ორმეოცთა ეკლესია), որը հետագայում՝ վրացերենից հույների
և հույներից՝ հայերի ձեռն անցնելով՝ XIII դարից կոչվել է «Բերդի
փոքր եկեղեցի»՝ նույն «Հրեշտակապետաց» (իբրև Սանահնի վանքի
վանատուն) (4): 2. «Սագոդեբելի» («գոդեբա»* ողբալ *բառից), որը
հին գերեզմանատունն էր, Սիրաջխանա–Սաղի սկզբում: 3. «Սադի-
լեգո» («գիլեգ»* դդմակ, ամրոց *բառից), այսինքն հետագա Մետեխին:*

*IX–X դ.դ. արաբացի աշխարհագիրներն ու պատմիչները՝ Ալ-Իս-
թահրին, Իբն-Խաուքալը և ուրիշները թողել են մանրամասն նկա-
րագրություններ Թբիլիսիի, մասնավորապես նրա հանքային բաղ-
նիքների, որոնք, ըստ նրանց արտահայտության, «նման են Տիբե-
րիադայի բաղնիքներին» և որոնց «ջուրը եռում է առանց կրակի»:
Նույն արաբացի գրողները նկարագրում են և Կուր գետի վրա շար-
ված լողուն (շարժական) ջրաղացները:*

*X դարի պատմիչ Թովմա Արծրունին իր «Պատմութիւն Տանն
Արծրունեաց» աշխատության մեջ (2,9) տալիս է Թբիլիսիի նկա-
րագրությունը՝ Բուղա-Թուրքի 853 թվականի արշավանքի մասին
խոսելիս: «Եւ հրաման ետ (Բուղա) հասանել ի վերայ քաղաքին*

Տփղիք[1] *կոչեցեալ, որում յառաջագոյն Փայտակարան անուանէին.
և ի փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա, պարիսպք և պա-
տուարք և ապարանք նոցա և ամենայն տուն բնակաց քաղաքին և
ամենայն կազմած պատրաստութեան նոցա»:*

*Նույն պատմիչը՝ «աւելորդ» համարելով «մի ըստ միոջէ զանօրէ-
նութիւն քաղաքին ընդ գրով բացայայտել, զառաւելեալն Սոդոմայ
և Երիքովի լցեալ չարագործութեամբք» (հասկանալի է՝ օտար տի-
րապետության պայմաններում–Լ. Մ.-Բ.), կանգ է առնում Բուղայի
արշավանքի վրա, որի ընթացքում խոսում է, ի միջի այլոց, «քաղա-
քապետ Սահակի (Իսմայիլյանի)» կալանավորման և, սրա առնչութ-
յամբ, նրա կնոջ գործելակերպի բնութագրման մասին:*

*Սկսած Թովմա Արծրունուց Թբիլիսին հայ մատենագրության
մեջ (Կեղծ-Շապուհ Բագրատունի, Հովհ. Երզնկացի, Մատթեոս վար-
դապետ, Հովհ. Ծարեցի, անանուն ժամանակագիրներ, Սերոբ գրիչ,
անանուն ողբասաց Թբիլիսիի, Խ. Աբովյան և այլն) հիշվում է սո-
վորաբար երկու անունով. մեկը՝ Տփղիս (Տփղիք)–Տփխիս–Թիֆ-
լիս, մյուսը՝ Փայտակարան: Առաջինը, անտարակույս, վրացերեն
«Տփլիսից» է, իսկ երկրորդը եթե «Փայտակարանից» չէ, կարող
է կրկնություն լինել մերձկասպյան Փայտակարան քաղաքի և նա-
հանգի անվան, որն այնտեղից եկած հայ գաղթականները կարող
էին տարածել իրենց նոր բնակատեղի՝ Թբիլիսիի վրա, ինչպես, օրի-
նակ, մեր օրոք Երևանի արվարձանները կոչվեցին հայրենադարձ
հայերի նախկին բնակավայրերի անուններով (5):*

*Թբիլիսին Խալիֆաթի ամիրայության սիստեմից վերջնականա-
պես ազատագրվելուց հետո (1122), 1123–1125 թ.թ. այստեղ Դա-
վիթ Շինող (Աղմաշենեբելի) թագավորի հրավերով գումարվում է
միաբանական վրաց-հայկական եկեղեցական ժողով՝ դավանաբանա-
կան խնդիրների քննության նպատակով: Ժողովին վրացիների կող-
մից, բացի թագավորից, մասնակցում են Հովհան վրաց կաթողիկո-
սը և ժամանակի մեծ գիտնական Արսեն Իղալթոյեցին (Իղալթոելի),
իսկ հայերի կողմից՝ «հյուսիսային կողմանց» վարդապետները Հով-
հաննես Սոփեստոս Հաղբատացու գլխավորությամբ, որոնք հենց
այստեղ, ըստ վրաց պատմիչ-ժամանակակցի վկայության, «պարծե-
նում էին նրանով, որ հասել են ուսմանց և գիտության գագաթնա-
կետին»: Եվ իրոք, հենց այս խրադարձության հանգամանքներում
Սոփեստոսը, մի վրաց եպիսկոպոսի խնդիրքով, գրում է իր «Վասն*

[1] Արհեստականորեն կազմված ձև է՝ իբրև ուղղական հոլովակի՝ «Տփղիս»-ից, որն ընդունված է իբրև հայցական հոլովակի:–Լ. Մ.–Բ.:

շարժման և սասանութեան երկրի» տիեզերագիտական-օդերևութաբանական երկը:

Սկսած 1122 թվականից Թբիլիսին ո՛չ միայն Քարթլիի, այլև ամբողջ Վրաստանի, այսինքն վրաց ֆեոդալական միապետության, մայրաքաղաքն է, որի շուրջը համախմբված և կենտրոնացված են քարթվելական (վրացական) բոլոր երկրամասերն ու ցեղերը: Եվ այս վիճակում քաղաքը մնում է մինչև մոնղոլական և թուրքմենական տիրապետությունը, երբ տեղի է ունենում Վրաստանի մասնատումը երեք թագավորությունների և հինգ իշխանությունների, որի հետևանքով Թբիլիսին վերածվում է լոկ Քարթլիի մայրաքաղաքի (մինչև 1762 թ.): 1762 թվականից Թբիլիսին Քարթլի-Կախեթի միացյալ (պերսոնալ ունիայի հիմունքով ստեղծված) թագավորության մայրաքաղաքն է (մինչև 1801 թ.):

Թամար թագուհու տիրակալության օրով (1184–1213) արքայական պալատը Թբիլիսիում տեղավորված էր Իսանի կամ հետագայում Հավլաբար կոչված քաղաքամասի Մետեխիի ժայռի վրա, և այստեղ էր գործում նաև պետական խորհուրդը՝ «դարբազին»:

1197 թ. Թբիլիսիում վերոհիշյալ «Քառասնից եկեղեցու» շուրջը և այսպես կոչված «ծռագատկի» կապակցությամբ տեղի ունեցավ մի տխուր միջադեպ, որը հետաքրքիր է ո՛չ այնքան իր էությամբ, որքան լայն արձագանքներով տարբեր գրականությունների մեջ, վրացականում՝ ըստ Թամար թագուհու անանուն պատմիչի «Թագավորների պատմականն ու գովասանքը» երկի, հայկականում՝ ըստ Մխիթար Գոշի «Գծագրութիւն յաղագս Վրաց» գրվածքի և ասորականում՝ ըստ Գրիգոր Բարհեբրեուս Աբուլ-Ֆարաջի ժամանակագրության:

1197–1204 թ.թ. Թբիլիսիում նորից հրավիրվում է միասնական վրաց-հայկական եկեղեցական ժողով՝ դավանաբանական խնդիրների քննության նպատակով: Ժողովին մասնակցում են, բացի վրաց արքունիքի և եկեղեցական նվիրապետության ներկայացուցիչներից, «հյուսիսային կողմանց» հայ վարդապետները, այս անգամ, հավանական է, Մխիթար Գոշի ղեկավարությամբ:

Թամար թագուհու ժամանակաշրջանից մեզ հասել է Թբիլիսիի միմիայն մի ճարտարապետական հուշարձան: Դա այսպես կոչված «Լուրջի մոնաստերի»-ն է, այսինքն Կապույտ վանքը, *որի ճարտարապետական առանձնահատկություններն առնչվում են Նովգորոդի տաճարներից մեկի հետ: Եվ դա հասկանալի է, քանի որ այն կառուցվել է Թամարի առաջին ամուսնության (ռուս մեծ իշխան*

Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրի-Գեորգիի հետ) տարիներին: Սրա ապացույցն է, ի միջի այլոց, եկեղեցու ճակատին ցարդ պահպանված վրացերեն գլխատառ արձանագրությունը, ուր հիշված են Քարթլիի Վասիլ արքեպիսկոպոսը (ըստ Ս. Երեմյանի կռահման՝ նույն դավանափոխ Հայոց Բարսեղ արքեպիսկոպոսը) և նրա եղբայր Աբուլասանը, իբրև առևտրական խավի ներկայացուցիչ և ռուսական օրիենտացիայի կողմնակից, որը հաջողեցրել էր այդ ամուսնությունը[2]*:*

Վրաց արքունիքի փայլի արտահայտիչներից մեկն էր Թամարի օրոք, ի միջի այլոց, ըմբշամարտը, որը կազմակերպվում էր Թբիլիսիում թագուհու պսակադրության վայրում՝ Դիդուբե արվարձանում, սովորաբար վրաց Բագրատունիների հետ խնամիաբար կապված Շիրվան-շահերի ու նրանց շքախմբի ներկայությամբ: Մրցամարտը երեք տեսակի էր. առաջինը՝ վրաց և Շիրվանի բանաստեղծների և գուսանների միջև, հանձինս Շոթա Ռուսթավելու և Նիզամի Գյանջևիի. երկրորդը՝ վրաց և Շիրվանի մարմնամարզների միջև. և երրորդը՝ վրաց փահլևանների և առյուծի միջև:

Թամար թագուհու անանուն պատմիչը պահպանել է մանրամասն նկարագրություն այս վերջին ըմբշամարտի: Նա պատմում է, որ Շիրվան-շահն ուղարկել էր Թամար թագուհուն իբրև նվեր մի կորյուն (առյուծի ձագ), որին վրաց արքունիքում սնեցին, մեծացրին և նա դարձավ այնքան մեծ ու ահավոր, որի նմանը ոչ ոք չէր տեսել՝ «ո՛չ վայրենի, ո՛չ ընտելացված (ձեռնասուն), և ո՛չ էլ լսված էր առակներում»: Ապա պատմիչը նկարագրում է կորյունի վարքը ներկայացումների ժամանակ, ճիշտ այնպես, ինչպես, «սրա մասին պատմում են հին մետաֆրաստները (սրբոց վարքագիրները) վկայաբանությանց գրքերում»: Երբ նրան բերում էին դահլիճ, այնպիսի սիրով էր համակված լինում դեպի Թամարը, որ նրան, թեև շղթայակապ էր, ոչ ոք չէր կարողանում սանձահարել, մինչև որ գլուխը կոնատակը չէր դնի, և փրփուր էր թափում երախից, ինչպես հնում մարտիրոսների մետաֆրաստներն (վկայաբանություններն) են պատմում: Իսկ երբ նրան բռնում էին ու կանգնեցնում, աչքերից աղբյուրի պես արցունքներ էր թափում գետնին:

Քանի որ վրաց արքունիքի ներկայացուցիչները, ըստ XII դարի հայ պատմիչ Գրիգոր Ակներցու (Կեղծ-Մաղաքիայի), «պարապ և

[2] Ի դեպ, նշենք, որ այս վայրը ամենասիրելի տեղն է եղել «լուսնյակ գիշերներին» զբոսնելու թե՛ Ն. Բարաթաշվիլու և թե՛ Խ. Աբովյանի համար (իհարկե, մեկը մյուսից անկախ):

անհուպ էին ի ցաւոց», նրանք սիրում էին խոսել «առ կատակա-
տանս»: Իբրև օրինակ նույն պատմիչը մատնանշում է Ռուսուդանի
որդի Դավիթ թագավորի գործելակերպը և ասում. «Իսկ բարեսէր
և գեղեցիկ թագաւորն Վրաց Դաւիթ հանապազ իւր ամենայն թա-
գաւորութեամբն կայր ի մեծ ուրախութեան և ի գինարբուս յիւր
թագաւորանիստ քաղաքն Տփխիս. և յաւուր միում էր ճաշ և ուրա-
խութիւն առաջի թագաւորին. և սովորութիւն է վրաց հանապազ
ամբարտաւանել և մեծամեծ բանս խօսել... յորժամ էին յանուշա-
ցեալ ուտել և յըմբելն» և այլն[3]*:*

XIII դարի առաջին կեսին, ըստ հայ պատմիչներ Կիրակոսի և
Վարդանի, Թբիլիսիում բնակություն է հաստատում մոնղոլական
աւերումներից խուսափած և Կարինից Թբիլիսի գաղթած «մեծա-
տուն վաճառական» պարոն Ումեկը, որը ֆինանսական օպերա-
ցիաներ է ծավալում վրաց մայրաքաղաքում, նույնիսկ նպաստելով
վրաց արքունիքին, որի կապակցությամբ հասկանալի է դառնում՝
թե ինչո՛ւ Կիրակոսը նրան հիշում է իբրև «հայր անուանեալ թա-
գաւորին Վրաց Դաւթի»:

Պարոն Ումեկի միջոցառումներից մեկն էր, ի միջի այլոց, այս-
պես կոչված «Բերդի մեծ եկեղեցու», հետագայում՝ Կաթողիկեի կա-
ռուցումը 1251 թ., իբրև ընդօրինակություն Հաղբատի Ս. Նշանի,
այսինքն միանավ գմբեթակիր դահլիճի (որը նույն Հաղբատի վա-
նատունն էր Թբիլիսիում):

Այս եկեղեցում 1284 թ. քարոզ է խոսել Հովհաննես Երզնկացին
«Յաղագս երկնային շարժմանն» թեմայով՝ աստղաբաշխության-օ-
դերևութաբանության բնագավառից, որի առաջաբանում ասված է.
«Ի թվին ՁԼԳ (=1284) պատահեաց գալ ի կողմանս աստուածապահ
թագաւորութեանս աշխահիս Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ ի մայրա-
քաղաքն ի Տփղիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց: Եվ
հանդիպեցաւ խօսել մեզ բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն՝
մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան Հայոց՝ պարոն Քարիմա-
տինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարի հոգի հայր նորա պա-
րոն Ումէկն: Եւ էր խօսեցեալ բանն՝ Յաղագս երկնային շարժմանն»:

Սիոնի տաճարի կրկնությունն է ներկայացնում արևելյան կող-
մից դրսից չեշտված եռաբսիդ և քառասյուն, եռանավ գրեթակիր
փոքր եկեղեցին Մետեխիում, կառուցված Դեմետր Բ Անձնազոհ

[3] Սիա այս բարքերի տպավորության տակ է նորերս հորինված վրաց բանաս-
տեղծ Գրիգոլ Աբաշիձեի «Լաշարելա» վեպը, որը ջերմ ընդունելություն գտավ վրաց
ընթերցողի կողմից:

կոչված թագավորի օրով (1270–1282), հավանական է, իբրև պալա-
տական կամ առանին եկեղեցի, որը ցարական իշխանության ժամա-
նակ բանտի աղոթարանի էր վերածված:

XIV դարի առաջին կեսին վերոհիշյալ պարոն Ումեկի թոռնե-
րը՝ Սուլթանշահ, Աւյուծ և Ջալալ՝ հին Ջալխա-Ջալխա-Զարխա
կոչված վայրում, որը Թբիլիսիի սաղմնավորման օրրանն էր ներկա-
յացնում, հնագույն խաչաձև (տետրակոնխ) եկեղեցուց դեպի արև-
մուտք կառուցում են եռանավ եռասեղան և երեք զույգ մույթե-
րից բաղկացած եռագմբեթ տաճար, իբրև ընդօրինակում Սանահնի
վանքի 1211 թ. եռանավ ժամատան-նախագավթի: Սրա անունն էր
Փաշավանք կամ Սոլաղենց եկեղեցի:

XVII–XVIII դ.դ. ընթացքում Թբիլիսիում շինարարությունը ծա-
վալվում է մի քանի ուղղությամբ:

Նախ՝ կառուցվում են պարիսպները քաղաքի չորս կողմից, որոն-
ցից սակայն մինչև մեր օրերը հասել էին հետևյալները. մեկը Սոլո-
լակի լեռան երկարությամբ, վերևից, «Շահիս-տախտի» Շահի թախթ
կոչված աշտարակով հանդերձ. մյուսը՝ Սեյդաբադ կամ Խարփուխ
կոչված քաղաքամասի վերջում. երրորդը՝ Փաշավանքի հյուսիսից
և այլն:

Երկրորդը՝ արքայական պալատը Մետեխիից տեղափոխվում
է քաղաքամեջը, Կուր գետի աջ ափը, Սիոն և Անչիսխատի տա-
ճարների միջև: Այստեղ հետզհետե կենտրոնանում են «Սալաղբո»
Ջրուցատեղ, զարափխանան, առանին (պալատական) եկեղեցին և
այլն: Այս կառուցվածքները, ինչպես և քաղաքի պարսպապատու-
մը, կապված են Ռոստոմ թագավորի (1632–1658) գործունեության
հետ, որի մասին մանրամասն խոսում է ֆրանսիացի ճանապարհորդ
Շարդենը 1672 թ., կցելով իր նկարագրությունը մայրաքաղաքի և
Ռոստոմի պալատական դահլիճի տեսքերի նկարները:

Երրորդ՝ շարունակվում է նոր և նոր վրացական ու հայոց եկե-
ղեցիների կառուցումը, կամ հների վերականգնումն ու վերանո-
րոգումը, որի ընթացքում նպատակ է դրվում՝ հնուց ծանոթ ոճե-
րի կրկնություն, օրինակ, հին Քվաշվեթին՝ իբրև դրսից և ներսից
գմբեթակիր տետրակոնխ. Ջվարիս-մաման՝ իբրև գմբեթակիր դահ-
լիճ. մնացածները–Բեդղեհեմ, Ս. Նշան, Ջգրաշեն, Նորաշեն և այլն՝
իբրև եռանավ գմբեթակիր բազիլիկաներ, զանգակատներ՝ Անչիս-
խատի, Բեդղեհեմի՝ եռհարկանի և այլն:

Լինելով վրացական կուլտուրայի գլխավոր կենտրոն, Թբիլիսին
միաժամանակ դարերի ընթացքում հանդիսացել է ապաստան բազ-

մաթիվ հայ գործիչների և մասնավորապես գրչության արվեստին մասնակից վարպետների, որոնք «ընդ հովանեաւ» այս կամ այն եկեղեցու արտագրել են տասնյակ ձեռագրեր, օրինակ, Կաթողիկեին կից՝ 1304, 1438, 1444, 1447, 1611, 1664, 1745 թվագրվածները, Փաշավանքին կից՝ 1634–1648, 1673, Բեդղեհեմին՝ 1437, 1643, 1665, Քառասնիցին՝ 1238, Կրծանիսին՝ 1436, Ս. Նշանին՝ 1797 և այլն, չհաշված, իհարկե, թվական չունեցող գրչագիրները: Սրանց մի մասը զարդարված է մանրանկարներով:

1709 թ. Վախթանգ VI թագավորի ձեռներեցությամբ Թբիլիսիում հիմնվում է Վրաստանի առաջին տպարանը, ուր 1712 թ. լույս ընծայվեց Շոթա Ռուսթավելու «Վագրենավորի» անդրանիկ հրատարակությունը: 1722 թ. այդ տպարանը փակվեց, և 1781 թ. վերանորոգված տպարանի հետ կապված է Կ. Պոլսից Հերակլ Բ թագավորի հրավիրած Պողոս Օհանիսյանի անունը, որը հիշվում է 1782 և 1783 թ.թ. հրատարակած գրքերում:

Մինչև 1722 թ. հիշյալ Վախթանգ թագավորի պալատական երգիչն էր Նաղաշ-Հովնաթանը, որը, դժգոհ լինելով իր հայրենի Շոռոթ գյուղից, նույնիսկ Երևանից՝ ապաստան գտավ Թբիլիսիում, ուր և հորինեց իր սքանչելի տաղը «Ի վերայ Գուրջստանայ գօզալներին»:

Բանաստեղծությունն ամբողջապես ներշնչված է Թբիլիսիի կոլորիտով, որի սկզբնական տողերն են՝

Գովեմ սրտիւ ուրախական
Թիֆլիզ քաղաքն պատուական:

Իսկ լուծ տների (2, 4, 6, 8, 10, 12) կրկներգն է՝

Վրաստանայ արմաղաններն,
Շէն Թիֆլիզու թաւաղներն:

Եսայի Հասան-Ջալալյանն իր «Աղվանից պատմության» մեջ նկարագրում է Թիֆլիսի վիճակն աֆղանների արշավանքների միջոցին: «Ի ամենափարթամ և վայելուչ քաղաքն Տփղիս..., որպէս ամենեցուն է յայտնի, բազմաշխատք վաճառականք են արք տեղւոյն և փափկասունք և գեղեցկատիպ կանայք, ուստերք և դստերք նոցա. և ըստ կենցաղոյս քաղաքավարութեան աննմանք ի բազմաց. ապարանիւք գեղապաճուճօք զարդարեալ, կահիւք և կարասեօք ուռճա-

ցեալք. և ըստ ժամանակի իշխանութեան Հայոց զամենայն սպասս
և անօթս տանց և սեղանոց նոցա զյոլովս փոխանակ պղնձոյ արծա-
թեղէնս և ոսկեղէնս էին կազմեալ, իսկ զհանդերձից և զգեստուց
զարդոց ականակուռ գիպակաց մարգարտաշարաց պայծառութիւն
գիտեա որչափ որ միտք քո բաւեն: Այլ վասն եկեղեցեացն չքեղու-
թեան և պայծառութեան զի՞նչ ասացից, զի յոյժ չքեղացուցեալ էին
ոսկեղինօք և արծաթեղինօք և գիպակօք և ամենայն կահիւք և կա-
րասեօք և անօթեղէն սպասիւք» և այլն:
Թբիլիսիի միջավայրը XVIII դարում սնեց Սայաթ-Նովայի պես
հանճարին, որի քառալեզու չգերազանցված ստեղծագործության
ծաղկման շրջանը հիմնականում ընկնում է 1740–1765 թվականնե-
րին (չհաշված 1798–1800 թ.թ. Հաղբատում հորինվածները): Նրա
խաղերից մեկը վերաբերում է Թբիլիսիի հնություններից մեկի՝
Մողնիի եկեղեցու վերանորոգմանը 1751 թ.:
Նույն ոգով էր ստեղծագործում երկու լեզվով Սայաթ-Նովա-
յի տաղանդավոր հետնորդ Շամչի-Մելքոն, որի բանաստեղծութ-
յուններից մեկը՝ «Ի վերայ աւերման Տփխիս քաղաքի գալստեամբ
Աղայ-Մահմադ-խանի» հայ եղերերգության-ողբասացության ժան-
րի չեդևրն է:
1762–1765 թ.թ. Թբիլիսիում Հերակլ Բ-ի արքունիքին կից
գտնվում է հայտնի հայ քաղաքական գործիչ Հովսեփ Էմինը:
Մոտավորապես նույն տարիներին Թբիլիսիում հիմնվում է վրաց
հոգևոր սեմինարիա, որի առաջին վերատեսուչը և փիլիսոփայութ-
յան ու քերականագիտության դասախոսն էր Բեթղի մեծ եկեղեցու
միաբան Փիլիպոս քահ. Ղայթմազյանը (Փիլիպե Ղայթմազաշվիլի),
որն իր զույգ որդիներով գլուխ է կանգնում տեղիս գիտական հա-
սարակայնության:
XVIII դարի վերջերը Թբիլիսիում մեծ անուն է հանում Նաղաշ
Հովնաթանի թոռ նկարիչ Հովնաթան Նաղաշը, որը նկարազարդում
է Հերակլ Բ-ի պալատը և Հայոց Նորաշեն եկեղեցին, ապա՝ հրա-
վիրվելով Ղուկաս կաթողիկոսի կողմից Էջմիածին՝ կատարում է
Էջմիածնի մայր տաճարի պատկերագրության վերանորոգումը:
Նույն XVIII դարի վերջը Մետեխիին կից կառուցվում է Դարիա
(Դարեջան) թագուհու ապարանքը, որի կենտրոնում աչքի էր ընկ-
նում այսպես կոչված «Դարեջանիս կոշկին»՝ Դարեջանի աշտարա-
կը: Այս ապարանքը իր աշտարակով, որն իջնում է մինչև Կուր գետի
առափնյա փողոցը, և առանին եկեղեցիով, հայտնի է «Դարիանի»
անունով:

Հին Թբիլիսիի տեսարանները և քարտեզները հայտնի են XVII դարից, դրանից են Շարդենի (1672), Տուրնըֆորի (1701), վրաց աշխարհագիր Վախուշտիի (1735), Ա. Պիշչևիչի (1785), Սերգեևի (մինչև 1795 թ.) և այլոց տեսարաններն ու քարտեզները:

Ըստ Վախուշտիի Թբիլիսին 1735 թ. բաղկացած է եղել երեք մասից ա. բուն Թբիլիսին, բ. Կալան, գ. Իսանին: Կալայի մեջ էր մտնում, ի միջի այլոց, Քարափի թաղը (Կլդիս ուբանի), իսկ Իսանին հետագա Հավլաբարն է: Դրսի թաղը կոչվում էր Գարեուբանի, որի մի մասն էր կազմում Կալոուբանին (Կալի թաղը), նույն հայերեն Տափիթաղ կոչվածը:

Ռուսաց տիրապետության օրոք, սկսած 1801 թ., Թբիլիսին հաջորդաբար նստատեղի է եղել Վրաստանի կառավարչապետի, Վրաստանի և կից երկրների կառավարչապետի, Անդրկովկասյան երկրամասի կառավարչապետի (մինչև 1844 թ.), ապա Կովկասի փոխարքայի (1844–1882), Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի (1882–1905) և նորից Կովկասի փոխարքայի (1905–1917):

Հայ ուղեգիրներից, որոնք տվել են հին Թբիլիսիի նկարագրությունը, աչքի են ընկնում Վենետիկի Մխիթարյաններ Ղուկաս Ինճիճյանը` XVIII դարի վերջում և Մինաս Բժշկյանը` XIX դարի 20-ական թ.թ., ապա Մեսրոպ Թաղիադյանը, որը եղել է Թբիլիսիում 1822 և 1834 թ.թ.: Վերջինիս, ի միջի այլոց, այստեղ եղած ժամանակ գրի է առել մի նմուշ տեղական փոլկլորից, նվիրված տկճորին, հետևապես կապված Բաքոսի պաշտամունքի հետ, որ կարդացվում է այսպես.

Ուլ էիր և տիկ դարձար,
Տկահան չարչարուեցար.
Հալուաբրի դարի զուսին
Տուինք մշակի ուսին.
Ով, ով սուրբ տկճոր,
Լուլէդ բաց, միզ ողորմիա:

XVIII–XIX դ.դ. Թբիլիսիում, ինչպես և առաջ` XII–XIII դ.դ., տարածված է եղել սպորտը: Սրա մասին որոշ գաղափար են տալիս ինչպես վրացի, նույնպես և օտարազգի ու հայ հեղինակները: Մասնավորապես Մ. Թաղիադյանը գրում է. «Սովորութիւն կայր ի քաղաքի այսմիկ վնասակար յոյժ, զոր վերացոյց տէր Ներսէս (Աշտարակեցի), զի յաւուր կիւրակէից յինանց (այսինքն` Զատկի տոնից մինչև Հոգեգալուստ–Լ. Մ.-Բ.) ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին` մարտնչէին ընդ միմեանս փայտեայ սուսերօք, մագիլ-

րակեցի), զի յաւուր կիւրակէից յինանց (այսինքն` Զատկի տոնից մինչև Հոգեգալուստ–Լ. Մ.-Բ.) ժողովեալ պատանեաց թաղից թաղից քաղաքին` մարտնչէին ընդ միմեանս փայտեայ սուսերօք, մահակօք, պարսատեօք և այլ սոցին նման գործեօք, ուստի թող թէ կէս քաղաքին միականի` պնջատ և գոնջատ լինէր, այլ և մահունք ևս ի տեղւոջն պատահէին»: Իսկ «այժմ փոխանակ այսր,–շարունակում է նույն հեղինակը,–արշաւարան հաստատեցաւ, և պատանիք մեր ոչ սակաւ հմտութիւնս ցուցանէին յայնմիկ»:

Մ. Թաղիադյանի նկարագրությունը լրացնում են Խ. Աբովյանը,
Գ. Պռոշյանը և XIX դարի այլ հեղինակներ:

Խ. Աբովյանի նկարագրությունը այսպես կոչված «չախսեյ-վախսեյի» տարբերակն է` կատարված Թբիլիսիի գյոռխանայում («Թուրքի աղջիկը»):

Գ. Պռոշյանը նկարագրում է «մուշտուկռիվը»: «Բոլոր տեղերը մուշտուկռիվ էր,–գրում է նա,–պատառոտված գլուխներ, արյունաշաղախ երեսներ, դուրս թափված աչքեր ամեն տեղ տեսնվում էին. քարեր է, որ ամեն կողմից գալիս են կարկտի պես, լուսամուտների ապակիք են փշրտվում» և այլն (Հուշեր, Բ մաս):

Մի այլ հեղինակ` Գ. Խատիսյանը նշում է. «Մեգլուխ քեփի մեջ էին... Աճկով իմ տեսի, իմ տոլ պառավնիրը սաղ օրով քուչեքումը կոճի էին խաղում, տափերումը չիլիկա-ջոխի, աթուրմա, բուրթի էին խաղում... Առուտեհան լուսանում էր թե չէ, ամեն տիղ թամաշա էր. էստի մուշտիկռիվ, էնդի կաչիլ, էստի աշուղը խալխը գլխին մոդ արած` իրա մարաքեն էր չաղեցրի, էնդի թոկի վրա ջամբազն էր խաղում, ջահիլները զուռնա-նաղարով դարփա-դարփա դես ու դեն էին գնում-գալի, էստի ղոչերուն էին մեկ մեկու հիտ կպցնիլ տալի, էնդի աքլարներուն էին կռվացնում... վո՞ւր մեկն ասիմ» («Գաբոյի ընտանիքը»): Եվ այս տողերը կարդալիս ձեր առջև կենդանանում են նկարիչ Խոջաբեկովի շորիկները:

Տարեցտարի բարեկենդանի (վրացերեն` ղվելիերի, ռուսերեն` масляница) շաբթին, սկսած XVIII դարի վերջերից, Թբիլիսիում փողոց-փողոց և կենտրոնական հրապարակներում կատարվում էր մի կատակերգություն, որ հայտնի է «ղեենոբա» անունով: Դա ծաղրական խաղ էր, որի կենտրոնումն էր ուղտի վրա բազմած ղեենը, այսինքն 1795 թ. Թբիլիսին ավերող Աղա-Մահմադ-խանը: Այս կատակերգությունը կատարվում էր մինչև մեր դարի սկզբը, և այն վարպետորեն օգտագործված է նկարիչներ Ա. Շամշինյանի և Գ. Շարբաբչյանի համապատասխան մեծ կտավներում:

Խ. Աբովյանի մանր գրվածքներից շատերը, օրինակ, «Թուրքի աղջիկը», «Հազարփեշեն», «Ունայնություն աշխարհի», «Առ հանդես ուխտի ի սուրբ լյառն Մթածմինդա», «Վերջին հրաժարական քաջազոր արքային Հերակլի» և այլն, առանձին -առանձին վերցրած՝ հաջող կտավներ են հին Թբիլիսիի կյանքից, որոնց այժմ ավելանում է «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին» էտյուդը (գրված գերմաներեն 1846–1847 թ.թ.): Այստեղ մեր մեծ լուսավորիչը հաղորդակից է դարձնում ընթերցողին իր տպավորությանը՝ Թբիլիսիի արագ զարգացման և կերպարանափոխման մասին. «Ով տասը տարի սրանից առաջ (հետևապես Խ. Ա.-ի Դորպատից վերադառնալուց հետո. –Լ. Մ.-Բ.) Թիֆլիսը տեսել է, հազիվ թե իր աչքերին հավատա, որ մի քաղաք, որ ոչ այլ ինչ էր, քան մի աղբակույտ, կարճ ժամանակի ընթացքում կարողանար այսպես արագորեն փոխվել»:

Օգտվելով առիթից, չենք կարող չհիշել, որ Խ. Աբովյանի «Թուրքի աղջիկը» պատմվածքը, ելակետ ունենալով Թբիլիսիի «թագավորական ամառնային այգին», ուր ինքը երբեմն զբոսնելու էր գնում (իհարկե, մինչև 1843 թ.), միակ գրավոր աղբյուրն է Թբիլիսիի բուսաբանական այգու նախապատմության համար, որը հիմնվեց 1845 թ. հիշյալ «թագավորական» այգու տեղում:

Թբիլիսիի կենցաղի պայմաններով կարելի է, ի միջի այլոց, բացատրել նաև այն մոտիկությունը, որով Խ. Աբովյանի ստեղծագործությունն ընդհանուր առմամբ առնչվում է Ն. Բարաթաշվիլու ստեղծագործությանը (թեմատիկայով), ինչպես և Ղ. Աղայանինը՝ Յա. Գոգեբաշվիլու ստեղծագործությանը (ընդհանուր ուղղությամբ):

Հայերը Թբիլիսիում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից, սկզբում իբրև արհեստավորական և առևտրական խավերից բաղկացած գաղութ, որին սպասարկում էին անվանի թե անանուն գրչի մշակներ և եկեղեցականներ: Սակայն հայերի ներգաղթը Թբիլիսի առանձնապես ուժեղացավ Անիի կործանումից հետո և ավելի ուշ, երբ գաղթականների շարքերում, բացի արհեստավորական և առևտրական խավերից, կային և գյուղացիներ: Այդ գյուղացիները մասամբ հաստատվեցին Իսանի (Հավլաբար) քաղաքամասում առանձին-առանձին հատվածներով՝ Շամքորից՝ XVIII դարի երկրորդ կեսին, Էջմիածնի շրջանից՝ XIX դարի սկզբին և այլն: Եվ այս է պատճառը, որ նրանց եկեղեցիներն էլ ըստ այնմ

կոչվեցին «Շամքորեցոց», «Էջմիածնեցոց» և այլն:

Վրաց մեծ գրող և հասարակական գործիչ Իլյա Ճավճավաձեն հատուկ ակնարկ ունի գրած շամքորեցի հայերի վիճակի մասին Թբիլիսիում: Հերակլ Բ թագավորը, վերադառնալով Շամքորի պատերազմից, ինչպես նշում է Ի. Ճավճավաձեն, ղզլբաշներից ավերված մի քանի հայ ընտանիքներ փոխադրում է Թբիլիսի և բնակեցնում իր ամուսին Դարիա թագուհուն պատկանող կալվածքում, որը Հավլաբարումն էր գտնվում: Սրանց հատկացվում են վարելահող և արոտավայրեր. այս համայնքը 1837 թվականին բաղկացած էր 56 ծուխից, ընդամենը 332 հոգի, որոնք իրենց միջոցներով բարեկարգել էին իրենց նոր բնակատեղին, անցկացնելով ջրմուղ, կառուցելով քարուկրից ջրի ավազան, գոմեր, ախոռներ և այլն: Սրանց տարեկան եկամուտը հասնում էր 4.500 ռուբլու:

Քաղաք Թբիլիսիի կենտրոնը դարերի ընթացքում տեղից տեղ էր անցնում: Եթե այդ կենտրոնը ըստ մեր կռահման մինչև V դարը պիտի լիներ Ձալիսա–Ձելիսի–Ձարիսա, այսինքն նախկին Մադաթովյան կղզին, թե թերակղզին, ապա V դարից և մինչև XVIII դար այդպիսին եղել է հանքային բաղնիքներին կից հրապարակը (Մեյդանը, հետագայում՝ և Շայթան-բազար կոչվածը), իսկ XVII դարից սկսած «Սալաղբո» Զրուցատեղ *կոչված հրապարակը (հետագայում* Экзаршеская площадь, *այժմ Հերակլ Բ-ի), արքունիքին կից: Երևանի գրավման (1827) առնչությամբ Դրսի թաղի հարթավայրը վերածվում է հրապարակի և կոչվում «Երևանյան հրապարակ»* (Эриванская площадь), *ուր մի կողմից քաղաքային վարչության շենքն էր, իսկ մյուս կողմից՝ հետագայում թատրոն-քարվանսարայի շենքը, որ հրդեհից ավերվելով վերակառուցվեց իբրև Թամամշյանների քարվանսարա:*

Հետաքրքիր է Րաֆֆու տպավորությունն այս վերջինի մասին («Մինն այսպես, մյուսն այնպես» վեպում):

«Այդ քարվանսարայի սրտումն է կառուցված Մելպոմենեի սրբազան տաճարը–Թիֆլիսի առաջին թատրոնը: Հայն ու վրացին, կովկասյան կոպիտ լեռնցին՝ առաջին անգամ այստեղ լսեցին իտալական օպերաներ, չհասկացան, բայց երկար խնդացին... Այստեղ Թիֆլիսեցին տարիներով զվարճանում էր անհամեստ բալետներով, որը միմիայն հասկանալի էր նրան...

Մի տարօրինակ համակցություն՝ քարվանսարայի մեջ թատրոն: Քարվանսարայի գրկում սեղմված էր գեղարվեստի և հանճարի թագուհին, իսկ նրա շուրջը թագավորում էր վաճառականության խա-

բերա աստվածը–Հերմեսը: Մրցությունը զգալի էր: Վերջինը հաղթեց, և մի գիշեր կրակը լափեց ամբողջ թատրոնը: Նրա տեղը բռնեցին դարձյալ խանութները»:

Ի դեպ, նշենք, որ Թբիլիսիում 1845 թ. հիմնվում է ռուս դրամատիկ թատրոնը, 1850 թ. վերակենդանանում է վրաց դրամատիկ թատրոնը, 1851 թ. բացվում է օպերային թատրոնը, իսկ 1858 թ. հայկական թատրոնը:

Իսկ որքա՞ն պատմական դեպքեր են տեղի ունեցել այս հրապարակում կապիտալիստական Թբիլիսիի գոյության ընթացքում, սկսած 1865 թ. համքարների ապստամբությունից, որի ոգեշնչողն էր Գ. Սունդուկյանը, և որի ազդեցությունը վերջինիս վրա ակներև է (Պեպոն էլ նույն ռեալ Պեպո Մամուլովն է): Այս ապստամբության արձագանքն էր Ռիո-Նելլիի, այսինքն Ն. Նիկոլաձեի թղթակցությունը՝ տպված Գերցենի «Կոլոկոլում» նույն 1865 թ., իսկ մեր օրոք Գ. Շարբաբչյանի համապատասխան սքանչելի կտավը:

Եվ որքա՞ն այդպիսի պատկերներ Թբիլիսիի բնությունից, կյանքից և կենցաղից առկա են Գ. Սունդուկյանի, Րաֆֆու, Մուրացանի, Նար-Դոսի և շատ ուրիշների գրչից ելած երկերում՝ մի կողմից, և Հովհ. Այվազովսկու, Շամշինյանի, Խոջաբեկովի, Գ. Գաբաշվիլու, Փիրոսմանիի, Գ. Բաշինջաղյանի, Լ. Գուդիաշվիլու, Գ. Շարբաբչյանի և ուրիշների վրձիններին պատկանող կտավներում՝ մյուս կողմից:

Որքա՞ն արվեստագետներ, դերասաններ, ռեժիսորներ են սպասարկել Թբիլիսիում վրաց, հայոց և ռուսաց թատրոններին, որոնք ունեն իրենց հարուստ պատմությունը:

Որքա՞ն հայ գրողների, արվեստի մշակների, հրապարակախոսների, մանկավարժների և առհասարակ մտավորականների աճյուններ է սրբորեն պահում Թբիլիսին իր հողում (6):

ИЗ ИСТОРИИ ДРЕВНЕГО ТБИЛИСИ И АРМЯНО-ГРУЗИНСКИХ КУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ

(Р е з ю м е)

В статье представлена попытка анализа сведений о Тбилиси в разноязычной литературе, в частности в грузинской и армянской за VI–XIX в.в., причем древнеармянское название, прлагаемое к Тбилиси, в виде “Пайтакаран”, по мнению автора, является искажением армянского же “Пайтакайан”, которое совпвдает с греческим “Залисса”, зарегистрированным греческим географом II в. Птолемеем; последнее же, в свою очередь, является вариантом грузинского “Дзалиси” или “Дзелиси”, означающего стоянку лесоматериалов. Название же “Шурис-цихе”, прилагаемое к крепости Кала (впоследствии Нарикала), автором статьи признается результатом досужей фантазии хронистов XII–XVIII в.в. (вследствие искажения соответствующего контекста грузинского историка XI в. Леонтия Мровели, т. е. неправильной расстановки знаков препинания и раскрытия титлов, или смешения буквы “о” с “у” инициального грузинского письма), повторяемым, к сожалению, кое-кем и в наши дни.

Перенесение на Тбилиси названия “Пайтакаран”,, под которым известны были город и область в междуречье Куры и Аракса, по мнению автора, могло иметь место с IX–X в.в., точнее с эпохи существования института арабского эмирата в Тбилиси, причем это название покрыло собою изначалное и более древнее “Пайтакайан”, адекватное грузинскому “Дзелиси”.

Особенно усилившаяся в последующие века волна армянской иммиграции в Тбилиси оставила гдубокий след в армянской литературе как в средние века (в особенности в позднее средневековье), так и в новое время.

В статье попутно даются сведения о строительстве в Тбилиси культовных, дворцовых и фортификационных сооружений, а также памятников искусства, в частности армянских, наконец и данные о видах спорта в древнем Тбилиси–на основании грузинских и армянских источников.

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔԻ 774-775 Թ.Թ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ[1]

Հայաստանի բաժանումը Մեծ և Փոքր Հայքի՝ համապատասխան նահանգներով և գավառներով այնպես, ինչպես այն պատկերացրած է VII դարի անանուն հեղինակի (Անանիա Շիրակացու՞) «Աշխարհացույցի»-ի մեջ, անկասկած, արտացոլում է Հայաստանի ռեալ իրականությունը ո՛չ թե նույն VII դարի, այլ ավելի հին ժամանակաշրջանի՝ terminus a quo *I դ. մեր թվ. առաջ և* terminus ad quem *VI դ. մեր թվ. հետո:*

Այս բաժանումը, ինչպես հայտնի է, ներկայացնում է Մեծ Հայքն իբրև 15 նահանգից բաղկացած մի երկիր, որոնց թվում հիշվում է «երկրորդ աշխարհ՝ Չորրորդ Հայք»-ը:

Սակայն այդ Չորրորդ Հայքը, իբրև Ծոփաց աշխարհի լոկ մի գավառ, երբեմն Մեծ Հայքի մեջ էր մտնում և երբեմն Փոքր Հայքի մեջ:

Իսկ անտիկ դարերի Փոքր Հայքը (և ոչ միջին դարերի ըմբռնումով, երբ նրա ներքո Կիլիկիան էր հասկացվում) երկար ժամանակ մտնում էր նախ՝ մինչև IV–V դ.դ. Արևելյան Հռոմեական կայսրության մեջ, իսկ հետո՝ V դ. սկսած՝ Բյուզանդիայի սահմաններում: Եվ այդ Փոքր Հայքի՝ 4 գավառի ստորաբաժանումը հետևանք էր, ինչպես հայտնի է, Հուստինիանոս II կայսեր վարչական ռեֆորմի, որն իր արտահայտությունն է գտել XXXI նովելլայում “De dispositione quattor administrationum Armenae” *536 թ. 17 ապրիլյան կալենդի, այսինքն՝ 18 մարտի, թվահամարով[2]:*

Չնայած, սակայն, այսպիսի անվիճելի ճշմարտության, Մովսես Խորենացին իր «Պատմություն Հայոց»-ի մեջ (I, 14) Փոքր Հայքի 4 գավառի ստորաբաժանումը առասպելական Արամին[3] է վերագ-

[1] Զեկուցված է Թբիլիսիի Ստալինի անվան Պետական համալսարանի Հայկաբանության ամբիոնի նիստին, 1947 թ. փետրվարի 11-ին:

[2] ***Н. Адонц.*** Армения в эпоху Юстиниана. СПб. 1908, стр. 165-178, մանավանդ 165-171: Corpus Juris civilis, editio stereotypa quarta, volumen tertium Novellae recognovit Rudolfus Sc. hoell. Berolini 1912, p. p. 235-239.

[3] Արամը, ինչպես այժմ պարզված է, ուրարտական թագավոր էր ժամանակակից

րում: «Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ զգաստակերտն, զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ, փոքրագունիւք պարսպեալ որմովք, անուանէին հինք աշխարհին Մաժաք, որպէս ոչ կարելով ուղղախօսել: մինչև յետոյ յիմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա: Ըստ նմին օրինակի ի տեղեացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանն, զբազում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ: Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք[4]:

«Խորենացու մոտ պահպանված ավանդությունը, որ Հայոց սահմանները նվաճումների շնորհիվ տարածվել էին մինչ Պոնտական հողերը և մինչ Մաժաք—Կեսարիա և որ ամբողջ այդ տարածության մեջ հայերեն էին խոսում, ըստ էության,—ինչպես իրավացիորեն նշել էր Ն. Ադոնցը,—արձագանքներ են իրերի դրությանը Հուստինիանոսի էպոխայի, և ոչ թե հեռավոր ժամանակների մինչ Արամ, ինչպես պատմիչն է պատկերացնում: Սա պարզ է այնտեղից, որ հիշյալ հողերի նվաճման կապակցությամբ Խորենացին հիշում է հայկական հողերի բաժանումը I, II, III և IV Հայքի, բայց համառորեն վերագրում է այն Արամի առասպելական ժամանակներին, չվստահելով այն լուրերին, որ պատում էին կայսրության մասումն Հայաստանի նշյալ բաժանման ծագման մասին»[5]:

Ի դեպ, Հուստինիանոսի XXXI նովելլան պարունակում է տեղեկություններ նրա մասին, թե ո՞ր հողերից կազմվեց, այսպես կոչված, IV Հայքը Պոնտական դիոցեզի 4 թեմերի կազմի մեջ, որոնք ընդգրկում էին, ի միջի այլոց, և սատրապիաները[6]:

«Կազմակերպում ենք ևս Չորրորդ Հայքը (τετάρτην Ἀρμενίαν), *որը մինչ այժմ զուրկ էր գավառական կազմակերպությունից: Բնակված լինելով այլ և այլ ժողովուրդներով, այն հայտնի էր այլ և այլ՝ մեզ*

Ասորեստանի Սալմանասար III թագավորի (860-825), որը հիշատակված է ասորեստանյան տարեգրություններում 860, 859 և 816 թ.թ. (Б. Б. Пиотровский. История и культура Урарту, Ереван, 1944, стр. 36, 938).

[4] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի [«Պատմագիրք Հայոց» II, 1], Տփղիս, 1913, էջ 46-47:

[5] *Н. Адонц.* op. cit., 203:

[6] *Karl Güterbock*, Römisch-Armenien und die römischen Satrapien im 4. bis 6. Jahrhundert, Königsberg 1900.

համար օտար՝ հորջորջումներով–Ծոփանենե (Τζοφανηνή). *Անձիտենե* (Ἀνζητηνή), *Ծոփանե* (Τζοφανή), *Աստիանենե* (Ἀστιανηνή), *Բալավիտենե* (Βαλαβιτηνή)–և սատրապների իշխանության ներքո էր գտնվում: Վարչապետական այս հորջորջումները հռոմայեցիներից չէին բխում և ո՛չ *էլ մեր նախորդներից, այլ մտցրած էին այլ պետության կողմից: Այս իսկ երկրում մենք մտցնում ենք քաղաքացիական կարգ, նշանակելով այնտեղ քաղաքացիական վարչապետ և տալիս ենք Մարտիրոսաց քաղաքը* (Μαρτυροπολιτῶν) *և Կիթարիս բերդը* (Κιθαρισόν)*: Այն վերաբերում է օրդինար գավառների շարքին, քանի որ այն մենք դարձրինք կոնսուլական»*[7]*:*

Այսպիսով, ինչպես նշում է Ն. Ադոնցը, «Չորրորդ Հայքին անցան հինգ ինքնավար իշխանությունների հողերը. Ծոփանենեի, Անձիտենեի, Ծոփենեի, Աշտիանենեի և Բալավիտենեի գավառները կազմեցին միասին մի գավառ Մարտյուրոպոլիս մայրաքաղաքով»[8]*: Իսկ Մարտյուրոպոլիսը կամ Մարտիրոսաց քաղաքը, ինչպես պարզված է, դա՝ Տիգրան II-ի ժամանակների Հայաստանի մայրաքաղաքն է, նույն Տիգրանակերտը, հետագայում Մայաֆարկին–Ֆարկին–Դիարբեքիրը*[9]*:*

Ընդհանրապես նովելլան ընդգծում է, որ այն հողերը, որոնցից Չորրորդ Հայքը կազմվեց, մինչև 536 թ. զուրկ էին գավառական կազմակերպությունից *և՝ բնակված լինելով* այլ և այլ ժողովուրդներով՝ *հայտնի էին այլ և այլ հորջորջումներով և գտնվում էին* սատրապների իշխանության ներքո. *իսկ վարչապետական այսպիսի հորջորջումը ո՛չ հռոմայեցիների և ո՛չ էլ նրանց նախորդների, այսինքն՝ հելլենների կողմից էր մտցված, այլ ավելի առաջ, հետևապես, պարզ է, պարսիկների կողմից:*

Հուստինիանոս II կայսեր XXXI նովելլայում նշած վարչական ռեֆորմի հեռավոր արձագանքը մենք գտնում ենք, ի միջի այլոց, Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ հետևյալ կտորում. «Ի Ծոփաց մինչև ցքաղաքն Մարտիրոսաց և յաշխարհն Աղձնեաց արևմտեայ Չորրորդ Հայք»[10]*:*

---

[7] *Н. Адонц*, op. cit., 168.

[8] Նույն տեղում, 173:

[9] ***Հ. Մանանդյան.*** Տիգրան Բ և Հռոմը, նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների, Երևան, 1940, էջ 64-68: ***Նույնի*** ՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Ա, սկզբից մինչև Արշակունիների հաստատումը Հայաստանում (66 թ. մ. h.), Երևան, 1944, էջ 170-171, և այլուր:

[10] ***Յովհաննու Դրասխանակերտցւոյ,*** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս,1912, էջ 18:

Իսկ սույն կտորի գրեթե բառացի կրկնությունը տալիս է «Գիրք Թղթոց»-ի այն վարիանտը, որ մեզ հասել է Վրաստանի պետ. Թանգարանի Armenica *հավաքածուի № 21 (=1558) ձեռագրում՝ 1318 թ., ուր կարդում ենք «[Ի Ծոփաց աշխարհէ] մինչև ցքաղաքն Մարտիրոսաց յԱղձնիս արևմտեայ Չորրորդ Հայք»*[11]*:*

Այն դրությունը Հայաստանում, որ եղել է Հուստինիանոս II կայսեր օրոք, որոշ չափով արտացոլում է հիշյալ Հովհ. Դրասխանակերտցին, երբ խոսում է Մորիկ կայսեր միջոցառումների մասին Հայաստանում վարչական նոր բաժանումներ կիրառելու ուղղությամբ. «Ապա կայսեր Մորկայ ձեռներիցութեամբ իմն փոփոխումն արարեալ անուանց աշխարհացն այնոցիկ, որ ի մերոյն Արամայ կարգաւ եղեալ էր... և Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացպօլիս, այսինքն՝ Նփրկերտ, Յուստիանունիստ, գնա գրէ ի դիւան արքունի»[12]*:*

Գեորգ Կյուպրացին իր “Descriptio orbis Romani” *երկի մեջ Չորրորդ Հայքը VI դարում ներկայացնում է այսպիսի թեմերով.*

«Ἐπαρχία Δ' Ἀρμενίας ἄλλης
Δαδίμων νῦν μητρόπολις
Ἀρσαμουσάτων
πολίχνη Χοσάνων
Χοσομάχων
Κιθαρίζων
κάστρον Μερτικέρτον
κάστρον Βαϊουλοῦος
κάστρον Παλιός
κάστρον Ἀρδῶν
κλίμα Σοφήνης[13]

Սույն երկի մեջ Մ. Խորենացու հիշված «կլիմա»-ների հետևյալ ցուցակն է ներկայացված.

---

[11] ლ. მელიქსეთ-ბეგი, სომხური "ეპისტოლეთა წიგნის ახალი ვარიანტი და პეტრე იბერიელის მოწაფე იოანე მაიუმელი.–"საქ. მუზ. მოამბე", XI–B, 1941, გვ. 41-80.

[12] ***Հովհ. Դրասխանակերտցի,*** էջ 68:

[13] *H. Gelzer*, Georgii Cyprii Descriotio orbis Romani [Bibliotheca Teubneriana], Lipziae 1890, p.p. 48-49: Մենք, դժբախտաբար, ձեռքի տակ չունեինք նորագույն հրատարակությունը. Le Synecdemos d'Hiéroklès et l'opuscule géographique de Géorges de Chypre, texte, introduction, commaintaire par Ernest Honigmann, préface de F. Cumont [Corpus Bruxellense Historiae Byzantinae], 1939 p.

κλίμα ’Ανζητινῆς
κλίμα Διγησινῆς
κλίμα Γαρνῆς
κλίμα Βιλαβητινῆς
(*κλίμα Παλινῆς)
κλίμα ’Ορζιανινῆς
κλίμα ’Αστιανικῆς
κλίμα Μουζουρῶν[14]:

Չորրորդ Հայքն իր ստորաբաժանումներով հիշված է և VII դարի Հայոց «Աշխարհացույց»-ի մեջ, որը Մ. Խորենացուն էր վերագրվում, մինչդեռ այն Անանիա Շիրակացու գործն է[15]:

Ահա այս «Աշխարհացույց»-ի համառոտ խմբագրության մեջ Չորրորդ Հայքը իր ստորաբաժանումներով ներկայացրած է այսպես. « Չորրորդ Հայք յերի կայ Բարձր Հայոց. և գաւառք են ի նմա ութ. Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բաղահովիտն, Ծոփք, Անձիթք, Գորիք, Գեգիք: Եւ ունի Չորրորդ Հայք բերդս և գետս և լերինս և բիւրեղ: Ունի և երիս և հաւս, և ձկունս, և ի գազանաց` զառեւծ»[16]:

Նույն Չորրորդ Հայքը «Աշխարհացույց»-ի ընդարձակ *խմբագրության մեջ ներկայացրած է այսպես. «Աշխարհ Հայոց. Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն, յերի բարձր Հայոց, Մելտինէ քաղաքաւ սահմանի ըստ մտից, և ըստ հարաւոյ` Միջագետովք, և ըստ ելից Տարօնով: Ունի գաւառս ութ. զԽորձայն` յելից հիւսիսոյ, ընդ որ իջանէ միւս Գայլ գետ առ Կողոբերդովն. զՀաշտէնս, յորմէ բղխեն աղբիւրք Տիգրիս գետոյ. իսկ ի մտից Խորձայնոյ` է Պաղնատուն գաւառ, հանդէպ հոմանուն բերդով. և հանդէպ նորա ի հարաւ` Բալախովիտ գաւառ. և ի մտից նոցա Ծոփք, և Անձիթ գաւառ ի հարաւ, յորում Ծովք և Հոռէ բերդ. և ի մտից նոցա Դէգիկ գաւառ, յորում բերդք Կռնի և Քրւիկ և Սոկ, որոց հանդէպ ի հարաւ է Գաւրէգ գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յԵփրատ ի քաղաքն Լուսաթառիճ, և երթալով զմտիւք` ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, յելից Մելտինէ, և ապա խառնի ի նա Կաւկաս, գալով ի մտից կուսէ*

ի լեռնէն, որ կոչի Ձիղոն Վասիթէոն, և նախ քան զանգանել նորա յԵփրատ` խառնի ի նա գետն Կառամինոն, որ գայ ի Տորոս լեռնէ և ընկալեալ յԵփրատ գնայ ընդ հարաւ, հատանէ զլեառն Տորոս, յորում տեղւոջ գտանի ակն բիւրեղ. և ունի Չորրորդ Հայք էրէս և հաւս և ի գազանաց զառիւծ»[17]:

Չորրորդ Հայքի հիշատակությունն առկա է, ի միջի այլոց, և Դիոնեսիոս Թրակացու «Արուեստ Ստեփանոս Սյունեցու (VIII դ.) բարբառքերականի»-ի մեկնության մեջ, որտեղ ժամանակի հայ բարբառների ցուցակն է ներկայացրած. «Եւ դարձեալ դքո լեզուիդ գիտելն զբովանդակ զբառսն գեղերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Հայեցին և զՍպերային և զՍիւնին և զԱրցախայինն. այլ միմիայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են»[18]: Ուրիշ խոսքով ասած, այստեղ հիշված է ութ բարբառ, որոնց ցուցակը այլ դասավորությամբ, այսինքն` արևելք-հարավ-արևմուտք ուղղությամբ` հետևյալ պատկերն է տալիս. Արցախային, Սյունյաց, Կորճեքի, Խութայի, IV Հայքի, Սպերի և Տայքի, որոնցից առաջին հինգը արաբական խալիֆաթի գերիշխանության ներքո գտնվող Հայաստանում, մինչդեռ վերջին երկուսը Բյուզանդական Հայաստանում, որտեղ հայության զգալի մասը քաղկեդոնականության ազդեցությամբ սկսել էր հունանալ և վրացիանալ (1):

Վրաց պատմիչ Արսեն Սափարացին (IX դ.) իր «Պատմություն բաժանման Վրաց և Հայոց» երկում նշում է այն փաստը, թե ինչպես Ներսես Միջին կոչված կաթողիկոսի գումարած Դվինի ժողովից (554–555 թ.թ.) անմիջապես հետո ամբողջ Քարթլին և Չորրորդ Հայքը հրաժարվեցին հայերից քահանայական ձեռնադրությունն առնելուց»[19], որը համապատասխանում է հայ մատենագրության մեջ մեզ հասած «Վասն սուրբ ժողովոյն, որ եղեն ի Հայս ի սրբոյն Գրիգորէ սկսեալ» անանուն հեղինակի գրվածքի հետևյալ տողերին. «Ի ձեռն այսր ժողովոյ Վիրք և Չորրորդ Հայք որոշեցան ի Հայոց ձեռնադրութենէ»[20]:

Չորրորդ Հայքի կացությունը VIII–IX դ.դ. պատկերելու համար`

---

[14] Ibid., p. 49.

[15] Սրա դեմ տես. *Я. А. Манандян.* Когда и кем была составлена “Армянская география”, приписываемая Моисею Хоренскому. “Византийский Временник”, т. I, (XXXVI), М. 1947, стр. 127-143.

[16] **Պրոֆ., դ-ր Ս. Աբրահամյան,** Անանիա Շիրակացու` Մատենագրությունը, Երևան, 1944, էջ 349:

[17] Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց [հրատ. Սուքիաս վ. Սիւկրեան], Վենետիկ, 1881, էջ 30:

[18] *Н. Адонц.* Дионисий Фракийский и армянские толкователи, СПб. 1915, стр. 187.

[19] **Մելիքսեթ-Բեկ.** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, Երևան, 1934, էջ 39:

[20] **Կարապետ Վ.,** Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթուղիկոս, Վաղարշապատ, 1896, էջ III, հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** op. cit, I, 57:

կարևոր է հիշել, որ այն 702 թվից անջատվել էր Բյուզանդական կայսրությունից[21]*, մտնելով արաբական խալիֆաթի սահմանները:*

995 թվին Չորրորդ Հայքում և սահմանակից գավառներում տեղի է ունենում մեծ երկրաշարժ, ինչպես վկայում է Ստեփանոս Տարոնեցին՝ Ասողիկն իր «Պատմութիւն տիեզերական»-ի III գրքի 96-րդ գլխում, որ «Յաղագս շարժման Չորրորդ Հայոց» վերնագիրն է կրում. «Ի ՆԽԴ թուականին շարժեցաւ երկիր, բայց սաստկագոյնս աշխարհն Չորրորդ Հայոց, Հաշտեանք, Խորձեան, Ծոփք, Բալու և Պաղնատուն»[22]*:*

* * *

Արաբների առաջացումը պատմության ասպարեզում VII դարու կեսից և նրանց անընդհատ պայքարը բյուզանդացիների դեմ՝ Մերձավոր Արևելքին տիրելու նպատակով, որը առաջինների հաղթանակով վերջացավ, ի միջի այլոց, այն հետևանքը ունեցավ, որ Հայաստանի տերիտորիայի մեծագույն մասը VII–VIII դ.դ. Խալիֆաթի գերիշխանության ներքո անցավ:

«Արաբական տիրապետության առաջին շրջանում խալիֆայության կենտրոնը գտնվում էր Դամասկոսում և գերիշխող դեր էին կատարում նոր աշխարհակալ պետության մեջ Ասորիքի արաբները, իսկ երկրորդ շրջանում կենտրոնը դառել էր 762 թվին հիմնված Բաղդադ քաղաքը և գերակշիռ դեր էին խաղում Իրաքի արաբները և մահմեդականության ընդունած պարսիկ ազնվականությունը»[23]*:*

Սակայն Բյուզանդիայի և Խալիֆաթի միջև շարունակվող պայքարին մասնակցում էին և հայերը, որոնք քաղաքական պայմանների շնորհիվ երկու մասի բաժանված լինելով՝ դեպի մեկ կամ մյուս դրսի պետությունն էին ձգտում. ուստի և Հայաստանի դրությունը հաճախ երկդիմի էր դառնում: Այսպիսի պայմաններում միանգամայն հասկանալի է, որ «եթե նա (Հայաստանը) հավատարիմ էր մնում խալիֆայության՝ նրան անխնա պատժում էին հույները: Իսկ եթե անցնում էր Բյուզանդիայի կողմը՝ վրեժ էին առնում արաբները»[24]*:*

[21] *М. В. Левченко.* История Византии, Краткий очерк, М–Л, 1940, стр. 118.

[22] Ստեփանոսի վարդապետի Տարօնեցւոյ, Ասողական Պատմութիւն տիեզերական, աշխատ. ***Ս. Մալխասյանց,*** ՍՊԲ. 1885, բջ 203:

[23] ***Ակադ.. Հակոբ Մանանդյան.*** Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1931, էջ 5:

[24] Նույն տեղում, էջ 7:

Հայերի բազմաթիվ ապստամբություններից արաբական տիրապետության դեմ «համազգային ազատագրական շարժման» բնույթ էին կրում 774–775 և 851–852 թ.թ. ապստամբությունները, որոնցից առաջինը նկարագրել է Ղևոնդը, իսկ երկրորդը՝ Թովմա Արծրունին[25]*:*

Հայաստանի այլևայլ տեղերում Աբդլա-Աբու-Ջաֆարի օրոք ծագած ապստամբությունները արձագանք էին գտել Արճեշում, Կարին, Արծնում և այլուր, ինչպես վկայում է Ղևոնդը («Պատմութիւն»):

Նույն Ղևոնդը («Պատմութիւն», գլ. 37) միաժամանակ մատնանշում է մի հանգամանք, որը փոքրիշատե թեթևացրել էր համաժողովրդական ծանր լուծը:

«Եւ յետ այսորիկ յաջորդէ զիշխանութիւն նորա (Աբդլայի) Մահմետ Մահադի որդի նորա: Եւ սա էր ազնուական քան զհայր իւր և լաւագոյն բարուք: Եբաց զամենայն տունս գանձուց զորս աղխեալ պահէր ամբարիշտն Աբդլա, և բաշխեաց պարգևս զօրաց իւրոց: Համարձակեաց և զդրունս մարգից հանել զվաճառականս ի վաճառս իւրեանց և լնուլ զպէտս կարօտելոց. և եղև առատութիւն երկրի, և գիւտ արծաթոյ ընդարձակեցաւ. և բնակչաց երկրի անդորրութիւն եղև ի հարկապահանջ բռնութեանցն. զի թէպէտ և զանուր լծոյ հարկին ծանրացոյց՝ սակայն վասն գիւտի արծաթոյն հանգեաւ երկիրս առ փոքր մի ի չար տառապանաց վտանգին. քանզի և լերինք արծաթոյ յայտնեցան յաշխարհիս Հայոց առ ի հանել ի նոցունց խանութս արծաթոյ զտոյ ի պէտս մարդկան յաւուր իշխանութեան նորա»[26]*:*

Ղևոնդի վկայությունը, դժբախտաբար, չի պարունակում կոնկրետ ցուցմունքներ Հայաստանի այն վայրերի մասին, որտեղ գտնվելիս են եղել արծաթի հանքեր և որոնք նյութական բարօրության աղբյուր են ծառայել հանքագործների համար, այն հողագործ հանքագործների, որոնց վրա ծանրացել էին արաբական զավթիչների հարվածները:

Սակայն այն, ինչ որ լռության է մատնված Ղևոնդի մոտ, լրացնում է VIII դ. ասորա-հակոբիկ տարեգիր Կեղծ Դիոնեսիոս Թել-

[25] Նույնը նաև՝ ***Համո Հարությունյան.*** «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը (պատմական տեսություն). «Սասունցի Դավիթ», հոբելյանական ժողովածու, Երևան, 1939, էջ 245-266, ***Ս. Պողոսյան,*** Պատմական ակնարկ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսի ժամանակաշրջանի մասին. «Սասունցի Դավիթ» 1000, Երևան, 1939, էջ 195-200:

[26] Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, երկրորդ տպագրութիւն, ՍՊԲ, 1887, էջ 154-155:

Մահրացին, որը մանրամասըն մկարագրում է Չորրորդ Հայքի Տուտխս կոչված վայրում 774–775 թ.թ. ծագած ապստամբությունը, երբ Ռազինը անցավ Արզունով և Մայֆըրկաթով[27]*:*

«Արզուն»–«Արզոն»-ը՝ դա, անկասկած, ասորական ձևն է այն գավառի անվան, որին արաբերենում համապատասխանում է «Արզան», հունարենում «Արձանենե» (Պրոկոպիոս Կեսարացու մոտ), լատիներենում «Արզանենա»–«Արզանիանա» (Ամմիան Մարցելինի մոտ), հայերենում «Արզն-Արզյուն» կամ «Աղձն»–«Աղձինք»[28]*:*

*Ասորական ձև է ներկայացնում իրենից և «Մայֆըրկաթ» քաղաքի անունը, որին հայերենում համապատասխանում է «Նփրկերտ», այսինքն՝ «Ֆարկին». «Մայաֆարկին» կամ Մարտիրոպոլիսը–Մարտիրոսաց քաղաքը (*Martyropolis*), երբեմնի Տիգրանակերտը (*Tigranocerta*)*[29]*:*

Առանձին ուշադրության արժանի է Կեղծ-Դիոնեսիոսի այն ցուցմունքը, որ «այն վայրը, ուր ծագեց ապստամբությունը, գտնվում էր լեռներում, հյուսիսային շրջանում, որ կոչվում էր Տուտխս, որի ազգաբնակությունը բաղկացած էր ասորիներից և ուրտիացիներից, որոնք բաժանած ունեին այդ շրջանը», այսինքն՝ Չորրորդ Հայքը:

Մենք, դժբախտաբար, զուրկ ենք հնարավորությունից որևէ բան ասելու Տուտխսի մասին, քանի որ չգիտենք այդ անվան համանիշները հունական և հայկական աղբյուրներում, ևս առավել՝ նրա այս կամ այն կետի հետ ունեցած լոկալիզացիայի մասին:

Համեմատաբար ավելի բարդ է խնդիրը այն ժամանակվա Չորրորդ Հայքի ազգաբնակության կազմի մասին, որն ըստ Կեղծ-Դիոնեսիոսի ասորիներից և ուրտիացիներից է եղել բաղկացած: Սա նշանակում է, որ VIII դարում Չորրորդ Հայքի հայությունն արդեն նոսրացել էր, գուցե և չքացել էր, մասամբ գաղթելով այլ տեղեր, մասամբ էլ ձուլվելով շրջակա ազգությունների հետ:

Անկախ սրանից, ուրտիացիների պրոբլեմը հատուկ քննության արժանի է:

*«Վարք Մարութա եպիսկոպոսի» (V դ.) հու-
խոսելով ասորական*

[27] Chronique de Denys de Tell Mahré. Quatrième partie. Publiée et traduite par J. B. Chabot, Paris, 1895. p.p. 172-176 (208-212).

[28] ***H. Gelzer,*** Georgii Cyprii Descriotio orbis Roman, p. 165. H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Strassburg, 1904, S. 249-250. ***Հ. Հյուբշման.*** Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 167-169. ***Ս. Կանայեանց.*** Անհայտ գավառները հին Հայաստանի, Վաղ., 1916, էջ 17-28:

[29] ***Հ. Մանանդյան.*** Տիգրան Բ. և Հռոմը, էջ 61-68, ***Նույնի՝*** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. I, էջ 170-171 և այլուր: “Klio”, VIII, 1908, p.p. 497-520:

չարձանի մասին, մենք դեռևս 1942 թվին նշել էինք, որ այս վարքը, «անկախ այն հետաքըրքրությունից, որ նա գրավում է Մարութա (մար-Ութա) անվան ստուգաբանության կապակցությամբ, հիշատակելի է այն աղբյուրների շարքում, որտեղ խոսվում է ոտացոյց, հայերեն թարգմանությամբ ոտայեցւոց երկրի մասին», որտեղից «Ոտայ անուն քրմապետ[ն]... էառ իւր կնութիւն զդուստր ուրումն ի նախարարացն Հայոց՝ Մարիամ կոչեցեալ»[30]*: Ամենայն կասկածից դուրս է,–գրում էինք մենք նույն տեղում,–որ այս հուշարձանում հիշված ոտայեցոց երկիրը ոչ մի կերպ չի կարելի նույնացնել էտիունի.–Ոտենե–Ուտիքի հետ, որ լավ հայտնի է աղբյուրներից, քանի որ այդպիսին կարծվում է Տիգրիսի շրջանում... և, հետևապես, ոտայեցիք այս դեպքում ոչ մի առնչություն չունեն ուտիացիների կամ ուդերի հետ»: Ընդսմին «այսպիսի եզրակացությունը բխում է, ի միջի այլոց, և այն փաստից, որ Կեղծ Դիոնեսիոս Թել-Մահրացու ժամանակագրության մեջ ուրտիացիք ասորիների հետ միասին հիշատակված են իբրև բնակիչներ Տուտխսի շրջանի, որը Չորրորդ Հայքումն էր գտնվում, և որոնք մասնակից էին պարսկական (արաբական) բռնակալների դեմ ծագած ապըստամբության»*[31]*:*

Ուրտիացիների խնդիրն անկախ Կեղծ-Դիոնեսիոսի տվյալներից, հատուկ քննության է ենթարկված մեծագույն հայգետ, Վիեննայի Մխիթարյան Հակովբոս վ. Տաշյանի կողմից, որը հարուստ պատմական աշխարհագրական տվյալների օգտագործումով հետևյալ եզրակացությունների է հանգել.

«Գէորգ Կիպրացի գիտէ «երկու ժողովուրդ, որոց մին կը կոչուի խուժեցիք և միւսը Սանասանք», նոյն միջոցին Ասորիք գիտեն և կը յիշեն ճիշտ Հանծիթի մէջ Ուրտիցի *ժողովուրդը մը (ասոր.* Urtâyê, *յն.* 'Ορταίοι*), ուստի «*Որտ*» ժողովուրդ մը, որուն համար բացայայտ կ'ըսուի թէ հայերէնէ և ասորերէնէ* բոլորովին տարբեր լեզու մը կը խօսէր *տակաւին այն ատեն: Աւելի ուշ ալ՝ ևս աւելի անդին՝ Արաբացիք կը յիշեն Խուժի մէջ (զորոնք նաև Թովմ. Արծրունի, Պատմ. Ե., է շատ «խրթին» կը գտնէր և կը համարէր «գրեահք Ասորւոց», որոնք Ազրամելեայ և Սանասարեայ հետ եկած ըլլան. ուստի «Սանասնայք» կ'անուանուին են) կը յիշեն «Խուժեցի» (գրուած «Խովայթ-եցի») բարբարոս ժողովուրդ մը՝ բնակած լեռնագաւառի մը մէջ՝ որ կը կոչուէր* Էլ-Արթուն*, զոր Նէօլտեկէ լաւ ևս կը կարդայ*

[30] Լիակատար վարք և վկայաբանութիւնք սրբոց, I, Վենետիկ, 1810, էջ 585-586:

[31] ***Л. Меликсет-Беков,*** К истории удин (Utica-Armeniaca) “Труды Тбил. гос. унив., XXIII, 1942, стр. 46-47.

Էլ-Ուրթայ *(=ասոր.* Ortâyê*) Տոմաշեկ («Սասուն և Տիգրիս աղբերաց սահմանները» են, թրգմ. Հ. Բառն. Պիլէզիկճեան, Վիեննա, 1896, էջ 12, 28–29 են) միայն տարակուսական կը գտնէ թէ Հանձիթի «արամայեցի» Ուրտեցիք մինչև Տարօն ու Բաղիշու կողմերը կրնային տարածուած ըլլալ են: Ինչ ալ ըլլայ Զ., և նաև Ժ. դարուն կային* Ութտացիք *կամ* Որտացիք*՝ ինքնուրոյն լեզուաւ, զոր չէին հասկընար Հայք և Ասորիք և սորվիլ ստիպուած էին (հմմտ.* Nöldeke-*ի,* ZDMG, XXXIII, 163 ff.*) հետևաբար ո՛չ հայ և ո՛չ արամէացի ցեղով, թէև յետոյ հայացած ու ասորացած, բայց թերևս աւելի քրտացած ըլլան*[32]*: Զիարդ և է, արդէն Ենսէն այս Ուրտացիք կը կապէր հին* Ուրարտուի *բնակչաց հետ, զոր Հիւբշման (անդ) «շատ ապահով» կը գտնէ: Բայց այժմ նաև Մարքուարտ*[33] *ողղակի մնացորդ կըսէ հին Ուրարտեանց պետութենէ ետքը ցրուած՝ Հայոց մտնելով՝ նախկին տիրող ժողովրդեան և անունը հետևապէս հին Ուրարտու անուան համառօտում մը* Որտ -, *ինչպէս այս Ասորեստ. «Ուրարտու», Դարեհի բաբելական «Ուրաշտու» (ուղղելի* Ուրալ-տու*) ունի ձևերս ալ, երբ.* «Արարատ» *էլ (Հերոդ. Գ. 94, Է. 79),* «Ալարօտ. ք» *և ի վերջոյ · հայ.՝* Այրարատ *: Այժմ Կարստ (անդ՝ 411) կը վճռէ՝ այս տակաւին Ժ. դարու ապրող Ուտայեցիք միայն* «սումերեան ակկատեան *ցեղէ կրնա ըլլայ», և այնպիսի տեղ մը (Անձիտ, Սասուն, Խույթ), ուր Սագասարի գրոյցի ապարէզն է»*[34]*:*

Ի վերջոյ, մնում է նշել և մեկնաբանել մի կարևոր համգամանք Կեղծ-Դիոնեսիոսի նկարագրությունից:

Կեղծ-Դիոնեսիոսի ժամանակագրության տվյալների հետ ծանոթանալիս այն կետում, ուր խոսվում է Չորրորդ Հայքի Տուտխ կոչված վայրի հողագուրկ գյուղացիության ծանր տնտեսական դրության մասին, որն ավելի ևս բարդանում է շնորհիվ տեղական կալվածատերերի հարստահարությունների և արաբական բռնակալների կեղեքման և հարկապահանջման, որի հետևանքով այդ գյուղացիությունը 774–775 թ.թ. ապստամբության ուղի էր ընտրել անելանելի դրությունից դուրս գալու համար, ակամա հիշում ես նույնպիսի դրությունը հանքագործ խալիբների ժամանակից, սակայն է՝ գրեթե 1000 տարի նրանից առաջ, որի նկարագրությունն առկա է Ապողոն Ռոդոսացու (III դ. նախքան մեր թ.) Argonautica-*ի*

[32] **Հիւբշման.** Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 54-56, կիհշէ Տեյլորի յիշատակած Բալիկի ցեղէ են: Ծանոթ. Տաշյանի:

[33] ***J. Mapquart.*** Armenische Streifen, «Յուշարձան» էջ 291-302: Ծանոթ. Տաշյանի:

[34] **Հ. Յ. Տաշյան.** Հին Հայաստանի արևմտյան սահմանը Փոքր Հայք և Կողոպենէ (Սեբաստիա). «Հանդէս ամսօրեայ», 1940, թիւ 1-6, էջ 4-5:

մեջ (II. 1000–1008): Նշելով, որ աշխատավոր խալիբները բնակվելով դաժան և ժայռոտ երկրում՝ զբաղվում են երկաթի մշակումով, հույն հեղինակը գրում է. «Նրանք (խալիբները) չեն զբաղված ոչ հողի մշակումով եզների օգնությամբ, ոչ էլ անուշ պտուղների բուծությամբ (պտղաբուծությամբ), և ոչ էլ հոտեր են արածացնում ցողավետ արոտավայրերում, կտրելով երկաթածին պինդ հողը, նրանք փոխանակում են արդյունահանված երկաթը կենսամթերքների հետ. նրանց համար երբեք չի ծագում արշալույսը առանց նոր աշխատանքի. սև մրի ու ծուխի մեջ նրանք կատարում են իրենց ծանր աշխատանքը»[35]*:*

* * *

Չորրորդ Հայքի Տուտխ վայրում 774–775 թ.թ. տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը մենք բերում ենք Կեղծ-Դիոնեսիոսի Թել-Մահրացու «Ժամանակագրության» հիման վրա, որ երկիցս հրատարակել է ֆրանսիացի արևելագետ J. B. Chabot-*ն*[36]*:*

«Ժամանակագրության» բնագիրը, որը սխալմամբ ասորական հակոբիկ պատրիարք Դիոնեսիոս Թել Մահրացուն էր վերագրվում և այս պատճառով Կեղծ Դիոնեսիոսի անունով հռչակվեց (Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum), *իսկապես մեզ չի հասել, այլ նրա փոխարեն առկա է անանուն ժամանակագրությունը, որ իրոք Զուկնինի վանքի մի ոմն վանականին է պատկանում, կազմված պիտի լինի հունական տոմարի 1086 թվին, այսինքնէ մեր թվարկության 775 թվին*[37] *(2):*

774–775 թ.թ. ապստամբության նկարագրությունը մենք բերում ենք մեր թարգմանությամբ՝ համաձայն J. B. Chabot -*ի առաջին հրատարակության (1895 թ.)*[38]*:*

P. 172 [208]... Երբ խղճուկները տեսան, որ այս բացահայտ թալանը չի դադարում , որ [այս հարկահավաքները] չունեն ո՛չ

Scythica et Causcasica, I. 413-414, Հմմտ. II, 204 (Ապողոնի մեկնիչը):

[35] ***В. Латышев,*** Scythica et Causcasica, I. 413-414, Հմմտ. II, 204 (Ապողոնի մեկնիչը): Նաև՝ "Вестник древней истории", 1947 г., № 3, стр. 281, 289.

[36] Chronique de Denys de Tell-Mahré Quatrième partia, publiee et traduite par J. B. Chabot ["Bibliotéque de l'Ecole des Hautes Etudes", fasc. 112]. Paris, 1895. Chronicon anonymum pseudo Dionislanum vulgo dictum. ed. J. B. Chabot ["Corpus scriptorum christianorum orientalium". Scriptores syri. Series tertia , t. II], Parisiis, 1933.

[37] **Н. В. Пилулевская,** Византия и Иран на рубеже VI и VII веков. М.-Л., 1946, стр. 43-44.

[38] Chronique de Denys de Tell-Mahré etc, pp. 172-175 (ըստ ասորական ձեռագրի 208-212):

*ամոթ և ո՛չ երկյուղ Աստծուց, որ բոլոր թշվառությունների
նախապատճառը հաշիվ չէր պահանջում նրանից այն չարա-
գործությունների մասին, որ նրանք շարունակ կատարում
էին երկրում, ապստամբեցին: «Մենք տալիս էինք,—ասում
էին նրանք,—և մեզ և մեր հարևանների համար. մենք վճա-
րում էինք մեր հարկը և նույնիսկ այն, որ մենք չպիտի մու-
ծեինք: Ախր ե՞րբ պիտի կշտանան նրանք մեր մսով: Մենք այ-
լևս ոչինչ չենք տա, քանի որ չգիտենք` որտե՞ղից վերցնենք,
որպեսզի տանք»:*

*Երբ կուսակալը այս լսեց, նա խփեց բռունցքով, կրճտացրեց
ատամներով և` նմանվելով առյուծին` արյան ծարավ զգաց:
Նա (կուսակալը) հավաքեց նրանց (խղճուկների, Լ. Մ.-Բ.)
դեմ քաղաքի բոլոր ոճրագործներին և մարդասպաններին:
Նա ուղարկեց իր տեղակալին` հանդերձ հանցագործ և արյու-
նածարավ մարդկանցով, երկրի մեծամեծներով և գարշելի ու
անգութ գյուղացիներով: Վերջինս (տեղակալը) կազմեց հա-
մագյուղացիներից մի բազմամարդ զորք, գինված նիզակնե-
րով և պարսատիկներով. և գնաց նրանց դեմ: Գյուղացիները
իրենց կողմից մեծ վնաս պատճառեցին բոլոր մարդասպան-
ներին և գողերին, որոնք նրանց միջև էին գտնվում, և նրանց
հարազատներին այնպիսի չարիք հասցրին, որ լեզուն ի վիճա-
կի չէ այն նկարագրելու:*

*Իսկ այն տեղը, որտեղ խռովություն առաջացավ, գտնվում
էր լեռներում. Հյուսիսային շրջանում: Այն կոչվում էր Տու-
տխս: Ժողովուրդը բաղկացած էր սարբիներից և ուրտիացինե-
րից, որոնք բաժանած ունեին իրար միջև այս շրջանը, այսինքն
IV Հայքը:*

P. 173. *Այս իսկ շրջանում գտնվում էր մի վայր, որտեղ արդյունա-
հանվում էր կապար, արծաթ և այլ երկաթահանքանյութ: Մեծ
աղետը, որը տարածվել էր ամբողջ այս երկրում, պատճառ
եղավ նրա, որ մարդիկ այսպիսի մեծ քանակությամբ հավաք-
վել էին այնտեղ, որտեղ գտնվում էր կապարը, որ այդ շրջանը
ընդարձակ ճամբար դարձավ, և որ թագավորը այնտեղ կու-
սակալ էր նշանակել: Ամեն տեղից մարդիկ գալիս էին այս
շրջանը և փորում էին մեծ և խորը հորեր` պղպատ որոնելու
նպատակով:*

[209] *Իսկ գյուղացիական զորքը ուղղվեց այնտեղ, որը մենք նշե-
ցինք: Զորականները ուզեցին այն ռազմատուգանքի ենթար-*

*կել: Սակայն պարսկական (մահմեդական—Լ. Մ.-Բ.) կուսա-
կալները չուզեցին համաձայնվել: «Նրանց (գյուղացիների—Լ.
Մ.-Բ.) մեծամասնությունը,—ասում էին նրանք,—ձեր երկրի-
ցըն են, նրանք են հարկերի վճարողները»: Բայց նրանց հա-
մոզելը միանգամայն անհնարին էր. նրանք սկսեցին կատա-
ղությամբ պատրաստվել կռվի և կողոպտելու այն ամենը, ինչ
որ հակառակորդին էր պատկանում: Պարսիկները (մահմեդա-
կանները—Լ. Մ.-Բ.) հրամայեցին նրանց, որոնք ճամբարումն
էին գտնվում, պատրաստվել կռվի և չթողնել հակառակորդին
իրենց մոտ, որպեսզի ոչնչացման չենթարկվեն...Իսկ երբ կող-
մը, որը ճամբարին չէր պատկանում, հարձակվեց նրանց վրա
և սկսեց նրանց կոտորել, կապարի հանքերում աշխատողները
փախուստի դիմեցին` հակառակորդի սրից ազատվելու հա-
մար: Քանի որ դեռևս ձմեռ էր, ձյունը հաստ շերտով ծածկել
էր այս վայրը, սառույցը նույնիսկ ծածկել էր հորերի բերան-
ները, որ ճանաչել չէր կարելի` հալած ձյունով լցված լինե-
լու պատճառով: Փախուստի միջոցին շատերը թափվում էին
այդ հորերի մեջ, և նրանց մեծամասնությունը խեղդվում էր
և կործանվում նրանց խորքում: Շատերը կործանվեցին նաև
սրից. թշնամին չէր խնայում նրանց և կողոպտում էր նրանց,
ինչպես և ամբողջ ճամբարը:*

[210] *Հապա Երեմիա մարգարեն գա և ասե... [Քրիստոնյաները
չէին խնա-
յում նույնիսկ իրենց ընկերներին, որոնք խեղդվեցին] կամ*

P. 174 *սպանվեցին, և հորերից նրանց չհանեցին հողին հանձնելու
համար: Իսկ եթե պատահականորեն նրանցից որևէ մեկին
դուրս էին հանում, նրանից հագուստը հանում էին և թող-
նում էին մերկ` փոսի բերանի մոտ:*

*Ինչ վերաբերում է այն աղետին, որ նրանք հասցրին այս
երկրին, սրա մասին ավելի լավ է չխոսել, նախ, այն պատճա-
ռով, որ գուցե ոչ ոք մեզ չհավատա, թե ինչպիսի նենգություն
ցուցաբերեցին նրանք, այն էլ երկյուղից, որպեսզի հեթանոս-
ները չիմանան սրա մասին և չասեն, որ քրիստոնյաները Աստ-
ծուց չեն վախենում, քանի որ նրանց վարմունքը մոգերի վար-
մունքից վատթար եղավ: Սակայն, որպեսզի ուրիշները ծանո-
թանան այն պատճառների հետ, որոնք մեզ այս աղետները
հասցրին, որպեսզի մեր գործերը տեսնողները զգույշ լինեին և
նաև նշելու համար Աստծո գթասրտությունը, որը համբերա-*

տար տանում է մեր հանդգնությունը և մեր բազմաթիվ ննեց
արարքները, մենք սրա մասին մի փոքր կպատմենք:
Այսպես ուրեմն, նրանք շարժվեցին խղճուկների դեմ, և մեծ
ձյան շնորհիվ, որը ծածկել էր հողը, վերջինները ի վիճակի
չէին փախչելու: Իսկ եթե այդ նրանց հաջողվում էր, հետամ-
տողները վրա էին հասնում և ձյունի մեջ գցում թե նրանց և
թե նրանց գույքը, կանանց և երեխաներին: Հալածվողները
դողում էին, ընդունելով, շնորհիվ դաժան ցրտի, աղի անկեն-
դան դեղին գույն, իսկ հալածողները՝ չխնայելով նրանց՝ մեր-
կացնում էին տղամարդկանց, կանանց և երեխաներին, գցելով
նրանց մերկ՝ առանց հագուստի և կոշկեղենի: Նրանք (հա-
լածողները—Լ. Մ.-Բ.) նույնիսկ հանում էին նրանցից (հա-
լածվողներից—Լ. Մ.-Բ.) վարտիքները, չվախելով մերկացնել
նրանց սեռական [օրգանները]: Նրանք (հալածողները—Լ. Մ.-
Բ.) անամոթ կերպով բռնաբարում էին կանանց և դուստրե-
րին՝ դուստրերի և կանանց ներկայությամբ: Նրանց գլուխ
կանգնած անզգամը կարգադրեց, որ որևէ մեկի կողմից հափշ-
տակվածը իրեն է պատկանում: Այնպես որ՝ թե ինքը անզգա-
մը և թե նրա հետ միացած ավազակները կարող էին կատարել
և բավարարել իրենց մոլեգին և ագահ իղձերը:
Գյուղացիները և նրանց պարագլուխները ավելի անողորմ
երևացին,
[211] *քան հեթանոսները և ոչ մի կարեկցություն չցուցաբերեցին*
հանդեպ իրենց եղբայրները, ննեգորեն վերաբերվելով դեպի
ամենքից հարգված անձնավորությունները: Այս ավազակա-
պետները ոչնչացրին մարդկանց տնտեսության բոլոր առար-
կաները. այրեցին ամբողջ փայտեղենը, ջարդեցին կավե բոլոր
ամանները, զավթելով պղնձե և երկաթե բոլոր իրեղենները,
նրանք չխնայեցին ո՛չ անկողին, ո՛չ դռներ, ո՛չ անոթներ, ո՛չ
լագաններ, ենթարկելով այն ևս հրի: Նրանք փշրեցին սափոր-
ները, գինու ամանները, կաթսաները, կուժերը: Խմելով այս
անոթներից որքան կարելի էր, հապա մնացածը նրանք ամբող-
ջովին թափում էին հողի վրա: Իսկ եթե ամանը հողումն էր
թաղված և հնարավոր չէր այն կոտրել, նրանցից մեկը՝ վերց-
նելով նիզակը՝ տակը ծակում էր և գինին թափվում էր հողի
մեջ: Նույնը նրանք
[P. 175] *կատարեցին և մեղրի նկատմամբ. ուտում էին որքան կա-*
րող էին/, իսկ մնացածը գետնի վրա էին թափում: Նրանք

ջարդեցին մեղվափեթակները և թափեցին այն դեպի ջուրը,
ուստի և բոլոր մեղուները կոտորվեցին: Նրանք համարձա-
կություն ունեցան կատարել այս՝ սատանայի դրդմամբ, որը
նրանց գծագրեց ուղին, որի շնորհիվ նրանք իրենց միջև եղած
հեթանոսներից վատթար եղան: Նրամք համարձակվում էին
ուտել միս և պանիր սուրբ պահոց օրերին և կատարեցին բա-
զում այլ անօրեն գործեր: Այնպես որ, երբ մեզ լուր հասավ
նրա մասին, թե ինչ կատարեցին նրանք իրենց հարազատնե-
րի հետ, մենք մեծ վշտի մեջ ընկանք, սկսեցինք լալ և մեծ
անհանգստություն զգացինք, տեսնելով թե որ աստիճանի կա-
րող է սատանան գայթակղեցնել մարդկանց:
Նրանք համարձակվեցին նույնիսկ ոտնձգություն անել եկե-
ղեցու նկատմամբ, որը նրանք կողոպտեցին. նրանք հափշտա-
կեցին եկեղեցական գրքերը և աստվածապաշտության բոլոր
իրեղենները: Քանի որ նրանք իրենց կանանց փակել էին եկե-
ղեցում, հեթանոսները հենց իրենք ներս էին խուժում այնտեղ
և բռնաբարում կանանց տաճարների մեջ: Եվ ահա այստեղ
պետք է լալ Երեմիայի հետ միասին և ասել.../
[212] *Նկարագրված աղետները տեղի ունեցան այս վայրում: Նրանք*
քշեցին կանանց, որոնք մարդասպանների պես շղթայված էին,
հավաքեցին ամբողջ տավար-ոչխարը և հետը տարան: Նրանք
այսպիսով անցան բազմաթիվ գյուղերով, քշելով գյուղացինե-
րին, կողոպտելով և իրենց հետ տանելով բնակիչներին:
Ռազինը անցավ Արզունով և Մայֆերկաթով և, տեսնելով
այս քաղաքների կուսակալների ավազակաբարո գործերը՝
դատապարտեց նրանց մեծ կոտանքների և անգութ տան-
ջանքների, այնպես որ նրանք որդերից կրծոտվեցին և այնպես
մեռան: Նա կալանդներով կտրատում էր նրանց ձեռները և
ոտները ու խլեց նրանցից բոլոր կողոպտածը:
Աստված հանձնեց նրանց այս անողորմ անզգամի ձեռքը, և
նրանց կատարած բոլոր գարշելիությունները իրենց իսկ վրա
դարձան: Սրանց մասին ասում էին, որ նրանք բռնում էին
նրանց: Անաստված գրագիրները և դրամափոխները, հնա-
փողոցներում անմորուս երիտասարդներին և բռնաբարում
մոտ բերել ինչպես դեռահաս օրիորդներին ժողովրդից, նույն-
յած որ քրիստոնյաներ էին, հարկադրում էին բռնել և իրենց
պես և ազնվատոհմ անձանց դուստրերին, և բռնաբարում էին
նրանց...

Եվ այսպես նա՝ նկատելով նրանց վատ գործերը, հրամայեց բերել իր մոտ, ծակոտել ունքները և ուղտերի պես զսպել: Նա ծակոտել տվեց նրանց ճակատները, վրան տախտակներ կախելով, տվեց նրանց շղթաներով կապելու, որ և քարշ պիտի տային իրենց ետևից…

… Ապա նրանց հանձնում էին ծառայի, որը ծաղրի առարկա էր դարձնում նրանց՝ քաղաքի հրապարակի վրա, որից հետո նրանց բանտը գցեցին: Նա հացը տալիս էր նրանց այն քանակով, որ բավական լիներ նրանց գոյությունը պահպանելու համար: Նրանց բանտարկության տուն տեղերից նեխման հոտ էր ելնում՝ գերեզմանի գարշահոտությունից է՛լ վատթար:

Եվ այս փաստերից մի քանիսը ես նշեցի նրա համար, որպեսզի վարչապետները, ծանոթանալով սրանց հետ, վարվեին [ժողովրդի հետ] ըստ խղճի, չմոռանալով Աստծուն, որպեսզի նրանք չվարվեին կամայականորեն՝ ազնվության հակառակ, գիտենալով, որ կա օրենք նույնիսկ նրանց համար, ովքեր օրենք են հրատարակում, և որպեսզի նրանք հասկանան, որ սանձարձակորեն վարվող իշխանավորը արագորեն կորցնում է իշխանի կոչումը, որը նրան փառքի է հասցնում, և ստանում է բռնակալի կոչում, որ լի է խելառությամբ և որը սկիզբն է լինում խելագարության…

К ИСТОРИИ КРЕСТЬЯНСКОГО ВОССТАНИЯ В IV АРМЕНИИ В 774–775 Г. Г.

Р е з юм е

Коснувшись деления Армении первых веков до и после н. э. на Большую и малую–согласно анонимной армянской “Географии” VII века, приписывавшейся Моисею Хоренскому, а Малой Армении в свою очередь, на 4 кантона–согласно XXXI новелле императора Юстиниана II от 536 г. и “Истории Армении” Моисея Хоренского (I, 14), автор настоящей статьи, оперируя данными “Descriptio orbis Romani” Георгия Кипрского от IV века и вышеупомянутой “Географии” VII века (как теперь полагают, Анании Ширакского), пытается выяснить картину административного деления и этнического состава т. н. IV Армении, отпавшей в 702 г. от Византийской империи.

Путем сопоставления затем данных из “Истории халифов” армянского историка VIII века Гевонда или Леонтия (гл. 37) о народных восстаниях в Армении 774–775 г. г. с аналогичными сведениями, содержащимся в анонимной сирийской “Хронике” от 775 г., известной обычно под именем Хроники псевдо-Дионисия (Chronicon anonymum pseudo Dionysianum vulgo dictum), по имени сиро-яковитского патриарха Дионисия Тель-Mahрейского, о крестьянских восстаниях в те же годы в местности Тутис, что в IV Армении, населенной сирийцами и уртийцами (отдаленными потомками ур[ар]тийцев ?), в статье дается попытка изложения одного из эпизодов классовой борьбы в условиях феодализма на территории IV Армении во 2-й половине VIII века.

Это ярко выраженное крестьянское восстание, вызванное тяжелым условиями малоземелья и безземелья в одном из горно-скалистых районов Армении, известном богатыми залежами руд, которые местные жители-крестьяне добывали с применением самых отсталых и примитивных технических способов для обмена на жизненные припасы, при жесточайшей (и двойной) эксплоатации со стороны как местных землевладельцев собственников, так и органов государственной власти (арабского халифата?), сумевших в конечном счете подавить это восстание.

К статье прилагается перевод описания обстоятельств и картины восстания 774–775 г. г., сохраненного в сирийской “Хронике” псевдо-Дионисия Тель-Mahрейского (как теперь полагают вышедшего из-под пера монаха Зукнинского монастыря), от 1086 г. греческого счисления или 775 г. н. э., согласно публикации французского ориенталиста J. B. Chabot, ссылку на которую читатель найдет в соответствующих подстрочных примечаниях данной статьи.

ԴԱՎԻԹ «ԱՆՀԱՂԹԻ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ[1]

Դավիթ անունը հայ ժողովրդի համար մի տեսակ իմաստասիրության, հայրենասիրության և արիության էմբլեմ է դարձել: Չէ՞ որ V–VII դ.դ. մեր բոլոր փիլիսոփաները հայտնի են Դավիթ *անունով, այն էլ բոլորը «Անհաղթ»: Օտարերկրյա զավթիչների դեմ դարեր շարունակ մարտնչող հերոսական հայ ժողովուրդն իր մարմնացումն է գտել անմահ* Դավիթ Սասունցի *վեպի մեջ: Վերջապես, XVIII դ. 20-ական թվականներին Պարսկաստանի և Տաճկաստանի լծի դեմ պայքարող հայ կտրիճների սխրագործություններն իրենց արտահայտությունն են գտել քաջարի* Դավիթ-բեկի *էպոպեայի մեջ:*

Դավիթ Սասունցու հազարամյա հոբելյանի տոնակատարությունը շատ և շատ նպաստեց հարուստ և արժեքավոր գրականության ստեղծման հայ ժողովրդական վեպի շուրջը. Դավիթ բեկի խնդրով զբաղվողներն ևս ի վիճակի եղան արժեքավոր ուսումնասիրություններով նպաստելու համապատասխան կինոֆիլմ և օպերա ստեղծելու համար: Վերջապես Դավիթ Անհաղթն ևս ունեցավ մեզանում սովետական շրջանում իր մասնագետ ուսումնասիրողները հանձինս Հ. Մանանդյանի և Վ. Չալոյանի: Սակայն կասկածելի է, որ հայագետներից կամ վրացագետներից որևէ մեկը հանձն առներ զբաղվելու այնպիսի մասնավոր խնդրով, որ մեր թեմայի նյութն է կազմում, այն է՝ Դավիթ «Անհաղթի» Վրաստանում լինելու հարցի շուրջը, որ ամփոփումն է տարիների ընթացքում որոշ ուղղությամբ մեր կատարած պրպտումների, ինչպես և՝ այլ և այլ ճանապարհներով կուտակված դիտողությունների:

* * *

Եվ, որ սկզբից և եթ կարևոր է նշել, երկու հանգամանք դրդիչ կամ շարժառիթ են հանդիսացել այսպիսի թեմայով հարցադրմանը: Նախ՝ ի նկատի ունենք XV դ. իմաստասեր Առաքել Սյունեցու կարևոր ցուցմունքը Դավիթ Անհաղթի՝ Հայաստանում ունեցած գործունեության տարօրինակ վախճանի և Վրաստան փախչելու

[1] Կարդացված է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական սեսիայում 1945 թ. հոկտեմբերի 31-ին:

մասին: Երկրորդ, *ի նկատի ունենք ակադ. Ն. Մառի մի դիտողությունը վրացական աշխարհի հետ Դավիթ Անհաղթի ունեցած կապի մասին:*

1. Առաքել Սյունեցին Դավիթ Անհաղթի Սահմանաց գրքի լուծմունքի կամ մեկնաբանության մեջ՝ խոսելով Դավթի վերաբերյալ՝ նշում է հետևյալը.—«Որպէս [Մովսէս] բազում վիշտս կրեաց յԻսրայելի, այսպէս և Դաւիթ ի Հայոց նեղութիւն և հարուածք և վէրք: Թէ վասն է՞ր ոչ արդիւնացան իմաստք [Դաւթի] ի Հայս… [և] թէ վասն է՞ր ոչ արդիւնաւորեցան բանք նորա ի Հայս: Եւ այս վասն չորս պատճառի. նախ՝ զի յետ Վարդանանց պատերազմն դառնացեալք էին Հայք, և ամենայն բանք յաչաց նոցա ելած էր վասն աւերութեան աշխարհիս և կատարման իշխանացն: Երկրորդ՝ զի ոչ գոյր ուսումնական, այլ ամենեքեան զհետ մարմնոյ մոլորեալք էին և յագահութիւն աշխարհիս: Երրորդ՝ զի անզգամք էին յանդիմանեալք ի նմանէ. անարգեցին զնա և զբանս նորա. և հարեալ վիրավորեցին զնա, և նա գնացեալ ի Վիրս և անդ կացեալ վախճանեցաւ»[2] ևն:

2. Դեռևս H. -F. Neumann *1829 թ.*[3] *նշեց, որ* Περὶ ἑρμηνείας*-ի հայերեն տեքստում գոյություն ունի մի տարօրինակ բառ՝ «թակն», որ հունարեն* μυς*-ի համանիշը պիտի լինի: Ապա 4 տարուց հետո՝ 1833 թ.՝ Վենետիկի Մխիթարյանները լույս ընծայեցին Դավիթ Անհաղթի երկերը, որ «Պերի արմէնիաս»-ի տեքստում, ի միջի այլոց, կարդում ենք.*

«Յաղագս բանի. Բան

«… Քանզի և ոչ ներ թակն, ակն նշանական, այլ ձայն է այժմ միայն:

Մեկնութիւն

«Դարձեալ վերստին կամի ասել, եթէ առասութեան մասունք ոչինչ նշանակեն զատուցեալք ի միմեանց, քանզի եթե ոչ նշանականք յայտ է՝ եթէ ոչ ճշմարտեն և ոչ ստեն: Եւ ցուցանէ յումեմնէ

[2] Գիրք սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Հայոց իմաստասիրի, շարադրեալ ընդդէմ իմաստակ պիհռոնացւոց, որք ուրանային զէութիւն իմաստասիրութեան և յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հոգեշահ մեկնութեամբ տեառն Առաքելի եռամեծ վարդապետի՝ աշակերտի սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, Մադրաս, 1797, էջ 169, 172:

[3] *Karl Friedrich Neumann.* Mémoire sur la vie et les ourvrages de David Philosope arménien de V-e siècle de notre ère et principalements sur ses traductions de queiques écrits d'Aristôte: "Nouveau ournal Asiatique", 1829, p. 142.

կենդանոյ՝ որ կոչի թ ա կ ն. քանզի զնորա եթէ զնախաստական տառն ի բաց բարձցես, մնասցէ ա կ ն այլ ոչ ևս զնոյն նշանակէ՝ զոր հանդերձ տառիւն այնուիկ նշանակէր, քանզի թ ա կ ն ասելով՝ տեսակ իմն անբան կենդանոյ նշանակէ, իսկ ա կ ն ոչ ևս տեսակ կենդանոյ, այլ մասնիկ իմն բանաւոր կամ անբան կենդանոյ. որոյ և պատահեաց: Ահա ուրեմն ներ թ ա կ ա ն ս՝ ա կ ն ս ոչ ինչ նշանակէ, այլ ձայն է միայն, իբր այն եթէ հնչումն աննշանական»[4]:

Դավիթ Անհաղթի այս խոսքերն ամփոփում է XIII դ. բանաստեղծ և իմաստասեր Հովհաննես Երզնկացին կամ Պլուզը. «Որպէս զայն կենդանի, որ կոչի թ ա կ ն, զոր թէ զմի գիրն առնու ոք յետ, նա նշանակէ ա կ ն»[5]:

Մտցնելով այս բառը Նոր Հայկազյան բառարանի մեջ՝ Մխիթարյանները Neumann-ի ազդեցությամբ մեկնաբանեցին այն իբրև հոմանիշ հունարեն μυς-ի, «կենդանի ինչ անյայտ կամ կեղծեալ վասն օրինակի որ ի յունական է մ ու–կ ը ն»[6]: Իսկ Առձեռն բառարանը մեկնաբանեց. թ ա կ «մկան պէս կենդանի մը»[7]:

Ակադ. Ն Մառը՝ հաշվի առնելով նախորդ գրականության տվյալները՝ հարց դրեց. “Но почему *Давид Непобедимый,* точнее армянский переводчик *Аристотеля* употребляет в качестве наглядного примера это никому из армян неизвестное слово, столь близко родственное с грузинским”[8].

Եվ այս մի բառը բավական էր, որպեսզի Ն. Մառը նշեր “близость Давида Непобедимого, вернее армянского переводчика Περὶ ἑρμηνείας к грузинскому миру”[9].

Ն. Մառի հետևողությամբ ևս Հ. Աճառյանը ընդունեց, որ «թակն մի անծանոթ անասուն է», որ համապատասխանում է «վրաց თაგუ թագու» բառին մկան իմաստով[10]:

Սակայն վերոհիշյալ հարգելի գիտնականները աչքաթող են

[4] Կորիւն վարդապետի, Մամբրէի վերծանողի և Դաւթի Անյաղթի մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 505-506:

[5] Նոր Հայկազեան բառարան, I, Վեն., 1836, էջ 793:

[6] Ibid.

[7] Առձեռն բառարան, Վեն., 1865, էջ 317:

[8] ***Н. Марр,*** Иоанн Петрицкий, грузинский неоплатоник XI–XII в., “Записки Вост. Отд. Рус. Арх. О-ва”, т XIX, 1909, стр. 95, прим.:

[9] Ibid., նաև *Н. Марр,* О яфетическом происхождении баскского языка: “Известия Академии Наук”, 1920, стр. 141; *N. Marr,* Origine japhétique de la langue basque: сборник “Язык и литература”, I, 1926, стр. 233.

[10] ***Հր. Աճառեան,*** Հայերէն արմատական բառարան, II, 1095–1096:

արել մի կարևոր հանգամանք, այն է, որ հայերենում գոյություն ունի «թակարդ» ‖ «թակարթ» բառը, անկասկած, «թակ» արմատից կազմված, որ նշանակում է «որոգայթ կամ վանդակաձև առարկա՝ անասուններ և մասնավորապես մկներ բռնելու համար»[11], որի հոմանիշն է հայերենում, վրացերենում և թաճկերենում գործածվող «խափանգ», «խափանգի» և “kepenk” բառը[12]:

Հետևապես, դեռևս քննության կարոտ է «թակ» բառի ծագման խնդիրը, քանի որ նրա լոկ վրացերեն (և ոչ թե ընդհանուր գործածության, ասենք՝ «հաբեթական» սուբստրատի մնացորդ) լինելը կասկածելի է:

Բայց և այնպես, անկախ այս «թակ»-ի վրացերեն բառ լինել-չլինելուց, Առաքել Սյունեցու ցուցմունքը Դավիթ Անհաղթի Վրաստանում ապաստանելու մասին հատուկ հետազոտության արժանի է:

Արդ հարց է ծագում՝ ո՞ր Դավիթ «Անհաղթ»-ին ի նկատի ունի Առաքելն իր լուծմունքի մեջ: Այստեղ տեղին կլիներ մի մեջբերում բերել հանգուցյալ Կարապետ եպ. Տեր-Մկրտչյանի մի հետազոտությունից, ուր պատկերավոր կերպով բացատրված են Դավիթ Անհաղթի կամ Դավիթ «Անհաղթ»-ների առաջացման հանգամանքները Հայոց մեջ. «[VI դարում] սկսվում է մի նոր հոսանք դեպի Հունաստան, բայց ո՛չ ինչպես V դարում՝ ս. Գիրք և եկեղեցական հայրերի գրվածներ թարգմանելու, այլ արտաքին գիտություններ ձեռք բերելու նպատակով: Թարգմանվում են նույն ժամանակ հունաց մեջ ամենից ավելի ընթացիկ նոր պղատոնական դպրոցի վերջին շառավիղների և վերակենդանացող Արիստոտելի ու նրա մեկնաբանների գրվածները, հայերը և շուտով ունենում են իրենց անհաղթ փիլիսոփան, որ ամենայն հաջողությամբ վիճում է հույն իմաստասերների հետ և բոլորին լռեցնում»[13]:

Կասկածից դուրս է, որ «անհաղթ» հորջորջումը վերաբերում է իմաստասիրության կամ փիլիսոփայության բնագավառում գործող դեմքերին: Իսկ այդպիսի Դավիթներ գոնե V–VI դ.դ. միջոցին առնվազն 6-ն են եղել, չհաշված հույն-բյուզանդացիներին:

“Наиболее характерные продукты школы эллинистов–философские трактаты–приписываются разным авторам,–նշում էր այս առթիվ դե-

[11] ***Ստ. Մալխասեանց,*** Հայերէն բացատրական բառարան, II, 1944, էջ 77:

[12] Ibid., 253:

[13] «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ յուղղափառ և ս. հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համահաւաքեալ», հրատարակութիւն ***Կարապետ եպիսկոպոսի,*** Էջմիածին, 1914, էջ XCVIII.

ռեւս 1915 թ. Ն. Ադոնցը, ապա շարունակում.–Чаще всего упоминается имя философа Давида Непобедимого. С его именем связаны переводы некоторых трудов Аристотеля и Толкования на них, перевод "Введения" Порфирия и "Толкование" его, трактат об "Определении философии". Последний труд, а также "Толкование" Порфирия имеются на греческом языке под именем Давида (изд. Ad. Busse, Берлин, 1904). Не подлежит сомнению, что у армян были, по крайней мере, два философа, носивших это имя: Давид из области Арк, от которого сохранились кое-какие фрагменты (изд. Миабаном, в журнале "Арарат", 1903, Эчмиадзин), и известный диофизит Давид из Багавана, в половине VII в. Кроме того, упоминаются Давид из Нергина и Давид Кертох. Выяснение личностей армянских Давидов, в их отношении к византийскому Давиду, составляет задачу, подлежащую еще разрешению"[14].

Այժմ մի առ մի հիշատակենք V–VII դ.դ. ընթացքում անուն հանած հայ իմաստասեր քերդողներին, որոնք Դավիթ անունն են կրում, նույնիսկ «Անհաղթ» կոչելով:

Առաջին *Դավիթը` դա Մովսես Խորենացու (Պատմ. Հայոց I, 6) հիշատակած Ոլիմպիոդորոսի աշակերտ և «փիլիսոփայութեամբ վարժեալ» «ումն Դաւիթ»-ն է, Գորգի և Բանանի ժամանակակիցը, գուցե և ընկերակիցը, որին, հավանական է, ի նկատի ունի և Գրիգոր Մագիստրոսը, երբ նշում է. «զգիրս Ողոմպիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ»*[15]*:*

Երկրորդ *Դավիթը` դա VI դ. կեսերին գործող Դավիթն է, Ներգինացի կամ Հերտանեցին:*

Երրորդ *Դավիթը` դա VI դ. կամ VII դ. սկզբներին գործող Դավիթ քերդող կամ քերականն է, Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի»-ի* (Τήχνη γραμματική) *թարգմանողը և մեկնիչը:*

Չորրորդ *Դավիթը` դա երկաբնակ Դավիթն է, Բագվանցի կամ Բագրևանդացին, որ բյուզանդական Կոնստանդին II կայսեր (641–668) հրամանով Կ. Պոլսից Հայաստան էր եկել Դվինի 648–649 թ.թ. եկեղեցական ժողովին մասնակցելու, որ տեղի ունեցավ Ներսես Իշխանցի կաթողիկոսի (641–661) և Թեոդորոս Ռշտունու (641–658) ղեկավարությամբ:*

Հինգերորդ *Դավիթը` դա Դավիթ Տարոնեցին է, Բարսեղ Կեսա-*

[14] *Н. Адонц*, Армянская литература: "Новый энциклопедический словарь Брокгауз-Ефрона", т. III, стлб. 646.

[15] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, հրատ. ***Կ. Կոստանեանց***, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 66:

րացու «Յաղագս ծննդեան Տեառն» ճառի թարգմանիչը Համազասպ Մամիկոնյան կյուրապաղատի օրով (656–659):

Վեցերորդ *Դավիթը` դա Դավիթ Հարքացին է, որ հայտնի է իրրև հեղինակ բազմաթիվ դավանաբանական երկերի, որոնցից մեկը գրված է Անաստաս կաթողիկոսի (661–666) հրամանով, մի ուրիշը Աշոտ պատրիկի (685–690) խնդրով և այլն, հետևապես նա VII դ. երկրորդ կեսի գործիչ է:*

Այս Դավիթներից միմիայն մեկն է երկաբնակ (դիոֆիզիտ)-քաղկեդոնիկ, այն է Դավիթ Բագվանցի կամ Բագրևանդացին: Բոլոր մնացածները միաբնակ (մոնոֆիզիտ)-հակաքաղկեդոնիկներ են: Թեև սրանից զատ ուրիշ Դավիթներ էլ կարող էին լինել նույն V–VII դ.դ. ընթացքում, որոնք «հաշվառման» չեն արժանացել:

Դավիթ իմաստասեր-քերդողների կյանքով և գրական գործունեությամբ հետաքրքրությունը գիտական գրականության մեջ սկսվում է դեռևս XIX դ. 20-ական թվականներից և ապա շարունակվում նույն դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը. K.-F. Neumann *(1829)*, V. Rosé *(1886)*, C. F. Conybeare *(1892)*, Ad. Busse *(1892, 1904)*, *Գալուստ Տեր-Մկրտչյան (1902), Հակոբ Մանանդյան (1901, 1926), Գարեգին Հովսեփյան (1907), Վ. Չալոյան (1941-ից սկսած) և այլն` ահա ոչ լրիվ ցուցակը այն մասնագետների, որոնք այսպես թե այնպես նպաստել են խնդրի լուսաբանման-ուսումնասիրությանը:*

Դեռևս 1907 թ. մի տեսակ փորձ է արվել Դավիթների հետ կապված գրական գործերի ունիֆիկացիայի ըստ 4 բնագավառի.

I. Իմաստասիրական գրվածքներ (Philosophische Schriften). *1. Դաւիթ եռամեծի և անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանց չորից Պիւռհոնի իմաստակի և սահմանք և տրամատութիւնք իմաստասիրութեան, 2. Դաւթի եռամեծի փիլիսոփայի Ներգինացւոյ Վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի, 3. Ստորոգութիւնք Արիստոտէլի, թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ, 4. Պէրիարմենիաս Արիստոտէլի, թարգմանեալ և մեկնեալ ի Դաւթէ, 5. Դաւթի Անյաղթի փիլիսոփայի մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի վերլուծականն, 6. Նորին Դաւթի փիլիսոփայի Առածք հինգ, 7. Նորին` Վասն բաժանման, 8. Ընդ այսոսիկ և առաջիկայ Բանս իմաստնոյս, 9. Գիրք իմաստասիրաց արտաքնոց առասպելաբանութեան, արարեալ Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, 10. Դաւիթ Հարքացւոյ և փիլիսոփայի որ յիմաստասիրական և յիմաստասիրելի հարցոմածքս:*

II. Աստվածաբանական գրվածքներ (Theologische Schriften). *1. Ներ-*

բողեան ի ս. Խաչն աստուածընկալ, 2. Ծնայ առանց հօր, 3. Իմաստութիւն Դավթի քերթողի, 4. Դաւիթ Հարքացի ասէ, 5. Դաւիթ Հերտանեցւոյ՝ Վասն խուղոյն, զոր արար Մովսէս, 6. Ի դէմս Որդւոյ ասացեալ, 7. Դաւթի անյաղթ վարդապետի Հայկազնի՝ Գովեստ ներբողական ի ս. եկեղեցի յԵրուսաղէմ, 8. Հառաջաբանք սաղմոսաց, 9. Գիրք էակաց:

III. Քերեկանագիտական գրվածքներ (Grammatische Schriften). 1. Յաղագս քերականին պատճառ, 2. Քերականութիւն Դաւթի, 3. Պիտոյք:

IV. Թարգմանություններ (Übersetzungen). 1. Ներածութիւն Պորփիւրի, 2. Ստորոգութիւնք Արիստոտէլի, 3. Պէրիարմենիաս, 4. Յաղագս առաքինութեանց, 5. Պատմութիւն յաղագս աշխարհի, 6. Նկատումն Արիստոտէլի[16]:

Ընդամենը 28 երկ, ուր, սակայն, բաց են թողնված «Դաւթի փիլիսոփայի Յաղագս Սաղմոսաց Դաւթի» (Հրատ. Կ. Պոլիս 1801) և մի շարք դավանաբանական երկեր («Արարատ», 1906 թ., էջ 261–272):

Համաձայն ակադ. Հ. Մանանդյանի հետազոտության, «Դավիթ Անհաղթին վերագրված իմաստասիրական մեկնությունները ո՛չ միայն բոլորն էլ թարգմանություն են հունարենից, այլ և տարբեր ուղղության և տարբեր հեղինակների ու թարգմանների գործ են և ծագել են դավանաբանական վեճերի ժամանակ կրոնական տարբեր միջավայրերում»: Ընդսմին, «մի մասը նրանցից թարգմանված է միաբնակ հայերի, իսկ մյուս մասը՝ երկաբնակ հայերի միջավայրում»[17]:

Անտարակույս, միաբնակների շրջանում պիտի թարգմանվեին Արիստոտելյան երկերը, իսկ երկաբնակների միջավայրում՝ նոր պղատոնական գրվածքները և մեկնությունները: Եվ ահա «այդ մեկնություններից նոր պղատոնական մեկնիչ Դավիթի աշխատությունների են», ըստ Հ. Մանանդյանի, «Սահմանքը» կամ ավելի ճիշտ «Հառաջաբանը» և «Պորփյուրի Ներածության վերլուծությունը», մինչդեռ «մյուս մեկնությունների հեղինակներն անորոշ են և վիճելի»[18]:

Ըստ Վ. Չալոյանի, Դավիթ Անհաղթը VI դարի փիլիսոփա է,

[16] Տես՝ David der Philosoph [. Berner Studien zur Philosophie und ihrer Geschichte, Band LVIII], Bern, 1907, SS. 6-8.

[17] **Յ. Մանանդեան,** Յունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները [«Ազգային Մատենադարան»], Վիեննա, 1926, էջ 15:

[18] Ibid., 22:

Աղեքսանդրըյան դպրոցի ներկայացուցիչ, նոր պղատոնական, որ Հուստինիանոս Բ. կայսեր հրամանով Աղեքսանդրյան դպրոցը փակվելուց հետո Հայաստան վերադարձավ և այնտեղ սկսեց գործել[19]:

Վերջերս Դավիթ Անհաղթի առեղծվածին անցողակի կերպով անդրադարձավ պրոֆ. Շ. Նուցուբիձեն՝ հարց հարուցելով "не является ли Давид Анахт 14-ым сирийским отцом, приехавшим в Грузию из Сирии, где он имел тесную связь с грузинами, что отразилось, по свидетельству Н. Я. Марра, даже в грузинских оборотах и терминах его переводов Аристотеля"[20].

Վերևում մենք արդեն արտահայտեցինք մեր վերաբերմունքը դեպի Ն. Մառի տեսակետը, որով լոկ մի բառի գործածության հիման վրա Դավիթ Անհաղթը վրացական աշխարհի հետ էր կապվում (1): Իսկ Շ. Նուցուբիձեն ավելի հեռուն գնաց, երբ նշեց Դավիթ Անհաղթի «սերտ կապը վրացիների հետ», որ իբր թե իր արտացոլումն է ստացել Արիստոտելի թարգմանության մեջ գործածվող «վրացական դարձվածքներում և տերմիններում», որ, իհարկե, չի համապատասխանում իրողությանը:

Սակայն Շ. Նուցուբիձեի հարցադրման մեջ կա և «ռացիոնալ հատիկ», որով նա աշխատում է Դավիթ Անհաղթի գործունեությունը կապել այսպես կոչված «ասորի հայրերի» ժամանակաշրջանի և միջավայրի հետ, որ թեև կասկածելի է, բայց լույս է սփռում մի ուրիշ Դավթի գործելակերպի նկատմամբ, որ, ըստ մեր հետազոտության, ոչ թէ «ասորի հայրեր» կոչված խմբի զուգակիցը պիտի լիներ, այլ գլխավոր մասնակիցներից մեկը:

* * *

«Ասորի հայրեր» անվամբ հայտնի են եկեղեցականներ, թվով 13, որոնք VI դարում Ասորիքից Վրաստան (Քարթլ-Կախեթ) են մուտք գործել, ինչպես ընդունված էր, պարսից շնորհիվ խախտված քրիստոնեությունը վերակենդանացնելու և հաստատելու նպատակով:

Այս «ասորի հայրերի» մասին գիտական գրականության մեջ կա 2 տարբեր կարծիք: Ըստ մեկի, ավանդականի, որին հանդուցյալ ակադ. Իվ. Ջավախիշվիլին և Գ. Փերաձեն հարեցին, դրանք

[19] "Под знаменем марксизма", 1941 г., № 5, стр. 134-138.

[20] *Ш. Нуцубидзе*, Тайна Псевдо-Дионисия Ареопагита: "Известия Института языка, истории и материальной культуры имени акад. Н. Я. Марра", XIV, Тбилиси, 1944 (и, отдельно–Тб., 1942), стр. 44.

երկաբնակ (դիոֆիզիտ)-քաղկեդոնիկներ էին, որ Ասորիքից եկել էին Վրաստան քաղկեդոնիկ դավանությունը վերահաստատելու նպատակով[21]*: Ըստ մյուս տեսակետի, որի արտահայտիչը Կ. Կեկելիձեն է, դրանք ո՛չ թե ասորիներ են եղել, այլ բնիկ տեղացիներ՝ վրացիներ, որոնք Ասորիք և առհասարակ Արևելք են գնացել ուսումն ստանալու նպատակով և ապա վերադարձել իրենց հայրենիքը. նրանք եղել են թվով ո՛չ թե 13, որ Քրիստոսի և 12 առաքյալների թվի նմանողությամբ է հետագայում ներկայացվել, այլ ավելի՝ առնվազն 17, որոնք եկել են արևելյան Վրաստան ո՛չ թե միանվագ՝ այլ առանձին-առանձին խմբերով և տարբեր ժամանակ՝ սկսած 519 թ. և մինչև 545 թ., այն էլ ո՛չ թե երկաբնակ (դիոֆիզիտ) կամ քաղկեդոնիկ դավանությունը վերահաստատելու, այլ ընդհակառակը՝ միաբնակ (մոնոֆիզիտ) կամ հակաքաղկեդոնիկ լինելու պատճառով 519 թ.՝ սկսած հալածանքներից փախչելու հետևանքով և այլն*[22]*:*

Պրոֆ. Կ. Կեկելիձեի հետազոտության նշանակալից և սրամիտ եզրակացությունները գալիս են նպաստելու Դավիթ «Անհաղթի» Վրաստանում ապաստանելու *առեղծվածի լուծմանը՝ «ասորի հայրերի» նույն* Վրաստանում ապաստանելու *առեղծվածի կապակցությամբ: Առեղծվածի լուծմանը հիմնականում նպաստում է այն հանգամանքը, որ «ասորի հայրերի» շարքերում կա մեկը, որ Դավիթ անունն է կրում և բոլոր մնացածներից խիստ տարբերվում է իր ամեն մի քայլափոխումով, ուր բացարձակապես* ճայկական միջավայրից բխող սպեցիֆիկան *է երևան գալիս:*

Այժմ դիմենք այդ սպեցիֆիկայի քննման:

Զուգընթաց՝ մի քանի հարցի ևս պատասխանենք:

1. Որտեղի՞ց են գալից «ասորի հայրերը»: Անկասկած, Սիրիա-Պաղեստինից:

2. Ո՞ր ճանապարհով են նրանք գալիս Վրաստան: Via armeniaca:

3. Ե՞րբ են գալիս հարավից: Մոտավորապես 520–545 թ.թ. միջոցին:

4. Ո՞ւր են մուտք գործում նրանք և ապա գործում ցմահ: Արևելյան Վրաստանում՝ կեսը Քարթլիում, կեսը՝ Հերք-Կախքում (Հերեթ-Կախեթում):

5. Նրանց անունները. Քարթլիում *հաստատվածներից՝ Հովհան Զեդազնեցի (Իոանե Զեդազնելի) և կից Եղիա կամ Էլիաս սարկավագը (Իլիա դիակոնի), Իսե Ծիլկանեցի (Ծիլկնելի), Շիո Մղվիմեցի (Մղվիմելի) և կից Էվագրը, Իսիդո՛ր Սամթավացի (Իսիդորե Սամթավնելի), Պիրոս Բրեթեցի (Բրեթելի), Միքայել Ուլումբոյեցի (Միխեիլ Ուլումբոելի), Թադեոս Ստեփան-Ծմինդեցի (Ստեփանծմինդելի). ընդամենը 7+2=9 հոգի: Հերք-Կախքում (Հերեթ-Կախեթում) հաստատվածներից՝ Դավիթ Գարեջեցի (Գարեջելի) և կից 2 աշակերտ—Դոդո և Լուկիանոս (Լուկիանէ), Անտոն Միայնակյաց (Մարտոմղ՛ոփելի), Աբիբոս Նեկրեսեցի (Նեկրեսելի), Ստեփան Խիրսեցի (Ստեփանե Խիրսելի), Հովսեփ Ալավերդցի (Իոսեփ Ալավերդելի), Զենոն Իղ՛ալթոյեցի (Իղ՛ալթոելի), ընդամենը 6+2=8 հոգի, իսկ բոլորը միասին 17:*

Հերք-Կախք կամ Հերեթ-Կախեթ եկողներից էին, ի միջի այլոց, ինչպես տեսնում ենք, Դավիթ Գարեջեցին իր աշակերտներով և Անտոն միայնակյացը կամ Մարտոմղ՛ոփելին (Մարտղ՛ոփելին), որոնց մասին նույնիսկ տեղեկություն կա, որ նախքան Հերեթ գալը նրանք մի ժամանակ (520–545 թ.թ.) Հայաստանումն են եղել:

Բայց ի՞նչ էր այդ ժամանակ ներկայացնում իրենից Հերեթ-Կախեթը:

—Կիսանկախ կուսակալություն (քորիկոզություն թե՞ էրիսթավություն) իր կենտրոնով, որի անունը «Բոստան-քալաքի» այլ կերպ չի կարելի մեկնաբանել, բայց եթե դոց. Սուրեն Երեմյանի սրամիտ կոնյեկտուրան ընդունելով՝ իբրև իրանա-հայկական ոստան-քաղաք[23]*, այսինքն ֆեոդալական իշխանության կենտրոն (*curtis dominicalis*):*

Ընդ սմին կարևոր է նշել, որ այն վայրը, ուր Դավիթ Գարեջեցուն վիճակվում է գործել և իմաստասիրությամբ զբաղվել, հնում կոչվելիս է եղել ճայկական *անունով «Տվարածատափ», այսինքն* տ[ա]վար ա[րա]ծ[ելու] տափ *իմաստով, որ հիշված է Գեորգ (Գիորգ) Սուրբլեոնեցու կամ Աթոնեցու. (XI դ.) վարքի մեջ*[24] *և հիշեցնում է Անանիա*

[21] ***Իվ. Ջավախիշվիլի,*** Վրաց ժողովրդի պատմություն, I, Գ. հրատ., Թբ., 1928, էջ
324-347. նաև՝ *G. Pheradze,* Die Anfänge des Mönchtums in Georgien, Gotha, 1927, SS. 37-
40 հմմտ. ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I,
Երևան, 1934, էջ 97:

[22] ***Կորն. Կեկելիձե,*** Ասորի գործիչների Քարթլի գալու հարցի մասին. Կուլտուր-
պատմական պրոբլեմ (վրացերեն)՝ «Թբ. համալսարանի Տեղեկագիր», VI, 1926, էջ
82-107, . [Վերահրատ. տե՛ս «ეტიუდები...», I, 1956, გვ. 19-50], հմմտ. 2-й краеведче-
ский съезд Черноморского побережья и Зап. Кавказа 25/IX–5/X 1925 г. Постановления и
резолюции, Батум, 1925, стр. 34. նաև՝ ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վրաց աղբյուրները
Հայաստանի և հայերի մասին, I, էջ 96-97:

[23] ***С. Т. Еремян,*** Феодальные образования Картлии в период марзбанства (532-627) (Тезисы диссертации на степень кандидата наук), изд. Акад. Наук СССР, [Ленинград, 1935], стр. 2.

[24] Աթոնի Իվերոն վանքի 1074 թ. ձեռագիրն ագապներով, վրացերեն, Թբ. 1901,

Շիրակացու (VII դ.) «Աշխարհացույց»-ի մեջ նշած Տուրուբերանի «Տուարածատափ»[25] || «Տուրածատափ»-ը[26]: Դա ձրմեռային արոտատեղերի վայրն է, որ գինվորական քարտեզներում Тауротапа-ի է վերածվել, այժմյան Ղարայազ կայարանից դեպի հյուսիս-արևելք[27]:

Սրանից մոտ է եղել գտնվելիս IX դ. վրաց պատմիչ Արսեն Սափարացու հիշատակած «Հայոց (Սոմխեթի) ձորը[28]» Կամբեչովանիի (հուն. «Կամբիզենե») կից, որ մինչ Ալազան և Իորի գետերի միախառնման կետն է հասնում,–ուր մի ժամանակ ապաստան էին գտնում քաղկեդոնիկների հալածանքներից փախչող հայ միաբնակները, նույնիսկ բորբորիտները, և այդ պատճառով էլ Հերեթի այս մասը հայոց անունով էլ այդպես կոչվել է (2):

Իսկ մի այլ աղբյուրի, այն է՝ XI դ. անանուն հեղինակի կազմած «Վրաց մատյան»-ի վկայությամբ, այս վայրը մինչ X դ. բացարձակապես միաբնակ (մոնոֆիզիտ) դավանության հետևորդ է եղել. «Հերեթում սկզբներում՝ մինչ Իշխանիկի թագավորությունը՝ բոլորը հերձվածող էին. իսկ Իշխանիկը Գուրգեն իշխանաց-իշխանի քրոջ որդին էր և նրա մայր Դինար թագուհին դարձրեց նրանց ուղղափառ (այսինքն՝ երկաբնակ-քաղկեդոնիկ. –Լ. Մ.-Բ.)»[29]:

«Ասորի հայրերի» մարշրուտը via armeniaca և նրանց մուտքը արևելյան Վրաստան տարբեր էր նրանից, ինչ մենք նկատում ենք IV դարում ս. Նունեի (Նինոյի) նկատմամբ, որն, ինչպես հայտնի է, անցավ Քարթլի Ջավախքով՝ Փարվանա լճի մոտերքով, ուր նա՝ հանդիպելով Մցխեթայի շրջակայքից այն պահին այնտեղ գնացած հովիվների և ձկնորսների հետ՝ զրուցել էր հայերեն լեզվով:

Դավիթ Գարեջեցին, հավանական է, մուտք գործած լինի Քարթլի Մաշավերի հովտով, ուր հայտնի են «Դավիթ-Սագարեջո» կոչվող

էջ 291:

[25] Աշխարհացոյց Մովսիսի Խորենացւոյ, հրատ. [**Արսէն վ. Սիւքրեան**], Վենետիկ, 1881, էջ 31:

[26] Անանիայի Շիրակայնւոյ համարողի՝ Մատենագրութիւնք, հրատ. **Աշոտ Աբրահամեանի.** Երևան, 1943, էջ 349 (ուր այս տեղանունը սխալմամբ տպված է իբրև «Մուրածատափ» փոխանակ «Տուրածատափ»-ի):

[27] *Н. Адонц*, Армения в эпоху Юстиниана, СПб. 1908, стр. 314 и прим. I также, **Իվ. Ջավախիշվիլի,** Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, Թբ. 1914, էջ 308. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, էջ 221:

[28] **Թ. Ժորդանիա,** Ժամանակագրութիւնք, վրացերեն, I, Թբ. 1892, էջ 332= **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները, 46:

[29] Քարթլիս-ցխովրեբա, Աննա թագուհու գրչագիր (վրացերեն), Թբ. 1942, էջ 168 (=Քարթլիս- ցխովրեբա, II, ՍՊԲ, 1854, էջ 97), հմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, էջ 203:

վանքի ավերակները, որ XVIII դ. վրաց աշխարհագիր Վախուշտ արքայազնը նույնիսկ նշել է իր կազմած քարտեզում[30]:

Ապա, նախ քան Հերեթ անցնելը, Դավիթը Վրաց-դաշտով մուտք է գործում Թբիլիսի: Սկսած Թբիլիսիից Դավթի ամեն մի քայլափոխը հիշեցնում է մի որևէ հայկական սովորույթ կամ տրադիցիա, իսկ ծայրահեղ դեպքում նրա այս կամ այն տեղից հեռանալը թողնում է «հայկականություն», resp. «միաբնակ» դավանանքը հիշեցնող որևէ հետք:

Դավթի առաջին բնակատեղը Թբիլիսիում լինում է այժմյան Ֆունիկուլյորի լեռը, որ նրա անունով կոչվել է «Մամա-Դավիթի» (հայր Դավթի) լեռ կամ «Մթա-ծմինդա» (Սուրբ-լեռ): Բայց այս տեղանունը (Ortsname) հին աղբյուրներում հայտնի չէ, մինչդեռ դրա փոխարեն այնտեղ գործածվում է «Իշատուրտուք»՝ ըստ XVIII դ. սկզբների պատմիչ Էգնատաշվիլու[31], կամ «Իշխտուտրուք»՝ ըստ Վախուշտ արքայազնի[32]: Վերջինիս, անկասկած, հայկական ծագում ունեցող բառ է, որ նշանակում է վայրի բանջար (իշի կերակուր)[33]: Վրաց հնագետ-պատմաբան Պլ. Իոսելիանու մեկնաբանությամբ ևս՝ "слово ишитутрук есть армянское». "Оно образовалось... со времен поселения армян в Тифлисе; торговавшие здесь армяне, для своих коммерческих поездок по краю, держали мулов и ослов и выгоняли их к этой горе для прокормления. От места, назначеного для выгона ослов и ослиц, обоазовалось название Ишитутрук"[34]:

Միաժամանակ հետաքրքրական է և այն, որ ս. Դավթի եկեղեցին դարերի ընթացքում մեծ ժողովրդականություն է եղել վայելելիս Թբիլիսիի հայերի աչքում, այնքան մեծ, որ վրաց պատմագրութ-

[30] **Լ. Մուսխելիշվիլի,** Հնագիտական էքսկուրսիաներ դեպի Մաշավերի ձորը (վրացերեն, ռուսերեն և ֆրանսերեն ռեզյումեով), Թբ. 1941, էջ 33-34, 87, 98:

[31] Նոր Քարթլիս- ցխովրեբա XVIII դ. սկզբների տեքստը (վրացերեն), **Իվ. Ջավախիշվիլու** խմբ. Թբ., 1940, էջ 172:

[32] **Վախուշտ Արքայազն**. Վրաստանի աշխարհագրություն (վրացերեն), Թբ. 1941, էջ 54:

[33] **Ե. Լալայեան,** Բորչալուի գաւառ, Թբ. 1903 (=«Ազգ. հանդէս X), էջ 146. **Ղևոնդ վ. Ալիշան,** Հայբուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վեն., 1895, էջ 208-209: **Սահակ վ. Ամատունի,** Հայոց բառ ու բան, Վաղ., 1912, էջ 233. **Հր. Աճառեան,** Հայերեն գաւառական բառարան, 1913, էջ 401. **Ստ. Մալխասյան,** Հայերեն բացատրական բառարան, II, եր. 1944, էջ 167. *Ад. Роллов,* Дикорастущие растения Кавказа, их распространение, свойства и применеия (с обозначением туземных названий растений), Тифлис, 1908, стр. 339-340. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վախուշտիի «Իշխտուտրուք»-ի մասին (վրացերեն),–«Պատմության-Տեղեկագիր», 1924 թ., № 2, էջ 299-232:

[34] *П. Иоселиани,* Гора св. Давида в Тифлисе, Т. 1858, стр. 3-4, Նույնը. Описание древностей города Тифлиса, Т. 1866, стр. 43.

յան վկայությամբ, նրա վերանորոգման գործում հայերը ևս ակտիվ մասնակցություն են ցույց տվել[35]:

Մի այլ տեղեկություն Դավթի Թբիլիսիում գտնվելու ժամանակաշրջանից վերաբերում է այսպես կոչված «քվա-չվա» քար-ծնեգին: Ըստ ավանդության, Դավիթը հիշյալ սարից երբեմն իջնելիս է եղել քաղաք, հետագա «Տափիթաղ» =«Կալոուբանի»-ի վայրը, ուր կույսեր են եղել բնակվելիս: Մի օր կույսերից մեկը հղիացել է, հանցանքի մեջ մեղադրել են Դավթին: Զայրացած ամբոխը՝ կամենալով վրեժը առնել Դավթից՝ իջեցրել է նրան սարից կուսանոց. Դավիթը՝ մոտենալով հղիացած կույսին և ուղղելով իր գավազանի ծայրը դեպի նրա արգանդը՝ հարցրել է. ումնի՞ց ես, երեխա՛»: Եվ ի պատասխան սրա կույսը ծնել է քար: Այս պատճառով կուսանոցի տեղը կոչվել է «քվաչվա» քար ծնեց, իսկ այստեղ կառուցված եկեղեցին՝ «Քվաչվեթի» Քարածին: Հետագայում այս անունով կոչվել են մի շարք եկեղեցիներ և Թբիլիսիից դուրս, օրինակ Կախեթի Գուրջաանի գյուղում և այլուր:

«Քվաչվա»-քարածնի լեգենդը հարկադրում է մեզ հիշել մի «մանրուք» Դավթի վարքից, ուր նշած է վերջինիս Երուսաղեմում լինելը և այնտեղից 3 նվիրական քար վերցնելն ու Վրաստան հասցնելը, որոնցից մեկը նույնիսկ մինչև 1917–1921 թ.թ. անցքերը նրա գերեզմանի հուշարձանի վրա էր դրված[36]: Սա կարևոր ցուցմունք է, որ դարձյալ ստիպում է մեզ առանձնացնել ու մեկուսացնել Դավթին այսպես կոչված «ասորի հայրերից»՝ դիտելու համար նրան միաբնակ-հայկական աշխարհի հետ ունեցած առնչության տեսանկյունով, քանի որ Դավթի անվան հետ կապվող քարի պատմությունը վերջնական հաշվով քարի պաշտամունքի հետ է կապվում, որ առանձնապես տարածված էր Հայաստանում:

Քարը Հայոց եկեղեցու պրակտիկայում, ինչպես հայտնի է, կապված է անշարժ սեղանի գաղափարի հետ, իբրև conditio sine qua non-ի, եկեղեցի հիմնադրելու և պատարագ մատուցանելու համար, համաձայն ավետարանչի ցուցմունքի (Մատթէոս XVI, 18)[37], իսկ վրաց (ինչպես և հունաց և ռուսաց) եկեղեցում սրա փոխարեն գործածվում է այսպես կոչված «անտիմինս»-ը (վրացերեն՝ «դափարնա»), որ ներկայացնում է իրենից քառանկյունի օրհնած պաստառ կամ սեղնագործ կտոր, վրան Քրիստոսի թաղումը նկարած, առանց որի նույնիսկ եկեղեցում չի կարելի պատարագել, մինչդեռ սրանով բացօթյա ևս կարելի է պատարագ մատուցանել:

[35] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Նյութեր Թբիլիսիի և «Սոմխիթի» հնությունների պատմության համար (վրացերեն): «Չվենի մեցնիերեբա», 1923 թ., № 1, էջ 87-88:

[36] Հմմտ. Е[пископ] К[ирион]. Повествование о чудодейственном камне Давид-гареджийской пустыни, Тифлис, 1901.

[37] «Եւ ես քեզ ասեմ, զի դու (Սիմոն-Պետրոս) ես ***վէմ*** և ի վերայ այդր ***վիմի*** շինեցից զեկեղեցի իմ և դրունք դժոխոց զնա մի՛ հաղթահարեսցեն«:

Ի դեպ, հիշենք, որ անշարժ սեղանի գործածել-չգործածելու խնդիրը վիճելի էր ոչ միայն հայ և վրաց եկեղեցիների բաժանման պահին՝ VI–VII դ.դ.[38], այլև Իվանե և Զաքարե սպասալարների օրով[39], երբ կարիք էր զգացվում պատարագ մատուցանելու բանակում՝ բացօթյա կամ վրանում, ուր անշարժ սեղան, իհարկե, չէր կարող լինել[40]:

Բայց և այնպես, շարունակենք Դավթի վարքագրության անալիզը:

«Քարածնի» դեպքից հետո ամբոխը, այնուամենայնիվ, անարգում է Դավթին և ստիպում նրան հեռանալ քաղաքից (Թբիլիսիից): Դավիթը անցնում է հայնկույս Կուր գետի ափին գտնվող քարանձավը (որի էությունը դարձյալ քարի կամ ժայռի հետ է կապված) և միառժամանակ մնում այնտեղ, որ նրա անունով կոչվում է «Ջոջոս սաղ՚դարի», այսինքն ջոջի եկեղեցի, ջոջի ժամ: Այստեղ ևս հետաքրքիրը այն է, որ «ջոջո» բառը վրացերեն ոչ մի իմաստ չի տալիս, մինչդեռ հայերեն նա նշանակում է մեծ. հետևապես «Ջոջոս-սաղ՚դարի»-ն պիտի նշանակե «Մեծ [գործչի] եկեղեցի»: Բայց ինչո՞ւ և ո՞ր մեծ գործչի: Հենց այս հարցի պատասխանն է, որ պիտի բխե այս մեր հետազոտությունից: Միջանկյալ միմիայն հիշենք, որ այս տեղում հետագայում հիմնվել է Հայոց եկեղեցի[41], վերջերս ս. Գրիգոր Լուսավորչի անունով (այսպես կոչված «Գոգիլո» բաղնիքի վերևից, այժմյան Հավլաբարում), որի գոյությունը շարունակվում էր մինչև մեր օրերը:

Համենայն դեպս, զարմանալի է, որ «ասորի հայր» Դավթի Թբիլիսիից հեռանալու հանգամանքները, այսինքն նրան անարգելու և վիրավորելու էպիզոդը, կարցես հիշեցնում է Առաքել Սյունեցու

[38] Գիրք Թղթոց, 126:

[39] Յաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 138:

[40] Խնդրի շուրջը մանրամասն տես՝ ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վէմ քար,–«Յովիտ», 1916 թ., № 3, *Л. Меликсет-Беков,* К вопросу об устройстве алтаря в древней Грузии,–"Христ. Восток", т. IV, 1915, стр. 310-312.

[41] ***Մ. Սաբինին,*** Վրաստանի դրախտը (վրացերեն), Թբ., 1882, էջ 269, ծանոթ.:

հաղորդածը Դավիթ «Անհաղթի» մասին, որ իհարկե, հիմքից զուրկ չպիտի լինի:

Բայց և այնպես, թողնելով Թբիլիսին, հայր Դավիթը անցնում է այսպես կոչված «բազմալերանց» (մրավալմթա) վայրը, դեպի ժայռոտ անջուր անապատները, դեպի քարաշխարհը:

Այստեղ կեցած ժամանակաշրջանից, որ, ըստ Մ. Սաբինինի ձեռքի տակ եղած վավերագրի, տևել է մինչ 582 թվականը[42], Դավթի վարքը նշում է մի էպիզոդ, երբ վերջինս հանդիպում է մի ոմն «բարբարոսի» հետ:

«Տեսնելով սուրբ [Դավիթ]ին, ինչպես նա կանգնած աղոթում էր, և կաքավը նստած էր նրա ոտների կողքին բարբարոսը դիմեց նրան՝ ասելով. «Ո՞վ ես դու», և նա (Դավիթը) պատասխանեց հայերեն լեզվով. «Ես մարդ եմ մեղապարտ, ծառա մեր Աստված Հիսուս Քրիստոսի»[43]:

Ըստ իս, «ասորի հայրերի» շարքերում Դավիթը միակն է, որ խոսում է հայերեն, հետևապես ցուցաբերում է իր, եթե կարելի է այսպես ասել, «ոչ յօրինակ այլոց», կապը հայկական իրականության, հայկական միջավայրի հետ:

Դեռ ավելին. հենց այս մեջբերումի տեքստում հիշված «բարբարոս» բառը հավանական է գործածված լինի ո՛չ թե օտարականի կամ ավազակի իմաստով, այլ «բարբարիանոս»–«բորբորիանոս»-ի (ըստ Կորյունի) կամ «բորբորիտոն»-ի (ըստ Մ. Խորենացու, I, 15):

«Ասորի հայր» Դավթի վարքը մեզ հասել է, դժբախտաբար, ոչ նախնական ձևով, այլ հետագայում քանիցս վերանայված ու վերամշակված, տեղ-տեղ համառոտված և տեղ-տեղ ընդարձակված խմբագրությամբ, հարմարվելով այս կամ այն ժամանակ տիրող տեսակետներին, որի հետևանքով Դավթի՝ հայ իրականության հետ ունեցած կապը զգալիորեն աղոտացած է[44]:

Սակայն այն, ինչ որ ի վիճակի չէ մեզ հասցնելու վարքագրական տեքստը կամ ավանդությունը, լրացնում է «բազմալերանց» անապատներում պահպանած հայկական էպիգրաֆիկան[45]:

«Բազմալերանց» սրբավայրը մի քանի այրիվանք-անապատից է

[42] Նույն տեղը, էջ 285, ծանոթ. 1:

[43] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները, I, 98:

[44] Մանրամասնությունները տես նույն տեղում, էջ 96-98:

[45] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Գարեսջիի բազմալերանց հայերեն էպիգրաֆիկան և բազմալեզվանի՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն արձանագրությունը (վրացերեն),–ժողովածու, նվիրված Իվ. Ջավախաշվիլուն, Թբ., 1940 թ., էջ 153-175:

բաղկացած, յուրաքանչյուրն իր հերթին մի քանի վիմափոր եկեղեցուց, որոնց «մայրը» («մայրաքաղաքը») այսպես կոչված ս. Դավիթ Գարեջեցու լավրան, այսինքն մայրավանքն էր համարվում՝ «ձեռնադրող հայրապետի» առաջնորդությամբ, որ, ի միջի այլոց, հիշված է 1216 թ. Դվինում կայացած դատաստանական գերագույն ատյանի կազմի մեջ «մամթավարն Գարշտէուց»-ի ձևով[46]:

Եվ հենց այս մայրավանքումն է, որ մինչ մեր օրերը հասել է ս. Հռիփսիմեի պատկերագրությունը, միակը ամբողջ Վրաստանում, Նունեի պատկերի կողքին, հետևյալ լակոնիկ արձանագրությամբ.

«Ծ՛յ Րիփսիմե» այսինքն՝ «Սրբուհի Րիփսիմե»[47]:

Հայերեն արձանագրություններով առանձնապես հարուստ են ս. Դավթի մայրավանքին կից գտնվող «Ծամեբուլի» կամ «Ուդաբնո» և Ադրբեջանի սահմանում գտնվող «Բերթուբանի» անապատները, որոնք հիմնական վերանորոգման են ենթարկվել XIII դարում, ուստի և մինչ XIII դարի հիշատակարաններն այստեղ, ինչպես և այլուր, իսպառ ոչնչացված են:

Սակայն XIII–XVIII դ.դ. մեզ հասած 20-ի չափ հայերեն արձանագրությունները պատերի սվաղի վրա, տեղիք չեն տալիս ոչ մի կասկածի, որ «բազմալերանց» անապատների վայրը ս. Դավթի մայրավանքով և նույնի գերեզմանով հանդերձ դարերի ընթացքում, գուցե հենց սկզբից հետե (VI դ.) հայ ուխտավորների ուխտագնացության ամենանշանավոր կետից մեկն է եղել:

Ահա և այդ ուխտագնացությունների ժամանակագրությունը՝ համաձայն թվակիր արձանագրությունների տվյալների.

1274–«բարի անուն աստուածապսակ սուրբ քահանայք Գարեջայ» և ոմն «դմանեցի».

1302–«Սարգիս իրիցոյ որդի Ալփոյ Ալփոյ«.

1332–«Նունի Եվանեսի որդի».

1351–«Տէր տէր Ավաք երէց, Յակոբ, Մրվան աւագ երէց Անեցի, Համազասպ երէց».

1352–«Սուջհաթ».

" –«Սարգիս Ասլանի որդի և զաւակ [նորա]՝ Ամիր Սայիդ».

" –«Սարգիս աբեղայ, Թումմանպէկ».

" –«Յոհան, Գէդէոն, Սարգիս».

[46] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Մի վկայություն գերագույն դատակազմության և դատավարության մասին Զաքարյան Հայաստանում (Մի էջ հայ և վրաց իրավունքի պատմությունից)»–«ՀՍՍՌ Գիտ. Ակադ. Տեղեկագիր», 1945 թ., № 3-4, էջ 73-81:

[47] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Գարեսջիի բազմալերանց հայերեն էպիգրաֆիկան, էջ 160:

" –«Նաթելա».

" –«Սարգիս, Շալուա».

1352–«Խէրէգին».

1467–«Յովհաննէս երէց Տփխեցի» (5 արձանագրություն, որոնցից 2 հայերեն և 3 վրացերեն).

1682–«Տէր Բարսեղ Բազում ուխտաւորօք»:

1746–«Ինա».

Ուխտավորների մեծ մասը տփխիսեցի, այսինքն Թբիլիսեցիներ են, բայց կան և անեցի, դմանեցի, այսինքն դմանիսեցի, և այլ տեղացիներ: «Գարեջայ»- հայ քահանաների հիշատակությունն ևս կարևոր է, իբրև դոկումենտ «բազմալերանց» անապատներում հայադավանության մի բեկորի գոյության, *որ հնագույն դարերի մնացորդ պիտի լինի: Իսկ «Սուջհամը», համաձայն մեր հետազոտության, Թբիլիսիի վանքի եկեղեցու հիմնադիր 3 եղբայրներից մեկը (միաժամանակ և Կոթողիկէ ս. Գևորգ եկեղեցու հիմնադրի՝ «պարոն Ումեկլի» թոռը) պիտի լինի*[48]*:*

Առանձնապես արժեքավոր է Սարգիս Ասլանի (Արսլանի || Արսալանի) որդու 1352 թ. չորս-լեզվանի՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն, հազվագյուտ արձանագրությունը, որը հայերեն մասում կարդացվում է այսպես (գրաբարախառն ռամկորեն թե՞ բարբառախառն գրաբար).

«+ Ծառէս և անարժանս Սարգիս Ասլանի (վրացերենում՝ Արասլան, պարսկերենում՝ Արսալան, ույղուրերենում՝ Արսլան) որդիս էկաք ի սուրբ Դաւիթի գէրէզմանն ի աղաւթս վասն զաւուն (sic) *իմ*[49*] *և զավակ իմ Ամիր Սայիդ (նույնպես է և մնացած 3 արձանագրություններում–Լ. Մ. -Բ.), վասն ցմեղաց* (sic) *փրկութեան մեզ և ննջեցէլոց մերոց. ով որ կարդէք, մեղաց թողութիւն հարամայէք, որ Աստուած թողութիւն արժանի հրամայէ ըգձէր մեղքն. գրէցավ գիրս ի մայիս ամիսն ի թվին պա (=1352)»*[50]*:*

Ամենայն կասկածից դուրս է, որ այստեղ հիշված Սարգիս՝ Ասլանի որդին և նրա զավակ Ամիր-Սայիդը XIV դ. առաջին կեսի «մեծատուն» տոհմի ներկայացուցիչներ են, որոնք հեռավոր տեղից եկել են «Բազմալերանց» անապատները՝ «սուրբ Դաւիթի գերեզմանին» երկրպագելու համար, որ և անմահացրել են չորս-լեզվանի հիշատակարանով:

Համեմատաբար ավելի հետաքրքիր է նույն ժամանակվա մի այլ, թեև մասամբ եղծված հայերեն արձանագրություն, ուր ոմն Սարգիս, Հալուայ (դուցե Շալուա), Հեվան[ես] և այլն հիշվում են իբրև այցելուներ «անյախթ փիլիսոփայիս գէրեզմանիս», որ, ինչարկե, չի կարելի որակավորել այլ կերպ, եթե ոչ իբրև արտահայտություն այն համոզման, *որ «բազմալերանց» անապատների «մայրաքաղաք» ս. Դավթի մայրավանքում թաղված «սուրբ հայր» համարված ս. Դավիթը նույն հայ «անհաղթ փիլիսոփան» է կամ, ավելի ճիշտ ասած, Դավիթ իմաստասերներից մեկն ու մեկը:*

Եվ որ հայ ուխտավորների և այցելուների լայն չափով ուխտագնացությունը դեպի հայր Դավթի կամ «անհաղթ փիլիսոփայի» գերեզմանը դարերի ընթացքում՝ մինչև նույնիսկ XIX դ., իբրև ապացույց ս. Դավթի պաշտամունքի լայն ժողովրդականությանը հայոց մեջ, մի տեսակ ահ ու սարսափ էր առաջ բերում օրթոդոքս հոգևորականության շրջաններում և խնդիր դնում դրա առաջն առնելու և արգելելու, երևում է մի դոկումենտից՝ հանուն Դավիթ-Գարեջայի անապատի վանահայր Անտոն վարդապետի, 1831 թ. 10 հունիսի № 945 թվահամարով, ուր, ի միջի այլոց, կարդում ենք (գրված է 2 սյուն՝ ռուսերեն և վրացերեն) հետևյալը.

“Указ Е. И. В. Самодержца Всероссийского из Грузино-Имеретинской Святейшего Правительствующего Синода Конторы Члену ее, Настоятелю Давид-Гареджийской пустыни Архимандриту Антонию... Приказали: предписать (и предписывается) Вашему Высокопреподобию сим указом объявить братии вверенной вам Давид-Гареджийской пустыни с подписками, дабы они ни в каком случае армянских священников не допускали в православные храмы свои для отправления молебствия”, *և այլն*[51]*:*

Այստեղ, ինչարկե, կարիք չկա կանգ առնելու այնպիսի մանրուքի վրա, ինչպիսին է քարանձավներից մեկում գտնվող վիշապի *հիշատակությունը, որ ս. Դավթի վարքում կոչվում է «մեծ և ահավոր, որ ունի աչքեր արյան գույնի և պոզեր ճակատին» և այլն և որ տանում է մեզ դեպի* վիշապների *և* քարի պաշտամունքի *աշխարհը,*

48 **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Թբիլիսիի վանքի հիմնադրության հարցի շուրջը (վրացերեն),–«Թբիլիսիի պետ. համալսարանի Տեղեկագիր», IV, 1924, էջ 82-91:

49* Սրբագրյալ ընթերցումը՝ «ս(ոյնպէ)ս և տուն»–Պ. Մ.

50 **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Գարեջիի բազմալերանց հայերեն էպիգրաֆիկան և այլն, էջ 161-165. հմմտ. *Л. Меликсет-Беков*, Гаресджийская тетралингва эпохи монголов в цикле полиглотических надписей Ю. Кавказа,–“Краткие Сообщения Института истории материальной культуры имени Н. Я. Марра”, выпуск 15, Москва, 1945-1946.

51 Վրաստանի Կենտրոնական Պատմական արխիվի ֆոնդ № 361, գործ № 2, էջ 15:

մինչդեռ «սաորի» կոչված մնացած հայրերի նկատմամբ նման բանի մենք չենք հանդիպում:

Այժմ անցնենք իմաստասիրական-փիլիսոփայական բնագավառից փոխառնված տերմինների և հասկացողությունների մեկնաբանությանը:

Նախ՝ կանգ առնենք «Գարեջա» կամ, ավելի ուղիղ, «Գարեսջա» (այստեղից Ստ. Օրբելյանի «Գարշտէք»–«Գարշտէուց») բառի ստուգաբանության և մեկնաբանության վրա:

Ոմանք, ինչպես , օրինակ, Մ. Սաբինին, *այս բառը մեկնաբանում էին իբրև «գարե սջա»* դրսում լինել, անապատում ապրել, աշխարհից հեռանալ, մեկուսանալ *իմաստով*[52]*: Սակայն այսպիսի մեկնությունը մեզ խորթ է թվում, քանի որ Դավիթը «ոչ յօրինակ այլոց», այսինքն «սաորի» մնացած հայրերի, երբեք չի կոչվում հետևյալ բառապաշարի և ոչ մեկով, ինչպիսիք են՝ գանդեգիլի* ճգնավոր, *դաղ'ուդեբուլի* միանձն, *մեուդաբնոե* անապատական, *մարտոմդ'ոփելի (այստեղից է «Մարտղ'ոփի»)* միայնակյաց, *մեսվետե* սյունական, *փիչվոսանի* խոտաճարակ *և այլն: Մեր կարծիքով, «գարե սջա»-ն փիլիսոփայական տերմին է, որ նշանակում է* «արտաքին *մտածություն*», «դրսի *մտածություն*», «արտաքին *իմաստություն*», *ինչպես հայերենում՝* «արտաքին *գրեանք*», *«գիրք* «արտաքնոց *իմաստասիրաց*»:

Փիլիսոփայության հետ առնչության տեսանկյունով պիտի, անկասկած, դիտվի նաև Դավիթ Գարեջեցու աշակերտներ ճանաչված Դոդոյի *(այստեղից է վիմափոր անապատներից մեկի անունը «Դոդո րքիսա) և* Ղունկիանոսի–Լուկիանեի *անունները:*

Երկու դեպքում էլ, մեր կարծիքով, գործ ունենք արիստոտելականության հետ կապված հասկացողությունների պերսոնիֆիկացիայի *հետ: Մեկը՝ «դոդո»–Դոդո րքիսա» նույն «եղջերուաքաղ»-ն է («այծեղջիւր»),* χίμαιρα, chimara, τραγέλαφος*կամ* hircocervus*: Մյուսը՝* λύκειον*-ը (հմմտ. Էլիասի՝ «Արիստոտելականին կոչին* Լիկիէացիք *ճեմականք»), որ իր հերթին* περιπατητικός*-ի ճեմականի (ճեմել) գաղափարն ևս է արտացոլում:*

Դավիթ Գարեջեցու ո՛չ թե լոկ անապատական, այլ փիլիսոփա լինելը պատկերացնում է XVIII դ. կեսի վրաց նշանավոր գործիչ Անտոն I կաթողիկոսը, որ իր «Ջափաբերականք»-ի (ծղ'ոբիլսիտղ'վաոբա) մեջ գիմում է Դավթին հետևյալ բառերով.

[52] *Մ. Սաբինին,* Վրաստանի դրախտը (վրացերեն), էջ 265, ծանոթ.:

«իթեզբիտելե *ուդարնոթա մամաո... բրձենո*»[53],

այսինքն՝

«Նախագուշակի՛ր *անապատների հայր, ... իմաստունդ», որտեղ «իթեզբիտելե» բառը հունարենից է՝* δεσπιωδός, εσπιέπεια *(*fatidicus*)* աստծուց խոսող, նախագուշակող*:*

*Դավիթ Գարեջեցու վարքից մենք տեղեկանում ենք, ի միջի այլոց, և նրա մասին, որ նա ունեցել է իր ուսմունքը կամ վարդապետությունը պարունակող մի գիրք («Ծիգնի սծավլիսա»–*Գիրք ուսմունքի Livre de doctrine*), որից մի փոքրիկ պատառիկ մտել է վարքագրական տեքստի մեջ և ցուցաբերում է Արիստոտելյան փիլիսոփայության և, մասնավորապես, նրա «Ֆիզիկա»-յի ազդեցությունը:*

Ահա և Դավիթ Գարեջեցու փիլիսոփայական հայացքները կամ credo*-ն ըստ այդ պատառիկի.*

«Աշխարհիս բոլոր նյութերը փոփոխական են և անցողական. ամեն ինչ ժամանակի ընթացքում ծնվում է և՝ հասունանալով իր էությամբ, ժամանակի ընթացքում ես ապականվում է, իբրև անկայուն և հոսական, և միայն հոգին է անվախճան ստեղծված Աստծու կողմից միշտ և հանապազ»[54]*:*

Ի վերջո, Դավիթ Գարեջեցու արիստոտելականության հետ առնչության մասին լսենք Ի. Փանցխավայի *դիտողությունը.*

“Давид Гареджели является одним из первых в Грузии, применившим аристотелевскую философию в той идеологической борьбе, которая происходила между различными толкователями христианства, с одной стороны, и между христианством и язычеством (маздеизмом), с другой. В ходе борьбы ясно обозначалась настойчивая необходимость применения философской аргументации…”

“Давид Гареджели, используя некоторые положения аристотелизма, расходится с ним в таком существенном вопросе, как вечность материального мира. В то же время основным положением мировоззрения Гареджели остается признание первенства божественного начала. Тем самым он от аристотелевских концепций переходит к теологометафизическим взглядам отцов церкви”[55]*:*

[53] Անտոն կաթողիկոսի Ջափաբերականք (վրացերեն), Թբ., 18 °°, էջ 175:

[54] Վրաստանի դրախտը, էջ 271-272: Հմմտ. Նկատումն Արիստոտելի («Արարատ», 1902, էջ 968-973):

[55] Иоанн Петрици. Рассмотрение Платоновской философии и Прокла Диадоха. Перевод с грузинского и исследование *И. Д. Панцхава*, изд. Института философии Академии Наук СССР , Тбилиси, 1942, стр. 25-26.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. V–VII դ.դ. ընթացքում Հայաստանում կամ Հայոց մեջ եղել են մի քանի իմաստասեր-քերթող-մեկնիչներ, որ Դավիթ անունն են կրել, նույնիսկ «Անհաղթ» հորջորջումով: Սրանցից առնվազն երկուսը անուն են հանել VI դարում, որոնց կից ոմանք ստվերի մեջ են մնացել:

2. Այս իսկ VI դարում Ասորիքից արևելյան Վրաստան (Քարթլ-Կախեթ) են գալիս այսպես կոչված «ասորի» հայրերը՝ թվով մոտ 13 կամ 17, գուցե և ավելի կամ պակաս, որոնց մեջ լինում է մեկը Դավիթ անունով, հետագայում Դավիթ Գարեջելի, այսինքն Գարեջեցի հորջորջյալը, որ մեկուսացած դիրք ունի բռնած մնացած հայրերի նկատմամբ, իբրև հայկական-միաբնակ (մոնոֆիզիտ) կամ հակաքաղկեդոնիկ միջավայրից եկած կամ նման իրականությանը մոտ կանգնած ու բացարձակապես այդ իրականությունը արտացոլող դեմք:

3. Այդ դեմքը, ասել է՝ Դավիթ Գարեջեցին, միակն է այն ժամանակվա Վրաստանում, որ առնչություն ունի իմաստասիրական-փիլիսոփայական մտքի հետ, իբրև արիստոտելյան ուսմունքի («Ֆիզիկա»-ին) քաջ ծանոթ և արիստոտելականության ատրիբուտներով օժտված գործիչ:

4. Հավանական է, որ հենց այս անձնավորությունը ծագումով ոչ «ասորի» և ոչ էլ վրացի, այլ հայ կամ հերեթցի–աղվանցի («Հեր-տանեցի» լիներ և Հայաստանում կեցած միջոցին՝ 520–545 թ.թ.՝ մասնակից լիներ իմաստասիրական-փիլիսոփայական գրական աշխատանքներին, ապա անցներ արևելյան Վրաստան՝ նախ Քարթլի, ապա Հերեթ՝ «բազմալերանց» անապատների վայրը, ուր և մնացել է ցմահ (ըստ Սաբինինի՝ մինչ 582 թ.):

5. Հետագայում այս Դավթին նույնացրել են հայ իմաստասիրական-փիլիսոփայական կամ քերթողական-մեկնաբանական մտքի սպասավոր Դավիթներից մեկն ու մեկի հետ, որ և իր արտահայտությունն է գտել հայ ուխտավորների և անվանի մարդկանց վերաբերմունքի մեջ դեպի Ս. Դավիթ Գարեջեցու գերեզմանը և կից վիմափոր անապատները, վերջինիս պաշտամունքով, որտեղ XIV դ. հայերեն արձանագրություններից մեկում հիշվում է «անյաղթ փիլիսոփայի գերեզմանը»:

6. Հենց այս իրողությունն է, ըստ երևույթին, հիմք ծառայել XV դ. ականավոր հայ իմաստասեր և բանաստեղծ Առաքել Սյունեցուն, որ գուսե շփոթել է իրար հետ Դավիթ «Անհաղթի» և Դավիթ Գարեջեցու անձնավորությունների շուրջը պտտող բանավոր ավանդություններն ու զրույցները, ի միջի այլոց, Դավիթ Գարեջեցուն Թբիլիսիում անարգանքի ենթարկելու ու վիրավորելու դեպքը վերագրելով Դավիթ «Անհաղթին» և, որ գլխավորն է, երկու անձնավորություններից մեկը դուրս բերելով:

7. Այսպիսով, հետևապես, Առաքել Սյունեցու ցուցմունքը Դավիթ «Անհաղթի»՝ Վրաստանում ապաստանելու և այնտեղ ցմահ մնալու մասին ո՛չ թե նրա (Առաքելի) ֆանտազիայի արդյունք է, այլ արգասիք կամ ծնունդ ժողովրդի մեջ տարածված և արմատացած որոշ համոզմունքի կամ տեսակետի, որ, իհարկե, հաշվի առնելու է և որի կողքով սկի չի կարելի անցնել Դավիթ «Անհաղթի» նկատմամբ ստեղծած ավանդությունների և զրույցների մեկնաբանության ժամանակ (3):

ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Մի էջ հայ և վրաց իրավունքի պատմությունից)

Մեր՝ թե՛ օրենսդրական-իրավական (նորմատիվ) և թե՛ պատմական (նարատիվ) աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են պահպանել ֆեոդալական Հայաստանում եղած ո՛չ միայն գերագույն, այլ սովորական դատակազմության և դատավարության մասին:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը թերևս միակ աղբյուրն է, ուր «Նախադրության» 11 գլուխների մեջ մանրամասն խոսվում է մեզ հետաքրքրող հարցի շուրջը[1]*, սակայն այն ոչ մի պատկերացում չի տալիս գերագույն դատակազմության և դատավարության արտակարգ մոմենտների, ինչպես և այսպես կոչված* jus appelationis*-ի կամ թե բեկման իրավունքի գոյության մասին հին Հայաստանում:*

Հայ իրավունքի պատմության ուսումնասիրության նվիրված մասնագիտական գրականության մեջ ևս ո՛չ մի հետազոտողի կամ հրատարակչի մտքով անգամ չի անցել ծանրանալ այսպիսի մի խնդրի վրա: Այսպիսի են՝ Ղուկաս վ. Ինճիճյանի «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» (հ. II, Վեն., 1835, էջ 308–310), Ա. Մ. Գարագաշյանի «Քննական պատմութիւն Հայոց» (մասն Բ, Թիֆլիս, 1895, էջ 10–17), Josef Kohler*-ի* “Das Recht der Armenier” *և* “Grundriss der Geschichte des armenischen Rechtes” *(*Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, VII B., 1887, SS. 385–436, XX, B., 1907, SS. 93–99*),* Josef Karst*-ի* “Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert” *(*Strassburg, 1905. SS. 339–400*), Խաչիկ Սամուելյանի «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և հին Հայոց քաղաքացիական իրավունքը» (Վիեննա, 1911, էջ 109–178) և «Հին հայ իրավունքի պատմությունը» (հ. I, Երևան, 1939), Վարդան վ. Հացունու «Երդումն հին Հայոց մեջ» (Վենետիկ, 1910) են:*

[1] Դատաստանագիրք Յայոց, հրատ. Վահան վ. Բաստամեան, Վաղ., 1880, էջ 5-75 [Գոշի աշխատության նոր հրատարակությունը (1975) կատարված է ըստ խմբագրությունների, ուստի նախադրությունը ևս ըստ այդմ է ներկայացված]:

Այսպիսի պայմաններում միանգամայն պարզ պիտի լինի և հասկանալի արժեքն այնպիսի տեղեկությունների, որ պատահմամբ հասել են մեզ մեր պատմիչների վկայությունների ձևով. ինչպիսին է, օրինակ, Սյունեցի Ստեփանոս Օրբելյանի հաղորդածը Զաքարյան Հայաստանում տեղի ունեցած մի արտակարգ երևույթի մասին:

Իր «Պատմութիւն Տանն Սիսական» նշանավոր երկի մեջ՝ խոսելով Նորավանքի «գերահռչակ և փառաւոր ուխտի» «շինութեան և նախապատիւ գահերիցութեան», ինչպես և «հոգեցատուր ժառանգութեանց նորա (Նորավանքի) և այլ շինութեանց և արդեանց» մասին, «որ եղև ի Լիպարտէն և յիշխանացն Օրբէլեանց» (գլ. 63[64] և 64 [65]), Ստ. Օրբելյանն առանձնապես կանգ է առնում «աստուածընկալ» և «սքանչելագործ» սուրբ խաչի շուրջը Նորավանից և Պղնձահանից, ասել է հակաքաղկեդոնիկ (հայադավան) և քաղկեդոնիկ (վրացադավան)՝ վանքերի միջև Հայաստանում առաջացած վեճի նկարագրության վրա (1), որի լուծման համար գերագույն պետական իշխանության կողմից նպատակահարմար և անհրաժեշտ համարվեց դատաստանական գերագույն մարմին ստեղծելը և գործն արտակարգ ձևով քննելը:

Սակայն նախքան այս դատաստանական գերագույն ատյանի մասին մեր եզրակացությունները հանենք, ծանոթանանք գործի էության հետ՝ համաձայն Ստ. Օրբելյանի վկայության:

* * *

«[Եւ մահուան տեառն Յովհաննիսի]... ի թուին Հայոց 663 (=1214)... եկն տէր Ստեփաննոս շնորհազարդն, որ և Փախրըլմահ կոչեցաւ յԱթաբէկէն, և բնակեցաւ ի սուրբ ուխտն Նորավանից... Եւ [ի 664(=1215) թ.] էր տեառն Ստեփաննոսի եղեալ գրաւական զաստուածամուխ սուրբ նշանն, զտէր Յովհաննիսի [Նորավանից հանգուցեալ եպիսկոպոսի՝] զաւագ խաչն և զթիթեղնակապն և զկամարակապն... Զոր և իմացեալ կողմնակալի այսմ կողմանց Վասակայ իշխանի՝ հօր Պռոշայ, առնու բռնաբար զերիս զայս աստուածացեալ սուրբ նշանքս և տարեալ զաւագ խաչն ընծայէ Աթաբէկին Իվանէի և զերկուսս՝ զթիթեղնակապն և զկամարակապն տարեալ դնէ յիւրում վանսն ի Կեչառուս ուխտի: Ապա ի 665 թուականին (=1216) մինչ կայր Աթաբէկն Իվանէ ի խսար (պաշարումն) ի վերայ բերդոյն, որ Զարէքն կոչի, գնայ տէր Սարգիս հրամանաւ և գրով քեռույն իւրոյ տէր Ստեփաննոսի առաջին Աթաբէկին ի խնդիր աստուածընկալ սուրբ խաչին: Եւ զի էր նորա գործակալ և հրամա-

նատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց և աւագ հէջպաց մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ. և էր սա աներ Լիպարտի՝ որդւոյ Ելիկումին, և Լիպարիտն յոյժ սիրեցեալ էր յաչս Իվանէի. և խաչն կայր ի պահեստի ի Պղնձահանքն:

«Յանդիման առնեն զեպիսկոպոսն Աթաբէկին և մատուցանեն զգիրն. և ինքեանք մեծապէս հոգ յանձին կալեալ ջանացին թափել զգերեալն, և բազում գանձս ծախեալ ի մեծամեծսն և ի ներքին խորհրդականսն: Բարեպաշտ Լիպարիտ 500 դահեկանի չափ ընծայէ և աղերս Աթաբէկին 500 դահեկան կարմիր յաղնուական ոսկւոյ, և այնպէս իբր գնոյ առնելով հաճեցաւ զմիտս նորա դարձուցանել անդրէն: Ապա հրամայէ կոչել զեպիսկոպոսն և դնէ պայման նմա և ասէ. «Եթէ ոք կամի զսրբոյ նշանին անդրէն դառնալն՝ տացէ վաղիւն զբերդս զայս ի ձեռս իմ, և ես տամ զնա ի ձեռս քո, ապա թէ ոչ՝ դառնաս ունայն»:

«Իսկ ընդ լուսանալ առաւօտուն՝ զօրութեամբ սուրբ խաչին բերեն բերդացիքն ինքնայօժար կամօք զբանալի բերդին և դնեն առաջի Աթաբէկին: Բերեն ընդ նմին այլ ևս երիս բանալիս բերդից, և դնեն առաջի: Ընդ որ յոյժ խնդացեալ և զարմացեալ ընդ սքանչելիսն՝ հրամայէ աւագ ծիկնաւպարին իւրոյ դիւանին Աւնափրէ անուն գնալ ընդ տեառն Սարգսի և տալ զխաչն ի նա ի Պղնձահանքն ուխտի, որ և առ ժամայն կատարեցաւ: Եւ նորա գնացեալ առնու զխաչն խնդութեամբ, և անցեալ փութանակի գայ, հասանէ ի Նորավանս ուխտ. և բնակեցուցանէ անդէն զսուրբ նշանն, որ և եգիտ վախճանեալ զքեռին իւր Տէր Ստեփաննոս. բայց տուաւ ի գինս գերեալ խաչին ի Լիպարիտէ 1000 դահեկան կարմիր, որպէս ասացաքն: Իսկ թիթեղնակապն և կամարակապն մնացին անդէն ի Կեչառուս»:

II

«... Լինի աղմուկ վասն սուրբ խաչին, և գնան երկոքին եպիսկոպոսքն (այսինքն՝ Ստեփաննոս և Սարգիս–Լ. Մ.-Բ.) և Լիպարիտն և որդի իւր Ելիկումն ի դատաստան առ Աթաբէկ Իվանէն ի Դվին: Եւ նորա նստուցեալ զմեծամեծս իւր հրամայէր քննել՝ զԲուպակն և զՄարծուանն, զԻվան Դպէլն և զՄեմնաչաղէլն. զմեծ ճաւնդիտէլն՝ որ եկեալ էր ի թագաւորութենէն, զծիրամ ծղաւրն Վարձէոյ և զծիրամ ծղաւրն Պղնձահանիցն և զմեծ մամթավարն Գարշտէուցն, զԳագեցին և զՄածնաբերդեցին և այլ բազում դէդեպուլք ևս զղա-

տին Տփղեաց և զզատին Անւոյ և զզատին Դվնայ և զանուանի չեխն Սուրմարւոյ, ընդ որոց և զմեծ եպիսկոպոսն Անւոյ և զեպիսկոպոսն Բջնւոյ և զեպիսկոպոսն Հախբատայ. որք և քննեալ իրաւունք դատեցան այսպէս եթէ «Մեռեալն և գերեալն զմի ունին օրինակ. որ ոք զմեռեալն յարուցանէ՝ ոչ է ծնողացն ծնունդ, այլ նորոգողին գնա. և որ ոք զգերեալ թափէ, ոչ է ստացողին յայնմհետէ, այլ գերեթափին: Արդ, որպէս աշխարհս այս առմամբ սրոյ և ձեռին սեպհական կոչի ժառանգութիւն Վրաց թագաւորութեան, այնպէս և այն խաչ սեպհական էր Իվանէի, և ի տալն գնա ի Լիպարիտ և ի տէր Սարգիս բազում ծախուք մինչ ի 1000 դահեկան, Լիպարտի և իւր եկեղեցւոյն է պարտ լինել յաւիտենական ժառանգութիւն»:

«Ապա այսմ դատաստանի յոյժ հաճութեամբ հաւանեալ Աթաբէկին և ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն՝ հրամայեցին ունել զխաչն անդայլին և անհամիմաղ Լիպարտի և իւրոցն»[2]:

* * *

Ստ. Օրբելյանի հաղորդագրությունը, ինչպես տեսնում ենք, բաղկացած է 2 հիմնական մասից. առաջինում տրված է գործի եղելության պատմությունը, իսկ երկրորդում՝ դատաստանական արտակարգ ատյանի կազմի և դատավարության նկարագրությունը:

Երկրորդ մասն ևս, իր հերթին, ի նկատի ունի 3 դրվագ. 1. դատաստանական ատյանի կազմը, 2. այդ կազմի կայացրած դատավճիռը, և 3. վերջինիս հաստատումը գերագույն պետական մարմնի կողմից:

Այժմ անցնենք Ստ. Օրբելյանի վկայության մանրամասնություններին:

Պատմիչի հիշատակած վեճը ծագել է Իվանե Աթաբակի օրոք, 1215 թվին, հետևապես՝ Վրաստանում Գիորգի Լաշայի թագավորության (1213–1222) և Սյունիքում Վասակ իշխանի կողմնակալության պահին:

Վիճելի առարկան եղել է Լիպարիտաշեն Նորավանքի «գերահռչակ և փառաւոր ուխտին» պատկանող «աստուածընկալ սուրբ Նշանը», այն է՝ «սքանչելագործ Խաչն», որ մի ժամանակ գրավական է եղել դրված հիշյալ վանքում, իսկ 1216 թվին Վասակ իշխա-

---

[2] ***Ստեփաննոսի*** Սիւնեաց ***եպիսկոպոսի,*** Պատմություն Տանն Սիսական ի ... Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 256-261, Պատմութիւն նահանգին Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոս Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 352-356:

նը, խախտելով պայմանագիրը՝ հանել էր այն իր տեղից և ընծայել Իվանե Աթաբեկին, որ և գրել էր այն «ի պահեստի ի Պղնձահանքն»: Հայցողի դերում հանդես են գալիս Ստեփանոս և Սարգիս՝ Նորավանքի եպիսկոպոսները[3], Լիպարիտ Սյունյաց իշխանը և նրա որդի Ելիկումը: Պատասխանողի դերումն է Պղնձահանքը (2): Դատավարության տեղն է Դվին քաղաքը:

Դատաստանական ատյանը՝ ճանաչելով, որ «այն խաչ սեպական էր Իվանէի», սակայն ի նկատի առնելով, որ նախքան այդ՝ Լիպարիտ իշխանըև Նորավանքի Սարգիս եպիսկոպոսը «բազում ծախուք մինչ ի 1000 դահեկան» գիջել էին այն Նորավանքին, որոշում է, որ «Լիպարտի և իւր եկեղեցւոյն (այսինքն՝ Նորավանքին) է պարտ լինել յաւիտենական ժառանգութիւն»: Ապա ատյանի հանած դատավճիռը «յոյժ հաճութեամբ» հավանութիւն է ստանում Իվանե Աթաբակի և «ամենայն բազմութեան ազատակոյտ իշխանացն» կողմից. այսինքն վավերացվում է և հաստատվում գերագույն պետական իշխանության կողմից:

Ինչ վերաբերում է դատաստանական ատյանի կազմին, այն ըստ Ստ. Օրբելյանի վկայության բաղկացած է եղել ad hoc ժողոված 6 խավի ներկայացուցիչներից, որոնք են. 1. Վրաց արքունիքը՝ հանձինս «մեծ ճղաւնդիտէլ»-ի, «որ եկեալ էր ի թագաւորութենէն», 2. Վրաց ազնվականությունը՝ հանձինս «Մեմնաշաղէլ»-ի և «բազում զէզեպուլ»-ների, 3. Հայ ազնվականությունը՝ հանձինս Բուպակ և Մարծոճան իշխանների, նաև Գագի և Մածնաբերդի տերերի, 4. վրացադավան (քաղկեդոնիկ) հոգևորականությունը՝ հանձինս «Իվան դպէլ»-ի, «Վարձէոյ» և «Պղնձահանիցն» «ծիրամ ծղաւրն»-երի ու Գարշտէուցն» «մամթավար»-ի, 5. Հայադավան (հակաքաղկեդոնիկ) հոգևորականությունը՝ հանձինս «Անւոյ» «մեծ եպիսկոպոս»-ի, նաև «Բջնոյ» և «Հաղբատոյ» եպիսկոպոսների, և 6. մահմեդական հոգևորականությունը՝ հանձինս «Տփղեաց», «Անւոյ» և «Դվնայ» ղատիների և «Սուրմարւոյ» «անուանի չեխ»-ի:

Հետևապես, մահմեդական հոգևորականությունը քրիստոնեական եկեղեցուն վերաբերյալ խնդրում նույնպիսի հեղինակությամբ է եղել օժտված, ինչպես վրացադավան և հայադավանները, որ այն ժամանակ գոյություն ունեցող խղճի կատարյալ ազատության փայլուն ապացույցն է:

Հայկական և վրացական աղբյուրները, բարեբախտաբար, մեզ

[3] Ղ. Ղ. Ալիշան, Սիսական, Վեն., 1893, էջ 20:

հնարավորություն են տալիս եթե ոչ լրիվ, գոնե հիմնականում «հականե-հանվանե» ճշտել Ստ. Օրբելյանի հաղորդած ցուցակը, որ անցյալում թե՛ ակադ. Իվ. Ջավախիշվիլու և թե՛ մասամբ էլ մեր կողմից մի երկու կետում ուղիղ չի մեկնաբանվել. որի հետևանքով, օրինակ, Ստ. Օրբելյանի «Բուպակ»-ը վերածվել էր «դիդեբուլ»-ի և «Մարծուան»-ը «մարզպան»-ի[4], իսկ «Գարշտէուցն» մի դեպքում (1914 թ.) թարգմանվել է իբրև «Գարեսջիի» (վրացերեն՝ «գարեսջիսա»)[5], իսկ մյուսում (1929 թ.)՝ կապվելով Գագի և Մածնաբերդի հիշատակությունների հետ՝ տվել է տարօրինակ ձևակերպում հետևյալ իմաստով. «Գարշտիի (?), Գագի և Մածնաբերդի մեծ հայրապետները»[6]:

1. Վրաց արքունիքի ներկայացուցիչը՝ «մեծ ճղաւնդիտէլ»-ը դա նույն «աւագ ծիկնաւպարն... դիվանին Աւնաւփրէ անուն» կրող դիվանձնավորությունն է, այսինքն վրաց արքունիքի ավագ դիվանադպիրը կամ դպրապետը և առաջին վեզիրը կամ վեզիրապետը, որ վրացերեն կոչվում էր «մծիգնոբարթ ուխուցեսի դա վազիրթա «պրոտոպերատիմոս», կամ «պրոտոպեուպիրվելեսի», նույնիսկ «պրոտոպերատիմոս», կամ «պրոտոպեուպիրվելեսի», նույնիսկ «պրոտոպե-

ուպիրվելեսի», նույնիսկ ...

ոտիմոս»[7], որ սովորաբար կապված էր Մարտվիլիի կամ Ճղ'ոնդիդի (Սամեգրելոյում) արքեպիսկոպոսական-մետրապոլտական կոչումն կրող աթոռակալի հետ[8]: Ուստի և այդ եկեղեցականը կոչվում էր «Ճղ'ոնդիդելի», որ Ստ. Օրբելյանի տառադարձությամբ «ճղաւն-
գիտէլ»-ի է վերածվել, իսկ Հաղարծնի 1184 թ. մի արձանագրութ-
յան մեջ նույնիսկ «ճղունտել»-ի, որ ոմանք սխալմամբ «ճպունտէ-
լի» էին կարդում[9]: Ի դեպ, նշենք, որ Հաղարծնի 1184 թ. արձանագ-
րության մեջ հիշված «ճղունտելի»-ն Անտոն (Անտոնի) անունն է
կրում, մինչդեռ Օրբելյանի մատնանշած 1216 թ. ատյանին մաս-
նակցողը եղել է «Աւնաւփրէ»-ն, այսինքն Օնոփրեն, որ հայերե-
նում համապատասխանում է «Օնոփրիոս»-«Ոնոփրիոս»-ին:

[4] **Իվ. Ջավախիշվիլի,** Վրաց ժողովրդի պատմությունը, վրացերեն, II, Թբ., 1914, էջ 655. Չմմտ. **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, Երևան, 1936, էջ 67:

[5] Նույն տեղը:

[6] **Իվ. Ջավախիշվիլի,** նույն տեղը, էջ 655: **Նույնի՝**–Վրաց իրավունքի պատմությունը, վրացերեն, II, Թբ., 1929, էջ 480:

[7] **Սարգիս Կակաբաձե,** Շիոմղվիմեի երեք սիգել, վրացերեն, Թբ., 1912, էջ 7:

[8] **Իվ. Ջավախիշվիլի,** Վրաց իրավունքի պատմությունը, II, էջ 124-140:

[9] *Л. Меликсет-Беков,* Одна из надписей Агарцинского монастыря,–“Христ. Восток”, т. III, вып. 2, 1914, стр. 197-198, **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, Եր., 1934, էջ 221:

2. Վրաց ազնվականության կողմից հիշված են «բազում դէդեպուլք», այսինքն մեծամեծներ–իշխաններ և, մասնավորապես, «Մեմնաշաղէլ»-ը, որ նույն՝ Օրբելյանի պատմության մեջ այլուր (գլ. 65[66]) հիշված «Զաղելմեմնայ»-ն պիտի լինի, այսինքն «Մեմնա Զաղ՚ելի»-ն կամ «Զաղ՚եցի Մեծնա»-ն: Այս անձնավորությունը վրաց աղբյուրներում չի երևում:

3. Հայ ազնվականության ներկայացուցիչներից Բուպակ և Մարծուանը քաջ ծանոթ են հենց հայկական աղբյուրներից:

Բուպակին Ստ. Յրբելյանը անվանում է Իվանե Աթաբակի «գործակալ և հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոյ և աւագ հէջպաց, մեծ և բարեպաշտ իշխանն Բուպակ կոչեցեալ», որ էր «աներ Լիպարտի՝ որդւոյ Ելիկումին»: Նույնը հիշվում է Նորավանքի 1223 թ. վիմական ըդարձակ արձանագրության մեջ, ուր, ի միջի այլոց, կարդացվում է հետևյալը. «Ի ժամանակի թագաւորութեանն որդւոյ Թամարին Լաշային, յամիրսպասալարութեան Իվանէի հաւրեղբաւր նորին ես մեղուցեալ ծառայ Քրիստոսի Բուպակ՝ իշխանաց իշխան, եկի ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորավանից առ երջանիկ հայրապետ մեր տէր Սարգիս և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց, զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց և իմ արեամբս թափեալ զԱղբերիս գիւղ իւր ամէն սահմանաւն, ի սուրբ եկեղեցիս Նորավանից՝ ի սուրբ Կարապետս և ի սուրբ Նախավկայս տուի ազատ յամէն հարկաց… ի թուին հայոց ՈՀԲ (=672 [1223])»[10]*:*

Մարծուան կամ Մարծպանը հիշվում է Լոռի-Ձորագետի շրջանի մի շարք վիմական արձանագրությունների մեջ «յիշխանութեան մեծի Մարծպանայ»՝ Դսեղի 1204 թ. ներքո[11]*, նաև Սանահնի 1211 թ. ներքո*[12]*. «Ես Մարծպան, որդի Սարգսի, թոռն Համազասպեանց, յազգէ Մամիկոնեանց, շինեցի զվանս և զամէն եկեղեցիքս և արարի ինձ տուն և գերեզմանատուն»՝ Դսեղի 1221 թ. ներքո*[13] *XIII դարու 30-ական թվականների վերջերից սկսած նույն շրջանի այլ արձանագրությունների մեջ հիշվում են Մարծպանի զավակները. «Գրիգոր որդի Մարծպանայ՝ Դսեղի 1239 և 1241 թ.թ.,*[14] *և «Ավանբէկ, որդի Մարծպանայ»՝ նույն Դսեղի 1245 թ.*[15]*:*

Իսկ Գագի և Մածնաբերդի (Մահկանաբերդի) տերերի անունները չեն հիշված:

4. Վրացադավան (քաղկեդոնիկ) հոգևորական դասից չհաշված ճղ՚ոնդիդելուն, Ստ. Օրբելյանը անունով հիշում է միմիայն մեկին «Իվանե Դպէլ»-ին, մյուս երեքին լոկ կոչումով:

«Իվանե Դպէլ»-ը՝ դա նույն Իվանե կամ Հովհան Տբեթի (Տայք-Կղարջքում) եպիսկոպոսն է, որ հիշատակված է Թամար թագուհու ժամանակվա (1184–1213)՝ Տբեթի տաճարի մի երկաթագիր վրացերեն արձանագրության մեջ[16]*:*

«Ծիրամ ծղաւրն» ակնհայտ աղավաղումն է վրացերեն «ծինամձղուարի» կամ «ծինամձղվարի»-ի[17]*, որ նշանակում է* վանահայր, առաջնորդ վանից *(ռուսերենում* игумен, настоятель монастыря*): Հետևապես դատաստանական ատյանի մասնակիցներից երկուսը եղել են Վարձիի (Մեսխեթ-Ջավախքում) և Պղնձահանքի (Լոռիի Թե-Բջնիի)*[18] քաղկեդոնիկ *վանքերի առաջնորդ-վանահայրերը:*

«Մամթավար» ևս աղավաղումն է վրացերեն «մամաթ-մթավարի»-ի, որ նշանակում է հայրապետ, պատրիարք, երեցապետ, *բայց և նեղ մտքով՝* վանահայր, առաջնորդ վանից*: Ուրեմն «մեծ մամթավարն Գարշտէուցն» ասելով՝ Ստ. Օրբելյանը մատնանշել է Գարեսջիի (Ղարայազ կարայանից 30 կմ հեռավորությամբ, Կուր գ. դեպի հյուսիս) «Բազմալերաց» (մրավալմթա) նույնպես* քաղկեդոնիկ *անապատների վանահոր վրա, որ սովորաբար եպիսկոպոսի կամ արքեպիսկոպոս-մետրապոլիտի աստիճան է ունեցել և, ըստ այնմ, կոչվել է «ձեռնադրող արքիմանդրիտ» (մակուրթխեվել-արքիմանդրիտի), որ ռուսերենում* священно-архимандрит-*ին է համապատասխանում*[19]*:*

[10] **Ղ. Ալիշան,** Սիսական, 186, **Կ. Կոստանեանց,** Վիմական տարեգիր, էջ 67, հմմտ. **Ե. Լալայան,** Վայոց-ձոր նշանաւոր վանքեր–«Ազգագրական հանդէս», XXVI, 1916, էջ 99:

[11] **Ս. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի մեծ Հայաստան I, 117, **Կ. Կոստանեանց,** Վիմական տարեգիր, 46:

[12] **Ս. Ջալալեանց,** I, 24– **Կ. Կոստանեանց,** 52:

[13] **Ս. Ջալալեանց,** I, 113= **Կ. Կոստանեանց,** 64:

[14] Նույն տեղը, I, 110, 114= **Կ. Կոստանեանց,** 81, 83:

[15] Նույն տեղը, I, 118, 114= **Կ. Կոստանեանց,** 88- 89:

[16] *Н. Марр,* Дневник поездки в Шавшетию и Кларджетию,–"Тексты и разыскания по армяно-гоузинской филологии", кн. VII, СПб. 1911, стр. 12.

[17] Հմմտ. **Հր. Աճառյան,** Հայերեն արմատական բառարան, VII, 1935, էջ 147 (ըստ մեր ցուցմունքի):

[18] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, 64-69:

[19] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Գարեսջիի Բազմալերանց հայկական էպիգրաֆիկան և պոլիգլոտ՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն արձանագրությունը, վրացերեն,–ИЯМК, V–VI (հոբելյանական ժողովածու, նվիրված ակադ. Իվ. Ջավախիշվիլու գիտական գործունեության 40-ամյակին), Թբ. 1940, էջ 153-175:

Այսպիսով «մամաթմթավարի»-ն տարբերվել է «ծինամձղվարի»-ից:

5. Հայադավան (հակաքաղկեդոնիկ հոգևորականության) աստիճանավորներից դատաստանական ատյանին մասնակցել են Անիի «մեծ եպիսկոպոսը», այսինքն «երիցապետ եպիսկոպոսը» կամ «արքեպիսկոպոսը», նաև Բջնիի և Հաղբատի եպիսկոպոսները:

Հիշյալ ժամանակամիջոցին (1216) Անիի արքեպիսկոպոսական աթոռը գրաված է ունեցել Գրիգոր՝ որդի Ապուղամրի, որի անունը նշված է Անիի 1217 և 1218 թ.թ. հայերեն արձանագրությունների մեջ, առաջինում իբրև «արհիեպիսկոպոս»[20]*, իսկ երկրորդում (Եպիփան վրաց կաթողիկոսի 1218 թ. վրացերեն արձանագրության հայերեն* post scriptum-*ի մեջ)՝ «երիցապետ եպիսկոպոս»*[21]*, այսինքն «Աւագ եպիսկոպոս» կամ արհի:*

Մյուս՝ զույգ եպիսկոպոսներից Բջնիի աթոռակալի անունը չի երևում, իսկ Հաղբատինը թերևս Հովհաննես Խաչենեցին լինի, որ հայտնի է Զորագետի վիմական արձանագրություններից 1195–1226 թ.թ. շուրջը[22]*:*

6. Մահմեդական հոգևորականության ներկայացուցիչների, այն է Թբիլիսիի, Անիի և Դվինի ղադիների ու Սուրմարվի անվանի շեյխի անունները մնում են անհայտ:

* * *

Ահա այսպիսի ընդարձակ կազմով Դվինում 1216 թ. ժողոված աշխարհիկ և հոգևորական դասերի ներկայացուցիչները՝ իբրև արտակարգ գերագույն դատաստանական ատյան՝ վճիռ են կա-

---

[20] **Ղ. Ալիշան,** Շիրակ, Վեն. 1881, էջ 63-64:

[21] ***E. Bopè,*** Les Ruines d'Ani–"Le Correspondant revue mensuelle", I-re Année–3-e livraison, Paris, 1843, p. 322; *Н. Марр,* Надпись Епифания, католикоса Грузии,– "Известия Академии Наук", 1910, стр. 1439; ***Յ. Օրբելի***, Անւոյ աւերակները, Վաղարշապատ, 1911, էջ 57 (=«Արարատ» ամսագիր, 1911, օգոստոս, էջ 668), ***Н. Марр,*** Ани, Книжная история и раскопки на месте городища. Л.-М., 1934, стр. 85 и табл. XLII, рис. 182; ***В. Дондуа,*** К социально-экономической жизни средневековой Грузии по Анийской надписи (1218) Епифания,– "Академия Наук СССр, академику Н. Я. Марру", Л.-М 1934, стр. 649; ***Իվ. Ջավախիշվիլի,*** Սոցիալական պայքարի պատմությունը Վրաստանում IX–XIII դարերում, վրացերեն, Թբ., 1934, բջ 11: ***Իվ. Ջավախիշվիլի,*** Նյութեր Հայաստանի սոցիալական շարժումների պատմության համար, թարգմ. վրացերենից Լ. Մելիքսեթ-Բեկ, Երևան, 1936 (1937), էջ 29:

[22] ***Ս. Ջալալեանց,*** I, 66, ***Ռոստոմբէգ Երզնկեան,*** Յնախոսական տեղագրութիւն Յաղպատայ աշխարհահռչակ վանից, Վաղ. 1880, էջ 58, ***Կ. Կոստանեանց,*** Վիմական տարեգիր, 68, ***Լ. Մելիքսեթ-Բէկ,*** Վարդապետ Յայոց հիւսիսային կողմանց, վրացերեն, Թբ., 1928, էջ 177-179:

յացրել Նորավանքի սքանչելագործ Խաչի ում պատկանելու վիճելի խնդրի շուրջը, որ ապա հավանություն է գտել ու վավերացվել բարձր իշխանության կողմից:

ПО ПОВОДУ ОДНОГО СВИДЕТЕЛЬСТВА ОБ УСТРОЙСТВЕ И ПРОЦЕССЕ ВЫСШЕГО СУДА В ЗАХАРИДСКОЙ АРМЕНИИ

(Страница из истории армянского и грузинского права)

РЕЗЮМЕ

В связи с крайней скудостью данных как нормативного, так и нарративного характера относительно судоустройства и судопроизводства в феодальной Армении и отсутствием подлежащей полноты в соответствующей научно-правовой литературе, посвященной истории армянского процессуального права (Л. Инчичян, А. Гарагашян, J. Kohler, J. Karst, Х. Самуэлян, В. hАацуни и др.), автором настоящей статьи дается попытка анализа свидетельства армянского историка XIII века Стефана Орбеляна (История Сюнии, гл. 63 [64] и [65]) по данному вопросу.

Свидетельство Ст. Орбеляна касается высшего судилища, созванного в чрезвычайном порядке для рассмотрения спора, возникшего в 1215 г. между Нораванкской антихалкедонитской (в Сюнии) в Пгндзаhанкской халкедонитской (в Лори или Бджни ?) обителями спора относительно Нораванского животворящего Креста, который подарен был князем Васаком Сюнийским Иванэ Атабаку, а последним –Пгндзаhанкскому монастырю.

Суд был созван по распоряжению Иванэ Атабака, с санкции грузинского царского двора, в гор. Двине а 1216 г. из многочисленных представителей светской и церковной иерархии, в следующем составе, как свидетельствует Ст. Орбелян: "Бупак и Марцуан, Иван Тбели и Мемнаджакели, великий Чкондидели, явившийся от царского дома, настоятель Вардзии и настоятель Пгндзаhанка, а также великий архимандрит Гаресджы, Гагец и Мацнабердец, и много других вельмож, также кадий Тбилисский и кадий Анийский и кадий Двинский и именитый шейх Сурмалинский, и с ними великий епископ Анийский, и епископ Бджнийский и епископ Ахпатский".

Однако, список членов верховного судилища, ad hoc созванного

в Двине в 1216 г., нуждается в пересмотре, уточнения и, что самое главное, перегруппировке имен участников соответственно их сословно-кастовой и конфессиональной принадлежности, как мы предлагаем, по 6 признакам, с последующим сведением таковых к 6 основным группам:

1. Представитель грузинского царского двора, царского дома (и, одновременно, грузинской высшей церковной иерархии) – первый визирь, государственный секретарь и Чкоидидский митрополит Онофрий.

2. Представители грузинской феодальной знати – Мемна Джакели и другие вельможи.

3. Представители армянской феодальной знати – князь Бупак, тесть Липарита Еликумовича Орбеляна, главный камергер или гофмейстер; князь Марцуан или Марцпан, сын Саргиса, внук Амазаспа, Мамиконян Дсегский; а также владели Гага и Мацнаберда или Маһканаберда (по-груз. Манкаберда), имена коих не устанавливаются.

4. Представители грузинского (халкедонитского) духовенства – Иван или Иоани, епископ Тбетский (в Тао-Кларджии); священно-архимандрит, т. е. архиепископ или митрополит, Гареджийских пустынь (около нын. Караяз, к северу от Куры); и настоятели-игумены халкедонитских монастырей Вардзийского (в Месхии-Джавахети) и Пгндзаһанкского (в Лори или Бджни ?).

5. Представители армянского (антихалкедонитского) духовенства: Григорий, сын Апугамра, архепископ Анийский; Иоаннес Хаченец, епископа Ахпатский; и епископ Бджнийский, имя которого не устанавливается.

6. Представители магометанского (мусульманского) духовенства: кадии Тбилисский, Анийский и Двинский, а также "именитый" шейх Сурмалинский, имена коих также остаются неустановленными.

Нужно еще отметить, что решение чрезвычайного суда было основано на принципе полной веротерпимости и свободы совести, при участии в споре между антихалкедонитской и халкедонитской сторонами, как между истцем и ответчиком, третьей совершенно нейтральной конфессиональной группы в лице 4-х духовных сановников из магометан; причем таковое (решение), вынесенное в пользу Нораванкского монастыря, т. е. Антихалкедонитской стороны, было одобрено и утверждено Иванэ Атабаком, который, как известно, был халкедонитом.

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Որոշակի ցուցումներ հայերի առկայության մասին Վրաստանում գեթ մ. թ. IV դարից հաղորդում են վրացական և հայկական սկզբնաղբյուրները: Այսպես, XI դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին (Լեոնտիոս Ռուխսեցին), պատմելով ս. Նինոյի (Նունեի) Հայքից Ջավախեթիի ճանապարհով դեպի Կուր գետի հովիտը և ապա Քարթլիի (Իբերիայի) մայրաքաղաք Մցխեթան անցնելու մասին, հաղորդում է հետևյալը.

...Զորրորդ ամսին, որ է հունիսը, Նինոն (Նունեն) ուղևորվեց և հասավ Ջավախեթիի (Ջավախքի) լեռները, ուր հանդիպեց արտահոսող մի մեծ լճի, որին Փարավնա են կոչում... Այնտեղ նա մնաց երկու օր և լճում ձուկ որսացող ձկնորսներից կերեկուր խնդրեց: Այնտեղ կային և հովիվներ, որոնք հսկում էին իրենց գիշերվա հսկելիք հոտերին...իսկ սուրբ Նինոն (Նունեն) մի փոքր տեղյակ էր հայերենին, *քանի որ այն նախապես սովորել էր Նիափոր [Դվինեցուց]: Եվ այդ հովիվների մեջ նա գտնելով հայախոսի՝ հարցրեց նրան, թե՝ «ո՞ր կողմերից (գյուղերից) եք»: Իսկ նա*

«...և ի յունիս ամսեան եկի ի լեառն Ջաւախեթոյ. և ի ծովն Փարնաւայ և

եկեալ՝ տեսի անդ ձկնորսս ի ծովուն, և հովիւս առ եզերբ ծովուն,

լուայ,... զի տեղեակ էի լեզուոյն Հայոց, *ուսեալ ի տանն Նիափորոյ Դվնացւոյ: Եւ հարցեալ զուստին, ասեն՝ ի Դարբայ, ի Լրբնայ, ի Սափուրսլոյ, ի Քինծերոյ, յՌապատէն և ի մեծ քաղաքէն Մցխեթոյ, ուր աստուածք փառաւորին, և թագաւորք թագաւորեն»*[1]

[1] ქართლის ცხოვრების ძველი სომხური თარგმანი, ქართ. ტექსტი და ძველი სომხური თარგმანი გამოსცა **ილია აბულაძემ**, თბ., 1953, გვ.80-81.

պատասխանեց և ասաց. «Էլարբին և Սափուրցլե գյուղ[եր]ից, և քինձարացի, մեծ քաղաք Մցխեթայի ռապատցի, ուր աստվածները աստվածություն են անում և թագավորները թագավորում»[2]

Վրաց պատմիչի այս տողերից, ինհարկե, չի կարելի չեզրակացնել, որ ս. Նինոյի (Նունեի) Քարթլի անցնելու պահին, սել է՝ IV դարի առաջին և երկրորդ քառորդներում, Քարթլիում, թեև փոքրաթիվ, հայախոս տարր եղել է, ճիշտ այնպես, ինչպես, օրինակ, Մցխեթայում եղել է հրեաների թաղամաս:

Կորյունի «Վարք Մաշտոց»-ում նշված փաստը, որ «ի կողմանս Վրաց», Բակուր թագավորի և Մովսես եպիսկոպոսի օրոք, հայտնի էր «այր մի թարգման վրացերէն լեզուին, որ անուանեալ կոչէր Ջաղայ, այր գրագէտ և ճշմարտահաւատ»[3]*, անկասկած, ապացույց է այն իրողության, որ IV–V դարերի միջոցին Քարթլիում հանձին Ջաղայի եղել է «թարգման» հայերենից վրացերեն և ընդհականակը (2):*

Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկը, որի ամուսինն էր «Բդեաշխ ոմն աշխարհին Վրաց, որոյ անունն Վազգէն, որդի Աշուշայ բդեշխի», հավանական է, իր նստոց-դղյակ Ցուրտավում, որը, համաձայն մեր հետազոտության, այժմյան Առբխլը (նախկին Նախիդուրի) գյուղի տեղում կամ նրա մոտիկ շրջակայքում պիտի լիներ[4]*, չէր կարող չունենալ իր* հայախոս *շջապատը, եթե ոչ ավելին, ինչպես այդ երևում է «Գիրք թղթոց»-ից:*

Եվ իրավ, վրաց Կյուրիոն կաթողիկոսի 3-րդ թղթում ի պատասխան հայոց Աբրահամ կաթողիկոսի, ի միջի այլոց, ասվում է, որ «եպիսկոպոսունք, որ ի Ցուրտաւ լեալ են, ի սրբոյն Շուշանկանէ *և այսր...և այլ եպիսկոպոսունք ի Հայոց և ոմանք ի Վրաց էին՝ ի Հայս ուսեալք գիտունք և վարդապետք. և նոքա և մեր վարդապետք ընդ միմեանս խաղաղութեամբ կեցին. ի միմեանց ուսանէին և զմիմիանս ուսուցանէին...*[5]*:*

*Հայոց Աբրահամ կաթողիկոսի առաջին թղթում չեշտված է, որ «զմիաւորութիւն հաւատոյ և զասպնջականութիւն զերկոցունց աշխարհացս Ցուրտաւայ եկեղեցին անշարժ միջնորդութեամբ պահէր, ուստի սէր և (*var *ուստ և) խնամութիւնք (*var *խնդութիւն) մարմնաւորականք և հաղորդութիւնք հոգևորականք կատարէին ցնծալից ուրախութեամբ»*[6]*:*

Կյուրիոնն իր հերթին պատասխանելով Աբրահամին, չեշտում է, «որ եպիսկոպոսն եղև՝ վրացի ուսումն գիտէ և հայ նոյնպէս, և երկոքումբք դպրութեմբք պաշտաւնն կատարի»[7]*:*

Նույնը կրկնում է Կյուրիոնը՝ Սմբատ Վրկանա մարզպանին ուղղված իր թղթում[8]*: Ընդսմին չի կարելի հաշվի չառնել Ղազար Փարփեցու «Մեղադրութիւն ստախոս աբեղայից» թուղթը՝ ուղղված Վահան Մամիկոնյանին, ուր նշվում է, թե Ղազարը սնվել և դաստիարակվել է իբրև սննդակից և խաղակից Վահանի ու նրա եղբայրների՝ սրանց մայր Ձուիկի մոտ՝ Վրաց երկրում: «...Երանելի մայրն քո (Ձուիկ) յորժամ առ բդեշխն ած զձեզ, յորում դրան և զմեզ ուսացանէին, սակայն թէպէտ և ըստ տիոց աւագագոյնք քան զձեզ էաք, այլ սննդակիցք էաք զձեզ և խաղակիցք, կրելով ի խաղու զարկանելիս ձեր զկնի ձեր. սնուցանէ մայրն ձեր (Ձուիկ) օրհնեալ և Անուշ-Վռամ ըստ իւրեանց հոգեսիրութեանն և զմեզ ընդ ձեզ՝ որպէս և զձեզ»*[9]*:*

XV դարի հայ իմաստասեր Առաքել Սյունեցին Դավիթ Անհաղթի «Գիրք Սահմանաց»-ի մեկնաբանության մեջ Դավթին նմանեցնում է Մովսես Իսրայելացուն, որը «բազում վիշտս կրեաց յԻսրայէլէ»,

[2] ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით **ს. ყაუხჩიშვილის** მიერ, ტ. I, თბ. 1955, გვ. 85-86, [Հմմտ.] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ա., Երևան, 1934, էջ 172:

[3] ***Կորիւն***, Վարք Մաշտոցի, ուղղեալ և լուսաբանեալ ի Գառնիկ Ֆնտգլեանէ, Երուսաղէմ, 1930, էջ 31-32: ***Կորիւն,*** Վարք Մաշտոցի, ի ձեռն Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, էջ 62-63:

[4] «Վրաց աղբյուրներ...», էջ 12-15 [Հմմտ.] մեր հոդվածը მარქსისტული ენათმეცნიერებისათვის ժողովածուում, თბ. 1934, 26-44, Հմմտ. **იაკობ ცურტაველი**, მარტვილობა შუშანიკისი, ქართული და სომხური ტექსტები გამოსცა, გამოკვლევა, ვარიანტები, ლექსიკონი და საძიებლები დაურთო **ილია აბულაძემ,** ტფ, 1938, გვ, 054-056.

[5] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 178, հմմտ. էջ 194:

[6] «Գիրք թղթոց», էջ 164, ***Ուխտանէս,*** Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, Վաղարշապատ, 1870, էջ 74:

[7] «Գիրք թղթոց»,166=***Ուխտանէս,*** 76:

[8] «Գիրք թղթոց»,171=***Ուխտանէս,*** 85-96:

[9] «Ղազարայ Փարփեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան («Պատմագիրք Հայոց», I), Տփղիս, 1904, էջ 188, հմմտ. աշխարհաբար թարգմանությունը՝ ***Մ. Նալբանդյան,*** Երկերի լիակատար ժողովածու, III, Երևան, 1940, էջ 234:

«այսպէս և Դաւիթ ի Հայոց նեղութիւն և հարուածք, և վէրք»[10]*: Ապա մեկ առ մեկ թվելով Դավիթ Անհաղթի՝ Հայաստանում ունեցած անհաջողության պատճառները, Առաքել Սյունեցին, ի միջի այլոց, նշում է. «զի ազգամբ էին յանդիմանեալք ի նմանէ, անարգեցին զնա և զբանս նորա, և հարեալ վիրաւորեցին զնա. և նա գնա*ցեալ ի Վիրս և անդ կացեալ վախճանեցաւ»[11] :

Զարմանալի զուգադիպությամբ Դավիթ *Անհաղթի ժամանակակից «ասորի» հայր համարվող* Դավիթ *Գարեջելին (Գարեջացին) ևս, մուտք գործելով* via armeniaca *Տփղիս, նույն բախտին է արժանանում, ինչ որ Դավիթ Անհաղթը, այսինքն՝ ենթարկվում է անարգանքի և վիրավորանքի, ուստի և ստիպված է լինում հեռանալ Տփղիսից ու հաստատվել հետագայում «Գարե-ջա» (=Իմաստնոց արտաքնոց) կոչված վայրը, ուր և մնում է ցմահ: Միաժամանակ հետաքրքիր է և այն, որ Դավիթ Գարեջելին միակն է VI դարի Վրաստանի գործիչներից, որը իմաստասիրությամբ է զբաղվում և նույնիսկ արիստոտելյան ուսմունքի հետևող է: Բացի դրանից, նա միակն է, որ խոսում է հայերեն և պայքարում «բարբարոսի» (=բորբորիտոնի) դեմ «Տվարածափ» (=Տավարածատափ) և «Հայոց ձոր» կոչված վայրերի մոտ, իսկ մահվանից հետո պաշտամունքի առարկա է դառնում առանձնապես հայերի աչքում, որոնք հեռավոր տեղերից գալիս են երկրպագելու նրա գերեզմանը, որին կից հայերեն արձանագրություններ են թողնում՝ ակնարկելով «անյաղթ փիլիսոփային»:*

Թվում է, որ մեր կատարած հատուկ պրպտումներից հետո անհիմն չպիտի թվա մեր կռահումը, որ Դավիթ *անունով հայտնի VI դարի հայ փիլիսոփաներից մեկը՝ Անհաղթը, նույնացվում է* Դավիթ Գարեջելիի *հետ: Դրանով իսկ միանգամայն հասկանալի է դառնում մի քանի տասնյակ հայերեն արձանագրությունների առկայությունը «Գարեսջայի բազմալեռանց» անապատներում*[12]*:*

[10] Գիրք Սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի, Հայոց իմաստասիրի, շարադրեալ ընդդէմ իմաստակ պիհռոնացւոյ որ ուրանային զէութիւն իմաստասիրութեան եւ յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հոգեշահ մեկնութեամբ տեառն Առաքելի եռամեծ վարդապետի, աշակերտի սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ, Մադրաս, 1797, էջ 166:

[11] Նույն տեղում, էջ 172:

[12] Մանրամասնությունները տե՛ս մեր աշխատություններում՝ «Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը». «Գրական-բանասիրական հետախուզումներ», I, Երևան, 1946, էջ 243-267, Гаресджийская тетралингва эпохи монголов (1352 г.), "Эпиграфика Востока", VIII, М.-Л., 1953, стр. 54-62, մանավանդ էջ 61: Հմմտ. [დავით უძლეველი და გარეჯელი, "საიუბილეო კრებული კ. კეკელიძის დაბადებიდან 80 წლის თავზე" თბ., 1959, გვ. 197-232].

Ուխտանես պատմիչն իր «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հա-
յոց» երկում, ի միջի այլոց տրտունջ հայտնելով այն առթիվ, որ
«Գիրք թղթոցում» ինքը չի կարողացել գտնել Հայոց Մովսես կա-
թողիկոսի մի թուղթը և վրաց Կյուրիոն կաթողիկոսի պատասխա-
նը, խոստովանում է, որ «ի բազում ջան մտեալ հազիւ կարացաք
գտանել»: Ուխտանեսը գրում է. «Ի խնդիր ելեալ գտաք ի Տփխիս
քաղաքի, որ է ի Վրաց նահանգի, մերձ առ ստորոտով լերինն Կով-
կասու՝ ի վերայ գետոյն որ կոչի Կուր: Քանզի էր քահանայի միոյ
գտեալ ի գիրս Վրաց, որում անուն քահանային Կիրակոս կոչիւր:
Որ և նա մեծաւ աշխատութեամբ գրեալ և թարգմանեալ ի մերս լե-
զու՝ ետ մեզ գրով: Վասն զի ինքն իսկ կարի քաջ գիտէր զգիր և
զլեզու Վրաց»[13]*: «Մեծաւ աշխատութեամբ» թարգմանություններ կատարող քահանան, հարկավ, Տփխիսում պիտի ունենար իր ծուխը (հոտը)՝ եկեղեցիով:*

Լեոնտի Մրովելին, խոսելով խազարների առաջացման մասին, որը, ինչպես հայտնի է, տեղի ունեցավ միմիայն VII դարում, նշում է.

«Այն ժամանակ ... Քարթլիում խոսում էին վեց լեզվով (այսինքն՝ տարածված էր վեց լեզու-Լ. Մ-Բ.)՝ հայերեն, *վրացերեն, խազարերեն, ասորերեն, եբրայերեն և հունարեն»*[14]*(3):*	*«...Յայնմ ժամանակի խաւսէին ի Վիրս վեց լեզու՝* հայերէն *և խազրի, ասորի և եբրայեցի, յոյն և որ ի խառնից նոցա հավաքեցաւ՝ վրացին»*[15]*:*

Այս տեղեկանքին Լեոնտին կցում է այսպիսի ծանոթություն. «Այս լեզուները գիտեին բոլորը՝ Քարթլիի թագավորները, այր և կանայք»[16]*:*

Վրաստանի տարածքում պահպանված հնագույն հայերեն արձանագրությունները Ատենի Սիոն տաճարի (Գորիի մոտ) ըստ էության շինարարական վիմագրություններն են, բոլորը VII դարից: Տաճարը, ինչպես հայտնի է, ճիշտ ընդօրինակումն է Մցխեթայի բլրի սուրբ Խաչի, որ կառուցվել է VII դարի սկզբին, հետևապես, Ատենի Սիոնը կառուցված պետք է լինի մի քիչ ուշ՝ կամ VII դարի

[13] **Ուխտանէս**, 14:

[14] ქართლის ცხოვრება, I, გვ. 16: *Г. В. Церетели*, Армазская билингва, Тбилиси, 1941, стр. 70, прим. 70.

[15] ქართლ. ცხ. ძვ. სომხ. თარგმანი, გვ. 23.

[16] Տե՛ս ծանոթ. 14:

միջին տասնամյակներում, կամ երկրորդ կեսին: Տաճարի մեզ հասած արձանագրությունները, որ երկիցս հրատարակել ենք մենք[17]*, հնարավորություն տվին մեզ մշակելու նրա պասպորտիզացիան, ճշտելով կառուցման միջոցին կատարած աշխատանքի բաժանման սկզբունքները. օրինակ՝ որ տաճարի հիմքը կառուցել է և շինարարության ընդհանուր ղեկավար է եղել հայ Թոդոսակը, գմբեթի կառուցողը՝ ոմն Գրիգոր Դապս, իսկ այլևայլ մասերի (ճակատների, պատերի, խորանների) կառուցողները հիմնականում եղել են երկու վարպետներ, հյուսիսայինի՝ Ահարոնը, և արևելյանի ու արևմտյանի՝ Գիորգը (վերջինս, անկասկած, վրացահայ) (4):*

Շատ հավանական է, որ հենց այս՝ Ատենի Սիոն տաճարում տեղի ունենար X դարի սկզբին և, համենայն դեպս, ոչ ուշ քան 913–թ.թ. Ափխազաց թագավոր Կոստանդինի որդի Գիորգիի պսակադրությունը հայոց Սմբատ թագավորի դստեր հետ, որոնց դեմքերը պատկերագրված են տաճարի արևմտյան թևի հյուսիսային պատի վրա[18]*: Ի դեպ, այս եղելության հեռավոր արձագանքն է XI դարի «Քարթլիի մատյանը» երկասիրության անանուն հեղինակի ցուցմունքը, որ*

«Այդ ժամանակ ելավ Ափխազաց թագավոր Կոստանդին, գրավեց Քարթլին, և նրա հետ թշնամացավ Հայոց թագավոր Սմբատ Տիեզերա- կալը (ուղիղ՝ Խոստովանողը –Լ. Մ.-Բ.). արշավեց-եկավ մեծ զորքով ու մոտեցավ Ուփլիսցիխեին … և հնարանքով բերդը գրավեցին: Սակայն Սմբատն ու Կոստանդը բարով խնամիացան և [Սմբատը] ետ վերադարձրեց Ուփլիսցիխեն և ամենայն Քարթլին»[19]*:*

«Ի ժամանակս Սմբատայ Հայոց արքայի Տիեզերակալի (ուղիղ՝ Խոստովանողի–Լ. Մ.-Բ.), որ մարտ եղեալ ընդ Կոստանդեայ թագաւորին Ափխազաց՝ էառ զՔարթլ և զՈւփլիսցիխէ. և դարձեալ հաշտեալ՝ խնամիք եղեն»[20]*:*

[17] **Լ.Մելիքսեթ-Բեկ,** Ծաղկաքաղ բանից նախնի հայերէն, Թիֆլիզ, 1920, էջ 112-113, ***նույնի***՝ VII դարի հայերեն արձանագրությունները Վրաստանում (Ատենի Սիոն), «Տեղեկագիր ՀՍՍՀ, ԳԱ, 1945, № 5, էջ 2-3:

[18] Շ. Ամիրանաշվիլու զեկուցման թեզիսները տե՛ս Վրացական ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական սեսիա 1941 թ. 11-13 հունիսի. Աշխատանքների ծրագիրը և զեկուցումների թեզիսները, Թբիլիսի, 1941, էջ 7 (վրացերեն):

[19] "ქართლ. ცხ. ძვ. სომხ. თარგმანი" გვ. 215.

[20] ქ. ც., 1942, էջ 165, ქ. ც., 1955, էջ 262:

VII դարի դարի «Աշխարհացոյցի» հեղինակը Քարթլիի հարավ-արևելյան ծայրանասերի ձորերը թվարկելիս դրանք ներկայացնում է, եթե կարելի է այսպես ասել, հայկական վերնազգեստով, այսինքն՝ փոխանակ վրացերեն «խեվի»-ի (ձոր), գործածելով հայկական «փոր»-ը՝ Ծոփափոր–Ջորափոր–Կողբոփոր-*ի նմանությամբ, Ալգեթի կամ Մանգլիսի ձորը կոչելով* «Մանգղեաց փոր», *Փոլադաուրիի կամ Բոլնիսի ձորը կոչելով* Բողնոփոր *և Մաշավերի կամ Քվեշի ձորը՝* Քուեշ/ա/փոր, *որի մեջ չի կարելի, իհարկե, չնշմարել հայկական տենդենցի արտահայտությունը՝ կապված, հավանական է, այն հանգամանքի հետ, ու հիշյալ ձորերը VII դարում հայախառն բնակչություն ունեին:*

Այս կապակցությամբ գուցե հավանականությունից զուրկ չլինի «Մանգըլիսի» (այստեղից հայերեն՝ «Մանգղի-ք») տեղանունը կապել ոչ թե վրացական «նամգալի» (մանգաղ) բառի հետ, ինչպես ժողովրդական ստուգաբանությունն է ներկայացնում, այլ «անգղ», ցեղի անվան հետ, որին կցված են սովորական վրացական ածանցները՝ նախածանց «մ» և վերջածանց «իս», որտեղից էլ ստացվել է «Մանգլիսի»[21]*:*

Նույն ճանապարհով, մեր կարծիքով, Հերեթի կենտրոնը՝ այժմյան Ռուսթավին, պետք է կոչվեր «Բոստան-քալաքի» (5), որը Ս. Երեմյանի մեկնաբանությամբ՝ նույն հայկական-պարսկական «Ոստան-քաղաքի» *փիլացիան պիտի լինի*[22] *:*

Նմանապես ակներև է մի շարք աշխարհագրական անունների (տեղանունների) ծագումը Վրաստանում, եթե կարելի է այսպես ասել, via armeniaca*: Այսպիսին է, օրինակ, Արևմտյան Վրաստանում Մարտվիլիի (Ճղոնդիդիի) վանքի մոտ գտնվող դաշտի անունը՝ «Մահերե», որը ստուգաբանվում է միայն իբրև վրացական ուրույն «Մհեր» անվան (հավանական է, Մհեհարտհայտություն հայկական «Մհեր» անվան (հավանական է, Մհե-*

[21] Հմմտ. [*Гр. Капанцян*, Историко-лингвистические значение топонимики древней Армении, Ереван, 1940, стр. 82-84].

[22] *С. Еремян*, Феодальные образования Картли в период марзбанства (532-627). Тезисы диссертации на степень кандидата наук, Ленинград, 1935. Այստեղ տեղին կլիներ նշել, որ այնպիսի տեղանուններ, ինչպիսիք են «Կածարեթ դղեակ» և «Խամշի վանք», որ հիշատակված են Կիրակոս Գանձակեցու և Զաքարիա Յովհաննավանեցու մոտ, ունենալով իրենց երկվորյակները Գարե-Կախեթում (Դրսի-Կախեթում) «Կածարեթի» և «Խաշմի»-ի ձևով, իհարկե, չեն կարող ծառայել ապացույց հայերի գաղթի Առանից կամ Հայքից Կախեթ, այլ ընդհակառակը, որ նրանք պիտի անցնեին Կախեթից Առան-Հայքը (ლ. მელიქსეთ-ბეგი, კაჭარეთი, "საისტორიო მოამბე", 1924, № 2, 160-161):

րի առասպելի հետ անցած լինի Հայաստանից Վրաստան)[23]: Նույնը պետք է ասել և «Աբարան» տեղանվան առկայության մասին Մարտղոփիի շրջանում:

Համեմատաբար ավելի համոզիչ են վրացական տվյալները հօգուտ այն դրույթի, որ Վրաստանի հարավ-արևելյան մասում հնուց (V–X դ.դ.) ապաստան են գտել հայ աղանդավորների (6) բեկորները, որի հետևանքով այստեղ առաջացել են անկասկած հայկական ծագում ունեցող մի շարք տեղանուններ, ինչպիսիք են «Սոմխեթիս խեվի», այսինքն «Հայոց ձոր» (ըստ IX դարի հեղինակ Արսեն Սափարացու[24]), «Տվարածատափ» (ըստ Գիորգի Աթոնելու վարքի[25]), որը հայերեն «Տավար-արած[ելու]-տափ»-ը պիտի լինի (հետագայում ռուսերեն Тауротапа-ի աղավաղված):

Սուլխան-Սաբա Օրբելիանիի բառարանում «թողրակելի», այսինքն «թո[ն]դրակեցիներ» հիշատակությունը, իբրև հերձվածողի հոմանիշ, հավանական ապացույց է Վրաստանում թոնդրակեցիների բեկորների ունեցած տարածման[26]: Վերջապես, այս շարքի տեղանուններից է և «Մծղնեթի»-«Ծղնեթի»-ին, որով հայտնի են առնվազն երեք գյուղեր հարավային Քարթլիում (ըստ Վախուշտիի աշխարհագրական քարտեզի):, հետագայում նաև Թբիլիսիի շրջակայքում: Սույն տեղանունը մենք ստուգաբանում ենք իբրև վերապրուկ՝ «մղձնեից» աղանդի մի տեսակ «իմպորտի» վրացական հողում[27]:

VIII դարում, երբ հայկական բարբառների թիվը, համաձայն Ստեփանոս Սյունեցու վկայության, «միջերկրեայ»-ի և «ոստանիկ»-ին կողքին, եղել է յոթը, նրանցից երկուսը հատկապես, այն է՝ «տայեցին» և «սպերացին»[28], կարող էին առաջանալ վրացական միջավայրի հետ մերձեցման կամ այդ միջավայրի մեջ ընկնելու հետևանքով (7): Մյուս կողմից, նկատելի է, որ հայ գաղթականների Տփղիս եկող նոր և նոր ալիքների, այդ թվում և Փայտակականից մտնող

[23] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Արտավազդի և Միհրի հետքերը Վրաստանում, «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», № 1-2, էջմիածին, 1922, էջ 104:

[24] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները..., LXI, էջ 46:

[25] **Նույն** տեղում, էջ 26, 221:

[26] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Վրաց աղբյուրները..., Բ, Երևան, 1936, էջ 122: **Նույնի**՝ Նոր նյութեր թոնդրակեցիների մասին, «Արշավ» (Թբիլիսի), 1940, № 2, էջ 53:

[27] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** Նոր նյութեր թոնդրակեցիների մասին, էջ 52-53: Հմմտ. նաև՝ **ლ. მუსხელაშვილი,** არქეოლოგიური ექსკურსიები მაშავერის ხეობაში, თბ. 1941.

[28] *Н. Адонц.* Дионисий Фракийский и армянские толкователи, 1915, էջ 187:

գաղթականների հետևանքով, հատկապես հայերը Վրաստանի մայրաքաղաք Տփղիսին X դարից նոր անուն են տալիս, այն է՝ Փայտակարան[29], ճիշտ այնպես, ինչպես Հայաստանի այժմյան մայրաքաղաք Երևանի այլևայլ արվարձանները մեր օրոք կոչվեցին Ամասիա, Արաբկիր, Բյութանիա, Զեյթուն, Կիլիկիա, Մալաթիա, Վարդաշեն և այլն:

1002 թ. հայադավան ուտիացիների մի բեկոր (թե՞ գերդաստան) եկել է Տփղիսին կից գտնվող վրաց հինավուրց ուխտատեղի՝ Թելեթի սրբավայր, կառուցելով այնտեղ հայոց եկեղեցի, որի շինարարական արձանագրությունը, հավանական է, եկեղեցին հնանալուց և քանդվելուց հետո, ամփոփվել է նույն Թելեթիի հետագայում կառուցված եռահարկանի զանգակատան ստորին հարկի պատի մեջ[30]:

1051 թ. և 1069–1072 թ.թ. են պատկանում Սամշվիլդեի հայերեն արձանագրությունները: Բագրատունյաց Անիի անկումից հետո (1046, մինչև 1065 թիվը) Սամշվիլդեն Լոռի-Տաշիրի կամ Զորագետի Կյուրիկյան հարստության մայրաքաղաքն էր: «Սոմխիթի» կամ «Սոմխեթի» հորջորջումը, որով վրաց մատենագրության մեջ հնագույն ժամանակներից մինչև XI դարը հայտնի է Հայքը (Հայաստանը), թերևս այս շրջանում անցավ Հարավային կամ Ստորին Քարթլիին (մինչև Թելեթիի կամ Սողանլուղի լեռնաշղթան Թբիլիսիի մոտ), ուստի և այս երկրամասի բնակիչները՝ թե հայեր և թե վրացիներ, «սոմխիթարի», այսինքն՝ «սոմխեթցի» էին կոչվում և այժմ էլ այդպես են կոչվում[31]:

Վրաստանի հայկական բնակավայրերի ծագման ու զարգացման պատմության համար առանձնապես կարևոր է Մատթեոս Ուռհայեցու հանրածանոթ վկայությունը Դավիթ Բ Շինողի (1089–1125) մասին: «Եւ սա (Դավիթ) երևացաւ ընդունող և սիրող ազգին Հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց. և սա շինեաց քաղաք Հայոց յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքին Գօռա, և ունէր մեծաւ

[29] Նկատի ունենք Թովմա Արծրունուն, Աղբերկա ս. Նշանի պատմության անանուն հեղինակին, Կեղծ-Շապուհ Բագրատունուն, Վարդան Արևելցուն, Հովհաննես Երզնկացուն: Առաքել Դավրիժեցուն, Խաչատուր Ջուղայեցուն, Թբիլիսիի 1795 թ. ավերման զույգ պատմիչներին (Սերոբին և Անանունին) և բազմաթիվ այլ գրիչների:

[30] **ლ. მელიქსეთ-ბეგი,** სომხური სიძველენი ტფილისის ახლო მიდამოებში, შაჰნაბად-თელეთ-წავკისი, "საქ. მუზეუმის მოამბე", 1922 გვ. 97-98.

[31] Հմմտ. Վարդան Արևելցու խոսքերը՝ «Գաւառն Տաշրաց..., զոր Վիրք Սամխեթ կոչեն» (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 90):

ուրախութեամբ և ցնծութեամբ ղամենայն ազգն Հայոց»[32]: Ապա պատմիչը շարունակում է. «Կայր և հարազատ որդի մի թագաւորին Դաւթի, որում անուն ասէին Դեմետրէ, ի ճայ կնոջէ»[33]: Մ. Ուռհայեցու այս վկայությունը, իհարկե, այնպես չպետք է հասկանալ, որ Դավիթ Շինողն է հիմնադրել Գորին հատկապես հայերի համար, քանի որ նույն Գորին իբրև գյուղ և գյուղաքաղաք հիշատակված է Կեղծ-Շապուհ Բագրատունու մոտ դեռևս X դարի անցքերի նկարագրության մեջ[34], այլ պետք է մեկնաբանել այն իմաստով, թէ 1123–1125 թ.թ. սկսած Գորին վերածվել է վաճառաշահ քաղաքի՝ բազմամարդ հայկական գաղութով, բաղկացած արհեստավորական, առևտրական և հոգևորական խավերից, որոնք և կառուցել են թե՛ Գորիի և թե՛ մոտիկ շրջակայքի հայկական եկեղեցիներն և վանքերը (Ուփլիսցիխեում, Քվախրելիում և այլն):

1238 թ. Հովհաննես Վանական վարդապետ Տավուշեցին Տփխիսում եղած պահին գրել է իր հայտնի հիշատակարանը Տավուշի արծաթակազմ ավետարանում. «Ես՝ Վանականս, գրեցի իմով ձեռամբս ի Տփխիս քաղաքի՝ ի դրան սուրբ Քառասնիցս, զի գերեալ էր Աւետարանս ի Տաւշոյ ի Մուղան ի թաթարէն և յետ երից ամաց աստ բերեալ անվնաս՝ վաճառեցին ի ՈՁԷ (=1238) թուիս, զոր փառաւոր աւագէրէց Սարգիս՝ հասարակ պատուական քահանայիւք և աստուածասէր ժողովրդական տանուտէրաւք բազում ծախաւք և աշխատութեամբ գնե[ա]լ՝ եառւն ի մեզ»[35]:

XII–XIII դարերում Թիֆլիսում հիմք է դրվել Հաղբատի և Սանահնի վանատըներին, որոնցից առաջինը իբրև «Բերդի մեծ եկեղեցի», իսկ երկրորդը՝ «Բերդի փոքր եկեղեցի»[36]: Նրանցից մասնավորապես առաջինը հիմնադրվել է 1251 թ. «պարոն Ումեկի» կողմից, որն էր «մայրենի ազգաւ թոռն մեծի իշխանին Ջալալայ՝ տեառն Խաչենոյ»[37]: Եվ ահա, հենց այս՝ «պարոն Ումեկի» կոչված եկեղե-

[32] **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Բ տպ. Վաղարշապատ, 1898, էջ 356:

[33] **Նույն** տեղում:

[34] «Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921, 80-81:

[35] *С. В. Тер-Аветисян*, Автограф Иоанна (Ованеса) Ванакана Тавушского, "Известия КИАИ" IV, 1926, стр. 52-53. Ср. *Л. Меликсет-Бек*, О междоусобице…, стр. 52, **Գարեգին Ա. կաթողիկոս**, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 903:

[36] *Л. Меликсет-Бек*, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой пасхи, "Известия КИАИ" III, 1926, стр. 53. **Նույնի**՝ Վրաց ազբյուրները Հայաստանի և հայերի մասին, Գ., Երեվան, 1955, էջ 260-265, 268, 272-273:

[37] Տե՛ս «Ստորագրութիւն Տփղիս քաղաքի», «Արարատ» (Տփղիս), 1858, № 4,

ցում 1284 թ. Հովհաննես վարդապետ Երզնկացին (Պլուզը) քարոզել է «Յաղագս երկնային շարժմանն, նյութի շուրջը, որի առաջաբանում ասված է. «Ես, նուաստս Յոհաննէս Երզնկացի, աշակերտ հոգելից հօրն և սուրբ վարդապետին Վարդանայ, սպասաւոր սուրբ գրոց բանի. ի թվին ՇԼԳ (=1284) պատահեաց գալ ի կողմանս աստուածապահ թագաւորութեանս աշխարհին Վրաց, ի հռչակաւոր և ի մեծ ի մայրաքաղաքն ի Տփխիս, Փայտակարան կոչեցեալ ի գիրս պատմողաց: Ու հանդիպեցաւ խօսել մեզ բան քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան Հայոց՝ պարոն Քարիմատինին, զոր շինեալ էր աստուածասէր և բարի հոգի հայրն նորա պարոն Ումեկն: Եւ էր խօսեցեալ բանն՝ յաղագս երկնային շարժման, վասն որոյ ախորժելի եղև զուարթամիտ պատանւոյն Վախթանգայ, որ էր որդի կրտսեր հռչակաւոր անուան պարոն Ումեկին...»[38]:

XIII և հետագա դարերում ծաղկում են հայկական գաղութները Ալիում, Դմանիսում, Թմոգվում և այլուր, իսկ XV դարից՝ և՛ Կախեթի մայրաքաղաք Գրեմիում: Նույն դարերում բազմաթիվ հայ ուխտավորներ այցելել են Գարեսջայի «բազմալեռաց» անապատները, ուր՝ ըստ նրանց երևակայության և համոզման, ինչպես ասվեց, ամփոփված էին «անյաղթ փիլիսոփայի» նշխարները:

1319–1352 թ.թ. միջոցին Վրաստանի մայրաքաղաք Տփղիսում «Պարոն Ումեկի» երեք թոռները՝ Ումեկեան Սուջահաթ, Առյուծ և Ջալալը, որոնցից առաջինը հիշվում է Գարեսջայի անապատների արձանագրություններից մեկում, կառուցում են եռանավ (վեցսյունից), եռասեղան և եռագմբեթ Վանքի տաճարը[39], իբրև ընդօրինակություն Սանահնի վանքի Աստվածածին եկեղեցուն 1211 թ. կցված եռանավ (վեցասյուն) գավիթ-ժամատան[40]:

սեպտեմբեր, էջ 51. «Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք, արարեալ հոգելից և իմաստուն վարդապետին Յոհաննիսի Երզնկացւոյ, որ և ասի Ծործորեցի, սակս սքանչելարուեստ արարչագործութեանց Աստուծոյ, Նոր Նախիջևան, 1792, էջ Թ–Ժ: *И. Орбели*, Фрагмент крестного камня с арабской надпсью в Тифлисе, "Христианский Восток", т. VI, вып. 2, Пгр., 1922, стр. 198.

[38] «Տետրակ համառօտ և լի իմաստնախոհ բանիւք», էջ Թ–Ժ: Յմմտ. ***Գարեգին ա. ե. Յովսէփեան***, Նիւթեր և ուսումնասիրություններ հայ արուեստի և մշակույթի պատմութեան, պրակ Ա, Երուսաղէմ, 1935, էջ 1-14 (Վախտանգ որդի Ումեկայ և նորա տոհմը):

[39] **ლ. მელიქსეთ-ბეგი,** ტფილისის ვანქის დაარსების საკითხისათვის, "ტფ. უნ. მოამბე", IV, 1924, էջ 82-91, ***Նույնի***՝ Վրաց աղբյուրները, Գ, 265-272:

[40] Յմմտ. *С. Х. Мнацаканян*. Архитектура армянских притворов, Ереван, 1952, стр. 106 и 107, рис. 87 и 88.

Տփղիս, Գորի, Թմոգվի, Գրեմի և այլ քաղաքներում հայոց ներգաղթի ստվարացում է նկատվում Անիի կործանումից հետո: Հայերի նոր հայրենիքում, առանձնապես Տփղիսում, մշակվում է եկեղեցական ճարտարապետության ոճ, որը հիմնականում բխում է Անիի մայր եկեղեցու տիպից (եռանավ քառայուն գմբեթակիր կառուցվածքից, որտեղ կողքի (հյուսիսային և հարավային) նավերը վրացական եկեղեցիների համեմատությամբ նեղ են և, բացի դրանից, տանիքի արևմտյան ծայրին կցված են փոքրիկ զանգակատներ):

1352 թ. ոմն մեծատուն Սարգիս Ասլանի որդի, իր կնոջ և Ամիր Սայիդ զավակով հանդերձ, ուխտագնացության է մեկնում Գարեջա և այդ առթիվ վիմափոր վանքերից մեկի սեղանատան պատի սվաղի վրա դեղնագույն ներկով գրում է քառալեզվյան հիշատակարան՝ վրացերեն (իբրև բուն երկրի տիրող լեզվի), հայերեն (իբրև ուխտավորների մայրենի լեզվի), պարսկերեն (իբրև ժամանակի բարձր խավերի գրական լեզվի) և ույղուրերեն (իբրև մոնղոլական աշխարհակալության պետական լեզվի[41]):

Ուշ միջնադարի Կախեթի թագավորության մայրաքաղաք Գրեմիի 1595 թ. երեքլեզվյան (հայերեն, վրացերեն, պարսկերեն)[42] արձանագրությունները, նաև Տփղիսի XVII–XVIII դ.դ. բազմաթիվ շինարարական և այլ բնույթի վիմագրերը[43] (8), ոչ մի կասկած չեն թողնում, որ հայ առևտրական և արհեստավորական խավերը նշանակալի դեր են խաղացել ուշ միջնադարում ոչ միայն հիշյալ մայրաքաղաքների, այլև բովանդակ արևելյան Վրաստանի կյանքում (9):

[41] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** 14-րդ դարի Ասլանի որդի Սարգսի քառալեզվյան արձանագրության մասին. «Տեղեկագիր» Հայկական ՍՍՀ ԳԱ, 1946 թ., № 7, էջ 31-38: ***Л. Меликсет-Бек***, Гаресджийская тетралингва эпохи монголов 1352 г., “Эпиграфика Востока”, VIII, Л., стр. 54-62 и рис. там же.

[42] ა. შანიძე, **ვ. ფუთურიძე**, სამენოვანი წარწერა გრემში, ენიმკის მოამბე, V–VI, თბ., 1940, გვ. 1-11.

[43] ***Սրգիս Վ. Ջալալեանց***, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, II, Թիֆլիս, 1858, էջ 53-74, *M.Brosset*, Voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, II, Rapp., V, SPв., 1851, pp 1-26.

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ[1]

Հայերի դերը վրաց մշակոյթի պատմութեան մէջ ակներև է, բայց աւելի ևս աչքի է ընկնում հայերի կատարած ծառայութիւնը վրաց գրականութեան ասպարէզում, մանաւանդ հնում՝ սկսած հնագոյն ժամանակներից մինչև Վրաստանի միացումը Ռուսաստանի հետ: Սոյն յօդուածի նպատակն է ըստ կարելւոյն մի առ մի թուել անուններն այն հայազն գրական դեմքերի, որոնք այսպէս թէ այնպէս որոշ դեր են խաղացել վրաց գրականութեան ասպարէզում մինչև XIX դարու սկիզբը:

Վրաց գրականութիւնը իր զարգացման ընթացքում թևակոխել է մի քանի շրջան: Այսպէս, օրինակ, յայտնի է հնագոյն շրջան საბაწმიდური սաբածմիդուրի–«Սաբա Նուիրագործի», երբ վրաց դպրութիւնը՝ դեռ նոր ոտքի ելած (V դարուց)՝ սկսեց զարգանալ Երուսաղէմի ս. Սաբա Նուիրագործի անուամբ յայտնի լավրայում, հետզհետէ բուն դնելով նաև նոյն Երուսաղէմի յանուն ս. Խաչի վրաց մենաստանում, Սինայի ս. Կատարինէի և Անտիոքի Հրաշից և Սև լեռանց վանքերում: Ի միջի այլոց, սա այն շրջանն է, երբ վրացիք այն ժամանակուայ իրենց գրական՝ այսպէս կոչվուած «սոնմեխ»ական («սոն-մեխ»ական=սո-մեխ»ական)`լեզուի վերածեցին Աստուածաշունչը, նմանապէս և այլ եկեղեցական գրքեր, թարգմանելով այդպիսինները կամ անմիջապէս ասորերէնից, կամ հայերէնից (1):

Երկրորդն է այսպէս կոչուած ტაო-კლარჯული տաօ-կլարջուլի–«Տայք-Կղարջեան» (Տայք-Կղարջքի) շրջանը, սկսած IX դարուց, երբ վրացիք՝ տիրելով Տայք (ტაო Տաօ) և Կղարջք (კლარჯ-ეთ-ი Կլարջ-էթ-ի) կոչուած գաւառները՝ հպատակում են իրենց այնտեղի բնիկ, թէև արդէն [մասամբ] քաղկեդոնականութեանը յարած ու մեծ մասամբ վրացացած, հայ ազգաբնակութիւնը և այնուհետև՝ վերանորոգելով աւեր թողած վանքերն ու եկեղեցիները (օրին. Իշխան, Շատբերդ, Միջնաձոր, [Խախու] և այլն)՝ հիմք են դնում նոր գրականական չկօլային վրացոց մէջ, որ յայտնի է «Տայք-Կղարջեան» անուամբ: Ահա այդ սրբավայրերում սկսած IX դարուց ծագում է

[1] Կարդացուած Հայոց Ազգ. ընկ. աշխատակ. անդամ. ժողովում 1921 թ. փետր. 2-ին:

վրաց եկեղեցական աստուածաբանական-իմաստասիրական գրականութիւնը, որը իր տրադիցիաներով իսկապէս ներկայացնում էր շարունակութիւն հայերի վաղեմի գրական գործունէութեան, իսկ միւս կողմից հանդիսանում կարապետը այսպէս կոչուած «Աթոնեան-Կոստանդնուպօլսեան» դպրոցին (X դարու վերջերից):

«Տայք-Կղարջեան» շկօլան վրաց հին գրականութեան մէջ հայերի համար յատկապէս նշանակալից է այն տեսակէտից, որ՝ չնայած հայ և վրաց քոյր եկեղեցիների պաշտօնապէս բաժանման (ըստ պ. Ի. Ջաւախիշվիլու 607 թուին, ըստ հայր Ներսէս Ակինեանի 608–609 թուին)՝ գրականութեան ասպարէզում դեռ էլի շարունակում էր երկու հարեւան և եղբայրակից ժողովրդների փոխադարձ շփումը: Ցաւալի է միայն, որ պատմութիւնը չի պահպանել ոչ մի տեղեկութիւն այն հայերի մասին, որոնք այս շրջանում գործել են վրաց գրականութեան ասպարէզում (2):

Բացառութիւն է կազմում նրանց մէջ միմիայն XI դարու յայտնի գործիչ Գրիգոր Բակուրեանը, որ ծագում էր, –ինչպէս պ. Նիկ. Մառն է ասում, –«կրօնով վրացացած հռչակաւոր հայ տոհմից» (из огрузинившегося по религии армянского знатного рода)[2]: Ծնուած լինելով Տայք-Կղարջքում՝ այդ Գրիգորը մի ժամանակ վարել է ամիրայի պաշտօն Անիում, իսկ յետոյ՝ անցնելով Բիւզանդիոն՝ ստացել հռչակ բիւզանդական յայտնի պետական գործչի, իբրև հմուտ վարչագէտ և Ալէքս Կոմնէն կայսեր գահակալութեան ընթացքին գլխաւոր դեր խաղացողը, որի համար էլ վարձատրուել էր խոշոր կալուածներով կայսրութեան զանազան մասերում, մանաւանդ Բուլղարիայում[3]: Վերջերում այդ անձնաւորութիւնը՝ յայտնի չէ թէ ինչ պատճառով ընդունել է կուսակրօնութիւն և 1083 թուին վերանորոգել ու ընդարձակել Բուլղարիայի Բաչկովօ քաղաքի մօտերքում գտնուող այսպէս կոչուած Պետրիծոնիտիսայի մենաստանը, որտեղ էլ հիմք է դրել քաղկեդոնիկ դաւանութեան՝ բայց և միաժամանակ ճակայունական՝ վանական միաբանութեան (վրացիներից, հայերից և այլն) հանդերձ համապատասխան կանոնադրութեամբ գրուած երեք լեզուով՝ յունարէն, վրացերէն և հայերէն (3): Այդ մենաստանում XI–XII դարում ծաղկեց վրաց «Անյաղթ Դաւիթը»՝ Յովհան Պետրիծին:

[2] **Н. Марр.** Иоанн Петрицкий, грузинский неоплатоник XI–XII века, "Записки Вост. Отд. Рус. Археол. О-ва", т. XIX (Спб. 1909), стр. 54.

[3] **Н. Марр.** Арк'аун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, –"Византийский Временник", т. XII (Спб. 1905), стр. 17-18:

Ըստ երեւոյթին, այս Գրիգոր Բակուրեանը զուրկ չի եղել և գիտական-գրական գործունէութիւնից, թէև մեզ հասած տեղեկութիւնների հիման վերայ անկարելի է ասել, թէ ինչ է գրել նա բացի յիշեալ «Կանոնադրութիւն»-ից:

Յաճախ պատահում է, որ հայերը, խօսելով իրենց հայրենակիցների վրացական ասպարէզում կատարած ծառայութիւնների մասին, այնպէս են ոգևորւում, որ ընկնում են չափազանցութիւնների մէջ և մինչև անգամ սահմանն էլ անցնում: Ես ի նկատի ունիմ վերջերս հայ հասարակութեան մէջ բոյն դրած այն անհասկացողութիւնը, որ ծագեց վրաց գրականութեան պարծանք Շոթա Ռուսթաւեցու (Ռուսթաւէլու) անուան շուրջը[4]:

[4] Այդ անհասկացողութեան սկզբնապատճառն է մեզ քաջ ծանօթ ակադեմիկոս-պրոֆեսոր Նիկ. Մառը, որին վերագրում են կարծիք, որ իբր թէ Շոթան ծագումով «հայ» է եղել:

Իսկապէս ասած, այսպիսի մի փորձ վրաց ոսկեդարու (XII–XIII) հեղինակ համարուող Շոթային «հայացնելու» նկատմամբ առաջացաւ 1916 թուի դեկտեմբերից, երբ պ. Ն. Մառը Բագւում եղած ժամանակ կարդաց մի հրապարակական դասախօսութիւն նուիրուած այս Շոթայի անմահ պօէմային՝ ვეფხისტყაოსანი **Վեփխիստղաօսանի** վերնագրով, որ հայերէն ուղիղ թարգմանւում է «Ընձենաւոր»: Այդ դասախօսութեան մէջ, որ ապա կրկնուեց Ռուսաց Գիտութեանց ճեմարանի Պատմաբանասիրական բաժանմունքի 1917 թուի 25 յունուարի նիստին, յարգելի գիտնականը, ի միջի այլոց, շօշափեց հետաքրքիր հարց, թէ ո՞վ էր իր ազգային ծագումով վրաց գրականութեան վիթխարի ներկայացուցիչը: Քանի որ այդ դասախօսութիւնը նոյն 1917 թուին տպագրուեցաւ յիշեալ ճեմարանի Bulletin-ներում, անհրաժեշտ եմ համարում կրկնել պ. Ն. Մառի ասածները Շոթայի վերաբերմամբ:

Խօսելով «Ընձենաւոր»-ի մէջ գործածուած «արմենիզմ»-ների մասին պ. Ն. Մառը բացատրում է, որ դոքա իսկապէս փոխառութիւններ են ոչ թէ Հայաստանի լեզուներից, որ նա անուանում է «հայերէն» (hанский=գրաբառ) և «արմենական» կամ «արամիկ, (армянский=աշխարհաբառ), այլ այն՝ ժողովրդական «սոն-մեսխ» («սոն-մեխ»=«սո-մեխ»)-ական (այս տերմինի մասին տես՝ *Л. Меликсеть-Беков.* О "сомех"–"Сомехет'и", –"Христианский Восток", изд. Рос. Акад. наук, т. VI, 1917, в. 1. (հարցին վերաբերեալ պ. **Ն. Մառի** յօդուածների յիշատակութեամբ) բարբառից, որ մի ժամանակ, օրինակ V դարում, վրաց գրական լեզու էր համարւում (այդ բարբառով է թարգմանուած նոյն դարում հայերէնից Ս. Գիրքը, որ այնուհետև վերածել են վրացերէնի, այսինքն «քարթերէնի»), իսկ յետոյ, օրինակ XII դարում, հանդիսացաւ իբրև մայրենի լեզու մեծն բանաստեղծի:

Այնուհետև պ. Ն. Մառը շարունակում է (բերում եմ բառացի՝ ռուսերէն, որպէսզի պահպանած լինեմ յարգելի գիտնականի լեզուի ոճը հանդերձ նրա բոլոր առանձնահատկութիւններով). "В связи с арменизмами, идущими из народных недр месхской племенной среды, не могу не остановиться на одном имени. Армянский язык в данном случае не является первоисточником, поскольку мы имеем в виду арио-европейский его слой, но в составе армянкого, обоих языков Армении, и hайскаго и собственно армянского, имеется и яфетический слой, притом не один, и благодаря этому армяне сохранили нам в свидетельствах весьма ранних эпох длинный ряд яфетических имен; появление некоторых из них в армянской письменности связано с национализацией армянской культуры, и вот в числе таких национальных армянских имен, передавшихся, кстати, с Багратидской династией и древним грузинам, имеется между прочим "А-шот". Не подлежит

Շոթա Ռուսթաւեցու անուան հետ անմիջապէս կապված է վրաց ոսկեդարու մի ուրիշ բանաստեղծի անունն ևս: Այդ բանաստեղծը Սարգիս Թմոգւեցին (Թմոգւէլին) է, որը յիշատակուած է «Ընձենաւոր»-ի վերջաբանի վերջին տան մէջ՝ დილარგეთ სარგის თმოგველსა, მას ენა დაუშრომელსა *(ibid, «Ընձենաւոր», հրատ. Ս. Կակաբաձէի, եր. 250, 251) «Դիլարգէթին [երգեց] Սարգիս Թմոգւեցին իր սահուն լեզուով»: Ուրեմն, Սարգիս Թմոգւեցին հեղինակ է այն գրուածքի, որ նուիրուած է Դիլարգէթին. իսկ այս Դիլարգէթը, ի մէջի այլոց, յիշատակուած է նոյն ոսկեդարու մի այլ բանաստեղծ՝ Ջախրու-*

спору, что от этого имени происходит и имя нашего поэта “Шот’-а”, идущее бесспорно из народной месхской среды. Вопрос, значит, лишь в том, следует-ли отнести это имя к арменизмам или к сванизмам самой народной месхской среды? И в том, и другом случае заслуживает внимания, что наш писатель не носит христианского календарного имени” (*Н. Марр,* Грузинская поэма “Витязь в барсовой шкуре” Шоты из Рустава и новая культурно-историческая проблема, –“Известия Акад. наук”, 1917 г., стр. 446).

Ահաւասիկ այն ամենը, ինչ որ պ. Ն. Մառը արտահայտել է Շոթա Ռուսթաւեցու ծագման հարցի վերաբերեալ: Ինչպէս ընթերցողը տեսնում է, այստեղ ոչ մի խօսք չկայ Շոթայի «հայ» լինելու մասին, այլ միայն յայտնուած է կարծիք, որ գուցէ «Շոթա» անունը առաջացած լինի «Ա-շոտ»-ից, և ուրիշ ոչինչ: Իհարկէ, ոչինչ չկայ տարօրինակ, եթէ մեծ բանաստեղծը «Աշոտ» անունը կրէր, քանի որ այնպիսի անուններ, ինչպէս, օրինակ, Աշոտ, Գուրգէն, Սարգիս, Ներսէ և այլն, հնում ընդհանրապէս տարածուած էին վրացոց մէջ ևս:

Բայց հետաքրքիր է, որ այսպիսի կարծիք նոյն բանաստեղծի անուան վերաբերեալ դեռ էլի պ. Ն. Մառից առաջ արտայայտուած էր մի ուրիշ գրականագէտի կողմից, այնէ Ա. Խաշանաշվիլու (†): Ահա և վերջինիս խօսքերը՝. “Великого поэта постигла судьба многих великих людей. Нам в достоверности неизвестно ни семейное происхождение Шота Руставели, ни общественное его положение, ни школьное образование, ни место и время его рождения, –словом наши биографические сведения столь же скудны, как о древнем Гомере и гениальном Шекспире. Само название Щота чисто грузинское и весьма древнее–сокращенное из Ашота, по мнению некоторых, –не встречается в святцах христианских, так как не было обязательного обычая у древних христиан, как и у грузин, давать при крещении имена святых прославленных церковью” (*А. Хаханов*, Очерки по истории грузинской словестности, в. II, Москва, 1897, стр.244. «Շոթա» անուան մասին առհասարակ տես՝ibid., ծան. 1 և 2):

Այսպէս, ուրեմն մենք ո՛չ մի հիմք չունենք որևէ կասկածի տակ ընդունել «Ընձենաւոր»-ի յառաջաբանի և վերջաբանի (թէև գուցէ յետագայում աւելացածների) այն տեղերը, ուր հեղինակը ինքն իրեն անուանում է რუსთაველი ***Ռուսթաւէլի***–«Ռուսթաւեցի», կամ ვინმე მესხი მელექსე მე რუსთაველის დაბისა (ըստ Ս. Կակաբաձէի–ვინმე მესხი მელექსე მე რუსთველის თემისა) (*Н. Марр*, Вступительные и заключительные строфы Витязя в барсовой коже Шоты из Рустава (“Тексты и разыскания по армяно-грузинской филологий”, кн. XII, Спб. 1910, стр. 6). ვეფხის–ტყაოსანი (Ընձենաւոր), հրատ. ***Ս. Կակաբաձէի***, Տփղիս, 1914, էջ 250): ***Վինմէ մեսխի մելեքսէ մէ Ռուսթաւիսա դաբիսա*** (ըստ Ս. Կակաբաձէի–Վինմէ ***մեսխի մելլեքսէ Ռուսթւէլիսա թեմիսա***)–«Ես, ոմն մեսխ բանաստեղծս Ռուստաւ աւանից» («Ես, ոմն մեսխ բանաստեղծս Ռուսթաւական վիճակից»):

Կասկածի տակ է մնում միմիայն մեծ բանաստեղծի ապրելու ժամանակը, եթէ իհարկէ հաշուի առնենք պ. Սարգիս Կակաբաձէի ենթադրութիւնը, որ «Ընձենաւոր»-ը գրած պետք է լինի ոչ թէ Թամար թագուհու ժամանակ՝ XII–XIII դարում, այլ մի քիչ ուշ, այն է XIV դարում (4):

*խաձէի՝ Թամար թագուհուն նուիրուած «Գովասանաբանութեան» կամ «Երգոց» (*ქება*)-ի մէջ[5]:*

Սարգիս Թմոգւեցին շատ հաճախ է յիշատակւում վրաց հին գրականութեան մէջ: Հետաքրքիր է, որ նա մի քանի անգամ անուանուած է վրաց տարեգրութեան մէջ և, ի մէջի այլոց, XIII դարու՝ թամթարների արշաւանքի շրջանին վերաբերեալ՝ անանուն ժամանակագրի գրուածքում, որտեղ նրա մասին ասուած է այսպէս՝ სარგის თმოგველი კაცი მეცნიერი და ფილოსოფოსი და რიტორი[6],*–«Սարգիս Թմոգւեցի՝ այր գիտուն և փիլիսոփայ ու հռետոր»:*

Անտոն I արքայազն-կաթողիկոսը (XVIII դարում) իր յայտնի բանաստեղծական գրուածքի մէջ , որ կոչւում է წყობილსიტყუაობა *ծղ'օբիլսիտղ'ուաօբա–«Ջափաբերական», նոյն հեղինակին յատկապէս նուիրում է 803-րդ տունը հետևյալ բովանդակութեամբ.*

თჳს სარგის თმოგუჱლისა.

სარგის ესეცა, შოთაებრ არს კაცი,
სიბრძნის-მოყუარე, ფილოსოფოს გამომთქმელ,
რიტორ შუენიერ, პიიტიკოს საქებელ,
თჳთ შოთა იტყჳს, დილარგეთ უქია მას
საქებ არს ესე, თქმულთა მათთჳს მიზეზთა[7].

«ՍԱՐԳԻՍ ԹՄՈԳՒԵՑՈՒ ՄԱՍԻՆ.

Այս Սարգիսն էլ՝ այր է Շոթայի նման,
Իմաստասէր փիլիսոփայ արտայայտիչ,
Հռետոր գեղեցիկ, բանաստեղծ գովելի,
Ինքը Շոթան ասում է, որ նա գովել է Դիլարգէթին.
Այսպէս գովելի է, վերոյիշեալ պատճառներով».

[5] *Н. Марр*, Древнегрузинские одописцы (XII в.) ["Тексты и Разыскания по армяно-грузинской филологии", кн. IV], Спб. 1902, стр. რლ.

[6] ქართლის ცხოვრება, ნაწილი I (Քարթլիս Ցխովրէբա, մասն I), հրատ. ***Մ. Բրոսէի***, ՍՊԲ 1849, եր. 377=ქართლის ცხოვრება მარიამ დედოფლის ვარიანტი (Քարթլիս Ցխովրէբա, Մարիամ թագուհու վարիանտը), հրատ. ***Է. Թաղայշվիլու,*** Տփղիս 1906, եր. 638:

[7] წყობილ-სიტყუაობა ქმნილი ანტონისაგან პირუელისა კათოლიკოს-პატრიარხისა ყოვლისა საქართუელოისა (Ջափաբերական արարեալ Անտոն առաջին համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարքից), հրատ. [***Պ. Իոսէլիանու],*** Տփղիս, 1853, եր. 285:

Այսպէս, ուրեմն, Սարգիս Թմոգւեցին «Դիլարգէթ»-ին նուիրուած բանաստեղծական գրուածքի հեղինակ է. բայց նրան երբեմն սխալմամբ վերագրում են և ვისრამიანი Վիսրամիանի–«Վիսրամական» վերնագրով յայտնի անանուն պօէման[8]: Այսպիսի սխալ է գործում, ի միջի այլոց, և Թէյմուրազ արքայազնը, որի գրչին պ. Է. Թաղ՚այշվիլին վերագրում է 1820–1827 թուականներին կազմած՝ վրաց գրականութեան վերաբերեալ՝ մի աշխատութիւն მცირე უწყება ქართველთა მწერალთათვის–«Համառօտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին» վերնագրով: Ահա այս աշխատութեան մէջ Սարգիս Թմոգւեցու մասին կարդում ենք հետևյալը.

სარგის თმოგველისათვის.

ესეცა იყო მწერალი თამარ მეფისა მზგავსი მეცნიერებითა შოთასი და პირველი რიტორი, მშვენიერი პიიტიკოსი, რომელიცა ქებულ არს თვით შოთასაგანცა მოშაირეთა შორის. ამან ქმნა წაგნი ისტორია, ვისრამიანად წოდებული, და ამანვე აქო დილარგეთ, მეცნიერებითა და პიიტიკოსობითა სხუათა ზედა უმეტეს[9].

ՍԱՐԳԻՍ ԹՄՈԳՒԵՑՒ ՄԱՍԻՆ.

Սա էլ Թամար թագուհու գրող[ներից] էր, իր հմտութեամբ մնան Շոթային, առաջին հռետոր, գեղեցիկ բանաստեղծ, որն էլ գովուած է Շոթայի կողմից շահիրների շարքում. սա ստեղծեց մի գիրք-պատմութիւն՝ անուանեալ «Վիսրամական», և սա գովեց Դիլարգէթին, հմտութեամբ և բանաստեղծական քանքարով ուրիշներից աւելի»:

Սարգիս Թմոգւեցու պոեման ժողովրդի մէջ առհասարակ յայտնի է დილარიანი Դիլարիանի–«Դիլարական» անունով: Դժբախտաբար միայն այդ հեղինակութիւնը հասել է մեզ ոչ թէ իր սկզբնական ձևով, այլ հետագայ խմբագրութեամբ, որ պատկանում է XIX դարու սկզբների յայտնի գրականագէտ և գրիչ Պետրէ Լարաձէին (հրատարակել է Տփղիսում 1903 թուին Շալիկաշվիլին)[10]: Մինչդեռ իսկական «Դիլարական»-ից հատուածներ՝ մտցրած լինելով Մովսէս Խոնեցու (Խոնելիի) պօէմ ამირანდარეჯანიანი Ամիրանդարէջանիանի –«Ամիրանդարէջանական»-ի մէջ՝ մնացել են այս վերջինում (հրատարակել է Տփղիսում 1897 թուին Զ. Ճիճինաձէն)[11]:

Ինչ վերաբերում է այն հարցին, թէ ո՞վ էր իր ազգային ծագումով այս Սարգիս Թմոգւեցին, գրականութեան մէջ գոյութիւն ունի երկու կարծիք, թէև երկու ուղղութեան ներկայացուցիչները համաձայն են իրար հետ գլխաւոր կէտում, այն է՝ որ «Թմոգւեցի» («Թմոգւէլի»)-ների տոհմը ծագում է այսպէս կոչուած «Մխարգրձէլ», այսինքն «Երկայնաթիկունք»-ների[12] սերնդից: Իսկ Սարգսի մասին յայտնուած կարծիքների տարբերութիւնը կայանում է նրանում, որ այն ժամանակ, երբ ըստ մէկի բանաստեղծը ընդունւում է ծագումով վրացի, բայց հայադաւան (հակաքաղկեդոնիկ), ըստ միւսի նա յայտարարւում է ծագումով հայ, բայց վրացադաւան (քաղկեդոնիկ): Սարգիս Թմոգւեցին հայադաւան վրացի է ըստ պ. Զ. Ճիճինաձէի, որը սակայն իր յայտարարութիւնը բոլորովին չի հիմնում պատմական տւեալների վերայ կամ ապացուցում վաւերական փաստերով (5), միաժամանակ այս հեղինակը և խոշոր սխալ է գործում, ընդունելով, որ բանաստեղծ Սարգիս Թմոգւեցին և Թամար թագուհու ժամանակուայ (XII–XIII դար) ամիրսպասալար մեծն Սարգիս Մխարգրձէլին միևնոյն անձնաւորութիւնն է[13]: Համեմատաբար հետաքրքիր է և ուշադրաւ երկրորդ կարծիքը, ըստ որի բանաստեղծ Սարգիս Թմոգւեցին վրացադաւան հայ է: Այսպիսի կարծիք յայտնողն է պ. Սարգիս Կակաբաձէն, որի գրչին պատկանում է մի շարք յօդուածներ «Թմոգւեցի» («Թմոգւէլի»)-ների տոհմի վերաբերեալ[14]:

[8] *А. Хаханов*, op.cit., II, стр. 205.

[9] მცირე უწყება ქართველთა მწერალთათვის (Համառօտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին), հրատ. ***Է. Թաղ'այշվիլու***, –«ძველი საქართველო», հատոր I, Տփղիս, 1909, բաժ. III, եր. 25:

[10] დილარიანი ქმნილი პეტრე ლარაძის მიერ (Դիլարական արարեալ Պետրէ Լարաձէից), հրատ. ***Շալիկաշվիլու*** , Տփղիս 1903:

[11] ზ. ჭიჭინაძე, დილარიანი ქმნილი XII საუკუნეში სარგის თმოგველის მიერ (***Զ. Ճիճինաձէ,*** Դիլարական արարեալ XII դարում Սարգիս Թմոգւեցուց), Տփղիս 1897, եր. 1-48:

[12] Վրացերեն მხარგრძელი ***մխարգրձէլի*** նշանակում է «Երկայնաթիկունք», և ոչ թէ «Երկայնաբազուկ», ինչպէս սովորաբար թարգմանում են. սրա մասին տես ի միջի այլոց՝ ***Աս. Շահնազարեան***, Զաքարեան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դէպի Ձորագետ և նախորդները, –«Շողակաթ», գ. I, Էջմիածին 1913, եր. 67, ծան., և եր. 69:

[13] ***Զ. Ճիճինաձէ,*** Դիլարական (վրացերէն), եր. 7 etc.,=ზ., ჭ., სარგის თმოგველი და მისი დილარიანი (Զ. Ճ. Սարգիս Թմոգւեցին ու նրա Դիլարականը), Տփղիս 1917, եր. 7 etc.:

[14] **სარგის კაკაბაძე** (Սարգիս Կակաբաձէ)՝ვინ იყო და როდის ცხოვრობდა სარგის თმოგველი (Ո՞վ էր և ե՞րբ էր ապրում Սարգիս Թմոգւեցին), Տփղիս 1913, եր 1-12. თმოგველთა გვარის ისტორიისათვის (Թմոգւեցոց տոհմի պատմութեան

Ըստ պ. Ս. Կակաբաձէի, յայտնի բանաստեղծ և «Դիլարական»-ի հեղինակ Սարգիս Թմողւեցին հանդիսանում է իբրև ներկայացուցիչ Աւագ Սարգսի որդի Զաքարիայի երկրորդ սերնդի (առաջին սերունդը—Սարգիս մեծն ամիրսպասալար [+1187] հանդերձ իր որդիներով՝ Զաքարէ մանդատուրթխուցէս-ամիրսպասալարով և Իւանէ աթաբագով, երկրորդը—Վահրամ [†մինչև 1178] հանդերձ իր որդիներով՝ Զաքարիա Գագեցւով և Աւագ Սարգիս Թմողւեցւով), այսինքն՝ իբրև որդի Զաքարիայի թոռան Աւագ Սարգիս Թմողւեցու աւագ որդի Թաղիադինի (ուրեմն Զաքարիայից մինչև բանաստեղծը 4 աստիճան) (6): Պր. Ս. Կակաբաձէի հետազօտութիւններից պարզ երևում է, որ ոչ մի հիմք չկայ նոյնացնելու բանաստեղծ Սարգիս Թմողւեցուն ոչ միայն Սարգիս Զաքարեան ամիրսպասալարի հետ, այլև Աւագ Սարգիս Թմողւեցու հետ: «Դիլարական»-ի հեղինակ Սարգիս Թմողւեցին, ինչպէս վերևում տեսանք, յիշատակւում է XIII դարու՝ թաթարների արշաւանքի շրջանին վերաբերեալ անանուն ժամանակագրի գրուածքում, 1236–1250 թուականների ներքոյ. ծնուած լինելով 1210 թուի մօտերքում՝ սա դեռ կենդանի է երևում 1262 թուին[15]: Այնինչ Սարգիս Զաքարեան ամիրսպասալարը, ինչպէս վերջինիս գերեզմանի տապանագիրը վկայում է, վախճանուել է 1187 թուին[16]: Իսկ ինչ վերաբերում է Աւագ Սարգիս Թմողւեցուն, որին 1189–1190 թուականներին նուիրուել է Մեսխեքում (მესხ-ეთ-ი Մեսխ-էթ-ի) գտնուող Թմողւի կալուածքը[17] և որի պատճառով էլ նա իր սերնդով հանդերձ կոչուել է «Թմողւեցի» (თმოგვ-ელ-ი Թմողւ-էլ-ի), սա անպայման վախճանուած պէտք է լինէր XIII դարու առաջին կիսում, յամենայն դէպս, ծնուած լինելով 1170 թուի մօտերքում՝ նա դժուար թէ կենդանի մնար մինչև 1262 թիւը, իսկ եթէ կենդանի էլ մնար՝ ընկած կլինէր խորը ծերու-

համար), Տփղիս 1913, եր 1-12. თორელთა გვარეულობის შესახებ,–"წერილები და მასალები საქართველოს ისტორიისათვის, წ. I (Թորեցւոց սերնդի մասին,–«Գրութիւններ և նիւթեր Վրաստանի պատմութեան համար», գ. I), Տփղիս 1914, եր.58-65. მე-XIII–XIV საუკუნის თმოგველების გენეალოგიისათვის,–"კვლევა-ძიებანი საქართველოს ისტორიის საკითხების შესახებ" (XIII–XIV դարու Թմոգւեցոց ազգաբանութեան շուրջ,–«Հետազօտութիւն-որոնումներ Վրաստանի պատմութեան հարցերի մասին), Տփղիս 1920, եր. 62-67:

[15] ***Ս. Կակաբաձէ,*** Հետազօտութիւն-որոնումներ Վրաստանի պատմութեան հարցերի մասին (վրացերէն), եր. 65-66:

[16] ***Կ. Կոստանեանց,*** Վիմական տարեգիր, –"Bibliotheca Armeno-Georgica", հրատ. Ռուս. Գիտ. ճեմարանի, գ. II, ՍՊԲ. 1913, եր.36:

[17] Թմոգւիի մասին տես՝ ***Ե. Լալայեան,*** Ջաւախք, նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, –«Ազգագրական հանդէս», գ. I, Շուշի 1896, եր.122-123:

թեան մէջ և ոչ մի դէպքում չէր կարող մասնակցութիւն ունենալ զինուորական գործողութիւնների մէջ այնպէս, ինչպէս վրաց տարեգրութիւնն է վկայում: Ուրեմն, պէտք է ընդունել երկու Սարգիս Թմողւեցի (Թմողւէլի)՝ մէկը Վահրամ Զաքարեանի որդի XII–XIII դարերում, իսկ միւսը Թաղիադին Սարգսեանի որդի XIII դարում համաձայն հետևյալ ազգաբանական աղիւսակի՝



[18] Այս ազգաբանական աղիւսակը կազմելիս օգտուել ենք պ.պ. ***Աս. Շահնազարեանի*** և ***Ս. Կակաբաձէի*** վերոյիշեալ աշխատութեանց մէջ ներկայացրած «տախտակներից»՝ հանդերձ լրացուցիչ տեղեկութիւններով (տես՝ ***Աս. Շահնազարեան,*** op. cit., եր. 75. ***Ս. Կակաբաձէ,*** Ո՞վ էր և ե՞րբ, որ ապրում Սարգիս Թմոգւեցին, եր.12, Գրութիւններ և նիւթեր Վրաստանի պատմութեան համար, եր.64, հետա-

Պր. Ս.Կակաբաձէի հետազօտութիւններից մենք տեղեկանում ենք նաև նրա մասին, թէ ինչպէս «Մխարգրձէլ»-ներից ծագած «Թմոգւէլի» (თმოგველი) *տոհմը XIV դարուց յայտնի է դառնում «Թմոգւէլ-Ուջարմէլի»* (თმოგველ-უჯარმელი), *իսկ XVI դարուց «Փաւնէլիսշվիլի»* (ფავნელისშვილი) *ազգանունով:*

Ի միջի այլոց հետաքրքիր է պ. Ս. Կակաբաձէի կարծիքը, որ իբր թէ «Դիլարական»-ի հեղինակ Սարգիս Թմոգւեցին վրացադաւան (քաղկեդոնիկ) է եղել. իր այս կարծիքը նա յենում է այն փաստի վերայ, որ Սարգսի որդին՝ Էրիսթաւթէրիսթաւ Մխարգրձէլին, որ կենդանի է երևում դեռ 1310 թուին, մշակել է այսպէս կոչուած Վահանի (Կղարջքում) քաղկեդոնիկ մենաստանի կանոնադրութիւնը[19]*: Այս կէտում արդէն պ. Ս. Կակաբաձէն, ինձ թւում է, սխալ է գործում, որովհետև՝ եթէ նոյնիսկ ընդունենք, որ Էրիսթաւթէրիսթաւ Մխարղրձէլին վրացադաւան (քաղկոդոնիկ) է եղել, դա դեռ չի նշանակում, որ սրա հայր Սարգիսն էլ նոյն դաւանութեան պատկանէր:*

Այժմ պարզ է, որ վրաց ոսկեդարու բանաստեղծ և «Դիլարական»-ի հեղինակ Սարգիս Թմոգւեցին (1210–† ոչ առաջ 1262) ներկայացուցիչ է քաղդէացիներից (քրդերից) ծագած (?) հայ *Զաքարեան-Երկայնաթիկունք (Մխագրձէլի)՝ տոհմի երկրորդ ճիւղի, որը 1189–1190 թուականներից յայտնի է դառնում «Թմոգւէլի» մականունով, իսկ այնուհետև XIV դարուց « Թմոգւէլ-Ուջարմէլի» և XVI դարուց «Փաւնէլիսշվիլի» ազգանունով: Այդ ճիւղը սկզբներում անշուշտ հայադաւան (հակաքաղկեդոնիկ) պէտք է եղած լինի, իսկ XIII կամ XIV դարուց վրացադաւանութեան (քաղկեդոնականութեան) յարած. թեև մեզ հետաքրքրող Սարգիս Թմոգւեցու ո՞ր դաւանութեանը պատկանելու հարցը, դժբախտաբար, մնում է բաց ու առայժմ անլուծելի (7):*

Հայերի մասնակցութիւնը վրաց դասական շրջանի աշխարհիկ գրականութեան մէջ համարեա թէ բոլորովին աննկատելի է, մինչդեռ վերածնութեան շրջանում՝ սկսած XVII դարուց՝ նոքա գրաւում են նոյն գրականութեան մէջ փոքր ի շատէ պատուաւոր տեղ:

Այսպէս, օրինակ, XVII դարում Փեշանգ Փաշիբերտղաձէ *(*ფეშანგ ფაშვიბერტყაძე*) ազգանունով յայտնի հայը*[20] *Արչիլ թագաւորի*

զօտութիւն-որոնումներ Վրաստանի պատմութեան հարցերի մասին, էր.66):

[19] ***Ս. Կակաբաձէ,*** Հետազօտութիւն-որոնումներ, էր. 66. համեմատիր՝ ***նոյն հեղինակի*** Ո՞վ էր և ե՞րբ էր ապրում Սարգիս Թմոգւեցին, էր. 12, ծան.:

[20] Հնում վիրահայոց մէջ մի տեսակ սովորութիւն կար գրել իրենց ազգանունը ձე

յանձնարարութեամբ գրում է ფირმალიანი Փիրմալիանի-*«Փիրմալական» վերնագրով հեղինակութիւնը, ուր հերոս է ներկայացնում վրաց Գէորգ XI թագաւորին, թէպէտև այդ հեղինակութիւնը, յանձնարարողի կարծիով, «անալի» է դուրս եկել: Ահաւասիկ և Արչիլի վկայութիւնը այդ Փեշանգի մասին, որ տեղ է գտել այսպէս կոչուած* არჩილიანი Արչիլիանի–*«Արչիլական» պօէմայի մէջ իբրև 718-րդ տուն՝.*

ფეშანგიმ ფაშვ-ბერტყაძემ ახლა ჰსთქუა ფარმალიანი,
სომხისგან კარგად ნაგდეთ, სიმძიმით ვით ლიტრიანი,
გებრალებოდესთ საბრალო,ცხვრ-მოჭრით თუალ ცრემ-
ლიანი,
მე ვათქმევინე,მაგრამე ვერა ჰსთქუა მარილიანი[21]

Փեշանգ Փաշւի Բերտղ՛աձէն նորից սսած Փիրմալական-*ը,*
Հայից լաւ համարէք՝ ծանրութեամբ իբր մի լիտր,
Խնայեցէ՛ք ողորմելուն, քիթը կտրած, աչքերը արտասուալի,
Ես խօսէցրի, բայց չկարաց ասել աղալի:

Այս խօսքերից երևում է, որ Փեշանգը իսկապէս հայ է եղել՝ քիթը կտրած՝ և գրել է «Փիրմալական»-ը, որ սակայն «անալի» է դուրս եկել:

Նոյն հեղինակի մասին Թէյմուրազ արքայազնը վկայում է՝ ფერშანგისშვილს ფაშვიბერტყის ძეს გაულექსავს ფირმალიანი წიგნი[22] *«Փաշւի Բերտղ՛ի որդի Փերշանգիշվիլին ոտանաւորի է վերածել* Փիրմալական *գիրքը»:*

Բայց այս վկայութիւնը կարդալիս ինքն ըստ ինքեան առաջանում է հետևյալ հարցը՝ Փեշանգը արդեօք իսկապէս «Փիրմալականի»-ի հեղինակ է, թէ նորա միմիայն ոտանաւորի վերածողը:

Ի դէպ, հետաքրքիր է մասնագէտների կարծիքը Փեշանգի մասին:

ձէ կամ შვილი ***շվիլի*** վերջաւորութեամբ՝ փոխանակ հայկական ***եան***-ի, ինչպէս, օրինակ, ռուսների տիրապետութեան օրօք նոյն ***եանը*** փոխուեց ов ով-ի (լեհահայոց մէջ ич ***իչ***-ի):

[21] ცხოვრება მეფისა თეიმურაზ პირუელისა, აღწერილი ლექსად არჩილისაგან მეფისა (Թէյմուրազ առաջին թագաւորի կեանքը, գրուած ոտանաւորի ձևով Արչիլ թագաւորից), հրատ. [***Պ. Իօսէլիանու***], Տփղիս, 1853, էր. 181.=*Е. Такайшвили*, Описание рукописей “Общества распространениЯ грамотности среди грузинскаго насе-ления”, т. II, Тифлис, 1906-1912, стр. 140.

[22] «Համառօտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին» (վրացերէն), էր. 29:

Այսպէս, Ա. Խախանաշվիլին (†) նրա մասին ասում է՝.««Ազգայնական տէնդէնցը [վրաց գրականութեան մէջ] զգալի չափով հաստատուեց Արչիլ թագաւորի ժամանակ XVII դարում, որին նոյն դարում կարապետ հանդիսացաւ Փաշւիբերտղ'աձէն»[23]: Պր. Ն. Մառը, մատնանշելով այն հանգամանքը, որ վրաց աշխարհիկ գրականութիւնը հէնց իր ծագման օրից սնւում էր օտարազգի գրքերից քաղած մոտիվներով, գրում է հետևյալը.

"*П'ешангу П'ашвперткадзе*, современнику *Арчила*, принадлежит честь почина в Грузии в исползовании отчественнаго сюжета в поэме; он выбрал героем своей обширной эпопеи грузинскаго царя, Георгия XI: с сознанием достоинства говорить сам автор в предисловия о своем новаторстве в области грузинской литературы, и он отчасти прав в данном случае, ибо певцы Давида и Тамары (*Шавт'ели* и *Чахрухадзе*) не могут оспаривать у него этой чести –они авторы лишь небольших од". Միժամանակ պ. Ն. Մառը աւելացնում է և հետևյալը՝. "Следует однако заметить, что *Пашв-Берткадзе* только осуществил впервые мысль, бродившую в литературных кружках Возрождения"[24].

Չի կարելի ի հարկէ չցաւել, որ այս հեղինակի գրուածքն ևս դեռ հրատարակուած չէ և սպասում է իր հետազօտողին:

XVII դարու գրողների շարքում, ի միջի այլոց, յայտնի է հռչակաւոր բանաստեղծ Բեգթաբէգը՝ Գէորգ XI թագաւորի դիւանադպիրը: Այդ Բեգթաբէգին՝ Աւթանդիլի որդուն և Մարտիրոսի թոռան[25] XVIII դարու հռչակաւոր բանաստեղծ Դաւիթ Գուրամաշվիլին իր დავითიანი Դաւիթիանի –«Դաւիթական» կամ გურამიანი Գուրամիանի–«Գուրամական» կոչուած պօէմայի մէջ դասում է վըրաց լաւագոյն բանաստեղծների պանթէոնում: Ահա Գուրամաշվիլու խօսքերը.

შოთა მღერს, მეფე თემურაზ, არჩილ მოსძახის ძმურება
მეფე ვახტანგ და იაკობ დაბლა ზილს მიეტკბურება,
ბეგთაბეგ, ნოდარ, ოთარი, ონანა ბანს ეშურება,
და დვრინვენ ყარან და მამუკა, მე მსურის მათი ყურება[26]

Շոթան երգում է, Թէյմուրազ թագաւորը և Արչիլը ձայն են
տալիս եղբայրակցութեան,
Վախթանգ թագաւորը և Յակովբը ցածր ձայնով քաղցրացնում
են [երգը]
Բէգթաբէգ, Նոդար, Օթար և Օնանը [իրենց] բասով շտապում են,
Ղ'արան և Մամուկան մեղմ ձայնակցում են. ես ցանկանում եմ
ունկնդիր լինել նոցա:

Դժբախտաբար, Բէգթաբէգի բանաստեղծութիւններն էլ չեն հասել մեզ, ի բաց առեալ մի քանի՝ Գէորգ XI թագաւորին ձօնուած ոտանաւորների, որ հրատարակել է պ. Է. Թաղ'այշվիլին[27]:

Բացի դրանից, Բէգթարէգը յայտնի է իբրև գրիչ «Ընձենաւոր»-ի այն ըստ արտաքինի լաւագոյն ձեռագիր օրինակի, որ այժմ պատկանում է Վրաց Պատմա-ազգագրական ընկերութեան գրադարան-թանգարանին (№ 54) և որի նմանը չկայ նոյն պօէմայի ամբողջ ձեռագիրների շարքում: Ինքը ձեռագիրը գրուած է Գէորգ XI թագաւորի հրամանով 1680 թուին, ինչպէս այդ երևում է գրչի ընդարձակ վերջաբանից, որ հրապարակել է պ. Է. Թաղ'այշվիլն[28], զարդարուած է գեղեցիկ և հրաշալի շրջանակներով ու զարդերով՝ պարսկական ոճով[29]: Ի միջի այլոց, հետաքրքիր է, որ գրիչը ինքն իրեն՝ ձեռագրում զետեղած մի յիշատակագրում՝ անուանում է მე ფრიად ცოდვილმან და სახითა ოდენ მდივანმან და საქმითა ყოველთა მწიგნობართა უნარჩევესმან ბეგთაბეგ[30]–«Ես՝ բազմամեղ և պատկերով միայն դիւանադպիր և գործով ամենքից աննշան Բէգթաբէգս»: Կասկածից դուրս է, որ նրա մարմինը իրեն հարազատների՝ Աւթանդիլ և Մարիամ ծնողների, Բէժան որդու և այլոց հետ միասին ամփոփված է Բէգթաբէգեանների տոհմային

[23] ა. ხახანაშვილი, ქართული სიტყვიერების ისტორია უძველესი დროიდგან მე-XVIII საუკ. გასულამდე (*Ա. Խախանաշվիլի*, Պատմութիւն վրաց գրականութեան հնագոյն ժամանակից մինչև XVIII դարու վերջը), երրորդ հրատ., Տփղիս, 1919, եր. 352:

[24] *Н. Марр*, Возникновение и разцветь древнегрузинской светской литературы, -"Журнал Министерства Народнаго Просвещения" 1899 г, № 12, отд. II, стр. 234.

[25] *Л. Меликсеть-Беков*, Усыпальница кн. Бегтабеговых, Тифлис, 1914, стр. 14. *А. Ханов.* Грузинские дворянские и родословные росписи (Материалы для истории Грузии), Москва, 1893, стр. 11.

[26] დავითიანი თქმული გურამისშვილის დავითისაგან (Դաւիթական արարեալ Դաւիթ Գուրամիշվիլուց), հրատ. *Պետրէ Ումիկաշվիլու*, Տփղիս, 1881, եր. 4:

[27] *Е. Такайшвили*. Описание рукописей, II, стр. 578-579, Ի դէպ, Բէգթաբէգի մասին տես՝ ი. აბულაძე, ბარამ-გურამიანი (Ի. *Աբուլաձէ*, Բարամ-Գուրամական).– "სახალხო გაზეთი" № 818 (1913 թ.); შ. რუსთველი, ვეფხის-ტყაოსანი (*Շ. Ռուսթաւեցի*, Ընձենաւոր), հրատ. Ի. Աբուլաձէի, Տփղիս, 1914, եր. XLVIII: *Ս. Կակաբաձէ*, 12-13:

[28] *Е. Такайшвили*, ibid., стр. 574-577:

[29] Ibid., стр. 573-577:

[30] *Е. Такайшвили*, ibid., стр. 577:

դամբարանում, որ գտնւում է Գորու գաւառի Վաղ՚ա (ვაყა) գիւղի հայոց հին եկեղեցում և որտեղ նա իբրև «մեծն Բէգթաբեգ» յիշատակւում է արձանագրութեանց մէջ[31]*:*

Խօսելով Բէգթաբեգի ձեռքով գրած «Ընձենաւոր»-ի օրինակի մասին, չի կարելի անուշադիր թողնել Վրաց Պատմա-ազգագրական ընկերութեան գրադարան-թանգարանի սեփականութիւն կազմող նոյն պօէմայի մի այլ ձեռագիր ևս՝ 1671 թուի (№ 757), որ պատկանում է մի այլ հայի գրչին: Այդ հայը՝ Աղմուրենց Բաղդասարի *որդի* Գասպարն *է, որն էլ անուանած է ձեռագրի համապատասխան յիշատակագրում՝* ოდეს ამ ვეფხისტყაოსანსა ვსწერდი მე, აღმურანთ ბაღდასარის შვილმა მეშრიბი გასპარამა, მაშინ ღ՛თნ წყალობა მიყო და დაიბადა ჩემი ყმაწვილი დავით– *«Երբ որ ես, Աղմուրենց Բաղդասարի որդի, մուշրիբ (հարկհան)*[32] *Գասպարս, գրում էի այս* Ընձենաւոր-*ը, այն ժամանակ Աստուած ողորմութիւն արաւ ինձ, և ծնուեց իմ զաւակ Դաւիթը»: Պէտք է ասել, որ համեմատաբար նախորդ ձեռագրի հետ (№ 54) այս ձեռագիրն ևս հազուագիւտ է, բայց ո՛չ թէ իր արտաքինով, այսինքն գեղարուեստական արժէքով, այլ ներքին բովանդակութեամբ, վասնզի փոքր ի շատէ անարատ է պահպանել «Ընձենաւոր»-ի նախնական բնագիրը*[33]*:*

Եւ այսպէս, վրաց ոսկեդարու պարծանք՝ հսկայ-հանճար Շոթա Ռուսթաւելու պօէմ «Ընձենաւոր»-ի մինչև մեր օրերը հրապարակ հանած ձեռագիր օրինակներից ամենանշանակելից և արժէքաւորները գրուած են հայերի *ձեռքով՝ ամենալաւագոյնը և գեղեցիկը ըստ արտաքինի գրել է բանաստեղծ «մեծն Բէգթարէգը», իսկ ամենահնագոյնը և հարազատը ըստ ներքին բովանդակութեան՝ Աղմուրենց Բաղդասարի որդի մուշրիբ Գասպարը (9):*

Ընդ սմին չմոռանամ յիշատակել, որ վերոհիշյալ Բէգթաբեգի տոհմի ներկայացուցիչները առհասարակ յայտնի են իրենց բանաստեղծական ընդունակութիւններով[34] *իբրև լաւագոյն «գրիչ»-ներ ձեռագիրների և մանաւանդ սիգել-գուջարների (հրովարտակ-կոնդակների) առանձնապէս աչքի էին ընկնում* Բէգթաբեգեան, *նմանապէս և* Թումանեան *(*თუმანიშვილი *Թումանիշվիլի) տոհմի ներկայացուցիչները (XVII–XVIII) դարում:*

XVII–XVIII դարու գրականագէտների շարքում նկատելի է Փարսադան Գորգիջանիձէ *(*ფარსადან გორგიჯანიძე*) ազգանունով յայտնի հեղինակը, որի գրչին պատկանում են մի շարք պատմագիտական և բանասիրական գրուածքներ և նրանց թւում՝ «Վրաստանի պատմութիւն»*[35] *ու «Ջամի Աբաս» (մահմեդական օրէնսգրքի թարգմանութիւն): Այս հեղինակը իսկապէս Գօրեցի է, բայց թէ ո՞վ էր իր ազգային ծագումով, սրա մասին հաւաստի տեղեկութիւններ չկան: Պր. Մ. Ջանաշվիլին համոզուած է, որ նա բնիկ վրացի է °(Գորգիջանիձէ=«Գորգի Ջանիձէ» կամ Գորգի Ջանաշվիլի»)*[36]*, բայց Մ. Բրոսէ (†)*[37] *ու, նրա յետևից, պ. Ի. Ջաւախաշվիլին*[38] *կարծում են, որ նա* հայ *պէտք է եղած լինի: Մասնաւորապէս հետաքրքիր է պ. Ի. Ջաւախաշվիլու կարծիքը: Չնայած այն հանգամանքին, որ Փարսադանը իր «Ջամի Աբաս»-ի վրացերէն թարգմանութեան մէջ ինքն իրեն անուանում է* ქართველი քարթւէլի–*«վրացի», յարմէջ ինքն իրեն անուանում է ... այնուամենայնիւ, համոզուած է, որ նա պէտք է գելի վրացագէտը, այնուամենայնիւ, համոզուած է, որ նա պէտք է «հայ» եղած լինի, որովհետև իր «Պատմութեան» մէջ պատուաւոր տեղ է տալիս Հայոց պատմութեան տուեալներին. բացի դրանից, Փարսադանի «հայ» լինելը նկատւում է նրանում, որ նա իր «Պատմութեան» մէջ՝ երևի իր վաղեմի ազգային զգացմունքից դրդուած՝ ձայն է բարձրացնում ի պաշտպանութիւն ոմն Թումանիշվիլու, որին Բարաթաշվիլիները մեղադրում էին Լուարսաբ արքայազնի սպանութեան մէջ: «Վրաստանում վրացիք, –ասում է Փարսադանը, –բազմաթիւ և հզօր են, իսկ հայերը փոքրաթիւ և անզօր ու նրանցից դժուար է սպասել այսպիսի մի գործի (սպանութեան) մասին բանալ բերանը, ուր մնաց ի կատար ածելը. իսկ վրացիք ուզում էին այս արիւնը հայու վերայ գցել»*[39]*:*

[31] *Л. Меликсеть-Беков,* Усыпальница кн. Бегтабеговых, стр.1-14.

[32] Այս բառի մասին տես՝ **ი. ჯავახიშვილი,** ქართული სამართლის ისტორია, წ. I (**Ի. Ջաւախաշվիլի**, Պատմութիւն վրաց իրաւունքի, գ. I), Քութայիս 1919, եր. 177-179: *E. Takaïchvili,* Institution des cours royales [" Monumenta Georgiea", IV. Legos. № 1], Tpilis 1920, p.p. 8-9, 25:

[33] Այս ձեռագրի մասին տես՝ Ընձենաւոր, հրատ. ***Ս. Կակաբաձէի,*** եր. 14-16:

[34] Համեմ. **ი. გრიშაშვილი** სიათნოვა (***Ի. Գրիշաշվիլի***, Սայաթ-Նովա), Տփղիս, 1918, եր.19:

[35] ქართლის ცხოვრება, ნაწილი II (Քարթլիս Ցխովրէբա, մասն II), հրատ. ***Դ. Չուբինովի,*** ՍՊԲ, 1854. საქართველოს ცხოვრება (Սաքարթւէլոս Ցխովրէբա), հրատ. ***Զ. Ճիճինաձէի***, Տփղիս, 1913=M. Brosset, Histoire de la Géorgie t. II, livr 1. SPB, 1849.

[36] **მ. ჯანაშვილი,** ფარსადან გორგიჯანიძე და მისნი შრომანი (***Մ. Ջանաշվիլի***, Փարսադան Գոգիջանիձէ ու նրա գործերը), Տփղիս, 1896, եր. 21-22:

[37] M. Brosset, op. cit., t. II, livr. 1, p. 510:

[38] **ი. ჯავახიშვილი,** ისტორიის მიზანი, წყაროები და მეთოდები წინათ და ეხლა, წ. I, ძველი ქართული საისტორიო მწერლობა V–XVIII ს. ს. (***Ի.*** Ջաւախաշվիլի, Պատմութեան նպատակը, աղբիւրները ու մեթոդները առաջ և այժմ, գ. I. Հին վրացական պատմական գրականութիւն V–XVIII դարու), Տփղիս, 1916, եր. 234-235:

[39] Ibid. եր. 235:

Բայց ընդունելով պ. Ի. Ջավախաշվիլու հետ միասին, որ Գօրեցի Փարսադան Գորգիջանիձէն իր ազգային ծագումով հայ *է եղել, միաժամանակ բաց է մնում այն հարցը, թէ ո՞վ էր նա ըստ դաւանական զգացմունքի՝ հայադաւան (հակաքաղկեդոնիկ) թէ՞ վրացադաւան (քաղկեդոնիկ): Ցամենայն դէպս, XVII դարու վերջերում Պարսկաստան եղած ժամանակ նա, –ինչպէս պ. Ի. Ջաւախաշվիլին կարծում է, –պէտք է ընդունած լինէր մահմեդականութիւն*[40]*:*

Ցաւալի է, որ Փարսադանի երկերը դեռևս լիովին հրատարակուած չեն: Դ. Զուբինովը (†) և ապա պ. Ճիճինաձէն հրատարակեցին նրա «Պատմութեան» միայն վերջին՝ չորրորդ մասը, ուր նկարագրուած են Վրաստանի դէպքերը 1636–1696 թուականների ընթացքում[41]*, իսկ պ. Մ. Ջանաշվիլին հրատարակել է նրա մանր գրուածքները և, ի միջի այլոց, «վրաց-արաբերէն-պարսկերէն» բառարանը ըստ «Վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան» գրադարանին պատկանող մի ձեռագրի*[42]*: Պր. Ի. Ջավախաշվիլին պատրաստած ունի տպագրութեան նոյն հեղինակի «Պատմութեան» երրորդ մասը, ուր ներկայացրած են քաղուածքներ պարսից աղբիւրներից:*

Անցնելով XVIII դարու գործիչներին, պետք է ասել, որ դրանց մասին մանրամասն տեղեկութիւններ է յայտնում Թէյմուրազ արքայազնը իր աշխատութեան այն մասում, որ կրում է հետևյալ վերնադիրը՝ ტფილისსა შინა სომეხნი მეცნიერნი–*«Հայ գիտնականները Տփղիսում»: Իր տեսութիւնը Թէյմուրազը սկսում է* Զաքարիա վարդապետ Մատինեանից *(Մադինաշվիլուց).*

ზაქარია ვართაპეტისა მადინაშვილისათვის.

ესე ზაქარია მადინაშვილი ვართაპეტი იყო ზედმიწევნილი ფილოსოფოს-ღ´თის-მეტყველი და მკურნალობისა ხელოვნებისაცა მეცნავი. ამან ასწავა მრავალთა ქართველთა და სომეხთა საფილოსოფოსო წერილნი და ამან განუმარტნა კავშირი ღ´თის-მეტყველებითი პორფირის ფილოსოფოსისა ხუთი ხმა და საზღვრისა წიგნი დავით უძლეველისა ფილოსოფოსისა მიერ ქმნილი, სხუათა და

[40] Ibid. եր. 236:

[41] Տես ծանոթ. 34:

[42] ***Մ. Ջանաշվիլի,*** Փարսադան Գորգիջանիձէ ու նրա գործերը (վրացերեն), եր. 29-83:

სხუათა მოწაფეთა. და ამით განანათლნა მრავალნი[43].

«Զաքարիա վարդապետ Մադինաշվիլու մասին.

Այսպէս՝ Զաքարիա վարդապետ Մադինաշվիլին էր բազմահմուտ փիլիսոփայ-աստուածաբան, նմանապէս և բժշկական արուեստին տեղեակ: Սա շատերին՝ թէ վրացիներից և թէ հայերից, ծանօթացրեց փիլիսոփայական գրուածքների հետ և սա այլ և այլ աշակերտներին մեկնեց Պորփիւրոս փիլիսոփայի «Շաղկապք աստուածաբանականք»-ը հինգ ձայն, և Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի հօրինած «Սահմանաց գիրք»-ը և այսպիսով լուսաւորեց շատերին»:

Այս խօսքերից երևում է, որ Զաքարիա վարդապետը մեկնել է վրացերէն երկու գրուածք փիլիսոփայական բովանդակութեամբ՝ 1) «Շաղկապք աստուածաբանականք»-ը Պորփիւրոս իմաստասիրի, և 2) «Սահմանաց գիրքը»-ը Դաւիթ Անյաղթի:

Խօսելով նրա մասին, թէ ինչպէս մինչև XVII–XVIII դար իզուր էին անցնում վրաց գրականագէտների ջանքերը վրացերէնի քերականութեան կազմելու նկատմամբ, մեզ արդէն ծանօթ Անտօն I արքայազն-կաթողիկոսը իր՝ Մխիթար Սեբաստացւոյ «Քերականութեան» թարգմանութեան մէջ, ի միջի այլոց, նկատում է. «Երբ որ դոցա բոլոր ջանքերը քերականութիւն կազմելու նկատմամբ մնացին ապարդիւն, այն ժամանակ [վրացիք] դիմեցին Տփղիսի քաղաքացիներից (մոքալաքներից) մեկին, որ այժմ կոչւում է Զաքարիա վարդապետ և որը նոցա խնդրի համաձայն՝ դիմեց քերականութեան թարգմանելուն (հայերէնից): Արչիլի թագաւորութեան ժամանակ (1647–1712): Այդ թարգմանութեանը տուին անուն՝ «Քերականութիւն», որը սակայն քերականութիւն չէ»[44]*:*

Զաքարիա վարդապետի մասին խօսելուց յետոյ Թէյմուրազը շարունակում է.

ტერ-ფილიპესათვის.

ეს იყო ზედმიწევნილი ფილოსოფოსი მზჰგავსი ზემოხსენებულის ვართაპეტისა. ამანაც მრავალნი მოწაფენი განსწავლნა და შეეწია რაოდენთამე წიგნთა თარგმანებათა შინა კათოლიკოს ანტონი პირველსა[45].

[43] «Համառոտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին» (վրացերեն), եր. 45:

[44] ***А. Цагарели,*** О грамматической литературе грузинского языка, СПб. 1873, стр. 6.

[45] «Համառօտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին», եր. 46:

«Տէր-Փիլիպոսի մասին.

Այսպէս՝ էր բազմահմուտ փիլիսոփայ վերոյիշեալ վարդապետին նման: Սա էլ շատ աշակերտներ ուսուցեց և մասնակցեց Անտոն կաթողիկոսի՝ մի [հետ] քանի գրքերի թարգմանութեանը»:

Տէր-Փիլիպոսը, ազգանունով «Ղ'այթմազիշվիլի» (ყაჲთმაზიშვილი), Անտոն I արքայազն կաթողիկոսի ժամանակուայ (XV||| դարու) ամենանշանաւոր դէմքերից մէկն է: Լինելով Անտոնի ամենամերձաւոր աշխատակիցներից մէկը՝ նա միաժամանակ վարել է նոյն կաթողիկոսի ձեռակերտ Տփղիսի Հոգևոր սեմինարիայի տեսչի[46] կամ, ինչպէս այն ժամանակ անուանում էին, «սքոլապետ» (სქოლაპეტ)-ի պաշտօնը: Այս քահանայի ազգային ծագման մասին կայ երկու տարբեր կարծիք, որ յայտնում են նրա ժամանակակիցները՝ մեկը Անտոն I արքայազն-կաթողիկոսը, միւսը Դոսիթէոս Ջէրքէզիշվիլի Նեկրէսի եպիսկոպոսը: ფილიპპე ხუცესი სომეხთა გვარისაგანი–«Փիլիպոս երէց հայ ցեղից»[47], მღვდელი ვინმე ჰარმანთა სახელით ფილიპპე ჰარმანთავე გვარისა... თემისაგან ქართველთასა, ტომისაგან აზნაურთასა–«ոմն քահանայ արամեան, անունով Փիլիպոս, արամեան ցեղից... վրաց վիճակից, ազնուական տոհմից»[48] կամ «ծագումով արամեան, այսինքն հայոսեան, ազնուական՝ իշխան Օրբէլեանների կալուածքներից[49]–այսպէս է վկայում Տէր-Փիլիպոսի մասին Անտոն կաթողիկոսը իր «Էրիստիկայի», Դաւիթ Անյաղթի «Սահմանաց գրքի» թարգմանութեան և Մխիթար Սեբաստացւոյ «Քերականութեան» փոխադրութեան մէջ (վերջին երկուսը անտիպ է): Ինչ վերաբերում է Դոսիթէոս եպիսկոպոսին, նա իր՝ Մխիթար Սեբաստացւոյ «Ճարտասանութեան» փոխադրութեան մէջ (որ անտիպ է) յիշատակում է նոյն Տէր-Փիլիպոսին այսպէս՝ ვინმე მღვდელი ჰრმანთა, სახელით ფილიპე... კილობითისა ნათესაობისა სქესითა

[46] А. Хаханов, Очерки по истории грузинской словесности, кн. III, Москва, 1901, стр. 287.

[47] მზა-მეტყველება ქმნილი ანტონი I საქართველოს კათოლიკოსისაგან (Էրիստիկա արարեալ Անտոն I Վրաստանի կաթողիկոսից), հրատ. Պոլիէւկտոս քահ. Կարբէլաշվիլու, Տփղիս, 1892, եր. 4-5:

[48] წიგნი საზღვართა დავით უძლეველისა (Սահմանաց գիրքը Դաւիթ Անյաղթի), թարգմ. Անտոն կաթողիկոսի, ձեռագիր վրաց մէջ գրագիտութիւն տարածող ընկերութեան գրադարան–թանգարանի № 2564, եր. 103а–в:

[49] А. Цагарели, ц. с., стр. 7.

ქართველი და ტომობითისა სქესითა ძე აზნაურთა[50] –«ոմն
արամեան քահանայ, անունով Փիլիպոս... բարբառա-ազգային
սեռով վրացի և տոհմային սեռով ազնուականի որդի»: Ուրիշ խօս-
քով ասած, Տէր-Փիլիպոսին Անտոն կաթողիկոսը ընդունում է ճա-
յադաւաճ հայ, իսկ Դոսիթէոս եպիսկոպոսը ճայադաւաճ վրացի:

Տէր-Փիլիպոս քահանայ Ղ'այթմազիշվիլին որոշ պատուաւոր
տեղ ունի գրուած վերածնութեան շրջանի (XVIII դարու) վրաց
աստուածաբանական-իմաստասիրական գրականութեան մէջ, սա-
կայն այն աստիճանով, որքան նա աշխատակցել է մէկ կամ միւսի
այն ժամանակուայ աչքի ընկնող գրական գործիչների հետ: Այս-
պէս, օրինակ, յայտնի է նրա աշխատակցութիւնը Անտոն կաթո-
ղիկոսի, Դոսիթէոս եպիսկոպոսի, Յովան Ջամբակուր-Օրբէլեանու,
Անտոն միտրոպոլիտ Ցագարէլու, Յովհան մդիւանբէգի, Նիկողայոս
քահանայի և այլոց հետ[51]:

Ի մէջի այլոց, ուշադրութիւն է գրաւում Անտոն կաթողիկո-
սի այն «խոստովանութիւնը» Տէր-Փիլիպոսի մասին, որ գտնւում
է նրա გრამმატიკა სომხურიდამ შედგენილი მიხითარისა
გრამმატიკისა წესით –«Քերականութիւն կազմեալ հայերէնից
ըստ Մխիթարայ քերականութեան կարգի» վերնագրով յայտնի (դե-
ռևս անտիպ) աշխատութեան[52] յառաջաբանում: Վերջինից մենք, ի
մէջի այլոց, տեղեկանում ենք, թէ ի՞նչն ստիպեց Անտոնին կազմել
վրացերէնի քերականութիւնը և թէ ինչպիսի՞ հանգամանքներում՝
շնորհիւ Տէր-Փիլիպոսի աջակցութեան նա կարողացաւ իրագոր-
ծել աշխատութիւնը: «Յիշենք, թէ ի՞նչն ստիպեց ինձ կազմել այս
աշխատութիւնը», –սկսում է իր «խոստովանքը» Անտոն կաթողի-
կոսը և ապա շարունակում. «Աստուած շնորհեց թագաւորութիւն
Թէյմուրազին (II, 1744–1761) և որդոյն նորա Հերակլին (II, 1761–
1798): Այդ երկու թագաւորները շատ էին ցանկանում ունենալ մի
հետազօտութիւն վրաց քերականութեան մասին. բայց նոքա չէին
կարողանում գտնել մի այնպիսի անձնաւորութիւն, որ տեղեակ լի-
նէր որևէ լեզուի քերականութեանը: Իսկ ես քանի որ քաջ ծանօթ

[50] რიტორიკა მხითარ სევასტიელისა (Ճարտասանութիւն Մխիթար Սեբաստաց-
ւոյ, թարգմ. Դոսիթէոս եպիսկոպոսի: Ձեռագիր Վրաց մէջ գրագիտութիւն տարածող
ընկերութեան գրադարան–թանգարանի №1137, եր. 14):

[51] დ. კარიჭაშვილი, კატალოგი ქართველთა შორის წერა-კითხვის გამავრცე-
ლებელ საზოგადოების წიგნთ-საცავისა (Դ. Կարիճաշվիլի, Գրացուցակ վրաց մէջ
գրագիտութիւն տարածող ընկերութեան գրադարանի), Տփղիս, 1905, եր. 249-261:

[52] Այս աշխատութեան հազուագիւտ ձեռագիր օրինակը պահւում է Ռուսաց Գիտութեանց ճեմարանի Ասիական թանգարանում № 88 в-ի ներքոյ:

էր մեր լեզուի հետ, աւելի ես կամեցայ ուսումնասիրել այն:

Մի քանի տարուց յետոյ ես ծանօթացայ մի քահանայի հետ՝ Փիլիպոս Ղ՚այթմազիշվիլիի ազգանունով. Նա արամեան (էրմենիան) էր, այսինքն հայկազեան (հայոսեան), ծագումով ազնուական իշխան Օրբէլեանների կալուածքներից. Նրա հետ ես շատ մտերմացայ, և մենք երկուսով միասին սկսեցինք աշխատել ամանայն օր իւրաքանչիւր նախադասութեան և խօսքի հետազօտութեամբ. Նախ և առաջ ես թարգմանեցի հայերէնից Արիստոտէլի «Ստորոգրութեանց գիրք»-ը, որ երկու մասից է բաղկացած և որտեղ խօսւում է բառակազմութեան և հաւաքաբանութեան մասին, և դրա համար ես շատ ուրախ էի ու գոհութիւն էի յայտնում Աստծուն և Սուրբ Հոգուն: Միմիանց հետ զրոյց անելով, մենք սկսեցինք մտածել այն մասին, թէ ի՞նչպէս անել որպէսզի իրագործել կարողանանք քերականութեան փոխադրութիւնը. բայց այդպիսի քայլի առաջ ինձ արգելք էր լինում մի հանգամանք, այն է, որ իմ միտքս քերթողաբանական կրթութիւն չունէր, մինչդեռ Տէր-Փիլիպոսը քաջ ծանօթ էր քերականագիտական արուեստին: Այդպիսով՝ յոյս տածելով դէպի Աստուածային գերիմաստութիւնը, համաձայն Թէյմուրազ թագաւորի ու նրա որդւոյ հրամանին, մենք ձեռնարկեցինք այդ գործի (այսինքն՝ քերականութեան) կազմելուն: Այդ Տէր-Փիլիպոսը նախ և առաջ ծանօթացրեց ինձ, թէ ի՞նչ է մասունք բանի, յետոյ քերականութեան յատկութիւնների, տառերի, վանկերի, խօսքերի և նախադասութիւնների հետ, և հետզհետէ բացատրում էր, թէ ի՞նչ է մասունք բանի ու նրա պատկանելիքները, մինչև որ աստիճանաբար մտցրեց ինձ իմաստութեան դռները. և քանի որ Աստուածային շնորհքը ինձ օգնեց, իմ միտքը՝ ըմբռնելով այն՝ յղեց քերթողաբանութիւնը: Բայց մենք չէինք բաւականանում միմիայն հայ քերականութեան ուսումնասիրութեամբ, այլև՝ միաժամանակ դիմում էինք և լաթինական քերականութիւններին, որտեղից էլ քաղում էինք լրացուցիչ տեղեկութիւններ: Այդ լրացուցիչ տեղեկութիւններով մենք լրացնում էինք մեր ձեռքի տակ եղած հայերէն քերականութիւնը ու այդպէս լրիւ կերպով այդ քերականութիւնը թարգմանում վրացերէնի: Իսկ ինչ վերաբերում է համաձայնութեանը, որը նախադասութիւններ կազմելու կանոնների հետ է ծանօթացնում, դրա մասին ինձ տեղեկութիւններ էր հաղորդում այն արժանայիշատակ Փիլիպոսը, որը միշտ կարեկից էր ինձ»[53]:

[53] *А. Цагарели*, ц. с., стр. 6-7.

Անտոն կթողիկոսի այս «խոստովանաքը» բոլորովին բավական է, որպէսզի մենք գաղափար կազմենք նրա մասին, թէ որքան մեծ է Փիլիպոս քահանայի ծառայութիւնը նոյն Անտոն կթողիկոսի հանդէպ ու, նրա միջոցով, վրաց գրականութեան առաջ:

Տէր-Փիլիպոսի աշխատակցութեամբն է անշուշտ պարտական Անտոն կթողիկոսը իր հետևյալ գործերը մշակելու (հայերէնից թարգմանելու) գործում. 1. Կիւրեղ Աղեքսանդրացու «Գանձ»-ը (განძი)[54], 2. Արիստոտէլի «Ստորգութեանց գիրք»-ը (პერიერმენია), 3. Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք»-ը (კავშირნი ღვთისმეტყველებითნი),4. Դաւիթ Անյաղթի «Սահմանաց գիրք»-ը (წიგნი საზღვართა),5. Եփեսեան ժողովի պատմութիւնը (ეფესოს წიგნი)[55], 6. Մխիթար Սեբաստացւոյ «Ճարտասանութիւնը» (რიტორიკა)? 7. նոյն հեղինակի «Քերականութիւնը» (ღრამმატიკა), և այլն (ոչ մէկը դոցանցից դեռևս տպուած չէ)[56] մասամբ՝ 1. «Վրացերէն քերականութիւն » (ქართული ღრამმატიკა), որ հրատարակել է Ռափայէլ Էրիսթաւին (†) Տփղիսում 1885 թուին, և 2. «Էրիստիկա» (მზამეტყველება), որ հրատարակել է Պոլիէւկտոս քահ. Կարբէլաշվիլին Տփղիսում 1892 թուին:

Նմանապէս, Տէր-Փիլիպոսի անունը կապուած է և հայագէտ Դոսիթէոս եպիսկոպոս Ջէրքէզիշվիլու հետևյալ գործերի մշակման (հայերէնից թարգմանութեան) հետ՝ 1. Պորփիւրոս իմաստասիրի «Համառօտ մեկնութիւն Ստորոգութեանց գրքի» (შემოკლებითი ახსნა პერიარმენიას წიგნთა), 2. Կովիդի Անտոն Լեմոակցու «Դիալէքտիկա» (დიალექტიკა), 3. պարականոն «Մանկութիւն Տեառն» (სიყრმე უფლისა)[57] և այլն (բոլորը անտիպ են)[58]:

Ահաւասիկ և Անտոնի ու Դոսիթէոսի կարծիքները Փիլիպոսի մասին: Անտոնը գրում է. ფრიად გონება ვრცელ მაღალ და კეთილ

[54] ***Ф. Жордания***, Описание рукописей Тифлисского Церковного музея, кн. I, Тифлис, 1903, стр. 5.

[55] Այս աշխատութիւնը † ***Թ. Ժորդանիան*** սխալմամբ անուանում է "Акты трех первых вселенских соборов". ***Ф. Жордания,*** Описание рукописей etc., кн. II, Тифлис, 1902, стр. 114.

[56] Այս աշխատութիւնների մասին տես՝ ***Դ. Կարիճաշվիլի,*** op. ***Ф. Жордания***.,*ц* ц. с., I և II:

[57] Որ Դոսիթէոս եպիսկոպոսը հայագէտ է եղել, վկայում է Թէյմուրազ արքայազնը հետևյալ խօսքերով՝ უწყოდა სომეხთა ენა კეთილად–«լաւ գիտէր հայոց լեզուն» («Համառօտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին», եր. 39):

[58] Նոր թարգմանութիւն (հայերէնից), որ տարբերւում է հին թարգմանութիւններից (յունարէնից) հրատարակած ***Կ. Կէկէլիձէի*** ձեռքով (***K. Kekelidze***, Monumenta Hagiographica Georgica, pars prima, Keimena, Tiflis, 1918, p.p. 115-117):

მეცნი[ერი] პლატონურთა, არისტოტელ და პითაღორებრთ სიბრძნის მეტყველებათა ჰარმანულითა ენითა[59]—«*Լաւագոյն միտքը լայն, բարձր և լաւ գիտող Պղատոնի, Արիստոտէլի և Պիւթագորի իմաստասիրութեանց հայերէն լեզուով*»: *Դոսիթէոսը գրում է՝* სიბრძნის მოყვარეთაგანი... და ფრიად მეცნიერი ჩ́ნ ქართველთა ენის ქცევათა და ჰრმანულთა უმეტეს ზედამიწევნილ იყო[60]—«*Իմաստասիրողներից [էր]... և լաւագոյն գիտցող մեր՝ վրաց լեզուի դարձուածքները, իսկ արամեանի (հայերէնի) մէջ աւելի ևս հմուտ էր» (10):*

Շարունակելով Թէյմուրազ արքայազնի վկայութիւնը Տփղիսում գտնուող հայ գիտնականների մասին, մենք ապա, Տէր Փիլիպոս քահանայից յետոյ, անշուշտ պէտք է կանգ առնենք Տէր-Պետրոսի ու նրա մի քանի ժամանակակիցների վերայ: Դրանց մասին Թէյմուրազը գրում է հետևյալը՝.

ტერ-პეტროზისათვის.

თერ-პეტროზაც იყო მჳზგავსი ამა ზემოხსენებულთა და მთარგმნელობასა შინაცა კარგი, რომელ შეეწია ამანაც კათოლიკოზსა ანტონის თარგმანებასა შინა წიგნთასა; აგრეთვე არიან კარგნი მთარგმნელნი სომხურისა ენისაგან ქართულად და კარგნი ღრამატიკოს-დიალეკტიკოსნი ტერ-დავითა და ტერ-სამოელ[61]:

«Տէր-Պետրոսի մասին.

Տէր-Պետրոսն էլ նման էր այս վերոյիշեալներին (այսինքն Զաքարիա վարդապետին և Փիլիպոս քահանային) և թարգմանութեանց մէջ էլ լաւ էր. սա էլ մասնակցեց Անտոն կաթողիկոսի՝ գրքերի թարգմանութեանց: Նմանապէս լաւ թարգմանիչներ են հայերէնից վրացերէն ու լաւ քերականագէտ-ճարտասաններ Տէր-Դաւիթն ու Տէր-Սամուէլը»:

Այս Տէր-Պետրոսի *մասին յայտնի է, որ նրա մասնակցութեամբ Տփղիսի Սիօնի մայր տաճարի աւագերէց Յովհան Օսէսձէն, Գէորգ*

[59] Տես ծանոթ. 47:

[60] Տես ծանոթ. 49:

[61] «Համառօտ հաղորդագրութիւն վրաց գրողների մասին» (վրացերէն), եր. 48:

Հերակլեան արքայազնի հրամանով 1788 թուին հայերէնից թարգմանել է վրացերէն այսպէս կոչուած «Զիարժշկարան» (სამკურნალო ცხენისა *կամ* ცხენის კარაბადინი)[62]*: Լրացուցիչ տեղեկութիւններից երևում է., որ այդ բժշկարանի մի քանի գլուխների թարգմանութեանը բացի Տէր-Պետրոսից մասնակցել է և Թէյմուրազ արքայազնի գրութիւնից յայտնի* Տէր-Սամուէլը[63]*:*

Բացի դրանից, անհրաժեշտ է յիշատակել ումն Բէհբութեան *անունը, որ 1797 թուին, սարդար-սալթխուցէս Յովհան Ջամբակուր-Օրբէլիանի հրամանով, թարգմանել է հայերէնից վրացերէն Օրբէլեան տոհմի պատմութիւնը (համաձայն Ստեփաննոս Սիւնեցւոյ «Պատմութիւն Տանն Սիսական» հեղինակութեան 65/66 գլխի)*[64]*:*

Աշուղների վերայ առանձնապէս կանգ չեմ առնում: Հայ հասարակութեանը քաջ ծանօթ է վրաց Հերակլ II թագաւորի պալատական երգիչ հայազն Սայաթ-Նովան, *որի վրացերէն ոտանաւոր-երգերը՝ թուով 28՝ միմիայն 1918 թուին հրատարակեց Տփղիսում երիտասարդ վրաց բանաստեղծ պ. Ի. Գրիշաշվիլին*[65]*: «Թեև այսօր հայերը պաշտում են [Սայաթ-Նովային], ինչպէս իրենց գրողին, բայց,—ասում է պ. Ի. Գրիշաշվիլին,—չմոռանանք, որ նա ծնուեց, սնուեց ու ծաղկեց միմիայն վրաց մուսայի գրկում. նա վրացերէն երգում էր վրաց թագաւորներին, վրացերէն գրում, վրացերէն զգում ու վրացերէն լալիս կամ ծիծաղում»: Սայաթ-Նովան,—շարունակում է նոյն գրողը,—այն ստիճանով է հայ բանաստեղծ, վրաց բանաստեղծ և թուրք բանաստեղծ, որքան որ նա գրում էր հայերէն, վրացերէն ու թուրքերէն. բայց իր էութեամբ, իր արուեստով ու բանաստեղծութեամբ նա Հերակլ թագաւորի պալատական բանաստեղծն էր և մեզ (վրացիներիս) իսկապէս այս կողմից է հետաքրքրում Սայաթ-Նովայի գոյութիւնը»*[66]*:*

Ի միջի այլոց, Սայաթ-Նովան, ինչպէս պ. Գ. Լեոնեանի ուսումնասիրութիւններից երևում է, իսկապէս հիմնադիր է աշուղական յատուկ՝ վրաց չկօլայի, որի ներկայացուցիչներն են Շամչի-Մելքօ,

[62] ***Ф. Жордания..***, ц. с., II, стр. 137-138.

[63] ***Е. Такайшвили***, Описание рукописей |, стр. 690-693.

[64] ***М. Джанашвили***, Описание рукописей Церковного музея, кн. III, Тифлис 1908, стр. 92-98. Այս պատմութիւնից մի հատուած հրատարակել է պ. ***Մ. Ջանաշվիլին*** (ibid, եր. 94-100): Տողերիս գրողը պատրաստած ունի այդ գործը տպագրութեան համար ամբողջապէս:

[65] ***Ի. Գրիշաշվիլի***, Սայաթ-Նովա (վրացերէն), եր. 1-135:

[66] ibid., გვ. 44.

Ջերքէզ-Օղլի, Թուրինջ, Քեչիչ-Օղլի, Միսկին Բուրջի, Ջահիլ-Օղլան, Մայիֆ, Եթիմ Օղլան, Եաղուբ Օղլիներ և այլն[67], *թեև մենք, դժբախտաբար, ոչ մի հնաւորութիւն չունենք ստուգելու, թէ դրանցից ո՞վ և ի՞նչ է երբևիցէ գրել՝ ծառայելով այդպիսով վրաց գրականութեանը:*

* * *

Վրաց «Դաւիթ Անյաղթ» –XI–XII դարու հռչակաւոր իմաստասէր Յովան Պէտրիծուն չունչ տուող Գրիգոր Բակուրեանը, *դասական շրջանի վրաց աշխարհիկ գրականութեան զարդերից մինի՝ «Դիլաբական»-ի՝ հեղինակ* Սարգիս Թմոգւեցին, *նոյն աշխարհիկ գրականութեան վրացական ոգի ներշնչող* Փեշանգ Փաշի-Բերտղ'աձէն, *վրաց լաւագոյն բանաստեղծների պանթէոնում դասուած, պալատական գրիչ* Բեգթաբեգը, *վրաց պատմագրութեան շնորհալի մշակ* Փարսադան Գորգիջանիձէն, *վրաց աստուածաբանական-իմաստասիրական մտքի վերածնութեանը զարկ տուող և Անտոն I կաթողիկոսի պէս հսկայի սնող* Զաքարիա վարդապետ Մադինաշվիլի *և* Փիլիպոս քահանայ Ղ'այթմազիշվիլին, *վրաց աշուղութեան պարծանք Սայաթ-Նովան. և այլն, և այլն. ահա այն բազմաթիւ հայազն գրական գործիչները, որոնք որոշ չափով նպաստել են վրաց գրականութեան բարգաւաճման համարեա թէ նորա բոլոր ճիւղերում ու այդպիսով անմահացրել իրենց անունները նոյն գրականութեան մէջ, ամենուրէք թողնելով ապագայ սերունդներին՝ իբրև յիշատակ իրենց բարի օրինակը երկու եղբայրակից և հարևան ժողովրդների համերաշխ կենցաղավարութեան և համագործակցութեան համար (11):*

---

[67] **Գ. Լեւոնյան,** Աշուղների մասին, պատմական-քննական հայեացք, «Ազգագրական հանդէս», գ. X (Տփղիս, 1903), եր.67:

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԻ 874 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Երևանի անցյալին նվիրված պատմական տեսությունները սովորաբար սկսվում են այն փաստի հիշատակությամբ, որ խալդական շրջանում այն կոչվելիս է եղել Էրիաինի (*Eriaini*) (1): Ապա նշվում է «Գիրք թղթոց»-ի մեջ հիշատակած՝ Աբրահամ Հայոց կաթողիկոսի գումարած հակաքաղկեդոնիկ եկեղեցական ժողովի (մինչև 602 թ.) մասնակից երկու «վանաց երեցների» անունները, մեկը «Դաւիթ Երևանայ», իսկ մյուսը «Ջոջիկ Երևանից», որով ապացուցվում է Երևանի գոյությունը VI դարի վերջերին: Երևանի ու նրա բերդի անունը տալիս է VII դարում և Սեբեոս պատմիչը, սակայն դնելով «ի կողմանս Սեպհական գնդին» (2), որ դժվարացնում է նրա նույնացումը Այրարատյան գավառի Երևանի հետ*[1]*:*

Եթե բերդապատ *Երևանի գոյությունը VII դարում կասկածելի է թվում, ապա* այգեպատ *Երևանի հիշատակությունը Սևանի 874 թ. արձանագրության մեջ ամեն կասկածից դուրս է: Այս արձանագրությունը որ մենք հայտնաբերեցինք դեռևս 1924 թվին Սևանի Առաքելոց եկեղեցու (լեռան փոքր գմբեթավոր տաճարի) գմբեթի վրա և հրատարակեցինք 1939 թվին*[2]*, որոշ չափով հարում է, մի կողմից՝ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական»-ի այն տվյալներին, որ վերաբերում են Սևանա կղզու շինարարությանը, իսկ մյուս կողմից Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ի հաղորդած այն ցուցակին, որ վերաբերում է Սևանա վանքին պատկանելիք անշարժ գույքին:*

Ահա այդ արձանագրությունն ըստ մեր ընթերցման (5 տող) (3):

---

[1] Գրականություն՝ **Երվանդ Շահազիզ,** Հին Երևանը, 1931, էջ 7-14: **Հ. Ն. Ակինյան,** Հին Երևանը,–«Հանդէս ամսօրեայ», 1934 թ., № 5-7, էջ 327. հմմտ. **Հր. Քոչար** , Երևան,– «Սովետական Հայաստան», 1940 թ., № 219: Սկզբնաաղբյուրներ՝ «Գիրք թղթոց», 1901 թ., թջ 151: Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն. չորրորդ տպագրութիւն բաղդութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանօթութեամբ ի ձեռն, **Ստ. Մալխասյանց,** Երևան 1939, էջ 118:

[2] ***Л. Меликсет-Беков***, Новооткрытая надпись на Севане от 874 г., – "Памяти академика Н. Марра (1864–1934)", изд. Акад. Наук СССР, М. Л. 1939, стр. 409-415 и табл. I там же (խմբագրության անփութությամբ, դժբախտաբար, արձանագրության լուսանկարը տպված է գլխիվայր, իսկ տեքստը՝ սրբագրական սխալներով):

1. ԿԱՄԱՒՆ Ա̅Յ ՍԻՒՆԵԱՑ | ՏԻԿԻՆ (բնագրում՝ Տ̅ԲՆ) ՄԱՐԻԱՄ ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՍ | ՅԱՆՈՒՆ Ս̅Բ ԱՌԱՔԵԼՈՑՆ՝ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ (բնագրում՝ ՄԻԱՅԲԱՆՈՒԹԲ) ||

2. ԱՇՈՏ[ՈՅ] (բնագրում՝ ՈՇՈՏ) ԵՒ ՏՎԱՔ ՎԱԽՄ Ս̅Բ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԶՎԱՐՍԵՐՆ, ԶԳՈՄԱՁՈՐ, ՑԱՄԱՔԲԵՐԴ, ԲԵՐԴՔ, ՈՒՌԵ- ||

–

3. ԱՅՏԱՓ, ՈՐՍՆ ԶԿՌԱԿՃՆԿԻՆ, ԱՅԳԻ Ի ԳԱ|ՌՆԻ ԵՒ ՅԵՐԵԻԱՆ. ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ ՆՇԱՆ- ||

4. Ք ԱԾԸՆԿԱԼ Ս̅Բ ՆՇԱՆԱՑ | ՏԱՄ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ԶԿ|ՏԱԿԵԼՈՅ (sic) ԶԿՈՐԱՏԵՂ, ՈՎ ԽԱ || –

5. ՓԱՆԷ՝ ՅԺԸ[ից] ՆԶՈՎԵԱԼ Ե|ՂԻՑԻ. ԹԻՎ ՅԻԳ:

Նույնը ըստ Ստ. Օրբելյանի.

«Մեծ թագուհին Մարիամ՝ ամուսին Վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա՝ ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցին յանուն սուրբ Առաքելոց և զմիւսն յանուն տիրուհւոյ Աստուածածնին. և զարդարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն Աստուծոյ և բնակաբան աստուածազգեաց արանց յՅԻԳ թուականին Հայոց: Բայց Մաշտոց եդիր սահման վանիցն և պայծառացոյց երկնաքատակ կարգօք, յորմէ համբաւոյ միաբանեալ Աշոտոյ՝ իշխանաց իշխանի սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ հօրն և ընծայէ զփրկական նշանն աստուածաընկալ խաչին, և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն գեօղս՝ զՎարսերն, զՑամաքաբերդ, զԳոմաձորն, զԲերդքն, զՈւռեացտափ և զորսն Կռակծին, և այգիս ի Գառնի և յԵրևան և յայլ տեղիս, և բազում նզովիւք հաստատեցին»[3]:

Վերոհիշյալ՝ 874 թ. արձանագրության և Ստ.Օեյյանի ցուցմունքի հանդեպ Սիմեոն Երևանցին Սևանի անշարժ գույքի ցանկը XVIII դարու նկատմամբ տալիս է հետևյալ կերպով.

«Սևանա անապատի որպիսութիւնք»

«Անապատս այս, որ է ծովակն Գեղարքունւոյ, որ և ... նախապէս հիմնարկեցաւ ի թուոջ...

«Ունի զվիճակս ի Գեօղարքունի, զԿախմախի, զԲատակալ,

[3] Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 116-127=Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց [«Ղուկասեան Մատենադարան» 4], Տփղիս, 1911, էջ 173-174:

զՎարգել, եւ զՎարգել, զՓշմակալ, զԲուղտաթափայ, զՂարադալու, զՊորտակ, զԿորատեղ: Իսկ ի Ծաղկունեաց նահանգէն զայս ինչ ունի. զԴրախտիկ, զՈւռիծառ, զՄեծատափ, զՁիպուխլու, զՑամաքաբերդ, զԳոմաձոր, զՎարսեր, զՇալխ, զԿորբել և զԾաղկունք»[4]:

Այս ցանկում մի շարք անուններ՝ Կորատեղ, Ուռի ծառ, Մեծ տափ, Ցամաքաբերդ, Գոմաձոր և Վարսերը՝ կրկնություն են 874 թ. արձանագրության և Ստ. Օրբելյանի հիշատակածի. մինչդեռ Գառնիի և Երևանու այգիների մասին այլևս խոսք չկա: Հավանական է, որ Սևանա վանքի իրավունքները IX դարում նվիրված տեղերի նկատմամբ կարող էին խախտվել, ինչպես օրինակ՝ Գառնիի և Երևանի այգիների վերաբերմամբ: Սակայն փաստը մնում է փաստ, որ Երևանն իր այգիներով հիշատակված է ինչպես 874 թ. արձանագրության մեջ, նույնպես և Ստ. Օրբելյանի Պատմության մեջ:

[4] «Ջամբռ», 1873, էջ 284:

XVI ԴԱՐՈՒ՝ ԱՍԼԱՆԻ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՔԱՌԱԼԵԶՎՅԱՆ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ[1]

Հնագրության (պալեոգրաֆիայի), իբրև պատմական օժանդակ դիսցիպլինի, ամենաբարդ խնդիրներից մեկն է պոլիգլոտիկ կամ բազմալեզվյան արձանագրությունների («պոլիլինգվա»-ների) ընթերցումը, վերծանումը և պատշաճորոն հրատարակումը:

Այսպիսի արձանագրությունները, անկախ նրանից՝ մետաղի օգնությա՞մբ են նրանք քարի կամ այլ շինանյութի վրա փորագրված (սրանց թվում և «երկաթագիր»), որ հայտաբերված են աշխարհիս այլևայլ վայրերում, թե՞ պատի սվաղի վրա ներկով կատարված, գերազանցապես երկ–, կամ եռալեզվյան են, այսինքն այսպես կոչված «բիլինգվա» կամ «տրիլինգվա»-ներ:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ այստեղ խոսքը վերաբերում է ո՛չ թե այնպիսի արձանագրություններին, որոնք ըստ լեզվի (կամ բարբառի) մի ցեղային հատվածի կամ ժողովրդի են պատկանում, իսկ ըստ գրի (այսինքն՝ տրանսկրիպցիայի կամ տրանսլիտերացիայի) մյուսին, ինչպիսիք են, օրինակ, Գեղարքունիքում հայտնագործված, այժմ Երևանի թանգարանում պահվող և Բագրևանդի Ուչքիլիսայի–Հովհաննավանքի արամեատառ արձանագրությունները[2], ոչ էլ այնպիսիներին, որոնք տարբեր *ժամանակների և* տարբեր *անձանց ձեռքով են փորագրված՝* տարբեր *պատմական անցքերի կամ երևույթների կապակցությամբ, ինչպիսիք են, օրինակ, Անիի Մանուչեի մզկիթի* տարբեր *ծավալ և բովանդակություն ունեցող արձանագրությունները՝ չորս լեզվով[3]: Մենք այստեղ նկատի չունենք նաև այն դեպքերը, երբ մի լեզվով փորագրված որևէ արձանագրության կցված է վավերացում այլ լեզվով, ինչպիսին է, օրինակ, նույն Անիում* Ն. Մառի *հայտնագործած (1910 թ. պեղումների*

[1] Զեկուցված է Երևանի պետ. Համալսարանի 25-ամյակին նվիրված հոբելյանական գիտական սեսիայի պատմության սեկցիայի նիստում 1946 թ. ապրիլի 23-ին:

[2] Հմմտ. **Ա. Բորիսով,** Հայաստանի Արտաշես թագավորի արձանագրությունները, «Սովետական Հայաստան», 1941 թ., № 39, **Ղ. Ալիշան,** Այրարատ, Վենետիկ, 1901, էջ 529-530, ***Л. Меликсет-Бек,*** Armeno-Hebraica, "Труды Гос. инст. Этногр. музея евреев Грузии", т. III, Тб. 1945, стр. 229-233.

[3] ***В. Бартольд,*** Персидская надпись на стене Анийской мечети Мануче. СПб, 1911, табл. I, *Н. Марр,* Ани, *Л.–М,* 1934, табл. LV, рис. 260.

ընթացքում) վրաց Եպիփան կաթողիկոսի 1218 թ. ընդարձակ վրացերեն երկաթագիր (ասոմթավրուլի) արձանագրությունը հայերեն post scriptum-ով հանդերձ[4], և ո՛չ էլ Ավանի Եզր կաթողիկոսի երկլեզվյան՝ մեկը մյուսին հետևող հայերեն-հունարեն ծածկագիրը[5]: Այլ մենք ի նկատի ունենք այնպիսի պոլիգլոտիկ կամ բազմալեզվյան հուշարձաններ, որոնք գրված են մի *տեղում,* մի *որևէ դեպքի կամ երևույթի առնչությամբ,* միևնույն *անձի (մեկենասի՞) պատվերով, գուցե և* միևնույն *գրչի կամ փորագրողի (ծայրահեղ դեպքում՝ վարպետների* մի *բրիգադի) ձեռքով, ինչպիսիք են, օրինակ, մի կողմից՝ Բեհիստունի (Քիրմանշահի մոտ) Դարեհ Վշտասպի նախքան մեր թվականության 521 թ. եռալեզվյան (եռաբարբառ)՝ պարսկերեն-էլամերեն-բաբելոներեն վիմագրությունը[6] և, մյուս կողմից՝ Բրիտանական (Լոնդոնում) թանգարանի զարդը կազմող մի շարք «տրիլինգվա»-ներ, որոնցից համաշխարհային հռչակ են ստացել Շամպոլյոն Կրտսերի վերծանած հիերոգլիֆիկ-դեմոտիկ-հունարեն վիմագրությունը (այն է՝ Բոնապարտի զորականների կողմից 1799 թ. հայտնագործվածը Եգիպտոսում՝ Ռոզետտայի Սենժուլյոն դղյակում[7]) և նույնպիսի եռլեզվյան արձանագրությունն այն քարատապանի վրա, որ մի ժամանակ Աղեքսանդր Մակեդոնացու սարկոֆագի տեղ էր ընդունվել (Աղեքսանդրիայից)[8], որոնց շարքը կարելի է դասել և Վրաստանում՝ Մցխեթա-Արմազիի 1940 թ. պեղումների ընթացքում հայտաբերված և այժմ Վրաստանի պետ. թանգարանում պահվող հունա–արամեական «բիլինգվա»-ն[9]:*

Բազմալեզու արձանագրություններով առանձնապես հարուստ է Վրաստանը: Բայց կարևոր է նշել, որ այսպիսի արձանագրություն-

[4] ***Н.Марр,*** Надпись Епифания, католикоса Грузии (Из раскопок в Ани 1910 г.) "Известия И. Академии Наук ", 1910, стр. 1437-1439, и рис.; *Н. Марр,* Ани, табл. XLII, рис. 182.

[5] **Կարո Ղաֆադարյան**, Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 6-8 (1):

[6] ***F. H. Weissbach***, Die ahämenideninschriften zweiter Art [Assyriologische Bibliothek IX Band], Leipzig, 1890; ***F.*** *H. Weissbach* und *W. Bahg*, Die altpersischen Keilinschritten, Leipzig, 1893, *F. H. Weisbach.* Die dreisprächige Inschrift Darius Susa. "Zeitschrift für Assyriologie", 44. Band, 1-2 Heft, Leipzig, 1838, *Fr. W. König.* Relief und Inschrift der Königs Dareios I, Leiden 1938, և այլն:

[7] ***Champollion.*** Précis di systéme hièroglyphique, Paris, 1824.

[8] ***Erdward Daniél Clarke.*** The Tombe of Alexander, London 1805.

[9] ***Г. В. Церетели.*** Армазская билинга. Двуязычная надпись, найденная при археологических раскопках в Мцхете-Армази. Тб., 1941. *G. Tseretheli.* The bilingual inscription from Armazi near Mcheta in Georgia. "Известия Института языка, истории и материальной культуры имени Н. Я. Марра", т. XIII, 1942, стр. 1-48 (груз.), 49-83 (англ.).

ներում՝ ինչպես «տրիլինգվա»-ներում, նույնպես և «բիլինգվա»-ներում վրացերենի կողքին առկա է միշտ հայերենը կամ, ընդհակառակը, հայերենի կողքին՝ միշտ վրացերենը, որ ապացույց է այն անհերքելի ճշմարտության, որ դրանք հայ-վրացական, resp. վրաց-հայկական դարավոր բարեկամության և համակեցության ամենացայտուն և ամենապերճախոս վավերագրերն են: Միաժամանակ՝ դրանք կարևորագույն նյութեր են հայ հնագրության համար:

Բայց և այնպես, Վրաստանի սահմաններում հայտաբերված «տրիլինգվա»-ներից, նախ և առաջ, ուշադրության արժանի է հայերեն-վրացերեն շինարարական արձանագրությունը, որ փորագրված է Կախքի (Կախեթի) թագավորության վաղեմի մայրաքաղաք Գրեմիի երկհարկանի և հինգ խորան պարունակող հայոց մայր եկեղեցու արևմտյան մուտքի գլխին, որ դեռևս XIX դարու վերջերին լուսանկարել էր հայտնի հնագետ-լուսանկարիչ Դ. Երմակովը: Արձանագրությունը վերաբերում է մոտավորապես 1593–1599 թ.թ.[10] (2):

Մյուս «տրիլինգվա»-ն ռուսերեն, հայերեն և վրացերեն է, որ փորագրված է 1882 թ. հոկտեմբերի 7-ին Թբիլիսիում վախճանված և Վանքի մայր եկեղեցու մեջ հյուսիսային պատին կից թաղված՝ երևանցի Սահակ Մելիք-Աղամալյանի դուստր և վրաց Հերակլ II արքայի որդի Աղեքսանդրի այրի Մարիամի մարմարե գերեզմանաքարի վրա, որ այժմ պահվում է Վրաստանի պետ. թանգարանում: Հայերեն-վրացերեն, resp. վրացերեն-հայերեն «բիլինգվա»-ներից մեր կողմից հաշվառման են ենթարկված հետևյալները. Գարեսջայի այսպես կոչված «Բազմալերանց» (մրավալմթա) անապատների 1467 թ. և ավելի ուշ ժամանակի հիշատակարանները[11], ինչպես և Թբիլիսիի, Մեսխեթի, Ղարաբուլախ-Ջուրտակետի (ներքին Ծալկայի) և այլ տեղերի հայոց եկեղեցիների շինարարական արձանագրությունները:

Ի դեպ՝ հիշենք, որ այս հուշարձանների շարքը պետք է դասել և Դավիթ Էնագեթցի Ղորղանյանի (հետագայում Դավիթ հակաթոռ կաթողիկոսի) մոր՝ Աննայի տապանագիրը, որը գտնվում է Հոփ-

[10] ***Ա. Շանիձե*** և ***Վ. Փութուրիձե,*** Գրեմիի եռլեզվյան արձանագրությունը (վրացերեն), “Известия Института языка, история мат. культкры имени Н. Я. Марра”, V–VI, Тб., 1940, стр. 1-11.

[11] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Գարեսջայի բազմալերանց հայկական էպիգրաֆիկան և պոլիգլոտիկ արձանագրությունը՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն (վրացերեն), “Известия Института имени Марра”, т. V–VI, էջ 153-175:

սիմեի վանքի գերեզմանատանը և որը մենք հրատարակեցինք[12] Սայաթ-Նովայի պրոբլեմի կապակցությամբ:

* * *

Խոսելով բազմալեզվյան արձանագրությունների շուրջը, մենք կամա-ակամա պիտի վերհիշենք վրացական և հայկական մատենագրության վկայությունները այսպես կոչված պոլիգլոտիզմի մասին:

Այսպես, օրինակ, XI դ. վրաց պատմիչ Լեոնտիոս Ռուխեցին (Լեոնտի Մրովելին) նշում է, որ խազարաց արշավանքների ժամանակաշրջանում «Քարթլիում խոսում էին վեց լեզվով՝ հայերեն (սոմխուրի), վրացերեն (քարթուլի), խազարերեն, ասորերեն, եբրայերեն և հունարեն (բերձնուլի)», քանի որ «այսպիսի լեզուներ կային, որ գիտեին վրաց բոլոր թագավորները, արք և կանայք»[13]:

Նույնը արտահայտված է վրաց տարեգրության XII դարու հայերեն թարգմանության մեջ, թեև մի փոքր աղավաղված ձևով. «Եւ յայնմ ժամանակի խօսէին ի Վիրս վեց լեզու՝ հայերեն և խազրի, ասորի և եբրայեցի, յոյն և որ ի խառնից նոցա հաւաքեցաւ վրացին»[14]:

Իսկ Ստեփանոս Օրբելյանը, խոսելով Բուրթել Օրբելյանի եղբայր Սմբատի մասին, նշում է. «...Սմբատ, որ էր հանճարով մեծ, խորհրդով՝ ուժեղ, խելօք՝ աննման, հնարիւք՝ բազմագէտ, բանիւ՝ առատ և քաղցր, լեզուաց հմուտ և ճարտար, ի դատարանի դիւանին անպարտելի, զի խօսէր լեզուս հինգ՝ հայ և վրացի, ուղուր և փարսի և զմուղալն իսկ»[15]:

Այս վկայությունները, թվում է, բավականին բնորոշում են այն սոցիալական բազան, որի կապակցությամբ հասկանալի է դառնում պոլիգլոտիզմի առկայությունը Վրաստանի արձանագրություններում:

Մյուս կողմից՝ մի՞թե նույն պոլիգլոտիզմի արտահայտիչները չէին ուշ միջնադարի մեր անվանի բանաստեղծներն ու աշուղները, որոնք երկու-երեք-չորս լեզվով էին ստեղծագործում, նույնիսկ

[12] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Սայաթ-Նովա (վրացերեն), 1930, էջ 74-75:

[13] Քարթլիս-ցխովրեբա, Աննա թագուհու գրչագիրը (վրացերեն), Թբ., 1942, էջ 11: ***Լ. Մելիքսեթ-Բեկ,*** Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, I, Երևան, 1934, էջ 150:

[14] Համառօտ պատմութիւն վրաց, Վենետիկ, 1884, էջ 18:

[15] Պատմութիւն Տանն Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 405:

խառն ոտնավորներ-երգեր հորինում մի շարք լեզուներով. XVI դարում Գրիգորիս Աղթամարցին հայերեն, թուրքերեն և պարսկերեն, XVIII դարում Սայաթ-Նովան՝ հայերեն, վրացերեն, թաթարերեն և պարսկերեն. XVIII–XIX դ.դ. Շամչի-Մելքոն՝ հայերեն և վրացերեն. ապա Դուրգար-օղլին՝ հայերեն, վրացերեն և թաթարերեն, Շավլանը՝ վրացերեն, հայերեն, թաթարերեն, վերջապես XIX դարու առաջին կեսին Միսկին-Բուրջին՝ հայերեն, վրացերեն, թաթարերեն, պարսկերեն և ռուսերեն, հետևապես, հինգ լեզվով, և այլն:

Մեզ վիճակվեց հայտնագործել պոլիգլոտիկ արձանագրության մի հազվագյուտ օրինակ, *թերևս համաշխարհային մասշտաբով* առաջինը, *հետևապես դեռևս* միակը, *քառալեզվյան արձանագրության կամ «տետրալինգվա»-ի, որը* մի *տեղում* միևնույն *ժամանակին և* միևնույն *անձին է պատկանում կամ վերաբերում և* միևնույն *բովանդակությամբ, այն է՝ վրացերեն, հայերեն, պարսկերեն և ույղուրերեն:*

Արձանագրությունը հայտաբերեցինք դեռևս 1921 թ. աշնանը (հոկտեմբերին) և ապա հետազոտեցինք, միաժամանակ լուսանկարելով, 1929 թ. աշնանը (նույնպես հոկտեմբերին), Ղարայազ կայարանից 30 կիլոմետր դեպի հյուսիս-արևելք և պատմական «Տվարածատափ»-ին (Տավարարածատափ) կից գտնվող այսպես կոչված Գարեսջայի (ըստ Ստ. Օրբելյանի՝ Գարշտեուց[16]) բազմալերանց (վրացերեն՝ Գարեսջիս մրավալմթա) այրիվանքերից կամ վիմափոր անապատներից մեկի պատի վրա:

Արձանագրությունը, որ հիշատակարանի (memorium-ի) բնույթ է կրում, գրված է սեղանատուն ներկայացնող ընդարձակ քարանձավի պատի սպիտակ սվաղի վրա, դեղին ներկով, որ գունաթափ է եղել: Սկսվում է այն թեք՝ վրացերեն և հայերեն (յուրաքանչյուրը 6 տող), ապա հետզհետե ուղիղ դիրք է ընդունում՝ պարսկերենը, մասամբ և ույղուրերենը ամբողջապես (յուրաքանչյուրը 5 տող), այնպես որ Արձանագրության վերջին տողերը միանգամայն հորիզոնական ուղղություն են ստանում:

Տետրալինգվա-ն հիշատակում է ոմն Ասլանի (վրացերենում՝ Արասլանի, պարսկերենում՝ Արսալան, ույղուրերենում՝ Արսլան) որդի Սարգսին (վրացերենում՝ Սարգիսի, ույղուրերենում՝ Սարքիս) ու նրա կնոջը և որդուն՝ Ամիր-Սայիդին, որոնք միասին ուխտ են եկել Ս. Դավթի (Գարեսջեցու) գերեզմանին իրենց «մեղաց փրկութեան» և «վասն ննջեցելոց» աղոթելու համար:

[16] **Նույն** տեղում, 355:

Ուխտագնացությունը տեղի է ունեցել ըստ վրացականի՝ «քորոնիկոնին մ, *այսինքն՝ 40+1312=1352 թ. և ըստ հայկականի՝ «ի թվ* պա», *այսինքն 801+551=1352 թ. և ըստ պարսկականի (հիջրիի)՝* "sana salaasa o qamsina va sab'a mja", *այսինքն 753 (×0.97+621,54)–1352 թ. ույղուրերենը վերջում թերի է:*

Ահա և այդ արձանագրությունները[17], որոնցից վրացերենը և պարսկերենը մենք բերում ենք հայերեն տրանսլիտերացիայով, իսկ ույղուրերենը պրոֆ. Ս. Մալովի *ընթերցմամբ լատիներենով և նույնի ռուսերեն թարգմանությամբ:*

1. Վրացերենը.

1. «·Ք. մե, միծափ մցիրէ, սարգիս ձե արասլանիսա,
2. ամովէդիթ ծմինդա|դավիթիսա սափլավսա, մէ դա չէմման
3. մեուղլէման դա չէմման չվիլման|ամիր սաիդ, լոցվად չվէն-
4. դա դա չվէնթա գարդասուլթա դա ցոդվաթա չէն|դոբիսա-
թվիս. դա վինցա ծաիկիթխոս էս դա չէնդոբա թքվաս, մաս
5. դա միսթա գարդ|ասուլթա չէունդվէս ղմէրթման դա ծմին-
6. դա դավիթ. դաիծէրա թվէս մախսս քորոնիկոնսա մ»:

2. Հայերենը

1. 2. «† ծառէս և անարժանս Սարգիս Ասլանի որդի եկաք | ի
սուրբ Դավթի գէրէզմանն ի աղաւթս (sic), *վասն զտուն* (sic)
3. իմ և |զավակ իմ Ամիր Սայիդ, վասն ցմեղաց (sic) *փրկու-*
4. թեան մեզ և ննջեց|էլոց մերոց. ով որ կարդէս (sic), *մեղաց*
5. թողութիւն հարամայէք, |որ աստված թողութիւն արժանի
6. հրամայէ ըղձէր մէղքն. գրէցավ |գիրս ի մայիս ամիսն ի թվին
պա»

3. Պարսկերենը.

1. «Բանդա ի քաթիր սարքիս բնի արսալան մա
2. սիհի [/////] բենիյաթ ըխլաս |վա զիյարաթ դա-
ւուդ փաք, բանդա վա հալալ բանդա վա [///]
3. բանդա|ամիր սաիդ ւե բե նամազ ւա տաաթ
4. ազ բարայ մա ւա գոզաշտագան [///] |ւա աֆա
բաղի ւա գոնահան նաֆարմանի գերդոֆտան.
5. հաք թաալա ւա դաւուդ փաք գոնահան |ւա

[17] Հրատարակված է 11-րդ ծանոթության մեջ հիշված մեր աշխատության մեջ, էջ 161-163, որին կցված է և լուսանկարը (էջ 175):

բաղիրա աֆու գարդա բադ ֆի շահրի բաբի ուլ
ա խար սանա սալասաա օ խամսինա ւա սաբ՚ա մյա:

4. Ույղուրերենը.

1,2 Män jaman qul Särgis Arslan oγly… lary
3. Daudnum… ynda män *(?)* umunum alallum lumnum (?)
4. oγlum Amir Said…üčünl … tänri (?)… qylsun
5. ärkim oqysum... tun l ...tun qylsun...

(*ռուսերեն թարգմանությամբ.* “я, грешный раб Саргис, сын Араслана,…в …святого Давида, за сына моего Амир Саида …, бог… да… сделает, каждый пусть читает… пусть сделает”).

Ասլանի որդի Սարգիսը և նրա զավակ Ամիր-Սայիդը, հավանորոն, այն մեծատուն հայերից էին, որոնք XIII–XIV դ.դ., պատմական իրադարձությունների կապակցությամբ, ստիպված եղան Հայաստանից գաղթել Վրաստան, այնտեղ բնակություն հաստատել և որոշ դեր խաղալ Վրաստանի տնտեսական կյանքում, նույնիսկ վրաց արքունիքում, իբրև առևտրական կապիտալի *աշխուժացնողներ, ինչպես վկայում են մոնղոլական շրջանի հայ պատմիչները:*

Այսպես, օրինակ, Կիրակոս Գանձակեցին խոսելով Ումեկ Ասիլ կոչված խոշոր առևտրականի մասին (XIII դ.), գրում է. «Բայց մեծարեցաւ ի նոցանէ (ի թաթարաց–Լ. Մ. -Բ.) այր մի մեծատուն վաճառական, Ումեկ անուն, զոր ինքեանք [Թաթարք–Լ. Մ. -Բ.] Ասիլ կոչէին, այր բարեգործ… որ ապրեցաւ յաւերիլն Կարնոյ քաղաքի ի Թաթարոյն, հանդերձ որդւովքն՝ Յովհաննու և Ստեփաննոսիւ, և եղբարբք իւրովք. և էր յայնժամ ի Տփխիս քաղաքի բնակութիւն կալեալ, և հայր անուանեալ թագաւորին Վրաց Դաւթի, *և մեծարեալ ի Ղանէն գրով և յամենայն աւագանւոյն»*[18]*:*

Ըստ Վարդանի՝ «ի վեցհարիւր իննսուն և մի թուին Հայոց (=1242): Բաչունուինն փոխեաց գիշխանութիւն Չարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք, հանեալ անտի զայրն երևելի մեծատուն և երկիւղած ի Տեառնէ զՈւմեկն և զազգականս նորա՝ զորդիսն Յոհաննու Ստեփաննոս և զեղբայրսն իւր հինգ»[19]*:*

Յովհաննես Երզնկացուն, Պլուզ մականվանյալին, ինչպես ինքը

[18] Պատմութիւն արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1910, էջ 349-350 (վկայության մեջ ընդգծումը մերն է, ***Լ. Մ. -Բ.***):

[19] Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ, Ն. Նախիջևան, 1782, էջ Թ–Ժ:

խոստովանում էր իր «Վիպասանութիւն զերկնային մարմնոց շարժմանէ» երկի առաջաբանում, «հանդիպեցաւ խօսել… բանս քարոզութեան ի դուռն եկեղեցւոյն մեծապատիւ և խոհեմամիտ և մեծ իշխան Հայոց՝ պարոն Քարիմատինին, զոր չինեալ էր աստուածասէր և բարեհոգի հայր նորա պարոն Ումեկն», «Վասն որոյ ախորժելի եղև զուարթամիտ պատանւոյն Վաղթանկայ, որ էր որդի կրտսեր հռչակաւոր անուան պարոն Ումեկայ և մայրենի ազգաւ թոռն մեծի իշխանին Ջալալայ՝ տեառն Խաչենոյ, որդի մոր բարեպաշտի» և այլն[20]*:*

Հիշյալ Ումեկը ամենաաչքի ընկնող ներկայացուցիչն էր հայազգի առևտրական բուրժուազիայի, որ XIII դարում անուն էր հանել իր ձեռնարկություններով և, ի միջի այլոց, Թբիլիսիում 1251 թ. կաթողիկե եկեղեցու (այժմ Մեյդանի Սուրբ Գևորգի) կառուցումով, իսկ նրա երեք *թոռները, Սուջահաթ, Առյուծ և Ջալալը՝ վանքի* եռասեղան և եռագմբեթ *տաճարի շինությամբ*[21] *(3):*

Առևտրական խավերի շարքին էր, ըստ երևույթին, պատկանում և Գարեսջայի «բազմալերանց» 1352 թ. քառալեզու արձանագրության մեջ հիշված Ասլանի որդի Սարգիսը, մեկն այն բազմաթիվ հայ ուխտավորներից (սրանց թվում հիշվում է և Սուջահաթը), որոնք երկար ու ձիգ դարերի ընթացքում, յուրաքանչյուրն իր կյանքում գոնե մեկ անգամ, ուխտ են եկել Գարեսջայի վիմափոր անապատները Ս. Դավթի գերեզմանին երկրպագելու նպատակով, որ և անմարը Ս. Դավթի գերեզմանին երկրպագելու նպատակով, որ և անմահացրել են այրիվանքերի պատերի սվաղի վրա մեծ քանակությամբ թողած արձանագրություններով[22]*, որոնց մեծ մասը 1352 թվին է ընկնում:*

1274 թ. –«աստուածայպսակ սուրբ քահանայք Գարեջայ»:
1302 թ. –«Սարգիս իրիցոյ որդի Ալփոյ Ալփոյի»:
1332 թ. –«Նունի Եվանեսի որդին»:
1351 թ. –«Տէրտէրավաք էրէց և Յակոբ, Մրվան՝ աւագէրէց Անեցի և Համազասպ երէց»:
1351 թ. –«Սուջահթ»:
1352 թ. –«Սարգիս՝ Ասլանի որդի… և զավակն ամիր Սայիդ»:

[20] ***И. Орбели,*** Фрагмент крестного камня с арабской надписью в Тифлисе, “Христ. Восток”, т. VI, стр. 198.

[21] ***Լ. Մելիքսեթ-Բեկ,***«Թբ. պետ. համալսարանի Տեղեկագիր», IV, Թբ., 1924, էջ 85 (վրացերեն):

[22] ***Լ. Մելիքսեթ-Բեկ***, Գարեսջայի բազմալերանց հայկական էպիգրաֆիկան և այլն, էջ 173:

1352 թ. —«Սարգիս աբեղէն և ... Թումման պէկն»:
1352 թ. —«Յոհան, Գէդէոն, Սարգիս տէր...»
1352 թ. —«Նաթել»:
1352 թ. —«Սարգիս... Շալուայ, ծառայ Աստուծոյ, և Յովանէսն»:
1352 թ. —«Խէրէդին»:
1467 թ. —«Յովանէս էրէց...Տփխեցի»:
1682 թ. —«Տէր Բարսեղ...բազում ուխտաւորօք»:
1746 թ. —«Ինայ»:
Եւլն:

Այլ խնդիր է՝ ինչո՞վ բացատրել Ս. Դավթի այսպիսի մեծ և բացառիկ *ժողովրդականությունը (գուցե և հեղինակությունը) հայերի աչքում, որ մենք մանրամասն քննել ենք մեր «Դավիթ Անհաղթի Վրաստանում լինելու հարցի շուրջը» ձեռագիր աշխատության մեջ*[23]*: Անցողակի միայն կհիշենք, որ այդ աշխատության մեջ մենք արծարծել ենք այն միտքը, որ Դավիթ Գարեսջեցին (Գարեջելին) VI դարու առաջին կեսին Հայաստանում անուն հանած Դավիթ իմաստասերներից մեկը պիտի լինի, որ հետագայում, ըստ Առաքել Սյունեցու վկայության, վիրավորանքի ենթարկվելով ու անարգվելով հայերի կողմից, անցել է Վրաստան, ուր և ապաստան է գտել ու մնացել ցմահ. և այս բոլորի կապակցությամբ որոշ իմաստ է ստանում քառալեզվյան հիշատակարանին կից գտնվող հայերեն արձանագրությունը, ուր «անյաղտ փիլիսոփայի գերեզման»-ն է հիշված:*

Սակայն այն հանգամանքը, որ Ասլանի որդի Սարգիսը Ս. Դավթի գերեզմանին իր ուխտ գալու փաստն արձանագրել է չորս լեզվով, ապացուցում է երկուսից մեկը. կամ այն, որ այդ Սարգիսը հենց ինքն է եղել պոլիգլոտ, այսինքն շատ լեզուներ գիտցող, կամ այն, որ նրան ուղեկցել են այլ և այլ լեզուներ իմացող անձինք, որոնք և արձանագրել են 1352 թ. մայիս ամսին տեղի ունեցած ուխտագնացության փաստը քառալեզվյան հիշատակարանով:

Ընդ սմին կարևոր է նշել և այն, որ արձանագրությունների դասավորումը որոշ հաջորդականությամբ այսպես կարդալով՝ վրացերեն-հայերեն-պարսկերեն-ույղուրերեն, բխում է ժամանակի ոգու պահանջներից, ըստ որում վրացերենն առաջին տեղն է գործածված իբրև պետական *լեզու այն երկրի, ուր Ասլանի որդի Սարգսին ընտանիքով վիճակվել է ոտք դնել (անկախ նրանից՝ եկվո՞ր է նա, թե՞ Վրաստանում բնակություն հաստատած անձն), այն էլ* վրացական *սուրբ ճանաչված Ս. Դավթի գերեզմանի վայրը. հայերենը երկրորդ տեղումն է գործածված իբրև Սարգսի* մայրենի *լեզու. ապա պարսկերենը՝ իբրև ժամանակի հայ և վրաց բարձր խավերի* գրոց *լեզու. և, վերջապես, ույղուրերենը՝ իբրև ժամանակի աշխարհակալ* տիրակալների *(մոնղոլների) գրական լեզու:*

Ինչ վերաբերում է քառալեզվյան արձանագրության հայերեն տեքստին, որ Թբիլիսիի և Ագուլիսի բարբառների գրաբարախառն արտահայտիչն է, այն մեծ նշանակություն ունի առանձնապես հարյոց լեզվի պատմության համար, քանի որ այսպես կոչված «Նախյոց լեզվի պատմության համար, քանի որ այսպես կոչված «նախնի ռամկորենի» սակավաթիվ պերճախոս վավերագրերից մեկն է. իհարկե, Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականի»-ի հայ մեկնիչների և միջնադարյան հայ բանաստեղծների ու աշուղների ստեղծագործության կողքին:

Թվում է, որ Գարեսջայի բազմալերանց անապատների քարանձավներից մեկում հայտաբերած «տետրալինգվա»-ն ո՛չ միայն առաջինն *է և դեռևս* միակը *իբրև քառալեզվյան արձանագրություն համաշխարհային մասշտաբով, այլև ույղուրական մասում նույնպես առաջինը և միակը Անդրկովկասում (4):*

Եվ հենց սրանումն է քառալեզվյան արձանագրության—«տետրալինգվա»-ի մեծ գիտական նշանակությունը:

[23] Զեկուցված ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական սեսիայում 1945 թ. հոկտեմբերի 31-ին:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ՉԱՓԱԾՈ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԸ

Հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության մեջ ԺԸ դարի երկրորդ կեսին և ԺԹ դարի սկզբներին որոշ դեր են խաղացել, ինչպես հայտնի է, այլևայլ պատմական դեմքեր թե՛ հայերից և թե՛ վրացիներից: Դրանցից ոմանց գործունեությունը, չհաշված Սայաթ-Նովային և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին, անմիջապես ընթացել է Հայաստանում՝ պարսից տիրապետության օրոք: Մենք ի նկատի ունենք, մի կողմից՝ Դավիթ վարդապետ Ղորղանյան-Էնագեթցուն (հետագայում Դավիթ հակաթոռ կաթողիկոսը, 1801–1804 թ.թ.) և մյուս կողմից՝ Ալեքսանդր Հերակլի (Էրեկլեի) որդի, վրաց արքայազնին (1):

* * *

Դավիթ վարդապետ Էնագեթցու Էջմիածնում գործելու ժամանակաշրջանին է համընկնում 1784 թվականի սեպտեմբերի 22-ին վախճանված նրա մոր՝ Աննայի տապանագիրը Ս. Հռիփսիմեի վանքի արևելյան պարսպից դուրս գտնվող գերեզմանատանը, երկու լեզվով, մեկն ընդարձակ և չափածո՝ հայերեն, և մյուսն համառոտ և արձակ՝ վրացերեն:

Տապանաքարը, որի արձանագրությունը մենք ընդօրինակել էինք դեռևս 1924 թվականին և հրատարակել 1930 թվականին[1], *ինչպես նորերս ստուգեցինք,* իր տեղում այլևս չի գտնվում[2]:

Ըստ մեր ընդօրինակման այն կարդացվում էր այսպես.

«Այս է տապան դամբարանի Աննա անուն կնոջ բարի,
Կողակցի Դաւթեան Բէրոյի և մայր երկուց հարազատի,
Նախկնոյն՝ Դաւիթ վարդապետի, նաև կրտսերագոյն՝ Բարսեղի:
Էր սա երկրաւ վրաստանցի, բնիկ տեղեաւ Էնագեթցի,
Խնդրէ ի ձէնջ, եղբայրք բարի, որք հանդիպիք, տալ ողորմի.

[1] **Լ. Մելիքսեթ-Բեկ,** «Սայաթ-Նովա», Թբիլիսի, 1930. էջ 14-15 (վրացերեն):

[2] Ինչպես այս փաստի ստուգման, նույնպես և Ս.Գայանեի վանքում մեր կատարած աշխատանքներին մասնակցեցին պատմական գիտությունների թեկնածուներ Ս.Բարխուդարյանն ու Վ. Գրիգորյանը:

Որ վախճանի ի ՌՄԼԳ թուոջ ի սեպ[տեմբերի] ԻԲ»:

Վրացերեն արձանագրությունը կարդացվում էր այսպես.

«+Էս սափլավի Էնագէլի Բէրոսս մէուղլէ Անասիա. շէնդոբա բძანէთ»:

Նույնը մեր հայերեն թարգմանությամբ.

«Այս դամբարանը Էնագեթցի Բերոյի ամուսին Աննայինն է, ողորմի հրամայե՛ք»:

* * *

Վրաց արքայազն Հերակլի (Էրեկլեի) որդու գործունեության հետ, որի մասին հայ ընթերցողը որոշ գաղափար ունի Խ. Աբովյանի[3], *Րաֆֆու*[4] *և Աղ. Երիցյանի*[5] *գործերից, կարծես թե առնչվում է Ս. Գայանեի վանքի բակում, տաճարի հարավ-արևելյան անկյունում, գտնվող 1822 թ. երկլեզվյան չափածո տապանագիրը, որը միաժամանակ բավականին հետաքրքիր նմուշ է հայ-վրացական ֆոլկլորային ստեղծագործության :*

Տապանաքարը ներկայացնում է իրենից սովորական մեծության դեղնագույն եղնջաքար (օնիկս), որը ԺԸ դարի վերջերին և ԺԹ դարի սկզբներին օգտագործվում էր թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում, մասնավորապես Էջմիածնի և Թբլիսիի գերեզմանատներում[6]:

Հայերեն արձանագրությունը, որը գլխատառով է փորագրված, գրված ունի 10 տող երկյուն դասավորությամբ.

1. Ի ՍՄԻՆՆ ՏԱՊԱՆԻ	*ՀԱՆԳՈՒՑԵԱԼ*
2. ԴՆԻ ՄԱՐՄԻՆ ՄԱ	*ՀՏԵՍԻ ԱՅՆ*
3. ԹԻՆԱԹԻՆԻ Ո Ր	*ԷՐ ԿՈՂԱԿԻՑ*
4. ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐԻ	*Ի ՅԱԼԹԻԲԷՇ*

[3] **Խ. Աբովյան,** «Երկերի ժողովածու», ութ հատորով, հատ.Գ, Երևան, 1948, էջ 121: Չմմտ. մեր հոդվածը՝ «Գրական հանդես», Թբիլիսի, 1943, № 1, էջ 34-35:

[4] «Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում», «Մշակ», 1872, № 25: **Րաֆֆի,** «Երկերի ժողովածու», հատ. Թ, Երևան, 1958, էջ 32-34: **Նույնը** վրացերեն՝ «Դրոէբա», 1872, 21. № 28:

[5] «Վրաց թագավորական տան վերջին շառավիղը», «Արձագանք», 1882, № 12, էջ 177-180:

[6] М. С. Бетанов, “О Кавказском мраморном ониксе”,Тифлис, 1901, стр.16-17.

5. ԵԱՆ ԱԶԳԷ ԱՆՈՒ	ԱՆԻ ՆԱԵՒ ԷՐ ԶՈ
6. ՔԱՆՉ ԱՂԱԼՕ	ԲԷԿԻ ԵՒ ՄԱՅՐ
7. ՍՐԲԱՍԷՐ ԳԵ Օ Զ	ԱԼ ԽԱՆՈՒՄԻ Ը
8. ՆԹԵՐՑՕՂ Յ	ԻՇՄԱՆ ԱՐԱ
9. ԱՐԺԱՆԻ ԶԻ ԼԻ	ՑԻ ԲՆԱԿՕՂ ՅԵ
10. ՐԿՆԻՑ ԿԱՅԱՆԻ	Ի 1822 ՕԳՈՍՏՈ ՍԻ

Սույն արձանագրությունը չափածոյի վերածված ընթերցանությամբ տալիս է 9 տող (յուրաքանչյուրը 5+5 վանկ)՝ ի հանգով.

ա. Ի սմին տապանի հանգուցեալ դ<ը>նի
Մարմին մա հտեսի այն Թինաթինի[7],
Որ էր կողակից պարոն Գրիգորի
Ի Յալթիբէշեան ազգէ անուանի.

բ. Նաեւ էր զոքանչ Աղալօ բէկի
Եւ մայր ս<ը>րբասէր Գեօզալ խանումի
Ընթերցօղ յիշման արա՛ արժանի,
Զի լիցի բնակօղ յերկնից կայանի
Ի 1822 օգոստոսի 6:

Վրացերեն արձանագրությունը «մխեդրուլի» (փոքրատառ բոլորագիր) միայուն 5 տողանի է և կարդացվում է այսպես.

1. + աղվէսրուլէ ղ՝վավիլ մոսուլի խորցի մկուդրիսա արա թու սուլի ար մղ՝վանդա ձմանի խոլո ասուլի:

2. մէ վիղ՝ավ էգրէթ նաթէլ նախուլի սախէլ մէծոդա միղդիս Թինաթին սոփլադ վիցոցխլէ սամոցի ծլամդին:

3. միգլովէթ էրնո դա ուցխո թէմնո ագրէթվէ տոմնո դա նաթէսավնո մքոնդա պատիվի կէթիլվնոբանի:

4. թքվէնց չէքխուդէբիս դրո էսրէթ ժամնի էրից գիխսնիս թքվէն դա էրթձմանի ած դավիքէց միծադ միծանի:

5. հո աղվէսրուլէ ագվիստոս վ՛սա ծէլսա քրիստէսիթ հղ՝կբ.

Արձանագրությունը չափածոյի վերածված ընթերցանությամբ տալիս է 14 տող (յուրաքանչյուրը 5+5 վանկ), այսպիսի հանգավո-

[7] Այս երկտողը մի տեսակ տրաֆարետ է, որի նմանը կարդացվում է շատ տեղերում, օրինակ, Թբիլիսիի Վանքի մայր եկեղեցու բակի 1812 թվականի հոկտեմբերի 22-ի երկլեզվյան տապանագրում. «Ի սմին տապանի ամփոփեալ դնի մարմին Աւետիսի Քեթխուդեանց տոհմի» և այլն:

րումով. 1–4 տողերը՝ ուլի, 5–6 տողերը՝ ին, 7–8 տողերը՝ նո, 9–12 տողերը՝ նի, 13–14 տողերը՝ սա:

ա. ք<ան> աղ[վ]էսրուլէ ղ՝վավիլ մոսուլի,
խորցի մկուդրիսա, արա թու սուլի.
ար մղ՝վանդա ձմանի, [մ]խոլոդ ասուլի,
մէ վիղ՝ավ էգրէթ նաթէլնախուլի:

բ. սախէլ մէծոդա միղդիս Թինաթին,
սոփլադ վիցոցխլէ սամոցի ծլամդին.
միգլովէթ, էրնո դա ուցխոռթէմնո,
ագրէթվէ տոմնո դա նաթէսավնո:

գ. մքոնդա պատիվի կէթիլվնոբանի,
թվքէնց չէքխուդէբիս դրո էսրէթ, ժամնի,
էրից գիխսնիս թքվէն դա էրթձմանի,
ած դավիքէց միծադ միծանի:

դ. հո, աղվէսրուլէ ագվիստոս վ<ին>սա
ծէլսա քրիստէսիթ չ<ին>ղ՝<ար> կ<ան> բ<ան>սա:

Նույնը մեր հայերեն թարգմանությամբ.

ա. Վախճանվեցի ծաղկազարդված՝
Մարմին մեռյալի և ոչ թե ոգի,
Չունեի եղբայրներ, ունեի միայն մի դուստր,
Այսպես էի լուսատեսս:

բ. Անունս էր միղդիս Թինաթին,
Աշխարհումս կացի մինչ վաթսուն տարի.
Ողբացե՛ք, ազինք ր այլազգիք,
Նույնպես և ցեղք ու ազգակիցք:

գ. Ունեի պատիվ պարկեշտի,
Դուք էլ կհանդիպեք այսպիսի պահին,
Ձեզ կփրկեն ազգն ու հարազատները,
Ահա վայր ընկա գետնին հողածինս:

դ. Վախճանվեցի օգոստոսի 6-ին,
Քրիստոնեական թվականի 1822-ին:

Տապանագրի ինչպես հայկական, նույնպես և վրացական մասում հիշված ննջեցյալը մահտեսի (միղդիս) Թինաթինն է, որը 1822 թվականի օգոստոսի 6-ին վախճանվել է 60 տարեկան հասակում. հետևապես ծնված պիտի լինի 1762 թվականին:

Բացի դրանից, հայերեն արձանագրությունը, որը լիովին վրացերենին չի համընկնում (և ոչ էլ վրացերենը հայերենին), ի վիճակի է հաղորդել նաև տվյալներ հիշյալ Թինաթինի ազգականների՝ հարազատների մասին, որոնցից ոմանք պատմական դեմքեր են՝ կապված իրենց գործունեության այլևայլ թելերով Ալեքսանդր վրաց արքայազնի և Ա. Ս. Գրիբոեդովի հետ:

Այսպես, օրինակ, պարզվում է, որ մահտեսի կամ միղդիս Թինաթինը եղել է ամուսին «պարոն Գրիգորի»՝ Յալթիբեչյան «անվանի ազգից» և զոքանչ Աղալո բեկի:

Յալթիբեչյանը, հավանական է, նույն Ալթի-բեչյանը լինի, որ հիշված է ԺԹ դարի 20-ական թվականների մի վրացերեն վավերագրում իբրև Թբիլիսիի առևտրական, որը խանութ (դուքան) է ունեցել[8]:

Թինաթինը ունեցել է մի զավակ, այն է դուստր՝ Գյոզալ-խանում կամ Գյոզալ-խաթուն անունով, որն ամուսնացած է եղել Աղալո բեկի հետ:

Աղալո բեկ անունով հայտնի 2 անձնավորություն ԺԸ դարի վերջերին և ԺԹ դարի սկզբներին: Դրանցից մեկը Ղորղանյան-Ենագեթցին է, որը միջնորդի դեր է խաղում վրաց արքունիքի և ռուս գեներալների, ինչպես նաև նույն արքունիքի և Էջմիածնի, ասել է ամենայն հայոց կաթողիկոսների հարաբերությունների մեջ, հաճախ իբրև լոկ նամակատար, երբեմն էլ իբրև վրաց արքունի գույքի ցուցակագրող[9]: Իսկ մյուս Աղալո բեկը, հավանական է, նույն Աղալար-խանը լինի՝ Ենիկոլոփյան ազգատոհմից, որը կապված

[8] ***Ն. Բերձենիշվիլի,*** «Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար», III, Թբիլիսի, 1955, էջ 510-511 (վրացերեն): ***Մամիսա Բերձենիշվիլի,*** «Նյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար», հավելված I, II, III գրքերի բառարան և ցանկերը, Թբիլիսի, 1958 (վրացերեն)

[9] ***Ն. Բերձենիշվիլի,*** հիշված աշխատությունը, 1, Թբիլիսի, 1938, էջ 160, 289-290 (վրացերեն), նույնը, III, 1955, էջ 102, 275-281, 435-443, 458-463, 510-511, 539-552: ***Գյուտ ավագ քահանա Աղանյան,*** «Դիվան հայոց պատմության» Գ, 139, 191, 545, Դ, 748-750, Զ, 486-487, Ը, 34, 97, Թ, 387, ԺԱ, 377:

էր, մի կողմից, Ալեքսանդր արքայազնի հետ (որն ամուսնացած էր երևանցի Մելիք-Աղամալյան Սահակի դստեր՝ Մարիամի հետ) և մյուս կողմից՝ Ա. Ս. Գրիբոեդովի հետ[10] (որն ամուսնացած էր «Հայկական մարզի» առաջին պետ՝ գեներալ Ալեքսանդր Ճավճավաձեի դստեր՝ Նինոյի հետ):

Ահա այս երկրորդ Աղալոն պիտի լինի, անկասկած, այն անձը, որին հասցեագրված են Ատրպատականի հայոց առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսի նամակները, որոնցից մեկում, 1829 թվականի մոտերքում գրվածում, նա հիշված է իբրև «գերապատիւ օրհնեալ Աղալոյ բէկ միրզայ Գուրգինեան Ենակօլոփով»[11]:

Նույն Բարսեղ արքեպիսկոպոսի այլ նամակներից պարզվում է նաև, որ «Մանուչար խանի և Աղալո բեկի մայրը» եղել է «Ոսկեայ մեծ խանումն», որ «առ Աստուած փոխեալ է ի Թեհրանն Պարսից», նմանապես և՝ որ «Աղալոյ բէկի քրոջ որդի միրզա Սօղոմոնն սպանեալ էին ընդ դեսպանին [Գրիբոեդով]» և «սոցա երկոցունց դիակացեալ մարմինսն հրամանաւ Մանուչար-խանին եկն ի Նախիջևան և աստէն մեծաւ յուղարկավորեալ հանդիսիւ ի ճանապարհս եդաք դէպ ի Սուրբ Էջմիածին, զի ընդ բարեպաշտեալ կտակի Ոսկեայ խանումին անդ ի Ս. Էջմիածին ի սիրտ երկրի թաղեսցի, ուր ուրեք հաւասարեալ ... [see below]

Ցարական կառավարության պաշտոնական վավերագրերում Աղալոն հիշվում է իբրև ազնվական (дворянин Агало Ениколопов), որին որը 1804 թվականին մտադիր է եղել փախչել Պարսկաստան[13], որին ընդդիմադրել է գեներալ Գուդովիչը, ապա նա հիշվում է իբրև 1806 թվականին[14]: Մի վավերագ-

[10] ***Վ. Պարսամյան,*** «Ա. Ս. Գրիբոեդովը և հայ-ռուս հարաբերությունները», Երևան, 1947, էջ 23 և այլն: Հմմտ. *И. К. Ениколопов*, “Грибоедов и Восток”, Ереван, 1954, стр. 179, прим. 2.

րակից Գալուստ Շերմազան-Վարդանյանն իր հանրածանոթ գրքի մեջ[16], «Աղալօ-աղայ, որ և Աղալար-խան էնիկօլօփեանց» ենթավերնագրի տակ:

Ըստ այս գլխի տեսության, Աղալոն մանկությունից սովորել և տիրապետել է հայերենին, վրացերենին, արաբերենին, պարսկերենին և թաթարերենին և «չափահաս լինելուց հետո նշանակւում է Գիորգի վրայ թագաժառանգի դռանը թարգման[17]». մի ժամանակ նա լինում է Ախալցխեի «փաշայի մոտ թարգման հայոց, վրաց և պարսից լեզուների»[18], ապա նաև ռուսերենի: Գեներալ Նեսվետաևի հանձնարարությամբ 1806 թվականին նա բանակցում է Ախալցխեի Սելիմ փաշայի հետ: 1808 թվականին նա փախչում է Էջմիածին և այնտեղից Թավրիզ, ուր ծառայում է պարսից թագաժառանգ Աբասմիրզայի մոտ, երբ և վերակոչվում է Աղալար-Խան[19]:

Գ. Շերմազան-Վարդանյանը վկայում է, որ «Աղալար-խանը վախճանվեցաւ 1846 թուականին յուլիսի 26-ին և թաղուեցաւ Թաւրիզի բերդի մէջ եղած Ս. Աստուածածին եկեղեցու գաւթի հին պարտեզի հիւսիսային կողմում, հին առաջնորդարանի առջև»[20]:

5. Հովհ. Սարկավագի երկը Լ. Մելիքսեթ-Բեկի սույն հրապարակումից հետո ունեցել է ևս մի քանի վերահրատարակություն, մասնավորապես՝ *Գարեգին Ա. Կաթողիկոս*, Յիշատակարանք ձեռագրաց, հատ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 343-348: Աշխատասիրողը բնագիրը քաղել է արդեն ծանոթ Երուսաղեմի N 1272 ձեռագրից և կատարել աղբյուրագիտական կարևոր մի դիտարկում. ըստ այդմ Հովհ. Սարկավագը «իր այս գործի մէջ կարևոր չափով օգտուել է Որոգինէսի «Ի Յոբ» գրութիւնից, որի հայերէն թարգմանութեան միակ օրինակը հասած է մեզ հետևեալ խորագրով. *«Խաւսք Որոգինի ի Յոբ»*: Ձեռագիրը Վարագից բերուել է Էջմիածին և այժմ կրում է 1470 թիւը (հին թիւ՝ 291)»: Ձեռագիրը նկարագրելիս Ն. Պողարեանը նկատել և սրբագրել է Գ. Հովսեփյանի հրատարակության մեջ եղած վրիպումները (էջ 454): «Վասն շարժման...» բնագիրը, Լ. Մելիքսեթ-Բեկի հրապարակումից քաղելով, ընդգրկված է Ա. Աբրահամյանի աշխատասիրած «Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը» գրքում (Երևան, 1956, էջ 302-305), կրկնելով նախորդի մոտ եղած վրիպումներն ու ձեռագրի համարի «ուղղումը»՝ 1212 (էջ 305): Այս երրորդ տպագրությունը նույնպես, ինչպես դիտել է Ա.Ց. Սրճունին, ունի «բազում սխալներ և թերություններ», ուստի անհրաժեշտ է նկատել նույն միակ գրչագրից քաղելով վերստին հրատարակել բնագիրը «Սիոն» 1972 թիւ 9-10, էջ 341-343: Մենք ըստ այս նոր հրատարակության սրբագրում ենք Լ. Մելիքսեթ-Բեկի տված ընդարձակ տարբերակը՝ տողատակ տալով նոր ընթերցման տարընթերցումները: Սակայն պիտի խոստովանել, որ այժմ ևս ոչ ստույգ ընթերցումները շատ են, և կարելի է պատկերացնել, թե այպիսիք ինչ եղելություն կպարզեն Ա. Աբրահամյանի վերահրատարակության մեջ:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻՑ
(«Էջմիածին», 1959, ԺԲ, էջ 41-45)

1. Հոդվածում Գրիգորը կոչված է *Սեբաստացի* (էջ 42), ինչը ակնհայտ գրչական աղավաղում է. խոսքը վերաբերելու էր *Աբասառողում*, որի բնութագրությանը «Վարդապետք Հայոց...» վրացերեն աշխատության մեջ հեղինակը առանձին գլուխ է նվիրել (էջ 197-208): Վերահրատարակության մեջ ուղղել ենք:
2. Մխ. Գոշի «Գծագրութիւն... յաղագս Վրաց» կամ «Թուղթ առ Վրացիսն» ջատագովության գիտական հրատարակություն կատարել է փողերիս հեղինակը, տես «Գանձասար», Զ., 1998, էջ 336-402:
3. Այս նույն ձեռագրից են քաղված Բարսեղ Կեսարացու՝ «Պահոց գրքի»՝ Կիմ Մուրադյանի հրապարակած 33 պատճառները (տե՛ս «Գանձասար», Ե., 1994, էջ 169-199): Գրչագիրը նկատի է առնված Կ. Մուրադյանի աշխատասիրությամբ հրատարակված Գ. Նյուսացու ճառերի պատճառների տեքստը կազմելիս («Շողակաթ», 1995, Ստանպոլ, էջ 137-155):
4. Փիլոնի ժառանգության հայերեն թարգմանության վերաբերյալ վերջերս ուշագրավ աշխատություն հրատարակեց դասական բանասիրության հմուտ Օ. Վարդազարյանը (*Вардазаря О.С.*, Филон Александрийский в восприятии армянского средневековья, Ереван, 2006): Աշխատությանը կցված է գրականության հարուստ ցանկ (էջ 155-170), իսկ երկու հավելվածներում՝ բնագրեր (էջ 177-210):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՆԱԿԱՆ ՏԱՎՈՒՇԵՑՈՒ ԱՆՏԻՊ ԵՐԿԵՐԻՑ՝ «ՊԱՏՃԱՌ-Ք ԱՌԱՋԱՒՈՐԱՑ ՊԱՀՈՑ»
(«Էջմիածին», 1959, Զ., էջ 35-44)

1. Վարքերի «Յայսմաւուրքային» տարբեակների համադիր խմբագրություններ այժմ կարելի է գտնել Եզնիկ արք. Պետրոսյանի ղեկավարությամբ և խմբագրությամբ հրատարակվող «Համաբարբառ Յայսմաւուրք», Դ., (նախաձեռնեցյան 6 խմբագրություններ), Ս. Էջմիածին, 2009:
2. «Մեկնութիւն Յոբայ» բնագիրը պահպանվել է մի քանի գրչագրերում՝ ընդարձակ և համառոտ խմբագրություններով: Տարիներ առաջ նրանց ուսումնասիրությամբ ու հրատարակության պատրաստմամբ էր զբաղվում Հ. Մեսրոպ արքեպ. Մութաֆյանը: Ցավոք, վերահաս հիվանդությունը կանխեց այդ անհրաժեշտ ձեռնարկումը:
3. Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութեան» Կ. Մելիք-Օհանջանյանի աշխատասիրությամբ լույս տեսած գիտական բնագրի կազմում փաստորեն գիտաքննական հրատարակություն է ստացել Վանականի գրչին պատկանող «Խրատ դաւանութեան Վանական վարդապետին» երկը (տե՛ս *Կիրակոս Գանձակեցի*, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 338-344):
4. «Բան հաւատալի» երկի Վանական վարդապետին պատկանել-չպատկանելու խնդիրը քննեց և բնագիրը ի նորո հրատարակեց Մեսրոպ Արք. Մութաֆյանը: Ձեռագրական նորահայտ նյութերը հնարավորություն տվին հեղինակին բացահայտել Վարդան Արևելցու մոտ եղած քաղումները Վանականի երկից, ուստի և հաստատելու Վանականի հեղինակությունը: Ի դեպ, «Բան հաւատալի ազգիս մերում» վերտառությունը երբեմն փոխարինվում է «Գովք Հայոց ազգի» խորագրով (տե՛ս «Շողակաթ», 1995, Ստանպոլ, էջ 156-164):
5. «Առաջաւորաց» պահքին վերաբերող աղբյուրների ու գրականության հմտալի քննություն պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը կատարել է դեռևս իր երիտասարդական տարիներին՝ «Христианский Восток»-ի 1916 թ. V հատորի 2-րդ պրակում հրատարակելով Грузинский извод сказания о посте "араджавор" ծավա-

լուն հոդվածը (էջ 73-111): Այն գիտական ուշագրավ խոսք էր և աշխուժորեն քննարկման առարկա դարձավ էջմիածնական հայագետների շրջանում: Այդ է վկայում «Արարատ» հանդեսում Մեսրոպ վրդ. Մաքսուդյանցի հրապարակած հանգամանալի արձագանքը («Արարատ», 1918, հունվար-մարտ, էջ 148-150):

ԳՐԻԳՈՐԻՍ ԱՂԹԱՄԱՐՑՈՒ «ՎԱՐՔ ՄԱՐԻՆՈՍԻ» ՊՈԵՄԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱՏԻՊԸ

(ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» 1945, N 1-2, էջ 77-89)

1. Քանի դեռ հայկական Հայսմավուրքները ըստ առկա խմբագրությունների համեմատված ու հրապարակված չէին՝ նրանց աղբյուրագիտական փոխառնչությունը անկարելի էր պազել, ուստի և գեղարվեստական գրականության հետ հայսմավուրքային դրվագների ուսումնասիրությունը հանգամանալի նախնական աշխատանք էր պահանջում: Անցյալ դարի 80-ական թվականներին Հայսմավուրքների կազմավորման պատմության և պատմագրական արժեքավորման փորձ կատարեց գրականագետ Մայիս Ավդալբեգյանը՝ գերազանցապես խմբագրությունների վերաբերյալ տեղեկություններ բովանդակող հիշատակարանների հիմամբ: Նրա ուսումնաիրման մեթոդը գրականագիտական է, իսկ բացահայտման միտումը՝ պատմագրական: Այս պարագայի կիրառումը հետազոտողին հեռու է պահել Հայսմավուրքում արձանագրված այս կամ այն դրվագի աղբյուրը պարզելու և պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի հարցադրումին պատասխանելու հնարավորությունից, ուստի օգտագործված գրականության ցակում սույն հրապարակումը հիշատակված իսկ չէ (տե՛ս *Մայիս Ավդալբեգյան*, «Յասմաւուրք» ժողովածուները, Երևան, 1982): Հիշեցնենք, որ Մ. Ավդալբեգյանը հատուկ մենագրություն է հրատարակել՝ «Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը» խորագրով (Երևան, 1971):

Արծարծվող խնդրի ուսումնասիրությունը հնարավոր կլինի կատարել ասպվածաբան Եզնիկ արքեպ. Պետրոսյանի խմբագրությամբ հրատարակվող Հայսմավուրքների «վեցիցյան» հատորների տպագրություն ավարտելուց հետո (լույս է տեսել 5 գիրք):

2. Որ Սուրբ Մարինոսին նվիրված Գրիգորիս Աղթամարցու պոեմը գրված է Հայսմավուրքում ավանդված վարքի չափածո մշակմամբ՝ Լ. Մելիքսեթ-Բեկը ապացուցում է արձակ փարբերակի զուգահեռ հրապարակմամբ: Աղթամարցու գրական ժառանգությունն ուսումնասիրած և գիտական բնագրեր կազմած դոկտ. Մայիս Ավդալբեգյանը ընդունում է Մելիքսեթ-Բեկի դրույթը և պոեմի բնագիրը կազմելիս օգտվում գիտնականի տարբերակային ընտրությունից (տես Գրիգորիս Աղթամարցի, XV դ., ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մայիս Ավդալբեգյանի, Երևան, 1963, էջ 48-51, բնագիրը՝ էջ 107-120):

ԹՈՒՄԱՆՅԱՆՆԵՐԻ ԾՆՆԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 1813 ԹՎԻ «ԿՈՆԴԱԿԸ»

(«Սովետական գրականություն», 1943, N 3, էջ 79-85)

1. Դսեղի Մամիկոնյանների պատմության առավել հանգամանալի ուսումնասի-
րությունը կատարել է Հ. Քյուրդյանը: Վիմագիր, հիշատակարանային և այլ
աղբյուրներից նա հավաքել է տոհմի ներկայացուցիչներին վերաբերող հնա-
րավոր բոլոր վկայությունները և ժամանակագրական հաջորդականությամբ
անուն առ անուն ներկայացրել նրանց՝ Համազասպ Ա-ից սկսած (որի անու-
նով էլ տոհմը հաճախ *Համազասպյան* է կոչվում) մինչև Հովհանավանքի
առաջնորդ եղած (1310 թ.) Ներսես եպիսկոպոսը (*Յ. Քիւրտեան*, Դսեղի կամ
Համազասպեան Մամիկոնեաններու տունը.- «Սիոն», 1970, Յունուար-Փետ-
րուար, էջ 50-64, Մարտ-Ապրիլ, էջ 157-178): Այլևայլ աղբյուրներից հավաքած
հիշատակարանների թիվը 34 միավոր է: Աշխատությունն ամփոփվում է «Ծի-
ղագրութիւն Դսեղի Մամիկոնեան տան» աղյուսակով:
Դսեղի վանքին ու նրա արձանագրությունների ուսումնասիրությանն է նվիր-
2. Դսեղի վանքին ու նրա արձանագրությունների ուսումնասիրությանն է նվիր-
ված նաև Գ. Սարգսյանի «Բարձրաքաշ վանքը և նրա վիմագրությունը» հրա-
պարակումը ձորագլխի Սիոն խաչի պատկերով («Էջմիածին», 1951, Հուլիս-
Օգոստոս, էջ 55-61, Սեպտ.-Հոկտ., էջ 40-45, Նոյեմբ.-Դեկտ. էջ 44-52): Որոշ
սրբագրություններով ու լրացումներով նոր հրապարակում է կատարել լուսան-
կարիչ-վիմագրագետ Ա. Շահինյանը (տես նրա Մամիկոնյան - Համազասպ-
յան տոհմը Հյուսիսային Հայաստանում.- «Տեղեկագիր», 1968, N 3, էջ 84-93:
Կարևոր լրացումներ է բովանդակում Մղարդի 1201 թ. խաչքարի արձանագ-
րությունը:
Ի դեպ, Դսեղ գյուղը հիշատակվում է 1392 թ. գրված Մցխեթի եկեղեցական
կալվածքներին վերաբերող վրացական մի կալվածագրում. «Լոռեում գյուղ
Ամոճն իր եկեղեցիով ու կալվածքով, գյուղ Դսեղը (დსერლი), Ախթալա-
յում տասը հայ ընտանիք՝ իրենց կալվածքով» (տե՛ս «ქრონიკები და სხვა
მასალა საქართველოს ისტორიისა და მწერლობისა» შეკრებილი,
ქრონოლოგიურად დაწყობილი და ახსნილი თ. ჟორდანიას მიერ, წ.
მეორე, ტფ. 1897, გვ. 196).
3. Թե երբ կարող էր Մամիկոնյաններից-Համազասպյաններին և վերջիններից
Թումանյան տոհմին անցում կատարվել՝ աղբյուրները չեն ճշտում, ուստի Լ.
Մելիքսեթ-Բեկի, Հ. Քյուրդյանի և Ա. Շահինյանի կազմած տոհմածառերը
Թումանյան տոհմի սկզբնավորում չեն արտացոլում:
Բրիտանական թանգարանի գրադարանի Or -5260 հայերեն ձեռագրի 1660-

1661 թ. գրված հիշատակարանը թույլ է տալիս կռահել, թե Դսեղի Մամիկոնյան/Համազասպյանները *Թումանյան* կարող էին կոչվել իշխանական այդ տանը *Թուման* անունը կրող իշխանազունի երևան գալուց հետո: Մեր վկայակոչած հիշատակարանը գրողը Դսեղ գյուղի Բարձրաքաշի ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի քահանա Սարգիսն է, որի հայրն է *պարոն Թումանը* և մայրը՝ *պարոն Գոզչակը:* «Պարոնությամբ» հիշատակումը իշխանական տան պատկանելու ապացույց է, ըստ որում Թումանի տոհմին, ուրեմն Թումանյաններին հատկորոշ է նաև քահանայական ծառայությունը գյուղին:

Ստորև հրապարակում ենք գլխավոր հիշատակարանն ամբողջությամբ (այն ժամանակին դուրս է մնացել տողերիս հեղինակի աշխատասիրած «Յիշատակարան Սանահնոյ վանից» գիրք ընդգրկվելուց):

363r «Փառք... [Ա]րդ՝ գրեցաւ Կիրակոս գիրքս ի թվաբերութիւնս Հայկազանց սեռի ՌԾԺ. երորդի (1661) կատարման սորա վերջի: [Ի] հայրապետութեան տեառն Յակոբ կաթողիկոսի: Ցանկութիւն մտաց եւ փափագ սրտի բազմադիմի օրինակօք տեսանին, բաժանեալ ի վերայ բնութեանս. ումեմն փառաց եւ մեծութեան եւ /363v/ այլ ումեմն յաղթութեանն. եւ փիրապէս հասանելոյ ի կամս սրտի:

Իսկ ես՝ նուաստս եւ յետինս, ծառայս ծառայիցն Քրիստոսի Սարգիս եպիսկոպոս, զամենայն ցանկութիւն սրտի եւ խորհուրդ մտաց զյօժարութիւն կամաց յերկրորդ համարեցայ առ այս աստուածային գանձիս ստացումն: Եւ սա ստացա ինձ յիշատակ անջնջելի եւ մեծութիւն անկողոպտելի, ըստ մարգարէին, որ ասէ «Երանի...»: Եւ իմ վասն այսր յուսոյ ետու գրել զսա բազում աշխատութեամբ եւ փառապանօք, այսր եւ անդր յածմամբ յուզէի զբաղձալիս իմ եւ զփափագ սրտի իմոյ կատարեցի ի դրանս Սանահնոյ Սուրբ Աստուածածնիս եւ հրաշափառ Կաթուղիկէ յեղեկեցւոյ. ամէն:

[Գ]րել ետու յիշատակ հոգւոյ իմոյ եւ ծնօղացն իմոյ, հօրն՝ պարոն Բէբեքին եւ մօրն իմոյ՝ պարոն Խանումաղին, եւ եղբարցն իմոյ, որ առ Քրիստոս են հանգուցեալ՝ Արղութին, Հախնազարին, Թէմուրխանին, Շահնազարին, Աթաբեկին եւ Աբիսողոմ սարկաւագին, որ ի Էջմիածինն փոխեցաւ առ յըղձալին իւր առ Քրիստոս, եւ կենդանի եղբօրն իմոյ՝ Բայրամին, եղբօր որդւոցն իմոյ՝ Ղուկասին, Փարսադանին, Պապոյին եւ այլ ամենայն յարեան մերձաւորաց: Այլ եւ Աստուած ողորմի ասացէք եղբօր որդւոյն իմոյ Ար/364r/ղութին, որ անմեղ սպանաւ անանուն Վրաց ի Հախբապայ փիրոջէ եւ կամակցութեամբն Աւետիս սպանաւ անանուն Վրաց ի Հախբապայ փիրոջէ եւ կամակցութեամբն Աւետիս եպիսկոպոսէ՝ մականուն Խօշամատի կոչեցեալ. զի սուգ մեծ եղեւ մեզ, որ խաբէութեամբ սպանաւ. եւ ո՛չ պատերազմաւ. վասն Բ(2) զեղի սինուռին՝ Հախպատու եւ Որնակայ, որ ի սկզբանէ Սանահնոյ Սուրբ Աստուածածնին վախմ է եղեալ եւ այժմ եւս կա անխափան մինչեւ ի կատարած աշխարհի:

364r Արդ, գրեցաւ սա ի գիւղն, որ կոչի Դսեղ. ի դուռն Սուրբ Լուսաւորչին, ձեռամբ յոգնամեղ եւ փծուն գրչի Սարգիս քահանայի, բազում աշխատութեամբ գծագրեցի զսա ձեռամբ իմոյ, յիշատակ յաւիտենական եւ ծնօղացն իմոյ, հօրն՝

պարոն Թումանին եւ մօրն՝ պարոն Գօզչակին եւ ամենայն արեան մերձաւորացն իմոյ. ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զմիաբանք սուրբ ուխտին Սանահնու՝ զՏէր Կիրակոսն, որ փոխեցաւ առ Աստուած, զՏէր Ալէքսանն, Տէր Աթանէսն, Տէր Էվանէսն եւ այլ կրօնաւորաց, որ աստ կան հաւաքեալ»:

Ձեռ. Or. 5260, էջ 363rv-364r

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(«Արարատ», 1912, հունվար, էջ 63-75)

1. Հուսիկ Արքեպիսկոպոսի հայերեն թարգմանությամբ ու որոշ լրացումներով «Արարատ» հանդեսը լույս է ընծայել Լ. Մելիքսեթ-Բեկի հեղինակությամբ Օդեսայում լույս տեսած «Из материалов для истории армян на юге России» հոդվածը (“Записки” импер. Одесского общества истории и древностей”, т. XXIX, Одесса, 1911). Թարգմանիչը գնահատում է Լ. Մելիքսեթ-Բեկի գեղեցիկ ձեռնարկը՝ «ռուսերեն գրվածքներով ծանոթացնել ռուս հասարակությանը Հարավային Ռուսաստանի հայ գաղթականության անցյալին ու ներկային»: Թարգմանված դրվագների խորագրերն են.
   ա. Նովրոսիայի և Բեսարաբիայի հայ լուսավորչական առաջնորդներ.
   բ. Բուդաղի հայերեն արձանագրության քարը.
   գ. Օդեսայի հայ եկեղեցին.
   դ. Օդեսայի Պատմության և հնության Կայսերական ընկերութեան մատենադարանի ձեռագրերից.
   1. Հայերի խնդիրները Վ.Ս. Պոպովին (В. С. Попову)
   2. Հայերի գաղթականութեան (1779 թ.) գործը:
2. Վերահրատարակման մեջ կրճատված են թարգմանչի ներածական բացատրությունններն ու տեղեկանքները: Պահպանված է Լ. Մելիքսեթ-Բեկի շարադրանքը: Ինչ վերաբերում է Հուսիկ Արքեպիսկոպոսի կազմած աղյուսակներին, հարմար նկատեցինք դրանք նույնությամբ բերել այստեղ: «Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի հայերի թվի և նրանց աճելության մասին մի գաղափար տալու համար դնում ենք մի ցուցակ, որ կազմել ենք 1895 թվին՝ առնելով 1879 և 1894 թվականները. ընթերցողները այդ երկու թվականների համեմատությամբ կը տեսնեն, թե հայերը ո՛ր աճում են և ուր նվազում և ապագայում ո՛ր տեղի հայերին ինչ ելք է վիճակուած»*:

* Աղյուսակների ուղղագրությունը պահպանում ենք նույնությամբ - Պ.Մ.

N	ՏԵՂԻ	ԵԿԵՂԵՑԻ	Ըստ ցուցակի 1879		Ըստ ցուցակի 1894			
			Տունք	Արակ.	Իգակ.	Տունք	Արակ.	Իգակ.
1	Ս.Պետերբուրգ	Ս. Կատարինէ գերեզմանցի	72	132	120	-	350	150
2	Մոսկուա	Վերափոխմ. Ս. Ածածնի Ս. Յարութն. Ս. Խաչի	51	158	115	-	300	200
3	Խարկով	Աղօթատուն	21	40	17			
4	Կիև	"	8	69	40		100	110
5	Պոլտավա	–	6	7	2			
6	Բօլգրադ	–	2	2	4			
7	Քիշնև	Ս. Ածածին	104	200	221	75	180	124
8	Նիմօրէն գ.	–	-	-	-	5	11	14
9	Բուդեշտ գ.	–	4	16	11	1	2	2
10	Սագա գ.	–				3	3	6
11	Սկօրէն					3	7	5
12	Օրհէյ	Ս. Ածածին	23	53	52	-	130	168
13	Վագուլիկայ գ.	–	6	18	24			
14	Ցիբերիկա գ.	–	2	3	1			
15	Բէլց քաղաք	–	16	36	37			
16	գիւղորայք 10	–	12	39	26			
17	Սարոկա գււ. գիւղորայք 8	10	30	22				
18	Յօթին քաղաք ի գաւառին	Ս. Յովհաննէ 1	4 1	12 1	16 1		4	8
19	Յնշեշտ գիւղաք. ի շրջակայ վեց	Ս. Ածածին	43	96	83		92	77
20	Աքիրման քաղ.	Ս. Ածածին	160	336	364		218	325
21	Իզմայիլ քաղ.	Ս. Ածածին	29	72	58		46	62
	Խերսոնի նահանգ							
22	Օդեսսա	Ս. Լուսաւորիչ	202	309	276	-	350	420
23	Գրիգորիոպօլ	Ս. Պօղոս Պետրոս Ս. Ածածին	75 41	179 114	183 106		128	159
	Տաւրիկեան նահ.							
24	Սիմֆերոպօլ	Ս. Ածածին	224	480	568	205	470	523
25	Խարսուբազար ի գիւղորայս	Ս. Ածածին -	104 17	262 62	248 44	90	179	214
26	Մելիտոպօլ	Ս. Աւետման					152	125
27	Օրբազար	Ս. Ածածին	91	211	252		100	115
28	Բախչիսարայ	?	6	13	14		14	11
29	Եալթա Օտարականք		7 -	18 16	17 -	- -	- -	- -
30	Սևաստոպօլ		8	20	18	-	-	-
31	Եւպատորիա	Եկեղ.	16	50	58	-	80	58
32	Յին Խրիմ	Ս. Ածածին	81	230	225	-	191	210
33	Թէոդոսիա	Եկեղեցիք չորս	115	242	247	-	252	262
34	Նողայոք	Ս. Ածածին	38	92	103	-	85	68
35	Կերչ	Ս. Յրեշտակապետաց	78	168	163	70	185	152
	Նահանգ Կազակացն Դոնի							
ա	Ն. Նախիջևան	Ս. Լուսաւորիչ յօտարութեան	368 69	1221	1042	425	-	-
բ		Ս. Ածածին յօտարութեան	299 120			320	-	-
գ		Ս. Յամբարձման յօտարութեան	268 42			315	-	-
դ		Ս. Նիկողայոս յօտարութեան	320 150	983	865	360	-	-
ե.		Ս. Թէոդորոս յօտարութեան	185 76	536	512	245	-	-
զ.		Ս. Գէորգ յօտարութեան	147 42	386	342	148		
		Ս. Յովհաննէս Մկրտիչ գերեզմանատուն	-	-	-	-	-	-
38	Չալթր գիւղ	Ս. Յմբրձման Նորեկք	501 11	1815 32	1668 32	800	2458	2205
39	Թոփտի	Ս. Սարգիս	525	1691	1476	750	2205	2069
40	Մեծ Սալա	Ս. Ածածին	280	934	882	357	1337	1199
41	Ճոքր Սալա	Ս. Գէորք	153	383	380	161	593	553
42	Նիսվիթա	Ս. Յովհաննէս	154	375	367	166	493	496
43	Կատարին անւան	Աղօթ.	-	-	-	25	65	59
44	Ագարակ առ սուրբ խաչ վանուց չիք տեղեկութիւն գրուց ժողովրդական, հովուէ վանահայր							

Այս թվերը որքան և թերի ու պակասավոր, սակայն մոտավոր գաղափար են տալիս, թե *հայք* ո՛ր աճում և ո՛ր նվազում են: Զգալի նվազումն նկատվում է Բեսարաբիայի, Խերսոնի, Տավրիկեան նահանգի գավառական քաղաքներում ու գյուղերում, աճելություն՝ մայրաքաղաքներում, կենդրոնական քաղաքներում և Նոր-Նախիջևանի գյուղերում»:

ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔՍԵԴԵԿՅԱՆ ԽՈՒԲՈՎ
(Նյութեր և նոթեր)
(ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1950, N 2, էջ 55-84)

1. Աղբյուրագետ Յու. Վարդանյանը (նույնն է՝ Գևորգ Տեր-Վարդանյան) Երևանի Մատենադարանի N 2766 գրչագրում բացահայտեց Գևորգ Խուբովի ինքնագիր մի նոր աշխատություն՝ «Յաղագս վարուց և գործոց կաթողիկոսաց Էջմիածնայ (1737-1857 թթ.)», նկարագրեց, հրապարակության պատրաստելուց առաջ համառոտ վերլուծության ենթարկեց այն (տե՛ս *Յու. Վարդանյան*, Գևորգի Խուբովի նորահայտ երկը իբրև XVIII-XIX դարերի Հայաստանի և հայ-ռուսական հարաբերությունների պատմության սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», N 13, 1980, էջ 192-202): Հեղինակի համոզմամբ հայտնաբերվածը «Բոլորովին այլ աշխատություն է, տարբեր՝ ռուսերեն գրքույկից, որը սրա շարադրանքում մի քանի անգամ հիշատակվում է, գրված այլ ծրագրով ու նպատակադրումով» (էջ 197): Այսպիսով՝ «1778-1809 թթ. Հայաստանի արժանահիշատակ անցքերի նկարագրություն» ռուսերեն հրապարակության հայերեն բնագիրը, ինչպես Լ. Մելիքսեթ-Բեկն է եզրակացնում «դեռևս հայտնաբերված չէ»:
2. «Գաւազանագրքի» այդ օրինակի նկարագրություն Լ. Մելիքսեթ-Բեկը հրապարակել է իր «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի» աշխատության կազմում («Բանբեր Մատենադարանի», N 4, 1958, էջ 414-415, ձեռ. N 49 (=705), այժմ՝ Մատենադարան ձեռ. N 10359): Այստեղից է քաղված 1963 թ. «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (N 2, էջ 101-110) Մելիքսեթ-Բեկի հրապարակումը: Այս դեպքում էլ Մատենադարանի N 3755 ձեռագրում Գ. Տեր-Վարդանյանը երևան բերեց «Գաւազանագրքի» ավարտուն մի օրինակ՝ գրված Աստրախանում 1829 թ., ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ, ուր Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակած ձոնը 76-ի դիմաց ունի 108 երկտող (տե՛ս *Յու. Վարդանյան*, նշվ. աշխ., էջ 194), ըստ այդմ «N 3755 ձեռագիրը պետք է համարել հեղինակի վերջնական խմբագրման ենթարկած օրինակը, քանի որ Խուբովն այն ուղարկել է Լազարյաններին՝ տպագրելու խնդրանքով» (անդ):
3. Գ. Խուբովի կյանքին ու գործունեությանը վերաբերող նյութերի պրպտումներ է կատարել հանգուցյալ հայագետ պրոֆ. Պիոն Հակոբյանը (տե՛ս «Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ», Երևան, 1978), ձեռքի տակ է ունեցել Գ. Խուբովի «Ինքնակենսագրությունն» ու «Ծառայացուցակը», որոնց հիմամբ էլ ճշգրտել է նրա ծննդյան ու մահվան թվականները՝ 1764-1830:
4. Ռափայել Դանիբեգովի (Դինբեկեանցի) ինքնության, ճանապարհորդությունների, ուղերգական աշխատության ռուսերեն թարգմանության ու թարգմանչի ինքնության մասին հանգամանորեն տե՛ս *Н.М. Мурадян*, Новые материалы о Рафаиле Данибегове.- «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, N 3, էջ 169-185:

5. Գ. Խուբովի «Գաւազանագրքի» մեկ այլ օրինակ Լոնդոնում տեսել ու գնահատել է հայագետ Հ. Քյուրտյանը (տե՛ս նրա՝ Նորագիւտ նիւթեր Պռօշեանց կամ Խաղբակեանց մասին.- «Բազմավէպ», 1956, էջ 101-106, հմմտ. *Յու. Վարդանյան*, նշվ. աշխ., էջ 194-195):
6. Լ. Մելիքսեթ-Բեկը իր կենդանության վերջին օրերին լույս ընծայած «Գևորգ Մելիքսեդեկյան Խուբովը (1762-1829) և նրա «Գավազանագիրքը» ակրոստիքոս-ներբողյանը» հոդվածի հավելվածում (ԲՀԱ, 1963, N 2, էջ 109-110) հրապարակել է Էջմիածնի Սուրբ ժողովի որոշում-միջնորդությունը «Վասն ազգատոհմութեան իւրեանց տալոյ զվկայութիւն» իբրև Պռոշյան տոհմի շառավիղներ. ժամանակի նորաթուխ «իշխանական տների» երևակման առումով կարևոր այս «վկայությունը» այստեղ անհրաժեշտ նկատեցինք նորից բերել:

Տեղի կնքւոյն Դանիէլ Կաթողիկոս ամենայն Հայոց

«Սուրբ ժողովն Արարատեան Աթոռոյն Էջմիածնի եղեւ զխնդիրն, զոր մատուցեալ էին գրով երևանցի Գէորգ և Կարապետ Մելքիսեթեան Խուպովեանց վասն ազգատոհմութեան իւրեանց տալոյ զվկայութիւն ճշմարիտ, ըստի զոր ինչ գիտեմք մեք ի հնագոյն արձանաց գրութեանց և յաւանդութեանց նախնեաց, գրեմք և վկայեմք որում պեղեակ եմք, զի Պռօշ որդի Վասակայ ի սերնդոց նախարարութեանց Հայոց, որ ի վերջին ժամանակս էր երևելի իշխան ի Հայս ի գաւառին Գառնւոյ, ունէր երեք որդիս՝ Պապակ, Ամիր-Հասան և Վասակ, որոյ թոռունք ընկալան յետոյ և ի Տաճկաց զպաշտօն մէլիքութեան յամի Տեառն իբրև 1550. որ և ի ժամանակս Շահ Աբասայ մինն է նոցանէ, որում անունն էր Խուտաբաշխ, գնացեալ առ Աբաս, երևեցաւ նմա հաճոյական կերպիւ մինչ ինքն Շահ Աբաս ի ներկայութեան յառաջիկայիցն իւրոց գովաբանելով խօսեցաւ վասն նորա *Խուբ Մէլիք*, որ թարգմանի *լաւ մէլիք*, և յանձնեալ ի նա զպաշտօն մէլիքութեան՝ դարձոյց վերստին յԵրևան, ուր մնաց ի նմին պաշտօնի, բայց որպէս յայտնի է ի պէրսնեան սուրբ Անտրանութիւն* մոտ 13:7 (sic), որք հզօրացաւ բռնութեան** բարբարոսաց ի Հայաստան աշխարհի***, այնք[ան] նուազացաւ օր ըստ օրէ ճոխութիւն և պատիւ ազգատոհմութեան նորա և ամենայն նախարարութեանց և ազնուական սերնդոց Հայոց մինչև գրեթէ բոլորապէս եղեն հաւասար**** իշխեցելոց իւրեանց ամենայն իշխանք և ազնուականք Հայոց, և ժառանգութիւն ամենեցուն նոցա ի բռնակալս հայրենեաց իւրաքանչիւրոց: Նմին իրի յետ ժամանակաց ժառանգն անդրանիկ որդւոյն Պռօշի, որ բնակէր ի Գառնի և ունէր զվերատեսչութիւն Վանաց զերեզմանատանն նախնեաց իւրեանց, եկն ի գեօղաքաղաքն Աշտարակ մերձ յԱրագածոտն և անդ կալաւ զբնակութիւն, որոյ յաւուրս մեր կային 2 թոռանք՝

* Բնագրում՝ Ատրոնոյ:

** Բնագրում՝ բռնոյն:

*** Բնագրում՝ ∞

**** Բնագրում՝ հուր:

դուստր մի Խորիշան անուն, զոր առեալ էր ի կնութիւն իւր պայազատ իշխան ի գեղջն յայնմիկ, և երևելի ի սմին ժամանակի Գէորգ Յովհաննիսեան, և ուստր մի Դանիէլ անուն, որոյ են այժմ ևս ի նոյն գեղջ որդի մի քահանայ Առաքել անուն և թոռն մի ի նոյն քահանայէ Ստեփան անուն: Իսկ Խուտաբաշեան Խութով կոչեցեալ, որ համարի լինիլ ի սերնդոց կրտսեր որդոյն Պռօշի, կալեալ զիւր բնակութիւն անդէն, յԵրևան քաղաքի, ծնանի զերիս որդիս՝ Դաւիթ, Գրիգոր և Էլիազ: Դաւիթ՝ անդրանիկ Խութովի՝ ծնանի զբազումս, որք ցրուեալք ի զանազան գաւառս, մնայ յԵրևան միայն Գրիգոր անուն որդի նորա և ծնանի անդ զորդիս՝ Յակոբ, Եղիազար և Սարգիս, որոց որդիք կան այժմ: Գրիգոր՝ երկրորդ որդի Խութովի, ծնանի զԿարապետ, և Կարապետ ծնանի զՄելքիսեթ Խուտաբաշեան, Ղազի և Յարութիւն, յորոց Ղազին և Յարութիւն վաղ վախճան մեռանին, Խուտաբաշեան հոգևորական լեալ անուանեցաւ Սիմէօն և եղև հռչակաւոր կաթուղիկոս Հայոց: Իսկ Մելքիսեթն մտեալ ի կարգ աշխահի, ծնաւ զորդիս՝ զԳէորգ և զԿարապետ և զդուստր մի Ջանազան, որք կան այժմ. Գէորգն մի որդւով իւրով ի Մօսկով քաղաք և Կարապետն հանդերձ ընտանեօք իւրովք և ընտանեօք եղբօր իւրոյ ի Թիֆլիզ քաղաքի: Էլիազ, կր[տ]սեր որդի Խութովի, ասի ծնեալ նոյնպէս զբազումս, յորոց և մինն է ի Ղզլար բնակեալ, Երևանցի Էլիզեան Սիմէօնն Խութեանց: Իսկ ժառանգք Ամիր-Հասանայ ցրուեցան, և ոմանք Ջմիռնիայ, ոմանք յԵլլադայ և սակաւք ոմանք ևս մնացին ի Հայաստան, որք գտանինն արդ: Այսքան ինչ գիտեմք վասն տոհմի Խութեանց, յաղագս որոյ և ըստ ազի[ա]կան ծիսի դրոշմելով զկնիքս մեր, ստորագրեմք իսկական ձեռամբ մերով:

Յամի տեառն 1808 Յունիսի 30, ի գերագահ կաթողիկոսարանն ամենայն Հայոց, որ յԱրարատ:

Բարսեղ առաջին արքեպիսկոպոս Էջմիածնի
Յովակիմ արքեպիսկոպոս
Յօհաննէս արքեպիսկոպոս
Անդրեաս արքեպիսկոպոս
Ստեփաննոս արքեպիսկոպոս
Ալէքսիանոս արքեպիսկոպոս
Ներսէս եպիսկոպոս
Ռեթէոս եպիսկոպոս
Մէլիք Յօհաննէս մահտեսի Յօհաննիսեան Երևանու և Նախիջևանու
Յօհաննէս Համազասպեանս (Հմզեան) Երևանցի
Յօհաննէս թալի և նովա (՛)
Ստեփան Նահապետեան Սմպաթօվս ձեռք դրի»:

ՀԱԿՈԲ ՇԱՀԱՆ-ՋՐՊԵՏՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱՀԱՅՏ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԱՆՏԻՊ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
(«Էջմիածին», 1958, Թ., էջ 42-46)

1. Շահան Ջրպետ կամ Ջրպետյանին վերաբերող էջեր կան Է.Բ.Աղայանի «Հայ

լեզվաբանության պատմություն», (հ. I, Երևան, 1958) և Գ.Բ. Ջահուկյանի «Գրաբարի քերականության պատմություն (XVII-XIX դդ.)» (Երևան, 1974) գրքերում: Տե՛ս նաև ՀՍ Հանրագիտարան, հատ. 9, Երևան 1983, էջ 546. այստեղ իբրև ծննդյան և մահվան թվականներ նշված են՝ 16.12.1772-5.12.1837: Հայագիտական զբաղումներ ծրագրող Ջրպետի ֆրանսիացի նախորդը Գիյոմ ղը Վիլֆրուան է (1690-1770). նրա մասին տես *Բեռնար Ուտիե*, Հայագիտության սկզբնավորողը Ֆրանսիայում, ՊԲՀ, 1999, N 1, էջ 180-194:

2. Հավանաբար խոսքը վերաբերում է Փարիզի Ազգային գրադարանի այժմյան ձեռագրերից (N 191, 200, և 225) մեկին (նրանց նկարագրությունը տես *Raymond H. Kévorkian, Armèn Ter-Stépanian,* Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France. Catalogue, Paris 1998, col. 755-756; 770-771; 791-792):

3. Ն. Մառը Հայոց ազգային եկեղեցու նման հորջորջումը կոչում է թյուրիմացության արդյունք: «*Армянская национальная церковь,– апостольская и древняя по существу и основным традициям, с недавнего же сравнительно времени по недоразумению называемая армяногригорянской, в самоопределении чрезмерно увлекается своим национальным характером, теперь, несомненно, присущим ей в сильной степени чрезмерно архаизирует его*»,- ասում էր նա 1904 թ. նոյեմբերի 25-ին կարդացած զեկուցման մեջ (*Н. Марр*, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 209):

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ
(ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, N 9, էջ 19-33)

1. Խ. Աբովյանի ծննդյան թվականը 1805 կոչելիս «ինչպես վերջերս հիմնավորվեց» ասությամբ Լ. Մելիքսեթ-Բեկը հարկավ նկատի ունի Գ. Աբովի «Խաչատուր Աբովյանի ծննդյան թվականը» հոդվածը (տե՛ս «Գրական-բանասիրական հետազոտություններ», գիրք III, Երևան, 1948, էջ 207-216): Ինքը Լ. Մելիքսեթ-Բեկը համոզված է, որ վավերականը 1809 թվականն է: Վաստակյալ աբովյանագետ Պ. Հակոբյանը մի առանձին գլուխ է նվիրել սույն հարցի քննարկմանը և պանդյակ փաստարկներով հիմնավորել 1809 թվականի ստուգությունը (տես նրա՝ «Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը - 1809-1836», Երևան, 1967, էջ 48-71): Պ. Հակոբյանի օգտագործած գրականության ցանկում Լ. Մելիքսեթ-Բեկի այս հոդվածը ներկայացված չէ, փոխարենը քանիցս հղվում է 1955-ին լույս տեսած «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գիրքը, հատ. Գ:

2. Լ. Մելիքսեթ-Բեկը Թիֆլիսի գավառական դպրոցի Խ. Աբովյանի պաշտոնակիցներ Միրզա-Ֆատալի Ախունդովի և Միրզա Շաֆիի մասին խոսելիս նրանց կոչում է «ադրբեջանցի գործիչներ», ինչը Աբովյանի դարաշրջանին անհայտ էթնոնիմ է, պարզապես անաքրոնիզմ: Հոդվածում վկայակոչվող ռուսերեն

վավերագրերում նրանք թաթարերենի ուսուցիչներ են, ուրեմն և *թաթարներ* կամ *թուրքեր:* Գիտնականը դատում է ըստ նոր ժամանակների նորմերի:

ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ
(Արմֆանի «Տեղեկագիր», 1940, N 3, էջ 41-43)

«Վասն ասպարիզաց» բնագրի Լ. Մելիքսեթ-Բեկի սույն հրապարակությունը խթանել է չափուկշիռներով զբաղվող մասնագետներին նոր ընդօրինակություններ երևան բերելու գործում:

Ա. Աբրահամյանը ուշադրության է առել այդ բնագիրը ներկայացնող Մատենադարանի վեց ձեռագիր (582, 1784, 2335, 2493, 1171, 8217) և վերահրատարակել բնագիրը ըստ ՄՄ 582 ձեռագրի: Հրատարակիչը կատարել է աղբյուրագիտական մի կարևոր ճշգրտում. պարզել է, որ «Վասն ասպարիզաց» հեղինակողը օգտվել է Շիրակացու չափ ու կշիռներից, ինչպես նաև նրա Աշխարհագրությունից (պրոֆ. դր. *Ա.Գ. Աբրահամյան*, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 88-91): Տասնամյակներ անց Ռ. Վարդանյանը Մատենադարանի հավաքածոյում արձանագրեց սույն բնագրի ևս երկու ընդօրինակություն (6513,1717): Նա ձեռագրերը բաժանեց երկու խմբի և կազմեց համեմատական բնագիր՝ տարընթերցումներով ու ծանոթագրութիւններով (*Ռ.Հ Վարդանյան*, Հայաստանի չափերն ու կշիռները (V-X դարեր), Երևան, 1989, էջ 68-76, 239-241 (բնագիր) և 290-294): Կան աղբյուրագիտական բնույթի լրացուցիչ մասնավորեցումներ:

«Ասպարէզի» և «վտաւանի» կապակցությամբ ավելորդ չէ հիշեցնել, որ չափ ու կշիռներին վերաբերող աղբյուրներ ու գրականութուն կա նաև վրացերենով, ընդ որում հաճախ նրանք արտահայտվում են նույնական տերմիններով. գրակ. տես **ივ. ჯავახიშვილი,** ქართული საფას-საზომთა მცოდნეობა ანუ ნუმიზმატიკა-მეტროლოგია, ტფ. 1925 (վերահրատարակված է հեղինակի 12 հատորյակում), *Д.Г.Цхакая*, История математических наук в Грузии с древних времен до начала XX века, Тб., 1959, **გ. ჯაფარიძე,** ნარკვევი ქართული მეტროლოგიის ისტორიიდან, თბ., 1973.

ԿԱՐՆՈ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ 1829 թ. ԳԵՆԵՐԱԼ ՊԱՍԿԵՎԻՉԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻՐԸ
(Արմֆանի «Տեղեկագիր», 1940, N 3, էջ 37-40)

1. «Գաղթականներ» եզրի գործածումը Կարնո հայության վերաբերմամբ արդարացված չէ, քանի որ վավերագրում խոսվում է տակավին իր բնօրրանում ապրող բնակչության մասին: Վերաբնակեցումը կատարվում էր Ռուսական կայսրության և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված պայմանագրի համաձայն (Ադրիանուպոլիս, 1829 թ., 2 սեպտ.), որով Օսմանյան կայսրության կազմում

մնացող Բարձր Հայքի հայությանը թույլ էր տրվում Ռուսաստանին անցնող տարածք փոխադրվել, իսկ այստեղից՝ իմա Սամցխեի ու Ջավախքի մահմեդականներին՝ Թուրքիայի տարածքում հաստատվել: Բնակափոխության այս գործողությունը ցավոտ ու բարդ իրողություն է, մանավանդ որ «մահմեդական» ներկայացող և վերաբնակեցման ենթակա զանգվածի նշանակալի մասը ապազգայնացած տեղաբնիկներ էին: Վերջին տասնամյակներին լույս տեսած գրականության մեջ *փոխադարձության* պարագան մոռացության է տրվում, և Կարնո հայության վերաբնակեցումը մատուցվում է իբրև Վրաստանում *ապաստան գտնող* հանդուրժողություն, բնաբան ընտրելով բանաստեղծ Ի. Ճավճավաձեի աչառու բանաձևումը (տե՛ս, օրինակ, **შოთა თეთვაძე, ოთარ თეთვაძე,** სომხები საქართველოში, თბ., 1998, ինչպես նաև գիրքը խմբագրող և գրախոսող վրացագետների աշխատությունները): Երևակայության բորբոքումը և «հայրենասիրության» հիստերիան այնտեղ հասավ, որ գրվեց Կիտա Բուաշիձե անունով հեղինակի՝ հայոց ներկայությունը չարիք համարող «შავი წიგნი» («Սև գիրք»), այն հրապարակելով 120000 տպաքանակով):

Ինչևէ, Կարնո հայության վերաբնակեցման պատմությանն առնչվող աղբյուրների և գրականության համառոտ տեսություն կարելի է գտնել Ա. Մելքոնյանի «Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին» (Երևան, 2003) գրքի 171-196 էջերում: Ի դեպ, հեղինակի ուշադրությունից վրիպել է Լ. Մելիքսեթ-Բեկի սույն հրապարակումը, բայց վավերագրին ծանոթ է ըստ Կաթ. դիվանի օրինակի (թղթ. 257, վավ. 304ա):

Արծարծվող խնդիրները շոշափող վրացական հրատարակություններից որոշակի առումով շահեկան ենք համարում «ჯავახეთი: ისტორიულ-ხუროთმოძღვრული გზამკვლევი» (თბ., 2000) և «ჯავახეთი: ისტორია და თანამედროვება» (ახალციხე, 2002).

Թեթվաձեների գրքի թվացյալ «հաջողությունը» ոգևորեց այլոց, ուստի ոմն *Իակոբ Ախուաշվիլի* շտապեց «Նոր Քարերի աղաղակ» (ახალი ქვათა ღაღადი ანუ ვართ თუ არა მდგმურები) հրապարակել (Թբ., 2005), որի գլուխներից մեկը, տերը վկա, այս է. «Ռուսթավելին, Գիորգի Սաակաձեն, Ստալինը, Նապոլեոնը, Միքելանջելոն և ուրիշներն ու այլոք հայ գիտնականի (Պարույր Մուրադյանի) կարծիքով հայեր են...» (էջ 80-87): Մեկը չեղավ հարցներ՝ այդ որտե՞ղ ես կարդացել, ո՞վ «գիտուն»:

Հայատյացության մրցույթի մեջ անկասելի ձեռքբերում ունի նորաթուխ պատմաբան Արչիլ Չաչխիանին: Նրա և գրքի խմբագիր պրոֆ. Էլվեր Կուպատաձեի համոզմամբ «այսպես կոչված հայկական հարցը» գոյացել է հայ էթնոսի կազմավորման հետ միաժամանակ, որից անլուր տվայտանքներ են կրել քուրդ, թուրք, ադրբեջանցի և վրացի մահմեդական զանգվածները (տե՛ս არჩილ ჩაჩხიანი, დაშნაკთა ნაციონალისტურ-ექსპანსიონისტური იდეოლოგია და სომხეთ-საქართველოს 1918-1919 წლების ომი, თბილისი, 2007, 522 გვ.).

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՐՄԻՐ ՈՐԴԱՆ ՆԵՐԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(«Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ, 1946, N 2-3, էջ 17-26)

Որդանկարմրի բնութագրությանն ու արտադրությանը վերաբերող սույն հրապարակումը, որքան մեզ hասու գրականությամբ hաջողվեց ստուգել, գիտագործնական ոշադրության չի առնվել: Չկարողացանք պարզել նաև, թե Էջմիածնի միաբան Սահակ վրդ. ծաղկարարի պրպտումներն ու դիմումները ի՞նչ ավարտ են ունեցել և քիմիայի և բուսաբանության-կենդանաբանության պատմաբաններին նրա անունըն հայտնի՞ է արդյոք:

ԱՐՏԱՎԱԶԴ ԵՎ ՄՀԵՐԻ ՀԵՏՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
(«Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի», գիրք Ա և Բ, Երևան, 1921-1922, էջ 93-104)

«Քարթլիս ցխովրեբան» Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածի հրապարակումից հետո ունեցել է համահավաք և գիտական երկու հրատարակութուն (I-ը՝ ակադ. Ս. Ղաուխչիշվիլու և II-ը՝ ակադ. Ռ. Մետրևելու խմբագրությամբ), ուստի նոր բնագրերի հիմամբ վերանայվել է նաև Վախթանգի կիսառասպելական որակավոrումը: Նույնը վերաբերում է նաև հաջորդ դրվագում ներկայացվող «Վիսրամիանիի» գնահատությանը իբրև «անհեղինակ պոեմի»: Այս հարցերը ևս ստացել են նոր լուծում: «Վիսրամիանիի» ունեցած հինգ հրատարակություններից ակադեմիական է չորրորդը՝ Ալ. Գվախարիայի և Մ. Թոդուայի աշխատասիրությամբ ու ակադ. Գ. Ծերեթելու խմբագրությամբ: Տեքստը կազմված է բոլոր 21 ձեռագրերի համեմատությամբ: 5-րդը վերջինիս կրկնություն է առանց տարընթերցումների (Թբ., 1964): Ռուսերեն թարգմանությունը տես «Висрамиани: (Вис и Рамин), роман. Перевод с древнегрузинского С. Иорданишвили, Тб., 1960.

1. Ս.-Ս. Օրբելիանիի «Վրաց բառգիրքը» ունեցել է մի քանի հրատարակություն: Ինքնագիր ձեռագրերի հիմամբ կատարված գիտական հրատարակությունը պատկանում է պրոֆ. Ի. Աբուլաձեին (სულხან-საბა ორბელიანი, თხზულებანი, ტ. $IV_1 - IV_2$, თბ., 1965/1966): «არტვანი» բառը տես IV_1 էջ 70:
2. Լ. Մելիքսեթ-Բեկի սույն հոդվածը չի վրիպել «Միհրը Հայոց մեջ» հմտալից աշխատության հեղինակ Թ.աղ. Ավդալբեգյանի ուշադրությունից (տե՛ս նրա՝ «Հայագիտական ուսումնասիրություններ», Երևան, 1969, էջ 51-52): Գիտնականը այստեղից է քաղում Ն. Մառի, Իվ. Ջավախիշվլու և Ա. Խախանաշվիլու դրույթների ծանոթությունը, բայց հարկ չի համարել անդրադառնալ Լ. Մելիքսեթ-Բեկի արծարծումներին:

Միթրա-Միհր պաշտամունքի վերաբերյալ ուշագրավ հոդված ունի պրոֆ. Կ. Կեկելիձեն (տե՛ս նրա՝ ქრისტიანიზმი და მითრაიზმი.- "ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან", ტ. II, თბ. 1945, გვ. 342-353). Ինչ վերաբերում է «Ամիրան-Դարեջանիանի» ասպետական-հերոսական վիպասացությանը, որ կեղծ-ռուսթավելյան քառատողը վերագրում Մոսե Խոնելուն (XIIդ.), ապա եղած հրատարակություններից նախընտրելին Ս. Ղուբանեիշվիլու խմբագրությամբ լույս տեսածն է (Թբ. 1960), որից և կատարվել է ամբողջական ռուսերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Բիձինա Աբուլաձե, առաջաբանը Էլ. Մետրևելու, խմբագիր Ի. Աբուլաձե, Թբ. 1965): Ժողովրդական «Ամիրանի» ասքի վերաբերյալ պատկառելի գրականություն կա՝ Իվ. Ջավախիշվիլի, Մ. Չիքովանի, Շ. Նուցուբիձե, Ե. Վիրսալաձե և այլք: Ամիրանի ասքի պատումների ու տարբերակների 28 բնագրի համահավաք և առկա գրականության մատենագիտություն կարելի է գտնել՝ М. Я. Чиковани, Народный грузинский эпос о Прикованном Амирани (М., 1966).

Միհրի պաշտամունքի մասին խոսելիս մոռանալու չէ պրոֆ. Գր. Ղափանցյանի դիտարկումը (տե՛ս Проф. *Гр. Капанцян*, Хетские боги у армян, Ер., 1940, стр. 59-61):

ՎԱՐԴԱՎԱՌԸ ՎՐԱՑՈՑ ՄԵՋ
(«Արարատ», 1918, N 1-3, էջ 129-133)

10. Մելիքսեթ-Բեկի սույն նախնական հաղորդումը արձագանքն է դարասկզբին Ն. Մառի կատարած մի քանի դիտարկումների, որոնք և հղվում են հոդվածում: «Վարդավառ» եզրի և տոնի ստուգաբանությանը XX դարի 40-ական թվականներին անդրադարձավ ակադ. Գր. Ղափանցյանը: Նա այդ անվան առաջացումը կապում է փոքրասիական հին աշխարհի, մասնավորապես խեթերեն vad(a)r-*ջուր* բառի հետ, բաղարկված երկրորդ մասը՝ -arr համարելով բայական-*ցողել, լվանալ*. «Если верно наше толкование vardavar'а (из wadru-arr//wadraw-arr) в связи с хеттским vadar "вода" (и arr-"мыть"), то остается этот обычай или культ связать с малоазийским Мажаном, отражением бога неба и грозы (и дождя?)» (*Проф. Гр. Капанцян*, Хетские боги у армян, в связи с хетским влиянием на армян и генезисом армянского пантеона вообще, Ереван, 1940, стр. 39-40).
11. Վրացական ամսանունների ճիշտ հերթականությունը, ստուգաբանությունը, մատենագրական վկայություններն ու առնչությունները հայոց և արևելյան մյուս ժողովուրդների տոմարական համակարգերի հետ գտանելի է ակադ. Կ. Կեկելիձեի «Հին վրացական տարին» հոդվածում (տե՛ս კ.კეკელიძე, ეტიუდები ძველი ქართული ლიტერატურის ისტორიიდან, ტ. I, 1956, გვ. 99-124).

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՌԼԵԶԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
(«Արարատ», 1918, N 1-3, էջ 125-128)

1. Առլեզի մասին եղած գրականության ամփոփ տեսություն ու գնահատություն տե՛ս *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, I, Երևան, 1971,

էջ 260-261: Ուշադրավ նկատելով Կ. Բասմաջյանի «մանրակրկիտ և ընտիր հոդվածը» (Աճառյանի գնահատությամբ), պիտի նկատի առնել հետևյալը. ըստ նրա *առլեզներր* ներկայացնում են աստղաբանական Մարդուկ աստծուն ու նրա՝ հետևորդ չորս շները, բայց այս պարագային դժվար բացատրելի է դառնում *լիզել* բայից սերված *լեզ*-ը, իսկ որ այն իրոք լիզելու գործողության հետ է կապված՝ հավաստի է պարսկերենում *Փայեզ* (ոտք+լիզել) կոչվող կենդանու գործողությամբ. ճանապարհորդները ճանապարհին գիշերում էին ոտներն ի մի հյուսած (ноги к ногам), զգուշանալով նրանց լիզումից (սույն ազգագրական մանրամասի առթիվ տես *Ю.Н. Марр* – Вишаны в персидской устной литературе.- տե՛ս նրա՝ Статьи, сообщения и резюме докладов, М.-Л-д, 1936, стр. 99-102):

2. Այս կարևոր հարցադրումը, որքան մեզ հայտնի է, գիտական անդրադարձ չի ունեցել մասնագիտական գրականության մեջ: Պատճառը, կարծյոք, հարեւթաբանության տեսության հետ տարածաշրջանային մշակութային իրողությունների մոռացության տալն է:

ՀԻՆ ԹԲԻԼԻՍԻԻ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(«Պատմա-բանասիրական հանդես», 1958, N 3, էջ 150-160)

3. Լ. Մելիքսեթ-Բեկը Տպղիս-Թիֆլիս-Թբիլիսիի պատմության, մանավանդ հին Թիֆլիսի տեղագրության ու միկրոտոպոնիմիկայի լավագույն գիտակներից է, որը քաղաքին և նրա շրջակայքի հուշարձաններին վեաբերող մի քանի հետազոտություն է հրապարակել (տես նրա՝ «Полная библиография печатных работ Л. Меликсет-Бека за 1909-1960 гг.»): Զելիսի > Թբիլիս-ի նրա ստուգաբանությունը հիմնականում *ձելի-փայտ* (այստեղից հայկ. աղբյուրների *Փայտակարանը*) համապատասխանության վրա է կառուցված, որ հարկավ սրամիտ է, բայց առարկելի (Ն. Լոմոուրի): Բացատրություններին վերաբերող համառոտ ակնարկ ու գրականություն տես «თბილისი - 1500» հոբելյանական ժողովածու, 1958 թ. հմմտ. *Պարույր Մուրադյան* Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ 9-25): Հին Թիֆլիսի տեղագրության շուրջ ուշագրավ դիտարկումներ ունի Իոսեբ Գրիշաշվիլին *(տես նրա თხზულებათა კრებული ხუთ ტომად, ტ. V, თბ., 1965, გვ. 323-334)*.

1. «Անչիսխատիի» նույնացումը «Ջարիսա» եկեղեցու հետ քննելի առաջարկություն է.
2. Կիրակոս անունը կրող հայ քահանային VI դարի անձնավորություն համարելը հարկավ վրիպում է, քանի որ նա Ուխտանես եպիսկոպոսի ժամանակակիցն է և նրա խնդրած թուղթը թարգմանողը (*Ուխտանէս*, Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, էջ 14):
4. Այս եկեղեցու վերաբերմամբ տես *Л.М. Меликсет-Беков*, О междоусобице в Тифлисе в 1197 году по поводу Кривой Пасхи (Вокруг Старого Тифлиса).- "Известия" КИАИ, т. III, Тифлис, 1925, стр. 49-60. Հմմտ. *Պ. Մուրադյան*, նշվ. աշխ., էջ 29-33:

3. «Փայտակարան» անվանումը մենք հակված ենք բացատրել պարսկ. «Փայթախտարան» (գահանիստ, մայրաքաղաք) եզրի մասնակի աղավաղմամբ:
4. Նրանց մեկ մասը վիրահայ մտավորականների ջանքերով հավաքված և ամփոփված է երբեմնի Խոջիվանքի գերեզմանոցի (հետագայում այգու) մեկ անկյունում, վրաց նորակառույց Ս. Երրորդություն եկեղեցու թիկունքում:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔԻ 774-775 ԹԹ. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

(ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1948, N 2, էջ 45-58)

Հմուտ պատմաբանի, աղբյուրագետի ու բանասերի պատրաստություններ ի համատեղումով գրված այս աշխատությունը արծարծում ու լուծում է տալիս
րի համատեղումով գրված այս աշխատությունը արծարծում ու լուծում է տալիս
արաբական տիրապետության շրջանի առեղծվածային նկատված մի քանի հար-
ցերի: Չորրորդ Հայքի կազմավորման ժամանակագրությունը և աշխարհագրա-
կան սահմանների պարզումը՝ ըստ առկա բազմալեզու աղբյուրների փաստո-
րեն խորհնացուն ազատում է Չորրորդ Հայքի հիշատակության հետամուտ բե-
ռից, պատճառաբանում է Հուստինիանոսի 31-րդ նովելլի երևան գալը և, ի վերջո,
Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրացու «Ժամանակագրության» վկայության վերլու-
ծությամբ հավաստում 774-775 թվականների գյուղացիական ապստամբության
պատճառներն ու ընթացքը: Պատահական չէ, որ «Հայ ժողովրդի պատմության»
ակադեմիական 2-րդ հատորում այդ անցքերը ներկայացնելիս չի մոռացվել Լ. Մե-
լիքսեթ-Բեկի այս հրապարակումը (էջ 340):

Աբբասյանների օրոք սկիզբ առավ հայոց զանգվածային արտագաղթը երկ-
րից և մանավանդ՝ արաբական ցեղերի թափանցումը Հայաստան: Ա. Տեր-Ղևոնդ-
յանի գնահատությամբ «Արաբ տարրի ներկայությունը Հայաստանի հողի վրա
հիմք դարձավ օտար քաղաքական միավորումների (ամիրությունների) գոյացման
համար, որոնք մեծ չափով դժվարացրին հայկական կենտրոնաձիգ պետության
ստեղծումը և ամրապնդումը Բագրատունյաց ժամանակաշրջանում, մանավանդ
նրան հաջորդող դարերում» (անդ, էջ 346):

ԴԱՎԻԹ «ԱՆՀԱՂԹԻ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(«Գրական-բանասիրական հետազոտություններ», Երևան, I, 1946, էջ 243-267)

1. «Լոկ մի բառի գործածության հիման վրա» բնորոշումը արդարացի չէ և արդյունք է Ն. Մառի մեկ այլ աշխատանքը մոռանալու: Ն. Ադոնցի «Դիոնիսոս Թրակացին և հայ մեկնիչները» դոկտորական աշխատությունը գրախոսելիս

Ն. Մառը առավել հանգամանորեն արծարծեց Դավիթ Անհաղթի առնչությունը վրաց միջավայրին, առ այդ վկայակոչելով վրաց աշխարհին վերաբերող նոր օրինակներ Դավթի քերականության բնագրից (տե՛ս **Н.Я. Марр**, Кавказский культурный мир и Армения, Ер., 1995, стр. 315-317):

2. «Հայոց ձոր» տեղանունը Ան. Մնացականյանը հակված է նույնացնելու Պլուտարքոսի հիշատակած «Փոքր Հայքի» հետ, այն կոչելով «Անդրկովկասյան Հայք»: Սափարացու տեղեկությունը ճշգրիտ մեկնաբանելու համար լրացուցիչ տեղեկություններ են անհրաժեշտ, որպիսիք դեռ երևան չեն բերված, ուստի Ան. Մնացականյանի աշխատանքային ենթադրությունը հախուռն մերժման ենթակա չէ (*Ան. Մնացականյան*, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 52-59):
3. Լ. Մելիքսեթ-Բեկը իր հիմնական եզրակացությունները անփոփոխ պահեց նաև 1959 թ. հրապարակած վրացերեն հոդվածում («დავით უძლეველი და დავით გარესჯელი» - «საიუბილეო კრებული კ. კეკელიძის დაბადებიდან 80-წლის თავზე», თბ., 1959, გვ. 197-232).

Այդ նույնացման վերաբերյալ ասպիրանտական ուսումնառությանս տարիներին փորձեցի հարցնել ուսուցչիս՝ ակադ. Կ. Կեկելիձեին, Հիշում եմ՝ նա չուզեց հարցադրումը մանրամասնել, բայց և առարկություններ չվկայակոչեց:

Փաստորեն «Անհաղթ» մեծարումը վիճարկող Դավիթներին (նրանց առանձնական ներկայացմանը կարելի է ծանոթանալ ակադ. Հ. Մանանդյանի «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» աշխատությամբ (տես նրա «Երկեր», հատ. Է. բանասիրական ուսումնասիրություններ: Հատորը հրատարակության պատրաստեց Պ.Հ. Հովհաննիսյանը, Երևան, 2010, էջ 49-79, 123-154) ավելանում է ևս մեկը՝ Դավիթ Գարեջեցին: Վերջին տասնամյակներին, ցավոք, Դավիթ Անհաղթի անունով ավանդված երկերը բազմակի իրար կրկնող հրապարակություններ ունեցան, նույնիսկ միջազգային գիտաժողով հրավիրվեց, բայց հունարենի հետ համեմատող մեկը չգտնվեց:

ՄԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1945, N 3-4, էջ 73-81)

1. Դատակազմության և դատաստանական ատյանի այս եզակի վկայությունը առաջինը ուշադրության է առել պրոֆ. Իվ. Ջավախիշվիլին՝ համառոտակի անդրադառնալով հիշատակվող մասնակիցների ինքնությանն ու վեճը դիտարկել իբրև «երկու հայ եպիսկոպոսների միջև ընկած անհամաձայնության՝ թանկագին խաչի սեփականության կապակցությամբ» (տե՛ս նրա՝ ქართული სამართლის ისტორია, წიგნი, მეორე, ნაკვეთი მეორე.– "თხზულებანი თორმეტ ტომად", ტ. VII, თბ., 1984, გვ. 342-343). Լ. Մելիքսեթ-Բեկը ծանոթ

է այդ ու մյուս անդրադարձներին, սակայն «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» գրքի 2-րդ հատորում իր տված ծանոթագրությունների տեղեկությունները բավարար չի նկատել (էջ 66-67) և վերանայել է վիճարկող կողմերի վանական պատկանելությունը. այժմ նա համոզված է որ սուրբ Խաչի շուրջ վիճում են *Նորավանքն* ու *Դղնձահանքը*. «ասել է՝ հակաքաղկեդոննիկ (հայադավան) և քաղկեդոնիկ (վրացադավան) վանքերը», ուստի փորձել է այս հոդվածով ճշգրտել եղելությունը:

2. Լ. Մելիքսեթ-Բեկի հրապարակումից (1945 թ.) երկու տարի անց «Ստ. Օրբելյանի Պատմության մի տեղեկության մեկնաբանության շուրջ» քննությամբ հանդես է եկել պրոֆ. Ի. Աբուլաձեն (տե՛ս նրա՝ «შრომები», ტ. IV, თბ., 1985, გვ. 50-61): Նա Օրբելյանի Պատմությունից բերում է այլ հատվածներում գտնվող լրացուցիչ տեղեկություններ և հավաստիորեն ապացուցում, որ դատաքննության վեճի առարկան՝ սուրբ Խաչը *Նորավանքին* կամ *Տաթևին* պատկանելու շուրջ է, հետևաբար արդարացի է Իվ. Ջավախիշվիլու եզրակացությունը, թե վեճը հայոց երկու վանքերի միջև է: Ճշգրտվում է նաև, որ հիշատակվող Օնոփրեն Ճղոնդիպել չէ, այլ Իվանե Երկայնաբազուկի դիվանի գլխավոր դպիրը: Որ իշխանական տունը իր դիվանադպիրն ուներ՝ հաստատվում է Սանահինի «Յիշատակարանով» (տես մեր հատ., էջ 73, 75):

Եղած դիտողությունները ու ճշգրտումները չեն նվազեցնում Լ. Մելիքսեթ-Բեկի քննության կարևորությունը:

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ
(«Кавказ и Византия», 1, Ереван, 1979, стр. 167-179)

1. Սույն համառոտ ակնարկը գրվել է իբրև հրապարակելիք «Վիրահայոց վիմական պարեգիր» ժողովածոյի առաջաբան (1957 թ.), հեղինակի իսկ խոսքով՝ շատ չտարբերվելով թեման արծարծող այլ հրապարակումներից՝ *Աղ. Երիցյան*, Թիֆլիզի հայք և նրա վիճակագրութիւնը.- «Փորձ», 1879, N 10, էջ 1-35, *Գ. ա.ք. Աղանեան*, Հայերը Վրաստանում.- «Տարազ», 1919, N 1-12, էջ 43-45, *Սարուխան*, Վրաստան և հայերը, Վիեննա, 1939, *Ա. Երեմյան*, Թիֆլիսի հայկական պանթեոններում, Վիեննա, 1940 և այլն: Լ. Մելիքսեթ-Բեկի ակնարկը նախորդների համեմատությամբ ունի կարևոր մի առավելություն. նկատի է առնում վիմագրերի տեղագրությունը և մասամբ ամփոփում է մատենագրական տեղեկությունները: Ուստի անհրաժեշտ նկատեցինք այն հրապարակել մեր խմբագրությամբ լույս տեսնող «Кавказ и Византия» տարեգրքում, ապա և մուծել սույն ժողովածո:
2. Ջաղայի պատմականությունն ու իսկությունը ընդունում է վրաց մատենագրության խոշորագույն պատմաբան ակադ. Կ. Կեկելիձեն՝ հակառակ Իվ. Ջավախիշվիլու հանդիմանական քննադատության (კ.კეკელიძე, ქართული ლიტერატურის ისტორია, ტ. I, ძველი მწერლობა, თბ., 1960, გვ. 87,

113. **ივ. ჯავახიშვილი,** ქართული დამწერლობათა–მცოდნეობა ანუ პალეოგრაფია, თბ., 1949, გვ. 195-203).

3. Սույն դրվագի մեկնաբանությանը առանձին հոդվածով անդրադարձել է Զ. Ալեքսիձեն և կատարել միանգամայն անսպասելի եզրակացություն, որի համաձայն վրացերեն բնագրում *հայերենի* փոխարեն պիտի լիներ *թուրքերեն* (տե՛ս նրա՝ "ამბავი ქართლისა და ნათესავისა მათისა".– ამიერკავკასიის ისტორიის პრობლემები, თბ., 1991, გვ. 79-84.):
4. Աթենի Սիոնի հայերեն շինարարական արձանագրության Լ. Սաղոյանի կատարած գրչանկարն ու կառույցի հետ կապված փողերիս հեղինակի մեկնաբանությունները կարելի է տեսնել ու կարդալ՝ *П.М. Мурадян*, Армянская надпись храма Джвари,- "Вестник общ. наук", 1968, N 2, стр. 55-80; նաև՝ ***P. Mouradian***, Encore au sujet de l'inscription arménienne de l'église de Djvari.- REArm, t. VI, Paris, 1969, p. 393-411.
5. «Քարթլիս ցխովրեբայի» հին հայերեն թարգմանության մեջ վրաց. «რუსთავი»-ի դիմաց ունենք «*Ռիշա*, որ է *Պարտիզաքաղաք*» (տե՛ս Ի. Աբուլաձեի հրատ., էջ 12_{8-9}), ուր *Ռիշան* քաղաքի տեղական անվանումն է, իսկ «Պարտիզաքաղաքը»՝ ბოსტან ქალაქი-ի թարգմանություն, ուստի հազիվ թե ბოსტან-ը նույնանա հայ «*Ուտանի*» հետ:
6. Լ. Մելիքսեթ-Բեկի հոդվածում գործածված է «հայ աղանդավորների բեկորներ» արտահայտությունը, որ մենք փոխարինում ենք «հայ վերաբնակիչների բեկորներ»-ով:
7. Աթենի ս. Սիոնի և Մցխեթայի ս. Խաչ (Ջվարի) եկեղեցիների կառուցման ստուգված ժամանակագրությունն ու կառուցող ճարտարապետի ինքնության հարցերը քննության են առնված 4-րդ կետում նշված մեր աշխատության մեջ: Ցավով պիտի արձանագրենք, որ վրացագիտական որոշ հրապարակումներում պարզապես վերակրկնվում է պրոֆ. Գ. Չուբինաշվիլու նպատակադիր թվագրությունը:
8. Նրանց հավաքական հրապարակությունն ու քննությունը տե՛ս ***П.М. Мурадян***, Армянская эпиграфика Грузии: Картли и Кахети, Ереван, 1985, стр. 153-170, նաև նույնի՝ Армянская эпиграфика Грузии: Тбилиси, Ереван, 1988, նաև՝ Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009:
9. Անուրանալի է ոչ միայն «հայ առևտրական և արհեստավորական խավերի», այլև Վրաստանում բնակություն հաստատած հայ երկրագործ աշխատավորության ու իշխանազունների, ողջ զանգվածի ընդգրկված լինելը Վրաց աշխարհի կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ զենքը ձեռին պաշտպանությունից մինչև երկրագործություն ու բարիքների արտադրություն: Եվ այդպես էր ոչ միայն Վրաստանում, այլ նաև ուրիշ երկրներում հիմնված հայոց գաղթօջախներում (Ռուսաստան, Մոլդովա, Լեհաստան, Ռումինիա, Բուլղարիա, Հոլանդիա, Ավստրիա և այլն):

Հարյուրամյակների ընթացքում այլէթնիկ միջավայրում հաստատված հա-

յություն, բնականաբար, ներածում էր տեղական հասարակության մեջ, յու-
րացնում նրա լեզուն, երբեմն նաև դավանությունը, մշակույթը, կենցաղը, բայց
այդ երկրների պատմությանը ծանոթ չեն քիչ թե շատ շոշափելի իրողություն-
ներ, որ տեղական բնակչության զանգվածները մոռանային իրենց բուն էթնիկ
պատկանելությունն ու դավանանքը և ընդունեին եկվոր հայության անունն ու
կրոնը, այսինքն ռուսը, մոլդովացին, լեհը, ռումինացին, բուլղարը և մյուսնե-
րը իրենց այլևս *հայ* կամ *հայադավան* հորջորջեին: Մինչդեռ XIX երկրորդ
կեսի վրաց մամուլում սկսեցին երևալ ակնարկներ, թե Վրաստանի հայ բնակ-
չության մեկ հատվածը ոչ թե էթնիկապես հայ է, այլ հայադավան (գրիգոր-
յան, լուսավորչական) վրացի, որը իրեն հայ է ճանաչում: Այս «տեսությունը»,
որի առավել հոգի ի բոխ «վավերացնողը» Զաքարիա Ճիճինաձե անունը կրող
և իրեն պատմաբան համարող լրագրող էր («Վրացի գրիգորյաններ» 1906
թ. լույս տեսած վրացերեն գրքում նա ներկայանում է «Շավշեցի» կեղծանու-
նով), լրջմիտ ու ակադեմիական վրաց գիտնականների միջավայրում լիովին
արհամարհվեց, քանզի անկարելի է, որ *սեփական երկրում, սեփական*
իշխանության ու Մցխեթի կաթողիկոսության հովանավորությամբ
ապրող ուղղափառ վրացին թողներ պատկանելությու-
նը և հարյուրավոր բնակավայրերում (նրանց ցուցակը կարելի է գտնել
Շավշեցու նշված գրքի 41, 44, 49, 52-53, 94-112 էջերում) *հայանար*: Հայա-
ցումը նրան որևէ հարկից չէր ազատում, ճորտին ճորտատեր չէր դարձնում,
եթե չասենք *հակառակը*՝ մեծացնում էր նրա պարտույթը: XVII դարի վրաց
պատմիչ, Վրաստանի ներքին ու արտաքին կացությանը քաջածանոթ, Վրաս-
տանի շահերը ներկայացնելու համար իսլամ ընդունած Փարսադան Գորգի-
ջանիձեն մի դիպվածի առիթով խղճմտորեն հայոց դատն էր պաշտպանում,
որովհետև «Քարթլիում վրացիները բազում են և զորեղ, իսկ հայերը՝ քիչ ու
անզոր»: (Հմմտ. **ივ. ჯავახიშვილი,** თხზულებანი..., ტ. VIII, გვ. 283):
Հարկավ այդ հորինովի «տեսության» հետևողությամբ «Հայածես վրացի-
ներ» հասկացությունը Թամարաշվիլին (Տաշյանի խոսքով՝ «ինքն իսկ հայկա-
կան ծագման») փորձեց տարածել նաև վրացի կաթոլիկների վրա, մոլորութ-
յան մեջ գցելով և որոշ օտար հեղինակների (տես Հ Յ. *Տաշեան*, Տայք, դրա-
ցիք և Խուրորջուր, Վիեննա, 1973, էջ 40-41):
Թվում է՝ այս ամենը այլևս մոռացվել էր, և Վրաստանի *բազմահատոր*
պատմությունները «վրացի գրիգորյաններ» և «հայածես վրացիներ» չգի-
տեն, բայց ահա՝ վերջին տասնամյակներին Վրաստանի ԳԱ Պատմության
ինստիտուտում հանձնաժողով սկսեց գործել (առ այդ կա Թոփչիշվիլու հաշ-
վետու հոդվածը), որը լիազորություն ուներ վերականգնել *հայերի վրացա-*
կան անուն-ազգանունը, ուրեմն և *վրացի* լինելը: Սա, իհարկե, գիտության
հետ կապ չունեցող կեցվածք է, բայց, պարզվում է, հղի է «ակադեմիական»
հետևանքներով. 2009 թ. Վրաստանի Ազգային թանգարանի և Իվ. Ջավախիշ-
վիլու անվան Պետական համալսարանի հրապարակությամբ լույս տեսավ

Գիորգի Գոգոշիձեի և Նաթիա Ջանդյաձեի «Միաբնակ եկեղեցիները Վրաստանում» (ճարտարապետություն, բարձրաքանդակներ, վիմագրեր) գրքի առաջին հատորը` *Սպորիև Քարթլի*, ուր «վրացի գրիգորյանները» պրոֆ. Ջազա Ալեքսիձեի և Դիմ. Թումանիշվիլու խմբագրությամբ վերակենդանացել են, և նկարագրված միաբնյա 55 հուշարձանների նշանակալի մասը նրանց կերտածն է: Ի դեպ, հայացած վրացիների «պեսության» եռանդուն կիրարկողներից մեկը Անանիա արքեպ. Ջափարիձե է, մյուսը` դ-ր Գուրամ Մայսուրաձեն: Գրքի վերջում այդօրինակ գրականության ցանկ է կցված: Զ. Ճիճինաձեն իր հորինվածքը իբրև իրողություն մատուցելու համար վրաց հասարակությանը, հոգևորականներին ու իշխանավորներին անկարելի և աններելի հատկություններ է վերագրում` ուրացություն, հացկատակություն, էթնիկ նկարագրի բացակայություն և այլն` միայն թե ճանապարհ հարթի «գրիգորյան» դարձնելու համար: Մերօրյա առանձին հեղինակները փոխանակ այդ զրպարտանքները հերքելու` ոդեգրվել են հանիրավի «պեսությանը» և նյութականացնում են այն` միաբնակ եկեղեցիներ հատկացնելով սեփական երկրում կամովին օտարացած «վրացի գրիգորյաններին» (այս կապակցությամբ տես մեր նախորդ հրապարակումները. «Грузины григорянского происхождения?! Миф или реальность» - «Эпоха», 1990, N8, նաև` Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009, էջ132-133):

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(«Գեղարուեստ», VII, Թիֆլիս, 1921, էջ 34-49)

1. Վրաց մատենագրության պատմության այս շրջափուլին Լ. Մելիքսեթ-Բեկի տված անվանումը հենվում է «սոմեխ-ի» էթնանվան Ն. Մառի այն տարիների ստուգաբանության վրա և փաստորեն պիտի ընկալել իբրև via-armeniaca-ի համազոր եզր: Լ. Մելիքսեթ-բեկի հրապարակման տարիներին դեռ լույս չէր տեսել Կ. Կեկելիձեի «Հին դպրություն» (կամ` Վրաց հին գրականություն) հիմնարար աշխատության առաջին հատորը, ուր կատարվում է վրաց հին մատենագրության պարբերացում: Այդ աշխատությունը հեղինակի կենդանության օրոք լույս տեսավ չորս անգամ և այսր էլ ուզածդ լուրջ վրացագետի սեղանի գիրքն է: Կ. Կեկելիձեն ևս հիշյալ առաջին շրջանը հատկորոշում է հայ-վրացական գրական-դավանական միասնության տարբերակումով (տե՛ս **კ.კეკელიძე**, ქართული ლიტერატურის ისტორია, ტ. I[4], თბ., 1960, გვ.):
2. «Տայք – Կղարջյան» շրջափուլի հայ-վրացական մատենագրական առնչությունների առաջին ուրվագծողն ու հետազոտության մեթոդի մշակողը, նաև հուշարձաններից շատերի երևան բերողը հայ-վրացական բանասիրության հիմնադիր ակադ. Նիկողայոս Մառն էր: Նրա` Из поездки на Афон (1899) և "Агиографические материалы по грузинским рукописям Ивера" (1901) աշխատությունները հիմնաքարեր դարձան հայագիտության ու վրացագիտության, ավելի ստույգ` կովկասագիտության նոր դպրոցի համար: Պրոֆ. պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկը, Ռ. Բլեյկը, Գ. Ղափանցյանը, Ա. Շանիձեն, Ի. Աբուլաձեն և ուրիշներ իրենց գիտական վաստակի ինչ-ինչ արդյունքներով պարտական են այդ դպրոցին և նրա մշակած նորմերին: Տայք-Կղարջյան շրջանի հուշարձանների հրապարակում և քննություն տես **ილია აბულაძე**, ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX-X სს-ში, თბილისი, 1944; «Հայոց «Վարք սրբոցի» վրացական խմբագրությունը», թարգմանությունը հին վրացերենից և ուսումնասիրությունը Պարույր Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008:
   «Կանոնադրության» կամ «Սահմանքի» հունարեն և վրացերեն խմբագրությունները հայտնաբերված և հրապարակված են, հայերենը տակավին անհայտ է: Բնագրերի, թարգմանությունների հրապարակումն ու նրանց շուրջ եղած գրականությունը կարելի է գտնել. **სიმონ ყაუხჩიშვილი**, გეორგიკა, V, გვ. 83-317; **აკაკი შანიძე**, ქართველთა მონასტერი ბულგარეთში და მისი ტიპიკონი: ტიპიკონის ქართული რედაქცია, თბ., 1971; *В.А. Арутюнова-Фиданян*, Типик Григория Пакуриана, Ереван, 1978.
3. «Ընձեւավորի» գրության ժամանակը Թամար թագուհուն հաջորդող դարաշրջանով էր թվագրում նաև ակադ. Կ. Կեկելիձեն (տես նրա` ქართული ლიტერატურის ისტორია, ტ. II, თბ., 1958, გვ. 154-155):
4. Զաքարիա Ճիճինաձեի այդ հորինովի «պեսության» մասին տես Լ. Մելիքսեթ-Բեկի «Հայերը Վրաստանում» հոդվածի առիթով մեր գրած N 9 ծանոթագրությունը:
5. Վահրամյանների ճյուղագրությունն ու տոհմի ներկայացուցիչների քաղաքական-վարչական գործունեությունը տե՛ս *Արտ. Շահնազարյան*, Վահրամյանների իշխանությունը, Երևան, 1990:
6. Ի դեպ, Թմոգվի կամ Թմոք բնակավայրում է ծնվել հայոց միջնադարի երևելի գործիչներից Գրիգոր Տաթևացին: Մատենադարանի N 6607 ձեռագրում պահպանվել է նրա վարքը, որ ակադ. Լ. Խաչիկյանի ենթադրությամբ հեղինակած պիտի լինի Մատթեոս Ջուղայեցին: Վարքում ասվում է. «Սքանչելի այրս Աստուծոյ էր ազգաւ Հայկազնի, աշխարհաւ կրկնակի` ի հայրենական տոհմէ Քաջբերունի և մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ, ի գեղաւանէն Փարպոյ, ծնեալ աշխահին Վրաց, ի յամուրն Թոմք և սնեալ ի ձեռն հարազատ եղբօրն` ի պան թագաւորին Դաւթի...» («ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 103): Թմոգվի /Թմոքին վերաբերող պատմական համառոտ ակնարկ ունի Լ. Մելիքսեթ-Բեկը` հայերին առնչվող հրապարակումով (տես **ჰოვ. თუმანიანი**. თმოგვის-ციხის ალება. თარგმანი სომხურედან და შესავალი წერილი პროფ. ლ. მელიქსეთ-ბეგისა, თბილისი, 1939): Սարգիս Թմոգվեցին է համարվում Գորգանիի «Վիս ո Ռամինի» հին վրացերեն թարգմանիչը, կատարված XII վերջին (տես **კ.კეკელიძე**, նշվ. աշխ., h. II, էջ 56-60):

7. Այստեղ մի քանի տող կրճատում ենք, որովհետև դժվար է ասել, թե նա ինչ չափով է պահպանած եղել արևելյան ավանդավեպի հեքիաթային-առասպելախառն սյուժեն: Արչիլ թագավորի բառարանում գործածված «մարիլիանի» բառը «աղալի»-ի փոխարեն կարելի է համադրել հայերեն «աղուոր» արտահայտության հետ: «Փիրմալիանի» արձակ տարբերակի մասին տե՛ս **კ.კეკელიძე**, նշվ. աշխ., էջ 433-437:
8. «Ընձենավորի» հայազգի գրիչների ու ծաղկողների մասին ավելի ընդարձակորեն տե՛ս **ლ.მელიქსეთ-ბეგი**, სომეხი გადამწერნი "ვეფხისტყაოსნისა".- «ლიტ. მემკვიდრეობა» I, 1935, გვ. 665-670; *Դարույր Մուրադյան*, «Ընձենավորը հայոց գնահատությամբ».- «Ընձենավոր», Երևան, 1966, էջ 273-286:
10. Փիլիպոս Ղայթմազաշվիլու մասին տե՛ս նաև՝ *Л. Меликсет-Беков*, К биографии священника Филиппа Кайтмазова (XVIII века).- "Христ. Восток", т. VI, вып. 3(1922), стр. 281-284. *նույնի*՝ ნაკვეთი მეXVIII საუკუნის ქართული ლიტ. ისტორიიდან.- "ლომისი", ტფ. N 16, 1922, **კ.კეკელიძე**, ქართ. ლიტ. ისტ. ტ. I,1960,გვ. 364-369; *П.М. Мурадян*, Армяно-грузинские лит. взаимоотношения в XVIII века, Ереван, 1966, стр. 115-122.
9. Լ.Մելիքսեթ-Բեկի «Հայերը վրաց հին գրականության մեջ» հոդվածի վերջում «Գեղարուեստի» խմբագրությունը, իբրև թեմայի շարունակություն, զետեղել է վրաց հայտնի մշակութային ու հասարակական գործիչ, իշխան Գ. Թումանյանի (Թումանիշվիլու) «Հայերը վրաց նոր գրականության մեջ» հաղորդումը, այն ուղեկցելով խմբագրության հասցեագրված նամակով (1919 թ.). հեղինակը խնդրել է հոդվածը հրապարակել հայերեն թարգմանությամբ՝ և եթե հնարավոր է «կարևոր լրացումներով ու պատկերներով» (էջ 54): Պատկերներն այստեղ վերարտադրելը իմաստազուրկ է և տեխնիկապես անկարելի, ուստի պատշաճ նկատեցինք առանց միջամտության կրկնել տեքստը: Թարգմանությունը կատարել է Պ. Աբելյանը:

ՀԱՅԵՐԸ ՎՐԱՑ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թիֆլիսում վերջերս վախճանվեց Գեղեոն Միրաղյանը, որը շատ տարիներ միաժամանակ խաղում էր հայկական և վրացական բեմերում: Միրաղյանը լուրջ և բարեխիղճ դերասան էր, ընդ սմին՝ և շատ աշխատունակ էր: Միրաղյանը իր կյանքում խաղացել էր անչափ քանակությամբ պիեսներ՝ և՛ ժամանակակից, և՛ դրամաներ, և՛ կատակերգություններ՝ և՛ ինքնուրույն, և՛ թարգմանական: Նա խաղում էր տակավին այն ժամանակ, երբ հայկական և վրացական բեմերը դեռևս նոր էին պատահականից մշտականի վերածվել, և երբ սիրողները հենց նոր էին պրոֆեսիոնալ արտիստներ դարձել: Այդ շատ դժվար ժամանակ էր: Ոչ փորձված դերակատարներ կային, ոչ փորձված ռեժիսորներ, ոչ էլ ինքնուրույն ռեպերտուար, ամեն ինչ ինքդ պետք է սկզբից ստեղծեիր:

Միրաղյանի այս կորստի ծանր տպավորության տակ ես մտքով ետ նայեցի և

հիշեցի մի քանի բան տեղական բեմի անցյալից: Ըստ որում՝ ես չէի կարող ուշադրություն չդարձնել այն երևույթի վրա, որ հայերը առհասարակ խոշոր դեր խաղացին վրացական թատրոնի ստեղծման գործում: Այս առթիվ տակավին այն ժամանակ ես զետեղեցի «Закавказск. слово» թերթում երկու հոդված՝ «Հայերը վրացական բեմում» վերտառությամբ. (տես նույն թերթի 1919 թ. փետրվարի 13-ի և 14-ի համարները): Ի լրացումն հիշյալ հոդվածների՝ ես այստեղ տալիս եմ մի փոքր ուրվագիր վրաց նոր գրականության մեջ երևցած հայերի մասին այն պատճառով, որ այստեղ ևս հայերի մասնակցության բաժինը փոքր չէ: Այս նյութին մեծ նշանակություն եմ տալիս, որովհետև վերջին ժամանակներս, դժբախտաբար, սաստիկ սուր կերպարանք են ստացել այս՝ վաղուց անտի միասին ապրող և ազգակից ժողովուրդների հարաբերությունները: Եւ ամեն մի հասարակական գործիչ, որ նպաստում է այդ ազգերի մերձեցմանը, ուշադրության և շնորհակալության է արժանի հայկական ու վրացական և, ընդհանրապես, տեղական ամբողջ հասարակության լայն խավերի կողմից:

ՋՈՒՐԱԲ ԱՆՏՈՆՈՎ

Երբ ես գրում եմ այս տողերը, հիշողությանս մեջ ակամայից գալիս է վրացական թատրոնի հիմնադիրներից մեկը, դրամատուրգ և դերասան Ջուրաբ Անտոնովը, որին անարդարացիորեն մոռացության են տվել վրացական թատրոնի պատմագիրները:

Ամեն մեկը հիշում է Գևորգ Էրիսթովի անունը: Նա նախկին փոխարքա իշխան Միխ. Վորոնցովի հովանավորությամբ 1850 թվին հիմնվեց վրացական թատրոնը և գրեց առաջին պիեսները վրացերեն լեզվով: Վրացական թատրոնի պատմաբանները Էրիսթովի ծառայությունները, որպես վրացական մշտական բեմի կազմակերպողի, բարձր են դասում: Վրաց գրականության պատմաբանները մանրամասն գրադատականներ են նվիրում Էրիսթովի պիեսներին, որպես ժամանակակից բարքերի տաղանդավոր երգիծաբանության:

Իսկ Ջուրաբ Անտոնովի գրադատները ընդհանրապես բնորոշում են իբրև ֆարսերի հեղինակի և սովորական դերասանի: Նույնիսկ Միրաղյանը, անելով «Գեղարվեստի» մեջ (տես N 4) վրացական թատրոնի պատմությունը և խոսելով այդ թատրոնի մեջ հայերի ունեցած մասնակցության վերաբերմամբ՝ Ջուրաբ Անտոնովի մասին հիշատակում է միայն թեթևակի, ըստ որում՝ անգամ մոռանում է նրա իսկական անունը և սխալմամբ անվանում է նրան *Զախարի Անտոնով*:

Այնինչ՝ Անտոնովի հետ միասին ներկայումս մոռացված վրացական ամենալուրջ քննադատները Անտոնովին համարում էին ոչ միայն ֆարսերի հեղինակ, այլև լուրջ դրամատուրգ, որ ընդունակ էր հաճախ տալու իսկական գեղարվեստական երկեր: Բացի այդ՝ թեև Անտոնովը սկսեց գրել Էրիսթովից հետո և վերջինիս ազդեցության տակ, այնուամենայնիվ, կարողացավ Էրիսթովից շատ գրել, և Անտոնովի պիեսները մինչև այժմ, գրեթե 70 տարի անց, բեմից վայր չեն եկել, թեև, պիտի ասել, որ նրանք բավականին հնացել են:

Ես այստեղ չեմ գրում այդ՝ խորապես դժբախտ դրամատուրգի կենսագրությունը: Նրա մասին ես երկու անգամ գրել եմ ռուսերեն լեզվով իմ «Բնութագրերի և հիշողությունների» մեջ (տես 1 և 2 հրատ., Թիֆլիս, 1900 և 1913 թ.): Միայն կասեմ, որ այս մարդը առանց որևէ կրթության կարողացավ առաջ գնալ շնորհիվ բացառապես իր փայլուն տաղանդի և վաղաժամ մեռավ մի պատահականությունից.— նրան պատառոտեց մի կատաղած շուն:

Չվստահանալով իմ քննադատական ձիրքին՝ ես կբերեմ Անտոնովի երկերի մասին այն կարծիքները, որ հայտնել են երկու բավականին խիստ քննադատներ:

Առաջինը՝ նկատի ունեմ երկու բանասիրական, որ նվիրված են Անտոնովի պիեսների լրիվ հավաքածուին և լույս են տեսել 1876 թվին «დროება» («Դրոէբա») թերթում (տես NN 33 և 34): Այդ հոդվածները պատկանում են շատ քչերին ծանոթ մի քննադատի, որ ստորագրված է Ա. Ք. սկզբնատառերով: Նա Թիֆլիսի ազնվականների գիմնազիայի դասատու Արիստո Քութաթելաձեն էր, մի համալսարանավարտ և կարդացած մարդ, գրական զարգացմամբ մի անձն, որ սիրում էր թատրոնը և կարողանում էր գնահատել գեղարվեստական երկերը: Քութաթելաձեն հազվադեպ էր գրում, բայց գրում էր միշտ գործին հմուտ:

Նա վերլուծում է Անտոնովի բոլոր երկերը և խստիվ տարբերում է իսկական կատակերգությունը անբովանդակ զավեշտներից:

Ահա ինչպիսի կարծիք է հայտնում քննադատը՝ Անտոնովի ամենանշանավոր և ժողովրդականացած՝ «მზის დაბნელება საქართველოში» (Արեգակի խավարումը Վրաստանում) պիեսի մասին. «Արեգակի խավարումը» կատակերգության մեջ ամենից ավելի ամբողջականությամբ և հարազատությամբ,- ասում է Քութաթելաձեն,- ուրվանկարված են ժամանակակից վրացիների հայացքները և դեպքերի ընթացքը: Պատմականորեն ուղիղ են հաղորդվում ազնվականների, առևտրականների կարծիքները արեգակի խավարման, ուսման, երիտասարդությունից դժգոհ լինելու մասին»: «Ահա կյանքի իսկական պատկերը,- բացականչում է հեղինակը: Լավ է այն գրողը, որ վառ կերպով կուրվանկարե ժամանակակից կյանքը: Հարգանքի են արժանի այդպիսի գրողները: Նրանք այնպիսի կնիք են դնում կյանքի վրա, որ հասարակությունը հետաքրքրությամբ է նայում այդ կյանքին»:

Այս տեսակետից քննադատը վերլուծում է Անտոնովի մյուս ժողովրդական պիեսը նույնպես «მოგზაურობა ტივებზე» («Լաստով ճանապարհորդելը»), սակայն նա կարծում է, որ քիչ են շաղկապված միմյանց հետ առաջին և երկրորդ արարվածները:

Բայց՝ քննադատը բոլորից բարձր համարում է «ხევსურთა ქორწილი» (Խևսուրցիների հարսանիքը) պիեսը: Բախտավոր է այն ժողովուրդը,— բացականչում է Քութաթելաձեն,— որ այսպիսի պիեսներ շատ ունի: Եթե Անտոնովը իր կյանքում այլևս ոչինչ չգրեր, նրան պետք էր համարել նույնքան տաղանդավոր, թեև նրա ազդեցությունը հասարակության վրա կլիներ ավելի փոքր: Այստեղ երևան է եկել հեղինակի իսկական բանաստեղծական տաղանդը: Մարդ այս պիեսը սկզբից մինչև վերջ այնպիսի հաճույքով է կարդում, որ չի կամենում ընդհատել ընթեցումը: Եվ ինչքան էլ որ կարդաս այդ գրվածքը, նա չի կորցնում իր հետաքրքրությունը:

Հափշտակությամբ պատմելով պիեսի բովանդակությունը, քննադատը նորից խոսք չի խնայում գովելու այդ աշխատությունը:

Անտոնովի մյուս երկերը քննադատը գտնում է ավելի թույլ, թեև նրանց մեջ ևս նա տեսնում է որոշ արժանիքներ:

Մ. Թումանովը (իմ հայրը), Էրիսթովի և Անտոնովի ժամանակակիցը, վերջինի մասնակցությանը վրացական թատրոնում տալիս էր մեծ նշանակություն:

Մ. Թումանովը 1855 թվին «Кавказъ» թերթում գրում է, ի միջի այլոց, հետևյալ տողերը. «Արիաբար բեմը պահում էր միայն և միմիայն Անտոնովը*, — ժիր և անվեհեր Ջուրաբը: Սակայն՝ նրա գործունեության մեջ արդեն բուն էր դրել մահը, և Անտոնովը հանգավ վաղաժամ, թողնելով մի ասպարեզ, որին սպասավորում էր այնպիսի հավատարմությամբ, սիրով ու հաստատակամությամբ:

Նույն հեղինակը մի այլ հոդվածում «Դրոէբա» թերթի մեջ, վերլուծելով Անտոնովի վերոհիշյալ «Լաստով ճանապարհորդելը» պիեսը, նկատում է, որ այդ երկը ունկնդիրների մեջ առաջ էր բերում անընդհատ և առողջ ծիծաղ: Քննադատը պիեսի մեջ տեսնում է դարի հարազատ պատկերացումը՝ ինչպես Ֆոն-Վիզինի, Գրիբոեդովի և Գոգոլի անմահ երկերի մեջ, և Անտոնովին Էրիսթովի շարքն է դասում:

Պետք է նկատել, որ իմ հայրը, ինքը բանաստեղծ և խիստ-քննադատ, շատ նեղամտությամբ չէր վերաբերվում իր վերլուծած ժամանակակից հեղինակներին:

Մեզ թվում է, թե բավական են նույնիսկ այս մի քանի կարծիքները, որ հանգուցյալ Անտոնովը չհամարվի այնպիսի փոքր մեծություն, ինչպես այդ կարելի է եզրակացնել այն անհասկանալի լռությունից, որ պահում են այս հեղինակի վերաբերմամբ վրացական թատրոնի պատմաբանները և մեր ժամանակի վրաց քննադատները: Նրանք ամենքն էլ, կարծես միաձայն, բոլոր ծառայությունները վերագրում են Էրիսթովին, հիրավի, նշանավոր դրամատուրգին, սակայն գրեթե միշտ, լռությամբ են անցնում Անտոնովի ծառայությունների մոտով:

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ

Վրաստանը գեղեցիկ երկիր է: Նա ոչ միայն ինքն է տալիս հռչակավոր բանաստեղծներ, այլև գրավում է նրանց դեպի ինքը այլ երկրներից: Հիշենք, օրինակ, ռուս գրողներ Պուշկինին, Լերմոնտովին, Գրիբոեդովին և այլոց, որոնց ոգևորել է Վրաստանը:

Մանավանդ հայերը, որ հնուց արդեն իրանց զգացել են վրացիների հետ հարազատ և կարողացել են տալ նրանց բազմաթիվ տաղանդավոր բանաստեղծներ

* Այդ ժամանակ, տեսնելով այն աննպաստ պայմանները, որոնց մեջ դրված էր վրացական թատրոնը, Էրիսթովը սառել էր դեպի նա:

և աշուղներ: Հռչակավոր աշուղ Սայաթ-Նովան, որի երգերը մինչև օրս երգում են հայերը, վրացիները և թաթարները, իր հայերեն երգերը գրելուց առաջ գրել ու երգել է վրացերեն, ու ինքն էլ եղել է Հերակլ Բ-ի պալատական բանաստեղծ-երգիչը:

Ի դեպ՝ նկատենք, որ անցյալ տարի առաջին անգամ հրատարակվեց Սայաթ-Նովայի վրացերեն երգերի ժողովածուն՝ խմբագրությամբ և գրաղատա-կենսագրական հոդվածով ժամանակակից վրացական բանաստեղծ Գրիշաշվիլու (իսկական ազգանունը Մամուլաշվիլի), որ կիսով չափ (մոր կողմից) հայ է[*]:

Դժբախտաբար՝ մենք տեղեկություններ չունինք այն մասին, թե իսկապես քանի՞ հայ աշուղներ են երգել Վրաստանում, և՛ ո՞վքեր են եղել նրանք: Բայց գիտենք, որ այդպիսի աշուղներ շատ են եղել:

«Սայաթ-Նովայի» ժամանակակից մեզ ծանոթ են Դոստի, Ղալո-Բաղդասար, Ալվան օղլան, Շամչի-Մելքոն ազգով-հայ աշուղները, որոնք մեծագույն չափով իրանց երգերը հորինել են ու երգել վրացերեն: «Բազմաթիվ վրացերեն երգեր է գրել և վրաց երգասեր հասարակության մեջ հավասար արժեք ունի մեր ժամանակակից աշուղ Հագիրին» (Խմբ.): Վրաստանի՝ անցյալ դարի հռչակավոր բանաստեղծներից մինը, Իլ. Ճավճավաձեն, կիսով չափ հայկական ծագում ունի (մոր կողմից): Նույնպիսի ծագում ունեին և բավականին հայտնի բանաստեղծներ և դրամատուրգներ՝ իշխ. Դավ. Էրիսթավին, «სამშობლო» (Հայրենիք) հայտնի դրամայի հեղինակը և իշխ. Ի. Մաչաբելին, Շեքսպիրի և Մոլիերի վրացերեն թարգմանիչը, հայտնի հասարակական գործիչը և ժուռնալիստը:

Անցյալ տարի վրաց մամուլը պատվեց վրացական բանաստեղծ և հրապարակախոս Մ. Թումանովի (իմ հոր) հիշատակը՝ նրա ծննդյան հարյուրամյակի առթիվ[**]:

Նրա մյուս ժամանակակիցը և ինչպես նրա, այնպես և հռչակավոր վրացական բանաստեղծ Նիկ. Բարաթաշվիլու դպրոցական ընկեր Մ. Բեհբությանը (նույնպես հայ) թարգմանել է վրացերեն լեզվով Կռիլովի առակների գրքույկը[***]:

Վերոհիշյալ Իլ. Ճավճավաձեի հրատարակած «ივერია» (Իվերիա) թերթի աշխատակից, ֆելիետոնիստ և բանաստեղծ Ա. Հախնազարյանը նույնպես հայ է ծագումով: Այս սեղմ հոդվածում հնարավորություն չունենք թվելու բոլոր հայերին, որ աչքի ընկնող ծառայություն են մատուցել վրաց գրականությանը: Մենք այստեղ կամենում ենք միայն նկատել, թե անշահ աշխատանքի այս ասպարեզը, որ փոգորված է միայն դեպի բանաստեղծությունը և հասարակական սպասավորությունը եղած սիրով, օտար չէ եղել հայերի համար, հայերի, որոնց շովեն վրացի-

[*] Այս երիտասարդ բանաստեղծին համարում են վրացական բանաստեղծության նշանավոր ներկայացուցիչներից մեկը նույնիսկ այնպիսի խիստ քննադատներ, ինչպիսիք են Կիտա Աբաշիձեն և վրացական ժամանակակից այլ քննադատներ:

[**] Ես այստեղ չեմ հիշատակում մեր տոհմի մյուս անդամներին, որ նույնպես դեր են խաղացել վրացական գրականության և թատրոնի մեջ: Բացի այդ՝ հայտնի են անցյալ դարի բանաստեղծներ Գ. և Դ. Թումանովները (տես Դ. Չուբինովի Ծաղկաքաղը):

[***] Սրան չպետք է շփոթել մյուս Մ. Բեհբությանի, վրացական ներկայացումների նախկին ռեժիսորի հետ:

ներից ոմանք մեղադրում են Վրաստանին խորթ վերաբերվելու և շահամոլության մեջ:

Մենք համոզված ենք, որ կգա ժամանակ, երբ կանցնեն ժողովուրդների մեջ եղած սուր շփումները, և մենք հուսով ենք, այն ժամանակ ըստ արժանվույն կգնահատվի այն գանձը, որ հայերը մտցրել են իրենց հարևանների մտավոր կյանքի շտեմարանը:

Ուրեմն զուր տեղը չէ որ հայերը ապաստան և հյուրընկալություն են վայելել իրենց հին բարեկամների մոտ:

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԻ 874 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Արմֆանի «Տեղեկագիր», 1940, N 4-5, էջ 117-118)

1. Պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի վկայակոչած Eriaini ընթերցումը մասնագիտական գրականության մեջ վաղուց վերանայվել է՝ Er-bu-ù-ni և վերջինիս վերածումը *Էրեբունի*-ի նկատվել օրինաչափ (արձանագրությունների բնագրերը, թարգմանություններն ու գրականությունը տես *Н.В. Арутюнян*, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, стр. 161_{33}, 214_{4}): Հարցին նվիրված մենագրական ուսումնասիրություն տե՛ս *Մարգարիտ Իսրայելյան*, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 8-20:
2. Սեբեոսի՝ Գ.Աբգարյանի հրատարակած բնագրում Երևանին վերաբերող հատվածը այլ ընթերցմամբ է ներկայացված. «Եւ եկին ժողովեցան *ի Ւէ-րևան, և* մատեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ» (Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, 1974, էջ 145, հմմտ. էջ 314, ծան. 512): Սրբագրության անհրաժեշտությունը ծանոթ է եղել Թ. Ավդալբեգյանին, Հ. Մանանդյանին և այլոց, սակայն հիմնավորումով այն կատարել է Սեբեոսի նոր աշխատասիրողը (տես *Գ.Վ. Աբգարյան*, «Երևանի» բերդի հնագույն հիշատակությունը.- «Լրաբեր», 1972, N 8, էջ 24-31): Ուրեմն Սեբեոսի մոտ *Երևանը* չէ հիշատակված:
3. Ափսոսանքով պետք է նշել, որ Գեղարքունիքի վիմագրությանը նվիրված «Դիվան հայ վիմագրության» IV պրակում, (Երևան, 1973) Սևանի կղզու հուշարձանները ընդգրկված չեն: Սևանի արձանագրության վերծանությունը Լ. Մելիքսեթ-Բեկը կատարել է 1924 թ. գիտարշավի ընթացքում: Մինչև հայերեն սույն հոդվածի հրապարակումը, լուսանկարով ուղեկցվող վերծանությունը լույս է ընծայել «Памяти академика Н.Я. Марра (1864-1934)» հատորում (М.-Л.-д, 1938, стр.409-415): Պիտի խոստովանել, որ դյուրին ընթերցվող բնագիր չէ, և պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը հնագրական ու աղբյուրագիտական հետապնդման հմտությամբ է կատարել վերծանությունը: Արձանագրությունը հեպատշաճ...

ները բացատրելիս:

4. Արժանին պիտի հատուցել երիտասարդ Լ. Մելիքսեթ-Բեկին՝ Ստ. Օրբելյանի Պատմության մեջ սույն արձանագրության արձագանքը գտնելու և վկայակոչելու համար:

XVI ԴԱՐՈՒ՝ ԱՍԼԱՆԻ ՈՐԴԻ ՍԱՐԳՍԻ ՔԱՌԱԼԵԶՎՅԱՆ ՀԱՂՎԱԳՅՈՒՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
(ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1946, N 7, էջ 31-38)

1. Վերահրատարակությունը տե՛ս *Կարո Ղաֆադարյան*, էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության, Երևան, 2007, էջ 189-206:
5. Սրբագրյալ նոր վերծանութուն տե՛ս *П.М. Мурадян*. Армянская эпиграфика Грузии: Картли и Кахети, Ереван, 1985, стр. 153-162.
2. Գարեջա անապատի և նրա պատերին եղած այլալեզու արձանագրութունների մասին տես *П.М. Мурадян*, նշվ. աշխ., էջ 171-198:
3. Հիրավի այդ *առաջին* և *միակ* արձանագրությունը ժամանակին պահպանության պատշաճ ուշադրության չարժանացավ, ուստի անճանաչելի դառնալու չափ հողմնահարվեց: Այսօր քառալեզվյան արձանագրության ուսումնասիրությունն ավելի է դժվարացել՝ վրաց-ադրբեջանական սահմանագծին հայտնվելու և պատկանելության շուրջ ստեղծված քաշքշուկի պատճառով:

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԱՅԱՆԵԻ ՎԱՆՔԵՐԻ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ՉԱՓԱԾՈ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԸ
(«Էջմիածին», 1959, Դ., էջ 34-38)

1. Փաստորեն այս հոդվածը նույնն է, ինչ մեկ տարի առաջ «Մի էջ հայ-վրացական ֆոլկլորային կապերի պատմությունից» խորագրով հրապարակվածը («Տեղեկագիր», 1958, N 7, էջ 59-67): Հայաստանում եղած վրացերեն արձանագրությունների ուսումնասիրություն-ժողովածու հրապարակելիս (1977 թ.) Դավիթ Էնազեթցու մոր տապանագիրը գտնելու փորձերը ևս արդյունք չունեցան, ուստի այն քաղել ենք Լ. Մելիքսեթ-Բեկի երիցս կատարած հրապարակումից (տես *Պարույր Մուրադյան*, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 87-96):

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ի   Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

З А М Е Т К И

1. Несколько слов о термине "сомех" (Христ. Вост.
т. VI, вып. I, стр. 93-94)
Հայոց հավաքականությունը ներկայացնող «հայ», «սոմեխ-ի», «արմանի/ար-
մեն» էթնոնիմների ստուգաբանությունը հայագիտության առավել կնճռոտ ու
վարողունակ խնդիրներից է, և առկա բոլոր բացատրության փորձերը վարկածա-
յին են: Համոզվելու համար կարելի է վերստին կարդալ հին պատմության ամե-
նագիտակ պրոֆ. Ի. Դյակոնովի դիտարկումը «հայ», կամ նունքան խորագիտակ
ակադ. Գր. Ղափանցյանի՝ «քարթվել-ի» էթնոնիմների առաջարկած մեկնաբա-
նությունները:
Երիտասարդ Լ. Մելիքսեթ-Բեկը փաստորեն «սոմեխ-ի» ստուգաբանության
հավակնություն չունի, բայց արդարացված համարձակություն ունի առարկելու
«Хр. Вост.» ակադեմիկոս խմբագրին՝ «սոմեխ» տերմինի մեջ «սո»-ն «սա»-յի
հետ նույնացող նախածանց չհամարելով:
Ն. Մառը չի մերժում Լ. Մելիքսեթ-Բեկի առարկությունը, բայց և անվերապահ
չի համարում՝ առ այդ վկայակոչելով «սա-քմե» (գործ, անելիք) բառի կառուցված-
քը: Ուշագրավն այստեղ ոչ այնքան բանավեճն է, որքան հանուն գիտության այն
վարելու զուսպ կեցվածքը, որ ունեն ակադեմիկոսն ու սկսնակը:

2. Никиты Стифата, иеромонаха Студийского, "Опровержение армянской ереси" (грузинская версия).
(Христ. Вост., т. VI, вып. I, стр. 92-93).
Վրացերեն չորս ձեռագրից քաղելով (A=S 1463, B=A 64, C=A 65, D=A 205) Լ.
Մելիքսեթ-Բեկը նախնական հաղորդում է կատարում XI դարի բյուզանդացի մա-
տենագիր Նիկիտա Ստիթատոսի հակամիաբնյա (հակահայ) տրակտատի հինգ
բաժնից բաղկացած բնագրի Արսեն Իղալթոյեցու հունարենից վրացերեն թարգ-
մանության մասին:
Գիտնականը մտադիր է եղել ի թիվս այլ դավանաբանական նյութերի հրա-
տարակել նաև այս գրությունը, սակայն, որքան մեզ հայտնի է, մտադրությունը
անկատար է մնացել: Վերջերս նույն հեղինակի տրակտատի վերաբերյալ հաղոր-
դում հրապարակեց հայագետ-վրացագետ Մայա Ռափավան: Բանավեճը հիմ-
նականում Հայոց եկեղեցու քրիստոնեաբանության շուրջ է, մասամբ արծարծելով
և ծիսական խնդիրներ:
Ձեռագրահամարների և նրանց համապատասխան թերթերի նշումները հու-
շում են, որ Լ. Մելիքսեթ-Բեկը ընդօրինակել ու համեմատության է առել հին վրա-
ցերեն թարգմանությունը: Եթե գիտնականի թողոնների մեջ դրանք պահպանվել
են, ապա կարելի է անհրաժեշտ լրացումներով ու նոր գրականության ընդգրկ-
մամբ հրապարակել: Այս նախնական հաղորդումը ևս ապացույց է Լ. Մելիքսեթ-
Բեկի երիտասարդական տարիներից ի վեր ունեցած լայն հետաքրքրությունների
ներկայության:

3. Тезис Θεὸς ʼεσταυρώϑη *у армян* (Хрис. Вост. т. III, вып. 2. стр. 198-199).

Քրիստոսաբանական քննությունների ժամանակ առավել հաճախ արծարծված բանաձևումներից է սույն *«որ խաչեցար վասն մեր»*-ը: Այն հեղինակել է ասորի միաբնակ Պետրոս Թափիչը, և ընդունելի են նկատել V դարի երկրորդ կեսի հեղինակին ժամանակակից հայոց աստվածաբան հայրերը: Լ. Մելիքսեթ-Բեկը պատճառաբանված է համարում Կարապետ Տեր-Մկրտչյանի առաջարկած ժամանակագրական սրբագրությունը՝ հավելումը վերագրելով Հովհան Մանդակունու ժամանակներին: Այստեղ էլ վիճելի հարցերը քիչ չեն. անհրաժեշտ է ժամանակագրության հարցերում նկատի առնել պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի կատարած ճշգրտումները (տես նրա՝ Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 31-44, 266-271):

Կարևոր և աստվածաբանական հիմքալի քննության կարոտ են արծարծվող բանաձևի հեղինակի դիտարկած փոփոխակները՝ *«որ ծնար և յայտնեցար»*, *«որ եկիր և գալոց ես»*, *«որ մարմնեցար վասն մեր»*, *«որ թաղեցար վասն մեր»* և այլն: Ե՞րբ և ի՞նչ պարագաներում են աշխատել աս փոփոխակները, վավերական ի՞նչ աղբյուրներում են վկայված և այլն:

Այս դիտարկումը ևս նախորդ երկուսի նմանողությամբ ուրվագծում է այն տարիներին հեղինակի ունեցած պատրաստության ու կարողության շրջանակը:

4. *К вопросу об устройстве алтаря в древней Грузии* (Христ. Вост., т. IV, вып. 3, стр. 310-312)

Ավագ Խորանի, ապա և նրանում ս. սեղանի, վերջինիս պատվանդանի և եպիսկոպոսական գահավորակի բարձրության, ծավալի շարժական թե անշարժ լինելու հարցերի շուրջ եղած գրականության հակիրճ ամփոփումն է սույն հոդվածը: Մովսես Ցուրտավեցու «Պատճառք Դ. ժողովոյն երկաբնակացն» թղթում սուրբ սեղանի կապակցությամբ կարդում ենք. «Վասն զի հին արէնքն զսուրբ սեղանն յաղագս անշարժութեան հողեղէն հրամայեցին առնել, և ի քարանց անշարժից, և ի տեղին մին մատուցեալ՝ ուր ողջակէզքն և զոհքն մատչէին: Որչափ ևս առաւել, որ նորոյ ուխտիս է միջնորդ կենդանարար և ազատիչ պատուական մարմնոյ և արեան Տեառն՝ յանշարժ և հաստատուն սեղան ելանել...» («Գիրք թղթոց», Թիֆլ. 1901, էջ 125):

Ինչ վերաբերում է բեմահարթակի բարձրությանը, ապա նկատի պիտի առնել Ն. Մառի դիտարկումը, թե «խորանային բեմահարթակի բարձրությունը նոր երևույթ է, ինչպես այդ պարզված է Անիի հնագիտական տվյալներով», մինչդեռ Գուգարքի (Քվեմո Քարթլիի չորս շրջանների հարյուր հուշարձանից 49 միաբնակ հայոց հատկացնողները հայերեն արձանագրության կամ եկեղեցու ձախ պատին Կնքավազան չլինելու պարագային պատկանելությունը որոշում են ըստ բեմահարթակի բարձրության (խոսքը վերաբերում է զարգացած և ուշ միջնադարի շրջանին, տես გ.გაგოშიძე, ნ.ჩანტლაძე, მონოფიზიტური ძეგლები საქართველოში, თბ., 2009, გვ. 6):

Սակայն նման մոտեցումը խիստ պայմանական է և անստույգ՝ քանի որ չգիտենք, թե «բեմ ելնել», «բեմից իջնել» ասելիս որքա՞ն հարյուրամետրն է չափանիշ ընդունվել: Ընդ որում մոռացության է տրվում շինարարական ավանդույթը: Էլ չենք խոսում «զարգացած և ուշ միջնադարում» «միաբնակ» կամ «լուսավորչական» վրաց [illegible] Հենվելով

Լեսկ ավանի ուրարտական արձանագրության Ն. Մառի «Հախինի կապի» (իմա՛ «զոհարանաքար») ընթերցման վրա, Լ. Մելիքսեթ-Բեկն առաջարկում է «հախինի-և» (զոհարան) առընչել քարթվ. լեզուների «օխվամե» (մեգր.), «օխվամբե» (լազ.), «լախվամ» (սվան.) աղոթարան, սրբատեղ, եկեղեցի, տաճար տերմիններին, ուստի «վէմքար» վաղնջական տեղական հասկացություն է (տե՛ս «Հովիտ», 1916, № 3, էջ 43-44):

АНГЕЛЫ – ХРАНИТЕЛИ

(Из памятников отреченной армянской литературы)

(Христ. Вост., т. III, вып. 1, стр. 51-55; там же т. III, вып. 2, стр. 205)

Լ. Մելիքսեթ-Բեկը հայագիտության մեջ առաջիններից մեկն էր, որ քաղվածո բնագրերի առկոչմամբ ուշադրություն հրավիրեց հայոց պարականոն գրականության մեջ և հմայիլներում եղած պահպանիչ հրեշտակների անվանական հիշատակությանը: Թերևս այս դեպքում նույնպես նա ելակետ ուներ Ն. Մառի համառոտ մի անդրադարձը (*Н. Марр*, Критика и мелкие статьи, ТР, кн. V, стр. 62-63), ինչպես նաև պրոֆ. Մանուկ Աբեղյանի Der armenische Volksglaube (Leipzig, 1899) աշխատությունը: Տասնամյակներ անց հմայական բնագրերով զբաղվելու հաջող փորձ կատարեց հանգուցյալ ազգագրագետ Աս յա Օղաբաշյանը: Մի քանի հոդվածներից բացի նա ռուսերեն թարգմանությամբ այդ կարգի բնագրերի մի փունջ հրապարակեց «Кавказский этнографический сборник»-ում (т. VI, M., 1976, стр. 107-130):

Հմայական բնագրերի հավաքմամբ, թարգմանությամբ ու ծանոթագրմամբ հիմնավորապես զբաղվեց ֆրանսիացի հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդին, որը և 1986 Վենետիկում հրապարակեց ծավալուն մի ժողովածու՝ *Frédéric Feydi*, Amulettes de l’Arménie chrétienne, Venise, 1986. Պատկերացնելու համար, թե պահպանիչ հրեշտակների ինչ առատություն է մեր ձեռագրերում ներկայացված՝ այստեղ բերում ենք այդ բնագրերից մեկի (ԾԹ-LIX) թվարկումը. «Բարեխօսութեամբ սրբոց հրեշտակաց և հրեշտակապետաց, Գաբրիէլի և Միքայէլի և այլ ամենայն զորաց, որոց անուանք են այսոքիկ՝ աթոռք, քերովբէք և սերովբէք, տէրութիւնք, զօրութիւնք, իշխանութիւնք, պետութիւնք, հրեշտակապետք և հրեշտակք, այլ և Միքաէլ, Գաբրիէլ, Ուրիէլ, Սաղաթիէլ, Ռափայէլ և Նեղոս, Յովիէլ, Աթէլոբ () և Քառափիէլ և Բեղսաբոսի, Կաղիէլ և Երեմիաս, Ապամարկու, Աիվազիէլ և Բարքիամյաթայ, Բաբրով, Փառել, Բաբրոն, Միքիէ և Միամփիքէ, Միովզեղենիէս և Ջամբեփոր, Կորասաբրոն, Աբրել և Յորսամել, Մանել, Աղմաք և Եղիպաք, Անբարսաքիէլ, Ռափայէլ, Րասաէլ, Ջուպաէլ և Տուքիթէք և Ջարմաէլ, Կապաէլ, Կասքայէլ և Պինակլա, Արինիվախ, Միքայէլ և Արաքաէլ, Յաղաղաէլ, Աղանդանոս և Սառա, Պուտոք, Բարականիմ, Ռափայէլ, Իսրայէլ և Միսայէլ և Կղպիէլ: Սոքա են անուանք հրեշտակաց, որք ունին իշխանութիւն ի վերայ մարդկան. եկեսցեն սոքա ամենեքեան յօգնականութիւն և ի պահպանութիւն ծառայիս Աստուծոյ... ամէն» (էջ 212):

Հմայիլի ռուսերեն թարգմանելու մի փորձ վերջերս Երևանում կատարվեց, սակայն առանց սպասելի վերլուծության: Կարևոր համահավաք է ներկայացված Ս. Հարությունյանի աշխատությամբ լույս տեսած «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» գրքում (Երևան, 2006):

СЕМИНЕЧАТИЕ И ЕГО ТОЛКОВАНИЕ, ПРИЛОЖЕННЫЕ К ОТВЕТУ СПАСИТЕЛЯ НА ПОСЛАНИЕ АБГАРА ЭДЕССКОГО В РЕДАКЦИЯХ ГРУЗИНСКОЙ И АРМЯНСКОЙ

(Из апокрифических материалов)

(Христ. Вост. т. III, вып. I, стр. 44-50)

«Թուղթ Աբգարու առ Փրկիչն» և «Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալ հրամանաւ Փրկչին» պարականոն գրությունները լավածանոթ են Քրիստոնյա Արևելքի մատենագրություններին, այդ թվում և Մովսես Խորենացուն (II, ԼԱ, ԼԲ): Նրանց ասորերեն նախնական խմբագրությունը վերագրվում է Լաբուբնային (հայերեն թարգմանությունը հրապարակել է Ղ. Ալիշանը 1868 թ.): Հետագայում նրան կցվել է «Յոթնագրեանք» խորագիրը կրող առեղծվածային կառուցվածք ու մեկնաբանություն ունեցող հավելում, որին և նվիրված է Լ. Մելիքսեթ-Բեկի սույն հրապարակումը: Հավելումի խորհրդավորության թելադրանքով վրաց գրականության պատմության մեջ այն հավասարեցվել է հմայիլի և կոչվել ავგაროზ – աբգար[ական]: Լ. Մելիքսեթ-Բեկը հաջողությամբ ապացուցում է վրացական գելաթյան խմբագրության հունարենից թարգմանված լինելը (երբ հունարենի χ-ն այլևս ქ չէր գրադարձվում): Վրացերեն խմբագրությունները վերջերս նորից քննության առարկա դարձան: Հայերեն փարբերակի գիտականքննական հրապարկություն և վերլուծություն ծանոթագրողիս հայտնի չեն:

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ*

Աբամելիքյան Գեորգ վրդ. 135
Աբաշիձե Գրիգոլ 276
Աբաշիձե Կիտա 450
Աբաս, աղվ. կաթ. 291
Աբասառողի Գրիգոր 422
Աբաս-միրզա 392
Աբգար թագ. 169, 184, 409, 456
Աբգարյան Գ. Վ. 451
Աբդլա 293
Աբեյան Պ. 446
Աբեղյան Մ. 10, 243, 244, 245, 253, 262, 338, 455
Աբեններ 166
Աբիբոս Նեկրեսեցի 313
Աբիմելիքյան Ստ. 169
Աբիսողոմ սարկ. 426
Աբիուգենոս 176
Աբո Թբիլիսեցի 272
Աբով Գ. 191, 433
Աբովյան Խաչ. 195, 197, 199, 200, 201–203, 205, 208, 211, 212, 267, 273, 275, 281, 282, 387, 391, 433
Աբուլաձե Բ. 437
Աբուլաձե Իլիա 13, 73, 361, 436, 441, 442, 445
Աբուլաձե Յուստ. 239
Աբուլասան 275
Աբուլ-ֆարաջ 74
Աբրահամ երեց 176
Աբրահամ կաթ. 339, 373
Աբրահամյան Ա. 32, 46, 55, 85, 116, 290, 314, 422, 434
Աբրահամյան Ռ. 196
Աբրահամով Իվ. 140, 141
Աբրամով Խաչ. 142
Ագաթանգեղոս 16, 19, 171
Ադամ, մելիք 168
Ադամեանց 180
Ադարնասե տե՛ս Ատրներսեհ
Ադոնիել 408
Ադոնց Ն. 11, 13, 26, 27, 29, 32, 41, 49, 59, 189, 287, 288, 328, 439
Ադովնիայ 405
Ազարիա եպս. 142
Ազարիայ 405
Ազնավորեան Մ. 220
Աթաբեկ 328, 329, 426
Աթանաս սբ. 30, 37
Աթէնէսիոս Յոյն 171
Աթոնիէլ 407, 408
Ալամդարյան Յար. 143, 191
Ալեքսանդր արքայազն 386, 390, 391
Ալեքսանդր Ա 153, 154, 155, 157, 180, 183
Ալեքսիձե Զ. 15, 442, 444
Ալեքս Կոմնենոս կայսր 350
Ալեքսիանոս արքեպ. 133, 432
Ալթիբեշյան Գ. 390, 393, 394
Ալիշան Ղ. 41, 82, 256, 330, 332, 334, 376, 456
Ալ-Իսթախրի 222
Ալլահղուլի սուլթ. 168
Ալլահվերդյան 168
Ալմասով Ա. 9
Ալ-Մուկադասի 222
Ալվան Օղլան 450
Ալփոյ 383
Ախլեստիշև 196

* Ցանկերը կազմել է պրկ. Ժ. Ա. Տոնոյանը: Նրանցում ավանդական և նորբարեփոխված ուղղագրության նորմերը խառնիվ չեն տարբերակված:

Ախունդով Մ. –Ֆ. 199, 203, 433
Ակակ Պարսիկ 93
Ակիէլ 404, 408
Ակինյան Ն. 26, 27, 49, 54, 75, 82, 97, 350, 373, 419
Ակու-Ակսենով 141
Ահարոն 342
Ահուրամազդա 252
Ահրիման 245, 252, 253
Աղաթիաս սքոլաստ. 172
Աղալար-խան 390
Աղալօ-բէկ Միրզա Գուրգինյան Ենիկոլոփով 388, 390, 391, 393, 394
Աղամալյան Ս. 378
Աղամալյան Յոհ. 167
Աղամալյան Աղ. 167
Աղամալյան Յակ. 167
Աղամալյան Խ. 167
Աղա-Մահմադ-խան 279, 281
Աղամալ Ջուղայեցի 163
Աղայան Էղ. 432
Աղայան Ղազ. 28, 121, 143, 144, 146, 147, 256, 282
Աղանյան Գ. ա. ք. 390, 490
Աղափիրյան Գրիգ. եպս. 136
Աղաֆոն 146
Աղեքսանդր 378
Աղեքսանդր Մակեդոնացի 377
Աղեքսանդրոս 71, 74, 76
Աղմուրանց Բաղդ. 362
Աղուբ 96
Աճառյան Հր. 10, 19, 47, 48, 84–86, 147, 306, 315, 333, 338
Աղիջան 162, 164
Ամատունի Ս. 256, 315
Ամզասպ 256
Ամիրան 237, 243, 245, 246, 249–253, 263
Ամիրանաշվիլի Շ. 342
Ամիր-Հասան 431, 432
Ամիր-Սայիդ 319, 320, 380–382
Ամմիանոս Մարկեղինոս 172, 294
Ամպեղիս եպս. 26, 27, 29
Ամրոս 177
Այվազյան Գաբր. եպս. 135, 137
Այվազովսկի Յովh. 135, 184
Անանիա Նարեկացի 47, 51
Անանիա Շիրակացի 32, 55, 214, 222, 286, 290, 334, 406
Անանիա Սանահնեցի 11–13, 74
Անանուն 345
Անաստաս կաթ. 309
Անաստաս 173
Անդրեաս արքեպ. 133, 432
Աննա թագ. 378, 379, 386
Աննա 387
Աննաէլ 407
Աննա Կոմնենա 173
Անծրև խոջա 164
Անոնիմոս 171
Անուշ-Վռամ 339
Անտոն 42
Անտոն Ա. կաթ. 42, 322, 323, 331, 353, 366, 367, 369, 370, 372
Անտոն միայնակյաց 313
Անտոն վրդ. 321
Անտոն Կովդի 369
Անտոնյան 25
Անտոնով 447–449
Անտոն Ցագարելի 367
Աշոտ 27, 184, 238, 274, 352
Աշոտ բդեշխ 338
Աշոտ իշխ. 237, 344
Աշոտ Պատրիկ 309
Ապելլա ոմն 46, 47, 51
Ապոլոն 297
Ապողինար 37
Ապողոդորոս Աթենացի 170
Ապուլֆաթ 176
Ապուչեխցի Յովուենց 43
Ապուսահլ 176
Ապպաս 147
Ապպիանոս Յոյն 171
Ապրիսյան Երեմ. քահ. 136

Առաքել Դավրիժեցի 176, 345
Առաքել Սիւնեաց եպս. 175, 271, 304, 305, 307, 317, 325, 339, 340, 384
Առյուծ 277, 347, 383
Ասաէլ 404
Ասլան 380
Ասլանբէկ որդի Մարծպ. 376
Ասլանի որդի Սարգիս 376, 382, 452
Ասողիկ 292
Ատիանենե 288
Աստուածատուր 96, 169
Աստղիկ 256
Ասեման Յոսէփ 176
Ասվաղ/տուրով Մ. 141
Ասվադուրով Ս. 138
Ավագ/Ավաք 141, 119
Ավագ Սարգիս որդի Վահրամի 356, 357
Ավգերյան Հար. 214
Ավգերյան Մկրտ. վրդ. 76
Ավետիս եպս. 426
Ավետիք 165, 166, 183
Ավետիք Ալթուն 169
Ավետիք Բաղիշեցի 164
Ավետիք քալանթ. 167
Ավետյան Ա. 223
Ավդալբեգյան Թադ. 436, 451
Ավդալբեգյան Մ. 424, 425
Ավթանդիլ 360, 361
Ափիոս Կեսարացի 34
Արամ թագ. 286
Արամեան Մեսրոպ քահ. 421
Արբակ 127, 128
Արբոկ ճենաց 127
Արէշով Գուրգ. 169
Արիայ 405
Ատրներսեh 270
Արիստակես Լաստիվերտցի 47, 51, 173
Արիստակես իշխան 163
Արիստակէս 170, 174
Արիստոն 171
Արիստոտել 307, 309–311, 323, 368, 370
Արծրունիներ 272
Արղութ 426
Արղության Յովս., արքեպ. 134, 148, 386
Արղութինով Կիրակ. 141
Արշակ 184
Արշակունի 121, 146, 162, 288
Արսեն Իղալթոյեցի 13, 273, 453
Արսեն Սափարացի 14, 15, 291, 314, 344
Արսլան/Ասլան 320, 380
Արչիլ թագ. 237, 358–361, 365, 446
Արտագ 238
Արտավազ 237–239, 251–255
Արտավազդ Արտաշիս. 97, 242–246, 436
Արտաշէս թագ. 184, 239, 242, 243, 376
Արտաշիր 128
Աֆրիմիոս Սեկտուտինոս 84

Բաբգեն կաթ. 45, 163
Բագրատ 238
Բագրատունիք 122, 123, 128, 129, 275, 439
Բագրատունի Արսեն 143
Բագրատունի Կար. արքեպ. 217
Բադրի 249
Բազբաքես 408
Բալախաշվիլի Ի. 203
Բակուր թագ. 237, 238, 328
Բակուրյան Գրիգոր տե ս Գրիգոր Բակուրյան
Բահադուր 129, 130, 132
Բայանդուր Թումանեցի 126, 129–132
Բայան Գ. 80
Բանանի 308
Բանգարսիոս 177

Բաշինջաղյան 284
Բաջունունին 382
Բառնաբաս 79, 80
Բասիլ եպս. 72
Բասմաջյան Կ. 438
Բաստամյան Վահան վրդ. 72, 326
Բարագինել 408
Բարաթաշվիլի Նիկ. 275, 282, 363, 450
Բարաթեցի 126, 129, 130
Բարակիել 407, 408
Բարաղամ մելիք 167
Բարավիել 408
Բարդածան Եդեսացի 171
Բարիէլ 406
Բարխուդարյան Ս. 386
Բարհեբրիոս Գր. 74
Բարոնիոս կեսար 175
Բարսեղ արքեպ. 275, 432
Բարսեղ եպս. 123, 124
Բարսեղ սբ. 30, 31, 88–90, 308, 422
Բաքրաձե Դմ. 243, 244
Բեգթաբեգ 360–362, 372
Բեգթաբեգյաններ 261, 263
Բեղրոսով Մելիքս. 142
Բէբէք պրն 426
Բեհբուդյան Ավ. մելիք 168
Բեհբության 370
Բէժան 361
Բէհբութեան/Բեհբուդով 229, 370, 450
Բերիձե Վուկ. 240
Բերձենիշվիլի Ն. 390
Բերձնիշվիլի Մ. 390
Բերո 387
Բետտուլավրեն Տիտո Օգոստ. 176
Բժշկյան Մինաս վրդ. 137, 280
Բլեյկ Ռ. Պ. 82, 445
Բիւրոս 170
Բողոխ 127
Բոգոլյուբսկի Անդր. 285
Բոգոլյուբսկի Յ. -Գ. Ա. 275
Բոնապարտ Ն. 377
Բորիսով Ա. 376
Բուաշիձե Կ. 435
Բուղաղով Գ. 208
Բուզանդ Փավստ. 171
Բուքայել 408
Բուղա թրք. 272
Բուպակ իշխ. 328, 330, 332
Բուրքել 162, 379
Բրոսե Մ. -Ֆ. 16, 49, 190, 238, 244, 267, 353, 363
Բրիեր Ս. 33
Բրուեննիոս կրտսեր 173

Գաբաշվիլի Գ. 284
Գաբրիել հազարապետ 149
Գաբրիել 405, 407
Գաբրիել 191
Գալանոս Կղեմես 176
Գալեմքյարյան Գրիգ. վրդ. 43
Գալստյան Մկրտ. 169
Գամբա Ժակ-Ֆրանս. 190
Գայիանե սբ. 237, 238, 452
Գայիոս 76
Գանձիայ 407
Գասպար 362
Գասպարով Գ. 208
Գարագաշյան Ա. 326
Գարեգին Ա. կաթ. 82, 346, 422
Գարիտտ Ժ. 84
Գեղամեցի 167
Գեղամյանց Յ. 217
Գերգեն 284
Գեորգի Աթոնացի 313, 344
Գէղէոն 319, 384
Գէորգ Ակրոպոլիտ 175
Գէորգ աղա 43
Գէորգ 57
Գէորգ XI թագ. 359–361
Գէորգ արքայազն 370, 379–382, 384, 392
Գէորգ Կեդրենոս 173

Գէորգ Կիպրացի 295, 289
Գէորգ Մոնամախոս 173
Գէորգ Պախումերոս 175
Գէորգ Սիւնկեղոս Յոյն 173
Գէորգ վրդ. Սկևռացի 174
Գէորգ վրդ. Սսեցի 174
Գէորգ Փրանչաս 175
Գինայ 242
Գիորգ 342
Գիորգի թագ., որդի Կոստանդինի 342
Գիորգի Լաշա 329
Գյանջեցյան Ե. 27
Գյանջեցյան Լ. 33
Գյոզալ խանում 388, 390, 392, 394
Գյուլխանդանյան Հ. 28
Գոգեբաշվիլի Յա. 282
Գոգոլ 449
Գոգոշիձե Գ. 444
Գոգչակ 426
Գոշ/Գօշ/Գոշիկ 12, 13, 16, 42, 70, 71, 73, 74, 79, 86
Գորգաձե Ս. 250, 259
Գորգի զորովար 166
Գորգի մելիք 162
Գորգիջանիձե Փարս. 126, 363
Գուալտեր Արետինոս 177
Գուդիաշվիլի Լ. 284
Գուղովիչ գեն. 152, 391
Գուժանկովսկի 196
Գուլամիրյան Աբգ. 144
Գուլանդուխտ 238
Գուրամ Կուրոպաղատ 270
Գուրամիշվիլի Դ. 360, 361
Գուրգեն 238, 352
Գուրգեն իշխ. իշխ. 314
Գուրիև Ս. Գ. 141
Գուրիէլ 407
Գվախարիա Ալ. 436
Գրէնին Ա. 245
Գրիբոեդով Ա. Ս. 390, 391, 449
Գրիգորյան Վլ. 386
Գրիգոր Աբասառոդի 72, 74
Գրիգոր Ակներցի 82, 174, 275
Գրիգոր Անավարզեցի 97
Գրիգոր եպս. Արշակունի 172
Գրիգոր Բարհեբրեոս 74, 274
Գրիգոր արքեպ. Զաքարյան 134
Գրիգոր որդի Ապուղամրի 334
Գրիգոր Բակուրյան 350, 351
Գրիգոր Դապս 342
Գրիգոր ոմն 432
Գրիգոր քաջ 167
Գրիգոր իշխ. 164
Գրիգոր Լուսավորիչ 16, 30, 91, 138, 171, 183, 237, 291, 317
Գրիգոր վրդ. Խլաթեցի 175
Գրիգոր Կեչառեցի 42
Գրիգոր Մագիստրոս 47, 51, 53, 173, 308
Գրիգոր Յալթիբաշյան 390
Գրիգոր Նարեկացի 27, 47, 50, 51, 173
Գրիգոր Նյուսացի 423
Գրիգոր վրդ. 133, 149
Գրիգոր ամիրա 350
Գրիգոր պրն. 388
Գրիգոր վրդ. Սկևռացի 174
Գրիգոր Տաթևացի 32, 42, 86, 175, 305, 340, 345
Գրիգոր Տղա 11
Գրիգոր Օշականցի 183
Գրիգորէս եպս. 73
Գրիգորիս Վկայասեր 26
Գրիգորիս Աղթամարցի 98, 99, 380, 424
Գրիշաշվիլի Ի. 19, 265, 338, 362, 371, 450
Գևորգ 174
Գևորգյան 28, 29
Գևորգ Գորեցի 19, 86

Դաղեան Խ. 29, 160
Դանիել կաթ. 145, 147, 152

Դանիէլ 432
Դանիբեկով Ռափայել 155, 430
Դավթյան Բեռո 386
Դավիթ 164–166, 184, 304, 308, 310, 315–317, 362, 382, 384
Դավիթ սբ. 385, 440
Դավիթ վրդ. Ալավկա որդի 12, 59
Դավիթ Անհաղթ 18, 270–271, 304–307, 309–311, 318, 325, 339, 340, 350, 365, 366, 369, 384, 439, 440
Դավիթ Բագրեւանդցի 308, 309
Դավիթ-Բեկ 144, 161, 164, 166, 304
Դավիթ Գարեջեցի 18, 313, 318–325, 340, 380, 384
Դավիթ Երևանցի 373
Դավիթ Էնազեքցի 378, 452
Դավիթ վրդ. Հայկազն 310
Դավիթ Հարքացի 309, 310
Դավիթ Հերետանեցի 310
Դավիթ Ներգինացի 308
Դավիթ Նիկետ 173
Դավիթ Շինող 57, 58, 273, 276, 345, 346
Դավիթ Տարոնացի 308
Դավիթ փիլիսոփա 310
Դավիթ քերթող 308, 310
Դավիթ Քոբայրեցի 12, 72, 73, 75
Դավթեանք 165, 16Տ
Դավուդ փաշ. 381
Դարեհ 296, 377
Դարեջան 246, 249
Դարիա/Դարեջան թագուհի 279,283
Դեմետրէ 346
Դիլանյան Մ. 169
Դինար թագուհի 314
Դիոդորոս Սիկիլիացի 170
Դիոկղետիանոս 128
Դիոնեսիոս (կեղծ) 294
Դիոնեսիոս Արիոպագացի 17, 31
Դիոնեսիոս Աղիկարնացի 170
Դիոնեսիոս Ասորի 173
Դիոնեսիոս Բարսալիպ 176
Դիոնեսիոս Թրակացի 189, 291, 308, 385, 439
Դիոնեսիոս (կեղծ) Թել-Մահրացի 293, 294
Դիովն Կասիոս 171
Դյակոնով Ի. 453
Դողր 313, 322
Դոսիթեոս եպս. Չերքեզիշվիլի 366, 367, 369
Դոստի 450
Դուկաս 175
Դուրգար-Օղլի 380
Դրամբյան Ռուբեն արք. 78

Եաղուբ-Օղլի 372
Եզեկիա 407
Եզնիկ 31, 97, 362
Եզր կաթ. 377
Եթիմ-Օղլան 372
Ելիկում 328, 330
Եկանեան 168
Եկատերինե Մեծ 137, 138
Եղիա սարկ. 313
Եղիազար 432
Եղիազարյան Հ. 72, 167
Եղիազարյան Մ. 169, 181, 183
Եղիշե 172, 193
Եմուղիոս Պրոբոս 177
Ենիկոլոփյան Մ.-Գ. 394
Ենսեն 296
Եպիփան 214
Եպիփան կաթ. 334, 377
Եպիփանոս 31
Եսայի քաջ 167, 168
Եսայի Հասան-Ջալալյան 278
Երատոսթենես 215
Երեմյան Ա. 441
Երեմյան Ս. 275, 313, 343
Երեցփոխյան 208
Երզնկյան Ռոստ. 334
Երիցյան Աղ. 49, 50, 186, 188, 190, 441
Երմակով Դ. 378

Երմոլով Ա. Պ. 180, 183
Երվանդ Շահազիզ 196
Եվագրիոս Ասորի 172
Եվսեբիոս Պամփյուղոս 171, 172
Եփիմիոս (էքութիմե) Աթոնացի 84
Եփրեմ կաթ. 125
Եփրեմ վրդ. 133, 152, 159, 178, 180
Եփրեմ Խուրի 45
Եփրեմ կաթ. 126, 152, 159, 183, 224, 425

Զամինյան Ա. 40
Զանազան 432
Զարբհանալյան Գ. 40, 55, 56, 70, 75, 76, 106, 188
Զարյան Ռ. 203
Զաքարե 71
Զաքարիա աբեղա 98
Զաքարիա Ասորի 172
Զաքարիա Գազեցի 356, 357
Զաքարիա Երկայնաբազուկ 12,126, 128, 317, 356–358
Զաքարիա Ծործորեցի 175
Զաքարիա վրդ. Մատինյան 364, 365, 372
Զաքարիա սարկ. Հովհաննավանեցի 125, 126, 128, 343
Զաքարյան (տոհմ) 327, 355
Զաօզերսկի Ն. Ա. 258
Զենոբ Գլակ 85, 122, 171, 193
Զենոն Իղալբոյեցի 313
Զիրաք իշխ. Գերաքենց 164
Զիրիպյան Հովհ. 221
Զոհրապյան Հովհ. 189
Զուբով կոմս 148
Զուրաբ 449

Էզնատաշվիլի 315
Էլիաս Մղվիմեցի 313, 412
Էմին Մկրտ. 49, 243–245, 252, 253, 329, 374
Ենիկոլոփյան Ա. 390, 392
Էնֆիաճյան Պ. 221
Էվագր 313
Էվստաթի Մցխեթացի 269
Էրիսթավի Ռափ. 240, 247, 449, 450
Էփրիկյանց Հովհ. 220
Էքսյուզյանց Գ. 221

Ըսքրոդեր Յոհ. Յովակ. 176

Թադէոս վրդ. Սեբաստացի 175
Թադեոս Ստեփան-ծմինդեցի 313
Թաթսիզյան ա.ք. Հովհ. 138
Թաղայշվիլի Է. 238, 240, 244, 253, 254, 354, 361
Թաղիադին 356, 357
Թաղիադյան Մեսր. 143, 280, 281
Թամարաշվիլի 443
Թամար թագուհի 12, 274, 275, 332, 352–355, 445
Թաւար Ջահկեցի 169
Թեթվածեներ 435
Թել-Մահրացի 297
Թեոդորոս Ռշտունի 308
Թերուբել 406
Թէալիկչեան Ստ. 220
Թէմուրխան 426
Թէյմուրազ Բ թագ. 361, 367
Թէյմուրազ Արքայազն 359, 364, 365, 369, 370, 371
Թէոփանէս վնիյր. 173
Թէոփիլակտոս Սիմակատա 172
Թէոդորիտոս եպս. Կիւրեայ 172
Թէոդորոս 94
Թէոպիստէ 40–46, 51, 85
Թիւկիդէս Աթենացի 170
Թինաթին 388, 390, 394
Թմոգվեցի Սարգիս 445
Թմոգվեցիներ 356, 358
Թոդոսակ 342
Թոդուա Մ. 436
Թոմա եպս. 124
Թոմսոն Ա. 9

Թոմա/Թովմա Արծրունի 161, 272, 273, 293, 295, 345
Թովբան Ազգբամ 406
Թովմա Կիլիկեցի 419
Թովմա Մեծոփեցի 16, 163, 175, 176
Թորգոմ 237
Թորոս 162, 166, 169
Թորոսյան Գ. 170
Թորոսյան Ս. 170
Թոփալ մելիք 167
Թոփալյան 167
Թոփչիշվիլի 443
Թոփճյան Հ. 160
Թոփուրիա Վ. 254
Թոփչյան 256
Թութայել 408
Թուման պրն 426, 427
Թուման-պեկ 384
Թումայ քհ. 96
Թումանիշվիլի/Թումանյան/Թումանեցի 129, 130, 363, 444, 446
Թումանով Գ. 10, 450
Թումանով Գորջասպ 168
Թումանով Դ. 450
Թումանով Մ. 449, 450
Թումանյան 121, 124–126
Թումանյան Հովի. 125
Թումանեցի ազգ 123, 126
Թումանյան/Մամիկոնյան 123
Թուրինջ 372

Ժամկոչյան Հ. 82
Ժորդանիա Թ. 314, 369

Իբն-Խաուկալ 222
Իբն-Ֆակիխ 222
Իգնատիոս 73
Իզմիրյանց Հովս. 25
Իղալթոյեցի Արսեն 73
Ինա 320
Ինգլիզյան Վահան վրդ. 28
Ինգորոզվա Պ. 52
Ինճիճյան Ղուկ. 193, 280, 326
Իշաւխ 35
Իշխանիկ 314
Իոանե Սաբանիսձե 272
Իոսելիանի Պլ. 315, 353, 359
Իորդանիշվիլի Ս. 52
Իսահակ արքեպ. 232
Իսահակ կաթ. 84
Իսահակ վրդ. 229
Իսահակ Վոսիոս 177
Իսահակյան Ավ. 121
Իսե Ծիլկնելի 313
Իսիդոր Սամթավացի 313
Իսրայելյան Մարգ. 451
Իվանե Երկայնաբազուկ 12, 327–330, 332, 341, 356, 357
Իվանե/Հովհան Տբեթցի 328
Իվանե իշխ. Վաղաղնո 161
Իվանեսով Կար. 141
Իվանով Մարտին 141

Լաբուբնա 408, 409, 456
Լազարև Բ. 141
Լազարև Մ. 152
Լազարյաններ 430
Լալայան Ե. 10, 82, 123, 124, 315, 332, 356
Լալաֆարյան Ս. 419
Լամբրոնացի Ն. 11
Լանգլես Մ. 188
Լաշա թագ. 332
Լաւարսափ 129
Լաւոնիկոս Քալկոնտիղաս 175
Լեբարատոս երևելի 172
Լեոնտի Մրովելի 337, 341, 379
Լերմոնտով Մ. 449
Լիկորտայ 170
Լիպարիտ իշխ. 328–330, 332
Լիսիցյան Լ. 49
Լոմոուրի Ն. 438
Լորթքիփանիձե Յաս. 52
Լուարսաբ արքայազն 363

Լուկիանոս 313
Լևոն 44, 184
Լևոն որդի Գորգասալի 328
Լևոն գրամատիկոս 173
Լևոնարդոս Սիդոնացի 177
Լևոնյան Գ. 371, 372

Խալաթյան Գր. 243
Խալդարյանց Պ. Մ. 163
Խախանաշվիլի Ալ. 10, 245, 250, 258, 263, 352, 360, 436
Խաղբակյանք 125, 146
Խաղբակյան-Արշակունի 159, 162, 168
Խաղբակյան Վ. 162
Խանենց Մարխ. 164
Խանումաղա 426
Խաչատուր 43
Խաչատուր վրդ. 73, 195
Խաչատուր Ջուղայեցի 345
Խաչիբաբ մլք. 167
Խաչիկ իշխ. Ջուղայեցի 163
Խաչիկյան Լ. 30, 78, 81, 445
Խատիսյան Գ. 281
Խէրէդին 320, 384
Խլաթեցի 97
Խնդամիրյան Հովի. 167
Խոնդկարյան Ա. 13
Խոնելի Մոսե 437
Խոջաբեկով Վ. 281, 284
Խոջայև Դ. 141
Խոջենց 164, 167
Խոջաջանյան Գր. 167
Խոստրով 71, 357
Խոսրով պատմագիր 176
Խորասանջյան Գր. 137, 138
Խորենացի տե՛ս Մովսես Խորենացի
Խորիշան 432
Խուբյանց Սիմ. 152, 432
Խուբով Գ. 143–161, 168, 177–182, 184, 430, 431
Խուբով Մել. 162
Խուդաբաշխ 147, 163, 431
Խուդավերդյան Ներսես արքեպ.136
Խուտաբաշյան Ա. 187
Խուտաբաշյան Մել. 432
Խուրս իշխ. Գարդմանայ 237
Խտիէլ 406

Ծերեթելի Ա. 22
Ծերեթելի Գ. 436
Ծործորեցի 55, 347

Կազարով Ե. Գ. 263
Կախիկ Հովի. 161
Կակաբաձե Ս. 331, 352, 355–358, 362
Կամադրոս 176
Կամսարական 169
Կամսարական Ստ. 393
Կանայանց Խ. 160
Կանայանց Ստ. 245, 246, 294
Կաննէ Բարանդրոս եպս. 174
Կասիոյդորոս 172
Կատարինէ 181, 183
Կարակաշյան Կ. 140
Կարապետ արքեպ. տե՛ս Տեր-Մկրտչյան Կ.
Կարապետ վրդ. 174
Կարապետ 96, 161
Կարապետ 432
Կարբելաշվիլի Պոլ. քհ. 42, 366, 367, 369
Կարիճաշվիլի Դ. 369
Կարստ Ի. 296
Կեկելիձե Կ. 16, 17, 45, 312, 369, 419, 436, 440, 441, 444
Կեղծ-Դիոնիսիոս Թել-Մահրացի 295, 296, 439
Կեղծ-Շապուհ Բագրատունի 345, 376
Կենսորինոս 171
Կեպիմիէլ 406
Կեփաղիմոս 171

Կիկերոն 170
Կիրակոս 270
Կիրակոս Գանձակեցի 58, 71, 73,79, 81, 82, 174, 276, 343, 382, 423
Կիրիոն եպս. 242
Կղեմես Գալանաս 42
Կղետիոս Սալմաս 177
Կյուլեսերյան Բաբգեն եպս. 28, 419
Կյուրեղ 84
Կյուր Աղեքսանդրացի 88, 369
Կյուրեղ Երուսաղեմացի 80, 93
Կյուրիկյան 345
Կյուրիոն կաթ. 26, 49, 54, 338, 339, 341
Կնուպֆ 203
Կոզողավլև Օ. Պ. 152, 153, 155
Կոխովսկի Վ. Վ. 138
Կոմիտաս կաթ. 26, 27
Կոնստանդին Պերփռօժեն կայսր 173
Կոնստանդին Մանասէ 174
Կոնստանդին II 308
Կոնստանդիանոս 30, 91
Կոնստանդին թագ. ափխ. 342
Կոպետլիև Օվ. 141
Կոստանյանց Կ. 18, 38, 47, 53, 59, 97, 190, 308, 332–334, 356
Կորյուն 17, 172, 306, 318, 338
Կուինտիլիանոս 171
Կուինտոս Կորտիոս 171
Կուպարածէ Էլվ. 436
Կուռնելիոս Ալափիտէ 175
Կռիլով 450
Կտեսիաս 170
Կրիժանովսկի 211
Հազիր 450
Հախնազար 426
Հախնազարյան 450
Հակոբ Ակնեցի 42
Հակոբ գծող 96
Հակոբ/Յակովբ ոմն 319, 361, 383, 432
Հակոբ կաթ. 426
Հակոբ/Յակոբ երեց 259, 319
Հակոբյան Պ. 430, 433
Հակոբյան Վ. 75, 421
Հակոբ/Յակոբ վրդ. 175
Հակոբ/Յակոբ արքեպ. 176
Հակոբջանյան Ս. 221
Հաղբատեցի Վարդան 12
Համազասպ վրդ. 136, 173
Համազասպ Ա. 425
Համազասպ երեց 383
Համազասպ Մամիկոնյան 309
Համազասպյան-Մամիկոնյան 121, 122, 123
Համազասպյանց Մարծպ. 125
Համազասպյան Վ. 421
Համազասպյան Հովհ. 432
Համլիկ որդի Սմբատայ 123
Հայկ 237
Հայկազանք 426
Հայկազն մելիք 164
Հայրապետյան Ս. 220
Հաջի-Խալիֆա 222
Հասրաթյան Մ. 21
Հարություն քալանթար 167
Հարությունյան Ի. 72
Հարությունյան Հ. 203
Հարությունյան Ս 223
Հարությունյան Ս. 243, 262
Հացունի Վ. 326
Հեթում իշխ. 175
Հեթում 184
Հեղինե թագուհի 238
Հերակլ Բ. 271, 276, 278, 282, 283, 289, 296, 367, 371, 378, 386, 387, 450
Հեկամ 321
Հերոդոտոս Աղիկարնացի 170
Հերոնիմոս սբ. 75
Հիպողիտոս Բորտուեցի 177
Հյուբշման 296
Հոբնաղ 31

Հովակիմ Յուզբաշի 124
Հովակիմ 167
Հովասափ 116
Հովել 177
Հովիել 405
Հովհան եպս. 33
Հովհան Ձեռագնեցի 313
Հովհան/Յոհան 319, 384
Հովհան Մամիկոնյան 85, 122, 193
Հովհան Մայումեցի 25, 33, 35, 214
Հովհան Մանդակունի 31, 454
Հովհան մղիվանբեգ 367
Հովհան Նարեկացի 175
Հովհան Որոտնեցի 42
Հովհան Պահող 258
Հովհան Պետրիծի 350, 372
Հովհան Ռուֆուս 33, 35
Հովհան կաթ. 273
Հովհան Օձնեցի 13, 26, 32, 42, 46, 173
Հովհան Օսեսծե 370
Հովհաննես/Յոհաննէս 73, 96, 162, 164, 384
